| 315 | Ոստիկանության զորքերի ապառազմականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Միջազգային փորձի վերլուծություն և դրա հիման վրա օրենքով Ոստիկանության զորքերը որպես ոստիկանական ստորաբաժանում նախատեսելու վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, | Առաջարկություններ ի՝ հավանության արժանանալու պարագայում կնախաձեռնվի ոստիկանության զորքերի ապառազմականացման գործընթացը՝ բացառապես ոստիկանական օրենսդրական ակտերով կսահմանվեն վերջինիս կազմակերպման և գործունեության կարգը, ուժը կորցրած կճանաչվի «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքը: Ոստիկանության զորքերը կվերանվանվեն | Ոստիկանություն | - | 2022թ. 1-ին կիսամյակ | Ֆինանսավորում չի պահանջվի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ոստիկանական գվարդիայի, որը օրենքով սահման-ված կարգով կմաս-նակցի զանգվածային ան-կարգությունները կանխելու և խափանելու գործին, հակաահաբեկ-չական միջոցառումներին, ռազմական և ար-տակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելուն, որոնողական-փրկարարական աշխատանքների աջակցությանը | | | | |
| 316 | «Ոստիկանության մասին» նոր օրենքով ոստիկանու-թյան լիազորությունների այնպիսի շրջանակի սահմա-նում, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխարգելել մարդու իրավունքների նկատմամբ հանցավոր և այլ ոտնձգությունները, քաղաքացիներին աջակցել իրենց խախտված իրա-վունքների վերականգնման գործում, խթանել համագործակցությունը քաղաքացիական հա-սարակության հետ | 1. Միջազգային փորձի և ձևավորված պրակտիկայի վերլուծություն, օրինագծի մշակում<br><br>2. «Ոստիկանության մա-սին» օրենքի նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայաց-նելը | Նոր օրենքով ոստի-կանությունը օժտվելու է այնպիսի լիազորություններով, որոնք լիովին կհա-մապատասխանեն Եվրամիության անդամ-պետությունների ոստիկանությունների իրավական կարգավիճակին և մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների վերաբերյալ մի-ջազգային իրավական ակտերին, համարժեք կլինեն | Ոստիկանու-թյուն | - | 2019թ. 1-ին կի-սամյակ | Ֆինանսավորում չի պահանջվի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հանցավորության գլոբալիզացիայից բխող որոշ սպառնալիքներին (ահաբեկչություն, սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործություններ) | | | | |
| 317 | ՀՀ ոստիկանության կարգավիճակի փոփոխության հարցի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Առավել լայն հանրային վերահսկողության մեխանիզմներ ստեղծելու նպատակով՝ Ոստիկանության գործունեության և կարգավիճակի վերանայմանն ուղղված քննարկումների կազմակերպում, այս ոլորտում միջազգային փորձի վերլուծություն, առաջարկությունների ներկայացում | ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ ավելի լայն հանրային և խորհրդարանական վերահսկողություն սահմանելու նպատակով ՀՀ ոստիկանության կարգավիճակի փոփոխության վերաբերյալ կոնկրետ առաջարկների քննարկում | Ոստիկանություն | - | 2021թ. 1-ին կիսամյակ | Ֆինանսավորում չի պահանջվի |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 6 -ի N 1030 -Լ որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | **Հիմնավորումներ** |
|---|---|
| | **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| 1 | **Նվազագույն ամսական աշխատավարձի հետևողական բարձրացման հնարավորության քննարկում՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի դրույթներից, որի 5.2 կետի համաձայն՝ ՀՀ կառավարության համար գերակա է բնակչության կենսամակարդակի էական բարելավումը, աշխատավարձերի իրական աճը, ինչպես նաև աղքատություն ծնող ռիսկերի դեմ կանխարգելիչ գործունեությունը:<br>Նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով (Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա, Աշխատանքի միջազգային կազմակերպության N 131 կոնվենցիա) ստանձնած պարտավորություններից:<br>ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները հաշվի առնելով՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով (Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա, Աշխատանքի միջազգային կազմակերպության N 131 կոնվենցիա) ստանձնած պարտավորություններից:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում աշխատավարձերի պետական կարգավորման հիմնական գործիքը նվազագույն աշխատավարձն է, որը սահմանվում է օրենքով՝ Հայաստանի ողջ տնտեսության համար: Նվազագույն աշխատավարձը պետության կողմից սահմանվող նվազագույն երաշխիք է, որը պետք է ապահովի աշխատողի և աշխատողի ընտանիքի անդամների կենսագործունեության համար բավարար եկամուտ:<br>Գործնականում 2015թ. հուլիսի 1-ից սահմանված նվազագույն աշխատավարձի չափը 55000 դրամ է, որը բարձր է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (2018թ. 2-րդ եռամսյակում կազմել է 45295 դրամ), սակայն ցածր է առողջապահության նախարարության կողմից մշակված պարենային զամբյուղի հիման վրա հաշվարկվող նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից (2018թ. 2-րդ եռամսյակում կազմել է 62329 դրամ): Փաստացի նվազագույն աշխատավարձը 7329 դրամով ցածր է առողջապահական նվազագույն նորմատիվային պահանջների հիման վրա հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է, ելնելով երկրի մակրոտնտեսական իրավիճակից, ՀՀ պետական բյուջեի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի շրջանակներում քննարկել նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացման հնարավորությունը և համապատասխան փոփոխություններ նախատեսել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում:<br>Առաջարկվող լուծումն է նվազագույն աշխատավարձի մակարդակի բարձրացումը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի դրույթները, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափի փոփոխություն:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Նվազագույն աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի դրույթների, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթների ապահովում, որն ուղղված է աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ մասնավորապես արժանապատիվ աշխատանքի ապահովմանը |
| 2 | **<u>Աշխատանքային օրենսդրության համապատասխանեցում Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների, Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի պահանջներին, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցում</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների՝ միջազգային պայմանագրերով (Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) կոնվենցիաներ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) ամրագրված պահանջներին համապատասխանեցման, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության արդյունքում դրանց մի մասի հստակեցման և պարզեցման անհրաժեշտությամբ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականի հունիսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով կատարվեցին բավականին մեծ թվով փոփոխություններ, որոնց զգալի մասը ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները միջազգային իրավունքի նորմերին, այդ թվում՝ նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ-ի կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցնելու գործընթացի համատեքստում էր: Օրենքի ընդունումը պայմանավորված էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի որոշակի դրույթների կիրարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:<br>Ներկայում նույնպես առկա է ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք դրույթների անհամապատասխանություն ԱՄԿ կոնվենցիաների և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջների մասով: ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթները ԱՄԿ կոնվենցիաների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը նաև «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» («GSP+») առևտրային ռեժիմի շրջանակներում ստանձնած պարտավորություններից է:<br>Մասնավորապես անհրաժեշտ է նախատեսել սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը, հարկադիր աշխատանքին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրի բովանդակությանը և աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին:<br>Բացի այդ, իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ առկա է աշխատանքային օրենսգրքի դրույթների շարունակական բարելավման, ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների առավել հստակեցման և պարզեցման անհրաժեշտություն:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակներում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների անհամապատասխանությունների բացահայտման և վերլուծության, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերլուծության և համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կմշակվի «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով կնախատեսվի սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ պայմանագրերին, աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը, հարկադիր աշխատանքին, գործադուլին, ամենամյա արձակուրդներին, որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրի բովանդակությանը և աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին, ինչպես նաև կհստակեցվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնք իրավակիրառական պրակտիկայում ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք են տալիս:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ աշխատանքային օրենսգրքի կատարելագործում՝ միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանեցման, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցման միջոցով:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխանության ապահովումն է ԱՄԿ կոնվենցիաների, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների լուծումների ապահովումը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների առավել պարզեցումն է: |
| 3 | **Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման նորմատիվի (քվոտայի) համակարգի առավել նպատակային և արդյունավետ ներդրման ու գործարկման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված հիմքերի և մեխանիզմների լիարժեք ապահովում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի (քվոտա) իրավակիրառական պրակտիկայում վեր հանված մի շարք խնդիրների լուծման օբյեկտիվ անհրաժեշտությամբ և բխում է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշման հավելվածի 5.2-րդ՝ «Աղքատության հաղթահարում, սոցիալական աջակցություն» բաժնի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Քվոտայի պահանջը սահմանված է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով: Քվոտավորման ենթակա կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջի կատարման գործընթացների ուսումնասիրությունները վկայում են, որ այս փուլում դեռևս առկա են որոշ օբյեկտիվ խոչընդոտներ՝ առանձին ոլորտներում այդ պահանջի լիարժեք կատարման առումով: Այդ նպատակով պետական կառավարման թվով 28 մարմինների կողմից իրականացվել են ոլորտային առանձնահատկությունների, ինչպես նաև որոշ պետական կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջը չկատարելու պատճառների ուսումնասիրություն: Վեր են հանվել իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած մի շարք խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները՝<br>1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը գործող կարգավորումների շրջանակներում հնարավորություն չէր տալիս լիարժեք հաշվարկել քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թվաքանակը: Մասնավորապես՝ գործող կարգավորմամբ քվոտայի պահանջը կատարված էր համարվում, եթե մեկ հարկային տարում սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում առնվազն 183 օր քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղ զբաղեցված է եղել հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի կողմից: Անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության համաձայն, հնարավոր է միայն հաշվարկել կազմակերպություններում հաշմանդամություն ունեցող աշխատողների թվաքանակը, բայց ոչ քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թվաքանակը, որի համար մշակվել էին մեթոդական ցուցումներ.<br>2) պետական կառավարման որոշ մարմիններում աշխատողների (ծառայողների) թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ոստիկանություն և այլն), որը անհնար է դարձնում այդ մարմինների համակարգերում գործող կազմակերպությունների համար քվոտավորման ենթակա աշխատատեղերի թվի հաշվարկը,<br>3) քաղաքացիական, դիվանագիտական, զինվորական, քրեակատարողական, փրկարար ծառայությունների և համայնքային ծառայության պաշտոնները հաշմանդամություն ունեցող անձանցով համալրման օրենսդրական սահմանափակումները և գործնականում առկա օբյեկտիվ մի շարք այլ խոչընդոտները,<br>4) քվոտայի պահանջի առաջացման կամ այդ պահանջի կատարման տարվա ընթացքում քվոտավորման ենթակա կազմակերպության վերակազմակերպման դեպքում քվոտայի պահանջի կատարման խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական կարգավորման հստակեցման անհրաժեշտությունը,<br>5) քվոտավորման ենթակա կազմակերպությունների գործատուների համար՝ իրենց մոտ աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց մասին ամբողջական տեղեկատվության բացակայությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն հիմնավորման 1.1.կետում նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում, հանրային քննարկման կազմակերպում և ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Քվոտավորման ենթակա կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջի կատարման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծմանն ուղղված դրույթների ու նորմերի հստակեցում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Քվոտայի համակարգի առավել նպատակային և արդյունավետ ներդրման ու գործարկման համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված հիմքերի և մեխանիզմների լիարժեք ապահովումը: |
| 4 | **<u>Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացում, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների ամբողջական կարգավորում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><u>Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և կառավարման արդյունավետության բարձրացման, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների ամբողջական կարգավորման նպատակով նախատեսվում է մշակել</u> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ինչը պայմանավորված է վերոհիշյալ որոշմամբ հաստատված կարգերի կիրարկման ընթացքում ծագած խնդիրների լուծման, ժողովրդագրական արդի մարտահրավերներին արձագանքելու, իրավիճակի վերլուծություն իրականացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բխում է ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշման հավելվածի 5.2-րդ՝ «Աղքատության հաղթահարում, սոցիալական աջակցություն» բաժնի պահանջներից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Զբաղվածության պետական քաղաքականության բարեփոխումների, այդ թվում՝ նոր ծրագրերի ներդրման արդյունքում, իրավակիրառական պրակտիկայի ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակում, ինչպես նաև զբաղվածության պետական ծրագրերի իրականացման ընթացակարգերի հստակեցում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է սահմանել համապատասխան դրույթներ, որոնցով կամբողջականացվեն արդեն իսկ իրավական կարգավորում ունեցող մեխանիզմներն ու գործիքները, հնարավորություն կտան ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված ծրագրերի իրականացումը դարձնել առավել արդյունավետ և հասցեական:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման կիրառման պրակտիկայի ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծմանն ուղղված դրույթների ու նորմերի սահմանում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ սահմանված կարգերի կիրառման արդյունավետության բարձրացում: Առաջարկվող փոփոխությունների և լրացումների արդյունքում գործնականում կամբողջականացվեն արդեն իսկ իրավական կարգավորում ունեցող մեխանիզմներն ու գործիքները, որոնց գործադրումը բխում է պետական քաղաքականության սոցիալական հիմնական նպատակից և սկզբունքներից, այն է՝ ըստ նախապես սահմանված առաջնահերթությունների և առկա օբյեկտիվ հնարավորությունների՝ հանրապետության ողջ տարածքում ապահովել գործազուրկների կայուն զբաղվածությունը, այդ թվում՝ ինքնազբաղվածությունը: |
| 5 | **<u>Ազգային օրենսդրության համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2006թ. դեկտեմբերի 13-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ կողմից և ուժի մեջ մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ից:<br>Վավերացնելով ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, կառավարությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ՀՀ օրենսդրության և պետական քաղաքականությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի սկզբունքներին և պահանջներին:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների հիմնախնդիրների հետ կապված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության |

| | |
|---|---|
| | մասին» 1993 թվականին ընդունած Հայաստանի Հանրապետության օրենքով, որով հիմնականում սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության սկզբունքները և մոտեցումները:<br>Գործող օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և մոտեցումներին:<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովված չեն մատչելի պայմաններ, ինչը նույնպես լուրջ խոչնդոտ է հանդիսանում նրանց սոցիալական ներառման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում: Նախագծում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները պետք է սահմանվեն Կոնվենցիայի դրույթներին և սկզբունքներին համապատասխան՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար հիմունքներով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված, ինչպես նաև միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և նորմերին, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցության և արդյունավետ **սոցիալական ներառման** ապահովումը: Օրենքի ընդունումից հետո պետք է մշակվեն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ ստեղծող միջոցառումների ցանկ:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ և պայմաններ, նրանց ներառումը հասարակություն ապահովելու նպատակով պետք է մշակվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներին առնչվող նորմեր՝ Կոնվենցիայի սկզբունքներին համահունչ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենսդրության համապատասխանեցումը Կոնվենցիայի սկզբունքների անհրաժեշտ իրավական հիմքեր կստեղծի Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված քաղաքականություն իրականացնելու համար: |
| 6 | ***<u>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի ներդրում</u>***<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումները հիմնված են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. Կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) պահանջների վրա, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հաշմանդամության սահմանման մեխանիզմները և չափորոշիչները հիմնված են առավելապես բժշկական մոդելի վրա՝ հիմնականում հաշվի են առնում անձի առողջական խնդիրները: Հաշմանդամության գնահատման գործընթացին մասնակցում են միայն բժիշկներ, ովքեր չեն կարողանում անձի համար համապարփակ ծառայությունների փաթեթ մշակել, ինչը կապահովի անձի լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման համակարգի հիմքում պետք է դրված լինի հաշմանդամության սոցիալական մոդելը, այսինքն հաշմանդամություն սահմանելիս պետք է հաշվի առնվեն ոչ միայն առողջական խնդիրները, այլ բոլոր այն գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են անձի գործունեության վրա: Միաժամանակ, այդ գնահատման արդյունքում պետք է յուրաքանչյուր անձի համար երաշխավորվեն այն ծառայությունները (ծառայությունների փաթեթը), որոնք անհրաժեշտ են առողջական խնդիրների հաղթահարման, միջավայրային խոչընդոտների վերացման կամ հաղթահարման համար:<br>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր մոդելի ներդրման ուղղությամբ 2015-2017թթ. ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր գործիքներ, մեթոդական ուղեցույցեր՝ հիմնված ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների վրա: Այս միջոցառման շրջանակներում՝ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կներդրվեն նոր մեխանիզմներ և գործընթացային մոտեցումներ՝ տեղայնացնելով այս ոլորտում այլ երկրների լավագույն փորձը:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի արդյունավետությունն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով հստակեցնել բժշկասոցիալական փորձաքննության համար կիրառվող չափորոշիչները, մեխանիզմները և ընթացակարգերը: |

| | |
|---|---|
| | **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամություն ունեցող անձի կարիքի գնահատման նոր համակարգի ձևավորում՝ հիմնված անձի կարիքների բազմակողմանի գնահատման և ըստ այդմ՝ անհատական ծառայությունների տրամադրման մեխանիզմների վրա: |
| 7 | **<u>Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցող տեխնոլոգիաների տրամադրման նոր մեխանիզմների ներդրում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումները հիմնված են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. Կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) պահանջների վրա, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին:<br>Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակումը բխում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ա) ենթակետերի պահանջներից և նպատակ ունի կանոնակարգելու պետական հավաստագրերի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համարժեք աջակցող տեխնոլոգիաներ տրամադրելու ընթացակարգերը:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաները տրամադրվում են պետական գնումների ընթացակարգերով հաղթող ճանաչված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների կողմից: Այդ ընթացակարգերը հաճախ բողոքարկվում են մրցույթի մասնակիցների կողմից, որի պատճառով հազարավոր հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձիք չեն կարողանում ժամանակին ստանալ իրենց անհրաժեշտ պարագաները: Բացի այդ, 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման ընդունումը ակնհայտ դարձրեց, որ պետական հավաստագրերի հիման վրա պարագաների տրամադրման դեպքում հնարավորություն է տրվում հաշմանդամություն ունեցող անձին ընտրելու իր կարիքներին համապատասխան պարագան՝ իրեն հարմար որակավորված կազմակերպությունից:<br>**1.1. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց պարագաները տրամադրել պետական հավաստագրերի հիման վրա, ինչի արդյունքում պարագաների տրամադրման գործընթացը կդառնա ավելի հասցեական և արդյունավետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն նախագծով կարգավորվում է հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց պետական հավաստագրերի միջոցով պրոթեզների, սայլակների և աջակցող միջոցների տրամադրման գործընթացը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող միջոցների (այդ թվում՝ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների) տրամադրման արդյունավետ մեխանիզմեր ապահովող իրավական ակտի առկայություն: |
| 8 | **<u>Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող համայնքահեն ծառայությունների ընդլայնում</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Համայնքահեն ծառայությունների անհրաժեշտությունը բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. Կոնվենցիայի պահանջներից: Կոնվենցիայի 19-րդ կետը ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում ապրելու հավասար իրավունքը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, և կոչ է անում ապահովել հավասար հնարավորություններ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը, ստանան համայնքից չմեկուսանալու համար անհրաժեշտ աջակցության ծառայություններ, օգտվեն համայնքային աջակցության այլ ծառայություններից՝ իրենց մատչելի և հասանելի եղանակով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող համայնքահեն ծառայությունների բացակայությունը կամ ոչ բավարար քանակը զգալի խոչընդոտ է հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքում և համայնքում ապրելու համար: Նման ծառայությունների բացակայությունը ստիպում է հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց ապրել հաստատություններում, մեկուսանալ |

| | |
|---|---|
| | հասարակությունից և համայնքից: Միաժամանակ, շուրջօրյա հաստատություններում գոյանում են հերթեր, իսկ դրանց գործունեությունը պետական բյուջեի վրա մեծ ծանրաբեռնվածություն է առաջացնում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ընդլայնել համայնքահեն ծառայությունների ցանկը, որպեսզի յուրաքանչյուր համայնքում հաշմանդամություն ունեցող անձինք, մասնավորապես մտավոր, հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաները հնարավորություն ունենան ստանալու սոցիալ-վերականգնողական ծառայություններ, զարգացնել իրենց կարողությունները, հմտությունները և հնարավորությունները և ձեռք բերեն ինքնուրույն կյանք վարելու հմտություններ: Նախատեսվում է մինչև 2022 թվականը ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող համայնքահեն 5-6 ծառայություններ: Ֆինանսական հաշվարկի համար հիմք է հանդիսացել նմանատիպ ծառայություններին նախարարության կողմից տրամադրվող ֆինանսավորման միջին արժեքը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Համայնքահեն ծառայությունների ընդլայնումը նպաստում է համայնքային կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությանը, ընտանիքում ապրելուն, ինչպես նաև կանխարգելում են նրանց մուտք շուրջօրյա խնամքի հաստատություններ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հաշմանդամություն ունեցող անձի ներուժի բացահայտում, անկախ կյանքի և համայնքում ապրելու իրավունքի ապահովում, ապաինստիտուցիոնալացման գործընթացի նպաստում: |
| 9 | **Երեխայի ծննդյան միանվագ նպաստ համակարգի բարելավում, ընտանեկան դրամագլխի տնօրինման նոր ուղղությունների սահմանում՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը (ընտանեկան դրամագլուխը) դիտարկելով որպես ծնելիության ցուցանիշի վրա ազդելու հիմնական գործոններից մեկը**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Երեխայի ծննդյան միանվագ նպաստ համակարգը ներդրվել է 2014 թվականի հունվարի 1-ին: Ընտանեկան դրամագլխի օգտագործման ուղղությունների վերլուծությունների, ինչպես նաև քաղաքացիների բազմաթիվ գրավոր և բանավոր առաջարկությունների հիման վրա անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերին և ընտանեկան դրամագլխի տնօրինման նոր ուղղություններ սահմանելուն:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ սահմանված է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը, նպաստ նշանակելու և վճարելու կարգը և ընտանեկան դրամագլուխը տնօրինելու ուղղությունները:<br>Համաձայն որոշման՝ առաջին և երկրորդ երեխաների ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը կազմում է 50 հազար դրամ, երրորդ և չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ, հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:<br>Գործող իրավակարգավորումներով երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակումը սկսվում է երրորդ երեխայից սկսած:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ՝ սահմանելով, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը երկրորդ երեխայի ծնվելու դեպքում կազմի հարյուր հիսուն հազար դրամ: Միաժամանակ կվերանայվեն նաև ընտանեկան դրամագլխի տնօրինման ուղղությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերով կառաջարկվեն փոխել երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը երկրորդ երեխայի ծննդյան դեպքում (150000 դրամ՝ ներկայումս գործող 50000 դրամի փոխարեն), ինչպես նաև վերանայել ընտանեկան դրամագլխի տնօրինման ուղղությունները:<br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտերի ընդունման դեպքում, երկրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ պետության կողմից ընտանիքիին հատկացվող սոցիալական աջակցության՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը կսահմանվի 150 000 դրամ և կվերանայվեն ընտանեկան դրամագլխի տնօրինման ուղղությունները:<br>Կենսաթոշակի չափը հաշվարկելու սկզբունքի վերանայում և չափերի ավելացում՝ թիրախավորելով ցածր կենսաթոշակները, կենսաթոշակառուների շրջանում աղքատության հաղթահարում |

| | |
|---|---|
| 10 | **<u>Պետական կենսաթոշակային համակարգի կատարելագործում (կենսաթոշակառուների շրջանում ծայրահեղ աղքատությանը բացառում, կենսաթոշակների չափերի բևեռացման մեղմում,կենսաթոշակների չափերի անհամաչափության հաղթահարման մեթոդաբանության սահմանում)</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Դեռևս 2013 թվականին կատարված օրենսդրական փոփոխությամբ (ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ն), ներդրվել է աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման նոր կարգ (բանաձև), ինչի արդյունքում հնարավոր եղավ ապահովել ցածր աշխատանքային կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի առաջանցիկ աճի տեմպ՝ համեմատաբար բարձր կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի նկատմամբ: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել կրկին անդրադառնալ կենսաթոշակի չափը հաշվարկելու սկզբունքին՝ թիրախավորելով ցածր կենսաթոշակները՝ դրանք համադրելի դարձնելով ծայրահեղ աղքատության գծի հետ:<br>2014թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով պետական առանձին պաշտոններ զբաղեցրած անձանց համար սահմանվեց սոցիալական երաշխիքների նոր համակարգ: Ներկայումս այս օրենքով նշանակված կենսաթոշակների միջին ամսական չափը ավելի քան 8 անգամ գերազանցում է աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված է կենսաթոշակը հաշվարկելու կարգը, իսկ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշմամբ սահմանված են աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը:<br>Ներկայումս մինչև 12 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուների, երրորդ խմբի շարքային կազմի պարտադիր ժակետային զինծառայողների, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը պակաս են աղքատության ստորին գծից (25500 դրամ):<br>«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով դատավորի, դատախազի, հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի ծառայողի, մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Գերագույն խորհրդի և Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի և օրենքի հավելվածով նախատեսված այլ պաշտոններ զբաղեցրած անձանց՝ օրենքով սահմանված տարիքային և մասնագիտական ստաժի պահանջներին բավարարելու դեպքում նշանակվում է կենսաթոշակ, որի չափը փոխկապակցված է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակցին: իսժամանակ, օրենքի անցումային դրույթներով նախատեսված է 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ մինչ այդ գործող օրենսդրությամբ կենսաթոշակի իրավունք տվող պայմաններին բավարարող՝ դատավորի, դատախազի, հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակի չափը հաշվարկել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:Ներկայումս այս օրենքով նշանակված կենսաթոշակների միջին ամսական չափը ավելի քան 8 անգամ գերազանցում է աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով կառաջարկվի սահմանել նվազագույն կենսաթոշակի շեմ: |

| | |
|---|---|
| | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կառաջարկվի վերանայել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափերը:<br>Պետական բյուջեում միջոցներ նախատեսված լինելու դեպքում մինչև 2022 թվականը պարբերաբար կավելացվեն աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը:<br>«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով կառաջարկվի սահմանել կենսաթոշակի առավելագույն շեմ:<br>**3. <u>Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Կենսաթոշակի նվազագույն չափը պակաս չի լինի աղքատության ստորին գծից:<br>Պարբերաբար կավելանան աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափերը (պետական բյուջեով միջոցներ նախատեսված լինելու դեպքում):<br>«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակի չափը չի գերազանցի առավելագույն շեմը: |
| 11 | **<u>Սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի շարունակական նվազեցում՝ շահառուի և որոշում ընդունողների միջև շփումը նվազագույնի հասցնելու միջոցով, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավում՝ «դրամի դիմաց առավելագույն արժեք» սկզբունքի կիրառմամբ</u>**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2016 թվականի դեկտեմբերից ներդրվեց առցանց դիմումի հիման վրա սոցիալական իրավունքի իրացման համակարգ: Առաջին քայլով շահառուները հնարավորություն ստացան 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան կապակցությամբ առցանց դիմել երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար:<br>2018 թվականին առցանց եղանակով մատուցվող ծառայությունների շրջանակն ընդլայնվեց ի հաշվիվ 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում), խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու համար առցանց դիմումներ ներկայացնելու հնարավորության:<br>Սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի շարունակական նվազեցման (շահառուի և որոշում ընդունողների միջև շփումը նվազագույնի հասցնելու միջոցով), շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման («դրամի դիմաց առավելագույն արժեք» սկզբունքի կիրառմամբ) նպատակով անհրաժեշտ է շարունակել առցանց եղանակով մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող իրավակարգավորումների համաձայն՝ հաշվի առնելով նաև «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի տեխնիկական հնարավորությունները, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու (բանկը ընտրելու), չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար շահառուները դիմում են տարածքային բաժին:<br>Համապատասխան ծրագրային գործիքներ, այդ թվում՝ պետական մարմինների կողմից վարվող այլ տեղեկատվական բազաներից տվյալներ ստանալու համար, մշակելու և ներդնելու դեպքում հնարավոր է նշված դիմումները ևս ներկայացնել առցանց:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել այն իրավական ակտերում, որոնցով կարգավորվում են կենսաթոշակը վերահաշվարկելու (ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշում), կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու կամ բանկը ընտրելու (ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշում), չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու (ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշումներ) համար դիմում ներկայացնելու ընթացակարգերը:<br>Նախատեսվում է նաև ծրագրային գործիքի կիրառմամբ խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ուղարկել գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Վերը նշված իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող՝ ՀՀ կառավարության որոշման նախագծերով կառաջարկվի ներդնել իրավական հիմքեր (մեխանիզմներ)՝ կենսաթոշակը վերահաշվարկելու, խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու, վճարման եղանակ (բանկ) ընտրելու և մայրության նպաստ նշանակելու համար առցանց դիմելն ապահովելու համար:<br>Ընդ որում, մայրության նպաստ նշանակելու համար առցանց դիմելը հնարավոր է ապահովել «էլեկտրոնային առողջապահություն» տեղեկատվական համակարգից անաշխատունակության թերթիկների և պետական հավաստագրի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո:<br>Միաժամանակ, կմշակվեն և կներդրվեն անհրաժեշտ ծրագրային գործիքներ:<br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Շահառուները կարող են կենսաթոշակը վերահաշվարկելու, վճարման եղանակը (բանկը) ընտրելու և մայրության նպաստ նշանակելու համար դիմել առցանց, իսկ խնամքի նպաստը նշանակելու կամ մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը կուղարկվի գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին: |
| 12 | **<u>Որոշումների կայացման գործընթացի ավտոմատացում, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնում, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառների կառավարման համակարգի արդյունավետության բարելավում</u>**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կենսաթոշակային ապահովության ոլորտում, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, խնամքի նպաստի, մայրության նպաստի բնագավառում իրականացվող վարչարարությունն ուղղված է կենսաթոշակների և նշված նպաստների նշանակման և վճարման գործընթացների պարզեցմանը, ինչը մեծապես կնպաստի նաև դրանց արդյունավետությունը մեծացնելուն:<br>Այս առումով անհրաժեշտ է արդիականացնել (կատարելագործել) «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացումը, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնումը, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավումն ապահովելու նպատակով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախընթաց ժամանակահատվածում ձևավորվել են վերը նշված նպատակների իրականացման համար բավարար նախապայմաններ: Մասնավորապես, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել և ներդրվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը (ԷԿՏՀ), որի շրջանակներում կիրառվող տեխնոլոգիաներն ու առաջադրված լուծումները բավարար հիմքեր են ստեղծել շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու, պետական կենսաթոշակային ապահովության և նպաստների ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:<br>Մասնավորապես, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում.<br>1) անձի նույնականացումն իրականացվում է բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա (կենսաթոշակառուի անհատական տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ են ներբեռնվում բացառապես բնակչության պետական ռեգիստրից),<br>2) ինքնաշխատ եղանակով է իրականացվում աշխատանքային ստաժի տևողության հաշվարկը՝ հիմք ընդունելով աշխատանքային գործունեության ժամանակահատվածի սկիզբը և ավարտը, ինչպես նաև գործունեության ժամանակահատվածի բնույթը,<br>3) անձի բնակության (հաշվառման) վայրի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը կիրառվում է ինքնաշխատ եղանակով՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա ապահովելով ըստ ՀՀ բնակության վայրի հաշվառված լինելու՝ օրենքով սահմանված պահանջի կատարումը կենսաթոշակ նշանակելիս, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելիս և կենսաթոշակ վճարելը վերսկսելիս,<br>4) ավտոմատացված են կենսաթոշակի իրավունքը որոշելու ընթացակարգերը՝ հիմք ընդունելով բնակչության պետական ռեգիստրից ներբեռնված՝ անձի ծննդյան օրվա (տարիքի) վերաբերյալ տվյալները, աշխատանքային ստաժի տևողությունը և աշխատանքային գործունեության ժամանակահատվածի բնույթը,<br>5) մահվան վերաբերյալ տեղեկատվությունը կիրառվում է ինքնաշխատ եղանակով,<br>6) կազմվում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ՝ բացառելով տեղեկատվության կորստյան կամ փոփոխման հավանականությունը, |

| | |
|---|---|
| | 7) երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու դիմումները ներկայացվում են առցանց,<br>8) ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվությունը փոխանակվում է, արխիվային հարցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով:<br>Ներկայումս «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով շուրջ 660 000 շահառուների բաշխվում է ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի շուրջ 25 տոկոսը:<br>Կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության հետագա բարելավումը ենթադրում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի շարունակական արդիականացում (կատարելագործում):<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է մշակել «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացումը (տարբեր տեղեկատվական բազաների հետ տեղեկատվության փոխանակումը) ապահովող իրավական ակտերի նախագծեր և, միաժամանակ, համապատասխան ֆինանսական միջոցների հատկացմամբ մշակել և ներդնել նոր ծրագրային գործիքներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Համապատասխան իրավական ակտերի նախագծերով կառաջարկվի ներդնել իրավական հիմքեր (մեխանիզմներ) «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացումը (տարբեր տեղեկատվական բազաների հետ տեղեկատվության փոխանակումը) ապահովելու համար:<br>Զուգահեռաբար կմշակվի անհրաժեշտ ծրագրային ապահովում: Այս նպատակով ՀՀ պետական բյուջեից պետք է հատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ:<br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>«Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացման շնորհիվ հնարավոր կլինի ապահովել՝<br>1) ԴԱՀԿ ծառայության հետ տեղեկատվության ինքնաշխատ եղանակով փոխանակման ենթահամակարգի ներդրումը,<br>2) բանկերի հետ տեղեկատվության ինքնաշխատ եղանակով փոխանակության համակարգի մշակումը և գործարկումը,<br>3) «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում դիմումը մերժելու դեպքում՝ մերժման մասին ծանուցումը (ներառյալ՝ պատճառները) ինքնաշխատ եղանակով ձևավորելու ենթահամակարգի մշակումը և գործարկումը,<br>4) «էլեկտրոնային առողջապահություն» տեղեկատվական համակարգի հետ անաշխատունակության թերթիկների (հնարավորության դեպքում՝ ծննդօգնության հավաստագրերի) վերաբերյալ տեղեկատվության փոխանակության ենթահամակարգի մշակումը և գործարկումը,<br>5) ՍԷԿՏ համակարգի հետ տեղեկատվության փոխանակության և դրա կիրառության ընթացակարգերի կատարելագործումը,<br>ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների հաշվառման ենթահամակարգի մշակումը և գործարկումը: |
| 13 | **<u>ՀՀ պետական բյուջեի ծախսերի հասցեականության բարձրացում, կենսաթոշակային ապահովության և նպաստների (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի) բնագավառների կառավարելիության մակարդակի բարելավում, իրականացվող վարչարարության արդյունավետության բարելավում</u>**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Տարեցտարի աճում են սոցիալական ապահովության ծրագրերին ուղղվող բյուջետային միջոցները: Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության միջոցով տրամադրվող գումարները՝ կազմելով. 2014 թվականին՝ 250,051,278.3 հազ. դրամ, 2015 թվականին՝ 285,966,371.8 հազ. դրամ, 2016 թվականին՝ 293,340,730.0 հազ. դրամ, 2017 թվականին՝ 291,775,171.1 հազ. դրամ:<br>Ակնհայտ է, որ վերը նշված ծավալների պարագայում անհնար է միայն վարչական մեթոդներով արդյունավետ եղանակով կառավարել առկա ռիսկերը:<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ նախատեսվում է հզորացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի վերլուծական կարողությունները՝ անցում կատարելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կենսաթոշակային ապահովության, չաշխատող կնոջ մայրության, երեխայի ծննդյան միանվագ և |

| | |
|---|---|
| | խնամքի նպաստների ոլորտներում վարվող քաղաքականության հիմնական նպատակներն են շահառուներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավումը և կենսաթոշակների ու նպաստների ոլորտների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի շարունակական նվազեցումը:<br>Նախընթաց ժամանակահատվածում ձևավորվել են վերը նշված նպատակների իրականացման համար բավարար նախապայմաններ: Մասնավորապես, կատարվել են կենսաթոշակների և նպաստների նշանակման և վճարման գործընթացների արդյունավետությունն ապահովող օրենսդրական փոփոխությունները, կատարելագործվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը, որի շրջանակներում կիրառվող տեխնոլոգիաներն ու առաջադրված լուծումները բավարար հիմքեր են ստեղծել շահառուներին մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու, պետական կենսաթոշակային ապահովության և նպաստների ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:<br>Կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության հետագա բարելավումը ենթադրում է անցում կատարել ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ներդնել ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախատեսվում է SPAP II C-3.3.1 վարկային պայմանագրի շրջանակներում մշակել և ներդնել Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության, չաշխատող կնոջ մայրության, երեխայի ծննդյան միանվագ և խնամքի նպաստների ոլորտում ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգ:<br>Պայմանագրի շրջանակներում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները՝<br>1) նկարագրել ՌԿԵ ինստիտուցիոնալ շրջանակը, ընդհանուր կառուցվածքը, իրականացվելիք գործառույթները, դրանց կատարման նկատմամբ վերահսկողական մեխանիզմները,<br>2) սահմանել ռիսկերի կառավարման գործընթացի փուլերը (օրինակ՝ գնահատում, բացահայտում, կանխում, կանխարգելում և այլն) և մանրամասն նկարագրել այդ փուլերից յուրաքանչյուրը,<br>3) նկարագրել ռիսկերի բացահայտման և կառավարման համար անհրաժեշտ, ինչպես նաև ռիսկերի հավանականության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշները և ցուցիչները,<br>4) Նկարագրել անհրաժեշտ ցուցանիշների ու ցուցիչների ստացման պարբերականությունը և ընթացակարգերը («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգից ստացվող հաշվետվությունները, ներառյալ՝ հաշվետվություն ներառված տեղեկատվության կազմն ու բովանդակությունը),<br>5) նկարագրել ՌԿԵ-ի տեղեկատվական բաղադրիչը (այդ թվում՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում անհրաժեշտ փոփոխությունները),<br>6) մշակել ՌԿԵ կիրարկումն ապահովող իրավական ակտի նախագիծ:<br>Միաժամանակ, նախատեսվում է 3 ամիս անընդմեջ իրականացնել ռիսկերի կառավարման ենթահամակարգի (ներառյալ՝ վճարման ցուցակների ձևավորման կարգի) փորձնական կիրարկում՝ ըստ անհրաժեշտության լրամշակելով ռիսկերի կառավարման գործընթացի նկարագրությունը և վճարման ցուցակների ձևավորման կարգը:<br>Վերջում՝ նախատեսվում է մշակել ՌԿԵ-ի տեղեկատվական բաղադրիչի («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում նախատեսվող փոփոխությունների) տեխնիկական առաջադրանքը:<br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Կներդրվի Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության, մայրության, երեխայի ծննդյան միանվագ և խնամքի նպաստների ոլորտների գործառնական ռիսկերի կառավարման ենթահամակարգի (ՌԿԵ) մոդել: |
| 14 | **Աշխատանքային գրքույկների թվայնացում՝ ի կատարումն «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի» և ՀՀ կառավարության 2016թ.օգոստոսի 18-ի թիվ 882 որոշման**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական աշխատավայրի գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության |

<table>
<tr><td></td><td>կառավարության սահմանած կարգով 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ երկու տարվա ընթացքում, իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն՝ աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով:<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչ օրս 550000 աշխատողների աշխատանքային գրքույկներից մշակվել է շուրջ 260000 աշխատանքային գրքույկ, 290000 աշխատանքային գրքույկ անհրաժեշտ է մշակել:<br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածում և աշխատանքային գրքույկների մշակման աշխատանքների ավարտը սահմանել 2020թ. հունվարի 1-ը :<br>2. Կարգավորման առարկան<br>Ներկայացվող նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի նախաբանում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ներկայացվող նախագիծն ընդունվելու դեպքում սահմանված ժամկետում կմշակվեն բոլոր աշխատանքային գրքույկները:</td></tr>
<tr><td>15</td><td><u>Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի վճարման ընթացակարգերի կատարելագործում</u><br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>2018 թվականից թաղման նպաստ նշանակելու համար դիմումը կարող է ներկայացվել նաև առցանց:<br>Հաշվի առնելով նպաստի տրամադրման նպատակը (կենսաթոշակառուի կամ նպաստառուի թաղման ծախսերը փոխհատուցելու համար) և դրանով պայմանավորված՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկերի առաջացումը՝ նպատակահարմար է ավելի պարզեցնել թաղման նպաստի նշանակման և վճարման գործընթացը:<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Գործող իրավակարգավորումների համաձայն՝ հաշվի առնելով նաև «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի տեխնիկական հնարավորությունները, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու (բանկը ընտրելու), չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար շահառուները դիմում են տարածքային բաժին:<br>Համապատասխան ծրագրային գործիքներ, այդ թվում՝ պետական մարմինների կողմից վարվող այլ տեղեկատվական բազաներից տվյալներ ստանալու համար, մշակելու և ներդնելու դեպքում հնարավոր է նշված դիմումները ևս ներկայացնել առցանց:<br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ՝ նախատեսելով թաղման նպաստի նշանակման և վճարման նոր ընթացակարգ:<br>Միաժամանակ, նախատեսվում է նաև համապատասխան ծրագրային գործիքի մշակում և գործարկում:<br>2. Կարգավորման առարկան<br>24. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կառաջարկվի ներդնել թաղման նպաստի նշանակման և վճարման նոր ընթացակարգ:<br>Ընդ որում, թաղման նպաստի նշանակման և վճարման նոր ընթացակարգ հնարավոր է ներդնել «էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում համապատասխան ծրագրային գործիք ներդնելուց հետո:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Շահառուներին թաղման նպաստը կարող է վճարվել մեկօրյա ժամկետում, ինչը մի կողմից կբարելավի շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, մյուս կողմից՝ կնպաստի կոռուպցիոն ռիսկերի</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | շարունակական նվազեցմանը: |
| 16 | **Կենսաթոշակային ապահովության համակարգի տեխնիկական վերազինում (սերվերային համալիրի արդիականացում)**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կենսաթոշակների, պարգևավճարների, պատվովճարների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, թաղման նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, խնամքի նպաստի, մայրության նպաստի նշանակման և վճարման գործընթացների տեխնիկական ապահովումն իրականացվում է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով:<br>Այս առումով, հաշվի առնելով նաև շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման խնդիրը, որը փոխկապակցված է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման հետ՝ անհրաժեշտ է ապահովել կենսաթոշակային ապահովության համակարգի բնականոն գործունեությունը, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի անխափան աշխատանքը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել և ներդրվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը (ԷԿՏՀ), որի շրջանակներում կիրառվող տեխնոլոգիաներն ու առաջադրված լուծումներն ապահովում են կենսաթոշակների, պարգևավճարների, պատվովճարների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, թաղման նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, խնամքի նպաստի, մայրության նպաստի նշանակման և վճարման գործընթացների տեխնիկական իրականացումը:<br>Հաշվի առնելով «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի (ԷԿՏՀ) սերվերային համալիրի առկա վիճակը (խնդիրները), մասնավորապես՝ աշխատունակության անկումները, խափանումները, ունակությունների ավելացման անհրաժեշտությունը, տվյալների պահպանման համար ազատ տարածքի սպառվելը և այլն, անհրաժեշտություն է առաջացել գնահատել սերվերային համալիրի կարիքները և գնահատման արդյունքներով ձեռնարկել միջոցառումներ տեխնիկական վերազինման ուղղությամբ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործումն ապահովելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների հատկացմամբ անհրաժեշտ է արդիականացնել սերվերային համակարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է գնահատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության սերվերային համալիրի կարիքները և գնահատման արդյունքներով վերազինել (արդիականացնել) սերվերային համալիրը: Այս նպատակով ՀՀ պետական բյուջեից պետք է հատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության սերվերային համալիրի վերազինումը (արդիականացումը) կապահովի կենսաթոշակային ապահովության համակարգի բնականոն գործունեություն, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի անխափան աշխատանք: |
| 17 | **Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսմա պայմանավորված «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի և մի շարք այլ նախագծեր փաթեթի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 83 և 86-րդ հոդվածներից:<br>Նպատակն է՝ կարգավորել բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրման հետ կապվ հարաբերությունները, սահմանել բազմազավակ ընտանիք հասկացությունը, բավարարել բազմազավ ընտանիքների հիմնական պահանջմունքները, նպաստել բազմազավակ ընտանիքների ինքնապահովմանն ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրան սոցիալական մեկուսացումը և բարելավել ժողովրդագրական իրավիճակը:<br>Այսինքն, հասնել ժողովրդագրական իրավիճակի կայունացման, որը հնարավոր է միայն ընդլայնվ վերարտադրություն դեպքում՝ կտրուկ ավելացնելով 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թվաքանա վերջիններիս տալով որոշակի սոցիալական երաշխիքներ:<br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

Բազմազավակ ընտանիքների պետական աջակցության կապակցությամբ առկա խնդիրներ համակարգային լուծումներ տալու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությու ներկա ժողովրդագրական կացությամբ, որը, նախ և առաջ, կապված է ծնելիության ցածր մակարդակի հետ:

Ծնելիության ցուցանիշը չի ապահովում անգամ բնակչության պարզ վերարտադրություն, որի համա անհրաժեշտ է 2.1 երեխա (մեկ ընտանիքում 2-3 երեխա):

Սակայն, միայն պարզ վերարտադրության հաղթահարմամբ (մեկ ընտանիքում 2-3 երեխա) հնարավոր ապահովել ընդլայնված վերարտադրություն և հասնել ծնելիության մակարդակի էական բարձրացման:

Խնդիրն էլ ավելի է խորանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջիկա տարիներին ամուսնակա տարիքի կհասնի 2000-ական թթ. սկզբին ծնված ոչ բազմաքանակ սերունդը: Ըստ այդմ, այդ սերն վերարտադրողական ներուժը առավելագույնս օգտագործելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկ ծնելիության ցուցանիշը բարելավելու ուղղությամբ: ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալներով վերարտադրողակա տարիքում (15-49) գտնվող շուրջ 824 000 կանանցից երբևէ առնվազն 3 երեխա են ծնել շուրջ 112 000-ը (շուրջ տոկոսը): Մարդահամարից հետո, 2011-2017թթ. երրորդ երեխան ծնած կանանց թիվը կազմում է շուրջ 41 00 Նկատի ունենալով, որ 2011թ. մարդահամարից հետո վերարտադրողական տարիքը լքել են առնվազն 3 երեխ ծնած 40-49 տարեկան շուրջ 62 000 շուրջ կին, կարելի է պնդել, որ էականորեն պակասել է վերարտադրողակա ռեսուրսը

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են բազմազավակ ընտանիքների աջակցմա սակավաթիվ ծրագրեր, որոնք, չհանդիսանալով բազմազավակության խրախուսման միջոց, ընդամենը լուծում ե արդեն իսկ դժվարին կացության մեջ հայտնված այդ ընտանիքների որոշակի խնդիրները:

**2.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկվում է ընդունել «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենք անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելով նաև մի շարք այլ օրենքներում, որոնցով կսահմանվ բազմազավակ ընտանիքներին տրվող պետական աջակցության տեսակները:

**3. Կարգավորման առարկան**

Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսմա պայմանավորված «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի և մի շարք այլ նախագծե փաթեթի ընդունմամբ սահմանվում է բազմազավակ ընտանիք հասկացությունը, ինչպես նաև կարգավորվում բազմազավակ ընտանիքի կարգավիճակի և պետական աջակցություն տրամադրելու հետ կապվ հարաբերությունները, տրամադրվող սոցիալական երաշխիքների տեսակներն ու ֆինանսավորման աղբյուրները:

**4. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսում պայմանավորված «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի և մի շարք այլ նախագծեր փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է՝

հստակեցնել բազմազավակ ընտանիքների սոցիալական կարգավիճակը և երաշխիքները,

բարելավել բազմազավակ ընտանիքներին տրվող պետական աջակցության արդյունավետությունը,

խրախուսել բազմազավակությունը (մեծացնել բազմազավակության գրավչությունը),

խրախուսել ընդլայնված վերարտադրությունը (բարելավել ծնելիության ցուցանիշը)

բարձրացնել ու ամրապնդել բազմազավակ ընտանիքի դերը՝ որպես պետության և հասարակությու հենասյուն:

**4. Միջոցառման իրականացմամբ պայմանավորված պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսմամբ պայմանավորված «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի և մի շարք այլ նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում տեղի կունենա ծախսերի էական ավելացում, որը, ըստ աջակցության տեսակների կունենա հետևյալ պատկերը.

**4.1 Ամսական նպաստ** – 2017թ. տվյալների համաձայն ընտանիքում 4-րդ երեխայի թիվը կազմել է 1133, 5-րդը՝ 300, 6-րդը՝ 97: ամսական նպաստ տրամադրելու համար տարեկան անհրաժեշտ է ՝ <u>**1 172 820 000**</u> դրամ, այդ թվում՝

- 4-րդ երեխայի համար՝ տարեկան 1133*55 000*12=**747 780 000** (երեխաների թիվ*նվազագույն աշխատավարձ*12 ամիս),
- 5-րդ երեխայի համար՝ 300*82 500*12=**297 000 000** (երեխաների թիվ*նվազագույն

| | |
|---|---|
| | աշխատավարձի 150 տոկոս*12 ամիս),<br>• 6-րդ երեխայի համար՝ 97*110 000*12=**12 804 000** (երեխաների թիվ*նվազագույն աշխատավարձի 200 տոկոս*12 ամիս):<br>**4.2 Բազմազավակ ընտանիքներին բնակարանով կամ բնակելի տնով ապահովման պետական աջակցության տրամադրում**, ընդամենը՝ <u>950 000 000</u> դրամ, այդ թվում՝<br>4.2.1 **Բնակարանի գնման կամ շինարարության համար վերցված հիփոթեքային վարկի մարում** (նպատակով ՀՀ կառավարության կողմից կսահմանվեն հիփոթեքային վարկի առավելագույն չափաքանակ, իսկ ներկա հաշվարկում վարկի առավելագույն չափը կազմում է 10 000 000 դրամ) ընդամենը , **850 000 000** դրամ, այդ թվում՝<br>• 30 տոկոսով՝ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ տարեկան 100 դեպք՝ **300 000 000 դրամ** (100*3 000 000),<br>• 50 տոկոսով՝ 5-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ տարեկան 50 դեպք՝ **250 000 000 դրամ** (50*5 000 000),<br>• 100 տոկոսով՝ 6-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 30 դեպք՝ **300 000 000 դրամ** (30*10 000 000),<br>4.2.2 **Բնակարանի տրամադրում** (բնակարանի առավելագույն արժեքը 10 000 000 դրամ), տարեկան 10 դեպք: Ընդամենը՝ **100 000 000** դրամ:<br>**4.3 Կենցաղային ապրանքի ձեռքբերման նպատակով պետական աջակցությամբ արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ:** Վարկի առավելագույն չափը 500 000 դրամ, տարեկան դեպքերի թիվը՝ 1000, ընդամենը՝ **500 000 000 դրամ**:<br>**4.4 Ինքնազբաղվածության ապահովման աջակցություն, այդ թվում՝ ընտանեկան ձեռնարկատիրություն հիմնելու, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսական նշանակության հողատարածքի և անասունների ձեռքբերման, գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման նպատակով պետական աջակցությամբ արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ**: Վարկի առավելագույն չափը 2 000 000 դրամ, տարեկան դեպքերի թիվը՝ 100, ընդամենը՝ **200 000 000 դրամ**:<br>**4.5 Երեխաների կրթական աջակցություն**, ընդամենը՝ **431 200 000** դրամ, այդ թվում.<br>4.5.1 նախադպրոցական ուսումնական հաստատություններ բազմազավակ ընտանիքների երեխաների ուսման վարձի փոխհատուցում 70 տոկոսով, ուսման վարձի չափը՝ 8 000 դրամ, տարեկան 1000 դեպք (1000*5600 դրամ*12), ընդամենը՝ **67 200 000 դրամ**,<br>4.5.2 նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ բազմազավակ ընտանիքների երեխաների ուսման վարձի փոխհատուցում 70 տոկոսով, ուսման վարձի չափը՝ 200 000 դրամ, տարեկան 100 դեպք (100*140 000 դրամ), ընդամենը՝ **14 000 000 դրամ**,<br>4.5.3 բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում բազմազավակ ընտանիքների երեխաների սովորելու դեպքում ուսման վարձի փոխհատուցում 70 տոկոսով, ուսման վարձի չափը՝ 500 000 դրամ, տարեկան 100 դեպք (100*350 000 դրամ), ընդամենը՝ **350 000 000 դրամ**:<br>**Այսպիսով, Բազմազավակության (4 և ավելի երեխա) և ընդլայնված վերարտադրության խրախուսման համար ըստ նախնական հաշվարկի տարեկան կպահանջվի շուրջ <u>3 254 000 000</u> դրամ:**<br>*Սույն հաշվարկում ներառված չեն բազմազավակ ընտանիքների **բժշկական օգնության և սպասարկման** <u>**վերաբերյալ կարգավորվելիք ծախսերը, որոնք լիազոր մարմնի հետ ունեն լրացուցիչ քննարկման կարիք:**</u>* |
| 18 | <u>**Բնակչության կենսամակարդակի բարելավմանն օժանդակելը, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների չափի բարձրացում և բնեռացման մեղմումը**</u><br><br>Սույն միջոցառման իրականացումը բխում է Կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշման հավելվածի 5-րդ բաժնի 5.2 գլխի առաջին պարբերության դրույթներից:<br>Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակում է նաև պետական նպաստների համակարգը, որի շրջանակներում առավել կարևորվում են ընտանեկան և սոցիալական նպաստներն ու հրատապ օգնությունը: Դրանց նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» օրենքով, ինչպես նաև կառավարության 30.01.2014թ. N145-Ն որոշմամբ:<br>Յուրաքանչյուր տարի, ելնելով ՀՀ պետական բյուջեով ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսված դրամական միջոցների ծավալից, կառավարության որոշմամբ սահմանվում են ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության չափերը: |

| | |
|---|---|
| | Միջոցառման ամբողջական իրականացման համար նախատեսվում են հետևյալ քայլերը՝<br>1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը<br>2. «Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության չափերը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը<br>3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է պետական նպաստների բնագավառում առկա նույնանպատակ նպաստների անհարկի կրկնությունից խուսափելու անհրաժեշտությամբ: Ըստ այդմ վերանայման կարիք ունեն հրատապ օգնության տեսակները և դրանց նշանակման նպատակահարմարությունը (միանվագ հրատապ օգնություն, եռամսյակային հրատապ օգնություն): Միաժամանակ, սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնուրույնաբար կայուն եկամտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծման և դեպի պետական նպաստն առկա ձգտումների առավելագույնս ապախթանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ներդնել համապատասխան մեխանիզմներ:<br>Ներկայումս շատ ընտանիքներ ձգտում են բոլոր հնարավոր ճանապարհներով դառնալ ընտանեկան կամ սոցիալական նպաստների կամ հրատապ օգնության համակարգի շահառուներ՝ դրանով իսկ երբեմն հրաժարվելով համեմատաբար ցածր աշխատավարձով աշխատելու հնարավորությունից:<br>«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կապահովվի վերոգրյալ խնդիրներին լուծում տալու իրավական հիմքը:<br>Սույն միջոցառման նախատեսված երեք քայլերի կատարման արդյունքում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում ակնկալվում է՝<br>• բարձրացնել նպաստառու ընտանիքներին տրամադրվող աջակցության հասցեականությունը,<br>• զարգացնել անապահով ընտանիքների կարողությունները՝ նրանց դարձնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակ ունեցող ընտանիք<br>• նվազեցնել այդ ընտանքիների երկարատև կախվածությունը պետական աջակցությունից:<br>2019-2022թթ. համար նպաստառու ընտանիքների թիվը պահպանվում է նույնությամբ՝ 104685. 2019-2021թթ. ֆինանսական միջոցները նույնությամբ՝ 39,498,346.6 հազ. դրամ, իսկ 2022թ. նախատեսվում է նպաստի միջին չափի 10% աճ և ՀՀ պետական բյուջեից՝ 43,448,180.0 հազ.դրամ: |
| 19 | **<u>Սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերվող օգնության հասցեականության, արդարացիության և արդյունավետության մեծացում, սերտիֆիկատների համակարգի ներդրման նախադրյալների ձևավորում</u>**<br>Իրավական ակտի մշակումը բխում է Կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշման հավելվածի 5-րդ բաժնի 5.2 գլխի 3-րդ պարբերության դրույթներից, ըստ որի նախատեսվել է հոգ տանել սոցիալապես անապահով և խոցելի խմբերին:<br>Միջոցառման ամբողջական իրականացման համար նախատեսվում են հետևյալ քայլերը՝<br>1. ՀՀ ՎԿ ամենամյա ՏՏ կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտությունների տվյալների ուսումնասիրություն,<br>2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը<br>3. Սոցիալապես անապահով ընտանիքներին նպատակային աջակցության տրամադրում<br>4. Սոցիալապես անապահով ընտանիքներին՝ անհետաձգելի լուծում պահանջող դեպքերում սոցիալական աջակցության տրամադրման արագ արձագանքման մեխանիզմների ներդրում<br>5. Ընտանիքի սոցիալական գնահատման (սոցիալական դեպքի վարման) տեղեկատվական համակարգի ստեղծում<br>6. Սոցիալական աջակցության տարածքային մարմինների համակարգչային պարկի ամբողջական զինում, սերվերային տնտեսության թարմացում<br>7. Սոցիալական աջակցության տարածքային մարմինների միջոցով սոցիալական դեպքի վարման գործընթացի իրականացման տնտեսական հիմքերի ձևավորում: |

ՀՀ ՎԿ ամենամյա ՏՏ կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտություններն անդրադառնում են ինչպես տնային տնտեսությունների եկամտային աղքատությանը, այնպես էլ բազմաչափ աղքատությանը:

Սոցիալապես անապահով և խոցելի խմբերին հասցեական և թիրախային օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է ճիշտ գնահատել տվյալ ընտանիքի սոցիալական խնդիրները: ՀՀ ՎԿ ամենամյա ՏՏ կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտությունների տվյալները կիրառվելու են ընտանիքի սոցիալական գնահատման ընթացքում:

Այդ գործընթացն արդյունավետ իրականացնելու համար սոցիալական աշխատողներին անհրաժեշտ է ունենալ իրականացման գործիք՝ ընտանիքի սոցիալական գնահատման մեթոդաբանություն, ընտանիքի սոցիալական վիճակը բնութագրող տվյալների հավաքագրման արագ և արդյունավետ միջոց, աշխատանքների կազմակերպման արժանապատիվ հնարավորություններ:

Ընտանիքի սոցիալական գնահատման մեթոդաբանական հարցերը հիմնականում լուծված են, կառավարության 10.09.2015թ. N1061-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով այն ամբողջացվում է, տեղեկատվական համակարգի ստեղծումով ձևավորվում է տվյալների հավաքագրման արդյունավետ հնարավորություն՝ առցանց, իրական ժամանակի ռեժիմով, բացառելով քաղաքացուց տվյալների պահանջը, դրանք ձեռք բերելով այդ տվյալների առաջնային (ձևավորման) աղբյուրից: Համակարգչային պարկի զինումը պետք է իրականացվի զուգահեռաբար, որ ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական բազան հնարավոր լինի շահագործել: Ինչ վերաբերում է դյուրակիր համակարգչային տեխնիկային (պլանշետ), ապա դրանով ապահովվում է սոցիալապես անապահով ընտանիքին այցելելու ժամանակ, դիտարկման և հարցազրույցի միջոցով ձեռք բերված տվյալներն անմիջապես ներառել տեղեկատվական բազա (հարցերի պատասխանների հնարավոր բոլոր տարբերակների ներառմամբ, բացառելով բաց հարցերը):

Սոցիալական աշխատողների սոցիալական դեպքի վարման համար տնտեսական հիմքերի ձևավորումը հնարավորություն կտա ապահովել տունայցը, աջակցող ցանցի հետ աշխատանքները:

Սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատողները սոցիալապես անապահով ընտանիքի հետ սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությամբ աշխատանքը կազմակերպելիս ակտիվ շրջանում սոցիալական կարիքների ամբողջական և խորը գնահատում և անհատական սոցիալական ծրագրի կազմում իրականացնելու համար կատարում են տնային այցելություններ՝ միջինում տարեկն շուրջ՝ 5, իսկ առավել բարդ դեպքերի համար՝ 7 անգամ:

Միաժամանակ այդ դեպքերի համար շարունակական վերահսկողություն իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում միջինում տարվա ընթացքում ևս 2 տնային այցելություն:

Կանխատեսվում է, որ սոցիալական դեպք կբացվի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 20%-ի համար, իսկ 5 տոկոսը կլինեն առավել բարդ դեպքեր:

2019թ. բյուջետային հայտում ներկայացվել է 152.847.6 հազ. դրամ:

«Սոցիալապես անապահով ընտանիքներին նպատակային աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակներում նախատեսվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող այն ընտանիքներին, որոնց կազմում կան հղի կին և մինչև 5 տարեկան երեխաներ, տրամադրել սերտիֆիկատ՝ արտոնյալ պայմաններով որոշակի սննդամթերք ձեռք բերելու համար: Այդ նպատակով բանկային համակարգի միջոցով այդ ընտանիքներին կտրամադրվի «Վճարային քարտ-Մ», որի վրա անկանխիկ եղանակով տեղադրված ֆինանսական միջոցները հնարավոր կլինի օգտագործել միայն որոշակի մթերքի ձեռք բերման նպատակով:

Մթերքի տեսականին նախատեսվում է, որ լինելու է հիմնականում սպիտակուցով հարուստ մթերք՝ դրա բացակայության պատճառով ի հայտ եկող հիվանդությունների կանխարգելման նպատակով:

Նախատեսվում է ձևավորել վիրտուալ մթերային փաթեթ, դրա ամսական ֆինանսական արժեքի 15%-ը փոխանցել «Վճարային քարտ-Մ»-ի վրա՝ յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

Մեկ վիրտուալ փաթեթում ներառվող մթերքի առաջարկվող չափաքանակներն են՝

| | Օրական նորմա | Ամսական անհրաժեշտ քանակը՝ գրամ | Գինը՝ դրամ | Անհրաժեշտ ֆինանսական միջոցը՝ դրամ | Փոխհատուցման ենթակա գումարը (15%) |
|---|---|---|---|---|---|
| Միս՝ տավարի | 115 | 3450 | 3 042 | 10495 | 1574 |
| Թռչնի միս | 25 | 750 | 1 387 | 1040 | 156 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ձկնեղեն | 20 | 600 | 2 284 | 1370 | 206 |
| Կաթ, կաթնամթերք | 500 | 15000 | 4 12 | 6180 | 927 |
| Կաթնաշոռ | 50 | 1500 | 2 000 | 3000 | 450 |
| Թթվասեր | 10 | 300 | 1 000 | 300 | 45 |
| Պանիր | 10 | 300 | 2 263 | 679 | 102 |
| Ձու (հատ) | 1 | 30 | 4 8 | 1440 | 216 |
| ընդամենը | | | | **24504** | **3676** |

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված են անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող, իրենց կազմում հղի կին և մինչև 5 տարեկան երեխաներ ունեցող 31696 ընտանիքներ, որոնցում նշված սոցիալական խմբի ներկայացուցիչ հաշվարկվել է միջինում երկուսը:

Անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են՝ 2,796,348.0 հազ. դրամ:

Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N815-Ն որոշման 5-րդ հավելվածով հաստատված 3-7 տարեկան երեխաների սննդի համապատասխան տեսականու համար սահմանված նորմատիվի 10%-ի չափով: Սննդամթերքի մանրածախ գները վերցվել են ՀՀ ՎԿ պաշտոնական կայքից՝ http://armstat.am/file/article/f_sec_2_2018_2.pdf:

20

**Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետի, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ինչպես նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի /1995թ./ հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը 2014-2015 թվականներին ստորագրել է Եվրոպայի Միության տնտեսական աջակցության փաստաթղթեր՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» («GSP+») առևտրային ռեժիմի մասին (2014թ.), «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» (2015թ.) և «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրերը, ըստ որի պարտավորվել է ապահովել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարումը/մշտադիտարկումը, ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից մշակվող և իրականացվող միջնաժամկետ և երկարաժամկետ պետական նպատակային ծրագրերի միջոցով:

Այդ համատեքստում ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի որոշմամբ հաստատվեց «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որը սահմանեց կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, իսկ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ՝ «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ ազգային ծրագիրը», որի հիմնական նպատակն էր նպաստել սեռի հատկանիշով բռնության կրճատմանը Հայաստանի Հանրապետությունում:

Յուրաքանչյուր տարի ռազմավարական ծրագրերով նախանշված նպատակներն իրականացնելու համար ՀՀ կառավարության կողմից հաստատվում էին համապատասխան տարեկան ծրագրեր: Դրանցում ներառված միջոցառումներն ուղղված էին կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, սոցիալ-տնտեսական, կրթության, առողջապահության, մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում

կանանց և տղամարդկանց հավասարության հաստատմանը և ընտանեկան բռնության երևույթի կանխարգելմանը:

Վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև 2015 թվականի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի՝ ՄԱԶԾ, ՄԱԲՀ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացված ««Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» և «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի» գնահատման հետազոտության» արդյունքում գնահատման փորձագիտական խմբի եզրակացությունները վկայում են, որ պլանավորված և անցկացված միջոցառումները հիմնականում համապատասխանում են պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը և ռազմավարական ծրագրերը նպաստել են հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացմանը: Ըստ էության իրականացված աշխատանքների շրջանակում ստեղծվել են այն անհրաժեշտ հիմքերը, որոնք հաջորդ ծրագրային փուլում կարող են ստեղծել ներգործուն միջավայր ուղղորդված ոլորտային և միջոլորտային քաղաքականության իրականացման համար:

Սակայն սեռով պայմանավորված հավասարության ապահովման և խտրականությունը կանխելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ներդնել այնպիսի մեխանիզմներ և գործիքներ, որոնք կնպաստեն կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանմանը:

**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հավասարության քաղաքականության շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է նոր ռազմավարական ծրագրի ընդունում 2019-2023 թվականների համար, որն ուղղված կլինի.

- կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծմանը,
- իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարության ապահովմանը,
- հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երկու սեռերի հավասար մասնակցության ապահովմանը,
- սեռի հատկանիշով պայմանավորված կարծրատիպերի հաղթահարմանը:

**2 Կարգավորման առարկան**

Հանրապետությունում կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումն է, կայուն զարգացման, ժողովրդավարական գործընթացների խորացման, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և կյանքի որակի բարձրացման նախադրյալների ստեղծումը:

**3 Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը:

21

**<u>Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելում</u>**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառման իրականացումը պայմանավորված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կատարման անհրաժեշտությամբ, ըստ որի Լիազոր մարմինը պետք հիմնադրի ապաստարաններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքի ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնի իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը 2015թ. ստորագրել է «Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրերը, ըստ որի պարտավորվել է ստեղծել՝ «ուղղորդման բազմոլորտ մեխանիզմի ժամանակին և համապատասխան աջակցության ծառայությունների միջոցով (բժշկական, սոցիալական, իրավաբանական, պաշտպանողական, հոգեբանական) ընտանեկան և կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմքով բռնության զոհերին օժանդակելու համար» և «Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաքում գործող, պետության կողմից ֆինանսավորվող՝ աջակցության կենտրոններ…»:

| | |
|---|---|
| | **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընտանիքում բռնության ենթարկված անձանց նույնացման, ուղղորդման և սոցիալական ծառայություննե տրամադրելու գործընթացին նպաստելու համար շարունակվում են միջազգային իրավական փաստաթղթե պահանջներին համապատասխան և ժամանակի մարտահրավերներին համահունչ օրենսդրությ կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ դրվել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությ և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավակ ակտեր, որոնք ապահովում են նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց պետության կողմ աջակցության տրամադրման իրավական հիմքերը:<br>Ներկայում հանրապետությունում ընտանիքում բռնության ենթարկված անձանց առավել լայնածավալ և բազմակողմանի ծառայություններ տրամադրվում են ՀԿ-ների կողմից: Տարեկան կտրվածքով, ՀԿ-ների կողմից տրամադրվող առկա 4 ապաստարաններն ընդհանուր առմամբ ընդունում են միջինը 500 բռնության զոհերի որտեղ նրանց.<br>▪ տրամադրում են շուրջօրյա վստահության հեռախոսների և թեժ գծերի ծառայություններ.<br>▪ իրականացնում են ուղղորդում.<br>▪ տրամադրում են կացարան. հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, սնունդ հագուստ, կոշիկ, անկողնային և այլն պարագաներ.<br>▪ ցուցաբերում են նախնական բժշկական օգնություն.<br>▪ աջակցում են աշխատանքի տեղավորմանը, մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը անձը հաստատող փաստաթղթերի վերականգնմանը:<br>ՀԿ-ների կողմից այս աշխատանքներն իրականացնում են (հաճախ նաև կամավորական սկզբունքներով սոցիալական աշխատողները, հոգեբանները, իրավաբանները, բժիշկները, մանկավարժները, որոնք ունեն համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Սակայն նման ծառայությունների տրամադրման հիմնական խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական ապահովման, մասնավորապես, ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի շարունակականության երաշխիքի բացակայությունը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրման նպատակով առաջարկվում է ապահովել դրա իրականացման համար համապատասխան իրավական հիմքերը, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքել ապաստարանի ֆինանսավորման պայմանագրեր և ստեղծել պետության կողմից ֆինանսավորվող ապաստարաններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգ միջավայրով, ինչպես նաև օրեսդրությամբ սահմանված սոցիալական այլ ծառայությունների տրամադրման ապահովման համար նախադրյալների ստեղծումն է:<br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգ միջավայրի, ինչպես նաև օրեսդրությամբ սահմանված սոցիալական այլ ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ՀՀ օրենսդրութմաբ և միջազգային պայմանգրերով ամրագրված դրույթների կատարումը: |
| 22 | **<u>Երեխաներին ցերեկային ժամերին տրամադրվող այլընտրանքային ծառայությունների ընդլայնում</u>**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված 5.2 կետի, ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի N 275-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիրների N 2 հավելվածի, 152-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 36 արձանագրային որոշման հավելվածի 1.2 կետի կատարման անհրաժեշտությամբ:<br>Միջոցառման նպատակը երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն է, շուրջօրյա հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելը և այլընտրանքային ծառայությունների ցանցի ընդլայնումը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունն ուղղված է երեխայի |

| | |
|---|---|
| | խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում ապահովելուն՝ շուրջօրյա հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելուն, խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքում խնամքը կազմակերպելուն, ինչպես նաև հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը, այլընտրանքային ծառայությունների ցանցի ընդլայնման միջոցով:<br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության չորս գիշերօթիկ հաստատություն, որտեղ խնամվում է շուրջ 280 երեխա: Գնահատված կարիքների համաձայն երեխաների մեծ մասը հայտնվել են հաստատություններում հիմնականում սոցիալական խնդիրների պատճառով և տրամադրվող աջակցության պայմաններում կարող են վերադառնալ կենսաբանական ընտանիքներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կստեղծվեն երեխայի խնամքի և զարգացման կենտրոններ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց մասնաճյուղերը, որոնք մասնագիտացված ծառայություններ կտրամադրեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կամ նման իրավիճակում հայտնվելու ռիսկի ենթակա՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Սույն միջոցառման կարգավորման առարկան երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումն է, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը, այդ թվում՝ արտակենտրոն ծառայությունների միջոցով:Երեխաների և նրանց ընտանիքների համար կստեղծվեն այլընտրանքային ծառայություններ այլընտրանքային հնարավորություն կընձեռնվի նաև վերակազմակերպված հաստատության սաների կենսաբանական ընտանիքներին և սոցիալական հրատապ աջակցության կարիք ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացնել գույք, դրանով իսկ նպաստելով երեխաների ընտանիքում խնամք ստանալու համար անհրաժեշտ կենսապայմանների բարելավմանը և որոշակի կայունացմանը:<br>**3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կապահովվի երեխաների հետագա խնամքի կազմակերպումը ընտանիքում, կբարելավվի նրանց կյանքի որակը, կնպաստի նրանց ինտեգրմանը հասարակություն, ինչպես նաև կապահովվի հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմանը: |
| 23 | **Երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվող սոցիալական ծառայությունների մրցակցային սկզբունքով պատվիրակում մասնագիտացված հասարակական կազմակերպություններին**<br><br>**1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառման իրականացումը պայմանավորված է երեխաներին ուղղված ծառայությունների որակի բարելավման ու զարգացման, ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների ընդլայնման անհրաժեշտությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշման N 2 հավելվածի 1.2.4. կետի կատարման անհրաժեշտությամբ:<br>Միջոցառման նպատակը՝ երեխաներին ուղղված ծառայությունների որակի բարելավումն ու զարգացումն է, ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների ընդլայնումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2006 թվականից սկսած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրելու նպատակով հասարակական կազմակերպություններին պատվիրակվել են ծրագրեր և դրանց թիվը տարիների ընթացում ընդլայնվել է:<br>Ներկայում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվում են հետևյալ ծրագրերը՝<br>1. երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող եր եխաներին ընտանիքեր վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում), (իրականացնող «Առավոտ» հասարակական կազմակերպություն)<br>2. Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում (իրականացնող «Առավոտ» հասարակական կազմակերպություն)<br>3. Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 և Ստեփանավան քաղաքի N 5 ներառական մանկապարտեզում<br>4.Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջ |

| | |
|---|---|
| | անավարտներին աջակցություն և խորհրդատվություն<br>5.Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում (Իրականացնող՝ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն)<br>Սույն միջոցառումներն իրականացվում են նախարարության հետ կնքված պայմանագրերի հիման վրա և կազմակերպությունների կողմից ներկայացվում է ամսական ֆինանսական և եռամսյակային հաշվետվություններ: Ծրագրերը ըստ հավաքագրված ցուցանիշների ենթարկվում են մշտադիտարկման և գնահատման, իրականացվում է այդ տեղեկատվության վերլուծություն և գնահատում: Մշտադիտարկման և գնահատման արդյունքներով կազմված ամփոփ հաշվետվությունները քննարկվում են շահագրգիռ կողմերի հետ:<br>Իրականացվող ծրագրերի դրական փորձի հիման վրա և երեխաների շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման արդյունքում պատվիրակվող ծրագրերի ընդլայնումը առաջնահերթություն է: Ներկայում խնդիր է առկա ռեսուրսների գնահատումը,<br>համապատասխան իրավական դաշտի ձևավորումը<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման իրականացմամբ կապահովվի պետության և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության լայն շրջանակ, կստեղծվեն գործուն և թափանցիկ մեխանիզմներ ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն միջոցառման կարգավորման առարկան ոլորտում ծառայությունների որակի բարելավումն է.<br>Միջոցառման իրականացմամբ կստեղծվեն հասարակական կազմակերպություններին պատվիրակվող ծրագրերի նոր մեխանիզմներ, կկանոնակարգվի իրավահարաբերությունները:<br>**3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվեն երեխաներին և նրանց ընտանիքներին բազմաբնույթ, հասցեական ծառայություններ, կկանոնակարգվի իրավական դաշտը: |
| 24 | **<u>Մանկատան շրջանավարտների իրավունքների պաշտպանություն և ներառումը հասարակություն</u>**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված 5.2 կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշման N 2 հավելվածի 1.4.1. կետի կատարման անհրաժեշտությամբ: Նախագծի նպատակը շրջանավարտների սոցիալական պաշտպանության և հասարակությանը նրանց ինտեգրման ապահովումն է:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1452-Ն որոշմամբ հաստատված ծրագրի Հայաստանի Հանրապետության պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության իրականացման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է հիմք ընդունելով «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի դրույթները: Ծրագիրը տարածվում է «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում պետական մանկատների 2003 թվականից սկսած մինչև 2013 թվականը ներառյալ, հաշվառված և շահառու (այսուհետ՝ շահառու) ճանաչված (1991-2013 թթ. շրջանավարտներ), ինչպես նաև Գավառի և Վանաձորի ընդհանուր տիպի մանկատների 2014 թվականի և հաջորդող տարիների շրջանավարտների (այսուհետ՝ շրջանավարտ) վրա:<br>2003-2013 թվականների ընթացքում շուրջ 433 շրջանավարտի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական, առողջապահական, կրթական և իրավաբանական ծառայություններ: 2003-2012 թվականների ընթացքում մանկատան 187 շրջանավարտ և ընտանիքներում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 7 անձ ապահովվել է բնակելի տարածքով:<br>Սույն ծրագրի իրականացումը գործակալության պայմանագրով վերապահվել է երեխաների հիմնահարցերով շահագրգիռ հասարակական կազմակերպությանը:<br>2013-2016թվականների ընթացքում ծրագիրը իրականացվել է «Ակունք» հասարակական կազմակերպության կողմից: Իրականացված աշխատանքները մշտադիտարկման և գնահատման արդյունքում գնահատվել է ոչ արդյունավետ:<br>Առկա խնդիր է ծրագրի գործուն մեխանիզմների բացակայությունը, որի պատճառով 2016 թվականից սկսած ծրագիրը չի իրականացվում:<br>**<u>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>** |

| | |
|---|---|
| | Հիմք ընդունելով ծրագրի թերությունները, անհրաժեշտ է ծրագրում ներդնել նոր մեխանիզմներ և իրավակարգավորումներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն միջոցառման կարգավորման առարկան նոր իրավակարգավորումներն են, մեխանիզմների ներդրումը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սույն միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի շրջանավարտների գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների տրամադրումը: |
| 25 | **<u>Սոցիալապես անապահով և խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների արդյունավետության և հասցեականության բարձրացման նպատակով՝ խնամքի կարիք ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների տրամադրման ընթացակարգերի հստակեցում և կատարելագործում</u>**<br><br>**1. <u>Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը</u>**<br>Միջոցառման նպատակն է բարձրացնել սոցիալապես անապահով և խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների արդյունավետությունն ու հասցեականությունը: Միջոցառման կարևոր քայլերից առաջինը «ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումն ու հաստատումն է: Նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշման հավելվածի 5-րդ բաժնի 5.2 դրույթներից, ինչպես նաև նախատեսված է Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունից: Նախագծի ընդունումը նպատակ ունի բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման ծառայությունների որակն ու արդյունավետությունը, լրացնել ու ամբողջացնել խնամքի տրամադրմանն առնչվող իրավական ակտերը, մասնավորապես՝ կառավարության այն որոշումները, որոնցում նախատեսվում է կատարել փոփոխություններ:<br>Նախատեսվում է տարեցներին մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով վերանայել դրանց իրավական կարգավորումները, մասնավորապես՝ լրամշակել խնամքի տրամադրման կարգը՝ ներառելով այն ծառայությունները և կարգավորումները, որոնք մինչ այս գործող իրավական ակտերով չեն եղել:<br>**1.1. <u>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u>**<br>ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշմամբ հաստատված՝ գործող կարգում (այսուհետ՝ կարգ) ամրագրված է շուրջօրյա խնամքի հաստատություններ, տնային խնամքի ծառայություններ և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում ծառայություններ մատուցող կազմակերպություններ խնամքի տրամադրում հայցող անձանց ընդունելությունը, ծառայությունների տրամադրումը:<br>Նշված կարգով կարգավորված չէ խնամքի ծառայություններ տրամադրող՝ այսօրվա գործող բոլոր կազմակերպությունների կողմից ծառայությունների տրամադրման գործընթացը, մասնավորապես՝ գործող կարգում տարանջատված չեն սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների տեսակները՝ ըստ շահառուների շրջանակի, ընդհանրապես բացակայում է բարեգործական ճաշարանը, որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով անձանց բնաիրային օգնություն, մասնավորապես՝ սնունդ տրամադրող կազմակերպություն (մինչդեռ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում ամրագրված է, որ բնաիրային օգնությունը սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներից է, իսկ սննդապահովումը բնաիրային օգնություն է, որը տրամադրվում է դրա կարիքն ունեցող անձանց):<br>Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում է 20 բարեգործական ճաշարան, որոնց գործունեությունը որևէ իրավական ակտով կարգավորված չէ:<br>Նույն խնդիրն առկա է նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված ցերեկային կենտրոնների պարագայում:<br>Գործող կարգում ավելացվել են նոր բաժիններ կապված մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և ծառայությունների ֆինանսավորման կարգի հետ: Նախագծում հստակեցվել են ծառայություններ ստացող անձանց շրջանակը, սահմանելով, որ ծառայությունները տրամադրվում են համաձայն նրանց գնահատված կարիքների:<br>**1.2. <u>Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>**<br>Սույն Նախագծի ընդունման նպատակն է իրավական կարգավորում տալ, հստակեցնել, կարգավորել խնամքի տրամադրման հետ կապված բոլոր հարաբերությունները, խնամք ստացող անձանց շրջանակի սահմանումից մինչև նրանց տրամադրվող բոլոր ծառայությունների չափորոշիչների սահմանումը: Իրավական կարգավորում է ստացել սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների տարանջատումը՝ ըստ |

| | |
|---|---|
| | շահառուների շրջանակի, ամրագրվել է բարեգործական ճաշարանը, որպես սնունդ տրամադրող կազմակերպություն, սահմանվել է սննդի տրամադրման կարգը և չափորոշիչները: Նախագծում ներկայացվել է տարբեր ծառայությունների նկարագրերը և այդ ծառայություններից ստացողների շրջանակը՝ ըստ վերջիններիս գնահատված կարիքները:<br>Հստակեցվել են խնամքի տրամադրում հայցող անձանց՝ ծառայություններից օգտվելու համար դիմելու կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ծառայությունների տրամադրման, դրանց տրամադրումը մերժելու, դադարեցնելու հիմքերը և այլն:<br>Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է ԱՊՀ երկրներում ընդունված նմանատիպ չափորոշիչները, հաշվի են առնվել տուն-ինտերնատներում իրականացված մոնիթորինգի արդյունքները, խնամվողների շրջանում կատարված հարցումները:<br>**2. <u>Կարգավորման առարկան</u>**<br>Կարգավորման առարկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերություններն են:<br>**3. <u>Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>Սույն նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ առավել հստակեցված, ամբողջականացված իրավական ակտ, որտեղ ներառված են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց մատուցվող խնամքի գործող բոլոր ծառայությունները, սահմանված են ծառայությունների տրամադրման ընթացակարգերը և շահառուների շրջանակը՝ ըստ ծառայությունների տեսակների: |
| 26 | **<u>«Վերածնվող Գյումրի» ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</u>**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ցավով, պետք է ասել, որ մինչ օրս՝ աղետալի երկրաշարժից երեսուն տարի անց, Գյումրիում կան հարյուրավոր ընտանիքներ, ովքեր ապրում են տնակներում կամ ժամանակավոր կացարաններում՝ առանց նվազագույն կենցաղային պայմանների: Միջոցառման իրականացման նպատակն է՝ ներգրավված մյուս պետական մարմինների հետ համատեղ, սահմանել այն իրատեսական քայլերը և միջոցառումները, որոնք հնարավորություն կտան հնարավորինս սեղմ ժամկետներում Գյումրին տեսնել առանց տնակների և մինչ օրս տնակներում ապրող բոլոր ընտանքիներին ապահովել հարմարավետ բնակարաններով: Բացի այդ, միջոցառման իրականացման նպատակն է սահմանել այն կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունները, որոնց իրականացումը կնպաստի Գյումրի քաղաքի և բնակիչների սոցիալական-տնտեսական վիճակի բարելավմանը, ներառյալ՝ զբաղվածության մեծացմանը, քաղաքի գործարար կյանքի աշխուժացմանը:<br>**<u>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u>**<br>Ներկայումս, Գյումրիում կան հարյուրավոր ընտանիքներ, ովքեր ապրում են տնակներում կամ ժամանակավոր կացարաններում՝ առանց նվազագույն կենցաղային պայմանների: Բացի այդ, շարունակում է բարձր մնալ գործազուրկ կամ որևէ ակտիվ զբաղվածություն չունեցող անձանց, ներառյալ՝ երիտասարդների թիվը, ինչը շատ հաճախ պատճառ է հանդիսանում արտագնա աշխատանքի մեկնելու, ինչպես նաև Հայաստանից արտագաղթելու համար:<br>**<u>1.1 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>**<br>Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկվում է ընդունել «Վերածնվող Գյումրի» Ծրագիրը:<br>**<u>2. Կարգավորման առարկան</u>**<br>Ներկայացվող Ծրագրով կսահմանվեն տնակներում ապրողների համար բնակարանով ապահովման միջոցառումներ, զբաղվածության, փոքր ու միջին գործարարության խրախուսման և պետական աջակցության մեխանիզմներ, որոնք կնպաստեն Գյումրի քաղաքի և բնակիչների սոցիալ- տնտեսական կյանքի աշխուժացմանը և բարելավմանը:<br>**<u>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը</u>**<br>«Վերածնվող Գյումրի» Ծրագրի ընդունման արդյունքում ակնկալվում է՝<br>• Ունենալ հստակ գործողությունների և միջոցառումների ծրագիր և ժամանակացույց ուղղված տնակներում բնակվողների՝ բնակարաններով ապահովմանը,<br>Ունենալ Գյումրի քաղաքի սոցիալական տնտեսական կյանքի, ներառյալ՝ զբաղվածության բարձրացմանը, գործարար կյանքի աշխուժացմանը միտված իրական նախաձեռնությունների և միջոցառումների ծրագիր, իր պատասխանատու կատարողներով, մասնակիցներով և ֆինանսավորման աղբյուրներով: |
| 27 | **<u>Կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխում՝ նպատակ ունենալով համակարգը հասարակության համար դարձնել գրավիչ, ընկալելի և ընդունելի</u>** |

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջոցառումը պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի կատարելագործման անհրաժեշտությամբ և նպատակ ունի կուտակային կենսաթոշակային համակարգը համապատասխանեցնել արդի մարտահրավերներին:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն գործող օրենսդրության՝ 2018 թվականի հուլիսի 1-ից պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի սոցիալական վճարի դրույքաչափը 2,5 % է, իսկ պետական մասնակցության չափը՝ 7,5 %:

Այն ըստ էության մասամբ լուծեց եկամուտների կորստյան ռիսկը, սակայն այս համամասնությունը, համաձայն օրենքի, գործելու է մինչև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտային հարկով հարկման բեռի նվազեցումը, այսինքն՝ կրում է ժամանակավոր բնույթ:

Ըստ այդմ, նախկին դրույքաչափին վերադառնալու դեպքում էապես կընդլայնվեն այն մասնակիցների շրջանակը, ում դեպքում սոցիալական վճար կատարելը բացասաբար կազդի ընտանիքի սոցիալական վիճակի վրա: Խնդիրը հատկապես խորն է երեխա ունեցող ընտանիքների պարագայում:

Միաժամանակ, խնդրո առարկա է այն հանգամանքը, որ օրենքը չափազանց խիստ պայմաններ է սահմանում՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը կենսաթոշակային հաշվում առկա միջոցները (անկախ դրանց չափից) տնօրինելու հարցում, սահմանված չեն այդ միջոցները մասնակի տնօրինելու իրավունք՝ օրինակ այն դեպքում, երբ կենսաթոշակային հաշվին առկա միջոցները ավելին են, քան անհրաժեշտ է անձի կենսաթոշակային խնդիրը լուծելու (օրինակ, ցմահ անուիտետ ձեռք բերելու համար) համար:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում:

**2. Կարգավորման առարկան**

Ներկայացվող նախագծով նախատեսվում է.

1) Աշխատողի կողմից վճարվող սոցիալական վճարի հատկացման և պետական մասնակցության միջև փոխկապակցում ժողովրդագրական խնդիրների լուծման և սոցիալական բեռի համաչափության մեխանիզմների ներդրման միջոցով և մասնակիցների մասնաբաժինը նվազեցնելով՝ միևնույն կուտակային դրույքաչափի պարագայում

2) Գումարների օգտագործելու հնարավորության ընդլայնում.

3) սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմի նվազեցում,

4) 1964-1974թթ ծնվածների համար սահմանված՝ համակարգին կամավոր միանալու դեպքում պետական մասնակցության իրավունքի ժամկետի երկարաձգում և այլն»

5) Համակարգի այլ ֆինանսական, տնտեսական, սոցիալական և իրավական բաղադրիչների բարելավում

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագիծն ընդունվելու դեպքում.

1) կլուծվեն կուտակային կենսաթոշակային համակարգի կապակցությամբ առկա խնդիրները և կփարատվեն մտահոգությունները,

2) համակարգը հասարակության համար կդառնա ավելի ընկալելի և ընդունելի,

3) սոցիալական վճարների գծով իրական (առարկայական) արտոնություններ կտրամադրվեն երեխա ունեցող անձանց (ընտանիքներին)՝ համակարգը ծառայեցնելով ժողովրդագրական խնդիրների լուծմանը:

**Առողջապահության նախարարություն**

28 **Մարզային բնակչության համար առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ու մատչելիության ապահովում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**

Մարզային բնակչության համար առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ու մատչելիության ապահովումը բխում է ՀՀ սահմանադրության 86-րդ Հոդվածի 7-րդ կետի և կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացման հարցը դեռևս արդիական խնդիր է Հայաստանի

Հանրապետությունում: Մարզային բժշկական հաստատությունների շենքերը գտնվում են անմխիթար պայմաններում և ենթակա են արդիականացման՝ բնակչությանը տեղում ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու նպատակով:
ՀՀ մարզային առողջապահության համակարգի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և մատչելիության մակարդակի բարձրացումն է:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

«Մարզային բնակչության համար առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ու մատչելիության ապահովում» միջոցառման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման աշխատանքներ և նեղնել մարզային առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագիր:
Վերջին տարիներին ՀՀ մարզերում գործող բժշկական կազմակերպությունների արդիականացման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվել են զգալի ներդրումներ, մասնավորապես՝ կառուցվել կամ հիմնանորոգվել են շուրջ 15 մարզային բժշկական հաստատություն, որոնք հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով, անհրաժեշտ կահույքով և պարագաներով: Այնուամենայնիվ, շատ դեպքերում անգամ այդ բժշկական կենտրոնները գործում են թերծանրաբեռնված, ցածր է տեղում՝ սեփական բնակավայրին մոտ բուժում ստացող մարզային բնակչության տեսակարար կշիռը, ցածր են մարզերում բժշկական կադրերով հագեցվածության ցուցանիշները, մասնավորապես՝ մարզերում աշխատում են բժիշկների ընդամենը շուրջ 29%-ը, միջին բուժանձնակազմի համապատասխան ցուցանիշը կազմում է 51%, մարզային բժշկական հաստատությունների գործունեության կառուցվածքում գերակշռում է թերապևտիկ ծառայությունը (ՀՀ մարզային բժշկական հաստատություններում իրականացվում է վիրահատությունների ընդհանուր թվի ընդամենը 23,6%-ը): Մարզային բժշկական հաստատություններում եկամուտների ընդհանուր կառուցվածքում ցածր է նաև (միջինում շուրջ 10%) վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը:
Ուսումնասիրություններրը ցույց են տալիս, որ Հայաստանում գործում են 600-640 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, որից մոտ 500-ը իրականացնում են արտահիվանդանոցային ծառայություններ, իսկ 130-ից ավելը՝ հիվանդանոցային: Համեմատության համար պետք է նշել, որ Սլովենիայում հիվանդանոցների թիվը կազմում է 30, Սլովակիայում՝ 138, Չեխիայում՝ 156, Խորվաթիայում՝ 76, Լիտվայում՝ 145, իսկ Իսրաելում ընդամենը 57: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների 68% գործում են ՀՀ մարզերում, իսկ 32%՝ Երևանում: Համեմատական վերլուծությունից պարզվել է, որ հիվանդանոցային բուժհաստատությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում 100.000 բնակչի հաշվին կազմում է 4,4, այդ թվում մարզերում՝ 3,9, և Երևանում՝ 5,4, իսկ Եվրամիության երկրներում 3,4:
Միաժամանակհիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային մի շարք բժշկական կենտրոններ և առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստատությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Սակայն ՀՀ մարզերում դեռևս կան անմխիթար պայմաններում գտնվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերին, ինչն անդրադառնում է նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

1) Բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման աշխատանքների իրականացում.
Կոնցեսիոն կառավարման մոդելը, որը ենթադրում է գույքի առևտրային շահագործման իրավունքի փոխանցում կոնցեսիոներներին, համարվում է քաղաքական տեսանկյունից առավել օպտիմալ մոդել, քանի որ՝ ի տարբերություն մասնավորեցմանը, գույքը շարունակում է մնալ պետության սեփականություն:
Մարզերում գործող բժշկական հաստատությունների սպասարկման որակի բարելավման, կազմակերպությունների արդյունավետ կառավարման, բուժ. անձնակազմի հաստիքների համալրման, եկամտաբերության ապահովման տեսանկյունից առավել նպատակահարման տարբերակը դրանք կոնցեսիոն պայմանագրի համաձայն կառավարման հանձնելն է:
Առաջարկվում պիլոտային կարգով կոնցեսիոն կառավարմանը հանձնել պետության կողմից արդիականացված 2 մարզային բժշկական կենտրոն: Այնուհետև, կոնցեսիոն կառավարման հաձնման գործընթացը նախատեսվում է դադարեցնել 1 տարով, որի ընթացքում հավաքագրված բժշկական կենտրոնների բժշկական և ֆինանսական տվյալների հիման վրա կկատարվի վերլուծություն և որոշում կկայացվի հետագայում պետական բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձման նպատակահարմարությունը:
2) Մարզային առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրի ներդրում.

| | |
|---|---|
| | Հայաստանում 10.000 բնակչին բաժին է ընկնում 41.8 մահճակալ: Համեմատության համար պետք է նշել, որ Սլովենիայում նույն ցուցանիշը կազմում է 45.5, Սլովակիայում՝ 42.0, Չեխիայում՝ 59.3, Խորվաթիայում՝ 35.1, Լիտվայում՝ 49.8, իսկ Իսրաելում 54.4: Վերլուծությունից պարզ է դարնում, որ թեև Հայաստանի Հանրապետությունում մահճակալային ֆոնդի ցուցանիշը համապատասխանում է վերոնշյալ երկրների ցուցանիշներին, սակայն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների թիվը անհամամատ բարձր է:<br>Նախագծի ընդունմամբ առաջարկվում է պահպանելով ներկայում գործող մարզային մահճակալային ֆոնդը, իրականացնել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների խոշորացում՝ միավորելով բնակչության համար տարածքային առումով հասանելի հաստատությունները, ստեղծելով մինչ այդ տվյալ համայնքում չիրականացվող նոր ծառայություններ, միավորել «թերծանրաբեռնված» և կրկնվող ծառայությունները, ինչպես նաև մշակել օպտիմալացման այլ մեխանիզմներ:<br>**2. Կարգավորման առարկան.**<br>Մարզային բժշկական կենտրոնների արդյունավետ կառավարում, ինչպես նաև բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման հասանելիության, մատչելիության և որակի բարելավում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Հաշվի առնելով մարզային բժկական կենտրոններում առկա խնդիրների և պետություն-մասնավոր սեկտոր համագործակցության առավելությունների՝ մարզերում գործող բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնելու արդյունքում ակնկալվում է.<br>• առավել լայն տարածված հիվանդությունների վաղ հայտբերման աճ,<br>• բժշկական ծառայությունների սպառման ավելացում՝ սեփական բնակավայրի մոտ,<br>• մարզերում բժշկական կադրերով համալրման խնդիրի լուծում,<br>• պետության կողմից կատարված ներդնումների երկարակածության ապահովում՝ իրականացնելով սարքավորումների սերունդափոխությունը կոնցեսիոների կողմից հատկացվող ամորտիզացիոն ծախսերի հիման վրա:<br>Աշխատանքների ավարտից մեկ տարի հետո առնվազն 2 մարզային կենտրոնների հանձնում կոնցեսիոն կառավարման: Ծրագրի ներդրման ավարտից 5 տարի անց մարզերում, բնակավայրին մոտ, բժշկական օգնություն և սպասարկում ստացող բնակչության տեսակարար կշռի ավելացում 20%-ով, բուժման նպատակով մայրաքաղաք մեկնողների թվի նվազում 5%-ով:<br>2018 թվականին նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման/կառուցման և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես.<br>1) 2018 թվականին նախատեսվում է ավարտել 2016թ. մեկնարկած ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ (130 մահճակալ) հիմնանորոգման շինարարական, ինչպես նաև բժշկական կենտրոնի հագեցման աշխատանքները: Նպատակն է աջակցել Արտաշատի տարածաշրջանի բնակչությանը (շուրջ 91.000 բնակիչ) մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանը:<br>2) ՀՀ Գեղարունիքի մարզի Սևան քաղաքում նախատեսվում է նույնպես ավարտել նոր հիվանդանոցի (32 մահճակալ) կառուցման շինարարական, ինչպես նաև կահույքով, սարավորումներով հագեցման աշխատանքները: Նորակառույց հիվանդանոցային մասնաշենքը հնարավորություն կընձեռի էապես բարելավել մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը, արդյունավետությունը և մատչելիությունը ազգաբնակչության համար:<br>Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Գեղարքունիքի մարզը հանդիսանում է տուրիստական գոտի, ժամանակակից առողջապահական ենթակառուցվածքները ևս կնպաստեն տուրիզմի զարգացմանը:<br>3) ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնը՝ 95 մահճակալ հզորությամբ, բազմապրոֆիլային հիվանդանոց է, որը լայն սպեկտրի ստացիոնար և պոլիկլինիկական ծառայություններ է մատուցում Մարտունու տարածաշրջանի 89.8 հազար բնակչությանը, որից 12.5 հազարը քաղաքային է, 77.3-ը՝ գյուղական:<br>Մարտունու բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են 1987 թվականին կառուցված, եռահարկ պանելային շինությունում, որը շահագործման հանձնելուց ի վեր չի ենթարկվել կապիտալ հիմնանորոգման, և ներկայում, գտնվում է անբարեկարգ վիճակում:<br>Ելնելով վերոնշյալից, շինության չափսերից, ինչպես նաև կենտրոնի մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ տնտեսապես արդյունավետ չէ Մարտունու բժշկական կենտրոնի ներկայիս մասնաշենքի հիմնանորոգումը:<br>Ուստի՝ նպատակահարմար է Մարտունու բժշկական կենտրոնի տարածքում կառուցել հիվանդանոցային |

| | |
|---|---|
| | և պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բժշկական կենտրոնի նոր մասնաշենք՝ 55 ստացիոնար մահճակալ հզորությամբ:<br>4) ՀՀ Վայոց Ձորի մարզն ընդգրկում է 3 քաղաք՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, ինչպես նաև 41 գյուղական համայնք և 52 գյուղ:<br>Եղեգնաձորի տարածաշրջանում գործում է «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ 45 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի շուրջ 33.4 հազար ազգաբնակչությանը: Բժշկական կենտրոնը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կարիք ունի կապիտալ հիմնանորոգման, իսկ սարքավորումները, կահույքը և պարագաները ֆիզիկապես մաշված են, մեծ մասն արտադրված են դեռևս Խորհրդային Միության տարիներին:<br>Վայքի տարածաշրջանում գործում է «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ն՝ 35 մահճակալային ֆոնդով, որը սպասարկում է Վայքի և Ջերմուկի տարածաշրջանների բնակչությանը՝ շուրջ 11.6 հազար մարդ: Ծառայություններն իրականացվում են հիմնական, ծննդատան և ինֆեկցիոն ծառայության մասնաշենքերում: Գլխավոր մասնաշենքը երկհարկանի է, զբաղեցնում է շուրջ 1620 քմ ընդհանուր մակերեսով տարածք, որը կառուցվել է 1962-70-ական թվականներին և մասնակի վերանորոգվել պետական բյուջեի միջոցներով: Բուժմիավորման մյուս եռահարկ մասնաշենքում տեղակայված է ծննդօգնության ծառայությունը, որը համեմատաբար նոր՝ 1994 թվականի, շուրջ 2259 քմ ընդհանուր մակերես տարածքով կառույց է:<br>Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև կենտրոնների մահճակալների ծանրաբեռնվածության ցուցանիշներից՝ նպատակահարմար չէ արդիականացնել մարզի 2 բուժհաստատությունները: Ուստի՝ նպատակահարմար է միավորել Եղեգնաձորի և Վայքի բժշկական հաստատությունների հիվանդանոցային և ծննդօգնության ծառայությունները (ընդհանուր՝ 80 մահճակալ հզորությամբ)՝ կառուցելով նոր բժշկական կենտրոն (36 ստացիոնար մահճակալ հզորությամբ) 2 քաղաքները կապող ճանապարհի միջնամասում: |
| 29 | **ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ**<br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**<br>Առողջապահական քաղաքականության անկյունաքարային ուղղությունը հիվանդությունների կանխարգելմանն ուղղված քաղաքականությունն է, որը բխում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածից, 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից և կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ: |
| 29 | **«Տարափոխիկ և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման 2018-2023թթ. ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Ծրագրով կանոնակարգվում է տարափոխիկ և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջգերատեսչական համագործակցության, այդ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման իրավական հիմքի, համաճարակաբանական հսկողության համակարգի, կլինիկա-ախտորոշիչ և բժշկական օգնության համակարգի, գիտական ներուժի, կադրային ներուժի զարգացման, բնակչության շրջանում փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման կազմակերպման և իրականացման հարցերը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ներկայում Հայաստանի Հանրապետությունում տարածված վարակիչ հիվանդությունների փոխանցողները կարող են պատճառ դառնալ հանրապետությունում արձանագրվող տարափոխիկ հիվանդությունների առկա համաճարակային իրավիճակի բարդացմանն, ինչպես նաև՝ տարածել նախկինում հանրապետության տարածքում երբևէ չարձանագրված հիվանդություններ: Տավուշի մարզի Բագրատաշենի սահմանամերձ տարածքում հայտնաբերվել է ՀՀ-ում մինչ այս չհայտնաբերված մոծակի տեսակ՝ Աեդես ալբոպիկտուս, որը տարբեր վիրուսային տենդային հիվանդությունների (Դենգե, Չիկունգունիա, Դեղին տենդ, Զիկա) հարուցիչների փոխանցելու ունակության պատճառով ունի մեծ հանրային առողջապահական նշանակություն: Հանրապետությունում սկսվել են արձանագրվել Լայմի հիվանդության դեպքեր: ՀՀ սահմանակից երկրներում արձանագրվում են փոխանցողով պայմանավորված այնպիսի լուրջ հիվանդությունների բռնկումներ, ինչպիսիք են Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդը, Արևմտյան Նեղոսի տենդը և այլն: Հնարավոր է այս հիվանդությունների տարածումը նաև Հայաստանում: Սկսած 1999 թվականից |

հանրապետությունում կրկին արձանագրվում են ընդերային լեյշմանիոզի դեպքեր, որը հետևանք է շնազգի կենդանիների օրգանիզմում, որպես բնական պահոց, վարակի գոյատևման, օրգանական աղբի կուտակումների վրա բազմացող մլակների միջոցով կենդանիներից մարդուն վարակի փոխանցման: 1994-2006 թվականներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է մալարիայի տեղական բռնկում: Ծավալած համակարգված և բազմոլորտ պայքարի շնորհիվ 2006 թվականից սկսած Հայաստանում տեղական ծագման մալարիայի դեպք չի արձանագրվել և 2011 թվականին ՀՀ ԱՀԿ-ի կողմից վկայագրվել է, որպես մալարիայից ազատ տարածք: Նկատի ունենալով, որ հանրապետության բնակչության 33%-ն ապրում է մալարիայի փոխանցման համար բարենպաստ տարածքներում, ներկայում Հայաստանի Հանրապետության խնդիրն է իրականացվող կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ պահպանել մալարիայի բարվոք համաճարակային իրավիճակը: Պատմականորեն հանրապետությունում տարածված են եղել մակաբույծ որդերով հարուցված հիվանդություններ, մասնավորապես՝ ասկարիդոզ, տրիխոցեֆալոզ, էնտերոբիոզ, տենիիդոզներ և այլն, որոնք շարունակում են արձանագրվել նաև ներկայում: Վերջին տարիներին հանրապետությունում կրկին նկատվում է հելմինթոզներով հիվանդացության աճ: Միջազգային ճանապարհորդությունների և բեռնափոխադրումների աճող ծավալը նոր հիվանդությունների ներբերման և տարածման հնարավորություններ է ստեղծել: ԱՀԿ-ն նախաձեռնություն է հանդես բերել մինչև 2020 թվականը վերացնել 10 մոռացված հիվանդություններ, որոնց թվում են նաև հելմինթոզները և լեյշմանիոզը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը կարող է ավելանալ պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում՝ սանիտարական մշակույթի զարգացման, փոխանցողներից պաշտպանության և անհատական հիգիենայի պահպանման, հիվանդությունների օջախների սանիտարական վիճակի, ջրամատակարարման, բնակավայրերի բարեկարգման և հիգիենիկ առողջացման պայմաններում: Հատկապես կարևորվում է համայնքային մակարդակում աշխատանքը՝ բոլոր շահագրգիռ կառույցների մասնակցությամբ: Ներկայում փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումները կանոնակարգված չեն, մասնավորապես՝ նկատի ունենալով, այդ հիվանդությունների դեմ պայքարի գործում միջգերատեսչական համագործակցության նշանակությունը:

Վերոհիշյալ միջոցառմամբ նախատեսված իրավական ակտն ընդունելու լիազորությունը կառավարությանը վերապահված է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով:

**2. Կարգավորման առարկան.**

Տարափոխիկ և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջգերատեսչական համագործակցության, այդ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման իրավական հիմքի, համաճարակաբանական հսկողության համակարգի, կլինիկա-ախտորոշիչ և բժշկական օգնության համակարգի, գիտական ներուժի, կադրային ներուժի զարգացման, բնակչության շրջանում փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման կազմակերպման և իրականացման հարցերը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**

Հայաստանի Հանրապետությունում նոր ի հայտ եկող և «վերադարձող» վարակիչ հիվանդությունների, մալարիայի կրկին արմատավորման կանխարգելումը, տարափոխիկ և մակաբուծային այլ հիվանդությունների հիվանդացության նվազեցումը:

**«Ազգային լաբորատոր համակարգ ձևավորելու և վերջինիս զարգացման ազգային քաղաքականությունը, 2019-2023 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը.**

Սույն իրավական ակտի մշակումը պայմանավորված է ՀՀ ախտորոշիչ լաբորատորիաների միասնական, ստանդարտացված գործունեության համակարգման, միջազգային պահանջներին համապատասխան որակյալ, անվտանգ, համադրելի ստանդարտ գործելակարգերի կիրառման, լաբորատոր ծառայությունների որակի և հասանելիության բարձրացման, դրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմների սահմանման, լաբորատոր մասնագետների շարունակական կրթական ծրագրերի արդիականացման ապահովման

| | |
|---|---|
| | օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունից:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ունի բարդ լաբորատոր համակարգ՝ կազմված պետական և մասնավոր, ինչպես ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, այնպես էլ տարբեր գերատեսչությունների ներքո գտնվող հաստատությունների կազմում գործող ախտորոշիչ լաբորատորիաներից, որոնք գործում են անջատ, չհամակարգված, ոչ ստանդարտ գործելակարգերով, նրանցից ոմանք կիրառում են ոչ արդի մեթոդներ, չունեն անգամ տարրական ենթակառուցվածքային պայմաններ: Երկրում գործող լաբորատոր գործունեության լիցենզավորման պահանջները և կիրառվող վերահսկողական մեխանիզմները անկատար են և չեն ապահովում միջազգային պահանջներին համապատասխան վերահսկողություն, չկան լաբորատոր ծառայությունների որակի գնահատման ազգային ծրագրեր, չկան ռեֆերենս լաբորատորիաներ, վերջիններիս ճանաչման համար ազգային չափանիշներ և լաբորատոր ցուցանիշների ռեֆերենս չափորոշիչներ, լաբորատոր մասնագետների կրթական և շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում ներառված չեն լաբորատոր որակի կառավարմանը, կենսանվտանգությանն ու կենսապահովմանը նվիրված ուսուցողական նյութեր, չկա ազգային մակարդակում «Ին Վիտրո» ախտորոշման սարքավորումների նկատմամբ որակի հսկողություն, ինչի հետևանքով տարբեր լաբորատորիաներում իրականացված ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները համադրելի չեն, վստահելի չեն և զուրկ՝ ապացուցողական հիմքերից:<br>**1. 2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Առաջարկվում է Կառավարության աշխատակազմ ներկայացնել «Ազգային լաբորատոր համակարգ ձևավորելու և վերջինիս զարգացման ազգային քաղաքականությունը, 2019-2023 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որում ներառված միջոցառումները կապահովեն վերը նշված խնդիրների լուծումը:<br>Վերոհիշյալ միջոցառմամբ նախատեսված իրավական ակտն ընդունելու լիազորությունը կառավարությանը վերապահված է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով:<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում, լաբորատոր-ախտորոշիչ ոլորտի գործունեության ստանդարտացում, արդիականացում:<br>**3. Միջոցառումների կատարման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Իրավական ակտի ընդունման արդյունքում կձևավորվի ախտորոշիչ լաբորատորիաները միավորող Ազգային լաբորատոր համակարգ, որը կենտրոնացված կառավարման համակարգի շնորհիվ կունենա արդիականացված, միջազգային չափորոշիչներին համապատասխան ստանդարտ գործելակարգերով տրամադրած արդյունքները կլինեն հուսալի, համադրելի, ճշգրիտ և ապացուցողական հիմքերով: |
| | **«2021-2025 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագիրը, Իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին որոշման նախագիծը» կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**<br><br>**1.Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների շարունակական իրականացման ապահովում: Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում, և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:<br><br>**a. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Հանրապետությունում չեն արձանագրվում պատվաստումներով կանխարգելվող մի շարք հիվանդություններ՝ դիֆթերիա, պոլիոմիելիտ, նորածնային փայտացում, կարմրուկի և կարմրախտի տեղական դեպքեր, իսկ կապույտ հազը և համաճարակային պարոտիտն արձանագրվել են եզակի դեպքերի տեսքով: 1995 թվականից հանրապետությունում պոլիոմիելիտի դեպք չի արձանագրվում: 2000թ. չեն արձանագրվում դիֆթերիայի դեպքեր: Փայտացման եզակի դեպքերն արձանագրվում են հիմնականում չպատվաստված կամ թերի պատվաստված մեծահասակ ազգաբնակչության շրջանում: Կարմրուկի տեղական դեպքեր չեն գրանցվում, բերովի դեպքերը գերազանցապես արձանագրվում են |

չպատվաստված, պատվաստումներից հրաժարված կամ թերի պատվաստված անձանց շրջանում: Հեպատիտ Բ-ի նվազում, մինչև 14 տարեկանների շրջանում սուր դեպքերի բացակայություն: Ռոտավիրուսային վարակների դեմ պատվաստումների ներդրման արդյունքում բոլոր տարիքային խմբերում դիտվեց ռոտավիրուսային վարակներով պայմանավորված հոսպիտալացումների կտրուկ նվազում՝ մոտ 5 անգամ (2011թ. հունվար-մարտին՝ 60.3%, 2017թ հունվար-մարտին՝ 12%): Նվազումն ակնառու է հատկապես պատվաստման ենթակա տարիքային խմբում՝ մինչև 1 տարեկան երեխաների շրջանում:

Վերջին տարիներին դիտվում է կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ կատարվող պատվաստումներում բնակչության նպատակային խմբերի ընդգրկման ցուցանիշների կայուն աճ: 1 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԲՑԺ, հեպատիտ Բ, հնգավալենտ, պոլիոմիելիտ, 2012 թվականից նաև ռոտավիրուսային) ստացած երեխաների ընդգրկվածությունը 86%-ից (2008թ.) աճել է մինչև 91% (2017թ.), 2 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԿԿԽ, ԱԿԴՓ, պոլիոմիելիտ) ստացած երեխաների ընդգրկվածությունն 82 %-ից (2008թ.) աճել է մինչև 93% (2017թ.), 7 տարեկան երեխաների շրջանում անհրաժեշտ պատվաստումների ամբողջական փաթեթը (ԿԿԽ, ԱԴՓ-Մ, պոլիոմիելիտ) ստացած երեխաների ընդգրկվածությունն աճել է 93%-ից (2008թ.) մինչև 96% (2017թ.):

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, հակապատվաստումային տարբեր խմբավորումների ակտիվացման և տարածման միտումը տարեցտարի նպաստում է պատվաստումներից հրաժարվողների թվի աճին: Պատվաստումներից հրաժարվողների թվի շարունակական աճը կհանգեցնի պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների նվազեցմանը և կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով անբարենպաստ համաճարակային իրավիճակի առաջացմանը: Վերոհիշյալ խնդրի լուծման նպատակով՝ անհրաժեշտ է բարձրացնել բուժաշխատողների, ինչպես նաև բնակչության իրազեկվածությունը՝ պատվաստումների կարևորության, անվտանգության և արդյունավետության վերաբերյալ:

Վերոհիշյալ միջոցառմամբ նախատեսված իրավական ակտն ընդունելու լիազորությունը կառավարությանը վերապահված է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով:

**2.Կարգավորման առարկան.**

Իմունականխարգելման ազգային ծրագրի առկա ձեռքբերումների և նվաճումների պահպանում և շարունակական զարգացում, մասնավորապես՝ իմունականխարգելման ազգային ծրագրի նորմատիվ–օրենսդրական բազայի կատարելագործում, նոր գործիքների, տեխնոլոգիաների, պատվաստանյութերի արդյունավետ կառավարման նոր համակարգերի, սառցային շղթայի նորագույն տեխնիկական միջոցների, ինչպես նաև նոր պատվաստանյութերի ներդրում և կիրառում:

**3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը.**

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

30

**Ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**

Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծխախոտի օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջապահության հիմնական խնդիրներից մեկն է: Ծխախոտի օգտագործումը և դրա հետևանքով առաջացած ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության և մահացության բարձր ցուցանիշները առողջապահական և տնտեսական լուրջ խնդիրներ են ստեղծում:

Միջոցառման իրականացման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել մի շարք քայլեր ուղղված Հայաստանի Հանրապետությունում ծխախոտի օգտագործման, սպառման նվազեցմանը, պահպանել բնակչության առողջությունը՝ պաշտպանելով ծխախոտի ծխի երկրորդային ազդեցությունից և նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշները՝ կրճատելով ծխախոտի օգտագործումը, պատշաճ իրազեկելով բնակչությանը: Արդյունքում ակնկալվում է պատշաճ իրազեկմամբ և համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրապետությունում ունենալ վարքագծային փոփոխություն ծխախոտի օգտագործման հարցում և նվազեցնել՝1) ծխախոտի օգտագործման տարածվածությունը (տարեկան

1,5-2 %-ով),
2) 15 և բարձր տարիքի տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածության ընթացիկ ցուցանիշի հարաբերական կրճատում մինչև 10%-ով:
3) երկրորդային ծխի ազդեցության նվազեցում, որը կնպաստի արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և շաքարային դիաբետից ընդհանուր և վաղաժամ մահացության կրճատում:
Միևնույն ժամանակ նշված միջոցառման իրականացումը բխում է 2004 թվականի հոկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի մասին շրջանակային կոնվենցիայի պահանջներիվ, որի նպատակն է միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում իրականցվող ծխախոտի դեմ պայքարի միջոցառումների օգնությամբ ներկա և ապագա սերունդներին պաշտպանել մարդկանց առողջության համար ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության քայքայիչ հետևանքներից:

**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ծխախոտի օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջապահության հիմնական խնդիրներից մեկն է: Համաձայն առողջապահության նախարարության Առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2014 թվականի պաշտոնական տվյալների, Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները զբաղեցնում են առաջին տեղը՝ 48%, որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20.6%, շաքարային դիաբետը՝ 4.8%, վնասվածքները, թունավորումները և արտաքին պատճառները՝ 4.7%, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (բրոնխիտ, ասթմա, քրոնիկական այլ թոքային և բրոնխոէկտատիկ հիվանդություններ)՝ 3.6%:
Համաձայն ապացուցողական բժշկության տվյալների, ոչ վարակիչ հիվանդությունների զարգացումն ասոցացվում է կենսակերպային առանձնահատկությունների և դրանց հետ կապված՝ ռիսկի գործոնների, ժառանգական առանձնահատկությունների հետ, որոնք ունակ են արագացնել հիվանդության զարգացումը: Բնակչության առողջության վիճակի վրա ռիսկի գործոնների առկայությունը և վնասակար ազդեցությունն արտահայտվում է ոչ թե անմիջապես, այլ համեմատաբար, երկար ժամանակահատվածում:
Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոններից է նաև ծխախոտի օգտագործումը:
Համաձայն 2012 թվականին առողջապահության համակարգի գործունեության գնահատման ծրագրի շրջանակում իրականացված հետազոտության, Հայաստանում 20 տարեկան և բարձր տարիքի ամեն օր ծխող տղամարդկանց քանակը կազմում է 55,5 %: Ծխախոտի օգտագործումն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ակնհայտորեն ցույց են տալիս, որ ծխախոտի օգտագործումը տղամարդկանց շրջանում թռիչքաձև աճում է 15-19 տարիքային խմբից 20-29 տարիքային խումբ անցնելիս: Ըստ տարիքի ծխախոտի օգտագործումը տղամարդկանց մոտ հասնում է իր առավելագույնին 30-39 տարեկանների շրջանում, և աստիճանաբար սկսում է նվազել: 70 տարեկան և բարձր բնակչության շրջանում ամեն օր ծխողների քանակը ընդամենը 26% է:
Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ ծխախոտի օգտագործման կրճատումը կնպաստի առողջության ցուցանիշների բարելավմանը, ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության և մահացության նվազեցմանը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Որպես հիմնախնդրի լուծում, առաջարկվում է իրականացնել բնակչության իրազեկման արշավ՝ ծխելու վնասակարության, առողջ ապրելակերպի, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ (տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստում, վարքագծային ուսուցման իրականացման ընթացքում, խմբային քննարկումների, կլոր սեղանների, համաժողովների ընթացքում, հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի միջոցով):
Միևնույն ժամանակ աշխատանքները զուգահեռ իրականացնել նոր օրենքի նախագծի ինչպես նաև ըստ անհրաժեշտության հարակից օրենքների նախագծերի մշակման ուղղությամբ, որտեղ կամրագրվեն ծխելու դեմ պայքարի գերակայությունները, որոնք գերակշիռ մասով ուղղված են լինելու բնակչության առողջության պահպանմանը նպաստող պայմանների սահմանմանը (օգտագործման համար արգելված վայրերի ընդլայնում, իրազեկման արդյունավետ գործիքների մշակում և այլն):

**2. Կարգավորման առարկան**

Միջոցառման իրականացման առարկան է պահպանել բնակչության առողջությունը և նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշները՝ կրճատելով ծխախոտի օգտագործման

| | |
|---|---|
| | տարածվածությունը:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում ակնկալվում է պատշաճ իրազեկմամբ հանրապետությունում ունենալ վարքագծային փոփոխություն ծխախոտի օգտագործման հարցում և իրազեկման ու օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում նվազեցնել՝<br>1) ծխախոտի օգտագործման տարածվածությունը (տարեկան 1,5-2 %-ով),<br>2) 15 և բարձր տարիքի տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածության ընթացիկ ցուցանիշի հարաբերական կրճատում մինչև 10%-ով:<br>3) երկրորդային ծխի ազդեցության նվազեցում, որը կնպաստի արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և շաքարային դիաբետից ընդհանուր և վաղաժամ մահացության կրճատում: |
| 31 | **Սոցիալապես անապահով և առանձին հատուկ խմբերում ընդգրկված անձանց որակյալ և մատչելի բժշկական օգնության ապահովում**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սոցիալապես անապահով և առանձին հատուկ խմբերում ընդգրկված անձանց համար պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման, սոցիալական արդարության և իրատեսական բուժօգնության ծավալների տրամադրման սկզբունքների հիման վրա ամբողջական վերանայված փաթեթի ներդրման և շահառուների համար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների մատչելիության բարձրացման անհրաժեշտությունից:<br>**1.1 Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա հիմնախնդիրները**<br>ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված է պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող սոցիալապես անապահով կամ առանձին հատուկ խմբերի ցանկը: Տարիների ընթացքում այդ ցանկում ընդգրկված խմբերը պարբերաբար համալրվել են և ներկայում կազմում են թվով 25-ը: Պետք է նկատել, որ նախորդ տարիների, ինչպես նաև առկա ընթացիկ տարվա ցուցանիշները ցույց են տալիս, որ պետության կողմից երաշխավորված հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում սոցիալական անապահովության միավոր չունեցող 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամներին, մինչդեռ առավել խոցելի խմբեր հանդիսացող սոցիալապես անապահով քաղաքացիների, 1-ին խմբի հաշմանդամների, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման վրա կատարված ծախսերը էականորեն քիչ են: Փաստորեն, ստացվում է մի իրավիճակ, որ սոցիալապես պակաս խոցելի խավերի բուժօգնության համար առավել մեծ ծավալի միջոցներ են հատկացվում, քան առավել խոցելի համարվող անապահով խավերին: Նկատի ունենալով, որ սոցիալական պետության հիմնական առաքելությունն առավել անվճարունակ խավերի սոցիալական պաշտպանությունն է և նրանց առողջության պահպանման առաջնահերթ կարիքների բավարարումը, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստացող շահառուների առկա խմբերի սահմանումը, ինչպես նաև նրանց յուրաքանչյուրին պետական պատվերի շրջանակներում հատկացվող բժշկական ծառայությունների շրջանակը հրատապ վերանայման կարիք ունի՝ սոցիալական արդարության, հավասար հնարավորությունների ընձեռնման, առավել կարիքավոր խմբերին առաջնահերթություն տալու նկատառումներով՝ հաշվի առնելով պետական բյուջեից հատկացվող միջոցների ծավալը:<br>Մյուս կողմից, քանի որ գործող մեխանիզմներով շահառուներին պետական բյուջեից հատկացվող միջոցները բուժհաստատությունների միջև բաշխվում են նախապես՝ մինչև կոնկրետ բժշկական ծառայություն մատուցելը, տարվա ընթացքում առաջանում է բաշխված գումարի և պահանջարկի անհամապատասխանություն և փաստորեն, մեծ պահանջարկ վայելող բուժհաստատություններին տրամադրված գումարները ավարտվում են օրացուցային տարվա ավարտից շատ ավելի շուտ և շահառուն փաստացի չի կարողանում օգտվել բժշկական ծառայություններից և ստիպված է հերթագրվել, իսկ այդ դեպքում նրա հերթը կարող է հասնել 3-6 ամսից: Այս պայմաններում շահառուների մի մասը տվյալ բժշկական ծառայության ստացման համար ստիպված օգտվում են վճարովի ծառայություններից: Արդյունքում առկա են բազմաթիվ դժգոհություններ ինչպես շահառուների, այնպես էլ բժշկական հաստատությունների մեծ մասի կողմից:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացումը: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է, սոցիալական արդարություն ապահովելու պետության հանձնառության համատեքստում վերանայել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շահառուների ցանկում ընդգրկված առանձին խմբերին մատուցվող բժշկական օգնության և սպասարկման կարգը, տրամադրվող ծառայությունների շրջանակը՝ հիմքում դնելով անապահով խավերի և առանձին խմբերի համար առողջության ապահովագրության փաթեթների ձեռքբերման սկզբունքը,<br>**3. Միջոցառման կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական բյուջեից հատկացվող միջոցների առավել նպատակային և հասցեական ծախսում:<br>Սոցիալապես անապահով և առանձին հատուկ խմբերում ընդգրկված անձանց համար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում որակյալ և մատչելի ծառայությունների ապահովում,<br>Շահառուների համար իրենց նախընտրած բժշկական հաստատությունում, համապատասխան բժշկական փաթեթի շրջանակներում, բժշկական ծառայությունների ստացման անխոչընդոտ հնարավորությունների ստեղծում: |
| 32 | **Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրումը բխում է ՀՀ սահմանադրության 86 Հոդվածի 7-րդ կետի և կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրմամբ առաջարկվում է ներդնել թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության, չարորակ նորագոյացությունների, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի դեմ պայքարի ռազմավարությունները, ինչպես նաև ՀՀ բնակչության շրջանում հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի սքրինինգային ծրագիրը:<br>1) Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարության ներդրում.<br>Ըստ վիճակագրական տվյալների, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (ԹՔՕՀ) մահաբերության 3 տեղը և հաշմանդամության առաջացման 4 տեղն են զբաղեցնում՝ սիրտ-անոթային և ուռուցքային հիվանդություններից հետո: Որպես ԹՔՕՀ առաջացման գլխավոր ռիսկի գործոն է համարվում ծխախոտի օգտագործումը և օդի ախտոտվածությունը: Հայաստանի Հանրապետությունում ԹՔՕՀ վերաբերյալ վիճակագրական տվյալների ոչ լիարժեքությունը, ԹՔՕՀ տարածվածության, պացիենտների խնամքի ու բուժման ոչ բավարար վերահսկողականությունը և հասարակության ցածր տեղեկատվածությունը ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ՝ անհրաժեշտություն են ստեղծել ԹՔՕՀ դեմ պայքարի ռազմավարության մշակմանը:<br>2) Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրում.<br>Չնայած, որ վերջին տարիներին ՀՀ բնակչության շրջանում արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության որոշակի կայունացում, այսպես, եթե 2014թ. բնակչության շրջանում գրանցվել է առաջին անգամ ախտորոշված նորագոյացությունների թիվը կազմել 8.365 դեպք, 2015թ-ին՝ 8.372, իսկ 2016թ-ին դեպքերի թիվն նախորդ տարվա նկատմամբ ավելացել է ընդամենը 0.04%-ով: Այնուամենայնիվ, բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում չարորակ նորագոյացություններով պայմանավորված մահացության բեռը կազմում է 20,0%:<br>Հանրապետությունում տարեցտարի ավելացող չարորակ նորագոյացություններով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել չարորակ նորագոյացություններով պայմանավորված հիվանդությունների հետագա զարգացումը:<br>3) ՀՀ բնակչության շրջանում հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի սքրինինգային ծրագրի իրականացում.<br>Չարորակ նորագոյացությունների կանխարգելման և վաղ ախտորոշման համատեքստում հաստ և ուղիղ աղիների քաղցկեղը լուրջ առողջապահական խնդիր է ամբողջ աշխարհում, ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում:<br>«Կոլոռեկտալ քաղցկեղ» ախտորոշումն ամենատարածված ախտորոշումներից է շագանակագեղձի քաղցկեղից և թոքի քաղցկեղից հետո տղամարդկանց, և կրծքագեղձի քաղցկեղից հետո՝ կանանց շրջանում: Այն նաև առաջատար տեղ է զբաղեցնում քաղցկեղից մահացության պատճառների մեջ՝ զբաղեցնելով երկրորդ տեղը տղամարդկանց և երրորդ տեղը՝ կանանց շրջանում քաղցկեղից մահացության ցուցանիշների շարքում:<br>Հայաստանի Հանրապետությունում 2015թ., 2016թ. և 2017թ. հաստ և ուղիղ աղիների քաղցկեղով |

| | |
|---|---|
| | հիվանդացության ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով կազմում է 24.1, 25.2 և 25,4, իսկ մահացությունը՝ 17.6/100 000, 16.9/100 000 և 16.2/100 000 համապատասխանաբար: Հիվանդացության ամենաբարձր ցուցանիշներն (դեպքերի 81%) արձանագրվում են 49-79տ. տարիքային խմբում: Չափազանց բարձր է նաև բարձիթողի դեպքերի թիվը, և համապատասխանաբար ցածր է ապրելիության ցուցանիշը: Մասնավորապես, 2015թ. և 2016թ. Հայաստանում բարձիթողի դեպքերը կազմում են համապատասխանաբար 45.1% և 38.4%, իսկ 5 տարվա ապրելիության ցուցանիշը՝ մոտ 29-32%: Նկատվում է նաև մինչև 50 տարեկան անձանց շրջանում հաստ և ուղիղ աղիների քաղցկեղով հիվանդացության աճ:<br>Սքրինինգի իրականացման նպատակը ՀՀ բնակչության շրջանում հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի և նախաքաղցկեղային վիճակների վաղ հայտնաբերումն է, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարում՝ հաստ և ուղիղ աղիների քաղցկեղից մահացության ցուցանիշների նվազումը և ապրելիության ցուցանիշի բարելավումը:<br>4) Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարության ներդրում.<br>Համաձայն 2016 թվականի առողջապահության նախարարության առողջապահության տեղեկատվական վերլուծական ազգային կենտրոնի (ԱՏՎԱԿ) և ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների, բնակչության շրջանում առավել տարածված ոչվարակիչ հիվանդություններից մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) զբաղեցնում են առաջին տեղը՝ 48%: Հանրապետության բնակչության «կյանքի անաշխատունակ տարիների» ցուցանիշի ավելացման (DALY, disability adjusted life years) 10 հիմնական պատճառներից չորսը պատկանում են ԱՇՀՀ (սրտի իշեմիկ հիվանդություն, ուղեղանոթային հիվանդություններ, զարկերակային գերճնշում (ԶԳ), սրտի այլ հիվանդություններ):<br>Հանրապետությունում տարեց տարի ավելացող սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման նպատակն է բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել սիրտ-անոթային հիվանդությունների հետագա զարգացումը:<br>5) Շաքարային դիաբետի դեմ պայքարի ռազմավարության ներդրում.<br>Համաձայն 2007թ. Առողջապահության տեղեկատվական վերլուծական հանրապետական կենտրոնի պաշտոնական վիճակագրական տվյալների, Հայաստանի Հանրապետության չափահաս բնակչության շրջանում I տիպի շաքարային դիաբետի տարածվածությունը կազմել է 8 159 դեպք (338.6՝ 100 000 բնակչի հաշվով), II տիպի շաքարային դիաբետի տարածվածությունը՝ 37 244 դեպք (1545.8): 2007 թվականին շաքարային դիաբետի ընդհանուր տարածվածության կառուցվածքում գերազանցում է II տիպի շաքարային դիաբետը, որի տեսակարար կշիռը կազմել է 82%, իսկ I տիպի շաքարային դիաբետը՝ 18%:<br>2001-2007թթ. շաքարային դիաբետի տարածվածության և հիվանդացության ցուցանիշների վերլուծությունն արձանագրում է տարածվածության բացարձակ (38679-ից՝ 45501) և հարաբերական (1310-ից՝ 1749) ցուցանիշների ամենամյա աճ, և գրեթե երկու անգամ շաքարային դիաբետի հիվանդացության բացարձակ (2769-ից՝ 5269) և հարաբերական (94-ից՝ 203) ցուցանիշների աճ:<br>Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով (ԱՀԿ) Հայաստանն ունի շաքարային դիաբետից մահացության ամենաբարձր ցուցանիշը տարածաշրջանում, որը կազմում է 50.9 մահվան դեպք 100 000 բնակչի հաշվով՝ Վրաստանի, Իրանի ու Թուրքիայի 20.9 և Ադրբեջանի 30.9 մահվան դեպքի համեմատ:<br>2007 թվականին շաքարային դիաբետից մահացության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր մահացության կառուցվածքում 1990 թվականի նկատմամբ աճել է գրեթե երկու անգամ՝ 2.25%-ից մինչև 4.9% (1332-ի դեպքից՝ 1614, 36-ից՝ 41Խ(100Խ000 բնակչի հաշվով):<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է.<br>1) Բարձրացնել հասարակության տեղեկատվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ՝ հատկապես ռիսկի խմբում գտնվող անձանց մոտ, հաշվի առնելով, որ ԹՔՕՀ վաղ փուլերում դրսևորվում է ոչ սպեցիֆիկ ախտանիշներով: Մշակել ԹՔՕՀ կանխարգելման, ախտորոշման և բուժման միասնական մոտեցումներ: Օգտագործելով էլեկտրոնային բժշկության հնարավորությունները գնահատել ԹՔՕՀ ներկայիս առողջապահական վիճակը, վերահսկել ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը՝ ներառյալ վերականգնողական բուժումը, ուսումնասիրել և ներդնել ախտորոշման, բուժման նորարարությունները: Աջակցել ԹՔՕՀ բնագավառում գիտական հետազոտությունների իրականացումը՝ հիվանդու¬թյան կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր և առավել արդյունավետ միջոցների մշակման նպատակով:<br>2),4),5) Մասնագիտական քննարկումների կազմակերպում, չարորակ նորագոյացությունների, սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրություն, |

| | |
|---|---|
| | Հայաստանում նշված հիվանդությունների համաճարակաբանության (տարածվածությունն ըստ ախտահարված օրգանհամակարգի և տեսակի) ուսումնասիրություն և վերլուծություն: Ռազմավարությունների ներդրման շրջանակներում չարորակ նորագոյացությունների, սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը, բուժմանը, վարմանն (ներառյալ ժամանակակից հետազոտությունների մեթոդների կիրառում) ուղղված միջոցառումների մշակում, ինչպես նաև աշխարհագրական տեղակայման և հանրության իրազեկման վերաբերյալ միջոցառումների մշակում և ներդնում:<br>3) Հաստ և ուղիղ աղիների քաղցկեղից մահացության ցուցանիշը զարգացած երկրներում զգալիորեն նվազել է, ինչը հետևանք է քաղցկեղի կանխարգելման, վաղ ախտորոշման և ժամանակակից բուժական միջոցների զարգացման, այդ թվում նաև սքրինինգային ծրագրերի իրականացման:<br>Հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի սքրինինգը սքրինինգի տեսակ է, որի արդյունավետությունն ապացուցված է բազմաթիվ ռանդոմիզացված հետազոտությունների արդյունքում: Սքրինինգի նպատակն է հայտնաբերել նախաքաղցկեղային վիճակները և վաղ փուլի չարորակ նորագոյացությունները:<br>Ըստ «U. S. Preventive Services Task Force» (USPSTF)-ի տվյալների, կանխարգելումը ցուցված է իրականացնել բնակչության 50-ից բարձր տարիքային խմբում՝ ելնելով ապացուցողականության A աստիճանից:<br>**2. Կարգավորման առարկան.**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրմամբ առաջարկվում է իրականացնել ԹՔՕՀ բուժման շարունակական ապահովում և բուժման գործընթացի համապատասխանեցում արդի միջազգային մոտեցումներին, չարորակ նորագոյացությունների, շաքարային դիաբետի և սիրտ-անոթային հիվանդությունների վաղ ախտորոշում և արդյունավետ բուժում, հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի հայտնաբերում և վերահսկում, հայտնաբերված բարորակ նորագոյացություններով պացիենտների բուժում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, առաջատար ռիսկի գործոնների ազդեցության նվազեցման, կանխարգելման և բուժման մեխանիզմների ներդրման արդյունքում.<br>1) բարձրացնելով հասարակության տեղեկատվածությունը ԹՔՕՀ ռիսկի գործոնների և ախտանիշների վերաբերյալ, վերահսկելով ԹՔՕՀ տարածվածությունը, պացիենտների խնամքն ու բուժումը, ակնկալվում է իջեցնել ԹՔՕՀ մահաբերության և հաշմանդամության ցուցանիշները, բարելավել պացիենտների կյանքի որակը: Մասնավորապես. միրականացման ավարտին, 5 տարի անց ԹՔՕՀ-ի ռիսկի գործոնների մասին բնակչության իրազեկվածության բարձրացում մինչև 50%, ԹՔՕՀ-ից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով:<br>2),4),5) Բարելավել բնակչության առողջապահական ցուցանիշները, մասնավորապես չարորակ նորագոյացությունների, սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացում և մահաբերության նվազեցում: Միջոցառումների իրականացման ավարտին, 5 տարի անց չարորակ նորագոյացություններից և սիրտ-անոթային հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 10%-ով: 1,5 և 10 տարվա ապրելիության ցուցանիշների բարելավում՝ համապատասխանաբար 50%, 20% և 10%-ով: Ծրագրի ավարտից հետո մեծահասակ բնակչության 100%-ի ապահովում սուր սիրտ-անոթային դեպքերի բուժման ծածկույթով: Շաքարային դիաբետի մասով, միջոցառումների իրականացման ավարտին, 10 տարի անց շաքարային դիաբետից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով, շաքարային դիաբետից առաջացած բարդությունների և հոսպիտալացումների թվի նվազում 15%-ով:<br>3) Հաստ և ուղիղ աղիների քաղցկեղի սքրինինգի իրականացումը՝ յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ արյան մեջ թաքնված արյան որոշման մեթոդով, ըստ տարբեր աղբյուրների, կբերի հաստ և ուղիղ աղիների քաղցկեղից մահացության ցուցանիշների 15%-20% նվազման, ինչպես նաև 5 տարվա ապրելիության ցուցանիշի 5%-ով բարելավման: |
| 33 | **Մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծումը բխում է ՀՀ սահմանադրության 86 Հոդվածի 7-րդ կետի և կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի պահանջների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Մարդակենտրոն, մրցունակ, արդյունավետ, անվտանգ, որակյալ առողջապահական համակարգի ստեղծման |

աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է ներդնել ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը, ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ռազմավարությունը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման և վերահսկման ռազմավարությունը:

1) ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարության ներդրում.

Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերագնահատել առողջապահության բնագավառի զարգացման գերակայությունները և սահմանել նորերը՝ ելնելով մարդակենտրոն համակարգ ձևավորելու անհրաժեշտությունից, որի հիմքում է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը: Այն սահմանում է պետության քաղաքականության հիմնական նպատակները, այն է՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, ինչպես նաև հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը:

Վերջին տարիներին իրականացվել են առողջապահության համակարգի բարեփոխմանն ուղղված զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ, առողջապահության համակարգի առջև ծառացած են լուրջ ժողովրդագրական, համակարգի կառավարման և առողջապահական խնդիրներ:

Դեռևս լուծված չէ Հայաստանի ամբողջ բնակչությանը բժշկական ծառայությունների համընդհանուր ծածկույթով ապահովելու (universal health coverage) հիմնախնդիրը:

Միևնույն ժամանակ, բավարար չէ բժշկական ծառայությունների մատչելիությունը Հայաստանի բնակչության համար: Այսպես, ֆինանսական անմատչելիությամբ պայմանավորված՝ բուժօգնության չդիմելու ցուցանիշը 2016թ.-ին կազմել է 17.2%, որը 2.2%-ով ավելի է 2009թ. ցուցանիշից, իսկ համաձայն որոշ փորձագիտական գնահատականների հասնում է մինչև 30%:

Միաժամանակ, չնայած միջազգայնորեն ընդունված է, որ գրպանից կատարված ուղիղ վճարումների տեսակարար կշիռը չպետք է գերազանցի 15-20%-ը, Հայաստանում, ըստ առողջապահության բնագավառի ֆինանսական գործակալի, 2013թ.-ին ֆինանսավորվել է առողջապահությանն ուղղված միջոցների ընդհանուր ծավալի 55.6%-ը: Նույն ժամանակահատվածում, մասնավոր հատվածի ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքի առյուծի բաժինը՝ 94.9%-ը կազմել են տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումները: Իրենց հերթին, «գրպանից» վճարումները ծառայությունների մատուցման վայրում առաջացնում են վերջիններիս ավելցուկային սպառման և բերում համակարգի անարդյունավետության՝ բժշկական որոշ ծառայությունների, հետազոտությունների և միջամտությունների ավելորդ օգտագործման, չհիմնավորված հոսպիտալացումների, առկա ենթակառուցվածքների անբավարար օգտագործման՝ հատկապես մարզերում, բժշկական օգնության և սպասարկման որակի անվերահսկելիության և դրա արդյունքում առաջացած ֆինանսական կորուստների հետևանքով:

Խնդիրներ են առկա նաև բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման տեսանկյունից. մարզային բժշկական հաստատությունները, որպես կանոն գործում են թերբեռնված, ցածր է սեփական բնակավայրին մոտ բուժում ստացող մարզային բնակչության տեսակարար կշիռը, մարզերում բժշկական կադրերով հագեցվածության ցուցանիշները, մեծ է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տեսակարար կշիռը:

Բնակչության հարաբերական ծերացման գործընթացին զուգահեռ ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ՝ պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման պահանջարկի, հիվանդացության կառուցվածքի փոփոխության՝ դեպի ոչ վարակիչ հիվանդությունների ավելացում, ինչպես նաև համակարգի ընդհանուր բեռի ավելացման հետ: Համաձայն վիճակագրական տվյալների, ՀՀ բնակչության մահացության կառուցվածքում գերակշռում են ոչ վարակիչ հիվանդությունները (ՈՎՀ) (75%), այդ թվում՝ արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) (46%), չարորակ նորագոյացությունները (21.9%), շաքարային դիաբետը (4.6%), թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (4.2%): Լուրջ գործոն է նաև վաղաժամ մահացությունը չարորակ նորագոյացություններից, արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, շնչառական համակարգի հիվանդություններից և շաքարային դիաբետից:

Ըստ ԱՀԿ տվյալների, Հայաստանում առողջ կյանքի սպասվող տևողությունը կազմել է 66.9 տարի, որը զիջում է արևմտյան Եվրոպայի երկրների ցուցանիշին, ուստի առողջապահության համակարգի տեսանկյունից կարևորվում է հայաստանցիների առողջ կյանքի տևողության երկարացնելու անհրաժեշտությունը:

2) ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ռազմավարության ներդրում.

Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ևս առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, որոնք չեն նպաստում բնակչության առողջության ցուցանիշների բարելավմանը. չնայած այն հանգամանքին, որ

դեռևս 2006թ.-ից ԱԱՊ օղակում մատուցվող հիմնական ծառայությունները անվճար են բնակչության համար, դրանց սպառումը դեռևս մնում է ոչ գոհացուցիչ մակարդակի վրա՝ կազմելով տարեկան մեկ բնակչի հաշվով շուրջ 4.3 հաճախում, ինչը շուրջ 2 անգամ ցածր է 1990թ., ինչպես նաև Եվրոմիության 27 երկրների ներկայիս ցուցանիշից, առանձնանում է ԱԱՊ համակարգի պասիվ դերակատարումը բնակչությանը ծառայություններ մատուցելու գործում և ակտիվ գործողությունների սահմանափակ լինելը, լուրջ մարտահրավեր են նաև ԱԱՊ օղակի բժիշկների ծերացումով պայմանավորված խնդիրները:
Թեև առողջության առաջնային պահպանումը դիտարկվում է առողջապահության համակարգի գերակա ուղղություններից մեկը և որպես բարեփոխման իրականացման ճանապարհ է ընտրվել այլ երկրներում գործարկված ու առավել արդյունավետ ճանաչված ընտանեկան բժշկության ներդրումը, ներկայումս՝ բարեփոխումների սկզբից շուրջ 20 տարի անց, արձանագրվում է, որ չնայած այն բերել է զգալի առաջընթացի հանրապետության մարզերում (մասնավորապես գյուղական վայրերում), մեծ քաղաքներում և հատկապես, մայրաքաղաքում, այն դեռևս լիարժեք չէ:
3) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման և վերահսկման ռազմավարության ներդրում.
Ռազմավարության ներդրման նպատակն է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բժշկական օգնության որակի բարելավման և վերահսկման մեխանիզմներ սահմանելը: Ներկայում առողջապահական ոլորտում առկա չէ որևէ նորմատիվ իրավական ակտ, որը կկարգավորի բժշկական օգնության որակի վերահսկման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես. լիարժեք և թափանցիկ չեն ուսումնասիրվում բժշկական օգնության որակի վերաբերյալ դիմում-բողոքները, կրկնակի հոսպիտալացումների հիմնավորումները, ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական իրավիճակը, հակաբիոտիկների օգտագործման հսկողությունը, առանձնահատուկ ուշադրության արժանի, բացառիկ բժշկական օգնության և սպասարկման դեպքերի (կոնսերվատիվ կամ վիրավուժական բուժման մեթոդներ, նորարարություններ և այլն) առանձնացումը և բարձրաձայնումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

1) ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարության ներդրում.
Ռազմավարությամբ նախատեսվող բարեփոխումների հիմքում առողջապահական ծառայությունների մատչելիության և արդյունավետության բարձրացումն է՝ առաջնային բուժօգնության օղակի հզորացման միջոցով:
Առողջության առաջնային պահպանման օղակը դառնալու է առողջապահության համակարգի անկյունաքարը, որն իր գործունեությամբ նպաստելու է Հայաստանում հիվանդությունների կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը և արդյունավետության բարձրացմանը՝ դառնալով դարպաս դեպի պահանջված բժշկական ծառայություններ:
Առաջարկվող բարեփոխումների հիմքում է նաև Հայաստանի բնակչության հիվանդացության ու մահացության ցուցանիշների վերլուծությունը, այն միտված է վերջինների բարելավմանն ու դրական դինամիկայի ապահովմանը: Ներդրվելու են առաջնային օղակի բժիշկների աշխատանքը վերահսկող չափորոշիչների (թերապևտիկ հոսպիտալացումներ, անաշխատունակության և հաշմանդամության ցուցանիշներ, ծխող դեռահասների թվաքանակ), որոնք ենթարկվելու են մշտադիտարկման ԱՆ կողմից:
Բնակչությանն առողջապահական ծառայությունների համընդհանուր ծածկույթ ապահովելու նպատակով, բժշկական օգնության ժամկետային հասանելիության սկզբունքից ելնելով, առաջարկվում է Հայաստանում ներդնել բժշկական օգնության եռամակարդակ համակարգ, որը լավագույնս կապահովի բուժօգնության կազմակերպումը՝ արդյունավետության ու հասանելիության սկզբունքների հիման վրա, ինչպես նաև ելնելով գումարների արդյունավետ օգտագործման և հաստատուն ծախսերի նվազեցման սկզբունքից՝ ապահովել մահճակալային ֆոնդի օպտիմալ 70-80% զբաղվածություն:
Համակարգի զարգացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում գործունեության շեշտադրումը տեղափոխել բուժումից դեպի կանխարգելում, թիրախային միջոցառումների իրականացման միջոցով՝ հիմնված առողջ ապրելակերպի սկզբունքների ներդրման, կանխարգելման, ռիսկի գործոնների բացահայտման և շրջակա միջավայրի ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկողական մեխանիզմների վրա:
2) ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ռազմավարության ներդրում.
Բարեփոխումների իրագործումը նախատեսում է.

- առաջնային օղակի մասնագետների պատասխանատվության բարձրացում՝ բնակչության առողջության պահպանման գործում,
- ԱԱՊ բժշկի գործառույթների ուժեղացում,
- բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանում,
- մասնագիտացված բուժօգնությունից դեպի առաջնային բուժօգնություն անցում,

- կանխարգելիչ բժշկության հզորացում (կանխարգելիչ միջոցառումների իրականացման նոր մոտեցումների և մեթոդաբանության ներդրում)՝ հենվելով միջազգային փորձի վրա,
- հիվանդանոցային դեպքերի թվի նվազեցում,
- ԱԱՊ օղակում մատուցվող բժշկական ծառայությունների որակի վերահսկման նոր համակարգի ներդրում,
- ԱԱՊ ծառայությունների հասանելիություն (աշխարհագրական դիրքը),
- պացիենտի կողմից բժշկի ազատ ընտրության սկզբունքի ապահովում,
- գործող նորմատիվների վերանայում:

Առաջարկվում է քաղաքային վայրերում զարգացնել ընտանեկան բժշկության ինստիտուտը, բարելավել առողջության առաջնային պահպանման օղակում մատուցվող բժշկական ծառայությունների որակը, նվազեցնել հիվանդանոցային դեպքերի թիվը:

3) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման և վերահսկման ռազմավարության ներդրմամբ նախատեսվում է.

- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործող իրավական ակտերին համապատասխանությունը պարզելու, ինչպես նաև իրականացված աշխատանքների որակի վերահսկման նպատակով ստեղծել որակի բարելավման և վերահսկման խորհուրդներ,
- սահմանել խորհուրդի գործառույթները, որոնք կքննարկվեն քաղաքացիների կամ կազմակերպությունների կողմից բժշկական օգնության որակի վերաբերյալ դիմում-բողոքները, հաշվետու ժամանակահատվածում կրկնակի հոսպիտալացման դեպքերը, այն մահվան դեպքերը, որոնց կլինիկական ախտորոշումները և ախտաբանաանատոմիական դիահերձումների եզրակացությունները չեն համընկել, այն դեպքերը, երբ բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները չեն կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենքներին, կառավարության որոշումներին, առողջապահության նախարարի նորմատիվ և անհատական հրամաններին (ներառյալ դրանցով հաստատված կարգերին, չափորոշիչներին, մեթոդական ցուցումներին, ուղեցույցներին և գործելակարգերին) համապատասխան, բժշկական օգնությունը և սպասարկումն ուշացնելու կամ դրա կասկածի յուրաքանչյուր դեպք, վարակի հսկողության ծրագրի իրականացման արդյունքները, ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական իրավիճակը, հիվանդների խնամքի ընթացքում վարակի փոխանցման հնարավոր ռիսկերը, դրանց նվազեցման ուղղությամբ միջոցառումները, բուժանձնակազմի՝ վարակի հսկողության հարցերի ուղղությամբ ուսուցման հարցերը, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների, ախտահանման և մանրէազերծման աշխատանքների, մեկուսացման և այլ կանխարգելիչ միջոցառումների հարցեր, հակաբիոտիկների օգտագործման և կայունության մշտադիտարկման համակարգի ներդրման հարցեր:
- սահմանել հիվանդանոցային որակի ցուցանիշները և խորհուրդների կողմից կատարած աշխատանքների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հաշվետվության ներկայացման ձևաչափը:

**2. Կարգավորման առարկան.**

ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունն ուղղված է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության գերակայությունների և նպատակների իրականացմանը: Այն հիմք է հանդիսանում պետական իշխանության գործունեության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության կազմակերպման, ինչպես նաև մարդու առողջության պահպանմանն ուղղված ոլորտային զարգացման ու պլանավորման փաստաթղթերի մշակման համար:

Առաջարկվում է առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ռազմավարական մոտեցումները ամրագրել իրավական ակտով՝ սահմանելով իրականացվելիք բարեփոխումների ժամկետներ:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման և վերահսկման ռազմավարության ներդրման դեպքում առաջարկվում է կարգավորել բնակչությանը մատուցվող բժշկական օգնության որակի վերահսկման մի շարք բացերի լրացումը, լրացուցիչ մեխանիզմների սահմանումը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**

ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարության ներդրման արդյունքում կունենանք առողջապահական համակարգի զարգացման երկարաժամկետ հստակ տեսլական, որը կբերի առողջապահության բնագավառի զարգացման գերակայությունների վերագնահատման և նորերի սահմանման՝ ելնելով մարդակենտրոն համակարգ ձևավորելու անհրաժեշտությունից, հիմնական մարտահրավերների և ռիսկերի գնահատման, հիմնական խնդիրների և նպատակների, առաջնահերթությունների, առողջապահության համակարգի զարգացման մեխանիզմների սահմանման:

| | |
|---|---|
| | ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների ռազմավարության ներդրման արդյունքում համապատասխան իրավական ակտերի ընդունումով կսահմանվեն բարեփոխումների ուղիները, առողջության առաջնային պահպանման օղակում վերհանված խնդիրների առաջարկվող լուծումները, առաջարկվող քաղաքականության հիմնական դրույթները:<br>Կանխատեսվում է, որ միջոցառումների իրականացման արդյունքում 5 տարի անց ԱԱՊ օղակում հիվանդանոցային, ինչպես նաև շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի թիվը կնվազի 10%-ով, ԱԱՊ այցելությունների կառուցվածքում աշխատանքային տարիքի անձանց այցերի տեսակարար կշիռը կավելանա 20%-ով, մեկ բնակչին բաժին ընկնող ԱԱՊ այցերի թիվը կբարելավվի մինչև 6 այց/տարեկան:<br>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման և վերահսկման ռազմավարության ներդրման դեպքում դեպքում ակնկալվում է բարելավել բժշկական օգնության և սպասարկման որակը հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ որակի բարելավման և վերահսկման խորհուրդների աշխատանքի և հիվանդանոցային հիվանդանոցային որակի ցուցանիշների հաստատման միջոցով, ինչը կնպաստի բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների վերահսկմանը, կանխարգելման, ինչպես նաև պացիենտների անվտանգության բարձրացմանը: Ակնկալվում է հիվանդանոցային որակի ցուցանիշների ներդրումից առնվազն 5 տարի հետո հիվանդանոցային մահացության ցուցանիշի նվազում մինչև 1,5%, հետվիրահատական բարդությունների ցուցանիշի նվազում մինչև 3%: |
| 34 | **Պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման իրատեսական (ինքնարժեքից բխող) գների սահմանում**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տարբեր ծրագրերի շրջանակներում մատուցվող նույն ծառայությունների գները տարբեր են և այդ ծառայությունների գները առանձին ծրագրերով չեն համապատասխանում իրական ծախսերին և ցածր են ներկայումս շուկայում գործող և վճարովի սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների գներից, որն էլ բերում է կոռուպցիոն ռիսկերի և դրանից բխող այլ բացասական երևույթների:<br>Հետևաբար, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների՝ գների հաշվարկման մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է 2018-2019 թվականներին մշակել Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն և այդ մեթոդաբանության հիման վրա հաշվարկված գների փուլային ներդրումը սկսել 2020 թվականից:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է մշակել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն և այն հաստատել առողջապահության նախարարի հրամաններով (համաձայնեցված ֆինանսների նախարարի հետ)՝ վերանայելով պետական պատվերի շրջանակներում ընդգրկված ծառայությունների գների հաշվարկման և հաստատման մեխանիզմները: Ակնկալվում է՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների առավել նպատակային և հասցեական ծախսում և պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների իրատեսական գների ընդունման արդյունքում կոռուպցիոն ռիսկերի նվազում: |
| 35 | **Մայրական առողջության բարելավում, ծննդօգնության ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Չնայած վերջին տասնամյակում մայրական մահացության ու հիվանդացության ցուցանիշների կրճատմանը, դրանք շարունակում են մի քանի անգամ գերազանցել զարգացած երկրների համանուն ցուցանիշները:<br>Բավական է նշել, որ Հազմարամյակի զարգացման 5-րդ նպատակով սահմանված մայրական մահացության թիրախային մակարդակին հասնելը մեր երկրի համար մնաց անհասանելի: Հիմնական պատճառներից մեկը հղիակենտրոն մոտեցման անբավարար իրականացումն էր, որը պետք է ուղղված լիներ հղիի/ծննդաբերի և սպասվող նորածնի բժշկական կարիքների բավարարմանը, ճիշտ ուղեգրմանը:<br>Ցածր մայրական և մանկական մահացություն ունեցող երկրները այդ խնդիրը լուծել են ծննդօգնության հաստատությունները ըստ մակարդակների դասակարգման և հղիների ու նորածինների ուղեգրման պատշաճ համակարգի կիրառման միջոցով:<br>Մայրական և մանկական մահացության ցուցանիշների բարելավման, մանկաբարձանեոնատոլոգիական բուժօգնության արդյունավետության բարձրացման աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել |

| | |
|---|---|
| | ծննդօգնության բժշկական կազմակերպություններն ըստ մակարդակների դասակարգման Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկները, ինչպես նաև Եվրոպայի մի շարք երկրների Չեխիայի, Պորտուգալիայի, Մերձբալթյան երկրների, Կանադայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Ղազախստանի գործող համակարգերը: Ուսումնասիրած գրեթե բոլոր երկրները ունեն ըստ մակարդակների դասակարգման նորմեր: Հիմնականում գործում է 3, որոշ երկրներում 4 և միայն Ավստրալիայում՝ 6 մակարդակ:<br>Միջոցառման նպատակն է՝ ծննդօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը, մայրական և մանկական մահացության ցուցանիշների նվազեցում, մանկաբարձանեոնատոլոգիական բուժօգնության կազմակերպման արդյունավետության բարձրացում, ուղեգրման համակարգի բարելավումը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Համաձայն մի շարք հեղինակավոր կազմակերպությունների, մասնավորապես. («Մանկաբուժության ամերիկյան ակադեմիա», «Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան կոնգրես, Պերինատալ բժշկության Բրիտանական ասոցիացիա, մանկաբարձ-գինեկոլոգների եվրոպական և համաշխարհային ասոցիացիաներ) կողմից հրապարակված վերջին ուղեցույցների հղիներին, ծննդկաններին, և նորածիններին մատուցվող ծառայություններն անհրաժեշտ է կազմակերպել երեք–չորս մակարդակներով (I, II, III և IV)՝ ելնելով ռիսկերի աստիճանից;<br>Ներկայումս Հայաստանում գործում է եռամակարդակ համակարգը, ընդ որում Երևանի 12 ծննդատներից 10 ունեն 3-րդ մակարդակ՝ ինչը չի համապատասխանում իրական կարիքների ու միջազգային չափանիշներին և աննախադեպ է այլ երկրների համեմատ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Ըստ մակարդակների ծառայությունների կազմակերպման առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների ու միջազգային փորձի հիման վրա հանրապետության ծննդօգնության ծառայության կազմակերպման հիմնարար դրույթների սահմանում, ներառյալ ծննդատների գործառույթները, ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հզորությունները:<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Սահմանվող դրույթների և գնահատման գործիքի հաստատում ԱՆ հրամանով, որի միջոցով կիրականացվի ծննդատների գնահատում ըստ բուժօգնության կազմակերպման մակարդակների՝ հաստատված չափանիշներին համապատասխան:<br>III մակարդակի ծննդօգնության 10 հաստատությունների կրճատում՝ իրական պատկերին և կարիքներին համապատասխան, բազային (առաջին) և 2-րդ մակարդակի ծննդատների համապատասխանեցում սահմանված նորմերին: Գնահատման արդյունքների ամրագրում ՀՀ ԱՆ հրամանով: Հաջորդիվ կիրականացվի մշտադիտարկում:<br><br>**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Վերջնական արդյունքում հրամանի կիրակումը կնպաստի ծննդօգնության ծառայության կազմակերպման և հիվանդների ուղեգրման համակարգի բարելավմանը: Ծննդօգնության պետական հավաստագրի շարունակական ներդրումը կիրականացվի ավելի բարենպաստ և ավելի նվազ ռիսկային պայմաններում, ինչը արդյունքում կնպաստի մայրական և պերինատալ հիվանդացության և մահացության իջեցմանը: |
| 36 | **Առողջապահական համակարգում հիվանդանոցային բժշկական օգնության դեպքերի կառավարման և վարման համակարգի ներդնում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նպատակով նախատեսվում է ներդնել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցված ծառայությունների դեպքերի անհատական վարման (case managament) ինստիտուտ, մեծացնել Գործակալության գործառույթներում բժիշկ-փորձագետների ինստիտուտի դերը:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է ՀՀ ԱՆ ՊԱԳ-ում ներդնել դեպքերի անհատական վարման (case managament)-ի ինստիտուտը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2002 թվականի 1301-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ ՀՀ ԱՆ ՊԱԳ գործառույթներում և կառուցվածքում: Որոշմանը համապատասխան վերանայել են բժիշկ-փորձագետների |

| | |
|---|---|
| | պաշտոնների անձնագրերը: Առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել և շարունակական մշակվում բժիշկ-փորձագետների գործունեության ընթացակարգերը և մասնագիտական բնութագրերը: Գործակալության գործառույթներում բժիշկ-փորձագետների ինստիտուտի ներդրման արդյունքում Դեպքերի անհատական վարման (case managament) շրջանակներում Գործակալությունում նախատեսվում է իրականացնել հիվանդանոցային դեպքերի առցանց վարում (էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով) և տեղում փորձագիտական աշխատանքներ:<br>Փորձագետների կողմից կուտումնասիրվեն կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունները, կուտումնասիրվեն և կիրականացվի անմիջապես տվյալ պահին բժշկական օգնություն և սպասարկում ստացող պացիենտների վարման հետ կապված այցեր բժշկական կազմակերպություններ, ինչպես նաև փորձագիտական գնահատում էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով: Կբարձրանա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման որակը, կնվազեն պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացած պացիենտների վերաբերյալ ներկայացվող հաշվետվություններում տեղ գտած սխալները կամ խախտումները, Պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների ծախսը կդառնա առավել արդյունավետ և նպատակային: Նախատեսվում է մինչև 2021 թվականը դեպքերի անհատական վարման շրջանակներում ընդգրկել բժշկական օգնության և սպասարկման բոլոր ծրագրերը՝ փուլային կարգով: |
| 37 | **Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների հասանելիության բարելավում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Ծրագրի մշակման անհրաժեշտությունը բխում է կառավարության կողմից հավանություն արժանացած Երեխաների և դեռահասների առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության դրույթներից, ինչպես նաև երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների խիստ սահմանափակ մատչելիությամբ պայմանավորված ներկայիս իրավիճակով:<br>Միջոցառման նպատակը՝ Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումն է, հոգեկան առողջության խնդիրներով տառապող երեխաների համար մինչ այժմ գոյություն չունեցող առանձին հիվանդանոցային ծառայության և բուժման նպաստավոր պայմանների ստեղծում:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 23.04.2014թ. N14.7/[188565]-14 հանձնարարականի՝ 2015թ. դեկտեմբերին ՀՀ կառավարություն է ներկայացվել երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների /բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատումը և դրա բարելավման ուղղությամբ առաջարկությունները: Խնդրի լուծմանն ուղղված առաջարկությունները ներառվել են նաև 2017-2020թթ. Միջին ժամկետ ծախսային ծրագրում, սակայն չեն հաստատվել համապատասխան ռեսուրսների սահմանափակ լինելու հիմնավորմամբ:<br>Ըստ ԱԱԻ պաշտոնական տվյալների, արձանագրվել է հոգեկան հիվանդություններով 0-14 տարեկան երեխաների թե առաջին անգամ ախտորոշված հիվանդացության թե ընդհանուր հիվանդացության ցուցանիշի աճ: Արդյունքում, հոգեկան առողջության խնդիրներով երեխաներին տրամադրվող բուժօգնության պահանջարկը վերջին տարիների ընթացքում՝ էապես մեծացել է, մինչդեռ ծառայությունների մատչելիությունը՝ ոչ:<br>Թեև ամբուլատոր սպասարկման մասով ՀԿ սեկտորում հնարավորությունները մի փոքր ավելացել են, սակայն մանկական հիվանդանոցային հոգեբուժական ծառայության իրավիճակը շատ ավելի խնդրահարույց է և լեցուն օրակարգային լուծում պահանջող հարցերով: Առավել արդիական են հոգեկան հիվանդ, հատկապես սուր փսիխոտիկ վիճակներով և վարքի արտահայտված խանգարումներով տառապող երեխաների, հատկապես դեռահասների (որոնք առավել խոցելի են հոգեկան և վարքագծային խնդիրների դրսևորման տարիքային առանձնահատկություններից ելնելով) հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման և տևական մասնագիտական խնամքի կազմակերպման խնդիրները՝ գործնականում հանրապետությունում այդ ծառայությունների և ենթակառուցվածքների բացակայության պատճառով:<br><br>**a. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունների/բաժանմունքների կարողությունների ներկայիս վիճակի գնահատման հիման վրա իրավիճակի բարելավման առաջարկությունների մշակում, որտեղ տեղ կգտնեն առաջարկներ՝ մանկական հոգեբուժական ծառայություն մատուցող բուժհաստատությունների շինվերանորոգման աշխատանքների իրականացման, պետական պատվերի համապատասխան ծավալի տեղադրմամբ երեխաների պսիխոսոմատիկ ծառայության գծով նոր բաժանմունքի ստեղծման, պետական |

| | |
|---|---|
| | պատվերի շրջանակներում մանկական հոգեբուժության նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերի հատկացման ուղղությամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Մանկական հոգեբուժական ծառայության բարելավման ծրագրի մշակում, հաստատում և շարունակական ներդրում: Ծրագրի հաստատում նախարարի հրամանով և ներառում 2020-2022թթ. Միջին ժամկետ ծախսերի ծրագրում և տարեկան բյուջետային հայտում:<br><br>**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Հոգեկան առողջության խնդիրներով տառապող երեխաների համար կբարելավվի հոգեբուժական ծառայությունների մատչելիությունը և որակը: Այս երեխաների համար կստեղծվի մինչ այժմ գոյություն չունեցող առանձին հիվանդանոցային ծառայության և բուժման նպաստավոր պայմաններ: |
| 38 | **Մոր և մանկան առողջության բարելավում, վերարտադրողական ներուժի ավելացում, ծնելիության անկման տեմպերի նվազեցում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում առկա ժողովրդագրական իրավիճակով, ծնելիության գնացող ավելիի ահազնացող բացասական միտումներով: Խնդրի արդիականությունը արտացոլված է նաև կառավարության կողմից հավանություն արժանացած Վերարտադրողական առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության դրույթներում:<br>Միջոցառման նպատակն է՝ ծննդօգնության ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման միջոցով նպաստել առողջապահական գործոնով պայմանավորված վերարտադրողական կորուստների նվազեցմանը և հետևաբար՝ ծնելիության բարձրացմանը:<br><br>**1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Ըստ ԱՎԾ պաշտոնական տվյալների, 1990-2017թթ. ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել է ծնելիության մակարդակի զգալի անկում: Ընդ որում, բնակչության 1000 շնչին ընկնող ծնելիության ցուցանիշը կրճատվել է գրեթե կիսով չափ, իսկ բնական աճի ցուցանիշը՝ ավելի քան 4,6 անգամ ( Ծնելիություն՝ 1990թ.-22.5; 2017թ.–12.7, Բնական աճ՝ 1990թ.-16,3; 2017թ.-3,5):<br>Երկրի ժողովրդագրական իրավիճակը բնորոշվում է ծնելիության գումարային գործակցի 1,7 ցուցանիշով, որը չի ապահովում անգամ պարզ վերարտադրությունը: 2017թ. ընթացքում հանրապետությունում ծնվել է 37699 երեխա՝ 2893 նորածնով պակաս 2016թ. համեմատությամբ (բնական աճի ցուցանիշը կազմել է՝ 3,1), ինչն արդեն իսկ ժողովրդագրական լուրջ խնդիր է՝ ազգային անվտանգության տեսանկյունից:<br>Վերարտադրողական առողջությանն առնչվող խնդիրները, որոնք ազդեցություն ունեն ծնելիության վրա, հետևյալն են.<br>1)Ծնելիության ցածր, անգամ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակ: Ծնելիության անկման առկա միտումների պահպանման դեպքում, ըստ կանխատեսումների 2024թ. կարձանագրվի ընդամենը 25 000 ծննդաբերություն:<br>2) Դեռահաս աղջիկների վերարտադրողական ախտաբանությունների բարձր մակարդակ և բուժման համար միջոցների բացակայություն:<br>3) Զույգերի մինչամուսնական հետազոտման և նախաբեղմնավորման խնամքի ծառայությունների բացակայություն:<br>4) Տարեկան շուրջ 4500 պերինատալ կորուստներ (ինքնաբեր վիժումներ, պտղի ներարգանդային մահ, վաղածնություն, մեռելածնություն, պտղի ներարգանդային ինֆեկցվածություն), պայմանավորված հղիության հսկողության և հետազոտությունների ոչ բավարար մակարդակով:<br>5) Անպտղության, ժողովրդագրության վրա ազդող բարձր մակարդակ, 14.9 տոկոս, հետազոտման և բուժման սահմանափակ միջոցներ: Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների անհասանելիություն բնակչության սոցանապահով խմբերի համար:<br>6) Հղիության նախածննդյան հսկողության սկրինինգների սահմանափակ ծավալներ, ախտաբանությունների հայտնաբերման դեպքում հղիությունը պահպանող բուժման սահմանափակ միջոցներ:<br><br>7) Զարգացման բնածին արատների բարձր մակարդակ, կապված պտղի անտենատալ ախտորոշման ոչ բավարար հնարավորությունների հետ: |

| | |
|---|---|
| | 8) Մանկական մահացության կառուցվածքում նորածնային մահացության դեպքերի մեծ տեսակարար կշիռ՝ շուրջ 70%:<br>9) Անհաս, ցածր քաշով և ախտաբանություններով ծնված նորածինների ապրեցման, բուժման և խնամքի միջոցների անբավարարություն:<br>Համակարգային հիմնախնդիրների շարքում օրակարգային հարց է մասնագետների պատրաստման և շարունակական հմտությունների ու գիտելիքների զարգացման, մարզերում երիտասարդ մասնագետների աշխատելու գրավիչ պայմանների ու խրախուսման միջոցների անբավարարությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Առաջարկվող լուծումը վերարտադրողական առողջության բարելավմանը և պերինատալ կորուստների նվազեցմանն ուղղված համալիր ծրագրի մշակումը և ներդրումն է: Ծրագիրը կունենա հետևյալ հիմնական բաղադրիչները.<br><br>1.Հղիների ախտաբանության վաղ ախտորոշման և բուժման բարելավում<br>2.Հղիների վարման և հսկողության որակի բարելավման ծրագիր<br>3.Անհաս, ցածր քաշով եվ ախտաբանություններով նորածին-ների խնամքի բարելավում<br>4. Ծննդօգնության որակի բարելավում<br>5.Պրենատալ ախտորոշման բարելավում<br>6.Դեռահաս աղջիկների հետազոտման և բուժման բարելավման ծրագիր<br>7. Անպտուղ զույգերի հետազոտման և բուժման բարելավում, ներառյալ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը<br>8. Զույգերի մինչամուսնական հետազոտման և նախաբեղմնա-վորման խնամքի ծրագիր<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագրի մշակում, հաստատում և շարունակական ներդրում, Ծրագրի հաստատում նախարարի հրամանով և ներառում 2020-2022թթ. Միջին ժամկետ ծախսերի ծրագրում և տարեկան բյուջետային հայտում:<br><br>**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Ակնկալվում է, որ վերարտադրողական առողջության բարելավմանը և ծննդօգնության ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանն ուղղված առողջապահական ծրագրային միջացառումների իրականացման միջոցով կբարելավվեն ծնելիության ցուցանիշները, քանզի վերարտադրողական առողջության ոլորտի հիմնախնդիրները բացի բժշկասոցիալական նշանակությունից ունեն նաև որոշիչ ազդեցություն ժողովրդագրության վրա և այդ ոլորտի կորուստների նվազեցումը կարող է անուղակիորեն նպաստել ծնելիության բարձրացմանը: |
| 39 | **Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական բուժօգնության մատչելիության և որակի բարելավում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Ծրագրի մշակման անհրաժեշտությունը բխում է կառավարության կողմից հավանություն արժանացած Երեխաների և դեռահասների առողջության բարելավման 2016-2020թթ. ազգային ռազմավարության դրույթներից, ինչպես նաև երեխաների, մասնավորապես հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների սահմանափակ մատչելիությամբ պայմանավորված ներկայիս իրավիճակով:<br>Միջոցառման նպատակը՝ Հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների հասանելիության, մատչելիության և որակի բարելավումն է, պետական պատվերով մատուցվող ծառայությունների հնարավորությունների ընդլայնման ճանապարհով:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Հայաստանի Հանրապետությունում երեխաների վերականգնողական բուժօգնության հետ կապված ծառայությունները տրամադրվում են առավելապես պետական պատվերի շրջանակներում (0-7տարեկան և 7-18տ. սոցանապահով ու հատուկ խմբերի ցանկում ընդգրկված երեխաներ)՝ վերականգնողական հիվանդանոցային և արտահիվանդանոցային, ինչպես նաև առողջարանային բուժօգնության կազմակերպման միջոցով: Սակայն այս ծառայությունների հնարավորությունները գրեթե մի քանի անգամներ զիջում են առկա |

| | |
|---|---|
| | պահանջարկին:<br>Մանկական վերականգնողական ծառայությունների հետ կապված ներկայիս հիմնախնդիրներ են.<br>1) Պոլիտրավմաներին և/կամ այլ ծագման (օր. նեյրովիրաբուժություն, օնկոլոգիա, ՄՈՒԿ՝ բարդություններով, գենետիկ հիվանդություններ և այլն) վիրահատական միջամտություններից հետո երեխաներին անհրաժեշտ հիվանդանոցային սուր և ենթասուր վերականգնողական/inpatient բուժօգնության ծառայությունների գրեթե բացակայություն, այն թվում բազմապրոֆիլ հիվանդանոցներու, որի արդյունքում երեխաները հաճախ դուրս են գրվում երկրորդային և անդառնալի բարդություններով՝ հետագա վերականգնման խիստ դժվարություններով:<br>2) Հիվանդանոցային վերականգնողական ծառայություններ մատուցող կենտրոնների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն, մասնավորապես, հաշմանդամների տեղաշարժման (սայլակներ, քայլակներ, այլ), ինչպես նաև օժանդակ ծառայություններից օգտվելու հնարավորությունների տեսանկյունից:<br>3) Հիվանդանոցային վերականգնողական և առողջարանային բուժօգնության համար հատկացվող բյուջետային հատկացումների խիստ սահմանափակ հնարավորություններ: Պետական պատվերով բուժվող երեխաների տարեկան միջին թիվը չի գերազանցում 700-1000 երեխան՝ շուրջօրյա (յուրաքանչյուր երեխան տարեկան 1-2 էպիզոդից ոչ ավելի), 1300 երեխան՝ ամբուլատոր բուժման (տարեկան շուրջ 24 000 այցերի թվով/յուրաքանչյուր երեխան տարեկան 70 այցից ոչ ավելի) և 100-150 երեխան՝ առողջարանային բուժման պարագայում՝ շուրջ 400 մլն դրամ տարեկան բյուջետային ծախսերով:<br>4) Մանկական վերականգնողական ծառայությունների պահանջարկը 3-4 անգամ գերազանցում է առկա հնարավորությունները: Ըստ փորձագիտական գնահատականների, շարունակական վերականգնողական բուժօգնության կարիք ունի մինչև 6000 երեխա: Պաշտոնապես հաշվառված շուրջ 8000 հաշմանդամ երեխաների 70 տոկոսը ունի հենաշարժական կամ մենտալ խնդիրներ, որոնք գրեթե բոլորը ունեն վերականգնողական բուժման կարիք:<br>5) Տարեկան գրանցվում է տրավմաների2250 և ավելի դեպք՝ հոսպիտալացման ելքով, որից մոտ 20%-ը՝ գանգուղեղային տրավմաներ, որոնց շուրջ 60-70 % կարիք է ունենում հետագա վերականգնողական բուժման՝ ինչի հնարավորությունը գրեթե բացակայում է:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Մանկական վերականգնողական ծառայությունների կարողությունների ներկայիս վիճակի գնահատման հիման վրա իրավիճակի բարելավման առաջարկությունների մշակում, որտեղ տեղ կգտնեն առաջարկներ՝ մանկական վերականգնողական ծառայություն մատուցող նոր բժշկական կենտրոնի ստեղծման, պետական պատվերի համապատասխան ծավալների մեծացման, պետպատվերի շրջանակներում մանկական վերականգնողաբանության նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերի հատկացման ուղղությամբ:<br><br>**1. Կարգավորման առարկան.**<br>Մանկական վերականգնողական ծառայության բարելավման ծրագրի մշակում, հաստատում և շարունակական ներդրում: Ծրագրի հաստատում նախարարի հրամանով և ներառում 2020-2022թթ. Միջին ժամկետ ծախսերի ծրագրում և տարեկան բյուջետային հայտում:<br>**2. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Կբարելավվի հատուկ կարիքներով և հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և որակը, Սյս երեխաների համար կստեղծվի նոր վերականգնողական կենտրոն՝ վերականգնման համար ավելի նպաստավոր պայմաններով: |
| 40 | **Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն նպատակով առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) մահացության կառուցվածքը կրկնօրինակում է եվրոպական տարածաշրջանի մահացության պատկերը: Բնակչության մահացության ընդհանուր կառուցվածքում ՈՎՀ մահացության բեռը կազմում է մոտ 80%, ընդ որում սրտանոթային հիվանդություններից (ՍԱՀ) մահացությունը զբաղեցնում է առաջատար տեղը (48%), որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20,0%, շաքարային դիաբետը (ՇԴ)՝ 4,2%:<br>Հանրապետությունում տարեց տարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակն է բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և ռիսկային |

| | |
|---|---|
| | բնակչության շրջանում վաղ հայտնաբերել և կանխարգելել այդ հիվանդությունների հետագա զարգացումը։<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով ՀՀ ողջ տարածքում 2015-2020թթ-ին իրականացվում է Սքրինինգային ծրագիր՝ ըստ հետևյալ հիվանդությունների.<br>• հիպերտոնիա,<br>• շաքարային դիաբետ,<br>• արգանդի պարանոցի քաղցկեղ<br>Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է ազգաբնակչության 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը:<br>Ծրագրի իրականացման առաջին փուլում 01.01.2015թ.-31.12.2017թ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 1մլն.320 հազար հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է շուրջ 163 հազար ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 442 հազար քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և շուրջ 673 հազար քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 42 հազար մեզի և արյան երրորդ հետազոտություն:<br>Ծրագրի իրականացման երկրորդ փուլում 01.01.2018թ.-30.06.2018թ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 165,697 հազար հետազոտություն: Կանանց մոտ իրականացվել է շուրջ 16,101 ՊԱՊ թեստի հետազոտություն, շուրջ 53,286 քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն և շուրջ 90,432 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 5878 մեզի և արյան երրորդ հետազոտություն: Միևնույն ժամանակ իրականացվել է շարունակական մշտադիտարկում:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում շարունակաբար իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն վերը նշված հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ոչ վարակիչ հիվանդությունների հայտնաբերում և վերահսկում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման կատարման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետության շուրջ 420 հազար բնակչության ռիսկային խմբերում սքրինինգային հետազոտությունների իրականացումն է՝ նպաստելով ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: |
| 41 | **Վաղ մանկության շրջանի առողջապահական խնդիրների հաղթահարում, նեոնատալ ծառայությունների հզորացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Նեոնատալ ծառայությունների բարելավմանն ուղղված այս ազգային ծրագիրը կմշակվի հիմք ընդունելով «Յուրաքանչյուր նորածնի համար» ԱՀԿ/ՅՈՒՆԻՍԵՖ տարածաշրջանային ռազմավարությունը:<br>Սույն ծրագրի մշակման հիմնավորումը բխում է «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի նիստի N 24 արձանագրային որոշման 2-րդ հավելվածի ռազմավարական 4-րդ ուղղության 3-րդ ենթակետի ու կառավարության 2016թ. «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարության» սեպտեմբերի 2-ի նիստի N 34 արձանագրային որոշման ռազմավարական 2-րդ ուղղության 9-րդ և 10-րդ կետերի, ինչպես նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համագործակցության 2018 թվականի տարեկան ծրագրից:<br><br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Չնայած վերջին տասնամյակում մանկական մահացության զգալի իջեցմանը, և այն փաստին, որ |

| | |
|---|---|
| | մանկական մահացության ցուցանիշով (2017թ.՝ 8,1 ‰), հանրապետությունը դասվում է ցածր մանկական մահացություն ունեցող երկրների շարքին, այնուամենայն այն շարունակում է բարձր մնալ եվրոպական երկրների համեմատությամբ։<br>Անհրաժեշտ է նշել նաև, որ մանկական մահացության կառուցվածքում նեոնատալ մահացությունը շարունակում է մնալ բարձր (6,4 ‰), տարիներ շարունակ կազմելով մանկական մահացության բոլոր դեպքերի շուրջ 2/3 և չի ցուցաբերում իջեցման շոշափելի միտում։ Ըստ էության մանկական մահացության հետագա նվազեցման հիմնական ռեզերվը և Կայուն զարգացման նպատակների ոլորտային թիրախների հասանելության հիմնական միջոցը նորածնային մահացության ցուցանիշի կրճատումն է՝ նեոնատալ ծառայությունների որակի և մատչելիության բարելավման ճանապարհով։<br><br>Ծրագրի նպատակն է նորածինների մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, բժշկական կազմակերպությունների կարողությունների հզորացումը, նորածինների բուժօգնության ու խնամքի կազմակերպման և ուղեգրման համակարգի բարելավումը, մասնագիտական հմտությունների և կատարողականի բարձրացումը՝ վերջնական արդյունքում նորածնային, հետևաբար նաև մանկական մահացության նվազեցումը։<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Ներկայումս հանրապետությունում տարբեր միջազգային և դոնորական կազմակերպություններ, մասնագիտական ասոցիացիաներ իրականացնում են նորածինների ուղղված տարբեր ծրագրային միջոցառումներ, մինդեռ համապարփակ ազգային ծրագիր, որպես այդպիսին, առկա չէ, միջսեկտորալ համագործակցությունը ևս բավարար արդյունավետ չէ և այս առումով, «Յուրաքանչյուր նորածնի համար» ՄԱԿ-ի տարածաշրջանային ռազմավարության շրջանակներում Նեոնատալ ծառայության բարելավման գործողությունների ազգային ծրագրի մշակումը և ներդրումը զգալի կշտկի իրավիճակը։<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Նորածինների առողջության պահպանման և բարելավմանն ուղղված միջազգային և դոնորական կազմակերպությունների, մասնագիտական ասոցիացիաների տարբեր ծրագրային միջոցառումներ համակարգում մեկ համապարփակ ազգային ծրագրի ներքո։<br><br>**3. Միջոցառումների կատարման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>Նեոնատալ ծառայության բարելավման գործողությունների ազգային ծրագրի մշակման աշխատանքային խմբի ստեղծում, Ծրագրի մշակում, հաստատում և ներդրման ապահովում։<br>Այս շրջանակներում Միջազգային փորձի հիման վրա հանրապետության նեոնատալ ծառայությունների կազմակերպական նորմերի և գործելակարգերի վերանայում, հաստատում առողջապահության նախարարի հրամանով։ |
| 42 | **ՀՀ-ում լիցենզավորված բժշկական հաստատություններում էլեկտրոնային առողջապահության միասնական առողջապահական ծրագրային համակարգի ամբողջական ներդրում**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ-ում լիցենզավորված բժշկական հաստատություններում էլ-առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ առողջապահական համակարգն ընդգրկող բոլոր միավորների համար միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծելու միջոցով համակարգի կառավարման բարելավման և ծախս-արդյունավետության բարձրացման, պացիենտներին առավել որակյալ և ճշգրիտ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, առողջապահական համակարգում անհրաժեշտ բոլոր տվյալների հավաքագրմամբ ավելի նպատակային և հասցեական քաղաքականության մշակմանը։<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Էլ-առողջապահության տեղեկատվական համակարգի ներդրման նպատակով սկզբնական փուլում գործընթացն սկսվել է պետական պատվեր իրականացնող շուրջ 500 պետական և ոչ պետական բժշկական հաստատություններում գործող ծրագրային համակարգի փոխարինմամբ էլ-առողջապահական տեղեկատվական համակարգով։ Բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններում էլ-առողջապահական տեղեկատվական համակարգի ներդրումից, ներկայումս նախատեսվում է այն ներդնել նաև լիցենզավորված բոլոր բժշկական հաստատություններում, ինչը թույլ կտա մեկ միասնական հարթակում գրանցել և վարել բնակչության այցելությունների, բժշկական միջամտությունների, |

| | |
|---|---|
| | բժշկական պատմագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: |
| 43 | **Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների՝ տուբերկուլոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների կանխարգելում, վաղ հայնաբերում և բուժում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների՝ տուբերկուլոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների, համաճարակաբանական հսկողության, ախտորոշիչ, բուժական օպտիմալ և մարդակենտրոն համակարգերի ներդրման, կադրային ներուժի զարգացման, բնակչության շրջանում այդ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից՝ ՀՀ-ում նշյալ վարակներից հիվանդացությունն ու մահացությունը նվազեցնելու նպատակով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Տուբերկուլոզը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը և վիրուսային հեպատիտները ՀՀ-ում սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդություններ են: Մասնավորապես բարձր է տուբերկուլոզի դեղակայուն ձևերի բեռը, որը հանգեցնում է համաճարակային իրավիճակի բարդացմանը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ն առայժմ սահմանափակված է ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում, սակայն վերջին տարիներին արձանագրված դեպքերում գերակշռում են հետերոսեքսուալ ճանապահով փոխանցված դեպքերը, մասնավորապես այլ երկրներ արտագնա սեզոնային աշխատանքի մեկնող միգրանտ բնակչության և նրանց զուգընկերների շրջանում, ինչը լուրջ մարտահրավերներ է առաջացնում բնակչության այս հատուկ խմբի համար վարակի կանխարգելման արդյունավետ ծառայությունների մշակման անհրաժեշտության իմաստով: ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 24-ի նիստի թիվ 11 արձանագրային որոշմամբ ընդունվել է ՀՀ-ում տուբերկուլոզի կառավարման 2016-2020 թթ. ազգային ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, իսկ 2017 թվականի հունիսի 15-ի նիստի թիվ 25 արձանագրությամբ ՀՀ-ում 2017-2021 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը և առաջնահերթ միջոցառումների ցանկը: Անհրաժեշտ է մշակել նոր ծրագրեր հետագա եռամյա կամ հնգամյա շրջանների համար, ինչպես նաև վերանայել ընթացիկ ռազմավարությունները:<br>Վիրուսային հեպատիտներն առողջապահության գերակա խնդիրներից են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ: ՀՀ-ում վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ հետազոտություններն իրականացվում են ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշման պահանջներին համապատասխան, իսկ վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ հետազոտությունների գործընթացը դեռևս կանոնակարգման խնդիր ունի: ՀՀ-ում հեպատիտների դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ աշխատանքները կատարվում են հիմնականում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և ընդհանուր մոտեցումների հիման վրա, սակայն դրանց առաջացման ռիսկերն առանձնահատուկ են՝ յուրօրինակ փոխանցման գործոններով և տարածման առանձնահատկություններով, ինչպես նաև հաՃախ զարգացող ծանր բարդություններով /լյարդի ցիռոզի, առաջնային քացկեղ/: Ուստի հեպատիտների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների սահմանումը շատ կարևոր է հիվանդության համաճանակաբանական հսկողության համակարգի կատարելագործման, ինչպես նաև վերջիններիս հետևանքով առաջացող ծանր բարդությունների հսկողության տեսանկյունից:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տուբերկուլոզին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին և հեպատիտներին հակազդումն արդյունավետ կլինի պայքարի համալիր և համակարգված միջոցառումների կիրառման դեպքում: Հատկապես կարևորվում է աշխատանքը վարակի վերհսկման, կանխարգելման, ախտորոշման և բուժման արտահիվանդանոցային մարդակենտրոն ծառայությունների համակարգերի ստեղծումը, կադրային ներուժի զարգացումը, հանրային իրազեկման միջոցառումները, բնակչության խոցելի խմբերի շրջանում հիվանդությունների կանխարգելմանն ուղղված գիտելիքների տարածումը, խնդիրների լուծմանն ուղղված միջգերատեսչական, ինչպես նաև համայնքահեն, հասարարակական և միջազգային կառամակերպությունների հետ համագործակցությունը՝ դրանց իրականացման համար իրավական դաշտ ապահովելով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների՝ տուբերկուլոզին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների կանխարգելման, համաճարակաբանական հսկողության համակարգի, կլինիկա-ախտորոշիչ և բժշկական օգնության օպտիմալ և մարդակենտրոն համակարգերի ներդրման, |

| | |
|---|---|
| | կադրային ներուժի զարգացման, բնակչության շրջանում այդ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների տարածման կազմակերպման և իրականացման, միջգերատեսչական համագործակցության հարցերը:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>ՀՀ-ում տուբերկուլոզի, մասնավորապես հիվանդության դեղակայուն ձևերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների կանխարգելում, հիվանդացության և մահացության մակարդակների նվազում: |
| 44 | **Բնակչության առողջության պարտադիր ապահովագրության ներդրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության պարտադիր ապահովագրություն:<br><br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում, հանրապետությունում գործում է կամավոր ապահովագրության ինստիտուտը, իսկ 2017 թ. հոկտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը իրականացվում է ապահովագրական ընկերությունների միջոցով: Հետագա տարիների նախատեսվում է առողջության ապահովագրության շրջանակները ընդլայնել՝ ընդգրկելով բնակչության առանձին խմբերի: Հանրապետությունում առողջության պարտադիր ապահովագրության ներդրմամբ կբարձրանա բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակը և մատչելիությունը՝ առողջապահության ոլորտի ֆինանսավորման նոր աղբյուրների ներգրավման, ինչպես նաև բուժօգնության որակի վերահսկման նոր մեխանիզմների ներդրման միջոցով, կբարելավվի առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, կկրճատվի ստվերայնությունը և կբարձրանա կառավարման արդյունավետությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության պարտադիր ապահովագրություն՝ սահմանելով պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հիմնական սկզբունքները, կազմակերպա-իրավական և ֆինանսավորման մեխանիզմները, շահառուների հնարավոր շրջանակը, փոխհատուցման ենթակա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փաթեթը, ապահովագրավճարների հաշվարկման սկզբունքները և հավաքագրման մեխանիզմները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում ներդնել առողջության պարտադիր ապահովագրություն:<br><br>**3. Միջոցառման կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է հանրապետությունում առողջության պարտադիր ապահովագրության արդյունքում բարձրացնել բնակչության համար բժշկական օգնության և սպասարկման որակը, այն դարձնել առավել մատչելի և հասանելի, բարելավել առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, կրճատել ստվերայնությունը: |
| 45 | **Մանկական վնասվածքների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>«Մանկական վնասվածքների կանխարգելման ռազմավարական ծրագրի» և «Մանկական վնասվածքների կանխարգելման 2018-2023 թվականների միջոցառումների ծրագրի» հաստատման մասին» առողջապահության նախարարի հրամանի նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թ.-ի դեկտեմբերի 17-ի նիստի N 55 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Տրավմատիզմի կանխարգելման 2015-2020 թվականների միջոցառումների ծրագրի 4-րդ կետի 1)-ին ենթակետի:<br>Ռազմավարական և միջոցառումների ծրագրերի ընդհանուր նպատակն է ստեղծել երեխաների վնասվածքների դեմ պայքարի գործընթացներն ապահովող կառավարման, համաճարակաբանական հսկողության տեղեկատվական համակարգեր, և համալիր միջոցառումների արդյունքում նվազեցնել բնակչության շրջանում երեխաների վնասվածքների հիվանդացության բեռը և դրանց հետևանքով մահացությունը:<br>**1.1 Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**.<br>Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, խիստ մտահոգիչ է երեխաների վնասվածքների խնդիրը: Ըստ Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) մանկական հիմնադրամի 2008 թվականի «Մանկական վնասվածքների կանխարգելման համաշխարհային |

| | |
|---|---|
| | հաշվետվության» յուրաքանչյուր տարի գրեթե 830 000 մինչև 18 տարեկան երեխա մահանում է ոչ կանխամտածված վնասվածքների հետևանքով:<br>Մտահոգիչ են նաև երեխաների վնասվածքներով պայմանավորված ծախսերը: Մասնավորապես , հաշվարկված է, որ զարգացող երկրներում երեխաների՝ միայն ճանապարհա-տրանսպորտային պատահարների հետևանքով առաջացած վնասվածքներով պայմանավորված տարեկան ծախսերը կազմում են ՀՆԱ-ի գրեթե 1-2 % (մոտավորապես 100 միլիարդ ԱՄՆ դոլար):<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>ԱՄՆ-ում 2000 թ.-ին իրականացված հետազոտության շրջանակներում հաշվարկվել են վնասվածքների կանխարգելման տարբեր միջոցառումների իրականացման համար ներդրումների արդյունքում ստացված ֆինանսական խնայողությունները, մասնավորապես՝ ԱՄՆ յուրաքանչյուր 1 դոլար ներդրումից ստացված ֆինանսական խնայողությունը ըստ կանխարգելման տարբեր ուղղությունների կազմում է.<br>1) Զայնազդարարման սարքերի ներդրումից՝ 65 ԱՄՆ դոլար;<br>2) Ավտոմեքենայի մանկական նստելատեղերի ներդրումից՝ 29 ԱՄՆ դոլար;<br>3) Հեծանվորդների սաղավարտների կիրառումից՝ 29 ԱՄՆ դոլար;<br>4) Մանկաբույժների կողմից կանխարգելման խորհրդատվության տրամադրումից՝ 10 ԱՄՆ դոլար;<br>5) Թունավորումների հսկողության ծառայությունների գործունեությունից՝ 7 ԱՄՆ դոլար;<br>6) Ճանապարհային անվտանգության բարելավումներից՝ 3 ԱՄՆ դոլար:<br><br>**2.Կարգավորման առարկան.**<br>Ռազմավարակն ծրագրով նախատեսվում են մանկական վնասվածքների կանխարգելմանն ուղղված հետևյալ կարգավորումները.<br>1) Համաճարակաբանական հսկողության բարելավում. ներառում է տվյալների շարունակական և սիստեմատիկ հավաքագրում և վերլուծություն, երեխաների վնասվածքների պատճառների բացահայտում, ռիսկերի գնահատում և կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակում:<br>2) Միջգերատեսչական համագործակցություն. ներառում է անվտանգ միջավայրերի ստեղծմանը և որոշումների կայացմանն ուղղված օրենքների, կանոնակարգերի, վարչարարական գործողությունների բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում:<br>3) Կրթական և ուսուցողական ծրագրեր. ներառում է երեխաների վնասվածքների կանխարգելման հարցերի վերաբերյալ հասարակության թիրախային խմբերի գիտելիքների մակարդակի բարձրացմանը և վարքագծի փոփոխությանն ուղղված կրթական և ուսուցողական ծրագրերի գործադրում:<br>4) Առողջապահական համակարգ, բժշկական օգնություն և սպասարկում. որակյալ բժշկական օգնություն, կլինիկական և վերականգնողական ծառայություններ ապահովելու համար առողջապահական ենթակառուցվածքների բարելավում:<br>5) Հանրային իրազեկում. ներառում է երեխաների վնասվածքների կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության, հաղորդագրությունների մշակում և տարբեր տեղեկատվական աղբյուրներով փոխանցում, վնասվածքների կանխարգելման հարցերով քարոզչության իրականացում:<br>6) Համաճարակաբանական հետազոտական ծրագրերի գործադրում. ներառում է երեխաների վնասվածքների պատճառների, ռիսկի գործոնների, հետևանքների, մասշտաբների բացահայտմանը և վերլուծությանն ուղղված արդյունավետ համաճարակաբանական հսկողության ծրագրերի գործադրում:<br><br>**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>1) Երեխաների վնասվածքների կանխարգելման հարցերում առողջապահության համակարգի արդյունավետ համագործակցություն այլ շահագրգիռ գերատեսչությունների, մասնավոր և հասարակական կազմակերպությունների հետ:<br>2) Երեխաների վնասվածքների համաճարակաբանական հսկողության համակարգի շարունակական գործադրման արդյունքում՝ վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ տեղեկատվության առկայություն:<br>3) Երեխաների արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժանձնակազմի՝ երեխաների վնասվածքների կանխարգելման և վարման հարցերով գիտելիքների մակարդակի բարձրացում:<br>4) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վնասվածքներից տուժած երեխաներին տրամադրվող բժշկական ծառայությունների բարելավում, պատշաճ վերականգնողական ծառայությունների տրամադրում: |

| | |
|---|---|
| | 5) Բնակչության շրջանում երեխաների վնասվածքների կանխարգելման հարցերով իրազեկվածության մակարդակի բարձրացում: <br> 6) Երեխաների մոտ վնասվածքներից առաջացած բարդությունների, հաշմանդամության և մահացության նվազեցում: |
| 46 | **Բուժանձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացում, մարդկային ներուժի արդյունավետ կառավարում և զարգացման ապահովում** <br><br> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** <br><br> Հայաստանի Հանրապետությունում բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների թարմացման և բժշկագիտության ոլորտում նորանոր ձեռքբերումների ներդրման անընդհատությունն ապահովելու համար անհրաժեշտ է ավարտին հասցնել շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրման ինստիտուտի ներդրումը: Համաձայն շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրման բուժաշխատողները պարտադիր կերպով կվերապատրաստվեն և հինգ տարվա ընթացքում հավաքելով բավարար կրեդիտներ կստանան հավաստագիր: <br> Հայաստանի Հանրապետոյունում մարզային առողջապահական կազմակերպությունների կադրային հագեցվածության հիմնախնդրի լուծման հարցում շարունակում է հիմնախնդիր մնալ մարզերում բուժաշխատողների աշխատանքի պայմանների նվազ հրապուրիչ լինելը և հրատապ անհրաժեշտություն կա մարզերում բուժաշխատողների աշխատանքը ավելի գրավիչ դարձնելու' սոցիալական աջակցության և լրացուցիչ խրախուսման որոշակի առաջարկներ ձևավորելու միջոցով: <br><br> **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրման հետ կապված իրավահարաբերությունները ամբողջությամբ կարգավորված չեն: Սույն հանգամանքը հնարավորություն չի տալիս ապահովելու ինստիտուտի լիարժեք և ամբողջական ներդրումը և կայացումը: <br> Ներկայումս չկան ձևավորված և իրավականորեն ամրագրված խրախուսման փաթեթներ մարզերում աշխատել ցանկացող բժիշկների համար: Առաջարկները կրում են ոչ համակարգային, լոկալ բնույթ և հիմնականում իրականացվում են ոչ որպես պարտավորություն, այլ որպես բարի կամքի դրսևորում այս կամ այն բժշկական կազմակերպության կամ մարզային իշխանության կողմից: <br> Նշված հիմնախնդրի լուծումն առավել հրատապ է՝ հաշվի առնելով Մարզային առողջապահական կադրային ներուժի պակասն ու դրա հետևանքով , բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների ցածր որակն ու հասանելիությունը: <br><br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br><br> Շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրմանն առընչվող իրավական ակտերի ընդունումը և գործուն, կոռուպցիոն ռիսկերից զերծ համակարգի ստեղծումը կապահովեն բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը և գիտելիքների անընդհատ թարմացմանը: <br> Առաջարկվում է Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, մարզպետարանների, Առողջապահության նախարարության և ԿԳՆ կողմից համատեղ մշակել մարզերում աշխատելու պատրաստ բժիշկների սոցիալական աջակցության և լրացուցիչ խրախուսման փաթեթներ: <br><br> **2. Կարգավորման առարկան** <br> ՀՀ շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրման համակարգի ամբողջական ներդրում և մարզային առողջապահական կազմակերպություններում բժիշկների աշխատանքը առավել հրապուրիչ դարձնող սոցիալական աջակցության և լրացուցիչ խրախուսման փաթեթների ձևավորում <br><br> **3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Շարունակական մասնագիտական զարգացման և հավաստագրման համակարգի ներդրումը կհանգեցնի բուժաշխատողների մասնագիտական կարողությունների և պատրաստվածության բարձրացմանը և անընդհատ զարգացմանը:<br>Լրացուցիչ խրախուսում նախատեսելու հետևանքով կավելանա մարզերում աշխատել ցանկացող բժիշկների թիվը, ինչը կբերի մարզային կադրային ներուժի բացի լրացման և բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակի և հասանելիության աճին: |
| 47 | **Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կամ բուժաշխատողի կողմից բուժվող պացիենտի առողջությանն անզգուշությամբ պատճառված վնասի փոխհատուցման ինստիտուտի ձևավորում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կամ բուժաշխատողի կողմից բուժվող պացիենտի առողջությանն անզգուշությամբ պատճառված վնասի փոխհատուցման ինստիտուտի ներդրում:<br>**1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում, հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կամ բուժաշխատողի կողմից բուժվող պացիենտի առողջությանն անզգուշությամբ վնաս պատճառվելու դեպքում բացակայում է որևէ գործուն մեխանիզմ պատճառված վնասի փոխհատուցման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել բժիշկների մասնագիտական գործունեության ապահովագրություն՝ սահմանելով ապահովագրության համակարգի ներդրման հիմնական սկզբունքները, կազմակերպա-իրավական և ֆինանսավորման մեխանիզմները, շահառուների հնարավոր շրջանակը, փոխհատուցման ենթակա դեպքերի փաթեթը, ապահովագրավճարների հաշվարկման սկզբունքները և հավաքագրման մեխանիզմները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում ներդնել բժիշկների մասնագիտական գործունեության ապահովագրություն:<br><br>**3. Միջոցառման կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է հանրապետությունում ապահովել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կամ բուժաշխատողի կողմից բուժվող պացիենտի առողջությանն անզգուշությամբ պատճառված վնասի փոխհատուցման գործուն մեխանիզմի առկայություն: |
| 48 | **Բժշկական արտադրատեսակների գրանցմանը, ներմուծմանը, արտահանմանը, արտադրությանը և շրջանառությանը վերաբերող իրավահարաբերությունների կարգավորում և արդիական ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապարփակ ձևով չեն կանոնակարգվում բժշկական արտադրատեսակների գրանցման, ներմուծման, արտահանման, արտադրության և շրջանառության հետ կապված գործընթացները: Այս իրավիճակում առաջանում են խնդիրներ՝ կապված ՀՀ տարածք ներմուծվող և ՀՀ-ում օգտագործվող բժշկական արտադրատեսակների որակի, անվտանգության և արդյունավետության տեսանկյունից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս չկա ամբողջական իրավական համակարգ, որը լիարժեքորեն կանոնակարգում է Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների գրանցման, ներմուծման, արտահանման, արտադրության և շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ սպառնալով հասարակության անվտանգությանը:<br>Նշված հիմնախնդրի լուծումն առավել հրատապ է՝ հաշվի առնելով ԵԱՏՄ շրջանակներում բժշկական արտադրատեսակների ոլորտում տեղի ունեցող զարգացումները և ամրագրվող իրավական կանոնակարգերը: |

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Բժշկական արտադրատեսակների գրանցման, ներմուծման, արտահանման, արտադրության և շրջանառության ոլորտը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ձևավորել համապարփակ ներպետական օրենսդրական դաշտ, որը կհամապատասխանի ինչպես ԵԱՏՄ-ի, այնպես էլ եվրոպական չափորոշիչներին:

**2. Կարգավորման առարկան**

ՀՀ-ում բժշկական արտադրատեսակների գրանցման, ներմուծման, արտահանման, արտադրության և շրջանառության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում և արդիական ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Վերոհիշյալ գործընթացները իրականացնելու արդյունքում ակնկալվում է ստեղծել բժշկական արտադրատեսակների գրանցման, ներմուծման, արտահանման, արտադրության և շրջանառության ոլորտում լիարժեք օրենսդրություն և արդիական ինստիտուցիոնալ կառուցակարգեր, որը կնպաստի ՀՀ-ում օգտագործվող բժշկական արտադրատեսակների անվտանգության և որակի բարձրացմանը:

**Արդարադատության նախարարություն**

49

**Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 5 տարիների կտրվածքով իրականացվելիք իրավական և դատական բարեփոխումների պլանավորումը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**

**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի հանրապետությունում դատաիրավական ոլորտի բարեփոխումները պետք է կրեն շարունակական բնույթ՝ հաշվի առնելով ինչպես ներպետական առանձնահատկությունները, այնպես էլ առաջադեմ միջազգային փորձը:

**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Դատականիրավական համակարգի խնդիրները բազմազան են, ինչն էլ պատճառն է նոր ռազմավարության և գործողությունների մշակման, որոնց մեջ հստակեցվել են ինչես առկա խնդիրները, այնպես էլ դրանց լուծման մեխանիզմները:

**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2024 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվելու է՝ հաշվի առնելով դատաիրավական ոլորտում բարեփոխումների ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման, հաշվետվողականության և առաջընթացի պարբերական գնահատման անհրաժեշտությունը ոլորտի վերընթաց զարգացման ապահովման համար: Ռազմավարությունը դատաիրավական ոլորտի բարեփոխումների նախորդ ծրագրերի շարունակությունն է լինելու և նախորդների ձեռքբերումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով իրավունքի բնագավառի ժամանակակից զարգացումները, ՀՀ դատական իշխանության և իրավական համակարգի առկա խնդիրներն ու զարգացման հեռանկարները, սահմանելու է՝ դատական և իրավական ոլորտի բարեփոխումների ընդհանուր նպատակը, ուղղությունները և առաջիկա հինգ տարիների համար այդ ուղղություններից յուրաքանչյուրով սահմանված ռազմավարական նպատակները, դրանց ուղենիշերը և ռազմավարության իրագործմամբ ակնկալվող վերջնարդյունքները, որոնց ցանկանում է հասնել Կառավարությունը:

**Կարգավորման առարկան**

Դատական և իրավական ոլորտում առկա խնդիրները:

**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Նոր ռազմավարությունը հնարավորություն կընձեռի հստակ սահմանել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են էլ ավելի կատարելագործված դատական և իրավական համակարգ ունենալու համար:

| | |
|---|---|
| 50 | **Ընդլայնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակները**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անվաճար իրավաբանական օգնություն ցուցաբերելը կամ տրամադրելը պետության պարտավորությունն է, իսկ այդ իրավունքից օգտվելը քաղաքացու իրավունքը: Ուստի՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այս իրավունքի լիարժեք իրացման համար:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պրակտիկան ցույց է տալիս, որ ներկայումս անվճար իրավաբանական օգնություն հայցողները օրենքին համապատասխան մեծ թիվ են կազմում, ինչի արդյունքում հանրային պաշտպանի գրասենյակը ծանրաբեռնվում է: Բացի այդ՝ գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման շեմը թույլ չի տալիս որպեսզի մի շարք շահառուներ, որոնք օբյեկտիվորեն ունեն իրավաբանական օգնություն ստանալու կարիք, օգտվեն անվճար իրավաբանական օգնությունից:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ավելացնել հանրային պաշտպանների թիվը, անվճար իրավաբանական օգնության տրամադրումը առավել արդյունավետ դարձնելու համար: Առաջարկվում է նաև գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը բարձրացնել:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Անվճար իրաբավաբանական օգնության տրամադրում:<br><br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ավելացնել հանրային պաշտպանների թիվը: Բարձրացնել գույքային պահանջների գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը: |
| 51 | **Վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը՝ սահմանելով պատասխանատվության նոր տեսակներ**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կառավարության գերնպատակներից է վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող օրենսդրական կարգավորումների հստակեցումը, որոնք չեն արտացոլում վարչական տույժի նպատակները:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վարչական տույժը պետք է կիրառվի անձի մոտ իրավահպատակ վարքագիծ ձևավորելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով: Վարչական տույժերը կրում են մասսայական բնույթ և ծառայում են պետական,համայնքային և որոշակի մասնավոր բյուջեների համալրմանը՝ դրանով իսկ ստեղծելով վարչական մարմինների կողմից իրականացված վարչարարության նկատմամբ հասարակական անվստահության մթնոլորտ, ինչն իր հերթին, ի թիվս այլ բացասական հետևանքների, հանգեցնում է վարչական ակտերի դատական կարգով բողոքարկումների մեծաթվության: Այս առումով, հասրակաությունը պետք է դադարի լինել «պատժվածների հասարակություն»: Մեր խնդիրն է վարչական պատասխանատվության տեսակները ըստ կատարված արարքների ծանրության և վտանգավորության փոխել այնպես, որ դրանց կիրառումը ծառայի բուն նպատակին:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետք է վերանայվեն և էականորեն բարեփոխվեն վարչական պատասխանատվության միջոցները՝ դիտարկելով դրանք համաչափության սահմանադրական սկզբունքի համատեքստում, միաժամանակ հանրային վտանգավորության ցածր աստիճան ունեցող իրավախախտումների համար նախատեսելով նախազգուշացում տույժի տեսակը, ինչպես նաև կիրառել այլընտրանքային պատասխանատվության միջոց, օրինակ՝ որոշակի դասընթացների հաճախում: Անհրաժեշտ է վերանայել նաև նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտումների շրջանակը՝ վերջիններիս համար բավարարվելով միայն զգուշացմամբ: Վերանայվելու են |

| | |
|---|---|
| | տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում վարչական իրավախախտումների հայտնաբերման վերաբերյալ իրավակարգավորումները:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Վարչական իրավախախտումները և դրանց համար նախատեսված պատասխանատվության միջոցները:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծ: |
| 52 | **Դատարանի գործունեության գնահատման գործիքների ներդնում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Դատարանների և դրանց անձնակազմի կառավարման համակարգի բարելավումը, ինչպես նաև դատարանների գործունեության գնահատման ժամանակակից գործիքակազմի ներդրումը դատարաններում զգալիորեն կբարձրացնի դատական իշխանության գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նոր օրենսդրությամբ սնանկության գործերով դատարանների և Երևան քաղաքի դատարանի ստեղծումը անհրաժեշտ է դարձնում շարունակաբար զարգացնել այդ դատարանների բնականոն գործունեության ապահովման համար համապատասխան նախադրյալներն ու պայմանները:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ուսումնասիրել դատարանի գործունեության գնահատման գործիքների վերաբերյալ միջազգային չափանիշներն ու փորձը: Մասնավորապես, վերլուծել և ուսումնասիրել CEPEJ-ի, National Center for State Courts, American Bar Association-ի չափանիշները և արդյունքները ներկայացնել Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի քննարկմանը: Արդյունքների հիման վրա մշակել գործիքները և իրականացնել դրանց ծրագրային ապահովումը: Դրանց գործարկման արդյունավետության գնահատման հիման վրա ձեռնարկել հետագա բարելավման քայլերը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Ներդնել դատարանի գործունեության գնահատման արդյունավետ գործիքներ:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում: Ստեղծվել և գործարկվել են դատարանի գործունեության գնահատման և կառավարման արդյունավետության բարձրացման գործիքներ, ինչպես նաև բարելավվել է դատարանի գործունեության արդյունավետությունը: |
| 53 | **Փաստաբանական սխալից ապահովագրության արդյունավետ մեխանիզմի ներդնում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշվի առնելով փաստաբանության ինստիտուտի դերն անձանց իրավական օգնության ցուցաբերման միջոցով նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում անհրաժեշտություն է առաջացել այս ոլորտում իրականացնել բարեփոխումներ՝ հաշվի առնելով նաև իրավունքի և արդարադատության վերաբերյալ հանրային ընկալումների ձևավորմանը նպաստավոր պայմանների ստեղծման կարևորությունը:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Այս ոլորտում բարեփոխումների իրականացմամբ իսկ կապահովի նաև դատաիրավական ոլորտի բարեփոխումների տրամաբանական ամբողջականությունը: կարևորվում է այս ինստիտուտի զարգացման և արդյունավետ գործունեության ապահովման ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկումը՝ ելնելով ոլորտում առկա մի շարք խնդիրներից:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ամրապնդել փաստաբանական ծառայություններից օգտվողների պաշտպանվածությունը և վնասների հատուցման հնարավորությունը, ինչը նպաստելու է հասարակության ներսում անհատական մակարդակում |

| | |
|---|---|
| | իրավական անվտանգության համոզվածության ամրապնդմանը:<br>Զարգացնել փաստաբանական ինստիտուտը և բարելավել փաստաբանական ծառայությունների որակը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Ներդնել փաստաբանական սխալից ապահովագրության ինստիտուտը:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Ուսումնասիրել փաստաբանական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական և կազմակերպական ընթացակարգերի, այդ թվում՝ վնասի հատուցման չափանիշների վերաբերյալ առաջադեմ փորձը և դրա հիման վրա մշակել փաստաբանական սխալի ապահովագրության ինստիտուտի ներդրման հայեցակարգ: Հայեցակարգի հիման վրա մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթը, կազմակերպել հանրային քննարկումներ: Նախագիծը ներկայացնել Ազգային ժողով: |
| 54 | **Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրի փոփոխության նպատակով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ երկխոսության իրականացում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության բնագավառում արձանագրել է շոշափելի առաջընթաց: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այս ոլորտում դեռևս առկա են լուծում պահանջող խնդիրներ, և անհրաժեշտ է գործադրել շարունակական ջանքեր նոր առաջընթաց գրանցելու և առկա ձեռքբերումներն ամրապնդելու համար:<br>2015 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով ամրագրվել է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 29-ին հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ ամրագրվել է, որ մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը:<br>Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետական մարմինների գործողությունների շարունակականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել մշակելու գործողությունների համապարփակ ծրագիր: Արդյունքում, 2017թ. մայիսի 4-ին ՀՀ կառավարության N 483-Ն որոշմամբ հաստատվեց «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների Գործողությունների ծրագիրը»:<br>Իրականացման ընթացքում գտնվող Գործողությունների ծրագրի նպատակն է առավել համակարգված և արդյունավետ դարձնել հանրապետական գործադիր և օրենքով ստեղծված պետական մարմինների գործողությունները, որոնք հնարավոր կդարձնեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի ՆԿ-159 կարգադրությամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մեջ ամրագրված նպատակների իրագործումը: Գործողությունների ծրագրում ընդգրկված են թվով 96 միջոցառումներ, որոնք վերաբերում են մարդու քաղաքական և քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ամրապնդմանն ու պաշտպանությանը:<br>Վերը նշված ՀՀ կառավարության որոշումը բարելավում է նաև Ծրագրի կատարման հաշվետվողականության կառուցակարգը՝ ստեղծելով ինստիտուցիոնալ կոլեգիալ մարմին՝ համակարգող խորհուրդ, որը կանոնավոր կերպով հետևում է Ծրագրի կատարման ընթացքին: Համակարգող խորհուրդը բաղկացած է Ծրագրի կատարման համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչներից, որը գլխավորում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Համակարգող խորհրդի կազմը հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017թ. հուլիսի 4-ի N 694-Ա որոշմամբ: Հարկ է նշել, որ կազմակերպվել և անցկացվել են թվով Համակարգող խորհրդի 3 նիստեր, որոնց ընթացքում շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչները քննարկել են միջոցառումների կատարման ընթացքը, վեր են հանել դրանց արդյունավետ կատարման խոչընդոտները՝ տալով համապատասխան լուծումներ:<br>Ավելին, գործողությունների կատարման ընթացքն առավելագույնս թափանցիկ դարձնելու նպատակով |

| | |
|---|---|
| | նախատեսվում է, որ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո Համակարգող խորհուրդը կազմակերպում է հանրային քննարկում, որին կարող են հրավիրվել Համակարգող խորհրդի կազմում չընդգրկված պետական կառույցների ներկայացուցիչները, Մարդու իրավունքների պաշտպանը կամ նրա տեղակալը, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանրային քննարկումները կազմակերպվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Միաժամանակ, 2017թ. դեկտեմբերին հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամ կազմակերպվել է հանրային քննարկում՝ նվիրված Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրի 1-ին կիսամյակի համար նախատեսված միջոցառումների կատարմանը: Մոտ ժամանակներս նախատեսվում է կազմակերպել 2-րդ հանրային քննարկումը, որի ընթացքում նախատեսվում է քննարկել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ներկայացված առաջարկությունները՝ Գործողությունների ծրագրում ընդգրկելու նպատակով:<br>ՀՀ կառավարության որոշմամբ հստակ սահմանվում են հանրապետական գործադիր իշխանության և օրենքով ստեղծված պետական մարմինների կողմից տրամադրվող կիսամյակային հաշվետվություններին ներկայացվող պահանջները: Բացի այդ, նշված մարմիններն պարտավորվում են իրենց պաշտոնական կայքերում հրապարակել կիսամյակային հաշվետվությունները:<br>Հարկ է նշել, որ 2017-2019թթ. Գործողությունների ծրագիրը մշակվել է առավելագույն ներառական կերպով, մասնավորապես, 2017թ. փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվել են թվով 10 ոլորտային քննարկումներ, որոնց ընթացքում հասրակական կազմակերպությունների, միջազգային կառույցների և պետական մարմինների ներկայացուցիչները փորձել են գտնել հնարավոր փոխզիջումային ձևակերպումներ միջոցառումների վերաբերյալ՝ հաշվի առնելով ոլորտային քաղաքականության առաջնահերթությունները, բյուջետային հնարավորություններն ու իրականացման հնարավոր ժամկետներն ու կանխատեսելի ռիսկերը: Ընդհանուր առմամբ, Գործողությունների մշակման ընթացքում պետական մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ստացվել էին թվով 300-ից ավել առաջարկություններ, որոնցից 1/3-ը տեղ է գտել ՀՀ կառավարության N483-Ն որոշման հավելված 1-ում:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Այդուհանդերձ, ՀՀ արդարադատության նախարարությունը Գործողությունների ծրագրի հաստատումից հետո պարբերաբար քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ստանում է համապատասխան առաջարկություններ՝ Գործողությունների ծրագրում ներառելու նպատակով, ինչպես նաև մտահոգություններ առ այն, որ իրենց կողմից ներկայացված առաջարկություններն այդպես էլ տեղ չեն գտել ընթացքի մեջ գտնվող Գործողությունների ծրագրում:<br>Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև երկրում տեղի ունեցած վերջին քաղաքական իրադարձությունները, որից անմասն չէր կարող մնալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը՝ օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջացել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկելու Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների Գործողությունների ծրագրի վերանայման հարցը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրի փոփոխության նպատակով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ երկխոսության իրականացումը հնարավորություն կընձեռի առավել ներառական կերպով քննարկել վերջիններիս կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները՝ առանձնացնելով այն հրատապ լուծում պահանջող խնդիրները, որոնց իրականացումը հնարավոր կլինի ապահովել մինչև 2019թ. ավարտը: Երկարաժամկետ լուծում պահանջող միջոցառումները տեղ կգտնեն Մարդու իրավունքների պաշտպանության հաջորդ Գործողությունների ծրագրում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրի փոփոխության նպատակով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ երկխոսության իրականացման արդյունքում կձևավորվի համապատասխան առաջարկությունների փաթեթ, որը օրենքով սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ: |
| 55 | **Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. Նոր եռամյա Գործողությունների ծրագրի հաստատում** |

| | |
|---|---|
| | **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության բնագավառում Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է հետևողականորեն մշակել և իրականացնել թիրախավորված միջոցառումների ծրագրեր: Հիմք ընդունելով նախորդ երկու Գործողությունների ծրագրերի (2014-2016թթ. և 2017-2019թթ.) իրականացման ձեռքբերումները և իհարկե արձանագրված թերացումներն ու դասերը Կառավարությունը կմշակի և կիրականացնեի Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ազգային գործողությունների ծրագիր՝ դրա իրագործմանը ներգրավվելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և միջազգային գործընկերներին:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 29-ին հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ ամրագրվել է, որ մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը:<br>Ընթացիկ կատարման փուլում գտնվող Գործողությունների ծրագիրն ընդգրկում է 2017-2019թթ.-ը, և այս ոլորտում պետական քաղաքականության շարունակականությունն ապահովելը բխում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նոր կառավարության առաջնահերթություններից:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ արդարադատության նախարարությունը Գործողությունների ծրագրի հաստատումից հետո պարբերաբար քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ստանում է համապատասխան առաջարկություններ՝ Գործողությունների ծրագրում ներառելու նպատակով, ինչպես նաև մտահոգություններ առ այն, որ իրենց կողմից ներկայացված առաջարկություններն այդպես էլ տեղ չեն գտել ընթացքի մեջ գտնվող Գործողությունների ծրագրում: Դրանց մի մասը հնարավոր է ներառել ընթացիկ գործողությունների ծրագրում, իսկ մյուս մասը երկարաժամկետ և համապարփակ լուծումներ տալու տեսակետից օբյեկտիվորեն հնարավոր է պլանավորել հաջորդ եռամյա ծրագրի շրջանակներում:<br>Նոր ծրագրի մշակման ընթացքում անպայմանորեն պետք է անդրադառնալ նախորդ ծրագրերի իրականացման վերաբերյալ առկա գնահատականներին և արձանագրված խնդիրների ու մարտահրավերների հասցեագրման համար մշակել լուծումներ՝ գործողությունների նոր ծրագրում ընդգրկելու համար:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Նոր գործողությունների ծրագրով կսահմանվեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում լուծումներ պահանջող հրատապ խնդիրները և կամրագրվեն դրանց լուծման քայլերը, ժամկետները, պատասխանատուները և այլն:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրն օրենքով սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը: |
| 56 | **Պաշտոնատար անձանց հայտարարագրման համակարգի կատարելագործում, հանրային վերահսկողության մեխանիզմների ընդլայնում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «4. ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» վերտառությամբ բաժնի «4.1. Հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկություն» գլխից բխող գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրման համակարգերի վերաբերյալ դրույթներն իրագործելու պահանջից: Միջոցառումը նպատակ է հետապնդում առավել վերահսկելի և հաշվետու դարձնելու պաշտոնատար անձանց գործունեությունը:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ գործող օրենքով սահմանվում է պաշտոնատար անձանց և |

| | |
|---|---|
| | վերջիններիս ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման վերաբերյալ դրույթները:<br>Միաժամանակ, պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների ներգրավվածությունը կոռուպցիոն իրավախախտումների մեջ բացառելու նպատակով՝ կառավարության ծրագրով կարևորվում է օրենսդրական նորամուծությունների իրականացումը, ինչի արդյունքում առավել հրապարակային կդարձվեն հայտարարագրում ներառվող ներկայումս պաշտպանվող որոշ տվյալներ, ինչպես նաև կստեղծվեն վերահսկողության առավել գործուն մեխանիզմներ:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու վերաբերյալ միջոցառմամբ առաջարկվում է օրենքով ամրագրել ՀՀ կառավարության ծրագրի «4. ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆԴԵՄ» վերտառությամբ բաժնի «4.1. Հանրային ծառայության մեջ գտնվող անձանց գործունեության, գույքի և եկամուտների թափանցիկություն» գլխից բխող գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրման համակարգերի բարեփոխմանն ուղղված դրույթները:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Փաստաթղթով Կսահմանվեն կոռուպցիայի կանխարգելման կարևոր գործիք հանդիսացող հայտարարագրման համակարգի առավել արդյունավետ գործարկմանն ուղղված մեխանիզմներ:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում առավել վերահսկելի և հաշվետու կդառնա պաշտոնատար անձանց գործունեությունը, հասարակության համար կստեղծվեն հանրային վերահսկողություն իրականացնելու առավել գործուն երաշխիքներ: |
| 57 | **Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության մշակում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է ՀՀ կառավարության գործունեության առաջնային և կարևորագույն ուղղություններից մեկը: Ուստի, դեռևս 2003 թվականից ՀՀ կառավարությունն ընդունել է հակակոռուպցիոն ռազմավարություններ՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքականության հիմնական ուղղությունների կանխորոշման և այդ պայքարն առավել համակարգված դարձնելու նպատակով:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2018 թվականին ավարտվում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի գործողության ժամկետը: Նշվածից ելնելով՝ անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ մշակել և ընդունել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կոռուպցիայի դեմ պայքարի շարունակականությունն ապահովելու, այդ պայքարում հաջողություններ գրանցելու, Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապարփակ և արդյունավետ քաղաքականություն, որն իր արտացոլումը կստանա ՀՀ 2019-2022 թվականների համակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ներքո:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Փաստաթուղթը կսահմանի կոռուպցիայի դեմ պայքարում պետության հիմնական ռազմավարական ուղղությունները, ներառյալ՝ կոռուպցիոն խնդիրների վերհանման և լուծմանը, միջազգային պարտովորությունների իրականացմանն ուղղված քայլերը: Ռազմավարության շրջանակներում կսահմանվեն ՀՀ կառավարության ծրագրի «4. ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» վերտառությամբ բաժնի ներքո գտնվող հակակոռուպցիոն միջոցառումների կատարումն ապահովող անհրաժեշտ քայլերը: |

| | |
|---|---|
| | **Միջոցառման իրակցումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ կորոշվեն հետագա՝ 2019-2022 թվականների տարիների հակակոռուպցիոն ուղղությունները, կսահմանվեն նոր հակակոռուպցիոն թիրախային ոլորտները: |
| 58 | **Իրավաբանական անձանց գրանցման գործընթացի ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով կազմակերպում և իրականացում, իրական սեփականատերերի գրանցման մեխանիզմների ստեղծում**<br><br>**Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «4. ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» վերտառությամբ բաժնի «4.3. Իրավաբանական անձանց գործունեության թափանցիկություն» գլխի պահանջներից:<br>Միջոցառման նպատակն է պետական ռեգիստրի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, պետական ռեգիստրի հետ փաստաթղթաշրջանառության՝ բացառապես էլեկտրոնային եղանակով իրականացումը, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենսդրությամբ համապարփակ ձևով կարգավորված չեն էլեկտրոնային եղանակով պետական գրանցման և պետական հաշվառման գործառույթների իրականացման հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ առկա չեն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ: Միաժամանակ, Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր գործիքներից մեկը կարող է լինել պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի հրապարակումը:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող լուծումներն ուղղված են պետական ռեգիստրի կողմից մատուցվող ծառայությունների արդիականացմանն ու հասանելիության ապահովմանը՝ ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձի համար, ցանկացած վայրից և ցանկացած պահի՝ ապահովելով նաև պաշտոնական տեղեկատվության՝ ոչ թղթային եղանակով տրամադրելու հնարավորությունը: Վերոհիշյալ նպատակների իրականացման համար Նախագծով առաջարկվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացն ամբողջությամբ իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ բոլոր գրանցումների համար առցանց դիմելու հնարավորությամբ: Միաժամանակ, առաջարկվում է հստակ սահմանել իրական սեփականատերերի հասկացությունը՝ ներդնելով վերջիններիս գրանցման համակարգ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Նախագիծը կարգավորում է պետական գրանցման և պետական հաշվառման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական գրանցման և պետական հաշվառման վարույթների առանձնահատկությունները, պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնող մարմնի իրավասությունները, պետական միասնական գրանցամատյանում գրառվող տեղեկատվության ծավալը և տեղեկատվության տրամադրման պայմաններն ու կարգը:<br><br>**Միջոցառման իրակցումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կհստակեցվեն իրավաբանական անձանց պետական գրանցման և փոփոխությունների գրանցման ընթացակարգերը, կպարզեցվի վարչարարությունը, կստեղծվեն իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված մեխանիզմներ: |
| 59 | **Քննչական մարմինների համակարգի արդիականացում, օպտիմալացում, արդյունավետության բարձրացում, ներառյալ**<br>**Կոռուպցիոն հանցագործություններ քննողՀակակոռուպցիոն միասնական մարմին ստեղծելու վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br>**Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «4. ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ» վերտառությամբ բաժնի պահանջներից: Միջոցառումը նպատակ է հետապնդում կատարելագործելու հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը: |

| | |
|---|---|
| | **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են հանցագործությունների նախաքննություն իրականացնող մի շարք քննչական մարմիններ, որոնց գործունեության ինստիտուցիոնալ արդյունավետությունը վերջին տարիներին լուրջ մասնագիտական գնահատման չի ենթարկվել: Չի քննարկվել քննչական գործառույթներ իրականացնող մարմինների համակարգի արդիականացման և օպտիմալացման հարցը:<br>Բացի դրանից ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների օպերատիվ-հետախուզություն, հետաքննություն և նախաքննություն իրականացնում են տարբեր մարմիններ, ինչը գործնականում կարող է ստեղծել խնդիրներ՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետության տեսանկյունից:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկում է կատրել Հայաստանի Հանրապետությունում գործող նախաքննություն իրականացնող քննչական մարմինների գործունեության մասնագիտական ուսումնասիրություն և գնահատում, վերլուծել տվյալ մարմինների ինստիտուցիոնալ արդյունավետությունը և մշակել քննչական գործառույթներ իրականացնող մարմինների համակարգի արդիականացման և օպտիմալացման հայեցակարգ: Նշված հայեցակարգի հիման վրա իրականացնել քննչական համակարգի օպտիմալացում, ինչպես նաև միջազգային չափանիշներին համահունչ կոռուպցիոն դեպքերի քննությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է ստեղծել հակակոռուպցիոն միասնական մարմին:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Արդյունքում կմշակվի քննչական գործառույթներ իրականացնող մարմինների համակարգի արդիականացման և օպտիմալացման հայեցակարգ, կսահմանվի մասնագիտացված, անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, որն օժտված կլինի օպերատիվ-հետախուզական, հետաքննական և նախաքննական գործառույթներ իրականացնելու իրավասությամբ: Ստեղծվելիք մարմնին կվերապահվի կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը:<br><br>**Միջոցառման իրակցումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում կարդիականացվի քննչական գործառույթներ իրականացնող մարմինների ինստիտուցիոնալ համակարգը, կստեղծվի կոռուպցիոն իրավախախտումների գործերը քննող մարմին, կբարձրանա կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը: |
| 60 | **Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 20-ամյա ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>**Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու համար առաջնահերթ է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում առկա խնդիրների մանրամասն ուսումնասիրությունը և դրանց լուծմանն ուղղված թիրախային քայլերի, ուղղությունների առանձնացումը առանձին ռազմավարության միջոցով, որի շրջանակներում կձևավորվի համալիր մոտեցում քրեակատարողական ոլորտի բարեփոխման տեսլականի վերաբերյալ:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս քրեակատարողական ոլորտի բարեփոխումներին առնչվող որևէ փաստաթուղթ առկա չէ, որը համապարփակ կերպով կամրագրի ոլորտային հիմնական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները: Արդյունքում՝ քրեակատարողական ոլորտում առաջացած տարբեր խնդիրներին տրվում են հատվածային լուծումներ:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քրեակատարողական ոլորտի բարեփոխման տեսլականն ունենալու նպատակով առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 20-ամյա ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր:<br><br>**Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար որպես թիրախային ուղղություններ ռազմավարության և դրա իրականացման միջոցառումներում ծրագրում անհրաժեշտ է առանձնացնել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումն ու արդիականացումը, դատապարտյալների պահման պայմանների բարելավումը, անազատության մեջ գտնվող անձանց վերասոցիալականացումը, անազատության մեջ գտնվող անձանց բժշկական օգնության և սպասարկման պայմանների բարելավումը, քրեակատարողական ծառայության կառավարման մոդելի և կադրային քաղաքականության կատարելագործումը, քրեակատարողական հիմնարկներում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը: Բացի այդ, մեծ կարևորություն ունի նաև անչափահասների ոլորտում բարեփոխումների իրականացումը: Հանցագործություններից տուժող անչափահասների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները հիմնարար լուծումների կարիք ունեն, մասնավորապես՝ անհրաժեշտ է ապահովել արդարադատության մատչելիության այնպիսի իրավական կառուցակարգեր, որտեղ ապահովված է երեխայի ձայնի և մասնակցության իրավունքը, լավագույն շահը և հիմնարար իրավունքների իրացումը՝ երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 20-ամյա ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ընդունմամբ կձևավորվի համալիր մոտեցում քրեակատարողական ոլորտի բարեփոխման տեսլականի վերաբերյալ: |
| 61 | **Հիմնական միջազգային չափանիշներին համապատասխանող նոր քրեակատարողական հիմնարկի կառուցում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հաշվի առնելով քրեակատարողական որոշ հիմնարկներում առկա ոչ բավարար պայմանները՝ նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկ կառուցելը միտված է կալանավորված անձանց և դատապարտյալների համար անհրաժեշտ պահման պայմաններ ստեղծելուն:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քրեակատարողական ոլորտում դեռևս արդիական են մնում միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին առնչվող խնդիրները: Խորհրդային տարիներից փոխանցված քրեակատարողական հիմնարկները հնարավորություն չեն տալիս ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան պահման պայմաններ: Առկա որոշ քրեակատարողական հիմնարկներում առկա չէ պատշաճ բնական լուսավորություն, սանիտարահիգիենիկ պայմանները ոչ բավարար են: Հատկանշական է, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի շենքը 4-րդ աստիճանի վթարային է, ինչով էլ պայմանավորված են քրեակատարողական հիմնարկում պահման և սանիտարահիգիենիկ անբավարար պայմանները:<br>Բարձրացված խնդիրների լուծման նպատակով շահագործման հանձնվեց «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը: Այդուհանդերձ, միայն նշված քրեակատարողական հիմնարկը չի կարող լուծել մյուս քրեակատարողական հիմնարկներում առկա խնդիրները, ուստի, անհրաժեշտություն է առաջանում շահագործման հանձնել ևս մեկ քրեակատարողական հիմնարկ:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կալանավորված անձանց և դատապարտյալների համար միջազգային չափանիշներին համահունչ պահման պայմաններ ստեղծելու նպատակով առաջարկվում է շահագործման հանձնել նոր քրեակատարողական հիմնարկ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով անհրաժեշտ է կատարել անհրաժեշտ ֆինանսական հաշվարկներ, իրականացնել հիմնարկի նախագծման, այնուհետև՝ բուն կառուցման աշխատանքները:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկի շահագործմամբ |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետությունը կերաշխավորի կալանավորված անձանց և դատապարտյալների համար միջազգայնորեն ամրագրված պահման պայմանների ապահովումը: |
| 62 | **Մշակել խոշտանգում կատարած անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող օրենսդրական նախագիծ**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող օրենսդրական հիմքերի ամրապնդման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից՝ նպատակ հետապնդելով երաշխավորել վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված կարգավորումների ամբողջական իմպլեմենտացիան ազգային մակարդակում:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքն ամրագրված է մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում[1] (որոնց կողմ է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը) և ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք՝ *jus cogens* նորմ, ինչը նշանակում է, որ այն պարտադիր է բոլոր պետությունների համար, եթե նույնիսկ այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր: Միջազգային կամ ներպետական որևէ այլ կանոն չի կարող հակասել *jus cogens* սկզբունքին[2]:<br>Միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում[3], դրանց կատարումը երաշխավորող մարմինների ձևավորած իրավական դիրքորոշումներում առանձնակի ուշադրություն է հատկացվում **պաշտոնատար անձանց** կողմից խոշտանգումների և դաժան վերաբերմունքի խնդրին՝ հատուկ շեշտադրմամբ առ այն, որ ոչ ոք չի կարող միայն իր պաշտոնական դիրքով պայմանավորված հավակնել պատասխանատվությունից ազատվելու արտոնությանը: Վերոնշյալ արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելն, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելն ուղղակիորեն հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների |

[1] Օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա:

[2] Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման մասին Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի պաշտպանությունից հետո, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, վերահաստատելով իր նախորդ հանձնարարականները, ընդգծել է խոշտանգում կամ դրան հավասարեցված հանցանքներ կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, նրանց նկատմամբ ներում, համաներում, ինչպես նաև այդ արարքների անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք սահմանելու անհրաժեշտությունը(CAT/C/ARM/CO/4):

[3] Բարձր պայմանավորվող կողմերի կողմից Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածի կենսագործման վերաբերյալ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի Ընդհանուր մեկնաբանության (2(2007)) 5-րդ պարբերությամբ Կոմիտեն մասնավորեցնում է, որ համաներումը կամ այլ խոչընդոտները, որոնք բացառում են խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց պատշաճ և արդար հետապնդումն ու պատիժը կամ վկայում են այդպիսի անձանց պատշաճ և արդար հետապնդելու ու պատժելու կամքի բացակայության մասին, խախտում են խոշտանգման բացարձակ արգելքի սկզբունքը:

Միաժամանակ, բարձր պայմանավորվող կողմերի կողմից Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 14-րդ հոդվածի կենսագործման վերաբերյալ Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են երաշխավորել փոխհատուցման իրավունքի (redress) իրացման արդյունավետությունը: Վաղեմության ժամկետները, համաներումն ու ներումը խոչընդոտում են փոխհատուցման իրավունքի (redress) և 14-րդ հոդվածի արդյունավետ իրացմանը (Ընդհանուր մեկնաբանություն 3(2012), 38-րդ պարբերություն):

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: 7-րդ հոդվածի վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ որպես կանոն համաներումը անհամատեղելի է խոշտանգման վերաբերյալ գործերը քննելու պետության պարտավորության հետ: Պետությունը չպետք է անձին զրկի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից, ներառյալ՝ հատուցում և հնարավոր ամբողջական ռեաբիլիտացիա ստանալու իրավունքից (Ընդհանուր մեկնաբանություն No. 20, 15-րդ պարբերություն):

| | |
|---|---|
| | խախտմանը:<br>Համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու վերլուծությունը նույնպես վկայում է այն մասին, որ նշված հարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան)[4]:<br>ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում **կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:**<br>ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:<br>ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել են սույն հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները: ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության առավելագույն ժամկետը 15 տարի է:<br>ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է պատժից մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով: Սույն հոդվածով նախատեսված վաղեմության առավելագույն ժամկետը կրկին 15 տարի է:<br>Քրեադատավարական օրենքը (35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:<br>Գործող օրենսդրությամբ խոշտանգման հանցակազմի նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի են:<br>Անդրադառնալով համաներման և խոշտանգման անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցների խնդրին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ Ազգային ժողովը 2018 թվականի մարտի 7-ին ընդունեց «Ներման մասին» ՀՀ օրենքը, որի 7-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ ամրագրվեց, որ ներում չի շնորհվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին: Համաներման մասով ՀՀ գործող օրենսդրությամբ նման բացառություն սահմանված չէ:<br>Ի վերջո, հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային մարմինների հանձնարարականները, ինչպես նաև այդ մարմինների կողմից ընդհանուր փաստաթղթերում որդեգրված մոտեցումները՝ անհրաժեշտ է նաև ներպետական օրենսդրության և պրակտիկայի համապարփակ վերլուծության արդյունքում վեր հանել այն բոլոր կարգավորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել խոշտանգման անպատժելիությանը:<br>Ամփոփելով վերը թվարկված դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ **խոշտանգում կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելն հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը:**<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել օրենսդրական փոփոխության փաթեթ՝ ամրապնդելով խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք նախատեսող օրենսդրական հիմքերը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Հաշվի առնելով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ներպետական օրենսդրությամբ |

[4] *Case of Okkali v Turkey*, no. 52067/99, judgment of 17 October 2006, para. 76; *Case of Abdulsamet Yaman v. Turkey*, no. 32446/96, judgment of 2 November 2004, paras 53, 55, 59; *Case of Cestaro v Italy*, no. 6884/11, judgment of 7 April 2015, paras. 206, 207, 208, 242, *Case of Alikaj and Others v. Italy,* no. 47357/08, judgment of 29 March 2011, para. 108 (cited, also in the *Case of Cestaro v Italy*, app. no. 6884/11, judgment of 7 April 2015, para. 225 ); *Dujardin v France,* app. No. 16734/90, decision of 2 September 1991 on admissibility of the application (as referred to in Harris D.J., O'Boyle M., Bates E.P., and Buckley C.M., *Law of the European Convention on Human Rights*, Third edition, Oxford University Press, 2014, p. 205).

| | |
|---|---|
| | սահմանված իրավակարգավորումների միջև համապատասխանություն ապահովելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելու արգելք սահմանելու նպատակով:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում կապահովվի լիարժեք համապատասխանություն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների միջև: Միաժամանակ, կբարձրանա խոշտանգման դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը, իրավական բնույթի որակական նոր հիմքերի վրա կդրվի պաշտոնատար անձանց կողմից բռնությունների գործադրման դեմ պետության կողմից տարվող քրեական քաղաքականությունը: |
| 63 | **Ներդնել հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտը:**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդնմանն ուղղված օրենսդրական նախագծի մշակումը պայմանավորված է միջազգային չափանիշներին և արտա¬սահմանյան առաջադեմ փորձին համահունչ անձի իրավունքների՝ մասնավորապես, անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի ապահովման, ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման կանխարգելման, այդ դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կարևորվում է միջազգային չափանիշներին և արտասահմանյան առաջադեմ փորձին համահունչ անձի իրավունքների հուսալի պաշտպանության ապահովումը: Հարցն առավել արդիական է դառնում, երբ խոսքը վերաբերում է քրեական վարույթի ընթացքում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովմանը:<br>Անդրադառնալով գոյություն ունեցող կարգավորումներին՝ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգիրքը քննչական գործողությունների, մասնավորապես, հարցաքննությունների տեսաձայնագրման կարգ չի սահմանում: Փոխարենը, քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները նախատեսում են քննչական գործողություններից հարցաքննության գրավոր արձանագրման կարգը:<br>Հատկանշական է, որ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը[5] ևս հարցաքննությունների տեսաձայնագրման պարտադիր կարգ չի սահմանում: Միայն թե, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, Նախագիծը քննչական գործողությունների կատարման արդյունավետությունն ապահովելու նպատակի համար սահմանում է, որ այն քննչական գործողությունները, որոնց կատարմանը ընթերակայի մասնակցությունն անհնար է, ենթակա են պարտադիր տեսաձայնագրման: Սակայն, այս նորմը տարածելի չէ հարցաքննությունների նկատմամբ, քանի որ հարցաքննությունների իրականացման ժամանակ ընթերակաների մասնակցությունը պարտադիր չէ: Ստացվում է, որ Նախագիծը որպես լուծում ևս պահպանել է հարցաքննությունների ավանդական՝ գրավոր արձանագրման ձևը:<br>Ինչ վերաբերում է հարցաքննությունների տեսաձայնագրման միջազգային փորձի և միջազգային չափանիշների վերլուծության ամփոփմանը, ապա այն վկայում է այս ինստիտուտի նպատակահարմարության և արդյունավետության մասին:<br>Մասնավորապես, այս ինստիտուտն արդեն իսկ ներդրված է արտասահմանյան ոչ միայն զարգացած, այլև զարգացող իրավական համակարգ ունեցող երկրներում, այդ թվում՝ Բուլղարիա, Ռումինիա, Բելառուս, Ուկրաինա:<br>Խնդրի առնչությամբ միջազգային տարաբնույթ չափանիշների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ թե՛ համընդհանուր, թե՛ տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերում խոսվում է հարցաքննությունների տեսաձայնագրման մասին և ընդգծվում դրանց կարևորությունը ոչ միայն քրեական |

[5] Այսուհետ՝ Նախագիծ

| | |
|---|---|
| | արդարադատության շրջանակներում, այլև որպես խոշտանգումների դեմ պայքարի գործուն միջոց: <br> Այսպես, 2010 թվականի **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտների՝ խոշտանգումների կանխարգելմանն ուղղված գործառնական ուղեցույցում**[6] նշվում է, որ հարցաքննությունների տեսաձայնագրումը հարցաքննության ընթացքը դարձնում է առավել թափանցիկ, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի համար ունի էական նշանակություն: Ուղեցույցում մեկնաբանվում է, որ հարցաքննությունների տեսաձայնագրումն առավել նախընտրելի տարբերակ է, քան գրավոր արձանագրումը, քանի որ այն իրականում արտացոլում է առավել ամբողջական և ճշգրիտ պատկեր: Ամեն դեպքում վարույթն իրականացնող մարմինը ինչ մեթոդ էլ ընտրի հարցաքննության արդյունքների ամրագրման համար (տեսաձայնագրում, թե գրավոր արձանագրում) պետք է լինի հարցաքննվող անձի համաձայնությունը[7]: <br> **ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողի ընդհանուր հանձնարարականներում** նշվում է, որ բոլոր հարցաքննությունները պետք է արձանագրվեն, ընդ որում, նախընտրելի է հարցաքննությունների արձանագրումը տեսանկարահանման եղանակով[8]: <br> «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման մասին Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի պաշտպանությունից հետո[9], **ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն**, վերահաստատելով իր նախորդ առաջարկությունները[10], ընդգծել է, որ կողմ պետությունը պետք է ձեռնարկի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցառումներ, ինչպես նաև համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնի քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումն ապահովելու նպատակով, և ոստիկանության բաժիններում ու ազատազրկման այլ վայրերում հարցաքննության բոլոր սենյակները հագեցնի տեսաձայնագրող սարքերով: Նաև պետք է ապահովվի տեսաձայնագրության պահպանությունն այնքան ժամանակ, որպեսզի հնարավոր լինի օգտագործել այն որպես ապացույց, այդ թվում՝ դատարանում, որպեսզի տեսաժապավենները վերանայվեն՝ խոշտանգումների և դրա արգելքի չափանիշների այլ խախտումներ արձանագրելու և բացահայտելու համար, և որպեսզի տեսաերիզները հասանելի դարձվեն պաշտպանյալներին և նրանց պաշտպաններին[11]: <br> ԵԱՀԿ անդամ-պետությունների շրջանակներում 2014 թվականի ապրիլի Խոշտանգումների կանխարգելմանն ուղղված ժողովի վերջնական զեկույցում արված առաջարկություններից մեկը հետևյալն է. <br> «ԵԱՀԿ անդամ-պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն հարցաքննությունների և այլ դատավարական գործողությունների կատարման աուդիո և վիդեո ձայնագրում ներդնելու ուղղությամբ այն վայրերում, որտեղ առկա է խոշտանգման և վատ վերաբերմունքի բարձր ռիսկ:»[12]: <br> **Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն**[13], անդրադառնալով հարցաքննությունների տեսաձայնագրման անհրաժեշտությանը, այն դիտարկում է որպես խոշտանգումների կանխարգելման գործուն կառուցակարգ: Մասնավորապես, **ԽԿԿ-ի չափանիշներով** նշվում է, որ ոստիկանության կողմից կատարված հարցաքննությունների էլեկտրոնային (այսինքն՝ աուդիո և (կամ) վիդեո) ձայնագրությունները ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ լրացուցիչ երաշխիք են: Նման տեխնիկական միջոցները կարող են ապահովել հարցաքննության ընթացքի լիարժեք և արժանահավատ ձայնագրությունը՝ դրանով իսկ նշանակալիորեն հեշտացնելով դաժան վերաբերմունքի դեմ բողոքների քննությունը: ԽԿԿ-ն խրախուսում է հարցաքննությունների տեսաձայնագրման հնարավորության նախատեսումը, ինչն իր հերթին գործուն երաշխիք կծառայի մի կողմից կալանավորված անձանց համար խոշտանգման ենթարկվելուց կամ դրա սպառնալիքից, մյուս կողմից հարցաքննություն իրականացնող պաշտոնատար անձանց համար ֆիզիկական կամ հոգեկան բռնության վերաբերյալ անհիմն հայտարարություններից պաշտպանվելու համար: Ավելին, դատական քննության փուլում ապացույցը |

[6] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի (OHCHR), Խոշտանգումների կանխարգելման ընկերակցության (APT), Ասիական խաղաղօվկիանոսյան ֆորումի (APF) համահեղինակությամբ:
[7] http://www.ohchr.org/Documents/Countries/NHRI/Torture_Prevention_Guide.pdf
[8] http://www.ohchr.org/Documents/Issues/SRTorture/recommendations.pdf
[9] Զեկույցը ներկայացվել է 2016 թվականի նոյեմբերի 23-ին և 24-ին՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի 59-րդ նստաշրջանի շրջանակներում:
[10] CAT/C/ARM/CO/3, 11-րդ կետ
[11] CAT/C/ARM/CO/4,12-րդ կետ. «The Committee reiterates its previous recommendation (see CAT/C/ARM/CO/3, para. 11). The State party should adopt the legislative and other measures necessary and allocate the proper funds to ensure the mandatory video and audio recording of all criminal interrogations and equip all interrogation rooms in police stations and other places of deprivation of liberty with video and audio recording devices. It sh ould also ensure that audiovisual footage is kept for a period sufficient for it to be used as evidence, including in court; that videotapes are reviewed to identify and investigate torture and other breaches of standards; and that tapes are made available to defendants and their counsels.»
[12] http://www.osce.org/odihr/120173?download=true
[13] Այսուհետ՝ ԽԿԿ

| | |
|---|---|
| | գնահատելիս այդպիսի տեղեկատվական կրիչը կարող է նվազագույնի հասցնել հավանականությունն առ այն, որ հարցաքննվողները հետագայում կհերքեն իրենց կողմից տված խոստովանությունը:<br>**Այս հարցի կապակցությամբ ԽԿԿ-ն դիրքորոշում է արտահայտել նաև Հայաստանի վերաբերյալ 2010 թվականի իր զեկույցում**, որում նշել է ոստիկանության աշխատակիցների համար հարցաքննությունների իրականացման չափանիշների և ընթացակարգերի ներդնման անհրաժեշտության մասին, մասնավորապես՝ ոստիկանության կողմից կատարվող հարցաքննությունների ճշգրիտ արձանագրման մասին, որը, հնարավորության դեպքում, պետք է իրականացվի էլեկտրոնային (տեսա կամ ձայնային արձանագրում) սարքավորումների միջոցով[14]:<br>Հարցաքննությունների տեսաձայնագրման նախընտրելիության մասին դրույթներ են առկա նաև **Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսի՝ 2014 թվականի հոկտեմբերին Հայաստան կատարած այցի վերաբերյալ 2015 թվականի մարտի 10-ին հրապարակած զեկույցում:** Հանձնակատարը զեկույցում բարձրացված մի շարք խնդիրների շարքում խրախուսում է հայկական իշխանություններին խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնող միջոցառումների շարքում ներդնել նաև ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով նախատեսված հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգը[15]:<br>Հարցաքննությունների տեսաձայնագրման կառուցակարգերի ներդնման հիմնախնդրի շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[16] համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչը, թերևս, հիմք է տալիս եզրակացնելու, որ թեև հարցաքննությունների տեսաձայնագրումը Եվրոպական դատարանի կողմից չի դիտվում իբրև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ և պարտադիր պայման, այդուհանդերձ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում անդրադարձել է այդպիսի կառուցակարգի սահմանման կանխարգելիչ նշանակությանը:<br>Հաշվի առնելով Եվրոպական դատարանի իրավական մոտեցումներն ու մեկնաբանություններն անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի և ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման չենթարկվելու արգելքի երաշխավորման հարցում՝ կարելի է թերևս եզրակացնել, որ պետությունների կողմից հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգի ներդնումն անուղղակիորեն կարող է հանդես գալ իբրև պետության պոզիտիվ պարտականությունների պատշաճ կատարում:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներդնել հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ հարցաքննությունների տեսաձայնագրման համակարգի ներդնման նպատակով:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում կապահովվի միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականների կատարումը, ինչպես նաև անուղղակիորեն կբարձրանա անձի արդար դատաքննության իրավունքի, դրա անքակտելի մաս կազմող պաշտպանության իրավունքի ապահովման, ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու, ինչպես նաև խոշտանգման կանխարգելման, այդ դեպքերի քննության և անպատժելիության դեմ պայքարի արդյունավետությունը: |
| 64 | **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանել այլընտրանքային խափանման նոր միջոցներ, ներդնել այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովող էլեկտրոնային** |

[14] ԽԿԿ-ն վերահաստատել է այս դիրքորոշումը նաև Հայաստանի վերաբերյալ 2015 թվականի իր զեկույցում:

[15] https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2790589&SecMode=1&DocId=2243332&Usage=2

[16] Այսուհետ՝ Եվրոպական դատարան

**հսկողության համակարգ:**

**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այլընտրանքային խափանման նոր միջոցների սահմանումը, այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովող էլեկտրոնային հսկողության համակարգի ներդնումը բխում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման և կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման դեպքերը, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ծանրաբեռնվածության մակարդակը նվազեցնելու, միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ՀՀ վերաբերյալ կայացված վճիռները կատարելու անհրաժեշտությունից:

**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս կալանքի՝ որպես հիմնական խափանման միջոցի կիրառման և դրա ժամկետների երկարացման տարածված պրակտիկան նախևառաջ պայմանավորված այլընտրանքային համարժեք խափանման միջոցների բացակայությամբ: Մասնավորապես, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է խափանման միջոցների որոշակի շրջանակ, այդուհանդերձ, կարծում ենք, որ այն չի պարունակում այնպիսի խափանման միջոցներ, որոնք հնարավորություն կտան մեղադրյալի ազատության որոշակի սահմանափակման միջոցով հասնել գործի քննության ժամանակ մեղադրյալի իրավաչափ վարքագծի ապահովմանը:

Կալանքի՝ որպես խափանման միջոցի տարածված պրակտիկան գործնականում հանգեցնում է մի շարք խնդիրների, որոնցից, մասնավորապես, կարելի է առանձնացնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը, կալանք կիրառելիս և դրա ժամկետները երկարացնելիս ներպետական դատարանների կողմից կարծրատիպային ձևակերպումների օգտագործումը և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ծանրաբեռնվածությունը:

Կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման և դրանից ուղղակիորեն բխող հարակից խնդիրներին բազմիցս անդրադարձել են ինչպես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ներպետական, այնպես էլ միջազգային և տարածաշրջանային մարմինները:

Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, վերլուծելով կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման պրակտիկան, 2016 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրել է, որ խնդրի լուծումը թերևս պետք է ապահովվի նոր հայեցակարգային մոտեցումներ պարունակող օրենսդրական դաշտի վերանայման, մասնավորապես՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ճկուն օրենսդրական կառուցակարգերի հնարավորինս արագ ներդրման և դրանց համապատասխան՝ կայուն դատական պրակտիկայի ձևավորման ճանապարհով[17]:

Որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ զեկույցում՝ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, անդրադարձել է ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ծանրաբեռնվածությանը և դրանից բխող հարակից խնդիրներին՝ ազատությունից զրկված անձի իրավունքների երաշխավորման համատեքստում[18]:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման մասին Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի հիման վրա կազմված իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել կալանքը որպես խափանման միջոց լայնորեն կիրառելու պրակտիկայի, ինչպես նաև այն փաստի վերաբերյալ, որ դատարանները կալանքի անհրաժեշտությունը չեն հիմնավորում առանձին հանգամանքների գնահատման հիման վրա[19]:

Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հայաստան կատարած պարբերական այցի վերաբերյալ իր զեկույցում նույնպես նշել է, որ այդ ժամանակահատվածում կալանքը շարունակում էր լայնորեն կիրառվել[20], ինչպես նաև հստակեցրել, որ պետությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների խցերի բնակեցվածության

[17] Տե՛ս 2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 165-169

[18] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ զեկույցը, էջ 48-53

[19] տե՛ս CAT/C/ARM/CO/4, §15

[20] Տե՛ս CPT/Inf (2016) 31, §46

| | |
|---|---|
| | աստիճանը նվազեցնելու և յուրաքանչյուր ազատությունից զրկված անձի համար առնվազն 4քմ բնակելի տարածություն ապահովելու ուղղությամբ[21]:<br>Անդրադառնալով Եվրոպական դատարանի դիրքորոշումներին՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված մի շարք վճիռներում արձանագրվել է, որ կալանք կիրառելիս և դրա ժամկետը երկարացնելիս ներպետական դատարանների կողմից կարծրատիպային ձևակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում: Նշված գործերով Եվրոպական դատարանը, մասնավորապես, գտել է, որ ներպետական դատարանները, «ողջամիտ կասկածի» առկայությունից բացի, չեն ներկայացրել «հիմնավոր և բավարար պատճառներ»՝ կալանք կիրառելու և դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար: Հիմք ընդունելով նշվածը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում[22]:<br>Վերոգրյալի լույսի ներքո կարելի է փաստել, որ քրեական արդարադատության ոլորտի ներկայում ընթացող բարեփոխումների համատեքստում կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման պրակտիկան բարելավելու խնդիրը հրատապ լուծում պահանջող հարցերից է՝ հաշվի առնելով անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության գործուն երաշխիքներ սահմանելու պետության պոզիտիվ պարտականությունը:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերոգրյալի հաշվառմամբ և ի նկատի ունենալով խափանման միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությամբ օժտված մարմնի առկայությունը՝ առաջարկվում է ընդլայնել օրենսդրությամբ սահմանված խափանման միջոցների շրջանակը՝ նախատեսելով վարույթի ընթացքում դատավարության համապատասխան մասնակցի պատշաճ վարքագիծն ապահովող այլ երաշխիքներ, ինչպես նաև ներդնել այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովող էլեկտրոնային հսկողության համակարգ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տնային կալանքը և վարչական հսկողությունը սահմանել որպես խափանման միջոցներ: Քանի որ և՛ տնային կալանքը, և՛ վարչական հսկողությունը ենթադրում են մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողություն օրենսդրությամբ սահմանված հատուկ էլեկտրոնային միջոցներով, ապա անհրաժեշտ է նաև ներդնել այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովող էլեկտրոնային հսկողության համակարգ՝ նշված այլընտրանքային խափանման միջոցների գործնական կիրառելիությունը երաշխավորելու համար:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացմամբ կնվազեն ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման և կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման դեպքերը, ինչպես նաև ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների ծանրաբեռնվածության մակարդակը: Միաժամանակ, կբարձրանա միջազգային և տարածաշրջանային մարմինների զեկույցներում ամփոփված հանձնարարականների և Եվրոպական դատարանի կողմից ՀՀ վերաբերյալ կայացված վճիռների կատարման արդյունավետությունը: |
| 65 | **Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծում**<br><br>**Միջոցառման իրակցման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վճռաբեկ դատարանի մասնագիտացված՝ վարչական պալատի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է մասնագիտացված արդարադատության իրականացման արդյունավետության երաշխավորմամբ, ինչը կհանգեցնի նաև գործերի արագ քննության:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն է քննում քաղաքացիական և վարչական գործերով վերաքննիչ բողոքները, որի արդյունքում չի իրացվում դատարանների եռաստիճան համակարգի գաղափարը: |

[21] Ibid., §§ 63, 65

[22] Տե՛ս, օրինակ՝ ***Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի***, թիվ 33376/07, §§97-100, 2012 թվականի հունիսի 26, ***Մալխասյանն ընդդեմ Հայաստանի***, թիվ 6729/07, §§74-77, 2012 թվականի հունիսի 26, ***Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի***, թիվ 22491/08, §§88-93, 2012 թվականի հոկտեմբերի 2, ***Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի***, թիվ 629/11, §§59-62, 2016 թվականի հոկտեմբերի 20 **վճիռները**):

| | |
|---|---|
| | **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է Դատական օրենսգրքում սահմանել Վճռաբեկ դատարանի եռապալատ կառուցվածք՝ ստեղծելով վարչական պալատ: Արդյունքում Վճռաբեկ դատարանը կունենա քրեական, քաղաքացիական և վարչական պալատներ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Միջոցառումն ուղղված է վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Մասնագիտացված արդարադատության իրականացման երաշխավորում: |
| 66 | **Դատավորների թվակազմի ավելացում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանը տարածաշրջանի այլ պետությունների համեմատ աչքի է ընկնում 100 հազար բնակչին հասանելիք դատավորների թվի ցածր լինելով: Դատարանների ծանրաբեռնվածությունը բեռնաթափելու, արդարադատության մատչելիությունը և արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դատավորների թվի ավելացման ուղղությամբ:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս դատական համակարգը գտնվում է գերծանրաբեռնված վիճակում՝ դատական գործերի մեծ քանակի և դրանք քննող դատավորների նվազ թվակազմի պատճառով, ինչը հանգեցնում է գործերի քննության ժամկետների երկարացման:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություններ Դատական օրենսգրքում՝ դատավորների թվակազմի ավելացման նպատակով:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Դատավորների թվակազմի ավելացում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Դատավորների թվակազմի ավելացումը կհանգեցնի դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը: |
| 67 | **Դատավորների վարձատրության բարձրացում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Դատավորի՝ որպես դատական իշխանության կրողի և արդարադատություն իրականացնողի բարձր կոչումի, ինչպես նաև դատական համակարգի բնականոն գործունեության և անկախության ապահովման կարևոր երաշխիքներից է դատավորների մասնագիտական արժանապատվությանը և պատասխանատվության մակարդակին համարժեք վարձատրությունը՝ դատավորների վարձատրության աստիճանական բարձրացումը:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս դատավորի համար նախատեսված վարձատրությունը չի համապատասխանում վերջինիս մասնագիտական արժանապատվության և պատասխանատվության մակարդակին, ինչը նաև կոռուպցիոն ռիսկի վտանգ է առաջացնում:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է վերանայել դատավորի վարձատրության չափը սկսած 2020 թվականից՝ ապահովելու համար երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին համապատասխան դրա բարձրացումը:<br><br>**Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Դատավորի վարձատրության բարձրացում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Դատավորի առնվազն կրկնապատիկի չափով բարձրացված վարձատրություն: |
| 68 | **Սնանկության վարույթում ծախսերի, ժամկետների, կառավարիչների հաշվետվողականության, ապահովված իրավունքի առարկայի իրացման, համարժեք պաշտպանության ինստիտուտի, ֆինանսական առողջացման գործուն կարգավորումների ներդնում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սնանկության իրավահարաբերությունները հիմնականում կարգավորված են 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Սնանկության մասին» օրենքով: Հաշվի առնելով տնտեսական հարաբերություններում սնանկության ինստիտուտի կարևորությունը և ըստ այդմ՝ դրա արդյունավետ կարգավորման դերն ու նշանակությունը, Սնանկության մասին» օրենքի ընդունումից հետո կատարվել են մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում, այնուամենայնիվ, առկա են մնացել իրավակարգավորման թերություններ ու բացեր, որոնք ենթակա են օրենսդրական կարգավորման:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտություններով վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծման նպատակով մշակվել և հանրային քննարկման է դրվել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը անհրաժեշտ է լրամշակել՝ շահագրգիռ անձանց կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է լրամշակել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Նախագիծը լրամշակվելու է ներկայացված դիտողությունների և առաջարկություններին համապատասխան:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի լրամշակման և հետագայում դրա ընդունման դեպքում ակնկալվում է սնանկության կառավարիչների գործունեությունը դարձնել առավել արդյունավետ և հաշվետու, նպաստել Հայաստանի Հանրապետությունում սնանկության ինստիտուտի արդյունավետությանը, սնանկության վարույթի ժամկետների կրճատմանը և վարույթի օպտիմալացմանը, ֆինանսական առողջացմամբ սնանկության վարույթն ավարտելը նախընտրելի դառնալուն, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքում առկա անհստակությունների վերացմանը: |
| 69 | **Պարտապանին պատկանող գույքի հայտնաբերման, այդ թվում՝ պարտապանին պատկանող գույքի հայտարարագրման, չգրանցված իրավունքների գրանցման, դատական ակտերի կամավոր կատարման խթանման գործիքակազմի ներդնում, կատարողական թերթին ներկայացվող պահանջների վերանայում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ նաև՝ Օրենք) ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին: Դրանից հետո Օրենքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, այդ թվում՝ նախատեսվել են նոր ինստիտուտներ և ընթացակարգեր, որոնց իրացման համար, սակայն, չեն սահմանվել անհրաժեշտ գործիքակազմեր: Բացի այդ, առկա են կատարողական վարույթի հարուցման և իրականացման հետ կապված անորոշ և թերի կարգավորումներ, որոնք առաջացնում են գործնական խնդիրներ:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կատարողական վարույթի իրականացման ընթացում պարտապանին պատկանող գույքի հայտնաբերման, այդ թվում՝ պարտապանին պատկանող գույքի հայտարարագրման, չգրանցված |

| | |
|---|---|
| | իրավունքների գրանցման, դատական ակտերի կամավոր կատարման մեխանիզմները լիարժեք չեն ապահովում այդ ինստիտուտի իրացման նպատակը:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում սահմանել պարտապանին պատկանող գույքի հայտնաբերմանն ուղղված ուժեղացված գործիքակազմ, պարտապանին պատկանող գույքի հայտարարագրման կատարելագործված գործընթաց, չգրանցված իրավունքների գրանցման պահանջ:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Կատարողական վարույթի կատարելագործված գործիքակազմի ներդնում, դատական ակտերի կամավոր կատարման խթանում:<br><br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացների արդյունավետությունը: |
| 70 | **Կենսաթոշակի՝ որպես սեփականության իրավունքի՝ լիազորագրի հիման վրա իրացման գործուն երաշխիքների ներդնում**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է կենսաթոշակի՝ որպես կենսաթոշակառուի սեփականության իրավունքի՝ լիազորագրի հիման վրա իրացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմի ներդրմամբ, որի նպատակը կենսաթոշակառուի սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք իրացումն է:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենսդրությամբ սահմանափակումներ և սպառիչ դեպքեր են նախատեսված լիազորագրի հիման վրա կենսաթոշակի նշանակման և դրա վճարման գործընթացների համար, որոնք լիարժեք չեն ապահովում կենսաթոշակային իրավունքի իրացումը:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծով կսահմանվեն լիազորագրի հիման վրա կենսաթոշակի նշանակման, ինչպես նաև դրա հետագա վճարման արդյունավետ ընթացակարգեր:<br>**Կարգավորման առարկան**<br>Կենսաթոշակի իրավունքի անարգել իրացման գործիքակազմի ներդրում:<br><br>**Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է երաշխավորել կենսաթոշակային իրավունքի անարգել իրացումը: |
| 71 | **Քաղաքացիական դատավարությունում պարզեցված վարույթի առավել դյուրին ընթացակարգի՝ ժամկետների և դատական ակտի ընդունման կարգի և դրան ներկայացվող պահանջների վերանայում**<br><br>**Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսվել է պարզեցված վարույթի ընթացակարգ՝ համապատասխան հիմքերով և չափանիշներով, որը անհրաժեշտ է վերանայել՝ պրակտիկայում դրանց առավել արդյունավետ կիրառման տեսանկյունից:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս պարզեցված վարույթի շրջանակում կայացվող եզրափակիչ դատական ակտին ներկայացվում են հայցային վարույթով քննվող գործերով կայացվող ակտի պահանջներ, ինչը չի կարգավորում դատավորների ծանրաբեռնվածության թոթափման խնդիրը:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է վերանայել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված |

| | |
|---|---|
| | պարզեցված վարույթի իրականացման կարգը, հիմքերը և պարզեցված վարույթի կարգով քննվող գործերին, եզրափակիչ դատական ակտին ներկայացվող պահանջները՝ սահմանելով գործի քննության առավել պարզ և հստակ կարգ և հիմքեր:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Վերանայվելու է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պարզեցված վարույթի ընթացակարգը, այդ ընթացակարգով գործերի քննության կարգն ու հիմքերը:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանվելու է պարզեցված վարույթի առավել դյուրին ընթացակարգ: |
| 72 | **Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկման գործիքակազմի ներդնում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունվեցին մի շարք օրենքներ կամ կատարվեցին օրենսդրական փոփոխություններ, դրանց հիման վրա՝ բազմաթիվ ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, ինչը ենթադրում է նորացված օրենսդրական բազայի նորովի կիրարկում: Իրավական անվտանգության ապահովման տեսանկյունից իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկման հստակ մեթոդաբանութուն մշակելու և մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտություն է առաջանում՝ իրավական ակտերի կիրարկման ընթացքում առաջացող խնդիրները վերհանելու և դրանց լուծման ուղիներ մշակելու համար:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, ըստ էության, իրավական ակտերի կիրարկման պարբերական մշտադիտարկում չի իրականացվում, բացի այդ չկա նաև մշտադիտարկման իրականացման մեթոդաբանություն: Նման իրավիճակը, հատկապես պետական կառավարման համակարգում կատարված փոփոխությունների համատեքստում, կարող է առաջացնել իրավական ակտերի կիրարկման գործնական բազմաթիվ խնդիրներ:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է մշակել պետական կառավարման համակարգի մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի կիրարկման հստակ մեթոդաբանություն և դրա հիման վրա իրականացնել մշտադիտարկումը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկման գործիքակազմի ներդնում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Սահմանվելու է իրավական ակտերի կիրարկման շարունակական մշտադիտարկման կառուցակարգ: |
| 73 | **Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վարույթի հարուցման պայմանների բարելավում**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված է նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթը, որի շրջանակում դատարան կարող են դիմել սահմանափակ դեպքերում, այն է՝<br>1) որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները.<br>2) իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող են խախտվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:<br>Անհրաժեշտ է բարելավել նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթի հարուցման պայմանները:<br>Բացի այդ Վարչական դատավարության օրենսգիրքը հնարավորություն չի տալիս Դատարանին գործի քննության ընթացքում անհրաժեշտությունից ելնելով գործը կասեցնելու և կիրառման ենթակա |

| | |
|---|---|
| | ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափության որոշման համար վարչական դատավարության կարգով կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով քննելու համար վարչական դատարան դիմելու հնարավորություն:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթը ընդգրկում է վիճարկվող ակտերի սահմանափակ շրջանակ, իսկ Դատարանի կողմից կիրառման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ ակտի իրավաչափության հարց դատարանի մոտ ի հայտ գալու դեպքում, այն կարող քննության առարկա դառնալ դատավորի կողմից միայն Սահմանադրական դատարան դիմելու միջոցով:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է բարելավել նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթի հարուցման պայմանները:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթի կարգավորումների վերանայում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթի արդյունավետության բարձրացում: |
| 74 | **Էլեկտրոնային դատարանների ծրագրի փուլային արդիականացում:**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը բխում է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրից:<br>Դատարանների և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացման ենթատեքստում ձևավորվել է տեխնոլոգիական լուծումների և թվայնացման ավելի մեծ պահանջարկ, որը կնպաստի արդարադատության ավելի էֆեկտիվ և թափանցիկ իրականցմանը, ինչպես նաև հասարակության ավելի լայն և հասանելի ներգրավվածությանը արդարադատության գործընթացներին:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ դատական համակարգում առկա են մի շարք էլեկտրոնային համակարգեր, որոնք փոխինտեգրված չեն միամյանց, ինչի արդյունքում նվազում է այդ համակարգերի գործունեության արդյունավետությունը: Միաժամանակ՝ անհրաժեշտ է ծրագրային ապահովում՝ էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու, էլեկտրոնային դատական գործ ստեղծելու համար՝ ապահովվելով գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցման, ինչպես նաև կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունավետ համակարգի գործարկման նպատակով:<br><br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառոււման նպատակը միտված է էլեկտրոնային արդարադատության համապարփակ և արդյունավետ համակարգի զարգացմանը, դատարաններում և արդարադատության ոլորտի այլ հաստատություններում էլեկտրոնային կառավարման գործիքների զարգացմանը՝ հնարավոր բոլոր ծառայությունների մատուցումը փոխադրելով էլեկտրոնային տիրույթ, համակցելով արդարադատության և պետական կառավարման ոլորտներում գործող բոլոր էլեկտրոնային շտեմարանները, ծառայությունները մատուցելով առցանց կամ «մեկ» պատուհանի սկզբունքով, նվազեցնելով և պարզեցնելով վարչարարությունը, ծառայությունների մատուցման ժամկետներն ու գինը, ինչպես նաև շփումը քաղաքացիների և ծառայություն մատուցողների միջև:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Էլեկտրոնային դատարանների ծրագրի փուլային արդիականացում:<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Դատարաններում էլեկտրոնային կառավարման գործիքների զարգացում: |
| 75 | **Էլեկտրոնային արդարադատություն միասնական համակարգի (e-justice.am) մշակում և ներդրում:** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:**<br>Արդարադատության ոլորտի մարմինները բախվում են մի շարք խնդիրների որոնց արդյունավետ լուծումը կապված է էլեկտրոնային համակարգերի ստեղծման հետ:<br>Տարիներ շարունակ տարբեր մարմինների կողմից ստեղծվել և գործում են էլեկտրոնային համակարգեր և տվյալների շտեմարաններ, որոնց փոխգործելիությունը ապահովված չէ կամ մասամբ է ապահովված:<br>Միջոցառման իրականացման նպատակը միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծումն է, որի միջոցով կլուծվեն ոլորտային բոլոր խնդիրները:<br><br>**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>• թղթային եղանակով փաստաթղթաշրջանառության մեծ ծավալ,<br>• առկա էլեկտրոնային համակարգերի ոչ ամբողջական թվային աշխատանք,<br>• տեխնիկական, կադրային և ֆինանսական ռեսուրսների վատնում,<br>• տվյալների կորստի հնարավորություն և գաղտնիության ապահովման ոչ բավարար մակարդակ,<br>• բարդացված վարչարարություն,<br>• գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության  բացակայություն:<br><br>**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ստեղծել կենտրոնացված էլեկտրոնային կառավարման համակարգ արդարադատության ոլորտի խնդիրների համապարփակ լուծման համար: Համակարգը ուղղված կլինի արդարադատության ոլորտի բոլոր մարմինների աշխատանքը կարգավորելուն , այն հասանելի կլինի նաև քաղաքացիների համար, այսպիսով ապահովելով պետություն քաղաքացի մատչելի կապը:<br><br>**4. Կարգավորման առարկան**<br>Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի մշակում և ներդրում:<br><br>**5. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>• Ամբողջովին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն<br>• Ոլորտի մոնիտորինգի և գնահատման հիման վրա տվյալների ճշգրիտ վերլուծություն<br>• Ոլորտային լայն համագործակցություն, գործերի ժամանակին և կազմակերպված փոխանցում<br>• Մարդկային և այլ ռեսուրսների կառավարման արդյունավետություն<br>• Ոլորտի արդիականացում<br>• Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:<br>• Ծառայությունների մատուցման որակի բարձրացում:<br>• Թվային արխիվների ստեղծումը |
| 76 | **Պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների համակարգի ընդլայնման և արդիականացման միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց  մատուցվող ծառայությունների ցանկի, ծառայությունների մատուցման եղանակների, պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների թվի և սպասարկման գրասենյակների աշխարհագրության ընդլայնում:**<br><br>**Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը՝**<br>2016 թ. Հոկտեմբերի 27-ի «ՀՀ Կառավարության որոշումը պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու, գործառույթների իրականացումն օպերատորին պատվիրակելու, գործառույթների ցանկը հաստատելու, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանելու մասին» 1109-Ն որոշման համաձայն Հայաստանում տարբեր ոլորտներում պետական մարմինների ստորաբաժանումների (front office) գործառույթները պատվիրակվեցին մասնավոր սուբյեկտներին: Պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների ինստիտուտի ներդրումը ապահովեց պետական ծառայությունների մատուցման այլընտրանքային եղանակ:<br>Ներկայումս  պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների ինստիտուտի հաջողությամբ և բնակչության շրջանում առաջացած պահանջարկով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորներին |

| | |
|---|---|
| | պատվիրակված պետական և համայնքային ծառայությունների ցանկը, պետական ծառայությունների մատուցման եղանակը, պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների թվի և սպասարկման գրասենյակների աշխարհագրությունը: Միաժամանակ, պետական ծառայություններ մատուցող օպերատորների գործունեությունը ապահովող sso.am (պետական ծառայությունների մատուցման օպերատորների) էլեկտրոնային համակարգը ամբողջությամբ չի ապահովում անհրաժեշտ փոխգործելիությունը այլ պետական մարմինների ներքին համակարգերի հետ, ինչի արդյունքում պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների կողմից մատուցվող պետական ծառայությունների ցանկի ընդլայնումը անհնարին է դարձնում:<br>Միջոցառումների նպատակը հետևյալն է.<br>1. Պետական ծառայությունների մատուցումը առավել հասանելի դարձնել բնակիչների համար(հեռավոր քաղաքներ, գյուղեր).<br>2. Նվազեցնել ծառայությունների մատուցման ընթացքում կոռուպցիոն ռիսկերը՝ բաժանելով (կտրելով) ծառայություններ մատուցող ստորաբաժանումների (back office) և սպասարկման գրասենյակների (front office) գործառույթները.<br>3. Մասնավոր հատվածի միջոցով մատուցել ավելի որակյալ ծառայություններ.<br>4. Բարեփոխումները իրականացնել առանց պետական ներդրումների՝ շահագրգռելով մասնավոր ներդրողներին.<br>5. վարչարարության պարզեցումը քաղաքացիների և բիզնեսի համար:<br><br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օպերատորների և նրանց կողմից տրամադրվող ծառայությունների քանակի հետագա ավելացումը և ծառայությունների մատուցման եղանակի ընդլայնումը ներկայումս անհնար է դարձել, քանի որ.<br>• Բացակայում է պետական ծառայությունների մատուցման միասնական քաղաքականությունը<br>• Ներկայումս պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը ոչ բավարար է<br>• Բացակայում է մեկ միասնական ծրագրային ապահովում/համակարգ և պորտալ, որի միջոցով հնարավոր կլինի ներդնել լրացուցիչ ծառայություններ և համակարգը համակցել այլ ծառայություն մատուցողներին.<br>• Ներկայումս մի շարք պետական մարմիններ օպերատորներին տրամադրել են իրենց համակարգերի միջոցով ծառայություններ մատուցելու հնարավորությունը՝ ապահովելով տարբեր ծրագրերին միանալու ծածկանուն և գաղտնաբառ: Սա նշանակում է, որ սպասարկման գրասենյակի աշխատակիցը, ըստ անհրաժեշտության, մի քանի տարբեր ծրագրեր է մուտք գործում՝ տարբեր մենյուներով և դարձերեսներով, ինչն առաջացնում է անհարմարություն, սխալվելու հավանականություն, տվյալների կորստի և անձնական տվյալների բացահայտման հնարավորություն:<br>• Օպերատորների աշխատակիցները չեն վերապատրաստվում և չեն ստանում անհրաժեշտ գիտելիքներ տվյալ համակարգերի հետ աշխատելու համար, ինչի արդյունքում օպերատորների աշխատակիցները երբեմն դժվարությամբ են աշխատում տարբեր ծրագրերով և մենյուներով:<br>• Էապես դժվարանում է ծառայությունների մատուցման ոլորտում վերահսկողություն իրականացնելը տարբեր պետական մարմինների կողմից:<br>• Բացակայում է թվայնացված միասնական վիճակագրությունը:<br>• Անհնար է դառնում վերահսկել ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարներն ու տուրքերը:<br><br>**Կարգավորման առարկան**<br>Պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների գործունեություն և պետություն քաղաքացի/գործարար հարաբերությունները<br><br>**Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում պետական ծառայությունների մատուցման ոլորտում կներդրվի միասնական քաղաքականություն, ինչի շրջանակներում կընդլայնվեն պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների աշխարհագրությունը և պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների քանակը, ինչպես նաև պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների համակարգի և պետական մարմինների ներքին համակարգերի միջև կապահովվի |

| | |
|---|---|
| | փոխգործելիություն: Միաժամանակ, վերամշակված պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների համակարգի (sso.am) հիման վրա կներդրվի mygov.am էլեկտրոնային կայքը, ինչի արդյունքում էապես կավելանան պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորների կողմից մատուցվող պետական և համայնքային ծառայությունների ցանկը, պետական և համայնքային ծառայությունների մատուցման եղանակները: Բացի այդ կներդրվեն պետական և համայնքային ծառայությունների միասնական շտեմարան, ֆիզիկական և իրավաբանական անձանցից կարծիքի հավաքագրման ու վիճակագրության միասնական համակարգ: |
| | **Արտակարգ իրավիճակների նախարարություն** |
| 77 | **Արտակարգ իրավիճակների ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է ոլորտային օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությամբ, որը դրսևորվելու է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիների իրավասությունների և պարտավորությունների հստակեցմամբ և 2015թ. Սահմանադրության դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև ի կատարումն Կառավարության 2017թ. ապրիլի 6-ի նիստի թիվ 14 արձանագրության 2-րդ կետով հավանության արժանացած Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի <<1. Աղետների ռիսկի կառավարման ոլորտի իրավական և կազմակերպական դաշտի կատարելագործում>> կետի:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կիրառելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Սեյսմիկ պաշտպանության մասին>> օրենքները և արտակարգ իրավիճակների բնագավառի այլ օրենքներ, արտակարգ իրավիճակների նախարարությունը բախվում է որոշ խնդիրների, որոնց պետք է տրվեն օրենսդրական կարգավորումներ: Մասնավորապես, տարերային և տեխնածին աղետներից խաղաղ և պատերազմի ժամանակ բնակչության, նյութական արժեքների ու տարածքների պաշտպանությանն ուղղված տարբեր օրենքներով կարգավորվում են տարերային և տեխնածին աղետներ ռիսկի նվազեցման, հետևանքների վերացման նմանատիպ հարաբերությունները:<br>Փոփոխություններ են նախատեսվում նաև քաղաքացիական պաշտպանության կառավարման սկզբունքների կիրառման գործընթացում, ուր նախատեսվում է կատարել հայեցակարգային բնույթի փոփոխություններ, որոնցից են՝ խնդիրների և գործընթացների ընդլայնումը, ինչպես նաև ուժերի և միջոցների կիրառումը ոչ միայն պատերազմական, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար, այլև տեխնոլոգիական ահաբեկչության հետևանքների վերացման համար:<br>Արտակարգ իրավիճակների կառավարման ուղղությամբ միջազգային փորձի վերլուծությունը հաշվի առնելով և նպատակ ունենալով այն աստիճանաբար դարձնել ավելի օպերատիվ, ունակ գործելու ինչպես ռազմական, այնպես էլ խաղաղ պայմաններում անհրաժեշտ է իրականացնել բնագավառը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում:<br>Երկրում ներկայումս իրականացվում են պետական կառավարման համակարգի բարեփոխումներ, որոնք առաջացնում են նաև բնագավառում պետական կառավարման մարմինների իրավասությունների հստակեցման անհրաժեշտություն՝ ելնելով միասնական գործունեության ապահովման իրականացման անհրաժեշտությունից:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումներով նախատեսվում է բացառել ոլորտային օրենսդրության հակասությունները, խուսափել կրկնություններից, ինչպես նաև հստակ սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիների իրավասությունները և պարտավորությունները տվյալ ոլորտում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Արտակարգ իրավիճակների կառավարման մասին» ՀՀ օրենքը կարգավորելու է արտակարգ իրավիճակների կառավարման հետ կապված հարաբերությունները:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արտակարգ իրավիճակների բնագավառի օրենսդրական բարեփոխումներով ակնկալվում է ապահովել արտակարգ իրավիճակների նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում միասնական պետական քաղաքականության առավել արդյունավետ իրականացումը, ինչպես նաև հստակ սահմանել հասկացությունների ընկալման և պարզաբանման հետ կապված խնդիրները՝ բացառելով |

| | |
|---|---|
| | կրկնությունները և հակասությունները:<br>Միջոցառման իրականացումը ակնկալում է ոլորտը կարգավորող իրավական դաշտի հստակեցում: |
| 78 | **Աղետների վաղ ազդարարման և հուսալի կապի համակարգերի զարգացում**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները՝**<br>Հայաստանի Հանրապետությունում խորհրդային տարիներից ժառանգված «Պ-160», «Պ-164» սարքավորումների հիման վրա կառուցված կենտրոնացված ազդարարման համակարգը չի գործում «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ավտոմատ հեռախոսակայանների թվայնացման, անալոգային կապուղիների շահագործումից հանելու և ապամոնտաժելու պատճառով: «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ն ելնելով այն հանգամանքից, որ թվային ավտոմատ հեռախոսակայաններով «Պ-160», «Պ-164» կենտրոնացված ազդարարման վահանակները հնարավոր չէ գործարկել, նշված սարքերը ապամոնտաժել են:<br>Ներկայումս հանրապետության համայնքներում տեղադրված են թվով 744 շչակներ (477-ը սարքին, 267-ը անսարք): Ըստ նախնական մոտավոր հաշվարկների անհրաժեշտ են ևս թվով 1500 շչակներ: Հանրապետության համայնքներում տեղադրված թվով 744 շչակներից թվով 455-ը «Ս-40» տիպի եռաֆազ շչակներ են, իսկ 289-ը՝ «ԼԴ-800» տիպի միաֆազ շչակներ: Թվով 671 շչակներ աշխատում են մեխանիկական ազդարարման միջոցով (լոկալ՝ այսինքն արտակարգ դեպքերի և պատահարների ժամանակ ազդարարումն իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից մեխանիկական ձևով միացնելով ազդարարման սարքավորման սեղմակը):<br>Հանրապետության տարածքում առկա էլեկտրաշչակների մեծամասնությունը գործում են ավտոնոմ և ընդգրկված չեն մեկ ընդհանուր ցանցում: Միաժամանակ հարկ է նշել, որ էլեկտրաշչակների միացումն, առանց լրացուցիչ ձայնային տեղեկատվության տրամադրման չի ապահովում ազդարարման արդյունավետությունը, քանզի բնակչությանը չի տրամադրվում տեղեկատվություն արտակարգ իրավիճակի և անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:<br>Ուստի հաշվի առնելով տարատեսակ արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվական հոսքերի ավելացումը անհրաժեշտ է ակտիվորեն կիրառել ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1. Աղետների վաղ ազդարարման համակարգի (այսուհետ ԱՎԱՀ) ձևավորման նպատակն է՝ զանգվածային իրազեկման ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և կառավարման մարմինների, արձագանքող ուժերի, բնակչության ազդարարման և տեղեկատվության տրամադրման արդյունավետությունը և հուսալիությունը: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.<br>1) կրճատել՝ բնակչության և ղեկավար կազմի երաշխավորված ազդարարման ապահովման ժամանակահատվածը.<br>2) տրամադրել բնակչությանն արագ և օպերատիվ տեղեկատվության՝ անվտանգ գործելակերպի վերաբերյալ.<br>3) ապահովել արտակարգ իրավիճակներում, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում, բնակչությանը անհրաժեշտ գործողությունների կատարման վերաբերյալ հանձնարարականների փոխանցումը.<br>4) ապահովել համակարգի հնարավորությունն իր մեջ ընդգրկել ինչպես արդեն իսկ գոյություն ունեցող այնպես էլ հետագայում կառուցվող օբյեկտային ազդարարման հանգույցները, մարդկանց զանգվածային տեղակայման վայրերում տեղադրված բարձախոսային ու գովազդային վահանակների, սեյսմիկ ու մթնոլորտային մոնիթորինգի և փոխհամագործակցող այլ համակարգերը.<br>5) բարձրացնել մթնոլորտային և սեյսմիկ իրավիճակի մոնիտորինգի արդյունավետությունը.<br>6) բարձրացնել պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում իրավիճակի մոնիթորինգի արդյունավետությունը.<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Աղետների վաղ ազդարարման համակարգը հնարավորություն կտա հավաքագրել և վերլուծել մոնիթորինգային տվյալները, ազդարարել, տրամադրել տեղեկատվություն և ուսուցանել մարդկանց անկախ նրանց գտնվելու վայրերից, օգտագործելով տարատեսակ վերջնակետ սարքավորումներ (բջջային հեռախոսներ, դյուրակիր համակարգիչներ, հեռուստացույցեր, ռադիոհաղորդիչներ և այլն):<br><br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**<br>Աղետների վաղ ազդարարման համակարգը թույլ կտա աղետներին արագ և արդյունավետ |

| | |
|---|---|
| | արձագանքում, տնտեսական վնասների և մարդկային կորուստների նվազեցում, հավաստի տեղեկատվության տրամադրում: |

79

**Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ստեղծում**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի նիստի N28-9 կետով հավանության արժանացած արձանագրային որոշման հավելվածը նախատեսվում է սահմանամերձ բնակավայրերում, մասնավորապես, ՀՀ Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության 10 հենակետերի կարողությունների զարգացում, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզում 6 և ՀՀ Վայոց ձորի մարզում 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում:

Քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի նշված հենակետերը ստեղծվում են հետևյալ գործառույթների իրականացման նպատակով՝

1) քաղաքացիական պաշտպանության հետախուզության անցկացում՝ քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կողմից հիմնավորված որոշումներ ընդունելու համար.

2) բնակչության, քաղաքացիական պաշտպանության ուժերի լրիվ սանիտարական մշակում, վարակված հագուստի և կոշիկների վարակազերծում.

3) ճառագայթային և քիմիական վարակված տեխնիկայի հատուկ մշակման անցկացում.

4) բնակչության (այդ թվում պատսպարված) և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի դոզիմետրիկ հսկողության իրականացում.

5) ականապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության կազմակերպում.

6) ջրաղբյուրների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքների կատարում.

7) ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, հանման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում.

8) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում.

9) բնակչության տարահանման միջոցառումներին աջակցում, այդ թվում՝ ճառագայթային աղտոտման և քիմիական ու կենսաբանական վարակված գոտիներից.

10) պարեկապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում.

11) ՀՀ Զինված ուժերի զորամասերի հետ համատեղ մասնակցություն հակառակորդի կողմից ներթափանցած հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին.

12) պաշտպանիչ մատույցների և դիրքերի կառուցման աշխատանքների կատարում:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊ վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի բազայի վրա ստեղված են 2 ջոկատների 12 հենակետեր (Տաուշի ջոկատ՝ Ազատամուտ, Չինարի, Ն.Կամիրաղբյուր, Այգեպար, Մովսես, Պառավաքար, Չորաթան, Նոյեմբերյանի ջոկատ՝ Ոսկեվան, Սարիգյուղ, Բերդավան, Կոթի, Դովեղ): Դովեղ հենակետում ներկայումս ծառայություն է տարվում 4 փրկարարական հաստիքներով, զուգահեռ ընթանում են կահավորման աշխատանքներ:

2019 թվականի ընթացքում, համապատասխան հաստիքների տրամադրման դեպքում, նախատեսվում է ՀՀ Տավուշի մարզում ստեղծել ևս 4 քաղաքացիական պաշտպանության հենակետեր՝ Վազաշեն, Չորաթան, Դովեղ և Ոսկեպար բնակավայրերում և համալրել Դովեղ հենակետը, ինչպես նաև ստեղծել քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի 8 հենակետեր: Մասնավորապես Տավուշի մարզում՝ Վազաշեն, Ոսկեպար, Կիրանց, Բերքաբեր բնակավայրերում (յուրաքանչյուրը՝ 25 հաստիք), Վայոց ձորի մարզում՝ Չիվա, Խաչիկ, Բարձրունի և Խնձորուտ բնակավայրերում (յուրաքանչյուրը՝ 17 հաստիք):

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ընդհանուր առմամբ ՔՊ ուժերի հավաքական կենտրոնում 8 հենակետերի ստեղծման և 3 հենակետերի համալրման նպատակով անհրաժեշտ են 221 հաստիքներ: Տեսահսկման տեխնիկական միջոցների տեղադրման դեպքում 8 հենակետերի ստեղծումը և 3 հենակետերի համալրումը հնարավոր կլինի իրականացնել 147 հաստիքներով:

**2. Կարգավորման առարկան**

Տավուշի մարզում գործող 12 հենակետերի պատասխանատվության տակ գտնվող բնակավայրերում և օբյեկտներում (կամուրջներ, ջրամբարներ, կապտաժներ) առաջարկվում է նախատեսել տեսահսկման

| | |
|---|---|
| | տեխնիկական միջոցներ (նախնական հաշվարկով 1 հենակետի համար կպահանջվի մոտ 1,5 մլն. ՀՀ դրամ): Հենակետերում տեխնիկական միջոցներ տեղադրելու դեպքում կառաջանա հնարավորություն նշված հենակետերում ծառայությունը կազմակերպել 21 հաստիքներով՝ 25-ի փոխարեն:<br>Նախատեսվում է քաղաքացիական պաշտպանության հենակետերը ստեղծել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը համապատասխան քանակությամբ հաստիքների տրամադրման դեպքում՝ մարզպետարանների, համայնքների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սահմանամերձ բնակավայրերում քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծումը հնարավորություն կտա ապահովել նշված բնակավայրերի բնակչության, տարածքների, կարևորագույն օբյեկտների և ենթակառուցվածքների պաշտպանությունը: |
| 80 | **Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծում և զարգացում**<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումն ու զարգացումն անհրաժեշտ է տարեցտարի աճող արտակարգ իրավիճակներին ավելի արդյունավետ արձագանքելու համար: Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծման ու զարգացման հիմնական նպատակն է կանխել արտակարգ իրավիճակների հետագա տարածումը կամ մարդկանց կյանքին սպառնացող վտանգը, վերացնել արտակարգ իրավիճակների հետևանքները, իրականացնել փրկարարական աշխատանքներ կամ մարել դեռևս զարգացման սկզբնական փուլում գտնվող հրդեհը, տուժածներին ցույց տալ առաջին օգնություն, փրկել ինչպես մարդկային կյանքեր, այնպես էլ նյութական և մշակութային արժեքներ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս արտակարգ իրավիճակների արձագանքումն իրականացվում է Փրկարար ծառայության հերթապահ ստորաբաժանումների ուժերով, որոնց ուժերն ու միջոցները բավարար չեն լայնածավալ աղետների արձագանքման համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անտառտնտեսությունները կունենան անտառային հրդեհի դեմ պայքարի պլան, կիստակեցվեն անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների աշխատակիցների գործառույթները, հնարավորության դեպքում ձեռք կբերվեն անտառային հրդեհների դեմ պայքարի ժամանակակից միջոցներ: Ստեղծված փրկարարական ուժերը կուսուցանվեն որի արդյունքում մինչև հիմնական ուժերի դեպքի վայր ժամանելը, ուսուցանված անձնակազմը կկանխի հրդեհների հետագա տարածումը՝ դեռևս զարգացման սկզբնական փուլում:<br>Կինոլոգիական ջոկատը կհամալրվի շնավարժներով: Կկառուցվեն բոլոր անհրաժեշտ մարզասարքերով և փլատակներով վարժահրապարակներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Համապատասխան փոխգործողությունների պլանների մշակում, տեխնիկական միջոցների ներդրում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Փրկարարական և արագ արձագանքման ուժերը կվերապատրաստվեն, կհամալրվեն ժամանակակից տեխնիկական միջոցներով, կնվազի մարդկային զոհերի քանակը, նյութական և մշակութային արժեքների կորուստները: |
| 81 | **Աղետների ռիսկի կառավարման կրթական համակարգի զարգացում**<br><<Աղետների ռիսկի կառավարման կրթական համակարգի զարգացում>>-ը միջոցառման իրականացումն անհրաժեշտություն է, քանի որ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան նպատակ ունի ներդնել ծրագրեր նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթական մեխանիզմների կիրառմամբ, ինչպես նաև ստեղծել էլեկտրոնային գրադարան աղետների ռիսկի կառավարման ուսուցման ուղղությամբ, հատկապես հանրապետության մարզերի բնակչության համար:<br>Նման ծրագիրը համահունչ է <<Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագրի>> գերակա ուղղությունների պահանջներին, ինչն իր մեջ ներառում է աղետների ռիսկի գիտակցումը, աղետների ռիսկի պետական կառավարման գործընթացի ուժեղացումը, աղետներին երկրի դիմակայունության բարձրացումը և աղետների ծագման դեպքում արդյունավետ արձագանքմանը:<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակադեմիան կունենա նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ու կրթական մեխանիզմների ներդրված ծրագրեր, ձևավորված էլեկտրոնային գրադարան: |
| 82 | **Միջազգային և տարածաշրջանային համագործակցություն** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Միջոցառման իրականացման նպատակն է Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի արձագանքող ուժերի ռեեստրում ընդգրկված փրկարար ծառայության ստորաբաժանումների անձնակազմի պատրաստվածության մակարդակի բարձրացումը, հատկացված տեխնիկայի արդյունավետ շահագործման ապահովումը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Կնքվել են համապատասխան համաձայնագրեր ՌԴ ԱԻ նախարարության և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև: Կազմվել են վերապատրաստման ժամանակացույցերը, ըստ որի ՌԴ ԱԻ ուսումնական հաստատություններում և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնում իրականացվում են վերապատրաստման դասընթացներ:<br>**2. Կարգավորման առարկան.**<br>Բարձրակարգ փրկարարներ պատրաստելու անհրաժեշտությունը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը.**<br>Ակնկալվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքում արտակարգ իրավիճակների արձագանքման նպատակով ունենալ անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և բարձրակարգ փրկարարներ: |
| 83 | **Սեյսմիկ պաշտպանության ծառայության համակարգի բարեփոխում**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանը գտնվում է երկու հզոր՝ Եվրասիական և Արաբական ցամաքային սալերի բախման գոտում և համարվում տարածաշրջանի ամենավտանգավոր և բարձր սեյսմիկ ռիսկով բնութագրվող տարածքներից: Պարբերաբար տեղի ունեցող ուժեղ և ավերիչ երկրաշարժերից պաշտպանվելու լավագույն միջոցը սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգի ապահովումն է, որն էլ Հայաստանի սեյսմիկ անվտանգության կարևորագույն հիմնախնդիրներից է:<br>1) Այսօր մոնիթորինգի ապահովման հրատապ խնդիրներից է գրունտի ուժեղ շարժումների անալոգային սարքերի փոխարինումը թվայիններով: Սարքերի թվային գրանցումներն՝ աքսելերոգրամներն անհրաժեշտ են երկրաշարժերի ժամանակ շենքերի և կառույցների վարքագծի ուսումնասիրման և սեյսմիկ հաշվարկների ժամանակ, հանդիսանալով նաև ելակետային տվյալներ սեյսմիկ վտանգի գնահատման համար:<br>Արդիականացված հիդրոերկրադինամիկական ցանցի առկայությամբ և կապի ժամանակակից միջոցներով փոխանցվող տվյալները ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման համար հանդիսանում են կարևոր բաղադրիչ:<br>Գրունտի ուժեղ շարժումների ցանցի արդիականացումը իրականացվելու է Շվեյցարիայի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտի Շվեյցարիայի սեյսմոլոգիական ծառայության կողմից տրամադրված թվային սարքավորումներով՝ աքսելերոգրաֆներով:<br>2) Ծրագրի ընդունմամբ կսահմանվի ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման մոտեցումները և առաջնահերթությունները: Սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումը և սեյսմիկ ռիսկի նվազեցումը պահանջում են գոյություն ունեցող ջրամբարների պատվարների մանրակրկիտ հետազննում: Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման համակարգված աշխատանքներ:<br><br>**2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>1) Խնդրի իրականացումը զգալիորեն կբարձրացնի սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը Հայաստանում և կնպաստի սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը:<br>2) Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել սեյսմիկ պաշտպանվածության մակարդակը: |
| 84 | **Հիդրոօդերևութաբանական և հակակարկտային համակարգերի զարգացում**<br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>ՀՀ պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ազգաբնակչությանը և տնտեսության ճյուղերին հիդրոօդերևութաբանական տեղեկատվությամբ և շրջակա միջավայրի վիճակի մասին ժամանակին և հուսալի տվյալներով ապահովման, վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթներից տնտեսության, ազգաբնակչության կյանքի, առողջության և ունեցվածքի հնարավոր կորուստների նվազեցման, հիդրոօդերևութաբանական դիտարկումների գնահատման և կանխատեսման համակարգի զարգացման նպատակով նախատեսվում է Հիդրոմետ ծառայության հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի փուլային արդիականացում և ավտոմատացում, |

ինչպես նաև հիդրոօդերևութաբանական կանխատեսումների և սպասարկման որակի բարելավման նպատակով՝ աշխատակիցների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և միջազգային առաջադեմ փորձի ներդնում:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Օդերևութաբանական կայանները և հիդրոլոգիական դիտակետերը հագեցած են ֆիզիկապես և բարոյապես մաշված գործիք սարքավորումներով և պահանջում են էական ծախսեր աշխատունակության ռեսուրսի երկարաձգման, վերականգնման և շահագործման համար: Ավելի քան 70%-ը փոխարինման ենթակա են: Դիտարկումների պետական ցանցի չափիչ միջոցների մեծ մասը շահագործվում են 30-40 տարուց ավելի: Չափումների մեծ մասը իրականացվում է ձեռքով՝ աշխատակիցների կողմից: Մի քանի կայաններում շարքից դուրս են եկել անեմոռումբոմետրերը և քամու դիտարկումները իրականացվում են ֆլյուգերի միջոցով: Չափիչ միջոցների մեծ մասը պահուստային տարբերակներ չունեն, նույնիսկ չափիչ միջոցների և սարքավորումների աշխատունակության վերականգնման համար պահեստամասեր չկան, գոլորշացուցիչների մեծ մասը վնասված է և դիտարկումներ չեն կատարվում, հողի մակերևույթից գոլորշիացման դիտարկումներ սարքավորումների շարքից դուրս գալու պատճառով կատարվում է միայն մեկ կայանում, այնինչ, այն շատ կարևոր ցուցանիշ է ջրային հաշվեկշռի կազմման համար, հողախորքային ջերմաչափերի բացակայության պատճառով դիտարկումներ կատարվում են մինչև 40սմ խորությունների վրա, պլյուվիոգրաֆների մեծ մասը չեն աշխատում, այդ պատճառով տեղումների ինտենսիվության դիտարկումներ չեն կատարվում, սակայն այն խիստ կարևոր է հանկարծահաս հեղեղումների կանխատեսման համար: Գործիքների պարբերաբար ստուգաչափումների (калибровка) բացակայության պատճառով (որն անցյալում կատարվում էր Ղրիմում և Կիսլովոդսկում) նվազում է ակտինոմետրիական դիտարկումների ճշտությունը: Բացի դա ստուգաչափումների ճշտությունը ապահովելու համար անհրաժեշտ է էտալոնային պիրհելիոմետր և միլիվոլտմետր գործիքներ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Աղետների ռիսկերի կառավարման ազգային ծրագրի շրջանակներում, Համաշխարհային բանկի թիմը 2017թ. հուլիսի 24-ից օգոստոսի 2-ը այցելել է ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայություն՝ կարիքների և կարողությունների այդ թվում՝ վաղ նախազգուշացում և սպասարկում, տեխնիկական վերլուծություն և մանրամասն գնահատում կատարելու, շահառուների հետ հանդիպելու և Ծառայության զարգացման ռազմավարական ճանապարհային քարտեզ մշակելու նպատակով: Ծառայության աշխատակազմի և գործընկերների հետ ունեցած բազմաթիվ քննարկումների արդյունքում բացահայտված օգտագործողների պահանջների և այդ կարիքները բավարարելու, Ծառայության կարողությունների բացերի համադրության հիման վրա մշակվել է Ծառայության զարգացման ճանապարհային քարտեզի նախագիծ երեք սցենարներով, որը 2017թ. նոյեմբերի 14-ին, Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում ներկայացվել և քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ:

Արդիականացման սցենարները ներկայացված են, հետևյալ կերպ.

Կարճաժամկետ. Սցենար 1. Տեխնիկական աջակցության տրամադրում (0,35 մլն ԱՄՆ դոլար):

Միջնաժամկետ. Սցենար 2. Ներդրումներ ծառայություններ մատուցելու կարողությունները բարելավելու և օգտագործողների կարիքները բավարարելու նպատակով (6,0 մլն ԱՄՆ դոլար):

Երկարաժամկետ Սցենար 3. Ամբողջական արդիականացում՝ ներդրումներով (19,0 մլն ԱՄՆ դոլար):

**2. Կարգավորման առարկան**

Ճանապարհային քարտեզի նախագիծը կարծիքի համար դրված է շրջանառության մեջ, որի արդյունքներն ամփոփելուց հետո նախատեսվում է 2018թ. աշնանը Համաշխարհային բանկի աջակցությամբ կազմակերպել ՀՀ կառավարության և դոնորների աշխատաժողով, որի հիմնական նպատակը կլինի ճանապարհային քարտեզի վերջնական տարբերակի ներկայացումը և Ծառայության արդիականացման միջոցառումների համար դոնորների աջակցության հայցումը:

Համաշխարհային բանկի օժանդակությամբ հիդրոլոգիական վիճակագրություն, եղանակի կարճաժամկետ կանխատեսում, եղանակի կանխատեսման թվային մեթոդների կիրառում, հիդրոլոգիական մոդելավորում, երկարաժամկետ կլիմայական կանխատեսումներ, օդերևութաբանական, հիդրոլոգիական և կլիմայական տվյալների կառավարում թեմաներով աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ 2018 թվականի աշնանը:

**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը**

Հիդրոօդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի արդիականացումը և ավտոմատացումը հնարավորություն կտա բարելավել ազգաբնակչությանը և տնտեսության տարբեր ճյուղերին մատուցվող հիդրոօդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների կանխատեսումների, կլիմայի ներկա և ապագա վիճակի վերաբերյալ տեղեկատվության մատուցման որակը:

| | |
|---|---|
| | Հիդրոօդերևութաբանական ռիսկերի կանխատեսման, մոդելավորման և կլիմայական կանխատեսումների իրականացման ծրագրերի ներդնումը և մասնագետների վերապատրաստումը կհանգեցնի հիդրոօդերևութաբանական և կլիմայական ռիսկերի կանխատեսման բարելավման, կլիմայի փոփոխության գնահատականների ճշգրտման, երկարաժամկետ կանխատեսումների և հարմարվողականության միջոցառումների բարելավմանը և ՀՀ հիդրոօդերևութաբանական անվտանգության ապահովմանը: <br> Հանրապետության տարածքում գործող թվով 547 գազագեներատորային հակակարկտային կայանների համակարգված աշխատանքը թույլ է տալիս կարկտից պաշտպանել մոտ 43760,0 հա ինտենսիվ մշակության գյուղատնտեսական տարածք: <br> 2018 թվականի հուլիսի 4-ին Վարչապետ մոտ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության զարգացման ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել հակակարկտային ցանցերի ներդրմանը, կաթիլային ոռոգման համակարգերի ու հակակարկտային հրթիռային պաշտպանության ընդլայնմանը և նախատեսվող ծրագրերին: ՀՀ վարչապետի 2018 թվականի օգոստոսի 21-ի N1112-Ա որոշմամբ ստեղծել է միջգերատեսչական հանձնաժողով՝ հակակարկտային հրթիռային պաշտպանության համակարգի ներդրման պիլոտային ծրագրի արդյունքներն ամփոփելու և հետագա զարգացման հնարավորությունները գնահատելու, ինչպես նաև անկանոն տեղադրված գազագեներատորային հակակարկտային կայանքների տեղափոխման վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելու նպատակով: |
| **Արտաքին գործերի նախարարություն** | |
| 85-100 | **ՀՀ ԱԺ 2018թ. Հունիսի 7-ի ԱԺՈ-006-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրից բխող միջոցառումներ** <br><br> **Միջոցառումների իրակացման անհրաժեշտությունը** <br> Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. հունիսի 1-ի ծրագրի թիվ 581-Ա որոշման 3.2-րդ կետով ամրագրված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության դրույթների՝ միջազգային պարտավորությունների ու հանձնառությունների, այլ երկրների հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հարաբերությունների զարգացման և արտաքին քաղաքական նախաձեռնությունների իրականացումը <br> **Միջոցառումների իրակացման նպատակը** <br> Միջոցառումների իրականացման նպատակը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պաշտպանությունն է, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացումը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատումը, միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացումը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաների ձեռքբերմանը և դեպի Հայաստան և Արցախ ներդրումային ծրագրերի նախաձեռնմանը միտված ակտիվ գործունեության ծավալումը: |
| Բնապահպանության նախարարություն | |
| 101 | «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ <br><br> 1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը <br> - *«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով կարգավորման ենթակա՝ Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի ցանկը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում* <br> «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով կարգավորման ենթակա՝ Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի ցանկի մշակումը բխում է ՀայաստանիՀանրապետության կողմից 2003 թվականինվավերացվածՍտոկհոլմիկոնվենցիայովստանձնածպարտավորություններից, որոնցից մեկն էլ Ստոկհոլմի կոնվենցիայի A և B հավելվածների քիմիական նյութերի արտադրության և օգտագործման հանդեպարգելմանմիջոցներ ձեռնարկելն է: <br> Վերոհիշյալ ցանկի սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ԵՏՄ շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015թ. ապրիլի 21-ի N30 որոշման Հավելված 1-ի 1.4 «Բույսերի պաշտպանության միջոցներ և այլ կայուն օրգանական աղտոտիչներ, որոնց ներմուծումն արգելված է» բաժնում նախատեսվող փոփոխություններով և լրացումներով, ինչի նպատակը ներմուծման համար արգելված նյութերի ցանկը «Կայուն օրգանական աղտոտիչների մասին»Ստոկհոլմի կոնվենցիայի A և B |

հավելվածներում ներառված քիմիական նյութերին համապատասխան ընդլայնելն է:

- *Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածությունը կարգավորող օրենսդրական հենքի ձևավորում*

«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգի նպատակը քիմիական նյութերի՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից անվտանգ գործածության ապահովումն է:

Հայեցակարգիմշակման համար հիմք է հանդիսանում «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի այն դրույթը՝ համաձայն որի Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման Կառավարության քաղաքականությունը:

«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման իրավական հիմքի բացակայությամբ:

«Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-231-Ա կարգադրությունից, ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի 1540 բանաձևի իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային գործողությունների 2015-2020 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N95-Ա որոշումից և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N49 արձանագրային որոշումից:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով կարգավորվող վտանգավոր նյութերի ցանկը պարբերաբար լրացվում է նոր նյութերով, որոնց նկատմամբ նույնպես պետք է կիրառվեն կարգավորիչ միջոցներ:
- Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված են բավականին մեծ թվով իրավական ակտեր, որոնք հիմնականում բխում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից և կարգավորում են քիմիական նյութերի բնագավառի առանձին, երբեմն միմյանց հետ չկապակցվող իրավահարաբերություններ: Քիմիական նյութերի գործածության բնագավառում ընդունված և՛ միջազգային կոնվենցիաները, և՛ ներպետական օրենսդրությունը, և՛ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդունված իրավական ակտերը հիմնականում կարգավորում են որոշ քիմիական նյութերի արգելման, ներմուծման և արտահանման գործընթացները կամ կարգավորում են սահմանափակ թվով քիմիական նյութերի գործածությունը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գրանցման, մակնշման հետ կապված հարաբերությունները կարգավորված չեն:

Քիմիական նյութերի գործածության ոլորտը բազմասեկտորալ է և դրանց կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում են միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով և ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով: Միևնույն ժամանակ, այդ իրավական ակտերի առկայությունը բավարար չէ, քանի որ քիմիական նյութերի անվտանգ գործածության համար բացակայում են «Քիմիական նյութերի մասին» օրենքը, ինչպես նաև քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմներ սահմանող ենթաօրենսդրական ակտերը:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- Հայաստանի Հանրապետությունը, որպես Կոնվենցիայի կողմ երկիր,պարտավորէ որոշում ընդունել Ստոկհոլմի կոնվենցիայի A և B հավելվածներում ներառված քիմիական նյութերի արտադրության և օգտագործման արգելման վերաբերյալ:

| | |
|---|---|
| | - Հայաստանի Հանրապետությունում բացակայում է քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգը և ներկայումս քիմիական նյութերի կարգավորման բնագավառում առաջնային լուծում պահանջող խնդիրը քիմիական նյութերի միասնական գրանցման համակարգի ստեղծումն է, քանի որ քիմիական նյութերի հատկությունների, քանակության, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության, քիմիական նյութեր արտադրողների, ներմուծողների, իրացնողների վերաբերյալ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալու պետական մարմիններին արդյունավետ կարգավորել բնագավառը:<br>Քիմիական նյութերի գործածության բնագավառում չափազանց կարևոր է քիմիական նյութերի հատկությունների, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած ազդեցության վերաբերյալ վերջնական սպառողներին, քիմիական նյութերի գործածության մեջ ներգրավված աշխատողներին, ազդակիր այլ անձանց իրազեկելը:<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել և ընդունել «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով կկարգավորվեն քիմիական նյութերի անվտանգ շրջանառությունը ՀՀ-ում և քիմիական նյութերի ներմուծման և արտահանման համակարգը, կստեղծվի քիմիական նյութերի գրանցման միասնական համակարգ, կսահմանվեն՝ քիմիական նյութերի դասակարգման և մակնշման պահանջները, պետական կառավարման մարմինների լիազորությունները քիմիական նյութերի գործածության ոլորտում, քիմիական նյութերի գործածության մեջ ներգրավված անձանց իրավունքները և պարտականությունները, պատասխանատվություն՝քիմիական նյութերի գործածության օրենսդրության պահանջները խախտելու համար:<br>«Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման նպատակով կկատարվի Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի իրավական կարգավորման վերլուծությունը, կվերհանվեն խնդիրները և դրանց լուծման նպատակով կամրագրվեն քիմիական նյութերին և դրանց գործածությանը ներկայացվող անվտանգության պահանջները, ինչպես նաև քիմիական նյութերի անվտանգության ոլորտում տարբեր պետական կառավարման մարմինների լիազորությունները:<br><br>2. Կարգավորման առարկան<br>- Նախատեսվում է սահմանել «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմիկոնվենցիայով կարգավորման ենթակա՝ Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի ցանկը:<br>- Հայաստանի Հանրապետության տարածքում քիմիական նյութերի գործածության՝ արտադրության, օգտագործման, պահման, փոխադրման, իրացման, ներմուծման և արտահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության անվտանգության ապահովման հետ կապված հարցերն են:<br><br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>- Ստոկհոլմի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմում, կոնվենցիայով կարգավորվող վտանգավոր նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարում, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության կանխարգելոիմ ու անվտանգության ապահովում:<br>- Հայեցակարգի ընդունումը իրավական հիմք կհանդիսանա «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար, որով կկարգավորվեն Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված իրավահարաբերությունները՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցման ու անվտանգության ապահովման նպատակով:<br>«Քիմիական նյութերի մասին» օրենքով քիմիական նյութերին և դրանց գործածության փուլերին ներկայացվող անվտանգության պահանջների, ինչպես նաև քիմիական նյութերի անվտանգության ոլորտում տարբեր պետական կառավարման մարմինների լիազորությունների հստակ ամրագրումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցմանն ու անվտանգության ապահովմանը: |
| 102 | «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>*1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը* |

| | |
|---|---|
| | Համաձայն ՀՀ գործող օրենսդրության շրջակա միջավայրի պահպանության բնագավառում թույլտվությունների, լիցենզիաների, եզրակացությունների ու համաձայնեցումների տրամադրման գործընթացն իրակացվում է թղթային եղանակով, ինչն էականորեն ավելացնում է մատուցվող ծառայություններից օգտվողների փաստաթղթերի ստացման ժամանակահատվածը:<br>Միաժամանակ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> N 1524-Ն որոշման 3-րդ կետով հաստատված ցանկի 1.1, 1.2, 1.7, 1.8, 2.1, 2.3, 2.6, 2.7, 2.8, 2.13 կետերի, Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում արգելված ապրանքների կանոնակարգման և սահմանափակումների ենթակա ապրանքների լիցենզավորման գործընթացը համակարգող՝ Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին է ճանաչվել բնապահպանության նախարարությունը:<br>Ծառայությունների մատուցումը նախատեսվում է իրականացնել էլեկտրոնային միասնական https://trade.gov.am/trade հարթակի միջոցով:<br><br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Ներկայումս ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N5, N6, N7 և N8 հավելվածների ցանկերում ընդգրկված նյութերի, ապրանքների, բույսերի և կենդանիների արտահանման կամ ներմուծման համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրվում են մեկանգամյա լիցենզիաներ թղթային կրիչի վրա:<br>Լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգի ներդրման իրականացման համար կպահանջվեն ֆինանսական միջոցներ՝ ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներից:<br><br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>ՀՀ լիազոր պետական մարմին հայտերը, կից փաստաթղթերը, տեղեկատվությունը ներկայացնելու և մեկանգամյա լիցենզիաները, թույլտվությունները ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով նպատակահարմար է ներդնել բնապահպանության բնագավառում լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգ:<br>Լիցենզիաներ, թույլտվություններ ստանալու համար լիազոր մարմին դիմումները, հայտերը, պահանջվող այլ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու և լիցենզիաներն ու թույլտվություններն էլեկտրոնային եղանակով ապահովելու նպատակով «Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման մշակում<br><br>*2. Կարգավորման առարկան*<br>Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման գործընթացն և դրա հետ կապված առանձնահատկությունները նախատեսված են <<Եվրասիական տնտեսական միության մասին>> պայմանագրի 7-րդ հավելվածով: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> և <<Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին>> ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով :<br>Արտաքին տնտեսական գործունեության շրջանակներում սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների բնապահպանության բնագավառում լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգի ներդրումը թույլ կտա ՀՀ լիազոր պետական մարմին հայտերը, կից փաստաթղթերը, տեղեկատվությունը ներկայացնել և մեկանգամյա լիցենզիաները, թույլտվությունները ստանալ ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով:<br><br>*3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը*<br>Լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման համակարգի ներդրումը հայտատուների համար կավելացնի այդ ոլորտում ծառայություններից օգտվելու մատչելիությունը և կնվազեցնի լիցենզիաների և թույլտվությունների ստացման ժամանակահատվածը: |
| 103 | «ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ |

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

*- Հյուսիսային (Դեբեդ, Աղստև գետերը՝ իրենց ջրհավաքներով, և Քուռ գետի վտակները՝ իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքի ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործում և պահպանում*

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքը զբաղեցնում է 7185 կմ$^2$ մակերես և ընդգրկում է Դեբեդ, Աղստև գետերն իրենց ջրհավաքներով և Քուռ գետի վտակները իրենց ջրհավաքներով: Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքը ընդգրկում է Տավուշի, Լոռու մարզերը և Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանը՝ ներառելով շուրջ 210 բնակավայր:

Հյուսիսային ջրավազանային տարածքների կառավարման պլանի մշակումն իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները, ինչպես նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին, վարչական մարմիններին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը, և վերջին հաշվով դրանց ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը: Ջրավազանային կառավարման պլանի ընդունման արդյունքում կհավասարակշռվի ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը:

Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանը մշակվելու է հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ ենթակետի, 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի և 17-րդ հոդվածի պահանջները:

*- Սևանի (Սևանա լճի իր ջրհավաք ավազանով) և Հրազդանի (Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերն իրենց ջրհավաքներով) ջրավազանային տարածքների ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործում և պահպանում*

Սևանի ջրավազանային կառավարման տարածքն ընդգրկում է Սևանա լճի ջրահավաք ավազանը 4750 կմ2 և ներառում է Գեղարքունիքի մարզը, բացառությամբ Ճամբարակի տարածաշրջանը:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն ընդգրկում է Սևանա լճի ջրահավաք ավազանը 2565 կմ2 և ընդգրկում է Կոտայքի մարզը(բացառությամբ՝ Գեղարդ, Գողթ և Գառնի բնակավայրերի վարչական տարածքների), Երևան քաղաքի վարչական տարածքը, Արագածոտնի մարզի Աշտարակի, Արագածի և Ապարանի տարածաշրջանները, Արտաշատի տարածաշրջանի Արաքսավան և Հովտաշեն համայնքները, Մասիսի տարածաշրջանը (բացառությամբ՝ Ռանչպար համայնքի վարչական տարածքի), Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի Վարսեր, Դդմաշեն, Գեղամավան, Գագարին բնակավայրերի վարչական տարածքները, Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի շուրջ 33 համայնքի վարչական տարածքները:

Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանի մշակումն իրականացվում է համապարփակ պլանավորման սկզբունքով, ինչը նպատակաուղղված է հավասարակշռելու ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապակցված փոխհարաբերությունները, ինչպես նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին, վարչական մարմիններին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը, և վերջին հաշվով դրանց ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը: Ջրավազանային կառավարման պլանի ընդունման արդյունքում կհավասարակշռվի ջրավազանում ջրի առաջարկը և պահանջարկը:

Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները մշակվելու է հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ ենթակետի, 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի և 17-րդ հոդվածի պահանջները:

*- Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների փաստացի օգտագործված ջրաքանակի հաշվառում և զննություն*

2016թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի շրջանակներում իրականացված գույքագրման և հաշվառման տվյալների համաձայն, Արարատյան դաշտում ջրառը կազմել է շուրջ 1.67 մլրդ մ$^3$/տարի, այն ինչ «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները կազմում են 1100,0 մլն մ$^3$/տարի:

Հաշվի առնելով Արարատյան դաշտում ստեղծված իրավիճակն անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել առցանց հոսքաչափական սարքավորումներ և դրանք տեղադրել ձկնաբուծական տնտեսություններում, քանի որ վերջիններս հանդիսանում են ստորերկրյա ջրային ռեսուրսների խոշոր ջրօգտագործողներ:

Հոսքաչափական սարքավորումների տեղադրման նպատակն է առցանց եղանակով հետևել ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվող ջրի ծավալը և տրված ջրօգտագործման թույլտվությունից ավելի օգտագործելու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

| | |
|---|---|
| | Աշխատանքները իրականացվելու են հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջը:<br><br>- *«Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնման հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության ներքին որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում*<br>Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների հյուծման սպառնալիքը հրատապ խնդիր է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում, ուստի անհրաժեշտ է հստակեցնել Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնմանն ուղղված ուսումնասիրման, վերագնահատման և կառավարման մեխանիզմները, նպատակ ունենալով հնարավորինս հավասարակշռել ստորերկրյա ջրային ռեսուրսներից խմելու-կենցաղային, ոռոգման, ձկնաբուծության և արդյունաբերական նպատակներով ջրօգտագործումը և խթանել Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների ինքնավերականգնումը:<br>Միջոցառման իրականացումը բխում է «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի պահանջներից, այն է. «Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված ... Կառավարության քաղաքականությունը:<br><br>-*«Ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման և պահպանության ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության ներքին որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում*<br>Ջրային ռեսուրսները մեծ նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության համար, քանի որ ի տարբերություն այլ երկրների Հայաստանի ջրերն ունեն բազմաթիվ առավելություններ՝ բարձր որակական հատկանիշներ և դրանք օգտագործելուց առաջ չի պահանջվում հատուկ մաքրման միջոցառումներ:<br>Ռազմավարության մշակման նպատակն է ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու պահպանության նպատակի ձևավորումը, ինչպես նաև ըստ ջրավազանային կառավարման տարածքների և ելնելով տվյալ շրջանի զարգացվածության միտումներից ջրային ռեսուրսների տնտեսական արժեքի ձևավորումը, ինչպես նաև ելնելով կլիմայի փոփոխության միտումներից ջրային ռեսուրսների կանխատեսումների մշակումը:<br>Միջոցառման իրականացումը բխում է «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի պահանջներից, այն է. «Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված ... Կառավարության քաղաքականությունը:<br><br>- *«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության ներքին որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում*<br>«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականիմարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N 338-Նորոշման 2-րդ հավելվածով հաստատված միջոցառումների ցանկի 6. «Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգի մշակում և ընդունում» կետից:<br>*Հայեցակարգի մշակումը բխում է նաև «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի պահանջներից, այն է.«Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների* |

| | |
|---|---|
| | *կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված ... Կառավարության քաղաքականությունը:*<br><br>- *Ռեկրեացիոն գործիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջների պահպանություն*<br>Ռեկրեացիան բնության մեջ հանգստի կամ զբոսաշրջային ուղևորություններով/արշավներով տեսարժան վայրեր այցելություններն են, որը նպաստում է մարդկանց առողջության բարելավմանը, աշխատունակության վերականգնմանն ու գիտաճանաչողության բարձրացմանը: Հայաստանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման համար: Ռեկրեացիայի նպատակով բնօգտագործումը մի շարք երկրներում տնտեսության հիմնական, իսկ շատ երկրներում կարևոր ճյուղերից մեկն է հանդիսանում: Տնտեսության այս ճյուղի զարգացումը միևնույն ժամանակ պահանջում է շրջակա միջավայրը պահպանելու համար կիրառել բազմաբնույթ միջոցառումներ: Ռեկրեացիայի զարգացման համար ջրային ռեսուրսներն ունեն առաջնային նշանակություն: Այստեղ կարևորվում են հատկապես ջրերի որակական ցուցանիշները: Հայաստանը լինելով ջրային պաշարներով հարուստ երկիր, կարիք ունի իրականացնել համապատասխան միջոցառումներ, որպեսզի գետային հոսքերը աչքի ընկնեն իրենց էկոլոգիապես մաքրությամբ և անվտանգությամբ: Վերջիններիս գրավականներից է միջազգային չափանիշներին համապատասխան գետերի, լճերի և ջրամբարների ափերի երկարությամբ սանիտարաջրապահպան գոտիների ստեղծումը, ինչը դրական ազդեցություն կունենա ռեկրեացիայի զարգացման համար:<br><br>1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>- Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի, 2006թ. նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 2016-2017թթ. ընթացքում 6 ջրավազանային կառավարման պլաններից մշակվել և հաստատվել են 3-ը՝ Արարատյան,Հարավային և Ախուրյան ջրավազանային կառավարման պլանները: Մշակման ընթացքում է Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանները: Ներկայում Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանը մշակված չէ՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:<br>- 2018թ. ընթացքում Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների 15 ջրառի կետերում տեղադրվել են առցանց հոսքաչափական սարքավորումներ և այժմ ընթանում են ևս 5 սարքավորումների տեղադրման, ինչպես նաև համակարգչային (SCADA) ծրագրային փաթեթի ներդրման և փորձարկման կազմակերպման աշխատանքները:<br>- ՀՀ-ում ստորերկրյա ջրային ռեսուրսների զգալի մասը ձևավորվում է Արարատյան արտեզյան ավազանի մաս հանդիսացող Արարատյան դաշտում: Դաշտում է կենտրոնացված Հայաստանի գյուղատնտեսության մեծ մասը:<br>«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Արարատյան դաշտի ստորերկրյա վերականգնվող (օգտագործելի) ջրային ռեսուրսները սահմանված են՝ 1100,0 մլն մ$^3$/տարի, սակայն Արարատյան դաշտում վերջին տարիներին իրականացվել է ինտենսիվ ջրօգտագործում՝ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակներից ավելի և ապօրինի հորատանցքերի հորատումներ, ինչի արդյունքում հորատանցքերի ջրատվությունները զգալիորեն նվազել են: Ստորերկրյա ջրային ռեսուրսների գերշահագործումը հանգեցրել է Արարատյան դաշտի դրական ճնշումով ստորերկրյա ջրերի տարածման սահմանի նվազմանը, հողի աղակալման երևույթների արագացմանը, ինչպես նաև հողային ծածկույթի և շինությունների փլուզման վտանգի երևույթների առաջացմանը: Արարատյան դաշտում 2016թ. դրությամբ ստորերկրյա ջրերի փաստացի օգտագործումը, ըստ գույքագրման և հաշվառման տվյալների, գնահատվել է շուրջ 1670,0 մլն մ$^3$/տարի:<br>- 2002թ.-ից ջրային ռեսուրսների կայուն և արդյունավետ կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք ունեն հրատապ լուծման անհրաժեշտություն:<br>Ներկայումս ջրային ոլորտի բարեփոխումները գտնվում են անցումային ամենակարևոր փուլում, ինչը կապված է ջրային ռեսուրսների քանակական, որակական հստակ գնահատման, ջրային ռեսուրսի աղտոտումը և հյուծումը սպառնալիքների վերացման հետ:<br>- Այսօր շրջակա միջավայրի պահպանության հարցերն առանձնակի հրատապ են: Մարդն անխնա սպառում է բնական պաշարները, որի հետևանքով նվազում են օգտակար հանածոները, աղտոտվում է բնական միջավայրը: Կլիմայի գլոբալ փոփոխությունը մարդկության առջև ծառացած խոշոր մարտահրավերներից է: Հայաստանի Հանրապետությունը, որպես լեռնային, դեպի ծով ելք չունեցող երկիր, բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի |

փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Այս ֆոնի վրա առավել խոցելի են ջրային ռեսուրսները:

- Անհրաժեշտ կլինի մշակել և իրականացնել լայնամասշտաբ ծրագրեր, որոնք կներառեն ծառատնկման աշխատանքներ, անտառաշերտերի հիմնում՝ մեղմելով կլիմայի փոփոխությունները: Նշված աշխատանքների իրականացումը կնպաստի՝ ռեկրեացիայի զարգացմանը, ջրային ռեսուրսների մաքրության ապահովմանը, ջրային ռեսուրսների կորստի նվազմանը, ափամերձ տարածքների հողի էրոզիայի կանխարգելմանը, ողողումների և ջրածածկումների ռիսկի նվազեցմանը:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- Ջրային ռեսուրսների կառավարման հիմնական խնդիրներից է ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի գնահատման միջոցով արդյունավետ կառավարումը ու օգտագործումը, ինչպես նաև ջրային ռեսուրսների որակի գնահատումը և բարելավումը է:

Ջրավազանային տարածքի կառավարման պլանի միջոցով գնահատվում է տվյալ ջրավազանային կառավարման տարածքում ընդգրկված մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական ու որակական հատկանիշները, ինչպես նաև առաջարկվում է միջոցառումների ծրագիր ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և որակի բարելավման համար:

- Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների անարդյունավետ և ոչ նպատակային օգտագործման հետևանքով անհրաժեշտություն է առաջացել արդի տեխնոլոգիաների կիրառմամբ հաշվառել ջրօգտագործողների կողմից օգտագործված ջրի քանակությունները:

- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնման հայեցակարգի մշակում և սահմանված կարգով ընդունում, ինչը հիմք կհանդիսանա Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնմանն ուղղված հնարավոր միջոցառումների մշակման և իրականացման համար:

- Մշակվելիք ռազմավարության շրջանակներում հստակ կսահմանվեն ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու պահպանության առաջնահերթությունները և կտրվի հստակ ժամանակացույց ջրային ռեսուրսների որակական, քանակական հատկանիշների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև ըստ տարբեր բաղադրիչների կտրվի ջրային ռեսուրսի տնտեսական արժեքը, կմշակվեն հիդրոլոգիական, քիմիական, հիդրոկենսաբանական և այլ կանխատեսումները՝ ելնելով կլիմայի փոփոխությունից:

- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, առավել հրատապ է դարձել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանումն աղտոտումից: Ստեղծված իրավիճակում ջրային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում առավել կարևորվել է պետության դերը: Այն ընդգրկում է ջրային ոլորտի քաղաքականության մշակում, այդ թվում, ջրախնայող տեխնոլոգիաների արդյունավետ համակարգերի ներդրման խթանում՝ հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների ներդրման ոլորտում առկա միջազգային փորձը:

Մշակվել է նաև հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր, որում ներառված միջոցառումների մեծ մասի համար արդեն իսկ իրականացվել են պիլոտային ծրագրեր: Միջոցառումների ծրագիրը մշակվել է հաշվի առնելով արձանագրված արդյունքների հիման վրա տեխնոլոգիայի ներդրման նպատակահարմարությունը, ներդրումների շահավետությունը, տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները:

- Կարևոր է նաև ռեկրեացիայի զբոսալ մոնիթորինգի կազմակերպումը և իրականացումը, ինչի արդյունքում մշտական հսկողության տակ կլինեն ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության, գետերի, լճերի և ջրամբարների ափերի երկարությամբ սանիտարաջրապահպան գոտիների հիմնման և պահպանության կազմակերպման, ինչպես նաև էկոզբոսաշրջության զարգացման գործընթացները, վեր կհանվեն դրանց հետ կապված բոլոր խնդիրները:

2. Կարգավորման առարկան

Հայաստանի հանրապետության ջրային ռեսուրսների կայուն կառավարում և նպատակային օգտագործում:

3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը

- Հյուսիսային, Սևանի և Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների կազմումը կնպաստի ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որն իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ճիշտ կառավարմանը, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը:

- Առցանց հոսքաչափական սարքավորումների տեղադրման արդյունքում առցանց եղանակով հասանելի կլինեն ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործված ջրի ծավալի վերաբերյալ ստույգ և ճշգրիտ տվյալներ, ինչը կնպաստի Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել արդյունավետ

| | |
|---|---|
| | կառավարմանը՝ հետագայում հանգեցնելով ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգմանը:<br>- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնում<br>- Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանության մոտեցումները սահմանող համապատասխան ռազմավարության առկայություն, որը իր հերթին դրական ազդեցություն կունենա ջրային ռեսուրսների հատկանիշների վրա:<br>- Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգի ներդրումը հիմք կհանդիսանա շտկելու տարիներ շարունակ ոչ ռացիոնալ, ավանդական ջրօգտագործումից ժառանգած և ընթացիկ գործունեության արդյունքում հյուծված ջրային ռեսուրսների վերականգնման համար՝ ապահովելով շրջակա միջավայրի պահպանության հետագա կայուն զարգացումը, բնական ռեսուրսների վերականգնման և ողջամիտ օգտագործման պահանջները,մարդկանց առողջության վրա վնասակար ազդեցության նվազեցումը:<br>«Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի ընդունումը կնպաստի ռեկրեացիայի զարգացմանը, ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների մաքրության, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման և մարդու առողջության պահպանման ապահովմանը, ջրային ռեսուրսների կորստի նվազմանը, ափամերձ տարածքների հողի էրոզիայի կանխարգելմանը, ողողումների և ջրածածկումների ռիսկի նվազեցմանը: |
| 104 | «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>*- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանության հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության ներքին որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում*<br>Սևանա լիճը Հայաստանի ջրային հաշվեկշռում բացառիկ տեղ է գրավում: Նրա պահպանությունը բնապահպանական և տնտեսական կարևոր հիմնախնդիր է, որի նպատակն է լճի հիդրոմորֆոլոգիայի փոփոխության հետևանքով էոլոգիական հավասարակշռության խախտման վերացումը:<br>Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանության հայեցակարգի մշակման հիմնական նպատակը՝ լճի արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ բարեփոխումների և զարգացման հիմնադրույթների և գաղափարների ներկայացումն է: Սևանա լճի հետ կապված ցանկացած ռազմավարությունների, գործողությունների և ծրագրերի կազմման և իրականացման դեպքում պետք է հաշվի առնվի ռեսուրսի սահմանափակության, Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանման, ազգային անվտանգության և ռազմավարական նշանակության սկզբունքները:<br>Համալիր միջոցառումների ներդրմամբ պետք է կանխարգելվի Սևանա լճի մակարդակի իջեցումը և դրա մակարդակի բարձրացման ապահովումը՝ որպես լճի ջրի նախկին քանակական և որակական ցուցանիշների վերականգնման և էվտրոֆիկացիայի կանխարգելման նախապայման:<br>Միջոցառման իրականացումը բխում է «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի պահանջներից, այն է. «Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված … Կառավարության քաղաքականությունը:<br>*- «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում ջրածածկման ենթակա և ջրի տակ մնացած շենք-շինությունների ապամոնտաժում*<br>2001թ. դեկտեմբերի 14-ին ընդունված <<Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների մասին>> ՀՀ օրենքով հաստատված միջոցառումների համալիր ծրագրով նախատեսվել է լճի մակարդակի բարձրացում շուրջ 6.5մ-ով, ինչի արդյունքում ջրածածկվում են տարածքներ, որոնց վրա գտնվում են ժամանակավոր և հիմնական շենք-շինություններ, որոնք կարող են հայտնվել ջրի տակ: Միջոցառման նպատակն է ապամոնտաժել այդ ենթակառուցվածքները և շինությունները:<br>*- Սևանա լճի գեոդեզիա, «Սևան» ազգային պարկի տարածքային գոտիների, կից համայնքների և այլ անձանց սեփականություն հանդիսացող հողերի հետ սահմանների ճշգրտում*<br><<Սևան>> ազգային պարկի 2007-2011թթ. կառավարման պլանով հաստատված պարկի սահմանները ունեն նկարագրական բնույթ և առաջացնում են որոշակի անորոշություններ:<br>Միջոցառման նպատակն է ճշգրտել <<Սևան>> ազգային պարկի սահմանները և կազմել պարկի տարածքի գեոդեզիական հանույթ:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

- Համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում մարդկային ցանկացած գործունեություն պետք է իրականացվի Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր և տարեկան ծրագրերի հիման վրա: Կարևորելով Սևանա լճում ընթացող էկոլոգիական և սոցիալ-տնտեսական խիստ բացասական հետևանքները՝ դեռևս սկսած անցյալ դարի 60-ական թվականներից իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ և ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնց արդյունքում զգալիորեն բարելավվել էր Սևանա լճի էկոլոգիական վիճակը: Սակայն, Սևանա լճի ջրի պաշարների օգտագործման արդյունքում շարունակվում է լճի էկոհամակարգի ապակայունացումը, որը հանգեցնելու է լճի էկոլոգիական վիճակի վատթարացման և Սևանա լճի, որպես քաղցրահամ ջրաղբյուրի, անդարձ կորստի:

- <<Սևան>> ազգային պարկի մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը գտնվող տարածքներում հաշվառված թվով 4729 ջրի տակ մնացած շենք-շինություններից, մինչ օրս ապամոնտաժվել են թվով 831 շենք-շինություններ և անհրաժեշտ է ապամոնտաժել մնացած շենք-շինությունները:

- <<Սևան>> ազգային պարկի սահմանների անորոշության պատճառով ներկայումս հարակից համայնքների հետ կան խնդրահարույց հարցեր, որոնք կարող են լուծվել միայն ճշգրիտ կադաստրային քարտեզի ստեղծման և պարկի սահմանների կոորդինատային համակարգով վերջնական ճշգրտման արդյունքում:

1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանության հայեցակարգի մշակում և ընդունում:
- Սևանա լճի մակարդակի բարձրանալու հետևանքով ջրածածկվող տարածքներից շենք-շինությունների ապամոնտաժում և լճի տարածքի բարեկարգում: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման աշխատանքներ՝ ներգրավելով ինչպես դոնոր կազմակերպությունների, այնպես էլ ջրածածկվող շենք-շինությունների իրավատերերին:
- Չափագրման աշխատանքների իրականացում, սահմանների ճշգրտում ըստ կոորդինատային համակարգի և ազգային պարկի տարածքի գեոդեզիական հանույթի ստեղծում:

2. Կարգավորման առարկան

- Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում, ինչի հետևանքով տեղի կունենա Սևանա լճի էկոհամակարգի կայունացում:
- Ջրի տակ մնացած շենք-շինությունների ապամոնտաժում:
- Սևանա լճի գեոդեզիա, տեղագրություն, <<Սևան>> ազգային պարկի տարածքների սահմանների ճշգրտում

3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը

- Հայեցակարգի մշակման արդյունքում ակնկալվում է.

1. համալիր միջոցառումների ներդրմամբ Սևանա լճի մակարդակի իջեցման կանխարգելում,
2. Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում բնօգտագործման նորմավորման ու կանոնակարգման միջոցով լճի էկոհամակարգի և դրա առանձին բաղադրիչների վրա անթրոպոգեն բացասական ներգործությունների (այդ թվում՝ աղտոտվածության) նվազեցումը, դրանց հետագա դեգրադացիայի կանխարգելումը,
3. Սևանա լճի ջուրը՝ որպես քաղցրահամ ջրի ռազմավարական պաշարի պահպանության ապահովումը,
4. ձկնային պաշարների վերարտադրության ապահովումը,
5. ռեկրեացիոն գոտիների արդյունավետ զարգացումը,
6. լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, հազվագյուտ, էնդեմիկ և գիտական ու տնտեսական բարձրարժեք տեսակների պահպանման, վերականգնման և վերարտադրման ապահովումը,
7. կառավարման համակարգի բարելավումը,
8. ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծումը:

- Ջրի որակի վատթարացման կանխարգելում՝ ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման արդյունքում:

- Թարմացված գեոդեզիական տվյալներ, կենսաբազմազանության պահպանության նպատակով առանձնացված կրիտիկական կետեր:

| | |
|---|---|
| 105 | «ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>- *«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում կառավարություն*<br>«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է որպես իրավական դրույթ ամրագրել այն հանգամանքը, որ անտառները կառավարվում են բնական միջավայրին համապատասխան, անտառային տարածքների հետևողական ընդլայնմամբ, անտառային պաշարների բնական, շարունակական և անսպառ օգտագործմամբ.<br><br>- *Բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքների գույքագրման, քարտեզագրման և կադաստրային իրավունքի գրանցման աշխատանքներ*<br>Անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների ճշգրտման, քարտեզագրման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ է դրանց գործառնական հիմնավորված գոտիավորումը տարածքների ֆունկցիոնալ արդյունավետության, կանոնադրական խնդիրների իրականացման և հարակից համայնքների սոցիալ տնտեսական զարգացման նախադրյալների ձևավորման համար:<br><br>- *Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեության կարգավորում*<br>Վերանայել բնության հատուկ պահպանվող տարածքների առկա կառավարման պլաններն, անհրաժեշտության դեպքում դրանք լրամշակել: Կառավարման պլան չունեցող բնության հատուկ պահպանվող տարածքների համար պլանի մշակում: Այս միջոցառման անհրաժեշտությունը *բխում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներից:* Բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարման պլանը կազմվում է լիազորված պետական մարմնի հաստատած մեթոդական ցուցումների համաձայն (ՀՀ բնապահպանության նախարարի 27.10.2008 թ. N 364-Ա հրաման):<br><br>- *«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագծի մշակում և ներկայացում կառավարություն*<br>Վերհանել գործող օրենքի կարգավորման բացերը, անհամապատասխանությունները, օրենքը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներով սահմանված պահանջներին թե կառավարման և թե ստեղծման ասպեկտներով:<br><br>- *Անտառների վիճակի, նկարագրության վերաբերյալ հավաստի տվյալներով հենքի ստեղծում, եղած տվյալների օպերատիվ փոխանակում և անտառների արդյունավետ կառավարման ապահովում, անտառների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկություն*<br>Անտառների վիճակի, նկարագրության վերաբերյալ հավաստի տվյալներով բազայի ստեղծում, եղած տվյալների օպերատիվ փոխանակում և անտառների արդյունավետ կառավարման ապահովում, անտառների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկություն, հանրության լայն շրջանակներում անտառների վերաբերյալ իրազեկության բարձրացում<br><br>- *Անտառների կառավարման ոլորտում նորագույն տեխնոլոգիաների կիրառում*<br>Պահպանության նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման նպատակն է բարձրացնել անտառների պահպանության արդյունավետությունը, նվազեցնել անտառխախտումների դեպքերը, կանխարգելել անտառային հրդեհները:<br>Անտառօգտագործման ոլորտում նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրումը կնպաստի անտառային տնտեսության զարգացմանը և կայուն օգտագործմանը<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>- ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանվում են ըստ հիմնական նպատակային նշանակության անտառների դասակարգման դրույթներ, որը հակասության մեջ է գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, մասնավորապես՝ անտառային հողերի գործառնական |

նշանակությունը սահմանվում է ՀՀ անտառային օրենսգրքով: Բացի նշվածից ՀՀ անտառային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվում է, որ ըստ հիմնական նպատակային նշանակության՝ անտառների դասակարգման կարգը սահմանի ՀՀ կառավարությունը, ինչը գործնականորեն հնարավոր չէ:

ՀՀ անտառային օրենսգրքում բացակայում են անտառային տնտեսության վարման իրականացումն ապահովող դրույթներ, ինչպես նաև այնպիսի կարևոր սահմանափակումներ, որոնք կխոչընդոտեն անտառային հողերի տարածքների կրճատմանը:

ՀՀ անտառային օրենսգրքում չեն նախատեսվում անտառային տնկադաշտերի հիմնման, անտառային և տնկարանային տնտեսության կազմակերպման նպատակներով անտառօգտագործման դրույթներ և այլն:

- Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 10) –րդ կետի Բնության հատուկ պահպանվող տարածքները պարտադիր հաշվի են առնվում տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերի, տարածքային հատակագծման նախագծերի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, հողաշինարարական, անտառաշինական և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերի կազմման ժամանակ:

ՀՀ-ում ներկայումս կան տարածքներ, որոնք քարտեզագրված և ընդգրկված չեն որպես անտառային, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներ և վիճահարույց խնդիրներ են առաջացնում կառավարման գործընթացներն իրականացնելիս:

- Ներկայումս մի շատ բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանները ժամկետանց են կամ ընդհանրապես չունեն կառավարման պլաններ, ինչն էլ խոչընդոտում է տվյալ տարածքի արդյունավետ կառավարմանը:

- <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նոր նախագծի մշակումը պայմանավորված է գործող օրենքի հետևյալ բացերով՝

- օրենքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման նպատակները և հիմքերը.
- հստակ չեն շարադրված բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման սկզբունքները.
- բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաների խնդիրները.
- բացակայում են բնության հուշարձանի դասակարգումը, ստեղծման չափանիշները և պահպանության ռեժիմը.
- բացակայում է արգելավայրի պահպանության ռեժիմը.
- բացակայում են պահպանման գոտու, էկոլոգիական միջանցքի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքները և պահպանության ռեժիմը.
- բացակայում են կենսոլորտային արգելոցի ստեղծման և կառավարման հարցերը:

- Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) կողմից ներ է դրվել Անտառների կառավարման տեղեկատվական համակարգ (ԱԿՏՀ, FMIS), որը գտնվում է լրամշակման փուլում
- Անտառտնտեսությունների՝ հակահրդեհային սարքավորումներով անբավարար հագեցվածությունը: Ներկայումս հրդեհների արագ արձագանքման խմբեր գործում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ընդամենը երեք մասնաճյուղերում:

Քանի որ Հայաստանը հանդիսանում է լեռնային երկիր, և անտառները գտնվում են հիմնականում թեք լանջերի վրա, ապա ներկայումս կիրառվող հնացած (դեռևս Խորհրդային Միության տարիներից) տեխնոլոգիաները թույլ չեն տալիս հատատեղերի շահագործումն իրականացնել էկոլոգիապես անվտանգ եղանակով, որը հանգեցնում է բազմաթիվ խնդիրների:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

- ՀՀ անտառային օրենսգրքի վերանայումն համապատասխանեցում ոլորտային ներկա քաղաքականությանը

- Իրականացնել քարտեզագրական աշխատանքներ, վերանայել, ճշգրտել անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանները, վերհանել իրական պատկերը և սկսել պետական գրանցման գործընթացներ: Քարտեզագրական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տարածքը երիզող լեռնաշղթաները, գետահովիտները, ուղղաձիգ գոտիականության շնորհիվ իրար հաջորդող բնական գոտիները և լանդշաֆտները, ինչպես նաև բնապահպանական տեսակետից առավել արժեքավոր տեղամասերի տեղաբաշխման ու հողօգտագործման առանձնահատկությունները' հիմնվելով կեսաբազմազանության ընդգրկվածության, ավազանային ամբողջականության, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման ներուժի և այլ չափանիշների վրա:

| | |
|---|---|
| | - Առաջարկվում է մշակել բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանները ներգրավելով դոնոր կազմակերպություններին:<br>- Անտառների կառավարման տեղեկատվական համակարգում տվյալների շարունակական թարմացում<br>- Անտառպահախմբի աշխատողների ժամանակակից տեխնիկական և տրանսպորտային միջոցներով վերազինում (արտահագուստ, զենք, ձիեր, ամենագնա մեքենաներ, ֆոտո և տեսախցիկներ, գիշերային տեսանելիության հեռադիտակներ և այլն), հրդեհների արագ արձագանքման խմբերի ստեղծում, անտառային որոշ հատվածներում փոքր ջրամբարների կառուցում, հրդեհների կանխարգելման նպատակով մեքենայացված եղանակով հանքայնացված շերտերի կառուցում, հակահրդեհային ճանապարհների կառուցում և վերանորոգում, հակահրդեհային թեմաներով ցուցանակների, ուղեփակոցների տեղադրում:<br>Անտառի ոչ բնափայտային օգտագործման զարգացման նպատակով անհրաժեշտ է ստեղծել պտուղների, հատապտուղների մթերման և վերամշակման փոքր արտադրություններ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>- «ՀՀ անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նպատակաուղղված է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև անտառային տարածքների կրճատման խուչընդոտմանը, անտառների բազմագործառնական նշանակության դասակարգմանը և ըստ այդմ անտառի կառավարման ուղղությունների տարանջատմանն ու հստակեցմանը:<br>- Անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների ճշգրտում:<br>- Տվյալ տարածքի կառավարմանն ուղղված միջոցառումների և գործողությունների հստակ ծրագրի ամրագրում կառավարման պլանում:<br>- <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծով առաջարկվում է գործող օրենքի բացերի վերացում, նոր կարգավորումների ամրագրում:<br>- Անտառների կառավարման տեղեկատվական համակարգի (ԱԿՏՀ, FMIS) կատարելագործում<br>- Պահպանության ծառայության հզորացում, մասնագիտացված անձնակազմի պատրաստում, անտառային պաշարների կայուն օգտագործում<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>- Անտառային ոլորտի իրավական դաշտի կատարելագործում, լիազորությունների հստակեցում, անտառային տնտեսության վարման համակարգի բարեփոխում:<br>- Հստակեցված և պետական գրանցման իրավունքով սահմանված անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներ:<br>- Բոլոր բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների առկայություն մինչև 2022 թվականի ավարտը:<br>- Միջազգային չափորոշիչներին և արդի հասարակական հարաբերություններին համահունչ օրենքի առկայություն<br>- Պարբերաբար թարմացվող առաջնային հավաստի տեղեկատվության առկայություն և փոխանակում, անտառների արդյունավետ կառավարում<br>- Անտառախախտումների դեմ պայքարի արդյունավետության աճ, անտառային հրդեհների նվազեցում<br>- Անտառային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, անտառային տնտեսությունում եկամուտների ավելացում: |
| 106 | «ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br><br>- *«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում կառավարություն*<br>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կենդանական աշխարհի օգտագործման գործընթացի կանոնակարգման և վարչարարության նվազեցման պահանջով, օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման *«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և* |

| | |
|---|---|
| | *լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում կառավարություն*<br>«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է բուսական աշխարհի օգտագործման գործընթացի կանոնակարգման և վարչարարության նվազեցման պահանջով, օրենքում օգտագործված որոշ հասկացությունների ճշգրտման և մի շարք նոր հասկացությունների ավելացման անհրաժեշտությամբ:<br>- *ՀՀ-ում խոշոր կաթնասունների (մուֆլոն, բեզոարյան այծ և ընձառյուծ) պահպանության գործողություններ*<br>Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N54 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել <<Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին>>, որի 2-րդ ռազմավարական ուղղության կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանության բարելավման ու խախտված բնակմիջավայրերի վերականգնման, շրջանակներում նախատեսվում է մշակել և ներդնել Հայաստանում խոշոր կաթնասունների (մուֆլոն, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու, ընձառյուծ) պահպանության գործողությունների ծրագրեր: Ըստ որում՝ մարդածին գործոնների ազդեցությամբ կենդանական տեսակների կորստի սպառնալիքի նվազումն ապահովելու համար պահանջվում է անհետացումն առաջացնող ուղղակի և միջնորդված վտանգների դեմ միջոցառումների իրականացում: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակների սպասվող անհետացումը կարող է կանխարգելվել դրանց ապրելավայրերի պահպանության և վերականգնման, նոր բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ) ստեղծման և բնական միջավայրից դուրս (ex-situ) պահպանության միջոցով:<br>Հարկ է նշել նաև, որ Բնության պահպանության միջազգային միությունը, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի և Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ մշակել է բնության պահպանության համաշխարհային ռազմավարություն, որի կարևոր խնդիրներից է կառավարությունների, ազգային և միջազգային կազմակերպությունների համախմբումը բնության կենդանի պաշարների պահպանության գործում: Ռազմավարությունը հնարավորություն է տալիս որոշելու կենդանական աշխարհի պահպանության առաջնահերթությունները և մշակելու միջոցառումներ ինչպես միջազգային, այնպես էլ առանձին վերցված երկրի մակարդակով:<br>Այս առումով կենդանական աշխարհի պահպանության հիմնահարցում մեծ նշանակություն ունի էկոհամակարգերի կարևոր բաղադրիչներ հանդիսացող և առավել խոցելի խոշոր կաթնասունների պոպուլյացիաների ուսումնասիրությունը և պահպանությունը:<br>Ծրագրի նպատակն է համալիր միջոցառումների կիրառմամբ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում վտանգված խոշոր կաթնասունների պահպանությունը և վերարտադրությունը:<br><br>*1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>- Դաշտում առկա են խնդիրներ անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահելու և օգտագործելու իրավահարաբերություններում և այն կանոնակարգելու նպատակով Օրենքի համապատասխան հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:<br>- Դաշտում առկա են խնդիրներ վայրի բույսերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսեր օգտագործելու իրավահարաբերություններում և այն կանոնակարգելու նպատակով Օրենքի համապատասխան հոդվածներում նախատեսվում են համապատասխան փոփոխություններ:<br>- Համաձայն վերջին 10 տարիների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված խոշոր կաթնասուններից խոցելի են համարվում բեզոարյան այծը, վտանգված՝ հայկական մուֆլոնը, կրիտիկական՝ կովկասյան ազնվացեղ եղջերուն և ընձառյուծը:<br>Հանրապետությունում զգալի աշխատանքներ են իրականացվում վերոհիշյալ տեսակների պահպանության և վերարտադրության կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես՝ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվել և իրականացվում են «Հարավային Հայաստանում ընձառյուծի պահպանությանն ուղղված նպատակային միջոցառումներ», «Ընձառյուծի պահպանությունը Կովկասի էկոտարածաշրջանում», «Ընձառյուծի, բեզոարյան այծի և այլ խոշոր կաթնասունների մոնիթորինգ», «Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի |

վերաբնակեցում» ծրագրերը:

Վերջինիս շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկում իրականացվում է ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ստեղծման, առանձնյակների, անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման, այցելուների համար ենթակառուցվածքների ստեղծման (դիտակետերի կառուցում, ինֆորմացիոն վահանակների տեղադրում, տուրիստական երթուղիների մշակում և այլն), աշխատակիցների ուսուցման աշխատանքներ: Նշված ծրագրերը հիմնականում իրականացվում են մի շարք ԲՀՊՏ-ներում («Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներ, «Դիլիջան» ազգային պարկ): Հետևաբար դրանք խիստ տեղայնացված են և ամբողջական լուծում չեն տալիս այդ կենդանատեսակների պահպանության և վերարտադրության հիմնախնդիրներին:

*1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները*

- Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները նպատակաուղղված են ոլորտի լիազորված պետական մարմնի հետ պայմանագրեր կնքելու միջոցով կենդանական աշխարհի օգտագործման կանոնակարգմանն ու այդ գործընթացի պարզեցմանը:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները նպատակաուղղված են ոլորտի Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն՝ լիազորված պետական մարմնի տրամադրած թույլտվությամբ անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահելու գործընթացն առավել կանոնակարգված դարձնելուն:

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կնպաստեն վարչարարության նվազեցմանն ու Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օգտագործման համապարփակ կանոնակարգմանը:

- Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կնպաստեն վարչարարության նվազեցմանը, բուսական աշխարհի օգտագործման գործընթացի պարզեցմանը և կանոնակարգմանը:
- տեսակների և դրանց պոպուլյացիայի հաշվառում և գնահատում, թվաքանակի, պոպուլյացիայի վիճակի ու ապրելավայրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում,
- տեսակների պոպուլյացիայի վրա ապօրինի անտառահատումների, անտառային հրդեհների և որսագողության բացասական ազդեցության մեղմման համար միջոցառումների մշակում,
- տեսակների տեղաշարժի հստակեցված և քարտեզագրված միգրացիոն ուղիների և անցումային կետերի մշակում,
- իրավական ակտերի և ուղեցույցների մշակում,
- կենդանատեսակների պոպուլյացիաների, ապրելավայրերի և միգրացիոն ուղիների մոնիթորինգի ծրագրի մշակում,
- համայնքային իրազեկման և գիտելիքների բարձրացման ծրագրի մշակում,
- համայնքապետարանների հետ պահպանվող տեսակների ապրելավայրերի, միգրացիոն ուղիների պահպանությանն ուղղված համագործակցության միջոցառումների վերաբերյալ հուշագրի պատրաստում:

*2. Կարգավորման առարկան*

-Նախագծով նախատեսվում է նոր սկզբունքների և մոտեցումների ամրագրում, որոնք միտված են վայրի կենդանիներ անազատ և կիսաազատ պայմաններում պահելու գործընթացը կանոնակարգելուն, միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ մոտարկելուն, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման, արտահանման, ներմուծման գործընթացները կարգավորելուն:

-Նախագծով նախատեսվող կարգավորումները միտված են բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման, արտահանման, ներմուծման գործընթացները կարգավորելուն:

- Ծրագրի իրականացումն ապահովող աշխատանքային խմբի անդամների համար տեխնիկական առաջադրանքների մշակում, աշխատանքային խմբի ձևավորում:

Պահպանվող տեսակների պոպուլյացիայի վիճակի մասին տվյալների հավաքագրում,

ԲՀՊՏ-ներից դուրս դրանց ապրելավայրերի և միգրացիոն ուղիների վիճակի հետազոտում և գնահատում:

Բնօգտագործման բացասական ազդեցություններից տեսակների պահպանության ապահովում:

*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*

- Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքների առկայություն:

| | |
|---|---|
| | - տեսակների և դրանց պոպուլյացիայի վիճակի ու ապրելավայրերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն,<br>- տեսակների պոպուլյացիայի վրա ապօրինի անտառհատումների, անտառային հրդեհների և որսագողության բացասական ազդեցության մեղմման համար մշակված և իրականացված միջոցառումներ,<br>- տեսակների տեղաշարժի հստակեցված և քարտեզագրված միգրացիոն ուղիներ և անցումային կետեր,<br>- մշակված իրավական ակտեր և ուղեցույցներ,<br>- կենդանատեսակների պոպուլյացիաների, ապրելավայրերի և միգրացիոն ուղիների մոնիթորինգի մշակված ծրագիր,<br>- համայնքային իրազեկման մշակված և իրականացված ծրագիր,<br>- համայնքապետարանների հետ պահպանվող տեսակների ապրելավայրերի, միգրացիոն ուղիների պահպանությանն ուղղված համագործակցության միջոցառումների վերաբերյալ ստորագրված հուշագիր: |
| 107 | «ԸՆԴԵՐՔԻ և ՀՈՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>- *Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման ու կառավարման իրավական հենքի և ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման ընթացակարգի ապահովում*<br>Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N 1079-Ն որոշման շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակված գումարները կարող են օգտագործվել բացառապես ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների իրականացման համար: Սակայն, ընդերքօգտագործման ոլորտում կուտակված փորձը վկայում է, որ հաճախակի առավել նպատակահարմար է ոչ թե կատարել խախտված հողերի վերականգնում, այլ դիտարկել այլընտրանքային լուծումներ՝ առաջ քաշելով տնտեսական ներուժ ունեցող բիզնես-ծրագրեր: Միաժամանակ, օրենսդրորեն սահմանվել է ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործընթացը, այսինքն, ընդերքօգտագործման ժամկետի ավարտից հետո ընդերքօգտագործողը կարող է վերամշակել արտադրական լցակույտերում կուտակված թափոնները և, որպես հետևանք, վերանում է արտադրական լցակույտի մակերեսի ռեկուլտիվացիայի անհրաժեշտությունը:<br>«Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է կառավարության 01.06.2018թ.-ի N 626-Լ որոշման պահանջներից:<br>Իրավական ակտերի մշակման իրավական հիմքերն ամրագրվել են «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (նախատեսվում է ներկայացնել պետական կառավարման մարմինների քննարկմանը), որը հանդիսանում է սույն միջոցառման իրականացման 1-ին քայլը:<br><br>- *Մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների գույքագրում (այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների*<br>Մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրման անհրաժեշտությունը *բխում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.10 հոդվածի 1-ին մասի պահանջներից* և նպատակաուղղված է ընդերքօգտագործման թափոնների կառավարման ընթացքում շրջակա միջավայրի վնասակար ազդեցություններից պաշտպանությանը:<br><br>- *ՀՀ տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում*<br>Լեռնահանքային արդյունաբերությունը ՀՀ տարածքում հողերի աղտոտման և դեգրադացիայի պատճառներից մեկն է: Հրատապ խնդիր է լեռնահանքային արդյունաբերության հետ կապված, խախտված և դեգրադացված հողերի հաշվառումը, մոնիթորինգային ցանցի ստեղծումը և մոնիթորինգի իրականացումը:<br>- |

- *ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային հողերում սողանքային և սողանքավտանգ տեղամասերի գույքագրում*

ՀՀ կառավարության 2013թ.-ի հուլիսի 10-ի նիստի N 27 արձանագրային որոշման հավելվածով հաստատվել է ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգը, որի VIII-րդ գլխի 35-րդ կետի 7)-րդ ենթակետի պահանջներին համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունն իրականացնում է բնության հատուկ պահպանվող տարածքներին (բնության հուշարձան, արգելավայր, արգելոց) սպառնացող սողանքների մոնիթորինգ, գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին (որպես հնարավոր բնապահպանական աղետների աղբյուր) վտանգ սպառնացող սողանքների տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի նիստի N 22 արձանագրային որոշման՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից պետք է մշակվի սողանքային աղետի դեպքում գործողությունների պլան, որի համար սկզբնաղբյուր պետք է ծառայեն բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող սողանքային մարմինների գույքագրման նյութերը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային և սողանքավտանգ տեղամասերի գույքագրման համար անհրաժեշտ՝ 2019-2021թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացված գումարը կազմում է 100300,0 հազ.դրամ:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

- Եթե ընդերքօգտագործողը ընդերքօգտագործման թույլտվության ժամկետի ավարտից հետո չի նախատեսում կատարել խախտված տարածքների (բացահանքեր, արտադրական հրապարակ, արտադրական լցակույտ և այլն) ռեկուլտիվացիա, ապա իր կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների օգտագործումը դառնում է վիճահարույց:

- Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերը և դրանց բաղկացուցիչ մաս հանդիսացող խախտված հողերի ռեկուլտիվացիայի ծրագրերը մշակվում են առնվազն 12 տարվա կտրվածքով: Օգտակար հանածոյի արդյունահանման երկարաժամկետ լինելու հանգամանքը հանգեցնում է ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար դեռևս նախագծային փուլում ամրագրված նախահաշվային արժեքների և, որպես հետևանք, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման ենթակա գումարների վերանայման անհրաժեշտությանը:

- ՀՀ տարածքում առկա են ընդերքօգտագործման թափոնների մի շարք փակված օբյեկտներ, որոնք առաջացել են հիմնականում ԽՍՀՄ տարիներին մետաղական օգտակար հանածոների վերամշակման տեխնոլոգիական գործընթացի արդյունքում: Սակայն ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինները չեն տիրապետում այդ օբյեկտների կարգավիճակի, դրանցում կուտակված ընդերքօգտագործման թափոնների քանակի և ագրեգատային վիճակի, դրանց շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվությանը:

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման նպատակով անհրաժեշտ՝ 2019-2021թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացված գումարը կազմում է 33120.0 հազ.դրամ:

- Հայաստանում հողերի վիճակի, դրանց վրա տեխնածին ազդեցություն ունեցող գործոնների դիտարկման, վիճակի գնահատման համակարգված ուսումնասիրություններ չեն կատարվում, ինչը բացասաբար է անդրադառնում հողերի պահպանության ոլորտի քաղաքականությունների, ծրագրերի և նախագծերի իրականացման վրա, քանի որ բացակայում է ՀՀ տարածքի տեխնածին աղտոտված հողերի վերաբերյալ առաջնային համապարփակ տեղեկատվական բազան:

- Ընդերքօգտագործման արդյունքում աղտոտված հողերի առաջնային մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ՝ 2019-2021թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացված գումարը կազմում է 122 535.00 հազ.դրամ:

- Սողանքային երևույթները, դրանց ակտիվացումը՝ հանդիսանալով բնական աղետ, կործանարար հետևանքներ է ունենում շրջակա միջավայրի բնական բաղադրիչների ամբողջականության տեսակետից: Սողանքներն առանձնահատուկ վտանգ են ներկայացնում բնապահպանական տեսակետից խոցելի համարվող՝ պահպանության ներքո գտնվող էկոհամակարգերի՝ վտանգված, էնդեմիկ, անհետացող, անհետացման եզրին գտնվող բուսական և կենդանական տեսակների համար, որոնց պահպանությունն իրականացվում բնության հատուկ պահպանվող տարածքներում: Մինչ օրս ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային երևույթների և սողանքավտանգ տեղամասերի գույքագրում, դրանց ակտիվության մոնիթորինգ չի կատարվել:

| | |
|---|---|
| | 1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>- Ընդերքօգտագործման արդյունքում խախտված տարածքներում բիզնես-ծրագրերի իրականացման, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման և ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների կրճատման/փոփոխության դեպքերում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակված գումարների օգտագործման/վերադարձման մեխանիզմները կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N 1079-Ն որոշման մեջ անհրաժեշտ է կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ:<br><br>- Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացահայտման և դրա չեզոքացման/նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների մշակման նպատակով անհրաժեշտ է կատարել մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների (այդ թվում՝ թափոնների փակված և լքված օբյեկտների) գույքագրում:<br>- Հողերի աղտոտվածության ուսումնասիրության և պարբերական մոնիթորինգի իրականացման նպատակով նախատեսվում է. հիմնել և զարգացնել նմուշարկման դիտացանցը 2019-2021թթ. ընթացքում պոչամբարներին և մետաղական հանքավայրերի լցակույտերին հարող տարածքների հողածածկույթի համար, կատարել հողերի աղտոտվածությունը բնութագրող շուրջ 30 պարամետրերի որոշում, լրացնել հողերի աղտոտվածության վիճակի վերաբերյալ մոնիթորինգային շարքեր:<br>- Բնության հատուկ պահպանվող տարածքներում նախատեսվում է կատարել սողանքավտանգ տեղամասերի գույքագրում, սողանքային մարմինների ակնադիտական ուսումնասիրություն, լուսանկարում, դաշտային ուսումնասիրությունների արդյունքում ստացված նյութերի ամփոփում, թվայնացում, քարտեզագրական նյութերի ներկայացում AutoCad/GIS միջավայրում:<br><br>2. Կարգավորման առարկան<br>- Կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակված գումարների այլընտրանքային օգտագործման մեխանիզմները:<br>- Անհրաժեշտ է մշակել և հաստատել ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգ՝ ամրագրելով վերահաշվարկման մեթոդական հիմքերը և ապահովելով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին «վերջնական հատկացումների» իրավական հիմքը:<br>- Նախատեսված միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է լրացնել Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բացը<br>- Նախատեսված միջոցառման իրականացման արդյունքում կձևավորվի մշտապես գործող մոնիթորինգային ցանց, ինչը թույլ կտա ստանալ տեղեկատվություն տեխնածին աղտոտված (հատկապես՝ ընդերքօգտագործման հետ կապված) հողերի վիճակի, դրանց մակերեսների և այլի վերաբերյալ:<br>- Կստեղծվի բնության հատուկ պահպանվող տարածքներում արտածին երկրաբանական պրոցեսների և դրանց հնարավոր վտանգների վերաբերյալ տեղեկատվության տեղեկատվական բազա, ինչը թույլ կտա սողանքային աղետի դեպքում իրատեսական գործողությունների պլան:<br><br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>- Ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների այլընտրանքային/նպատակային օգտագործման պարզեցված մեխանիզմների սահմանում:<br>- Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման մեխանիզմների սահմանում:<br>- Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների վերաբերյալ գույքագրման արդյունքների հիման ստեղծված համապարփակ տեղեկատվական բազա, ինչը թույլ կտա ծրագրավորել շրջակա միջավայրի աղտոտման կանխման համալիր միջոցառումների ծրագիրը:<br>- Աշխատանքների վերջնական արդյունքներն են. հողերի տեխնածին աղտոտվածության և դեգրադացիայի վերաբերյալ նպատակային տեղեկատվություն մատակարարող մոնիթորինգային ցանցի առկայություն:<br><br>- ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների սողանքային մարմինների և սողանքվտանգ տեղամասերի վերաբերյալ համընդհանուր տեղեկատվական համակարգի ստեղծում: |

| | |
|---|---|
| 108 | «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>- *Մանր, միջին և խոշոր աղտոտողների համար բնապահպանական հարկի տարբերակված համակարգի ներդրման վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում*<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական մեխանիզմների համակարգի արդիականացմամբ, որով նախատեսվում է սահմանել տարբերակված բնապահպանական հարկի սահմանում մանր և խոշոր աղտոտողների համար:<br>- *Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային փաթեթների /տոպրակներ, պարկեր/ օգագործման կրճատմանն ուղղված տնտեսական լծակների ու մեխանիզմների համակարգի ներդրման հայեցակարգի մշակում և կառավարություն ներկայացում*<br>Պլաստիկ թափոնները, ըստ որոշ ուսումնասիրությունների կազմում են կենցաղային թափոնների ծավալի ավելի քան 30%-ը: Եթե պլատիկ շշերի տարանջատումը, վերամշակումը և վերաօգտագործումը որոշ չափով կազմակերպվում է Հայաստանում, ապա պոլիթիլենային տոպրակների առումով դա նպատակահարմար չէ, և ամբողջ աշխարհում ընդունված է դրանց օգտագործումը նվազեցնելու քաղաքականությունը: ՀՀ-ում արտադրվող և ներկրվող պոլիթիլենային տոպրակների ողջ քանակությունը ի վերջո հանգրվանում է բնության մեջ:<br>Պոլիթիլենային տոպրակների խնդիրը հաղթահարած երկրները կիրառել են հիմնականում դրանց շրջանառության արգելման կամ լրացուցիչ հարկման ուղով:<br>Միջոցառման նպատակն է կանխարգելել պոլիէթիլենային փաթեթների օգտագործման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցությունը:<br>Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի այն դրույթը՝ համաձայն որի Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման Կառավարության քաղաքականությունը:<br><br>- Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրում<br>Արտադրողի պատասխանատվության ընդլայնման համակարգի ներդրմամբ՝<br>1) համագործակցության հնարավորություն կստեղծվի արտադրող (ներմուծող) և գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոն վերամշակող կազմակերպությունների միջև,<br>2) կկատարելագործվեն գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների հավաքագրման և վերամշակման համար տնտեսական գործունեության խթանման ավանդական տնտեսական մեխանիզմները,<br>3) կիրականացվի թափոնների գործածության ոլորտում գործող պետական կարգավորման բնապահպանական գործիքների կատարելագործում,<br>4) գիտական հետազոտությունների ոլորտում կմշակվեն և կիրականացվեն նպատակային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների՝ որպես երկրորդային նյութական ռեսուրսների կիրառման հնարավորությունների ընդլայնմանը:<br><br>1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>- Շրջակա միջավայրի աղտոտման համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված են բնապահպանական հարկի տեսակները և համապատասխան դրույքաչափերը, որոնք վճարվում են օրենսգրքով սահմանված համապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպությունները և /կամ/ ֆիզիակական անձինք: Մինչդեռ գործող կանոնակարգումը չի տարանջատում մանր և խոշոր աղտոտողներին՝ ըստ վճարման սկզբունքի:<br>- Հայաստանում պոլիէթիլենային փաթեթների օգտագործումը հանգեցրել է բնապահպանական խնդիրների առաջացման: Օգտագործված պոլիէթիլենային փաթեթներով և (կամ) դրանց մնացորդներով աղտոտված են |

| | |
|---|---|
| | Երևանի, Գեղարքունիքի, Լոռու, Արմավիրի, Կոտայքի և Շիրակի մարզերի ջրավազանների մոտակայքում գտնվող տարածքները, որտեղ առկա են պլաստիկ թափոնների խոշոր կուտակումներ, հանգստավայրերին և զբոսաշրջության վայրերին կից բնական օբյեկտները և տարածքները:<br>Ըստ ԵԱՀԿ-ի գնահատականի՝ պլաստիկ տարաները, շշերը և տոպրակները հանդիսանում են Հայաստանում ջրերի հիմնական աղտոտիչները: Հայաստանում տարեկան կուտակվում է մոտ 5000 տոննա պոլիէթիլենային թափոն:<br>Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ Նուբարաշեն տարվող աղբավայրում թափվող կենցաղային աղբի 10 %-ը թուղթ կամ ստվարաթուղթ է, 25 %-ը՝ մթերային թափոններ, 3 %-ը՝ տեքստիլ, 3 %-ը՝ պոլիէթիլեն, 5 %-ը՝ ապակի, 43 %-ը՝ քարեր, նստվածք, տիղմ եւ այլն:<br>Շրջակա միջավայրի աղտոտումը պոլիէթիլենային թափոններով, որոնք հողում չեն քայքայվում և տարիների ընթացքում առաջացնում են մեկուսացնող շերտ, խախտում է հողի բնականոն ռեժիմը:<br>- Ներկայումս Հայաստանում բացակայում է աչտադրողի պատասխանատվության ընդլայնման համակարգը, որի հիմքում ընկած է կառավարման ռազմավարություն, համաձայն որի արտադրողը կամ ապրանք ներմուծողը գործածությունից դուրս եկած՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքի) արտադրության (կամ ներմուծման) նախնական փուլում նախատեսում է այդ արտադրանքի (ապրանքի) օգտագործման վերջնական փուլում առաջացող բնապահպանական հետևանքները կանխարգելող (կամ դրանց բացասական ներգործությունները վնասազերծող) միջոցառումներ, վարչական և ֆինանսական պատասխանատվություն է կրում այդ բացասական հետևանքների վերացման համար:<br><br>1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>- Նախատեսվում է մշակել օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթ՝ որով կսահմանվի նոր մեխանիզմ՝ ուղղված ըստ աղտոտման ծավալների աղտոտողների համար տարբերակված դրույքաչափերի սահմանմանը,<br>- Պոլիէթիլենային տոպրակների հետ կապված առկա բնապահպանական խնդրի լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը՝<br>• Թղթի, պլաստիկի, ապակու և մետաղի թափոնների համար տեսակավորման համակարգի ներդնում.<br>• Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների աստիճանաբար բացառման պիլոտային ծրագրի իրականացում մեկ համայնքի տարածքում.<br>• Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների աստիճանական բացառում մեկ մարզի այնուհետև ողջ հանրապետության տարածքում.<br>• Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և պատասխանատու վերաբերմունքի բարձրացման ուղղված աշխատանքներ, հանրային իրազեկում<br><br>- Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի նիստի «Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխա-նատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N14 արձանագրային որոշման կիրականացվեն խնդրո առարկա համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումները<br><br>2. Կարգավորման առարկան<br>- Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային փաթեթների և տարաների օգտագործման արգելքի աստիճանական կիրառում<br>- Խոշոր աղտոտողների համար բնապահպանական պատասխանատվության նոր համակարգի ներդրում<br>- Արտադրողի պատասխանատվության համակարգի ներդրում<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>- Մանր և խոշոր աղտոտողների համար բնապահպանական հարկի տարբերակված մոտեցմամբ սահմանում:<br>- Պոլիէթիլենային փաթեթների օգտագործման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցության կանխարգելում<br>- Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գիտակից կառավարման համակարգի առկայություն: |

| | |
|---|---|
| 109 | «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումն է, այդ բնագավառում պետության և հասարակության միջև ներդաշնակ և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և էկոլոգիական գիտակցության ձևավորմանը:<br>*Միջոցառման իրականացման համար հիմք է հանդիսանում «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի հավելվածի 6-րդ կետի այն դրույթը՝ համաձայն որի Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:*<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ոլորտում դեռևս առկա է օրենքների, սկզբունքների ներդաշնակ կիրառման պակաս, որը պայմանավորված է բնապահպանական կրթության համակարգի պետական լիազոր մարմինների ոչ արդյունավետ փոխհամագործակցությամբ: Բավարար չափով ուշադրություն չի դարձվում ընտանեկան և նախադպրոցական հաստատություններում էկոլոգիական դաստիարակության ներդաշնակության վրա, ինչպես նաև հանրակրթական մակարդակում էկոլոգիական կրթության շարունակականության վրա:Այն պետք է իրականացնել տարրական դպրոցից մինչև ավագ դպրոց ներառյալ: Ավագ դպրոցում «Էկոլոգիա» առարկան պետք է ներդնել պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում: Կա ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործման, բնապահպանական կրթության ոլորտում «Կրթությունը հանուն կայուն զարգացման» ռազմավարության գաղափարների և սկզբունքների ինտեգրման, պետական կառավարման մարմինների լիազորությունների վերանայման և հստակեցման անհրաժեշտություն: Անհրաժեշտ է ժամանակակից պահանջներին համահունչ բնապահպանական կրթության մեթոդաբանության կատարելագործման և բնապահպանական կրթության և դաստիարակության միջազգային փորձի տեղայնացման և ազգային առաջատար փորձի փոխանակման:<br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է.<br>• Բնապահպանական կրթության անընդհատության ապահովում, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը և օպտիմալացում,<br>• Հասարակության լայն խավերի համար բնապահպանական կրթության և իրազեկման մատչելիության ապահովում,<br>• Միջազգային համագործակցության ընդլայնում,<br>• Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի գործունության նկատմամբ հսկողություն,<br>• Պետական կառավարման մարմինների միջև սերտ համագործակցություն, միասնական քաղաքականության իրականացում:<br>2. Կարգավորման առարկան<br>Էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության գործընթացի շարունակականությունն ու մեթոդական կապը կրթական համակարգի բոլոր մակարդակներում. «Մարդ-հասարակություն-տեխնոլոգիաներ-բնություն» համակարգի հասարակական ընկալման և բնապահպանական մշակույթի ձևավորումը, սոցիալ-էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը:<br><br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Կբարելավվի էկոլոգիական կրթության օրենսդրությունը և կառավարման համակարգը, կստեղծվի կայուն զարգացման սկզբունքներին բավարարող էկոլոգիական կրթության արդյունավետ գործող համակարգ, առավել արագ և օպերատիվ արձագանք կլինի բնապահպանական հիմնախնդիրներին և արտակարգ իրավիճակներին: |
| 110 | «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը |

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների մոնիթորինգի կազմակերպման ու իրականացման համալիր, ժամանակակից համակարգերի ներդրմամբ, որի նպատակն է վերլուծման և տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունների ամբողջականացումը մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա թեմատիկ շտեմարանների ստեղծման կամ կատարելագործումն ու վարումը, նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվության փոխանցումն ու հրապարակումը, շրջակա միջավայրի վիճակի համալիր գնահատումը:<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Մոնիթորինգի իրականացման արդի սարքավորումների, այդ թվում լաբորատորիաների և դիտացանցերի տեխնիկական հագեցվածության անկատարությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բացակայությունը թույլ չի տալիս շրջակա միջավայրի վիճակը գնահատել ամբողջական և իրական ժամանակում, ինչպես նաև լիարժեք չի իրականացվում միջազգային պարտավորությունների կատարումը:<br>1.1. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>• կամրագրվիեն մոնիթորինգի կազմակերպման ու իրականացման և ստացված տվյալների վերլուծության ու տրամադրման և շրջակա միջավայրի վիճակի գնահատման ընթացակարգերն ու ուղեցույցները,<br>• կհաստատվի շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի իրականացմանն անհրաժեշտ ցուցանիշները՝ ըստ ոլորտների,<br>• շրջակա միջավայրի բաղադրիչների ու թափոնների մոնիթորինգի դիտացանցերի վիճակի ուսումնասիրության և գնահատման հիման վրա կմշակվի մոնիթորինգի համակարգի արդիականացմանն ուղղված միջոցառումների ծրագիր և կկատարվի ներկայացվող միջոցառումների ֆինանսական ծախսերի գնահատում,<br>• կմշակվի բնապահպանական ազգային պորտալի ստեղծմանն անհրաժեշտ միջոցառումների ծրագիր:<br>- Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի և տեղեկատվական ծառայությունների զարգացմանն ուղղված ծրագրային փաթեթների կազմման համար առկա վիճակի ուսումնասիրություն և կարիքների գնահատում<br>- Շրջակա միջավայրի մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրմանն ուղղած աշխատանքներ<br>2.Կարգավորման առարկան<br>- մոնիթորինգի արդի համակարգերի ներդրում<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Շրջակա միջավայրի մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի կարգավորել և զարգացնել շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի և տեղեկատվության կառավարման ազգային հզորությունները, որը կապահովի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի բազմակողմանի գնահատումը՝ խթանելով բնապահպանական քաղաքականության առավել արդյունավետ գործիքների ձևավորումը: |
| 111 | «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-110-Ն) 17-րդ հոդվածի 3-րդ մասի շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատումն իրականացվում է օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի և տեխնիկական առաջադրանքի համաձայն: Գնահատման մեթոդիկան հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մինչդեռ այսօր չկա մշակված և կառավարության կողմից հաստատված հստակ մեթոդաբանություն, որը կարող է հիմք հանդիսանալ գնահատման գործընթացների պատշաճ իրականացման համար:<br><br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Անհրաժեշտ է ապահովել հստակ սահմանված մեթոդաբանության հիման վրա իրականացված շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման իրավական հիմքերը:<br><br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>- շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման մեթոդիկայի տեխնիկական առաջադրանքի մշակում |

| | |
|---|---|
| | - գնահատման մեթոդիկայի մշակում<br><br>2. Կարգավորման առարկան<br>Գնահատման մեթոդաբանության առկայություն<br><br>3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների պատշաճ իրականացում: |
| Գյուղատնտեսության նախարարություն | |
| 112 | «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2. առաջնահերթության, 1-ին, 2-րդ և 4-րդ պարբերությունների դրույթների իրականացման անհրաժեշտությամբ: Բուսաբուծության ոլորտը ավանդաբար հանդիսանում է գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերից մեկը: Ներկայումս խնդիր է դրված միջոցներ ձեռնարկել նպատակաուղղված հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների և վարկային միջոցների մատչելիության, սերմապահովության մակարդակի բարձրացմանը: Անհրաժեշտություն է առաջացել տնտեսավարման գործընթացներում արդիական տեխնոլոգիաների զարգացման, գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծման մեջ:<br>Միջոցառման գլխավոր նպատակներն են զարգացնել հանրապետությունում հացահատիկային, հատիկաընդեղենային և կերային մշակաբույսերի առաջնային սերմնաբուծությունը, բարձրացնել գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մակարդակը, կենտրոնացված պայքարի միջոցառումների իրականացման միջոցով կանխել առավել վնասակար օրգանիզմների գործունեությունը և նվազագույնի հասցնել դրանց տարածման արեալը, նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ խթանել արդիական տեխնոլոգիաների՝ ոռոգելի հողատարածքներում ոռոգման ջրախնայողական եղանակների, կարկուտից պաշտպանությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգիների հիմնումը:<br>Հաշվի առնելով ապահովագրական համակարգի ներդրման կարևորությունը գյուղատնտեսության ոլորտի զարգացման, ռիսկերի մեղմման գործում անհրաժեշտ է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացումը, որի միջոցով նախադրյալներ կստեղծվեն ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման, ապահովագրական համակարգի ներդրման հիմնական մոտեցումների հստակեցման համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Շուկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ներմուծվող սերմացուն 1.5-3 անգամ ավելի թանկ է տեղական արտադրության սերմանյութի համեմատությամբ, բացի այդ 2017 թվականից սկսած հատիկաընդեղեն մշակաբույսերի բարձրորակ սերմացուի նկատմամբ պահանջարկը հանրապետությունում ավելացել է:<br>Հատիկաընդեղեն մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի ցածր լինելով պայմանավորված խիստ հրատապ է դրանց արտադրության կազմակերպումը՝ հաշվի առնելով գյուղատնտեսական գոտիականությունը:<br>Գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման վիճակի ուսումնասիրությունների արդյունքներով հողերի չմշակման պատճառների մեջ էական են ցածր եկամտաբերությունը և շրջանառու միջոցների բացակայությունը:<br>2017 և 2018 թվականներին մեկնարկած գյուղատնտեսության աջակցության ծրագրերի իրականացման շնորհիվ ակնկալվում է մի շարք խնդիրների աստիճանաբար լուծում, այդ թվում տեղական սերմնաբուծության զարգացում, հողերի նպատային օգտագործման մակարդակի որոշակի բարձրացում:<br>Հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում, պայմանավորված բնական և արտադրական պայմանների տարբերությամբ, առկա է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունների ակնհայտ անհավասարություն:<br>Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխությունների և Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրերի աննախադեպ սպառման հետ, ստեղծվել է ջրային ռեսուրսների |

խիստ դեֆիցիտ, որը զգալի բացասական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն ջրամատակարարման վրա:

Չնայած կառավարության կողմից քայլեր են ձեռնարկվում՝ նոր ջրամբարների կառուցման և ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման կրճատման ճանապարհով հիմնախնդրի լուծման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք զգալի ժամանակ և ֆինանսական միջոցներ են պահանջում:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում հակակարկտային ներգործության աշխատանքներն իրականացվել են 2 ռադիոտեղորոշիչով և 435 հակակարկտային կայանքով, իսկ 2016 թվականին՝ թվով 496 կայանքի միջոցով: Ներկայումս հակակարկտային կայանքներով պաշտպանված է Հայաստանի Հանրապետության մշակվող տարածքների շուրջ 8 %-ը:

Գյուղատնտեսության ապահովագրական համակարգի բացակայության պայմաններում, կարկտահարությունների դեպքում, երաշխավորված բերքի ու տնտեսավարողների եկամուտների ապահովման համար հուսալի միջոց է հատկապես խաղողի և պտղատու այգիներում կարկտապաշտպան ցանցաշերտերի տեխնոլոգիաների ներդրումը: Ներկայումս հանրապետության շուրջ 120-130 հեկտար տարածքներում տեղադրվել են կարկտապաշտպան ցանցեր, որոնց կիրառման արդյունավետությունը կազմում է գրեթե 100 %:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բարձր բերքի ստացման հիմնական գրավականը՝ բարձրորակ սերմանյութով ցանքի կատարումն է: Հանրապետությունում հացահատիկային, հատիկաընդեղենային և կերային մշակաբույսերի սերմանյութով բավարարվածության մակարդակը բավականին ցածր է, իսկ դրանց գները՝ ոչ մատչելի: Անհրաժեշտություն է առաջացել հանրապետությունում բարձրացնելու հացահատիկային, հատիկաընդեղենային և կերային մշակաբույսերի սերմանյութով ինքնաբավության մակարդակը:

Նախատեսվում է գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության աշխատանքների՝ ներառյալ պարարտացման համար ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով փաստացի ցանված տարածությունների յուրաքանչյուր հեկտարի հաշվով պետական աջակցության հատկացում հողօգտագործողներին:

Ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում պետության դերը տարեց տարի առավել կարևորվում է: Այն ընդգրկում է ոռոգման քաղաքականության մշակում, այդ թվում՝ ոռոգման արդիական (ջրախնայողական) համակարգերի ներդրման խթանում մակերեսային ոռոգման համեմատությամբ դրանց առավելություններին ծանոթացման միջոցով ջրօգտագործողների իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ ու համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսավորման համար պետական աջակցության ցուցաբերման՝ տրամադրվող վարկերի սուբսիդավորման միջոցով:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար մատչելի վարկավորման մեխանիզմների առաջադրումը,

2) ինտենսիվ այգիների հիմնման խոչընդոտների գնահատումը և դրանց մեղմման հնարավորությունների օգտագործումը,

3) գյուղատնտեսությունում ինտենսիվ այգիներ հիմնելու համար մատչելի վարկավորման մեխանիզմների առաջադրումը,

1) հանրապետությունում ներդրվող ինտենսիվ այգիների տեսակների հստակեցումը,

2) ինտենսիվ այգիների համար պահանջվող վարկային միջոցների և վարկի տոկոսի սուբսիդավորվող մասի գնահատումը,

3) ինտենսիվ այգիների հիմնման գործընթացում վարկերի սուբսիդավորման ձևի հստակեցումը,

Հայաստանի Հանրապետությունում բնական տարբեր աղետներից՝ գարնանային ցրտահարությունից, կարկտահարությունից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածքներ, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների հետագա արտադրական գործունեության ու սոցիալական վիճակի վրա: Իրավիճակը շտկելու նպատակով նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր երեք մարզերում՝ Արարատի, Արմավիրի և Շիրակի: Արարատի և Արմավիրի մարզերում ապահովագրությունը նախատեսվում է տարածել ծիրանի և խաղողի, իսկ Շիրակի մարզում՝ կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի վրա: Պիլոտային ծրագիրը կտարածվի կարկտահարության և ցրտահարության ռիսկերի վրա:

2. Կարգավորման առարկան

Հայաստանի Հանրապետությունում բարձր վերարտադրության և որակյալ սերմանյութի արտադրական ծավալների ավելացում:

Ծրագրով նախատեսված միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի նվազագույնին հասցնել վնասակար

օրգանիզմների գործունեությունը և դրանց տարածման արեալը, զգալիորեն կբարելավվի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի բուսասանիտարական վիճակը:

Նպատակային պետական աջակցության միջոցով չմշակվող հողատարածքների ներարում գյուղատնտեսական շրջանառության մեջ:

Տարբեր բնական աղետների, այդ թվում կարկտահարության և անկանխատեսելի պատահարների հետևանքով զգալի կորուստներ են կրում հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսավարողները:

Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 %, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100 %: Կարկտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվարանում է դրա իրացումը, զգալիորեն նվազում է տնտեսավարողների եկամուտները: Ուժեղ կարկտահարված այգիների վերականգնման համար պահանջվում է առնվազն մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ՝ այգիներում լրացուցիչ էտի, պարարտացման և ագրոտեխնիկական այլ միջոցառումների իրականացման համար:

Հակակակարկտային ակտիվ ներգործության մեթոդների հետ միասին կարևորվում է հակակարկտային ցանցերի կիրառումը, որի համար պահանջվում է մատչելի մեխանիզմներով դրանց ներդրում և օգտագործում:

1) ինտենսիվ նոր տեխնոլոգիաներով այգեհիմնումների համար պետական աջակցություն ցուցաբերումը,

2) նոր ինտենսիվ տեխնոլոգիաներով այգիների հիմնման նպատակով սուբսիդավորված տոկոսադրույքներով, երկարաժամկետ, նպատակային վարկերի տրամադրումը:

Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության աստիճանական ներդրումը նախապայման կստեղծի չյուղի կայուն զարգացման, ներդրումային դաշտի բարելավման և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար և կնվազեցնի ոլորտում գոյություն ունեցող ռիսկերի ազդեցությունը :

3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում՝

- կավելանան գյուղատնտեսական մթերքների արտադրության և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալները,
- կավելանան օգտագործվող վարելահողերի տարածքները,
- կհզորանան հանրապետությունում սերմնաբուծական ֆերմերային տնտեսությունների արտադրական կարողությունները,
- կբարձրանա տեղական արտադրության սերմնանյութով ինքնաբավության մակարդակը,
- ակնկալվում է միավոր տարածքից առավելագույն բերքի ստացում, որը կնպաստի մշակովի հողատարածքների ավելացմանը,
- կնվազի գյուղատնտեսական հողատեսքերում մկնանման կրծողներով և մորեխներով, իսկ անտառայի տարածքներում վնասակար օրգանիզմներով վարակվածության աստիճանը,
- ոռոգման արդիական համակարգերով նախատեսված թիրախային քանակությունն ապահովվելո դեպքում ներդրված տարածքներում 2018-2022թթ. ժամանակահատվածում ակնկալվում է առնվազն 75 մլն խ ջրի տնտեսում, շուրջ 9 մլրդ հավելյալ եկամուտ բերքատվության աճի հաշվին, բերքի որակի բարելավում արդյունավետ գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պահպանում: Ակնկալվում է նաև ՀՀ պետական բյուջե մուտքերի ավելացում՝ տարեկան ներդրվող գումարի առնվազն 17%-ի չափով՝ ավելացված արժեքի (նախատեսվո գումարի շուրջ 60%-ը ներդրվող սարքավորումներն են) և շրջանառության (առնվազն՝ 5%) հարկերի տեսքով ինչպես նաև, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ եկամտահարկի տեսքով,
- կխթանվի նոր ինտենսիվ այգիների հիմնման գործընթացը,
- նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ նոր ինտենսի այգիների հիմնման գործընթացի խթանմամբ շուրջ 100 հեկտարով կավելանան պտղատու այգետարածքները, 7 տարիների ընթացքում այգիներից սպասվում է շուրջ 2.0 մլրդ դրամի եկամուտ,
- շուրջ 395 հա խաղողի և պտղատու այգիներ կպատվեն կարկտապաշտպան ցանցաշերտերով,
- հակակարկտային ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը կբարելավվի բերքի որակը,
- 145 հա պտղատու և 250 հա խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման արդյունքու կպահպանվեն տնտեսավարողների եկամուտներն ու կբարձրանա այգեգործության արդյունավետությունը,
- կբարձրանա ապահովագրության գրավչությունը,
- կհստակեցվեն ապահովագրական համակարգի ներդրման հիմնական մոտեցումները,
- Հայաստանում ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի ինչպես բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությունում տնտեսավարողների վնասների մեղմմանը, այնպես է գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից ագրոտեխնիկական պահանջների լիարժեք կատարմանը հաշվի առնելով, որ բնակլիմայական աղետից ապահովագրվածների կողմից կատարված ծախսերի

| | |
|---|---|
| | ապահովագրումը հնարավորություն կտա տնտեսավարողներին առանց ռիսկայնության ծախսեր կատարել ագրոտեխնիկական պահանջների ապահովման վրա, |
| 113 | «ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ և ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2. առաջնահերթության, 1-ին, 2-րդ և 7-րդ պարբերությունների դրույթների իրականացման անհրաժեշտությամբ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել մի շարք ծրագրեր:<br>«ՀՀ խաղողագործական շրջանների խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում՝ «Խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում» ծրագրի նպատակներն են՝<br>1. իրականացնել ոլորտի սպառիչ գույքագրում,<br>2. ապահովել խաղողագինեգործական արտադրանքների հետագծելիությունը, հաստատել թափանցիկություն,<br>3. նպաստել և ամուր հիմք նախապատրաստել աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի ներդրման համարվ, նպաստել «տերրուարների բացահայտմանը»:<br>Աշխարհագրական նշումով գինիների համակարգի ներդրումը թույլ կտա բարձրացնել խաղողագործական և գինեգործական արտադրանքների որակը, խթանել համայնքների զարգացումը, աշխարհագրան նշումով գինիների արտադրության արժեշղթայի բոլոր մասնակիցների համար բարձրացնել եկամտաբերությունը, պահպանել խաղողագործության և գինեգործության ավանդական մոտեցումները և զարգացնել գինու տուրիզմը:<br>«Խաղողի գինեմետ սորտերի այգետարածքների ընդլայնումը խթանելու նպատակով, խաղողագործական ներուժ ունեցող, սակայն չօգտագործվող հողատարածքների վերհանում» ծրագրի նպատակն է ուսումնասիրել և վերհանել Վայոց ձորի և հաջորդաբար մյուս մարզերում առկա հողատարածքները, որոնք պիտանի կլինեն խաղողի բարձրարժեք գինեմետ սորտերի այգիների տնկման համար: Ծրագրի իրականացումը թույլ կտա՝<br>• ստեղծել համապատասխան տվյալների բազա, որտեղ զետեղված կլինեն հողատարածքների աշխարհագրական և տեքստային առավել կարևոր բնութագրիչները,<br>• իրականացնել ավելի արդյունավետ ներդրումային քաղաքականություն:<br>Խաղողի գենոֆոնդի պահպանումը և ներուժի ուսումնասիրությունը ոլորտում արդի կարևորագույն խնդրներից է: «Կոլեկցիոն այգու և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների մայրուտի մշակում և պահպանում, կոլեկցիոն այգու լրացում նոր սորտերով» ծրագրի իրականացումը թույլ կտա հավաքագրել, իսկ այնուհետև ուսումնասիրել հայկական տեղածին խաղողի սորտերի ներուժը բարձրարժեք գինեգործության համար:<br>Խաղողագործության զարգացումը պետք է դիտարկվի գինեգործական արտադրանքի համընդհանուր զարգացման համատեքստում, որպես գինու արտադրության որակի գրավական: Դրան է միտված «Խաղողի և գինու որակի բարձրացման խթանում» ծրագրի իրականացումը:<br>«Միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին և մրցույթներին հայկական ընկերությունների մասնակցություն» և «Միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների ճանաչելիության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացում» ծրագրերի շրջանակներում կազմակերպվող ցուցահանդեսներին, մրցույթներին մասնակցության, հայկական գինու մշակույթի ներկայացման միջոցա-ռումների, համտեսների, համաժողովների միջազգային թիրախային երկրներում կազմակերպման հիմնական նպատակներն են՝<br>1. ներկայացնել ՀՀ գինեգործության ոլորտի առկա ներուժը և զարգացման հնարավորությունները,<br>2. ներկայացնել և առաջ մղել հայկական գինին թիրախային շուկաներում, գրավել նպատակային հաճախորդներին,<br>3. նպաստել գործարար կապերի հաստատմանը, հայկական գինու արտադրության և իրացման ծավալների ավելացմանը,<br>4. նպաստել գինեգործական ընկերությունների ճանաչելիության բարձրացմանը,<br>5. նպաստել տեղական արտադրողների և միջազգային գնորդների միջև արդյունավետ երկխոսության ձևավորմանը:<br>Խաղող մշակող գյուղացիական տնտեսություններն ունեն ցածր մասնագիտական պատրաստվածություն: Անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու որակավորման բարձրացմանը ուղղված միջոցառումներ: |

| | |
|---|---|
| | Դրան է ուղղվելու «Աջակցություն մասնագիտական կարողությունների զարգացմանը» ծրագրի իրականացումը։<br>«Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպությանը (OIV) Հայաստանի անդամակցությունից բխող գործառույթների իրականացում» ծրագրի շրջանակներում Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) անդամ-երկրների ներկայացուցիչների ամենամյա հանդիպումներին, OIV գիտական ամենամյա կոնգրեսին և գիտական զեկույցների ներկայացմանն իր մասնակցություն ունի նաև Հայաստանը։<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս մեր հանրապետությունում խաղողը հիմնականում ստացվում է Խորհրդային միությունից ժառանգած այգիներից: Դրանք հիմնականում ոչ մաքրասորտ են, տնկվել են՝ առանց հաշվի առնելու տարածքների մասնագիտացումը, սորտերի հասունացման ժամկետները, պտուղների գույնը, բերքի սպառողական և տեխնիկական արժեքները և այլն։ Դեռևս Խորհրդային Հայաստանում խաղողագործության և գինեգործության մասնագիտացումը կատարվել է տարածքի մակրոմասշտաբով: Նման սկզբունքը, որպես կանոն, կիրառելի է ընդարձակ հարթավայրային շրջանների պայմաններում, իսկ մեր երկրի լեռնային ռելիեֆի պայմաններում դա արդյունավետ չէ: Այս դեպքում անտեսվում են բարձրորակ և բարձրարժեք գինիների արտադրություն իրականացնելու համար հնարավոր մեզո-, միկրոշրջանները:<br>Ոլորտում առկա հիմնական խնդիրներն են՝<br>1) խաղողի վազի ֆիլոքսերա վնասատուի մասսայական զարգացման ու տարածման վտանգը,<br>2) խաղողի ներկայիս սորտային կազմի ոչ լիարժեք համապատասխանությունը ժամանակակից գինեգործության պահանջներին,<br>3) այգետարածքների, դրանց տեղադրության և մակերեսների, ինչպես նաև դրանց կարևոր բնութագրիչների մասին ճշգրիտ տեղեկատվության բացակայությունը,<br>4) արժեշղթայի մասնակիցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը,<br>5) խաղողի հումք վերամշակող արդյունաբերության պահանջները բավարարող նոր այգետնկումների համար գյուղատնտեսությունում տնտեսավարողների ֆինանսական միջոցների սղությունը և փոխառու (վարկային) միջոցների մատչելիության ցածր մակարդակը,<br>6) խաղողի արտադրությունից մինչև սպառումն արտադրանքի ազատ շարժին նպաստող կառույցների (գնող-իրացնող գործառույթ ունեցող կանոնակարգված կառույցներ) բացակայությունը և գործողների անկատարությունը,<br>7) խաղող արտադրողների և վերամշակող ընկերությունների միջև փոխշահավետ, երկարատև պայմանագրային հարաբերությունների ձևավորման դանդաղ ընթացքը,<br>8) աշխարհագրական նշում տալու կամ դրանից զրկելու կառույցների և մեխանիզմների բացակայությունը,<br>9) խաղողի մշակության ագրոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք ապահովումը,<br>10) խաղողի այգիների մշակության ինտենսիվացման դեռևս ցածր մակարդակը:<br>Ներկայումս աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգը կարգավորվում է «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» և «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքներով, դրանց լրացումներով, օրենսդրական մի շարք ակտերով: Գործառույթները բախշված են ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալություն միջև: Համակարգային մոտեցումների բացակայության և առկա իրավական բացերի պատճառով համակարգը հանրապետությունում լիակատար չի գործում՝ աշխարհագրական նշմամբ գինեգործական արտադրանք չի արտադրվում:<br>Չնայած ժամանակին կոլեկցիոն այգիների առկայությանը՝ վերջին ժամանակներում խնամքի և ֆինանսավորման բացակայության արդյունքում դրանք այլևս չեն գործում: Հաշվի առնելով վերոգրյալը, և այն, որ ֆիլոքսերա վնասաատուի վտանգը գնալով մեծանում է՝ խաղողագործության գենոֆոնդի պահպանումը երաշխավորելու համար ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացրած տեխնիկական աջակցության ծրագրի միջոցով 2017 թվականին հիմվել է 1 հա խաղողի նոր կոլեկցիոն այգի, որտեղ հավաքագրվել են շուրջ 300 տեղական սորտեր և 2 հա ֆիլոքսերադիմացկուն սորտ-պատվաստակալների մայրուտ: Ծրագիրը արդեն ավարտվել է և հարց է առաջացնում այգիների հետագա խնամքի իրականացման, ինչպես նաև կոլեկցիոն այգին նոր սորտերով համալրելու կապակցությամբ:<br>Անցյալ տարում գինու արտադրության ծավալները Հայաստանում կտրուկ աճ են ունեցել Հայաստանում: Վերջին տարիների տեղական և օտարերկրյա ներդրումների շնորհիվ գինու արտադրության ծավալի նոր աճ գրանցվեց: Վերջին մի քանի տարիների ընթացքում մեծածավալ ներդրումներ են արվել գինեգործության ոլորտում, հատկապես՝ առաջադիմական տեխնոլոգիաների ձեռքբերման և արտադրական գործընթացների արդիականացման համար: Սակայն, ներկայումս ամբողջովին լուծված չէ արտադրողներին գինու որակյալ հումքի մատակարարման խնդիրը: Մյուս կողմից՝ որոշ տնտեսվարողներ ի վիճակի չեն իրականացնելու |

տեխնոլոգիաների համատարած արդիականացում: Բացի տեխնիկական ապահովվածությունից, խնդիրներ են ծագում որակյալ մասնագետների ներգրավվածության հարցում: Այս ամենը խիստ բացասաբար է անդրադառնում որակյալ գինիներ արտադրելու և շուկայահանելու գործընթացի վրա:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկայումս նպատակ է դրված ստեղծել Հայաստանի Հանրապետության խաղողի տնկարկներիի կադաստրի համակարգ, որը թույլ կտա ոլորտում իրականացնել ավելի արդյունավետ քաղաքականություն:

ՀՀ մարզերում իրականացվում է մոնիթորինգ՝ նպատակ ունենալով վերհանել պետական ֆոնդին պատկանող չմշակվող հողերը, որոնք պիտանի կլինեն բարձրարժեք խաղողագործության և գինեգործության տեսանկյունից: Դա ներդրումային ավելի բարենպաստ միջավայր ստեղծելու հնարավորություն կտա:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ոչ պետական հատվածի հետ համատեղ առաջարկում է ստանձնել ՄԱԿ-ի ՊԿԳ-ի կողմից հիմնված կոլեկցիոն, ցուցադրական և ֆիլոքսերադիմացկուն սորտա-պատվաստակալների այգիների խնամքը և կառավարումը, այդպիսով երաշխավորելով դրանց պատշաճ մշակությունը, ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրությունը, խաղողի գենոֆոնդի պահպանումը, առկա սորտերի համապարփակ ուսումնասիրությունը, դրանց տեխնոլոգիական ներուժի գնահատումը:

Միջազգային շուկաներում հայկական գինիների ճանաչելիության բարձրացման և առաջմղման նպատակով՝ ապահովվելու է հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը՝ համտեսներին, համաժողովներին, միջազգային միջոցառումներին թիրախային երկրներում, որոնց մասնակցության արդյունքում ստեղծվում են գործարար կապեր, որոնք բարձրացնում են Հայաստանի և հայկական գինու ճանաչելիությունը, հարթակ է ստեղծվում հայկական արտադրողների և արտասահմանյան ներմուծողների միջև նոր պայմանագրերի ստորագրման և արտահանման ծավալների մեծացման համար:

Ցուցահանդեսների և մրցույթների նախապատրաստական աշխատանքների և մասնակցության արդյունքում ստեղծվում են գործարար կապեր, որոնք բարձրացնում են Հայաստանի և հայկական գինու ճանաչելիությունը:

Ոլորտային առաջատար մասնագետների ներգրավմամբ իրականացնելու է խաղողի մշակությամբ զբաղվող անձանց պրակտիկ ուսուցում: Նախատեսվում է իրականացնել դաշտային դասընթացներ, ստեղծել տեսահոլովակներ, որոնց միջոցով պատշաճ և հանրամատչելի կներկայացվի խաղողի այգում իրականացվող պարտադիր ագրոտեխնիկական յուրաքանչյուր աշխատանք: Տեսահոլովակները կհրապարակվեն հասանելի հարթակներում, որտեղ ինտերակտիվ հարցուպատասխանի միջոցով կպարզաբանվեն ֆերմերներին հուզող հարցերը:

Իրականացվելու է ակտիվ մասնակցություն OIV աշխատանքներին, պարբերաբար տրամադրել տեղեկատվություն Հայաստանի խաղողա-գինեգործական ոլորտի վերաբերյալ՝ OIV տեղեկատվական շտեմարանների լրացման միջոցով: Բացի այդ, հանդես գալ գիտական զեկույցներով և ցույց տալ ՀՀ խաղողա-գինեգործական ոլորտի նվաճումներն ու ձեռքբերումները:

2. Կարգավորման առարկան

- ստեղծել էլեկտրոնային միասնական տեղեկատվական համակարգ, որտեղ կտեղակայվի մշտապես թարմացվող տեղեկատվություն խաղողի տնկարկների, բերքի մշակությամբ և մթերմամբ զբաղվող բոլոր շահառու կողմերի մասին,
- վերհանել և ուսումնասիրել խաղողագործական շրջաններում խաղողագործական, գինեգործական և պատմամշակութային տարբերվող համատեքստ ունեցող միկրո և մակրոշրջանները, խթանել աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի մշակումը և ներդրումը,
- ոլորտի պետական և մասնավոր հատվածի փորձագետների խմբերի համար նախատեսված աշխատաժողովների կազմակերպում՝ աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի ուղեցույցի մշակում,
- գինիների էտալոնային նմուշների պատրաստում և հետազոտում,
- դաշտային այցելությունների և հեռահար զոնդավորման տեխնոլոգիաների միջոցով վերհանել և քարտեզագրել խաղողի բարձրարժեք գինեմետ սորտերի տնկման համար պիտանի՝ անտառտնտեսություններին պատկանող, սակայն անտառային ծածկույթից զուրկ հողատարածքները,
- տալ վերհանված տարածքների քարտեզները և անձնագրերը, առաջարկել մասնագիտացումը՝ համաձայն դրանց խաղողագործական և գինեգործական ներուժի,
- աշխատանքի արդյունքները ներկայացնել պատկան մարմիններին և ՀՀ կառավարություն՝ գինեգործական նպատակներով հողերի հետագա օգտագործումը խթանելու համար,
- կխնամվեն և կպահպանվեն հիմնված կոլեկցիոն, ցուցադրական և ֆիլոքսերադիմացկուն սորտա-պատվաստակալների այգիները,

| | |
|---|---|
| | - կիրականացվի կոլեկցիայում առկա սորտերի անձնագրավորում (գենետիկական և ամպելոգրաֆիական նկարագրություն), կստեղծվի հասանելի տվյալների տեղեկատվական բազա, որը փոխկապակցված կլինի միջազգային նմանատիպ հարթակների հետ:<br>- հայկական գինեգործական ընկերությունների մասնակցություն՝ ProWine China ամենամյա ցուցահանդեսին՝ Չինաստանի Շանհայ քաղաքում, ProdExpo ամենամյա ցուցահանդեսին՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում, ProWein ամենամյա ցուցահանդեսին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում, MUNDUS VINI Meininger Verlag մրցույթին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, La Cité du Vin մշտական գործող ցուցահանդեսին՝ Ֆրանսիայի Բորդո քաղաքում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br><br>ՀՀ-ի խաղողի տնկարկների կադաստրի ձևավորում.<br>- ճշգրիտ տեղեկատվություն խաղողի այգիների տեղակայման, զբաղեցրած մակերեսի և պատկանելիության, արժեշղթայի մասնակիցների (խաղող մշակողներ, վերամշակողներ, ինչպես նաև խաղողի յուրաքանչյուր հողակտորի ագրոնոմիական բնութագրի) վերաբերյալ,<br>- գինեգործության համար անհրաժեշտ խաղողի սորտերի մշակության միկրոշրջանային մակարդակի մասնագիտացման սահմանում,<br>- հանրապետությունում խաղողի այգիների տարիքի, մշակության մակարդակի և ագրոմշակության տեխնոլոգիաների կիրառման ներկա վիճակի սահմանում/վերհանում,<br>- արտադրվող գինեգործական արտադրանքի մասին ճշգրիտ տեղեկատվության տիրապետում,<br>- նախատեսվում է քարտեզագրել հանրապետության բոլոր խաղողի տնկարկները՝ մոտ 16000 հա,<br>- աշխարհագրական նշումով գինիների արտադրության համակարգի լիիրավ կիրարկման ուղեցույց,<br>- որակական չափորոշիչների հետազոտման համար աշխարհագրական նշումով գինիների էտալոնների առկայություն,<br>- գինու տուրիզմի զարգացում,<br>- հեռահար զոնդավորման մեթոդների օգնությամբ վերհանված հողատարածքների քարտեզագրում մինչև 15 մ ճշտությամբ,<br>- համապատասխան կոորդինատային համակարգում թվային և/կամ տպագիր քարտեզների ստեղծում,<br>- դաշտային այցելությունների միջոցով հողատարածքների ուսումնասիրություն, անձնագրերի ստեղծում, որտեղ զետեղված կլինեն,<br>- տարեկան ուսումնասիրել մոտավոր առնվազն 1000 հա հողատարածք՝ ընդհանուր 5000 հա,<br>- պատշաճ մշակված կոլեկցիոն և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների 4 հա այգու համար տարեկան շուրջ 16 անուն ագրոտեխնիկական միջոցառումների իրականացում,<br>- կոլեկցիոն այգու համալրում նոր սորտերով,<br>- քիչ տարածված տեղածին սորտերի տեխնոլոգիական ներուժի բացահայտում,<br>- ճարձրորակ գինու արտադրության կազմակերպում,<br>- մրցունակ նոր տեսակի արտադրանքի թողարկում՝ նվազագույնը 15 նոր տեսակի գինի,<br>- նոր գործարար կապերի ստեղծում,<br>- միջազգային շուկաներում հայկական գինիների առաջմղում,<br>- հայկական գինիների ճանաչելիության բարձրացում,<br>- արտահանման ծավալների աճ 30 %-ով,<br>- միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ, վերապատրաստված առնվազն 50 մասնագետ,<br>- միջազգային ճանաչելիություն ունեցող և ոլորտը կարգավորող կառույցին անդամակցում,<br>- տեղեկատվության հասանելիություն կառույցին անդամակցող երկրների վերաբերյալ: |
| 114 | «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ և ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br>**1.** Անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2. առաջնահերթության, 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ պարբերությունների դրույթների իրականացման անհրաժեշտությամբ:<br>Միջոցառման իրականացման նպատակներն են՝<br>1) հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների, օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ |

| | |
|---|---|
| | վտանգավոր ու պարտադիր ծանուցման ենթակա վարակիչ հիվանդությունների Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցման կանխարգելումն ու վերացումը,<br>2) թռչնաբուծության ոլորտում արտադրական գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման արդյունքում թռչնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով պարենային ապահովության մակարդակի բարձրացումը, ոլորտի ինտենսիվացմանը և տեխնիկական վերազինմանն աջակցելը և գյուղական ազգաբնակչության եկամուտների ավելացմանը նպաստելը, թռչնամսի տեղական արտադրանքի ծավալների ավելացումը և ինքնաբավության մակարդակի բարձրացումը,<br>3) հանրապետությունում տավարաբուծության զարգացման, բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված կենդանիներ աճեցնելու, նախիրները որակյալ կազմով համալրելու և տավարի մսի ու կաթի արտադրական ծավալներն ավելացնելու գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ բարձր մթերատու զտացեղ կենդանիներով համալրված և երկարատև տոհմասելեկցիոն աշխատանքների արդյունքում ձևավորված տոհմային կորիզ ունեցող տավարի արժեքավոր նախիրներ, որի նպատակով անհրաժեշտ է խթանել բարձր արտադրատնտեսական հատկանիշներով օժտված տոհմային կենդանիների հանրապետություն ներկրմանը, ինչն իր հերթին կնպաստի հանրապետությունում տավարաբուծության վարման ավանդական տեխնոլոգիական գործընթացի աստիճանաբար ինտենսիվացմանը,<br>4) «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» շրջանակներում հիմնադրված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին աջակցություն՝ գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների տրամադրման միջոցով: Շահառու համայնքների արոտներում ջրարբիացման համակարգերի, փարախների և հովվի տնակների կառուցում:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Սահմանված կարգով անհրաժեշտ քանակի կենսապատվաստուկների, ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև անասնաբուժական պարագաների ձեռքբերումը, վերջիններիս տրամադրումը ծառայություններ մատուցող մասնագետներին, հանրապետությունում իրականացվում են ամենամյա հակաանասնահամաճարակային կանխարգելիչ պարտադիր միջոցառումների շրջանակներում:<br>2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 4406374 գլուխ թռչուն, որից ածան հավ՝ 2628110, արտադրվել է թռչնի միս (սպանդային զանգվածով)՝ 9.7 հազար տոննա, ինքնաբավության մակարդակը կազմում է 27 %, տարեկան ներկրվում է շուրջ 35 հազար տոննա թռչնամիս:<br>Ներկայումս ստեղծված շուկայական պայմաններում այն է՝ հանրապետություն ներկրվող համեմատաբար ցածրարժեք թռչնամսի առկայությունը բացասաբար է անդրադառնում տեղական՝ առավել բարձրորակ թռչնամսի արտադրանքի մրցունակության վրա: Հանրապետության թռչնաֆաբրիկաները գործում են իրենց արտադրական կարողությունների 20-30 %-ի սահմաններում, այնուամենայնիվ թռչնամսի արտադրության ծավալների ավելացման նախադրյալներ ստեղծելու պարագայում հնարավոր կլինի ինքնարժեքի նվազեցման հաշվին բարձրացնել մրցունակությունը՝ տեղի արտադրողների շուկան դարձնելով առավել մրցունակ:<br>Անասնագլխաքանակի մասնատումը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրել են անասնագլխաքանակի և անասնաբուծական մթերքների և հումքի արտադրության ծավալների և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատմանը, այլև տարաբնույթ խնդիրներ են ստեղծել լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման գործընթացում:<br>Առկա խնդիրներից են՝<br>- համաշխարհային դասական ցեղերի ներկրման միջոցով հանրապետությունում բուծվող տոհմային տեսանկյունից ցածրարժեք կենդանիների ցեղայնության բարելավումը,<br>- հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների առկա գլխաքանակում տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացումը,<br>- կաթնային, մսային և կաթնամսային տավարաբուծության զարգացումը,<br>- կովկասյան գորշ ցեղի գենոֆոնդի պահպանումը,<br>- բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը (արոտավայրեր, խոտհարքներ, բնական կերահանդակներ),<br>- կաթի և մսի արտադրության ծավալների ավելացումը, տոհմանյութի արտադրության համար նախադրյալների ստեղծումը:<br>Կարևորագույն խնդիր է աջակցությունն ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող լեռնային և սահմանամերձ համայնքներին, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում, իսկ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը |

և իրականացնելու արոտաօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կառավարվում է համայնքներում ստեղծված արոտօգտագործողների միավորումների կողմից:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

2018 թվականին պատվաստումների ծրագրի շրջանակներում նախատեսում է իրականացնել թվով 9.0 մլն միջոցառում, որն իր մեջ ներառում է 3 ախտորոշիչ՝ բրուցելոզ, տուբերկուլինիզացիա, լեյկոզ, 8 կանխարգելիչ՝ սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելյոզ, հանգուցավոր մաշկաբորբ, ոչխարների բրադզոտ, խոզերի դասական ժանտախտ, թռչունների կեղծ ժանտախտ և մեղուների վարրոատոզ հիվանդության դեմ 1 բուժ-կանխարգելիչ միջոցառում: Ծրագիրը շարունակվելու է հետագա տարիներին:

Թռչնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- թռչնաբուծության բնագավառում առկա ներուժի՝ արտադրական կարողությունների, չօգտագործվող ենթակառուցվածքների, ինչպես նաև աշխատանքային և գիտատեխնիկական ռեսուրսների լիարժեք և արդյունավետ օգտագործում,
- թռչնամսի տեղական արտադրության մրցունակության բարձրացում,
- տեղական արտադրանքի արտադրական ծավալների ավելացմանն ուղղված պետական աջակցության քաղաքականության ներդրում,
- թռչնաբուծական տնտեսությունների տեխնիկական վերազինման և ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման աջակցության ցուցաբերում:

Եվրոպական և ԵԱՏՄ երկրներից տոհմային կենդանիների ներկրման խթանման նպատակով կմշակվի մեխանիզմ ներկրվող կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման համար:

Շահառու համայնքներում կբարձրանա անասնապահության արդյունավետությունը (կաթնատվությունը), կավելանա մսուրային շրջանի համար կուտակվող անասնակերի քանակը, կբարելավվեն գյուղամերձ և հեռավոր դեգրադացված արոտները և դրանց արդյունավետ կառավարումը:

**2.** Կարգավորման առարկան

Միջոցառման շրջանակներում իրականացված ծրագրերի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է պատվաստված վարակամերժ անասնագլխաքանակ, որի արդյունքում պահպանվում է կայուն անասնահամաճարակային իրավիճակ:

Տեղական թռչնամսի արտադրության կազմակերպում, թռչնամսի ինքնաբավության մակարդակի բարձրացում:

Հանրապետությունում տոհմային կենդանիներով համալրված նախիրների ավելացումը, նախիրների վերանորոգման համար անհրաժեշտ տոհմային մատղաշի տեղում բուծման և վերարտադրության կազմակերպումը, ինչպես նաև տոհմային գործի կատարումը կնպաստեն տավարաբուծության ճյուղի զարգացմանը:

Աջակցություն ընտրված անասնապահական ուղղվածություն ունեցող լեռնային և սահմանամերձ համայնքներին, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է:

**3.** Ակնկալվող արդյունքները

Անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում՝ տարեկան շուրջ 9.0 մլն կանխարգելիչ և ախտորոշիչ հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացում, անասնապահական մթերքների որակի բարելավում, արտադրության ծավալների ավելացում:

Թռչնաբուծության զարգացման ծրագրի իրականացումը կապահովի հավելյալ մինչև 4.5-5.0 հազար տոննա (սպանդային զանգվածով) թռչնամսի արտադրություն, թռչնամսի ներմուծման փոխարինում տեղական արտադրանքով:

Թռչնաբուծական ֆաբրիկաներում կտեղակայվեն արդյունաբերական տեխնոլոգիաներին համապատասխան ժամանակակից սարքավորումներ և հոսքագծեր,

կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Տավարաբուծության զարգացման ծրագրի իրչականացմամբ հանրապետությունում տեղի կունենա տոհմային նախիրների ավելացում, առկա տոհմային կենդանիների հաշվով տոհմային կենդանիների գլխաքանակի 10-12 %-ով աճ, ստացված խառնացեղերի կաթնային մթերատվության ավելացում մինչև 12 %-ով և կերհատուցման բարձրացում, տարեկան շուրջ 450 գլուխ մաքրացեղ տոհմային մատղաշի ստացում, մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Կբարելավվեն և կկառուցվեն նոր համայնքային ենթակառուցվածքներ (արոտների ջրարբիացման համակարգեր, արոտների ճանապարհներ, փարախներ, հովվի համար կացարաններ), կավելանա մսուրային շրջանի համար կերային բազան, անասնապահական մթերքների արտադրողից մինչև սպառող շղթայի օղակներում առկա խնդիրները համակարգված լուծում կստանան, արդյունքում՝ անասնապահության ճյուղում

| | |
|---|---|
| | ակնկալվում է առավել բարձր ավելացված արժեքի ստացումը և անասնապահական տնտեսությունների զարգացումը: |
| 115 | «ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2. առաջնահերթության, 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունների դրույթների իրականացման անհրաժեշտությամբ:<br>Գյուղատնտեսական մթերքների արտադրության, մթերման, վերամշակման և հաջորդ տարվա գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, արտադրական կարողությունների ընդլայնման, նոր արդիական տեխնոլոգիաների կիրառման համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին խիստ անհրաժեշտ է ունենալ բավարար հիմնական և շրջանառու միջոցներ, որի կարևորագույն աղբյուրներից մեկը կարող է հանդիսանալ նաև տոկոսադրույքների սուբսիդավորմամբ մատչելի նպատակային վարկերի տրամադրումը:<br>Գյուղատնտեսության զարգացման համար, որոշակի փուլում, կարևորվում է վարկավորման նպատակային ծրագրերի մեխանիզմների վերանայմամբ նպաստել՝<br>1) վարկերի մատչելիության բարձրացմանը,<br>2) տնտեսությունների խոշորացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, տնտեսավարողների ուսուցմանը:<br>Գյուղատնտեսության մեքենայացման ներկա վիճակի գնահատումը ցույց է տալիս, որ ոլորտում առաջնահերթ խնդիր է գյուղատնտեսության տեխնիկական վերազինման նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը, խնդրի վերաբերյալ նոր մոտեցումների և մեխանիզմների կիրառմամբ պետական աջակցության քաղաքականության իրականացումը:<br>Միջոցառման իրականացման հիմնական նպատակն է՝ հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսավարողների կարողությունների ընդլայնմանը, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, փոքր գյուղացիական տնտեսություններում շրջանառու միջոցների համալրման համար հնարավորությունների ընդլայնումանը գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող իրավաբա-նական անձանց տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Միջոցառման մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրա-վաբանական անձինք:<br>Միջոցառման խնդիրներն են՝<br>1) վարկավորման պայմանների սահմանումն ըստ վարկավորման ուղղությունների՝ գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքների, կապիտալ ներդրումների, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, գյուղատնտեսական տեխնիկայի և արդյունաբերական նշանակության սարքավորումների համալրման,<br>2) վարկավորման մեխանիզմների, սուբսիդավորման ձևի ու չափի հստակեցումը,<br>3) գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները վերազինման և շրջանառու միջոցների համալրման կարիքների բավարարումը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վարկավորման պայմանների, մասնավորապես՝ վարկավորման ժամկետների, տրամադրվող վարկի գումարի ավելացման, սուբսիդավորվող տոկոսադրույքի մեծածցմամբ նախատեսվում է ապահովել՝<br>– վարկերի մատչելիության մակարդակի էլ ավելի բարձրացումը,<br>– վարկերի նպատակաուղղումը տնտեսությունների խոշորացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, տեխնիկականն հագեցվածության բարձրացմանը, տնտեսավարողների ուսուցմանը,<br>– վարկավորման ժամկետների ավելացումը,<br>– վարկային միջոցների արդյունավետ տեղաբաշխումը,<br>– տրամադրվող վարկերի արդյունավետության գնահատումը:<br>Նշված պայմանների ապահովմամբ է պայմանավորված վարկիերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը: |

| | |
|---|---|
| | 2. Կարգավորման առարկան<br>Միջոցառման իրականացմամբ նախատեսում է վարկավորման պայմանների սահմանումն ըստ վարկավորման ուղղությունների, վարկավորման մեխանիզմների, սուբսիդավորման ձևի ու չափի հստակեցման, լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում կբարձրանա ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակը, ինչը կխանգեցնի համախառն արտադրանքի աճին, էականորեն կնվազեն բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը, կբարձրանա գյուղատնտեսության ոլորտի ներդրումային գրավչությունը, կընդլայնվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունները, սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան կիրականացվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման աշխատանքները, հնարավորություններ կապահովվեն ագրոտեխնիկական պահանջների կատարման, անասնապահությունում գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման, արտադրության արդյունավետության բարձրացման համար, կստեղծվեն հնարավորություններ գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման, տնտեսությունների խոշորացման, վարկառուների ռեեստրի վարման միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտման համար:<br>Նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար, որոշակիորեն կբարձրանա գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակը, տնտեսապես կամրապնդվեն շահառու գյուղացիական տնտեսությունները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար:<br>5-ից 7 տոկոսով կբարձրանա պտուղբանջարեղենային պահածոների և գինեգործական արտադրանքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան արտադրության ու արտահանման ծավալները, ինչը դրականորեն կանդրադառնա նոր աշխատատեղերի ստեղծման, ոլորտում զբաղվածների եկամուտների ավելացման և արտաքին ապրանքաշրջանառության բարելավման վրա, յուրաքանչյուր տարի մթերող ընկերություններին կհատկացվի 3% տոկոսադրույքով շուրջ 17.8 մլրդ դրամի շրջանառու միջոցներ:<br>Փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման արդյունքում կբարձրանա վարկունակ պահանջարկի մակարդակը, սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան կիրականացվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման աշխատանքները, հնարավորություններ կապահովվեն ագրոտեխնիկական պահանջների կատարման, արտադրության արդյունավետության բարձրացման համար. տոկոսադրույքի սուբսիդավորմամբ մատչելի վարկերից տարեկան կօգտվի շուրջ 25 հազար գյուղատնտեսությունում տնտեսավարող փոքր տնտեսություն: |
| 116 | «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2 առաջնահերթության, 1-ին պարբերության դրույթների իրականացման անհրաժեշտությամբ: Ծրագիրը մշակվել հիմք ընդունելով «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլ 13-ի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգ սահմանելու մասին» N 363–Ն, 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն և 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվական հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշումների դրույթները:<br>Ծրագրի նպատակն է՝ պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման խթանումը և կարողությունների հզորացումը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղատնտեսական կոոպերացիան կարող է համակարգել գյուղմթերքի արտադրության, սպասարկումների, իրացման և մատակարարման գործընթացում |

տարբեր գործառույթներ: Կոոպերացիայի սկզբունքների արդյունավետ կիրառումն ու օգտագործումը կնպաստի հանրապետության ագրարային ոլորտի խնդիրների հանգուցալուծմանն ու գյուղատնտեսության հետագա զարգացմանը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը և արդյունավետ գործունեությանը ներկայումս խոչընդոտում են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, մասնավորապես՝ կոոպերատիվ գաղափարախոսության իրազեկմանն ու ագրոպարենային համակարգում արդիական տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ներդրմանն ուղղված խորհրդատվական և տեղեկատվական համակարգերի անկատարությունը, կոոպերատիվների ձևավորման համար բարենպաստ իրավական և տնտեսական դաշտի ձևավորման դանդաղ ընթացքը, հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և կառավարման դեռևս ցածր արդյունավետությունը և այլն: Ստեղծված իրավիճակում, կարևորվում է պետական ակտիվ աջակցությունն ու պետական կարգավորման մեխանիզմների կիրառումը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

1. Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումներն (ուղղություններն) են՝

1) խորհրդատվության, ուսուցման և տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովում՝ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած պահանջարկի համաձայն, որը կներառի՝

ա. գյուղատնտեսական կոոպերատիվների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ կոոպերատիվի կարևորության, սկզբունքների, առավելությունների և առանձնահատկությունների, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի վերաբերյալ՝ նախատեսելով տեղեկատվական նյութերի (ուղեցույցներ, տեսանյութեր, հեռուստահաղորդումներ և այլ) տրամադրում և այցելություններ՝ տնտեսական բարձր արդյունավետությամբ գործող կոոպերատիվներ,

բ. հաշվապահների վերապատրաստման դասընթացներ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների, կարգի և հաշվետվությունների կազմման վերաբերյալ,

2) ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում.

նշված միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով (այսուհետ՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր) գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվեն 3 % տոկոսադրույքով: Գյուղատնտեսական կոոպերատիվների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել շուրջ 25 դասընթաց:

2. Կարգավորման առարկան

Կոոպերատիվներին աջակցության մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանում, գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացում:

3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը խթանելու համար: Կբարձրանա գյուղացիական տնտեսավարողների իրազեկվածության մակարդակը, գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը, տնտեսավարողների մրցունակությունը և այլն: Խորհրդատվական ծառայություններից կօգտվի շուրջ 500 տնտեսավարող: 2018-2022թթ. վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում մատչելի վարկեր կտրամադրվեն շուրջ 100-150 տնտեսավարողի:

117 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.** Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության ծրագրի 6.4.2. առաջնահերթության, 1-ին պարբերության դրույթների իրականացման անհրաժեշտությամբ:Գյուղատնտեսության հետագա զարգացման ապահովման գործում մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության համակարգված

| | |
|---|---|
| | քաղաքականության իրականացման անհրաժեշտությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության դրույթներում: Գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպման կարևորությունը իր արտացոլումն է գտել ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրում (հավելվածի «Գյուղատնտեսություն» բաժնի 6-րդ կետի «գ.» Ենթակետ), ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշման (N 2 հավելվածի 24-րդ կետի 5-րդ ենթակետ) դրույթներում: ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման հավելվածի 3.5. «Գյուղատնտեսություն» բաժնում ընդգրկված միջոցառումների, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության ընթացիկ և նախատեսվող ծրագրերի իրականացումը պահանջում է գիտելիքների և հմտությունների հետևողական կատարելագործում՝ ուսուցման և խորհրդատվություն միջոցով: Ծրագրի նպատակն է՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության արդյունավետ վարման և գյուղատնտեսության վերաբերյալ արդյունավետ խորհրդատվության տրամադրումը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս շարունակում է հրատապ մնալ ժամանակակից ագրոտեխնիկական կանոնների և տեխնոլոգիական նորարարությունների կիրառման ցածր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ֆիզիկական անձանց խմբային դասըթնացների մասնակցության հետաքրքրվածության պակասը:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ գյուղատնտեսության վարման ուղղությամբ մատուցվող խորհրդատվության տարածման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացում, գյուղատնտեսության ոլորտում մշակված քաղաքականության իրականացման օժանդակություն: Գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և միջազգային փորձի հասանելիության բարձրացում, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության համակարգված քաղաքականության իրականացում: Ֆիզիկական անձանց դասընթացների հետաքրքրվածության բարձրացման հետ կապված ֆերմերային տնտեսությունների հետ աշխատանքի արդյունքում կիրականացվեն նրանց գյուղատնտեսական թեմաների ուղղվածությամբ կարիքների բացահայտում, որը կնպաստի հետաքրքրվածության բարձրացմանը:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների սահմանում:<br>**3.** Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունների հզորացում, տնտեսությունների վարման արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության նորարարական տեխնոլոգիաների իրազեկվացության բարձրացում և կիրառություն: Մասնագիտական գիտելիքների և տեղեկացվածության բարձրացում: Գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում և աջակցություն՝ տեղեկատվություն, լրացուցիչ գիտելիք ու հմտություններ փոխանցելու և կարողություններ զարգացնելու միջոցով: Լիզինգի ծրագրի շրջանակներում ձեռք բերված տեխնիկայի առկայության բացահայտում: Վարկերի ծախսման ուղղությունների բացահայտում: Ըստ մարզերի և ըստ ուղղությունների ներդումների վերլուծությունների իրականացում: |
| 118 | «ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br><br>**1.** Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-րդ հոդվածի 2-րդ մասի և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ու 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի պահանջներով:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2319-Ն, N 2305-Ն, 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1416-Ն որոշումների կիրարկումն առաջացնում է բացեր, մի շարք խնդիրներ, բացի այդ որոշմամբ սահմանված կարգում կան անհամապատասխանություններ, այդ թվում՝ տեխնիկական բնույթի, որոնք նպաստում են փորձաքննության թերի կատարմանը կամ սահմանում են ոչ հավասար խաղի կանոններ տարբեր տնտեսավարողների միջև, ինչը թույլ է տալիս, որ փորձաքննություն կատարող մի տնտեսավարող սուբյեկտը թերի փորձաքննություն կատարի և վերջնական կամ լիարժեք որևէ ախտորոշում չկատարի՝ կասկածելի բոլոր դեպքերը ուղղորդելով փորձաքննություն կատարող պետական կազմակերպություն, որը կատարում է լիարժեք փորձաքննություն, ախտորոշում, ներառյալ հաստատում կամ հերքում: Գործող որոշմամբ սահմանված չէ փորձաքննության իրականացման գործընթացում անհրաժեշտ նմուշառման ակտը: Որոշման մի շարք դրույթներ ունեն վերախմբագրման և հստակեցման կարիք, ինչպես շարահյուսության, այնպես էլ իմաստային և կիրարկման առումով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է վերանայել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2305-Ն որոշումը, հստակեցնել ու պարզեցնել բոլոր խնդրահարույց կամ հակասական դրույթները, առավել դյուրին դարձնելով անասնաբուժասանիտարական փորձաքննության գործընթացը և այդ գործընթացում ներգրավված կողմերի գործունեությունը:

Որոշումների նախագծերիի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի, «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է առկա օրենսդրական կարգավորման բացի լրացման անհրաժեշտությամբ: Ներկայումս «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն իրավասու է սահմանել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիան նշանակման կարգը:

Արդյունքում նշանակված նշված ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կասեցման կամ դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքը բացակայում է:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1679-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-րդ հոդվածի 2-րդ և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասերով՝ համաձայն որոնց վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների վերահսկողական միջոցառումները պետք է իրականացնի ռիսկի վրա հիմնված համակարգի միջոցով: Ներկայումս անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ստուգումները իրականացվում են առանց հաշվի առնելու օբյեկտների ռիսկայնության աստիճանը, քանի որ դեռևս չկան ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնության աստիճանը որոշող ընդհանուր չափանիշները: Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ծառայությունը անասնաբուժության և բուսասանիտրիայի ոլորտների ստուգումները կնպատակաուղղի դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են, ինչպես նաև կապահովի սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների և պահանջների ներդրման գործընթացը:

ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված որոշ դրույթներ հակասում են «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքին և ԵԱՏՄ օրենսդրությանը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախագծերով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2305-Ն, N 2319-Ն, 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1416-Ն որոշումների մեջ սահմանել հավասար խաղի կանոններ և պայմաններ տարբեր սուբյեկտների միջև (մասնավոր և պետական)՝ անկախ նրանց կարգավիճակից և պատկանելիությունից:

Անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնելու համար սահմանվում է փաստաթղթի ձև՝ նմուշառման ակտ, որը կհավաստի թե նմուշառումը, թե փորձաքննության նպատակով նմուշների ուղարկումը կամ ներկայացումը, այդ թվում՝ ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով կատարվող

| | |
|---|---|
| | նմուշառումը՝ ապահովելով վտանգավոր մթերքի բացահայտման հետագծելիությունը: Սահմանվել է նաև անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության տրման ժամկետ: Մի շարք դրույթներ ինչպես շարահյուսության, այնպես էլ իմաստային առումով վերախմբագրվել և հստակեցվել են, ինչը պայմանավորված է նաև 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունմամբ:<br>Հիմք ընդունելով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալը՝ մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծեր, որով նոր խմբագրությամբ է շարադրվել կաթի և կաթնամթերքի, մեղրի, ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգերը:<br>««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ կառավարությանը վերապահվում է ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կասեցման և դադարեցման կարգի սահմանման լիազորությունը:<br>Փոփոխության նպատակն է ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կասեցման և դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքի ամրագրումը:<br>Արդյունքում հնարավոր կլինի նշանակումից հետո որոշակի չափորոշիչների անհամապատասխանության դեպքում կասեցնել կամ դադարեցնել ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակումը:<br>«Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» նախագծով սահմանվում են անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունները, ռիսկայնության ընդհանուր չափանիշները, որոնց կիրառմամբ ձևավորվում են տվյալների բազայի համար տեղեկատվություններ: Ռիսկերի հիման վրա համակարգի ներդնումը և կիրառումը կապահովի ծառայության կողմից անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ստուգումների արդյունավետ և նպատակային իրականացումը:<br>ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կվերացվեն նշված իրավական ակտի հակասությունը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքին և ԵԱՏՄ օրենսդրությանը, կհստակեցվի նաև որոշմամբ սահմանված գործողությունների քայլերի հաջորդականությունը և ժամկետները:<br><br>**2.** Կարգավորման առարկան<br>Կարգերով կարգավորվում են գյուղատնտեսական խոշոր և մանր եղջերավոր կենդանիների չփաթեթավորված և չմակնշված հում կաթի, հում զտած կաթի, հում կաթի սերի, հում սերուցքի, մածունի, պանրի, թթվասերի, կաթնաշոռի, կարագի, թանի, կեֆիրի, յոգուրտի, պաղպաղակի անասնաբուժասանիտարական փորձաքննության հետ կապված հարաբերությունները՝ մթերման, վերամշակման, վաճառքի կամ իրացման գործընթացներում, չփաթեթավորված և չմակնշված բնական մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները, պաղեցված, սառեցված, աղադրված, հում ապխտած չվերամշակված ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգի ու պայմանների հետ կապված հարաբերությունները՝ ջրային կենդանիների և դրանցից ստացված արտադրանքի արտադրության, մթերման, վերամշակման, վաճառքի կամ իրացման գործընթացներում:<br>««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորման առարկան ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կասեցման դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքի սահմանումն է:<br>«Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» նախագծով սահմանվում են անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունները, ռիսկայնության ընդհանուր չափանիշները, որոնց կիրառմամբ ձևավորվում են տվյալների բազայի համար տեղեկատվություններ: Ռիսկերի հիման վրա համակարգի ներդնումը և կիրառումը կապահովի ծառայության կողմից անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների ստուգումների արդյունավետ և նպատակային իրականացումը:<br>ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կարգավորման առարկան |

սահմանվում է բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների համար տրվող բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքին և ԵԱՏՄ օրենսդրությանը համապատասխան:

**3.** Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունումը թույլ կտա անասնաբուժասանիտարական փորձաքննություն կատարողների համար սահմանել խաղի հավասար կանոններ, բարձրացնել փորձաքննություն կատարողների պատասխանատվությունը և խուսափել որոշման բացերից օգտվելու առիթից, բացառել որոշման տարբեր դրույթների հակասությունները և թերությունները, որոշման տարբեր դրույթների ոչ միատեսակ ընկալումը և կիրարկումը, այդ գործընթացում կրճատել վարչարարությունը և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված դրսևորումները, վերանայել խնդրահարույց դրույթները, ունենալ նմուշառման ակտ, որը ապահովում է նաև նմուշների ուղեկցումը:

««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում կամրագրվի ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կասեցման և դադարեցման կարգի սահմանման իրավական հիմքը:

«Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» նախագծի ընդունմամբ ակնկալվում է անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ռիսկերի գնահատման մեթոդաբանությունների և ռիսկայնության չափանիշների ընդհանուր բնութագրերի սահմանում, ինչպես նաև ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորում, որի արդյունքում իրականացվող պետական վերահսկողության գործընթացը դառնում է արդյունավետ և հետևողական, խնայվում են ռեսուրսները, ինչպես նաև չեն խոչընդոտվում տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

«ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կվերացվեն նշված իրավական ակտի հակասությունը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքին և ԵԱՏՄ օրենսդրությանը, կիստակեցվի նաև որոշմամբ սահմանված գործողությունների քայլերի հաջորդականությունը և ժամկետները:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

119 *Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում միջոցառման*

*1.1 Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագրի մշակման վերաբերյալ*

*1.2 Մշակել Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիր*

1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը:

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 581-Ա որոշման 6.5 «Տնտեսական այլ ուղղություններ» բաժնի և ՀՀ վարչապետի 2017 թվականի ապրիլի 10-ի «Հաստատել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագրով նախատեսված երկրորդ մասնաբաժնի ստացման համար անհրաժեշտ գործողությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N353-Ա որոշման հավելվածի 4-րդ կետի 14-րդ ենթակետի դրույթներից: Հայաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացված մոդելի անցնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ներքին շուկայի կարիքներով, ինչպես նաև կարևորվում է միջսահմանային առևտրի հնարավորություններն օգտագործելու համար: Միջսահմանային առևտուրն կընձեռնի փոխշահավետ հնարավորություններ և կնպաստի Հայաստանի ներքին շուկայի արդյունավետության բարձրացմանը:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս մոդելը կիրառության մեջ է դրվել 2004 թվականին և հենվում է "միակ գնորդ (վաճառող)" մոդելի վրա, որի դեպքում էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին է վերապահված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում արտադրողներից էլեկտրաէներգիա գնելու և այն սպառողներին վաճառելու իրավունքը: Ընդ որում, էլեկտրաէներգետիկական շուկան ինչպես մեծածախ այնպես էլ մանրածախ հատվածում ամբողջությամբ կարգավորվում է, կարգավորվում է նաև

էլեկտրաէներգիայի ներկրումը և արտահանումը: Զարգացած և զարգացող շատ երկրներում էլեկտրաէներգետիկական շուկաներն արդեն իսկ ազատականացված են և ուղենիշ ունեն դեպի լիարժեք մրցակցային շուկայի կառուցվածք: Միևնույն ժամանակ, Էներգետիկայի մասին ՀՀ օրենքը, որը գործում է 2001 թվականից, վերանայման կարիք ունի ոլորտում առկա մարտահրավերները հասցեականացնելու և օրենսդրական մակարդակում դրանց լուծումներ առաջադրելու նպատակով: Օրենքում անհրաժեշտ է հստակեցել պետական քաղաքականության սկզբունքները, պետական տարբեր մարմինների և ոլորտում գործունեություն իրականացնող անձանց իրավասությունների շրջանակը, էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա կառուցվածքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև առաջադրել ազդակներ էլեկտրաէներգետիկական համակարգի հետագա կայուն զարգացման համար:

Ներկայիս էլեկտրաէներգետիկական շուկան հենվում է միայն էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման տարեկան ծավալների կանխատեսման վրա և շուկայի մասնակիցների համար չի սահմանում պատասխանատվություն՝ այդ ծավալների շեղումների դեպքում: Արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված և փաստացի ծավալների տարբերության պատճառով առաջացած ռիսկերը հավասարակշռվում են սպառողներին առաքվող էլեկտրաէներգիայի սակագների միջոցով, ներառելով նաև էլեկտաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի՝ այդպիսի ռիսկերի հավասարակշռման արժեքը: Սակագնային կարգավորումը առավելապես իրականացվում է «շահույթի նորմայի կարգավորում» սկզբունքի վրա՝ յուրաքանչյուր տարի համակարգի ընկերությունների և ծառայություններ մատուցողների սակագներն ամբողջությամբ վերահաշվարկելու միջոցով: Այս սկզբունքը բավարար խթաններ չի ստեղծում կարգավորող ընկերությունների ծախսերի և ներդրումների արդյունավետության բարձրացման համար:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների մշակում:

2. Կարգավորման առարկան.

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացում և միջպետական առևտրի զարգացում:

3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը.

Կսահմանվեն էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանն ու միջպետական առևտրի զարգացմանը նպաստող միջոցառումներ և դրանց կատարման կոնկրետ ժամկետներ, որոնց իրականացումը թույլ կտա ազատականացնել ներքին էլեկտրաէներգետիկ շուկան և խթանել փոխշահավետ միջսահմանային առևտուրը, ինչը կնպաստի ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

*<u>1.2 «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ</u>*

**1.** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը:

Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի զարգացման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» /այսուհետ՝ Ծրագիր/ արձանագրային 32-րդ որոշման 10-րդ կետի հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթներից:

Քանի որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 100-Ն օրենքի ընդունմամբ առաջացավ անհրաժեշտություն Ծրագրի միջոցառումների համապատասխանեցում վերոնշյալ օրենքի դրույթներին, ներկայում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել որոշման նախագիծ, որով փոփոխություններ է նախատեսվել Ծրագրում, որով էլ «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման ժամկետ սահմանվել է 2022 թվականը:

1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում բնագավառը կարգավորվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ ՀՕ-148 օրենքով, որի նոր լրացումներն ու փոփոխությունները ուժի մեջ մտան 2018 թվականի հուլիսի 1-ից: Համաձայն Օրենքի անցումային դրույթների, այն ամբողջությամբ կսկսի գործել 2020 թվականից, որից հետո պարզ կլինեն օրենքում առկա խնդիրները:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Էներգետիկայի մասին ՀՀ նոր օրենք՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների ներդման ընթացքում առաջ եկած խնդիրները:

**2.** Կարգավորման առարկան

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի կարգավորումների սահմանում:

| | |
|---|---|
| | **3.** Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի իրավական դաշտի կատարելագործում: |
| 120 | *<u>Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում</u>*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի» 8-րդ բաժնի 4-րդ մասի և 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1բ) կետի դրույթներից:<br>Հաշվի առնելով, որ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը հետաձգվում է (նախատեսվում էր անցկացնել ներդրողների կոնֆերանս 2011 թվականի ապրիլին, սակայն 2011 թվականի մարտին Ֆուկուսիմա ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարի պատճառով հետաձգվել է ներդրողների կոնֆերանսի անցկացումը), իսկ գործող Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվում 2016 թվականի սեպտեմբերին,<br>ՀՀ կառավարությունը որոշել է երկարաձգել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը (2012 թվականի ապրիլի 19-ի թիվ 461-Ն ՀՀ կառավարության որոշում):<br>2014 թվականի մարտի 27-ին ՀՀ կառավարության 12-րդ նիստի 11-րդ հարցով հավանության է արժանացրել Հայկական ԱԷԿ-ի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագիրը:<br>2015 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրված Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրերը: Համաձայն համաձայնագրի իրականացվում են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքները:<br>**2018 թվականի ընթացքում կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի կառավարման և պաշտպանական համակարգի արդիականացում, չորրորդ տուրբոագրեգատի երկու կոնդենսատորների փոխարինում, Տ-3 և Տ-4 տրանֆորմատորների փոխարինում, երրորդ տուրբոգեներատորի փոխարինում, երրորդ տուրբոագրեգատի արդիականացում և Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:**<br>1.2 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>**ՌԴ-ի աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքվել են՝ 2014թ. դեկտեմբերի 20-ին համագործակցության մասին և 2015թ. փետրվարի 5-ին վարկի տրամադրման մասին համաձայնագրերը (300 մլն ԱՄՆ դոլար, որից 270 մլն ԱՄՆ դոլար վարկ և 30 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ):**<br>**2014թ. դեկտեմբերի 20-ին համագործակցության մասին կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կողմերը նշանակել են լիազորված կազմակերպություններ՝ հայկականան կողմից՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015թ. մարտի 13-ի № 01/20.2/1197-15 գրությամբ նշանակվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ռուսական կողմից՝ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի 2015թ. հունվարի 14-ի № 1-1/431 գրությամբ նշանակվել է «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ն:**<br>1.3 առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>2014 թվականի մարտի 27-ին ՀՀ կառավարության հավանության է արժանացել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է համաձայն սահմանված պլան ժամանակացույցի, հաշվի առնելով նաև Ծրագրի իրականացման լիազորված կազմակերպությունների միջև կնքված Լրացուցիչ Համաձայնագրերը:<br>2. Կարգավորման առարկան<br>Պատշաճ մակարդակով և ժամանակին Ծրագրի միջոցառումների իրականացում: |

| | |
|---|---|
| | 3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>**Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու դեպքում ակնկալվում է արդիականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի երրորդ տուրբոագրեգատի արդիականացման ավարտ և չորրորդ տուրբոագրեգատի երկու կոնդենսատորների փոխարինում: Կատարված արդիակացումները հնարավորություն կընձեռեն մեծացնել Հայկական ԱԷԿ-ի տուրբինային արտադրամասի նախագծային հզորությունը:** |
| 121 | *<u>Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նպատակով միջուկային էներգետիկական միջազգային շուկայում առկա նոր միջուկային էներգաբլոկների առաջարկների ուսումնասիրություն</u>*<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի» 48-րդ կետի և 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի կատարումն ապահովելուց: Հաշվի առնելով, որ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ է շուրջ 10 տարի ժամանակահատված՝ ներառյալ ներդրողների հետ բանակցություններ, նախագծում, կառուցում և շահագործման հանձնում, անհրաժեշտ է հնարավորինս շուտ ձեռնարկել համապատասխան միջոցներ:<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայկական ատոմակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքներն արդեն մեկնարկել են: Այս հանգամանքը հնարավորություն է ստեղծում մեկ անգամ ևս քննարկել նոր ԱԷԿ-ի կառուցման ծրագիրը, հաշվի առնելով Հայաստանի էներգահամակարգի ռեժիմային գործոնները և Հայկական էներգահամակարգում տնտեսական և տեխնիկական բնույթի հանգամանքները: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում են նավթի և գազի պաշարները և միջազգային շուկայում միջուկային վառելիքի համեմատաբար կայուն գները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային դիրքը և հարևան երկրների ոչ կառուցողական քաղաքականությունը (փակ սահմաններ՝ հետևաբար սահմանափակ հնարավորություններ) ՀՀ-ն էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի պահպանումը և ամրապնդումը հնարավոր է ապահովել միայն նոր միջուկային էներգաբլոկի կառուցմամբ:<br>ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրով առաջարկվում է կանոնակարգել ծրագրում ներգրավված ՀՀ գերատեսչությունների, կազմակերպությունների, ինչպես նաև ներդրողների համատեղ գործունեությունը: Ծրագիրը իրենից ներկայացնում է գործողությունների և միջոցառումների ամբողջականություն և հիմնված է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաջարկների և ստանդարտների վրա:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>2009թ. դեկտեմբերի 12-ի ընդունված «ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-192-Ն), 2013թ. հոկտեմբերի 23-ի 182-ՆԿ ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը» և 2014թ. հուլիսի 31-ի թիվ 836-Ն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը» փաստաթղթերով ռազմավարական խնդիր է դրված ՀՀ-ում շահագործման հանձնել նոր միջուկային էներգաբլոկ:<br>Այն հնարավորություն կտա նախ և առաջ ապահովել երկրի անհրաժեշտ էներգետիկ անվտանգության մակարդակը և իրականացնել պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում:<br>2. Կարգավորման առարկան<br>Կմշակվի ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիր, որով կկարգավորվի ծրագրում ներգրաված ՀՀ գերատեսչությունների և կազմակերպությունների համատեղ աշխատանքը և այդ աշխատանքների իրականացման համար կսահմանվի համապատասխան ժամանակացույց:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացմամբ կիստակեցեն նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ |

| | |
|---|---|
| | քայլերը (կոնցեպտուալ նախագիծ, ֆինանսավորման սխեմա, ֆինանսավորման աղբյուրներ, ներդրողներին ներգրավելու համար անհրաժեշտ մոտեցումներ և այլն) և վերջիններիս իրականացման պատասխանատու գերատեսչությունները: Հաշվի առնելով միջազգային փորձը՝ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար պահանջվում է շուրջ 7 տարի (ներառյալ նախագծման աշխատանքները), սակայն դա այն պարագայում, երբ հայտնի է ինչ տիպի և ինչ հզորության էներգաբլոկ է կառուցվում՝ այսինքն երբ առկա է կոնցեպտուալ նախագիծը, որի մշակումը նույնպես ժամանակատար է:<br>Նկատի ունենալով վերոգրյալը, ՀՀ էներգետիկ անվտանգության ներկայիս մակարդակի պահպանման և բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիր: |
| 122 | *Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցման միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 581-Ա որոշման 6.5 «Տնտեսական այլ ուղղություններ» բաժնի և ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12 կետի, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի ՆԿ-182-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի 14 կետի 1-ին ենթակետի դրույթներից:<br>Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:<br>1.2 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը կազմում է 300 ՄՎտ:<br>1.3 առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Համապատասխան մարզպետարանների, համայնքների և շահագրգիռ այլ մարմինների հետ հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու ապահովումը:<br>2. Կարգավորման առարկան<br>Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումը և էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Նոր էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում՝ Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: |
| 123 | *Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկի միջոցառման*<br><br>1 Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը<br>ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 581-Ա որոշման 6.5 «Տնտեսական այլ ուղղություններ» բաժնի և ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 13 կետի, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 23-ի ՆԿ-182-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի 14 կետի 1-ին ենթակետի դրույթներից:<br>Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը:<br>1.2 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>1.3 առկա խնդիրների առաջարկվող լուծումները |

| | |
|---|---|
| | Պետական պարտքի վրա ծրագրի ճնշումը մեղմելու և ծրագրի միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) հետ բանակցվել և համաձայնություն է ձեռք բերվել ծրագրի տեխնիկական լուծումների վերանայման և օպտիմիզացման վերաբերյալ: Այդ նպատակով ծրագրի պատվիրատու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ծրագրի խորհրդատուի հետ համատեղ իրականացնում է ծրագրի տեխնիկական լուծումների վերանայման գործընթաց և զուգահեռ դիմել է KfW բանկին հայտարարված մրցույթները դադարեցնելու ու վերանայված տեխնիկական լուծումներով նոր մրցույթներ հայտարարելու վերաբերյալ թույլտվություն ստանալու համար:<br>2. Կարգավորման առարկան<br>Էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ /ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ/ փոխշահավետ համագործակցության զարգացումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Առաջին փուլի արդյունքում՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի: |
| 124 | <u>*Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրական հզորությունների ստեղծման միջոցառում*</u><br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 581-Ա որոշման հավելվածի 6.5 կետի դրույթներից:<br>1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br><u>Խնդիրները.</u> 2016 թվականին վերականգնվող առաջնային էներգիան կազմել է սպառվող ողջ էներգիայի մոտ 16%: ՀՀ էներգետիկ համակարգի ներկայիս դիվերսիֆիկացման մակարդակը բավարար չի՝ էներգետիկ անկախության անհրաժեշտ աստիճանի ապահովման տեսանկյունից: Վերոգրյալ նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությունը որդեգրել է վերականգնվող էներգետիկայի առավելագույն և արդյունավետ կիրառման սկզբունքը:<br><u>Ներկա վիճակը.</u> 2018 թ. մարտի 21-ին կայացել է ՀՀ-ում Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի համար հայտարարված միջազգային մրցույթի երկրորդ փուլը: Մրցույթի պայմանների համաձայն նվազագույն սակագին է ներկայացրել նիդեռլանդական «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչըս» և իսպանական «ԷՖԷսԷլ Սոլար» ընկերություններից կազմված կոնսորցիումը: Այն կազմում է 4.19 դոլար ցենտ 1 կՎտxժ- ի համար (մոտավորապես՝ 20.11 ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի: 2018թ. հուլիսի 18-ին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում ստորագրվեց «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» ՀՀ կառավարության աջակցության համաձայնագիրը: Պայմանագրի կողմեր են հանդիսանում՝ «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ն (որպես կառուցապատող), «ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԲԻ.ՎԻ. – «ԷՖԷՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ. ԷԼ. ընկերությունները (որպես հովանավոր) և ՀՀ կառավարությունը:<br>Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրին հաջորդող գումարային մոտ 60 ՄՎտ հզորությամբ ևս 5 կայանների կառուցման ծրագրերի համար պատրաստ են նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումները: 2016 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության նիստի 53-37 արձանագրային որոշման համաձայն այդ 5 կայանների կառուցման ծրագրերը նույնպես պետք է իրականացվեն մրցութային կարգով:<br>2017թ. մարտի 30-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «Աքսիոնա Էներգիա Գլոբալ Էս. Էլ.» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանում հողմային էլեկտրակայանների կառուցման ծրագրի մասին: Վերոհիշյալ փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է ՀՀ-ում 100-150 ՄՎտ հզորությամբ էլեկտրակայանների կառուցում: 2017 թվականի դեկտեմբեր ամսին ընկերությունը սկսել է քամու ներուժի գնահատման աշխատանքների իրականացումը: Տեղադրվել են երկու 80 մետր բարձրության քամու ներուժի մոնիթորինգային կայաններ և մեկ «Sodar» համակարգ: Յուրաքանչյուր կայան համալրված է 8 հողմաչափով, 3 հողմացույցով, 2 ջերմա-խոնավաչափով և |

| | |
|---|---|
| | 1 մթնոլորտային ճնշաչափով:<br>ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի №473-Ա որոշմամբ հավանություն է տրվել գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի իրականացման նպատակով հողամասերն առանց մրցույթի՝ վարձակալությամբ «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությանը տրամադրելու հայտին: Արաբական միացյալ էմիրության «Աքսես Ինֆրա Սենթրալ Էյժա Լիմիթեդ» ընկերությունը նախատեսում է ՀՀ-ում կառուցել մինչև 150 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայաններ: Ներկայումս տեղադրվել է և գործարկվել են երկու 80 մետր բարձրության քամու ներուժի մոնիթորինգային կայան:<br>1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է պետության կողմից աջակցություն ցուցաբերել մասնավոր ներդրողներին՝ գործընթացի ողջ ընթացքում ի հայտ եկած խնդիրների բացահայտման արդյունքում ծրագրերի պետական կառավարման լիազորությունների շրջանակներում՝ դրանց լուծում տալու միջոցով:<br>2. Կարգավորման առարկան<br>Մասնավոր ներդրումների ներգրավմամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ ծրագրերի իրականացում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ արտադրական նոր հզորությունների ստեղծման արդյունքում՝ միջնաժամկետ հեռանկարում էներգետիկ համակարգում կստեղծվեն նորագույն և մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրական մոտ 415 ՄՎտ գումարային նոր հզորություններ, այդ թվում շուրջ 115 ՄՎտ գումարային հզորությամբ արևային էներգիայի կիրառմամբ, որոնք զգալիորեն կթեթևացնեն էներգետիկ համակարգում գործող արտադրական հզորությունների բեռը՝ նվազեցնելով կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքներից: Այդպիսով կդիվերսիֆիկացվի ՀՀ տնտեսությունը՝ էներգակիրների մատակարարման (ներկրման և(կամ) արտադրության) այլընտրանքային ուղիների ապահովման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման տեսակետից և կբարձրանա էներգետիկ անկախության աստիճանը:<br>Ակնկալվում է, վերականգնվող առաջնային էներգիան մինչև 2020 թվականը հասցնել սպառվող ողջ էներգիայի 20 տոկոսին, որը ամրագրված է 2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի կողմից հաստատված «Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգում»՝ վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումներում: |
| 125 | *<u>Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին միջոցառման</u>*<br><br>**1.** Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետի և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջներից, որոնց համաձայն **էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է** էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովումը և էներգետիկայի բնագավառում իրականացվող նորագույն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները: Հայաստանի Հանրապետությունում գործող էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի թվում առկա են այնպիսիք, որոնք համաձայն նոր օրենսդրության պահանջների, չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում: Ելնելով վերոգրյալից, ՀՀ էներգետիկայի բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերը «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու դեպքում անհրաժեշտ է մշակել ՀՀ կառավարության նորմատիվ որոշման նոր նախագծեր, նկատի ունենալով, որ էներգահամակարգի ընկերություններն ունեն սեփականության տարբեր ձևեր և դրանք աշխատում են ՀՀ օրենսդրության շրջանակներում, իսկ խնդրո առարկա նորմատիվ ակտերը պարունակում են նաև այնպիսի նորմեր, որոնք պարտադիր են կատարման բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց սեփականության ձևից:<br>Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է սահմանված ժամկետներում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության համաձայնագրով ֆիքսված օրենսդրությանը :<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

| | |
|---|---|
| | Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործող մի շարք տեխնիկական կանոնակարգեր հաստատվել են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, որը ուժը կորցրել է պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Քանի որ համաձայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, սահմանազատվել են ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջները, ապա նշված տեխնիկական կանոնակարգերը նոր օրենսդրությամբ չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և հետևաբար չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Ուստի, անհրաժեշտ է մշակել նոր նորմատիվ իրավական ակտեր, որոնք կհամապատասխանեն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» և 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետերի պահանջներին, ինչպես նաև ԵԱՏՄ ստանձնած պարտավորություններին:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ուժը կորցրած ճանաչել էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգեր և մշակել էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության նոր կանոններ ու պահանջներ:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին:<br>**3.** Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Կսահմանվեն անվտանգության նոր պահանջներ մատակարարների և բնակիչ սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից: |
| 126 | <u>*Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2021-2030 թվականների ազգային ծրագրի մշակման միջոցառման*</u><br><br>**1.** Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի պահանջներից: Հաշվի առնելով էներգետիկ անվտանգության կարևորությունը երկրի տնտեսության զարգացման և ազգային անվտանգության համար, ՀՀ-ը որդեգրել է այն ամրապնդելու և բարձրացնելու քաղաքականությունը և շարունակական քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: ՀՀ կառավարության նոր ազգային ծրագրի մշակումը պայմանավորված է ՀՀ տնտեսական և էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացման, տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդման, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծման և ծառայությունների կազմակերպման, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանն առնչվող հանգամանքներով:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Էներգախնայողության խթանմանն ուղղված հիմնական փաստաթղթերից մեկը Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրն է, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2007թ. № 2 արձանագրային որոշմամբ: Այդ ծրագիրը բխում է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» ենթակետի դրույթից և սահմանում է միջոցառումներ մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածի համար: Ըստ այդ ծրագրի էներգախնայողության խթանման համար սահմանված են գործողություններ տասնամյա հեռանկարում՝ 2011-2020թթ.: Միաժամանակ սահմանված են փուլային մոտեցում՝ այդ գործողությունների և համապատասխան թիրախների վերանայման, դրանց արդյունքների գնահատման, փոփոխված իրավիճակի գնահատման արդյունքում՝ նոր գործողությունների և թիրախների սահմանման նպատակով: Ըստ այդմ, նոր ազգային ծրագրի մշակումը հանդիսանալու է 2011-2020 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ազգային ծրագրի տրամաբանական շարունակությունը՝ հաջորդ տասնամյակի համար:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումներ<br>2021-2030 թվականների հարար նոր ազգային ծարագրի մշակում:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Առաջարկվում է մշակել նոր ծրագիր, որը 2021-2030 թվականների համար կսահմանի նոր ճյուղային միջոցառումներ և թիրախներ:<br>**3.** Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Ազգային ծրագրով 2021-2030 թվականների համար կսահմանվեն նոր ճյուղային միջոցառումներ և թիրախներ, որոնք կօժանդակեն ՀՀ էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը: |

| | |
|---|---|
| 127 | *Հանքարդյունաբերության ոլորտի զարգացում*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հանաքարդյունաբերության ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ախտորոշիչ ուսումնասիրություններ, մշակել Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն (այսուհետ՝ ռազմավարություն), այնուհետև ռազմավարությանը համահունչ իրականացնել օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ: Միջոցառման իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N36-21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի պահանջներից: ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի համաձայն ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը և ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակումը ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի իրավասություններից են: Անհրաժեշտություն կա վերանայելու և ամբողջականացնելու ոլորտին առնչվող գործառույթներ ունեցող պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, ստեղծել օրենսդրական հիմքեր համաձայնեցված և փոխլրացնող գործառույթների համար, ապահովել կարողությունների զարգացում, որը վերաբերում է ինչպես տեխնիկական, այնպես էլ մարդկային կարողություններին:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանալով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կարևոր ոլորտներից մեկը դեռևս չունի հստակ քաղաքականություն և ռազմավարություն, որը թույլ կտա ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ առկա խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծության իրականացում և առաջարկության ներկայացում հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման վերաբերյալ, ռազմավարության մշակում, որում կտրվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող՝ բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները և հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումներ ապահովելու համար իրականացվելիք միջոցառումները:<br>2. Կարգավորման առարկան<br>Հանքարդյունաբերության ոլորտում համապարփակ քաղաքականության ձևավորում և ոլորտում բարեփոխումների իրականացում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար օրենսդրական հենքի մշակում՝ բարենպաստ միջավայրի ձևավորումն ապահովելու նպատակով: |
| 128 | *«ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառումը բխում է ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջներից: Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականից հանդիսանալով ԱՃԹՆ-ն թեկնածու անդամ, պարտավորություն է ստանձնել կատարել ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջները, որի մեջ է մտնում նաև հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ յուրաքանչյուր տարի ազգային զեկույցի կազմումն ու հրապարակումը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարում, որը հնարավորություն կտա դառնալու ԱՃԹՆ-ն անդամ երկիր:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ԱՃԹՆ–ի 2016թ. Ստանդարտի պահանջների կատարման ապահովում:<br>2. Կարգավորման առարկան<br>Հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային |

| | |
|---|---|
| | զեկույցի կազմումը և հրապարակումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Հիմք կդրվի առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծմանը, ինչը խթան կհանդիսանա կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը: |
| 129 | *«Ջրամբարաշինության (Կապսի, Վեդու և Սելավ-Մաստարա ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է 2016 թվականի օգոստոսի 25-ին հավանության արժանացած ՀՀ կառավարության N33-18 արձանագրային որոշմամբ, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ թափանցիկ հարաբերությունների նոր մակարդակի ներդրմանը: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Կապսի, Վեդու, Սելավ-Մաստարա ջրամբարների իշխման տակ ընկած տարածաշրջաններում ձևավորվող մակերևութային ջրահոսքերի ռեժիմի կառավարման բացակայության պատճառով տարեկան շուրջ 60-70 մլն.խոր.մ ջուր չի օգտագործվում հանրապետության տնտեսությունում, մասնավորապես, ոռոգման ոլորտում:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է Կապսի, Վեդու, Սելավ-Մաստարա ջրամբարների կառուցմամբ բարելավել ջրամբարների իշխման տակ ընկած հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար կտնտեսվի շուրջ 20-25 մլն,կՎտ ժամ էլ.էներգիա:<br>2. Կարգավորման առարկան<br>Մակերևութային հոսքի կառավարում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 130 | *«Փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրերի իրականացում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>Ներկայումս ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերը հնարավոր չէ արդյունավետ կառավարել և անհրաժեշտություն է առաջացել ջրի պահանջարկի բավարարման համար կազմավորվող ջրային ռեսուրսները ամբարելու: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br><br>Ջրային կոմիտեն <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկել է հանրապետությունում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները և առանձնացրել առաջնահերթ կառուցման ենթակա 11 ջրամբարներ՝ հիմք ընդունելով նախնական գնահատմամբ տեխնիկատնտեսական նպատակահարմարության ցուցանիշները:<br>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ջրամբարների կառուցմամբ նախատեսվում է բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, |

| | |
|---|---|
| | ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն:<br>2. Կարգավորման առարկան<br>Մակերևութային հոսքի կառավարում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 131 | *«Ոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման ծրագրերի իրականացման ապահովում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ոռոգման ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիությամբ ու արդյունավետության բարձրացմամբ: Միջոցառման իրականացման հիմք է հանդիսանում «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որով սահմանված է ջրային ռեսուրսների մատչելիության ապահովման ուղղությունները:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս ոռոգման համակարգերի մայր, միջտնտեսային և ներտնտեսային ջրանցքներում առկա են վթարային հատվածներ: Համակարգում առկա են նաև ջրամատակարարման մեխանիկական ենթահամակարգեր, որոնք նպատակահարմար է արդիականացնել կամ հնարավորության դեպքում փոխարինել ինքնահոսով:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Անհրաժեշտ է կատարել վերանորոգման և վերականգնման աշխատանքներ, համակարգը դարձնելով անխափան և հուսալի:<br>2. Կարգավորման առարկան<br>Ոռոգման համակարգերի բարելավում, կորուստների կրճատում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կապահովեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: Միաժամանակ՝ ինքնահոս համակարգերի, հեռացնող ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություն կստեղծվի իրականացնելու ինքնարժեքի նվազեցման քաղաքականություն: |
| 132 | *«Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և 2005թ. մայիսի 20-ի <<Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ հանրապետության ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, գրունտային ջրերի մակարդակների կարգավորման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովման նպատակներով, հանրապետության գերխոնավ հողերի տարածքներում սկսած 1950-ական թվականներից առ այսօր կառուցվել է շուրջ 1696.612 կմ դրենաժային ցանց, այդ թվում՝ բաց՝ 1065.662 կմ և փակ՝ 630.95 կմ, որի պահպանման, շահագործման նպատակով էլ պայմանավորված է միջոցառման իրականացումը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ 950 կմ կոլեկտորադրենաժային բաց համակարգեր, որոնց պահպանման և շահագործման համար ըստ նորմատիվի անհրաժեշտ է նվազագույնը 3 տարին մեկ պարբերականությամբ անհրաժեշտ է իրականացնել մաքրման և նորոգման աշխատանքներ:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ՀՀ պետական բյուջեի հատկացումներով հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուր տարի մաքրել և նորոգել շուրջ 180կմ դրենաժային համակարգ (5.5 տարի պարբերականությամբ):<br>2. Կարգավորման առարկան |

| | |
|---|---|
| | Գրունտային ջրերի մակարդակի իջեցում, հողերի մելիորատիվ վիճակի բարելավում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ակնկալվում է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը: |
| 133 | *«Արփա-Սևան» N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 15-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 133-Ն որոշումը՝ անհրաժեշտություն է առաջացել ավարտել Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքները:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Արփա-Սևան ջրատարը բաղկացած է 2 թունելներից: Կեչուտի ջրամբարից N1 թունելով ջուրը տեղափոխվում է Եղեգիս ջրանցույց և Եղեգիս գետի ջրառ կառույցը ընդունում է Եղեգիս գետի հոսքը: N1 թունելով բերված ջուրը ուղղորդվում է N2 թունել, որը ջուրը հասցնում է Սևանա լիճ: Նախատեսված է թունելով տեղափոխել 250մլն/մ$^3$ ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված ներկայումս Սևանա լիճ է տեղափոխվում 110-130մլն/մ$^3$ ջուր:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքների ավարտում:<br>2. Կարգավորման առարկան<br>Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործման և պահպանման իրականացում օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Սևանա լճի մակարդակի բարձրացում, թունելի անխափան աշխատանքի ապահովում: |
| 134 | *«Հակահեղեղային միջոցառումների կառավարման ծրագրի ներդրում և համակարգում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 91-րդ հոդվածը և 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանրապետության տարածքի կեսից ավելին ենթակա է սելավային երևույթների ազդեցությանը, որոնք յուրաքանչյուր տարի ունենում են տարբեր ուժգնություն: Վերջիններս պարբերաբար զգալի վնաս են հասցնում հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերին և նույնիսկ պատճառ են դառնում բնակավայրերի ավերման:<br>Հեղեղների հետևանքների վերացումը, պահանջում է առավել մեծ կապիտալ ներդրումներ, քան դրանց ծնող պատճառների վերացումը և արդյունքում, անբարենպաստ հետևանքների կանխումը: Հետևաբար առաջնահերթ անհրաժեշտ է հակահեղեղային կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, որոնցից առանցքային է համարվում հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների և բնակչության գույքը վարարումներից, սելավներից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծումը, կառավարման համակարգչային ծրագրի մշակումը:<br>Հեղեղաջրերը, դուրս գալով հուներից կամ փոխելով բնական հունը, ջրածածկում են առափնյա գյուղատնտեսական և այլ նշանակության հողատարածքները: Բացի այդ, հեղեղները մեծ չափի վնասներ են հասցնում առափնյա շենք-շինություններին, ինժեներական կառուցվածքներին, այդ թվում՝ կամուրջներին, ճանապարհներին, ոռոգման և չորացման ցանցերին, պոմպակայաններին, գազամուղներին, ջրմուղ-կոյուղու ցանցերին: Միաժամանակ տեղի են ունենում խոշոր չափերի հասնող հողատարման երևույթներ: Ընդհանուր առմամբ սակավահող Հայաստանի համար հիշատակված երևույթը չարիք է հանդիսանում:<br>Հակահեղեղային միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր տարի՝ ընտրելով գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>2003-2013 թվականներին իրականացվել են ավելի քան 6,6 մլրդ դրամ արժեքով հակահեղեղային միջոցառումներ, սակայն դրանց պահպանման ու շահագործման գործառույթներ չեն իրականացվում:<br>Համայնքները, սուղ բյուջեների պատճառով, չեն կարողանում իրականացնել վերոհիշյալ գործառույթները, |

| | |
|---|---|
| | առավել ևս, որ ափապաշտպան կառույցներն արտացոլված չեն իրենց հաշվեկշիռներում:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Անհրաժեշտ է գույքագրել գետերի և հեղեղատարների ափապաշտպան կառույցները՝ դրանք ջրային կոմիտեի հաշվեկշռում արտացոլելու նպատակով:<br>2. Կարգավորման առարկան<br>Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ափապաշտպան կառույցների վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազան, կենտրոնացնելով մեկ մասնագիտական կառույցում, հնարավորություն կստեղծվի պատշաճ կազմակերպել դրանց շահագործումն ու պահպանումը, ոչ մեծ ֆինանսական ներդրումներ կատարելով ապահովել ափապաշտպան ու հիդրոտեխնիկական այլ կառուցվածքների երկարակեցությունը: |
| 135 | *«Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը՝ մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները, որոնց ընդհանուր քանակը 2100 է, բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամանակակից ջրաչափական սարքերով:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաշխարհային բանկի աջակցությամբ ոռոգման համակարգերի ջրաբաշխման հանգուցային կետերում տեղադրվել է թվով 83 SCADA համակարգի ջրաչափեր, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով, այդ թվում նաև առցանց այդ համակարգերում ջրամատակարարման վերաբերյալ ստանալ տվյալներ:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ոռոգման ոլորտում ներդրված հստակ հաշվառման համակարգի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել ոռոգման գործընթացի արդյունավետությունը, կորուստների ցուցանիշի վերահսկումը, ավելի օպերատիվ արձագանքել համակարգում վթարների վերացմանը, իրականացնել ոռոգման ջրի ավելի օպտիմալ բաշխում, էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ստանալու արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն նվազեցնել տարատեսակ ռիսկերը, ինչը նաև կբերի սպասարկման և այլ ընթացիկ ծախսերի նվազեցմանը, հնարավորություն կստեղծվի ջրի կառավարման GIS ծրագրում կիրառել ոռոգման ջրի և էլ. էներգիայի ծախսի հաշվառման առցանց համակարգերը, որոնցից ստացվող տվյալները կօգտագործվեն ծրագրում առկա հաշվետվություններում, մեխանիկական ջրարտադրության գործընթացն կդառնա ավելի վերահսկելի և ավելի կազմակերպված շնորհիվ առցանց ստացվող էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ տեղեկատվությունից կազմված վերլուծություններից:<br>2. Կարգավորման առարկան<br>Ոռոգման ջրի մատակարարման խնդիրները նվազագույնի հասցնելու հսկողության մեխանիզմի ներդրման ապահովումը:<br>3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Հաշվառվող ոռոգման ջրի ծավալների և հասույթների մեծացում, գանձման տոկոսի բարձրացում, սուբսիդիայի պակասեցում, ՋՕԸ-երի նկատմամբ վերահսկելիության մեծացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, ջրօգտագործողների ընկերություններում ֆինանսական կայունության ապահովում, վերջիններիս նկատմամբ վստահության բարձրացում և ոռոգման ջրի մատակարարման բարելավում: |
| 136-137 | *« Վարձակալի ֆինանսական միջոցներով կատարվող Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի համաձայնեցում և ստեղծված նոր գույքի ընդունման և վարձակալության հանձնման ՀՀ կառավարության որոշման նախագիծ » և*<br><br>*Չհաշվառվող ջրի ծավալների կրճատման վերահսկում՝ 5 տարվա համար 14%-ի չափով միջոցառումների* |

| | |
|---|---|
| | 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը, «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղ», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված գնման ընթացակարգի արդյունքներին և ստորագրվելիք վարձակալության պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 27.10.2016թ. N43 արձ. որոշումը՝ ապահովել վարձակալության պայմանագրով սահմանված համապատասխան պահանջների կատարումը:<br>1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս իրականացված են 2017 թվականի և 2018 թվականի առաջին կիսամյակի համար վարձակալության պայմանագրով նախատեսված վարձակալության վճարը: Իրականացվել է 2017 թվականի պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով (ՊԿԱԾ) նախատեսված աշխատանքները: Ընթացքի մեջ են 2018 թվականի ՊԿԱԾ-ով նախատեսված աշխատանքները: Համաձայն վարձակալության պայմանագրի պահանջների յուրաքանչյուր տարի չհաշվառվող ջրի ծավալը պետք է կրճատվի շուրջ 3%-ով:<br>1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վարձակալության պայմանագրով նախատեսված բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը:<br>3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Բաժանորդներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում: |
| 138 | ***<u>«Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում»միջոցառման</u>***<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը»՝ իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում ըստ առաջնահերթության (փուլային) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների որակի բարելավման համար համապատասխան աշխատանքներ:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերի մեծ մասում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում կամ բացակայում են:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Համապատասխան ներդրումների առկայության դեպքում կապահովվի համակարգերի արդիականացումը, արդյունավետ կառավարումը, ծառայությունների մատուցումը մասնագիտացված կազմակերպությունների կողմից<br>2.Կարգավորման առարկան<br>«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը:<br>3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովումը: |
| 139 | ***<u>«Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում» միջոցառման</u>***<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերը՝ անհրաժեշտ է ապահովել Երևան քաղաքի Աերացիայի մաքրման կայան ներհոսող կեղտաջրերի ամբողջական մաքրումը և անջատված տիղմի օգտահանումը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

| | |
|---|---|
| | Ներկայումս ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը: Անհրաժեշտ է ապահովել մաքրման կայանի վերականգնման առաջին փուլի կառուցվածքների շահագործումը և տալ տիղմի օգտահանման կառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքների մեկնարկը:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ապահովել Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շահագործման հանձնելու գործընթացը: Համապատասխան ներդրումների առկայության դեպքում Ապահովել «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի շինարարության երկրորդ փուլի մեկնարկը:<br>2. Կարգավորման առարկան<br>Երևան քաղաքից և հարակից մի շարք բնակավայրերից Աերացիայի մաքրման կայան ներհոսող կեղտաջրերի մաքրման ծառայությունների բարելավումը:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Բնապահպանական մի շարք խնդիրների լուծում: |
| 140 | _«Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովում» միջոցառման_<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարություն և ֆինանսավորման ծրագիրը»՝ անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում խմելու ջրի ռեսուրսների անհամաչափ բաշխվածության և հասանելիության ապահովում: Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունների իրականացում:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս ՀՀ բնակավայրերի որոշ մասի ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում կամ բացակայում են:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Համապատասխան ներդրումների առկայությամբ կապահովվի ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի արդիականացումը, արդյունավետ կառավարման ապահովումը:<br>2. Կարգավորման առարկան<br>Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների որակի բարձրացումը և հուսալիության ապահովումը: |
| 141 | _«Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների բաշխիչ ցանցերի տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացում» միջոցառման_<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 27-ի «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 16-րդ հոդվածը և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թթ. ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը»՝ անհրաժեշտ է բարձրացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ընդգրկված Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների հուսալիությունը, նվազեցնել ոչ արդյունավետ ջրօգտագործման մակարդակը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերը տեխնիկապես մաշված վիճակում են և ունեն ներդրումների իրականացման կարիք:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Համապատասխան ներդրումային ծրագրերի իրականացմամբ կապահովվի Երևան քաղաքի մի շարք թաղամասերի սպառողների անխափան և հուսալի ջրամատակարարումը:<br>2. Կարգավորման առարկան<br>Երևան քաղաքի բաշխիչ ցանցերի տեխնիկական բարելավման աշխատանքների իրականացումը: |

| | |
|---|---|
| | 3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Երևան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարձրացումը և հուսալիության ապահովումը: |
| **Կրթության և գիտության նախարարություն** | |
| 142 | **ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Կրթությունը մարդու հիմնարար իրավունքներից է: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր, հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն:<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 5.4 կետի 4-րդ պարբերության պահանջներից:<br>Նոր խմբագրությամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է ոլորտի գործունեության կանոնակարգմանն ու զարգացմանն ուղղված հիմնախնդիրների լուծման, նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության շարունակականության համար իրավական հիմքեր ապահովելու, ինչպես նաև ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգում» ներառված չորրորդ, այն է՝ «ներառական և բոլորի համար որակյալ կրթության ապահովում, ինչպես նաև ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորության խթանում» նպատակի պահանջներից:<br>Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչիոնի և «Կրթություն բոլորի համար» հռչակագրերի, 2010 թվականի մայիսին վավերացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջներով, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:<br><br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օրենքի ընդունումով հնարավոր է դառնում երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացումը, որոնք համահունչ են ժամանակակից մարտահրավերների կարգավորմանն ուղղված միջոցառումներին:<br><br>**1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական նպատակաուղղված քաղաքականության, կառավարման համակարգի համապարփակ գործունեությանն ուղղված իրավական հիմքի բացակայության պատճառով խիստ տարբեր են համայնքային նախադպրոցական հաստատություններում երեխաների կրթական ծրագրերի իրացման պայմանները, նախադպրոցական ծառայությունների իրականացման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը, նախադպրոցական մանկավարժական կադրերի վարձատրության խնդիրները: Կանոնակարգված չէ նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակի բարձրացման, ատեստավորման, ինչպես նաև կառավարման և վերահսկողության համակարգի ապահովումը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է նախադպրոցական կրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախադպրոցական ծառայությունների շարունակականության ապահովման, նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման և մասնագիտական որակի |

| | |
|---|---|
| | բարձրացման, ատեստավորման, հաստատությունների գործունեության կանոնակարգման և զարգացման նորմատիվային դաշտի, ինչպես նաև վերահսկողության համակարգի ապահովման համար իրավական երաշխիքների, օրենսդրական հիմքի ստեղծում: |
| 143 | **ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրից՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 4-րդ պարբերության պահանջներից: Ներկայացվող նախագծի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներդնել այլընտրանքային մոդելով նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով Հայաստանի Հանրապետության նախադպրոցական համակարգը հայտնվել է անբարենպաստ պայմաններում, ինչի արդյունքում կրճատվել են նախադպրոցական հաստատությունների թիվը, գործող հաստատությունների կարողությունները, նվազել է դրանցում երեխաների ընդգրկվածությունը: Նախադպրոցական հաստատություններ համայնքային ենթակայության են և դրանց գործունեության հետ կապված ցանկացած խնդիր անմիջականորեն աղերսվում է տվյալ համայնքի բյուջետային միջոցների հետ: Արդյունքում անհավասար պայմաններ են ստեղծվում նախադպրոցական տարիքի երեխաների միջև:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում են ծախսարդյունավետ մոդելներ, որոնց ներդրման արդյունքում հնարավոր է ընդլայնել նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը, ինչպես նաև արդյունավետ մեխանիզմներ կիրառել կառավարման մեջ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրապետության բազմաբնակավայր համայնքներում ձևավորվել այլընտրանքային նախադպրոցական կրթության հաստատություններ, որոնք հնարավորություն կընձեռեն մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիություն՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար:<br>Այլընտրանքային նախադպրոցական կրթություն կազմակերպող հաստատությունը ձևավորվելով որպես համայնքահեն հաստատություն, կդառնա ցածր արժողությամբ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կառույց նախադպրոցական հաստատություն չունեցող բնակավայրերում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Այլընտրանքային մոդելների ներդրմամբ հնարավորություն ընձեռել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ այլընտրանքային եղանակներով նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելու համայնքի բոլոր երեխաներին: |
| 144 | **ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 1-ին և 6-րդ պարբերությունների պահանջներից՝ ապահովելու համար կրթության որակը, արդիականությունը, խթանելու աշակերտների քննադատական և վերլուծական մտածողությունը: Հայեցակարգի նպատակն է հանրակրթության բոլոր մակարդակներում վերանայել բնագիտության, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման ուսուցման մոտեցումները, ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման նոր մեխանիզմները, տեղեկատվական տեխնոլոգիաներ դասավանդող ուսուցիչներին ներկայացվող չափորոշչային պահանջների սահմանումը և համապատասխան մեթոդաբանության մշակման այլ խնդիրներ:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ուսուցիչները ոչ միշտ են կիրառում մոտեցումներ և մեթոդներ, որոնք սովորողին կմոտիվացնեն տվյալ առարկան սիրելու, ավելի խորը ուսումնասիրելու, և, հետագայում որպես մասնագիտություն ընտրելու համար: |

| | |
|---|---|
| | Տեղեկատվական տեխնոլոգիաները մատչելի են բոլոր սովորողների համար, նրանք բավականին լավ են տիրապետում ժամանակակից տեխնոլոգիաներին, ավելի արագ և հեշտ են ծանոթանում ու կիրառում առօրյայում, ավելի շատ ու բազմազան հնարավորություններ ունեն ինֆորմացիա ստանալու ցանկացած բնագավառից, մինչդեռ ուսուցիչները բավականին հետ են մնում և հմտությունների ձևավորման, և ծրագրային նյութը ավլեի արդիական դարձնելու ու մատուցելու առումով:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Անհրաժեշտ է մշակել այնպիսի ճկուն ծրագիր և դասավանդման մեթոդաբանություն, որ ուսուցիչը և աշակերտը խոսեն միևնույն լեզվով, նաև՝ մրցունակ լինեն տվյալ ոլորտում: Միևնույն ժամանակ, բնագիտական առարկաները ոչ բոլոր սովորողների կողմից են հեշտ ընկալելի, իսկ ուսուցչի կողմից հետևողական չլինելը հանգեցնում է բնագիտական ուղղվածություն ունեցող սովորողների նվազմանը: Անհրաժեշտ է սովորողին ձևավորել նոր մոտեցումներ՝ բնագիտական առարկաները գրավիչ և հասանելի դարձնելու համար:<br><br>**1. Կարգավորման առարկան**<br>Խնդրի կարգավորման առարկան բնագիտության, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային և ուսուցման, դասավանդող ուսուցիչներին ներկայացվող չափորոշչային նոր պահանջների մշակումն է:<br><br>**2. Ակնկալվող արդյունքը**<br><br>Ապահովել սովորողների բնագիտական, ճարտարագիտական, ինժեներական և համակարգային մտածողության զարգացումը, նպաստել թիմային աշխատանք և համագործակցության հմտություններ ձևավորելուն, խթանել սովորողների ստեղծագործականությունը, նպաստել դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ: |
| 145 | **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամաբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջներից:<br>Միջոցառման շրջանակում նախատեսվում է «Ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի մշակման և վերապատրաստման կարգի փոփոխությունների մասին» կառավարության որոշման նախագծի մշակում և ընդունում, որը նպատակաուղված է լինելու, վերանայված չափորոշիչներին և առարկայական ծրագրերին համապատասխան, ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացների արդյունավետության բարձրացմանը, դասավանդման նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայիս հարաճուն փոփոխությունների պայմաններում, կրթության որակն ու արդիականությունն ապահովելու առումով, առաջնային են ուսուցիչների մասնագիտական գիտելիքի, կարողությունների և հմտությունների անընդհատ զարգացումն ու կատարելագործումը: Ուսուցիչների պատրաստման ներկա համակարգը, որի պատասխանատուն Կրթության ազգային ինստիտուտն է, չի ապահովում կրթական բարեփոխումներին համահունչ ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացումը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Նախատեսվում է, Կրթության ազգային ինստիտուտի արմատական բարեփոխումների արդյունքում մշակել ուսուցիչների մասնագիտական գիտելիքի, կարողությունների և հմտությունների զարգացման նոր համակարգ, որը հիմնված կլինի կարիքներից բխող պլանավորման և վերջնական արդյունքների հստակգնահատման մեխանիզմների վրա:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Խնդրի կարգավորման առարկան դասավանդող ուսուցիչներին ներկայացվող չափորոշչային նոր |

| | |
|---|---|
| | պահանջների մշակումն է:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման արդյունքում ակնկալվում է, վերանայված չափորոշիչներին և առարկայական ծրագրերին համապատասխան, ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացների կազմակերպում, ինչը ենթադրում է դասավանդման նորագույն տեխնոլոգիաներին տիրապետում, առանձին առարկայախմբերով սովորողների առաջադիմության բարձրացում և համակարգի շարունակական արդյունավետության ապահովում: |
| 146 | **ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ և ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄ**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների պահանջներից: Նպատակն է՝ վերանայել և առավել արդյունավետ դարձնել հանրակրթական հաստատությունների կառավարումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կառավարման գործող համակարգը արդյունավետ չէ, վերանայման կարիք ունեն և տնօրենների ընտրության, նշանակման և գործունեության գնահատման մեխանիզմները, և կառավարման խորհուրդների ձևավորումը, գործունեությունն ու լիազորությունները, ինչպես նաև հաստատության գործունեության թափանցիկ և համագործակցային նոր մեխանիզմների կարիք կա:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել և ներդնել կառավարման արդյունավետ մեխանիզմներ, այդ թվում՝ դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման, լիազորությունների և պարտականությունների հստակեցման, ինչպես նաև տնօրենների ընտրության և նշանակման գործընթացների համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ստեղծել կառավարման արդյունավետ համակարգ, վերանել տնօրենների ընտրության, նշանակման և գործունեության գնահատման մեխանիզմները, և կառավարման խորհուրդների ձևավորումը, գործունեությունն ու լիազորությունները, ինչպես նաև ներդնել հաստատության գործունեության թափանցիկ և համագործակցային նոր մեխանիզմներ:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Թափանցիկ հաշվետու և համագործակցային կառավարման մեխանիզմների մշակում և ներդրում, հանրակրթության որակի բարձրացում: |
| 147 | **ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջներից՝ ապահովելու համար կրթության որակն ու արդիականությունը, նոր բովանդակություն հաղորդելու 12-ամյա կրթությանը:<br>Միջոցառման իրականացումը ենթադրում է «Ուսուցիչների կամավոր ատեստավորման ներդրման համակարգի ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ընդունում, որը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի: Ներկայացվող նախագծի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ուսուցիչների ատեստավորման գործընթացի բարելավումը: Համակարգում առկա որակյալ ուսուցիչների բացահայտումը և խրախուսումը: Նոր, ժամանակակից պայմաններին բավարարող մասնագետների մուտքը դպրոց:<br>Ուսուցիչների կամավոր ատեստավորման իրավական հիմքը սահմանված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք): Ատեստավորում հասկացությունը սահմանված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 14 կետով, իսկ կամավորության սկզբունքով ուսուցիչների ատեստավորման հնարավորությունը՝ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետով («Տվյալ ուսումնական հաստատությունում զբաղեցրած պաշտոնի նկարագրին ուսուցչի համապատասխանության որոշման նպատակով պետությունն իրականացնում է ուսուցչի հերթական ատեստավորում՝ յուրաքանչյուր ուսուցչի համար 5 տարին մեկ անգամ: Մինչև սահմանված ժամկետի լրանալը ուսուցիչը կարող է իր նախաձեռնությամբ և իր միջոցներով վերապատրաստվել և դիմել ատեստավորման, բայց ոչ շուտ, քան հերթական ատեստավորումից մեկ տարի հետո») և օրենքի 26-րդ |

| | |
|---|---|
| | հոդվածի 23-րդ կետով («Ուսուցիչն *իր նախաձեռնությամբ* կարող է մասնակցել ատեստավորման, եթե ինքնուրույն կուտակել է համապատասխան կրեդիտներ, ունի աշխատանքային բնութագիր, երկու տարվա մանկավարժական ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ տվյալ ուսումնական հաստատությունում»):<br>Ուսուցիչների ատեստավորման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից, համաձայն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի, իսկ ուսուցիչների գիտելիքների գնահատման հիմքը սահմանված է օրենքի 26-րդ հոդվածի 32-րդ կետով:<br>Ատեստավորումը չանցած ուսուցիչներին պաշտոնից ազատելու հիմքը սահմանված է օրենքի 26-րդ հոդվածի 19-րդ կետով: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչին զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում պաշտոնից ազատելու հիմք ուղղակիորեն նախատեսված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 19-րդ և 20-րդ մասերով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ուսուցիչների ատեստավորման ներկայիս համակարգը չի արտացոլում ուսուցիչների որակական հատկանիշները և հիմնված չէ արդյունքի գնահատման վրա: Այն փաստացիորեն ոչ թե գնահատում է ուսուցչի համապատասխանությունը մասնագիտությանը, այլ արձանագրում է վերապատրաստմանը մասնակցությանփաստը: Որպես արդյունք՝ չկա ատեստավորումը չանցած լինելու հետևանքով աշխատանքից ազատված ուսուցչի գեթ մեկ դեպք: Միևնույն ժամանակ ուսուցիչների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր որակյալ ուսուցիչների համակարգ մուտք գործելուն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրը լուծելու նպատակով մշակվել և ներկայացվել է արդյունքի վրա հիմնված ուսուցիչների կամավոր ատեստավորման նոր համակարգը, որը հնարավորություն կտա բարելավել ուսուցիչների ատեստավորման ներկայիս համակարգը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար իրականացնել այլընտրանքային կամավոր ատեստավորում՝ մշակված ընթացակարգով և ժամանակացույցով և աշխատավարձի բարձրացման հնարավորությամբ:<br>Ատեստավորման այս եղանակը հնարավորություն կտա բացահայտել և խրախուսել որակյալ ուսուցիչներին և նրանց աշխատավարձը մոտեցնել հանրապետության միջին աշխատավարձին: Արդյունքում այս համակարգը հնարավորություն կտա ապահովել նոր, որակյալ ուսուցիչների մուտք դպրոց՝ առաջարկելով նրանց մրցակցային աշխատավարձ:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Կամավորատեստավորմաններդրմամբփոխարինելուսուցիչներիատեստավորմանառկա՝փաստաթղթայինհամակարգընոր՝արդյունքիվրահիմնվածատեստավորմանեղանակով: |
| 148 | **ՓՈՔՐԱԹԻՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ «5.4.Կրթություն և գիտություն բաժնի 5-րդ, պարբերության պահանջներից: Նպատակն է՝ ապահովել արդյունավետ և բավարար ֆինանսավորում փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցներին:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող հանրակրթական դպրոցները շարունակաբար բախվում են ինչպես ֆինանսական, այնպես էլ բովանդակային ու մեթոդական ապահովման մի շարք խնդիրների ու դժվարությունների:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ֆինանսական կայունության ապահովման նպատակով՝ հանրապետության փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների համար ներդնել ֆինանսավորման նոր կարգ, ապահովել համապատասխան ուսուցչական կազմ և առցանց դասավանդման ռեսուրսներ: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել հեռավար կրթության հայեցակարգի լրամշակում և ընդունում, փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների քարտեզագրում, ուսուցչական, ինչպես նաև հեռավար կրթության համակարգի ներդրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային կարիքների գնահատում, կարիքի գնահատման հենքի վրա համապատասխան ենթակառուցվածքի համալրում, էլեկտրոնային պաշարների քարտեզագրում և համալրում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ֆինանսական կայունություն, 348 փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների ուսուցչական կազմի համալրում առցանց դասավանդող ուսուցիչներով (ըստ անհրաժեշտության՝ համապատասխան առարկայական ուսուցիչների բացակայության պայմաններում): |
| 149 | **ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԴՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ**<br>***8.1) «Ավագ դպրոցի հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների տեղաբաշխման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում***<br>**1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի մշակումը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 2018 հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի 5.4 կետի 1-ին, 2-րդ պարբերությունների պահանջներից՝ ապահովելու համար կրթության որակը, մատչելիությունն ու հասանելիությունը, ինչպես նաև՝ հաղթահարելու համար աշխարհագրական բնույթի խոչընդոտները: Նախագծի նպատակը ավագ դպրոցի հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները առավել ռացիոնալ տեղակայումն է՝ ինչի արդյունքում սովորողների համար կապահովվի մատչելիություն և հասանելիություն:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առանձին գործող ավագ դպրոցների և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ներկայիս տեղաբաշխումը խնդիրներ է առաջացնում, քանի որ համաչափ չէ, սովորողների համար հասանելիություն և մատչելիություն չի ապահովվում: Մի դեպքում կան համայնքներ, որտեղ գործում են մեկից ավելի ավագ դպրոցներ և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն և բոլորն էլ թերբեռնված են, մեկ այլ դեպքում կան համայնքներ, որտեղ չի գործում որևէ ավագ դպրոց:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է վերանայել ՀՀ կառավարության գործող որոշումը, ներկայացնել ուսումնական հաստատությունների նոր՝ ռացիոնալ տեղաբաշխում, ինչը հնարավորություն կտա նաև պետական ռեսուրսները կառավարել առավել արդյունավետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրապետության բոլոր համայնքներում ձևավորել հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների արդյունավետ և ռացիոնալ տեղաբաշխվածություն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Յուրաքանչյուր երեխայի՝ իր կարիքներին, նախասիրություններին և հնարավորություններին համարժեք կրթության իրացման ապահովում:<br><br>***8.2) Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միավորման ձևով վերակազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում***<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է կրթության ոլորտում գործող միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեության օպտիմալացման, բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունից, որի համար հիմք է հանդիսանում ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 11-ի N 29.6/[404812]-17(19) նիստի արձանագրության 1-ին կետի 6-րդ ենթակետի հանձնարարականը, ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 7-րդ պարբերության պահանջները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ |

| | |
|---|---|
| | հոդվածների պահանջները: <br> Միջոցառման իրականացումը կնպաստի ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը, շենքային պայմանների բարելավմանը, պատրաստվող մասնագիտությունների վերանայմանը, հաստատությունների ներսում խմբերի լիարժեք համաքագրմանը, բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործմանը: <br><br> **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 79 պետական ուսումնական հաստատություններում (70 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, 6 ԲՈՒՀ, 2 կրթահամալիր, 1 հիմնադրամ) և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 56 պետական ուսումնական հաստատություններում (25 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, 26 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն): <br> Ուսումնասիրելով առկա վիճակը և հաշվի առնելով ուսումնական հաստատություններում ուսուցանվող որոշ մասնագիտությունների կրկնությունը, շենքային պայմանները, միմյանցից հեռավորությունը, նյութատեխնիկական բազայով հագեցվածությունը, ուսանողների թվաքանակը, ինչպես նաև տվյալ մարզում գործող տարածաշրջանային պետական քոլեջի հզորացումը՝ անհրաժեշտ է օպտիմալացնել (խոշորացնել) որոշ ուսումնական հաստատություններ: <br> **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների քարտեզագրումն ըստ մարզերի, ուսումնական հաստատությունների և շենք շինությունների, ուսուցանվող մասնագիտությունների, ուսանողների թվի և աշխատողների, և դրա հիման վրա ուսումնական հաստատությունների օպտիմալացումը կամ վերակազմակերպման ձևով միավորումը հնարավորություն կտան առավել արդյունավետ օգտագործել ուսումնական հաստատությանը հատկացված տարածքային, շենքային գույքային, ինչպես նաև ֆինանսական միջոցները: <br> **2. Կարգավորման առարկան** <br> ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների քարտեզագրումն ըստ մարզերի, ուսումնական հաստատությունների և շենք շինությունների, ուսուցանվող մասնագիտությունների, ուսանողների թվի և աշխատողների, և դրա հիման վրա ուսումնական հաստատությունների օպտիմալացումը կամ վերակազմակերպման ձևով միավորումը հնարավորություն կտան հնարավորություն կտան առավել արդյունավետ օգտագործել ուսումնական հաստատությանը հատկացված տարածքային, շենքային գույքային, ինչպես նաև ֆինանսական միջոցները, բարձրացնել ՄԿՈւ ուսումնական հաստատությունների կառավարումը և ծախսարդյունավետությունը: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է ՄԿՈւ ուսումնական հաստատությունների կառավարման և ծախսարդյունավետության բարձրացում, առավել քիչ միջոցների և ռեսուրսների օգտագործմամբ առավել արդյունավետ նույն նպատակներին հասնելու հնարավորություն: <br><br> ***8.3) Գյուղատնտեսական ուղղվածությամբ ուսումնական կենտրոնների ստեղծում*** <br><br> **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը):** <br> Գյուղատնտեսության ոլորտի զարգացումը առանձնակի շեշտադրության կարիք ունի, քանի որ բոլոր առանցքային փաստաթղթերում այն սահմանված է որպես երկրի հետագա տնտեսական զարգացման գերակա ոլորտ: <br> Գյուղատնտեսական մասնագիտական կրթության և ուսուցման ուսումնական հաստատությունների շենքային վատ պայմանները, ինչպես նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում են մասնագիտական կրթության և ուսուցման գրավչությանը, գյուղատնտեսական ուղղվածությամբ որակյալ կադրերի պատրաստմանը: <br> Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես վերոնշյալով, այնպես էլ ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև 2016 թվականի դեկտեմբերին ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՀԳ/2015/038-246 ֆինանսավորման համաձայնագրով սահմանված միջոցառումների և նախապայմանների կատարման անհրաժեշտությամբ, ՀՀ կառավարության 2018 թ. ծրագրի 5-րդ բաժնի 5.4 Կրթություն և գիտություն ենթաբաժնի 7-րդ պարբերության |

պահանջով:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ակնհայտ է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ցածր մակարդակը, ինչը պայմանավորված է հիմնականում համապատասխան կադրերի բացակայությամբ, գյուղացիական տնտեսվարողների ժամանակակից մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների պակասով:

Հարկ է նշել, որ մասնագիտական կրթության և ուսուցման գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների շենքերը վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, չեն վերանորոգվել կամ վերականգնվել, այդ իսկ պատճառով էլ ուսումնարանները/քոլեջները չեն ապահովում համապատասխան կրթական միջավայր:

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու, գյուղատնտեսության արդյունավետ վարման, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողների կիրառական մասնագիտական հմտությունների բարելավման, որակյալ կադրեր պատրաստելու համար կարևոր նախապայման է հանդիսանում անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովումը:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն ապահովելու, աշխատանքի վրա հիմնված ուսուցում կազմակերպելու, շրջանավարտների զբաղունակությունը խթանելու նպատակով՝ անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական ուղղվածության ուսումնական կենտրոն, համալրել և հագեցնել այն համապատասխան գույքով և սարքավորումներով, անհրաժեշտ ենթակառուցվածքներով (մեղվանոց, կաթի և կաթնամթերքի, մրգերի, բանջարեղենի վերամշակման արտադրություն, անասնաբուծական, թռչնաբուծական ֆերմաներ, մսի վերամշակման մինի արտադրություն, ժամանակակից ջերմոցի հարմարություններ, գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգման արհեստանոց, ագրոհամակարգեր և այլն):

**2. Կարգավորման առարկան**

Գյուղատնտեսական ուղղվածության ուսումնական կենտրոնի ստեղծմամբ և համապատասխան գույքով և սարքավորումներով համալրմամբ մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպման և իրականացման, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների հասանելիության ապահովում:

**3. Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**

Մասնագիտական կրթության և ուսուցման փորձնական գյուղատնտեսական հաստատությունների վերակառուցման և վերանորոգման արդյունքում կբարելավվեն ուսուցման պայմանները, առավել արդյունավետ կիրականացվի մասնագիտական կրթության և ուսուցման քոլեջների կառավարումը, ինչպես նաև համապատասխանությունը մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման ներքին համակարգի պահանջներին: Հնարավորություն կստեղծվի նպաստել համակարգի շարունակական զարգացմանը, գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանը, մասնավորապես, մասնագիտական ներուժի կարողությունների հզորացմանը, մասնագիտական կրթության և ուսուցման հեղինակության և վարկանիշի բարձրացմանը:

150

**ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) և ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ**

**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 7-րդ պարբերության պահանջներից, նոր մշակված պետական կրթական չափորոշիչների պահանջներից (բովանդակային և տնողության), փոփոխվող աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելու հանգամանքից, նոր տեխնոլոգիաների, գիտության և տնտեսության զարգացման արդյունքում նոր մասնագիտությունների ի հայտ գալով: Միջոցառման համար հիմք են հանդիսանում նաև «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված 6-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «հայաստանի հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 275-Ն որոշման հավելված 1-ի 75-րդ կետը և Եվրոպական Միության կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության շրջանակում իրականացվող ծրագրի դրույթները:

Միջոցառման իրականացումը կնպաստի ուսումնական հաստատություններում պահանջարկ չվայելող

| | |
|---|---|
| | մասնագիտությունների բաժինների փակմանը և պետության, ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող, ինչպես նաև աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների գծով նոր մասնագիտությունների ներդրմանը, մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում ուսուցանվող մասնագիտությունների արդիականացմանը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը վերանայվել են 2015 թվականին, որի նպատակն էր այն համապատասխանեցնել մասնագիտական կրթության և ուսուցման որակավորումների ազգային շրջանակին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված կրթական միջազգային բաղադրիչներին:<br>Սակայն վերջին երկու տարիներին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում իրականացված մի շարք բարեփոխումներ, կատարված ուսումնասիրություններ, ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական կրթության հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզային առանձնահատկություններին համապատասխանեցնելու գործընթացը առաջացրել են անհրաժեշտություն վերանայել մասնագիտությունների ցանկը:<br>Հարկ է նշել նաև, որ վերջին տարիներին նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում մշակվել են շուրջ 170 պետական կրթական չափորոշիչներ և համապատասխան մոդուլային ծրագրեր, ինչպես նաև վերանայվել են գործող չափորոշիչները, որի արդյունքում նախկինում չափորոշչով սահմանված մի շարք մասնագիտությունների և որակավորումների ուսուցման բովանդակային և տևողության պահանջները, ինչպես նաև որակավորումները փոփոխվել են:<br>Ելնելով վերոնշյալ խնդիրներից՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերում փոփոխությունների կատարումը դարձել է առաջնահերթ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարումը հնարավորություն է ստեղծում Հայաստանում իրականացվող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը դարձնել առավել գրավիչ և համահունչ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին և ժամանակակից զարգացումներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարել կանոնակարգում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություններում տրամադրվող կրթական ծառայությունների մատուցումը ըստ ՀՀ մարզերի զարգացման համար առաջնահերթ և աշխատաշուկայում առավել պահանջարկված ոլորտների:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ մարզերի զարգացման ուղղություններից և աշխատաշուկայի առանձնահատկություններից ելնելով՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում վերանայված և նոր ներդրված մասնագիտություններով ուսուցման իրականացում: |
| 151 | **ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ազգային շահերին, տնտեսության զարգացման առաջընթացին համապատասխան, ներքին ու արտաքին շահեկիցների կարիքները բավարարող, աշխատաշուկայում մրցունակ, պահանաջարկված կադրերի պատրաստման, պետական պատվերով ուսումնառությունն առավել նպատակային, աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան դարձնելու անհրաժեշտությունից: Միևնույն ժամանակ այն հնարավորություն կտա միջին մասնագիտական կրթության արվեստի, սպորտի, առողջապահության ոլորտի մասնագիտությունների գծով շրջանավարտների կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համապատասխան մասնագիտությամբ: «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման համար հիմ ք է հանդիսանում ՀՀ սահմանադրության 39-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 7-րդ պարբերության պահանջներից:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2017 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ |

| | |
|---|---|
| | մասը՝ «7. Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:<br>Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:...»<br>Հիմք ընդունելով օրենքի պահանջը՝ 2017-2018 ուսումնական տարվանից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում հիմնական կրթության հիմքով դիմորդները (մինչև 19 տարեկան) մրցութային կարգով ընդունվեցին անվճար ուսուցման համակարգ:<br>«Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված ի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում սահմանված է՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ»:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1) ՀՀ կրթության և գիտության նախարարության 2018 թվականի պետական բյուջեի ֆինանսավորման կրճատման պատճառով էական նվազել է անվճար ուսուցման տեղերի թիվը, որի հետևանքով անվճար ուսուցման տեղերը չեն բավարարի ուսումնական հաստատություններին՝ ըստ մասնագիտությունների, խմբերի միջին կոմպլեկտավորումը ապահովելու համար, ինչն էլ ուսումնական հաստատություններին կկանգնեցնի ֆինանսական խնդիրների առաջ:<br>Օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությունում «կրթություն» բառից հետո «հանրակրթական» բառի լրացումը հնարավորություն կտա ուսումնական հաստատություններին կազմակերպել նաև վճարովի ուսուցում:<br>2) Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում «հեռակա ուսուցմամբ» բառերից հետո «, բացառությամբ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների գծով շրջանավարտների, ովքեր կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ» բառերով լրացում կատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների գծով բարձրագույն ուսումնական հաստատություններում գրեթե չկան մասնագիտություններ որոնք ուսուցանվում են հեռակա, ինչը անհավասար պայմաններ է ստեղծում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին՝ հետագա ուսումնառությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Լրացումը հնարավորություն կտա առավել նպատակաուղղված և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան անվճար ուսուցմամբ տեղեր հատկացնել, իսկ վճարովի ուսուցմամբ մատուցվող ծառայությունները հնարավորություն կտա ուսումնական հաստատություններին ձևավորել արտաբյուջե՝ կանոնադրական նպատակներով օգտագործելու համար:<br>Լրացումը հնարավորություն կընձեռի միջին մասնագիտական կրթության արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների գծով բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտում փոփոխություններ կատարելը հնարավորություն կընձեռի առավել նպատակաուղղված և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան անվճար ուսուցմամբ տեղեր հատկացնել, իսկ վճարովի ուսուցմամբ մատուցվող ծառայությունները հնարավորություն կտան ուսումնական հաստատություններին ձևավորել արտաբյուջե՝ կանոնադրական նպատակներով օգտագործելու համար: Լրացումը հնարավորություն կընձեռի նաև միջին մասնագիտական կրթության արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների գծով բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ: |
| 152 | **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՈԼՈՐՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է բարձրագույն կրթության զարգացմամբ և միջազգայնացմանն ուղղված միտումներով, |

ինչպես նաև՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ինտեգրմամբ: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններից՝ ապահովելու համար կրթության որակը, մատչելիությունը, հասանելիությունը, ինչպես նաև՝ բուհի՝ ուսանողակենտրոն և ապաքաղաքականացված լինելը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սահմանված համապատասխան դրույթները չեն ապահովում կամ մասնակի են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից կախված բուհերի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, ֆինանսավորման և հաշվետվողականության անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: Բուհերի կառավարման մոդելի բարեփոխման մասով օրենսդրությամբ անհրաժեշտ ամրագրման և կարգավորման դրույթներից են մասնավորապես՝ բուհերի կազմակերպաիրավական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարություն-նախարարություն-բուհ իրավասության սահմանների, կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցումը:

**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ օրենսդրությամբ սահմանելու կամ դրանք լիովին վերանայելու կարիք ունեն մի շարք խնդիրներ.

- բուհի առաքելությունից, խնդիրներից և գործառույթներից ու պետության կարիքներից բխող հիմնական պարտավորությունները (այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում իրականացվող ուսուցման շրջանակին, որակին և արդյունավետությանը վերաբերող պարտականություններ),
- բուհերի ֆինանսավորման սկզբունքները և պայմանները, նրանց ինստիտուցիոնալ ինքնավարության և հաշվետվողականության պատշաճ հավասարակշռության ապահովման ընդունված պահանջների ու մեխանիզմների ներդրումը ու կիրարկումը, որը ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով կարևոր պայմաններից է,
- միջազգային օրենսդրությանը համապատասխան բարձրագույն կրթության բնագավառին վերաբերող հիմնական և կիրառվող հասկացությունների (համալսարան (այդ թվում՝ հանրային և մասնավոր), կրթական ծրագիր, աստիճան, կրկնակի աստիճանակարգ, որակավորում և այլն) սահմանումը,
- բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պայմանների ու պահանջների, ներքին և արտաքին որակի ապահովման (ինչպես նաև՝ վերահսկողության մեխանիզմների) ու ընդլայնման հստակ ամրագրումը,
- ընդունելության նոր մեխանիզմների ու պայմանների ներդրումը,
- բուհերի կառավարման մոդելի բարեփոխման նպատակով նրանց կազմակերպաիրավական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցումը և այլն:

**2. Կարգավորման առարկան**

Բարձրագույն կրթության գործունեությունը կարգավորող օրենքի համապատասխանեցումը բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների ռազմավարությանը:

**3. Ակնկալվող արդյունք**

Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում ամբողջական և հստակ կսահմանվեն՝

- բարձրագույն կրթության բնագավառում անհրաժեշտ քաղաքականության իրականացման հիմքերը և պայմանները,
- կրթական, հետազոտական, տեխնոլոգիական եւ նորարարական գործունեություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները (Օրենքի նախագծով հիմնականում նախատեսվելու են բուհերի ֆինանսավորման և ուսանողներին պետության կողմից տրամադրվող կրթաթոշակների նոր սկզբունքների և մեխանիզմների սահմանումը),
- բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները, որը կարտացոլի հաստատության պատասխանատվությունը և կատարողականությունը պետության ու հասարակության առջև,
- բարձրագույն կրթության բնագավառում միջազգային պահանջներին համապատասխան և անհրաժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները:

Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի

| | |
|---|---|
| | Հանրապետության օրենքը համահունչ կլինի բարձրագույն կրթության մասին միջազգային օրենսդրությանը և կնպաստի բարձրագույն կրթության համակարգի ու հաստատությունների միջազգայնորեն մրցունակությանը: Օրենքի կիրարկման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման համար: |
| 153 | **ՈՐԱԿՅԱԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ և ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ին, 2-րդ պարբերություններից՝ ապահովելու համար կրթության որակը, մատչելիությունը, հասանելիությունը, ինչպես նաև՝ բուհի՝ ուսանողակենտրոն լինելը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներից են կրթության հասանելիության ու մատչելիության ապահովումը, սոցիալական պայմանների կամ աշխարհագրական առանձնահատկությունների հետ կապված խոչընդոտների նվազեցումը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակում նախատեսվում են ՀՀ մարզերից Երևանում բուհ ընդունված և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններ ունեցող ուսանողների կեցության ապահովումը պետական բյուջեի հնարավորության սահմաններում, բուհերի խոշորացման ճանապարհով բարձրագույն կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, ուսանողի վարձի մասնակի փոխհատուցման պետական ծրագրի վերանայումը և լրամշակումը, բարձրագույն կրթության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով և ՀՀ ՏԶՀԿ միջազգային առաջարկություններին համահունչ հավատարմագրման մեխանիզմի և չափանիշների վերանայումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող պետական ծրագրերի, հավատարմագրման մեխանիզմների ու չափանիշների վերանայումն ու մշակումն է:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալ-տնտեսական կարգավիճակի պատճառով բուհից դուրս մնացած ուսանողների թվի կրճատում, պետական բուհերի արդյունավետության բարձրացում բուհերի թվի կրճատման, պրոֆեսորադասախոսական կազմից ներկայացվող պահանջների խստացման և ֆինանսների արդյունավետ օգտագործման միջոցով: |
| 154 | **ՀՀ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍՏԱԿԵՑՈՒՄ, ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի մշակումը պայմանավորված է լեզվի բնագավառում միասնական ու երկարաժամկետ լեզվական պետական քաղաքականություն իրականացնելու, հանրային կյանքի նոր իրողություններին համաչափ արձագանքելու անհրաժեշտությամբ: Ծրագրի մշակումը բխում է նաև պետական լեզվաքաղաքականության իրականացման (իրականացումը համակարգող) լիազորված պետական մարմնի կարգավիճակի փոփոխությամբ պայմանավորված օրենսդրական հակասությունների կարգավորման և ՀՀ գործող օրենքներում լեզվին վերաբերող դրույթների համակարգված լրամշակման, ենթաօրենսդրական ակտերի ընդունման անհրաժեշտությունից: Նպատակը ոլորտում առկա հիմնախնդիրների ու կարգավորումների համակարգային վերլուծության ու գնահատման հիման վրա լեզվական պետական քաղաքականության բարեփոխման ուղիների նախանշումն ու ոլորտի համակարգված կարգավորումը երաշխավորող մեխանիզմների ներդրումն է՝ առանձին միջոցառումների իրականացման ճանապարհով:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Լեզվական պետական քաղաքականության հիմնադրույթների իրականացումն ապահովող պետական լիազորված մարմնի կարգավիճակի և դրանից բխող լիազորությունների ու գործառույթների փոփոխությունները, «Հայաստանի Հանրապետության 2002-2005 թվականների լեզվական քաղաքականության պետական ծրագրի» գործողության ժամկետի ավարտը տարիներ շարունակ ոչ միանշանակ իրավիճակ են ստեղծել արդյունավետ պետական լեզվաքաղաքականություն իրականացնելու առումով: Բացի այդ, ոլորտը կարգավորող հիմնական փաստաթղթերը մշակվել են 1990-ականների սկզբներին և միտված են եղել առավելապես կայացող պետականության պայմաններում հանրային կյանքի բոլոր ոլորտներում հայերենի |

| | |
|---|---|
| | իրավունքները վերահաստատելու և նրա գերակայությունն ապահովելու առաջնահերթ խնդրի լուծմանը: Հաջորդող տարիներին լեզվի բնագավառում հայեցակարգային մոտեցումների, լեզվական միասնական ու համակարգված քաղաքականության բացակայության, ինչպես նաև ֆինանսական սուղ միջոցների պայմաններում լեզվին առնչվող միջոցառումները առավելապես իրավիճակային բնույթ են կրել, իսկ հանրային կյանքի նոր ձևավորվող իրողություններին ոչ համաչափ արձագանքը ավելի են բարդացրել իրավիճակը՝ առկա մոտեցումները վերանայելու անհրաժեշտություն ստեղծելով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Լեզվական պետական քաղաքականության բարեփոխման ծրագրում նախանշվող նպատակների, առկա քաղաքականության բարեփոխման ուղղությամբ ՀՀ լեզվական քաղաքականության պետական երկարաժամկետ ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝<br>1) ոլորտը կարգավորող օրենսդրության փոփոխություններ,<br>2) գրական հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) կանոնարկման գործուն մեխանիզմների ներդրում,<br>3) լեզվական հարաբերություններում հայերենի լիակատար գործառության ապահովումը երաշխավորող մեխանիզմների ներդրում (այդ թվում՝ հայերենը ներառող տեղական և միջազգային ստանդարտների մշակման ապահովում),<br>4) թվանշային տիրույթում հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) հետևողական ու կայուն ներկայությունը երաշխավորող մեխանիզմների ապահովում,<br>5) ՀՀ լեզվավիճակի շարունակական մշտադիտարկման ու գնահատման, լեզվական քաղաքականության իրականացման հաշվետվողականության պատշաճ ապահովման արդյունավետ մեխանիզմի ներդրում, մասնավորապես՝ ՀՀ լեզվավիճակի տարեկան զեկույցներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Լեզվի ոլորտում պետական քաղաքականության իրականացում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Լեզվական պետական քաղաքականության բարեփոխման ծրագիրը թույլ կտա՝<br>1) վեր հանել լեզվի ոլորտում առկա պետական քաղաքականության հիմնախնդիրները, հստակեցնել առաջարկվող մոտեցումները,<br>2) նախանշել լեզվի բնագավառում պետական քաղաքականության բարեփոխման հիմնական ուղիները,<br>3) նախանշվել լեզվի ոլորտում պետական քաղաքականության իրականացումը երաշխավորող անհրաժեշտ մեխանիզմները,<br>4) անհրաժեշտ հիմքեր նախապատրաստել ոլորտը ներառող ռազմավարական փաստաթղթերի պատրաստման համար,<br>5) ծրագրով հաստատված առանձին միջոցառումների իրականացման ճանապարհով ներդնել ոլորտի համակարգված կարգավորումը երաշխավորող մեխանիզմներ: |
| 155 | **ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՆՈՒՄ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Անհրաժեշտությունը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 15-44-րդ կետերի պահանջներից, ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ին և 2-րդ պարբերություններից՝ ապահովելու կրթության մատչելիությունը, հասանելիությունը բոլորի համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով էլ հիմք դրվեց հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթությանն անցմանը:<br>Օրենքի ընենքիըաննուրանրերի1.06.2018թ. թիվՀՀենքիըաննուրանրերի1.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջտարեկան զեկույցներ:նյալ ուղղություններով՝աքականության պետական եկնարկեց 2016 թվականին Սյունիքի մարզից, 2017 |

իրանանրաների1.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ու մասին» Հայաստա:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայաստանի Հանրապետությունում հատուկ դպրոցներում ընդգրկված երեխաների ինտեգրումը հանրակրթական դպրոցներ:

**2. Կարգավորման առարկան**

Տարածային մանկավարժահոգեբանկան աջակցության կենտրոնների հիմնադրում՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով (կամ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների պատվիրակում նման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ ունեցող կազմակերպության) և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի և դրա մասնաճյուղի ու Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով:

**3. Ակնկալվող արդյունքը**

Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելությանը, յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումը իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում:

156 **ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿԱՅՈՒՆ ՄՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ**

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավելու նրանց առողջությունն ու հաղթահարելու աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:

Անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 1-ին և 2-րդ պարբերություններից:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի /ՊՀԾ/ կողմից իրականացվում է կայուն դպրոցական սննդի ծրագիրը, որում ընդգրկվել են հանրապետության մնացած վեց մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և նախակրթարանների շուրջ 60000 սովորողներ: ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը, աստիճանական, ֆինանսավորումը հանձնելով ՀՀ կառավարությանը՝ ՀՀ պետական բյուջեում ներառելու միջոցով:

Ներկայումս չորս մարզերում /Արարատ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ/ իրականացնում են կայուն դպրոցական սննդի ծրագիրը՝ ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից: Սնունդը տրամադրվում է նախակրթարաններում և տարրական դասարաններում ընդգրկված երեխաներին օրը մեկ անգամ, դպրոցում: Ծրագիրն իրականացվում է ՀՀ մարզպետարանների միջոցով, որոնք գումարը բաշխում են իրենց ենթակայության՝ նախակրթարաններ և տարրական դասարաններ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, որոնք էլ իրականացնում են ծրագիրը՝ հիմք ընդունելով գործող իրավական ակտերը, այդ թվում՝ գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները:

2018 ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ու փորձնական ծրագիրը: Ծրագրի ռազմավարության գլխավոր նպատակն է

| | |
|---|---|
| | ստեղծել կայուն դպրոցական սննդի համակարգ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>2018-2022 թվականներին, յուրաքանչյուր տարի մեկ մարզ կներառվի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող Կայուն դպրոցական սնունդ ծրագրում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>ՄԱԿ-ի ՊՀԾ-ն նախատեսում է շարունակել դպրոցական սննդի ծրագիրը, աստիճանական, ֆինանսավորումը հանձնելով ՀՀ կառավարությանը՝ ՀՀ պետական բյուջեում ներառելու միջոցով: Ներառված մարզերի ուսումնական հաստատություններն ամբողջովին իրենք կիրականացնեն սննդի ձեռքբերման և կազմակերպման գործընթացը:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Տարեցտարի կընդլայնվի ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը, որի արդյունքում 2022 թվականին շահառուների թիվը կկազմի շուրջ 93000: Արդյունքում Հայաստանի Հանրապետության ինը մարզերում հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողները կստանան առողջ, կայուն և ապահով սնունդ: |
| 157 | **ՀՀ-ՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ**<br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի «5.4 Կրթություն և գիտություն» կետի վերջին 2 պարբերություններից: Նպատակն է՝ ՀՀ-ում առավել թափանցիկ դարձնել գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման քննությունների հանձնման և ատենախոսությունների պաշտպանության ողջ գործընթացը, մշտադիտարկել գիտական պարբերականների գործունեությունը:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Այժմ գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման քննությունների հանձնումը և ատենախոսության պաշտպանության գործընթացը կարգավորվում են «ՀՀ-ում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգով (ՀՀ կառավարության 20.07.2001թ. հ. 662 որոշում) և «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով (ՀՀ կառավարության 08.08.1997թ. հ. 327 որոշում): Այս գործընթացները հրապարակային են, որոնք սահմանված են վերոհիշյալ որոշումներով, սակայն առավել թափանցիկության և հանրային վերահսկողության ապահովման համար անհրաժեշտ է տեխնիկական հագեցվածություն՝ գործընթացները տեսաձայնագրելու և առցանց հեռարձակելու համար: Գիտական պարբերականներում տպագրված հոդվածները հետագայում հիմք են ծառայում անորակ ատենախոսությունների պաշտպանության:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>ՀՀ-ում թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման քննությունների հանձնման, ինչպես նաև գիտական ատենախոսությունների պաշտպանության ողջ գործընթացի թափանցիկության, հանրային վերահսկողության ապահովման տեսանկյունից առաջարկվում է կազմակերպել տեսաձայնագրում և առցանց հեռարձակում: Յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն կունենա առցանց հետևելու գիտական աստիճանի ցանկացած հայցորդի ատենախոսության հրապարակային պաշտպանությանը, կամ մասնագիտական քննությունների հանձնմանը, որի համար նախատեսվում է անհրաժեշտ սարքավորումներով կահավորել համապատասխան լսարանները, որտեղ տեղի են ունենում ատենախոսությունների պաշտպանությունները և կազմակերպվում են քննությունները: Սա լրացուցիչ |

| | |
|---|---|
| | հնարավորություն է նաև հանձնաժողովներում չընդգրկված մասնագետների համար՝ հարցեր ուղղելու քննվող ասպիրանտին կամ ատենախոսությունը պաշտպանող հայցորդին:<br>Գիտական պարբերականների գործունեության մշտադիտարկումը ենթադրում է գիտական փորձաքննության ենթարկել տպագրված գիտական հոդվածները, որոնք հետագայում հիմք են ծառայում գիտական ատենախոսությունների պաշտպանության համար: Դա նաև կարևոր հիմք կհանդիսանա ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի համար, որպեսզի ԲՈԿ-ի գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվեն լավագույնները միայն:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Սույն նախաձեռնությունն իրականացնելու համար անհրաժեշտ է միայն համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում ատենախոսությունների պաշտպանության և մասնագիտական որակավորման քննությունների հանձնման ժամանակ: Գիտական պարբերականների մոնիտորինգի համար անհրաժեշտ կլինի երկու աշխատակից, որոնք կկազմակերպեն գիտական ամսագրերի գիտական փորձաքննությունը: Չի ենթադրվում որևէ օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի ընդունում կամ փոփոխություններ ու լրացումներ:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br><br>Ծրագրի իրականացման արդյունքում գիտական աստիճանի հայցման ատենախոսությունների պաշտպանությունը, մասնագիտական որակավորման քննությունների հանձնման ողջ գործընթացները կդառնան բաց և հրապարակային, իսկ ՀՀ-ում հրատարակվող գիտական պարբերականներում կտպագրվեն միջազգայնորեն մրցունակ, ՀՀ տնտեսության զարգացմանը միտված գիտական հոդվածներ, որը կնպաստի գիտական ատենախոսությունների որակի բարձրացմանը, գիտական աստիճանաշնորհման ոլորտում կոռուպցիայի ու հովանավորչության բացառմանը: |
| 158 | **ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐՈԼՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՏԱՐԿՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ**<br><br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը**<br><br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման (Կառավարության 2018 թվականի ծրագիր) 5.4 կետի 8-րդ և 9-րդ պարբերություններից:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև՝ օտարերկրյա պետություններ: Արդյունքում՝ գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները բերեցին գիտության արագ «ծերացման», գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվեցին գիտական և գիտամանկավարժական դպրոցների շարունակականությունը, սերնդափոխության սահուն ընթացքը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>«Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունում: Նշված ծրագրի կատարումը նպատակաուղղված է գիտության ոլորտում այնպիսի միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, որոնց արդյունքում հնարավոր կլինի ներդնել ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման մեխանիզմներ, մեծացնել երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, բարձրացնել գիտական աշխատողի վարկանիշը և հետաքրքրություն առաջացնել երիտասարդների մեջ գիտության նկատմամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված երիտասարդ գիտնականների և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցմանը: Մասնավորապես, պետական բյուջեի |

| | |
|---|---|
| | ֆինանսավորմամբ իրականացվող պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների հայտերի մրցույթների ժամանակ սահմանվել են երիտասարդ կատարողների (ասպիրանտներ և մագիստրանտներ) մասնակցության նվազագույն սահմանը, իրականացվում են ասպիրանտների և երիտասարդ գիտնականների աջակցության, բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների խրախուսման, ինչպես նաև շարժունակության ապահովման ծրագրեր: Սակայն դրանք բավարար չեն գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրության և բնագավառի կադրային կազմի տարիքային կառուցվածքի անհրաժեշտ փոփոխությունն ապահովելու համար: Նպատակին կարելի է հասնել միայն պետական ծրագրային քաղաքականության միջոցով, որի արդյունավետությունը պայմանավորված է համակարգային բնույթով և, որը հնարավորություն կտա կենտրոնացնել ռեսուրսները՝ բնագավառը երիտասարդ կադրերով համալրելու և ամրապնդելու առաջնայնությունների վրա:<br><br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում ներդնել գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, կբերի գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացմանը:<br>Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման ծրագիրը կներառի տաղանդավոր երիտասարդներին գիտության ասպարեզ ներգրավումը խթանող, օտարերկրյա պետություններում աշխատող կամ բուհերում սովորող հայ երիտասարդների վերադարձին նպաստող մասնագիտական ու սոցիալական պատշաճ պայմանների ստեղծման նախադրյալներ:<br>Ծրագրի ընդունումն ու իրականացումը կնպաստի գիտության և տեխնոլոգիաների բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը: |
| | **Մշակույթի նախարարություն** |
| 159 | ***Մշակույթի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում, համակարգի կառավարման որակի բարելավում, աշխատանքների արդյունավետության բարձրացում***<br><br>*1.1) «Հայաստանի Հանրապետության թանգարանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ արդեն ընդունվել են Հայաստանի Հանրապետության օրենքներ («Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Արխիվային գործի մասին»), որոնք կարգավորում են մեր մշակութային ժառանգության որոշակի բնագավառները: Նշված օրենքների ընդունումից հետո առաջացել են նոր հիմնախնդիրներ: Առաջացած խնդիրների լուծումները գտնելու նպատակով ուսումնասիրվել է եվրոպական 13 երկրի թանգարանային գործը կարգավորող օրենսդրությունը: Այսպես՝ Ռումինիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լեհաստանի, Սլովակիայի «Թանգարանների մասին» օրենքները կարգավորում են թանգարանների հիմնադրման և գործունեության շրջանակները, իրավասությունները, պետության կողմից թանգարանների ճանաչման հիմնական առանձնահատկությունները: Օրենքները սահմանում են նաև թանգարանի ստեղծման պայմանները, ֆինանսավորման սկզբունքները՝ պետական աջակցության մեխանիզմները: Ելնելով նշվածից՝ նպատակահարմար ենք գտել օրենքում կիրառել Միավորված ազգերի կազմակերպության ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում Թանգարանային միջազգային խորհրդի (այսուհետ՝ ԻԿՕՄ) կողմից ընդունված թանգարանների աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնագիրքը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորված չեն մշակութային ժառանգության անքակտելի մաս կազմող՝ Հայաստանի Հանրապետության առանձին թանգարանային ֆոնդերի օգտագործման, տնօրինման, թանգարանների ստեղծման (անկախ սեփականության ձևից) խնդիրները: Ներկայացվող օրենքի նախագծում ամրագրվել է օրենքի կարգավորման առարկան, սահմանվել և ճշգրտվել են օրենքի խնդիրները, թանգարանների ստեղծման նպատակները և սկզբունքները: Հստակ սահմանվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: |

Նախագծում կարգավորվել են պետական սեփականություն չհանդիսացող մշակութային արժեքները Հայաստանի Հանրապետության պետական թանգարաններում ժամանակավոր պահպանության հանձնելու, թանգարանի ֆոնդերը թանգարանային առարկաներով համալրելու, հաշվառելու, հանրահռչակելու սկզբունքները, թանգարանների և հավաքածուների սեփականատերերին պետական աջակցության ձևերը: Հստակեցվել է թանգարանների կարգավիճակը և այն ստանալու ընթացակարգը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի ընդունմամբ.

- կամբողջացվի թանգարանային ոլորտի օրենսդրական դաշտը,
- կկարգավորվեն թանգարանային ոլորտում իրավահարաբերությունները,
- կսահմանվեն թանգարանների իրավունքները և պարտականությունները, նրանց կողմից մատուցվող ծառայությունները,
- կկարգավորվի պետական և ոչ պետական թանգարանների գործունեությունը,
- կսահմանվեն թանգարանային ոլորտի հասկացությունները:

**2. Կարգավորման առարկան**

Օրենքի նախագծի ընդունմամբ կկարգավորվե թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի ու իրավական կարգավիճակի հետ կապված հարաբերությունները, ուստի «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը անհրաժեշտություն է:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Օրենքի նախագծի ընդունումը կկարգավորի թանգարանների ստեղծումը, գործունեությունը, գործունեության դադարեցման և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի ու իրավական կարգավիճակի հետ կապված՝ նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև ծագող հարաբերությունները մշակույթի բնագավառում:

*1.2.) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից այլ օրենքների նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Բնագավառի կայունության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել օրենքների բովանդակությունը, օրենքներում առկա բացերը նվազագույնի հասցնելու և միջազգային լավագույն փորձին մոտեցնելու նպատակով պետք է իրականացվեն մի շարք միջոցառումներ և ստեղծվեն իրավական հիմքեր՝ օրենքից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր ընդունելու համար, որոնք թույլ կտան ամբողջությամբ կանոնակարգել բնագավառի իրավական դաշտը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Գործող օրենքն ընդունվել է 1998 թվականին, որից հետո ընդունվել են մի շարք նոր օրենքներ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այլն, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը և օգտագործմանը: Միևնույն ժամանակ վավերացվել են «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության մասին» և «Հնագիտական ժառանգության պահպանության մասին» եվրոպական կոնվենցիաները:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի նախագծում առաջարկվում է՝

- սահմանել պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը և օգտագործմանը վերաբերող հասկացությունները,

| | |
|---|---|
| | • հստակ սահմանել լիազոր մարմնի լիազորությունները,<br><br>• ներդնել հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում մասնագետների հավաստագրման կամ լիցենզավորման կարգը,<br><br>• սահմանել հուշարձանների հաշվառման, նորահայտ օբյեկտը պետական ցուցակում ընդգրկելու կարգը,<br><br>• հստակ սահմանել հնագիտական հետախուզական աշխատանքների և հնագիտական պեղումների ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները,<br><br>• արձանագրել անշարժ գույքի սեփականության վկայականներում հուշարձան լինելու մասին փաստը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագիծը նպատակ ունի ամբողջությամբ կանոնակարգելու բնագավառի իրավական դաշտը, սահմանելու պատմամշակութային անշարժ ժառանգությանը վերաբերող հասկացությունները, հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման բնագավառի սուբյեկտների լիազորությունները և պարտականությունները, հնագիտական հետազոտությունների իրականացման գործընթացը, հուշարձանին վնաս պատճառելու դեպքում հնարավոր փոխհատուցման սկզբունքները, մասնագետների լիցենզավորման պայմանները և այլն: Նախագծով նախատեսվում է ներդնել բնագավառում առկա խնդիրների համապարփակ լուծման մեխանիզմներ: Միաժամանակ, պատմամշակութային անշարժ ժառանգության օրենսդրության կատարելագործումը միտված է բնագավառի միջազգային կոնվենցիաների պահանջներին և չափանիշներին գործող օրենքը համապատասխանեցնելուն:<br>Օրենքի նախագծի մշակման ընթացքում առաջացած խնդիրների լուծումները գտնելու նպատակով ուսումնասիրվել է հուշարձանների վերաբերյալ միջազգային առաջավոր փորձը՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Գերմանիայի, Լեհաստանի, Լատվիայի, Ուկրաինայի պատմության և մշակույթի պահպանության և օգտագործման բնագավառը կարգավորող օրենսդրությունը՝ մասնավորապես կիրառվող հասկացությունները, հանրապետական գործադիր իշխանությանը՝ կառավարության և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և այլն:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ և կիրարկմամբ կապահովվի հուշարձանների պահպանության, ուսումնասիրման, վերականգնման, ամրակայման, նորոգման, օգտագործման, իրավական դաշտը միաժամանակ կնպաստի պատմության և մշակույթի հուշարձանների բնագավառում իրականացվող մշակութային գործունեության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը՝ էապես նպաստելով համակարգում առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետությանը, ինչպես նաև պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակմանը:<br><br>*1.3) «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆայի ոլորտի համապարփակ կարգավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացման պետական քաղաքականության սկզբունքները և ձևերը, դրա գործունեության հետ կապված իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները: Նախատեսվում է կանոնակարգել կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական կառավարման և այլ մարմինների լիազորությունները, որոնք մասնակցություն կունենան ֆիլմարտադրությանն աջակցելու և կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացման ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելու գործընթացում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կինեմատոգրաֆիայի ոլորտը կարգավորող օրենք, որի արդյունքում մի շարք կարևոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չեն |

ֆիլմարտադրության, ֆիլմի վարձույթի, ցուցադրման, միջազգային կինոփառատոների և կինոշուկաների մասնակցության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերը: Որևէ կերպ չի խրախուսվում օտարերկրյա ներդրումների միջոցով ֆիլմերի նկարահանումը Հայաստանի Հանրապետությունում: Կինոթատրոններում և հեռուստատեսությամբ ոչ բոլոր ֆիլմերի հրապարակային ցուցադրումն է իրականացվում տարիքային սահմանափակման մասին նշումով, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ երեխաների իրավունքների և բարոյական նորմերի պահպանությանը: Կարգավորված չէ ֆիլմարտադրության և ֆիլմի վարձույթի համար պահանջվող փաստաթղթերի՝ ֆիլմարտադրության հավաստագրի, նկարահանման արտոնագրի, վարձութային վկայականի և ազգային ֆիլմի կարգավիճակի գործընթացը, որով հնարավորություն կտրվի ֆիլմարտադրությամբ և ֆիլմի ցուցադրությամբ զբաղվող կազմակերպություններին արտադրել և ցուցադրել որակյալ ֆիլմեր:
Միաժամանակ, օրենքով կկանոնակարգվեն կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լիազորությունները, որի հիմնական նպատակը ֆիլմարտադրությանը, ֆիլմի վարձույթին, ֆիլմի ցուցադրմանը, ֆիլմի առաջխաղացմանն ու պահպանությանն աջակցելուն և կինոլսարանի գեղագիտական ճաշակը բարձրացնելուն ուղղված գործունեությունն է:

### 1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Օրենքի նախագիծը նպատակ ունի՝

- հստակեցնելու կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմինների լիազորությունները.
- սահմանելու կինոնկարների արտադրության, կինովարձույթի, ցուցադրման, կինոփառատոներին մասնակցության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերի իրականացման հիմնական կանոնները.
- հստակեցնելու կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի գործառույթները.
- սահմանելու Հայաստանի Հանրապետությունում հրապարակայնորեն ցուցադրվող կինոնկարների պարտադիր դասակարգման պահանջ՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակումների.
- կինեմատոգրաֆիայի ոլորտում առաջարկություններ ներկայացնելու համար ներգրավելու քաղաքացիական հասարակությանը:

### 2. Կարգավորման առարկան

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆայի ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի նորմատիվ դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրարկման համար:
Միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա կմշակմվի նախագիծը, որում հատկապես կկարևորվի պետական աջակցության, լիազորությունների, միջազգային համագործակցության ու համատեղ արտադրության և մի շարք այլ հարցեր:

### 3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ օրենքի նախագծի ընդունումը նոր խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կինեմատոգրաֆիայի զարգացման համար, մասնավորապես՝ օրենսդրական փաթեթի ընդունումը կնպաստի՝

- կինեմատոգրաֆիայի պետական ֆինանսսավորման և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացմանը, կինեմատոգրաֆիայի նյութատեխնիկական ու ենթակառուցվածների զարգացմանը,
- կինեմատոգրաֆիայի ոլորտում տնտեսական գործունեության ակտիվության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, օտարերկրյա ֆիլմարտադրության համար Հայաստանի Հանրապետությունում գրավիչ պայմանների ստեղծմանը,
- նոր ֆիլմերի ստեղծմանը, այդ թվում՝ երեխաների և պատանիների համար, ինչպես նաև ֆիլմերի որակի բարձրացմանը, ոլորտի աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացմանը,
- կինեմատոգրաֆիայի ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ ֆիլմերի համատեղ արտադրությունը,
- ֆիլմերի դասակարգման միջոցով երեխաների պաշտպանության և բարոյական նորմերի պահպանման

| | |
|---|---|
| | համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,<br>• Հայաստանի Հանրապետությունում արտադրված, ինչպես նաև համատեղ արտադրության ֆիլմերի հավաքագրմանը, մշակմանը, թվայնացմանը և տարածմանը, ֆիլմերի մեկ ընդհանուր շտեմարանի ստեղծմանը:<br><br>*1.4) «Թատրոնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է թատերական գործունեության կարգավորման անհրաժեշտությամբ, մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել թատերարվեստի զարգացման պետական քաղաքականության սկզբունքները և ձևերը, դրա գործունեության հետ կապված իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները: Նախատեսվում է կանոնակարգել ոլորտի պետական կառավարման և այլ մարմինների լիազորությունները, որոնք մասնակցություն կունենան թատերարվեստի գործունեության ողջ դաշտն առավել արդյունավետ իրականացնելու գործընթացում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում բացակայում է թատերական գործունեության ոլորտը կարգավորող օրենք, որի արդյունքում մի շարք կարևոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չեն թատերական գործունեության իրականացնող անհատների և կազմակերպությունների պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքի նախագիծը նպատակ ունի՝<br>• հստակեցնելու թատերական գործունեության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմինների լիազորությունները,<br>• սահմանելու թատերական գործունեության տեսակները, դաշտում ներգրավված կազմակերպությունների իրավահարաբերությունները<br>• սահմանելու Հայաստանի Հանրապետությունում թատերական ներկայացման պարտադիր դասակարգման պահանջ՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակումների.<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է թատերական գործունեության ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի նորմատիվ դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրարկման համար:<br>Միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա կմշակվի նախագիծը, որում հատկապես կկարևորվի պետական աջակցության, լիազորությունների, միջազգային համագործակցության և մի շարք այլ հարցեր:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ օրենքի նախագծի ընդունումը նոր խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում թատերական գործունեության զարգացման համար, մասնավորապես՝ օրենսդրական փաթեթի ընդունումը կնպաստի՝<br>• թատրոնի պետական ֆինանսավորման և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացմանը, նյութատեխնիկական ու ենթակառուցվածների զարգացմանը,<br>• թատերական գործունեության եկամտաբերության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: |
| 160 | ***Պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացում***<br><br>*2.1) «Դաշտադեմ ամրոց», պատմաճարտարապետական արգելոց-թանգարան ստեղծելու, «Դաշտադեմ ամրոց»* |

*պատմաճարտարապետական արգելոց-թանգարան մասնաճյուղ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

«Դաշտադեմ» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի ստեղծումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Դաշտադեմ» հուշարձանն ունի հանրապետական նշանակություն և ընդգրկված է պետական ցուցակում: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը բխում է նաև «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից»:

Պատմամշակութային արգելոցի ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորության: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցնի ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի և 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հուշարձանները պետական սեփականություն են և 2005 թվականից վերականգնվում են պետական միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը:

**2. Կարգավորման առարկան**

Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին:

*2.2) «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցներ ստեղծելու, «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցների մասնաճյուղեր ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ*

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցների ստեղծումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Մայրաքաղաք Արտաշատ», «Մայրաքաղաք Դվին» հուշարձաններն ունեն հանրապետական նշանակություն և ընդգրկված է պետական ցուցակում: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը բխում է նաև «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից»:<br>Պատմամշակութային արգելոցների ստեղծումը չի հանգեցնում լրացուցիչ ֆինանսական պարտավորության: Դրանց հետագա պահպանությունն ու շահագործումն իրականացվելու է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին: Արգելոցների ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում է «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետի և 17-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նրանք ստեղծվում են պատմական միջավայրի և հուշարձանների շուրջը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հուշարձանները պետական սեփականություն են և վերականգնվում են պետական, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է լինելու պատմամշակութային զբոսաշրջության հիմքի վրա զբոսաշրջության բոլոր ձևերի համակցությամբ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ձևավորմանը, մասնավորապես՝ համայնքներում զբոսաշրջության զարգացում, տեղական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային ներուժի բացահայտում, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում, այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոների կազմակերպման միջոցով:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պատմամշակութային արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձանների, համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Արգելոց-թանգարանի հուշարձանների շուրջ պատմամշակութային արգելոցների ստեղծում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման բնագավառում արդյունավետության, ներդրումային դաշտի գրավչության բարձրացում և զբոսաշրջության ծավալների ընդլայնում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցների ներգրավումը, ինչպես նաև պետական ֆինանսավորման առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, արգելոցների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների թվի աճին: |
| 161 | *Դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի ներդրում*<br><br>**1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մրցակցային հիմունքներով դրամաշնորհների տրամադրումը միտված է արվեստի տարբեր ոլորտներում որակի և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ոլորտներում ստեղծագործական, պետական, ոչ պետական կազմակերպությունների և անհատ ստեղծագործողների հավասար մեկնարկային պայմանների ապահովմանը: Ստեղծագործական դեբյուտային, նորարարական ծրագրերի ընդլայնմամբ կխրախուսվեն երիտասարդ արվեստագետները և կստեղծվի բարենպաստ միջավայր՝ ստեղծագործական կարողությունների արտահայտման և իրացման համար:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Արվեստի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ժամանակակից արվեստի զարգացմանն ուղղված և մշակութային միջոցառումների աջակցության նպատակով պետության կողմից հատկացվող դրամաշնորհները բաշխվում են սահմանված ընթացակարգով, որը, սակայն, չի կարող ապահովել գործընթացի թափանցիկությունն ու մրցակցային բնույթը, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր՝ բացասական ազդեցություն ունենալով պետական միջոցների բաշխման արդյունավետության և հաշվետվողականության ողջ գործընթացի վրա:<br>Դրամաշնորհների բաշխման ներկա ընթացակարգը, որոշումների կայացման կենտրոնացվածությամբ և վարչահրամայական բնույթով պայմանավորված, առաջ է բերում մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ արվեստի տարբեր բնագավառների ոչ համաչափ զարգացում, ստեղծագործող անհատների, միավորումների և մշակութային կազմակերպությունների համար մրցակցային դաշտի բացակայություն, մշակութային արտադրանքի ստեղծման և իրացման գործընթացներում անհավասար պայմանների առկայություն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ներդնել դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգ, որով կկանոնակարգվի պետական միջոցների տրամադրման ողջ գործընթացը՝ հայտի ներկայացում, որոշումների կայացման մեխանիզմ, հաշվետվությունների ներկայացում և այլն: Դրամաշնորհների տրամադրման նոր ընթացակարգում սկբունքային դերակատարություն է վերապահվելու հատուկ ձևավորված մրցութային հանձնախմբերին, որոնց միջոցով կտրվի մասնագիտական եզրակացություն յուրաքանչյուր ստացված հայտի վերաբերյալ և ըստ այդմ, որոշիչ դերակատարություն կունենան դրամաշնորհների բաշխման գործընթացում՝ ապահովելով ողջ գործընթացի բաց-հրապարակային և բնույթն ու թափանցիկությունը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական դրամաշնորհների տրամադրման գործընթացի թափանցիկության ապահովում, ոլորտին հատկացվող միջոցների արդյունավետության բարձրացում, որոշումների կայացման ապակենտրոնացում, դրանցում մասնագիտական համայնքի ներգրավվածության ապահովում:<br><br>3. *Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Արդյունքում կապահովվի դրամաշնորհների ֆինանսավորման արդարացիությունն ու թափանցիկությունը, կխթանվի արվեստի տարբեր ոլորտների համաչափ զարգացումը, նորարարական և փորձարարական ծրագրերի իրականացումը: |
| 162 | *Պետական ստեղծագործական կազմակերպությունների կառավարման մոդելի բարեփոխում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետական ստեղծագործական կազմակերպությունների կառավարման մոդելի բարեփոխումը պայմանավորված է պետական մշակութային հաստատությունների գործունեության բնականոն ընթացքի ապահովման անհրաժեշտությամբ, նպատակ ունի ապահովելու կազմակերպությունների ստեղծագործական և վարչական-տնտեսական ղեկավարման ներդաշնակությունը, կանոնակարգելու և հավասարակշռելու գեղարվեստական ղեկավարություն-տնօրեն իրավահարաբերությունները:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում պետական ստեղծագործական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը չի համապատասխանում ստեղծագործական գործունեության արդի մարտահրավերներին, խոչընդոտում է կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի արդյունավետությանը, զրկում է թատերահամերգային գործունեության առևտրային բաղադրիչի լիարժեք կիրարկման հնարավորություններից:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ստեղծագործական կազմակերպությունների մասով լրամշակել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ներդնել թատերահամերգային կազմակերպությունների ղեկավարման առավել արդյունավետ մոդելներ՝ չբացառելով նշված կազմակերպությունների առևտրայնացման ուղղությամբ իրականացվող քայլերը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակմամբ, որը որը հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրարկման համար:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ ծրագրի իրականացմամբ կբարելավվի պետական ստեղծագործական կազմակերպությունների գործունեությանը, կներդրվի թատերահամերգային կազմակերպությունների կառավարման նոր մոդելը, որը կապահովի ժամանակակից պահանջներին համահունչ ստեղծագործական միջավայրի բնականոն զարգացումը, կնպաստի պետական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործմանը: |
| 163. | *Աբոնեմենտային համակարգի ներդրման ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Աբոնեմենտային համակարգի ներդրումն ապահովում է ամեն հերթական ուսումնական տարվա բոլոր աշակերտների մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորությունը և մշակութային կյանքով ապրելու իրավունքը: Թեև ներկայումս նախատեսվում են որոշ ներառման մեխանիզմներ, որոնք ապահովում են աշակերտների կամ ուսանողների անվճար կամ նվազեցված տոմսարժեքով մուտքը մշակութային հաստատություններ, սակայն կարիք կա համապետական մասշտաբով իրականացվող քաղաքականության, որը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր աշակերտին թույլ կտա տարվա ընթացքում մեկ անգամ անվճար մուտք գործել թատրոն, համերգասրահ կամ թանգարան: Ծրագրի նպատակներն են մշակութային միջոցառումներին հաղորդակցվելու հնարավորություն ստեղծելը, վաղ հասակից մշակութային հաստատություն այցելելու ավանդույթի ձևավորումը, մշակութային հաստատությունների աշխուժացումը և դրանց համար մրցակցային պայմաններ ստեղծելը՝ խթանելով մասնագտական աճի ձգտումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարզային և հատկապես հեռակա համայնքների բնակիչները և հատկապես դպրոցահասակները առավել հազվադեպ են այցելում մշակութային հաստատություններ, ինչի պատճառներից են մշակութային հաստատությունների անհավասար բաշխվածությունը, ինչպես նաև սոցիալական անբավարար հնարավորությունները: Մի շարք համայնքներում և նույնիսկ մարզերում առկա չեն թատրոններ, համերգասրահներ կամ թանգարաններ, իսկ միջհամայնքային կամ միջքաղաքային փոխադրումները հավելյալ ֆինանսական բեռ են ծնողների համար: Մյուս կողմից հատկապես մարզային մշակութային հաստատությունները կարիք ունեն նոր հանդիսատեսի հոսքերի և մրցակցային միջավայրի ձևավորման, ինչն ապահովվում է աբոնեմենտային համակարգի ներդրմամբ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներդնել աբոնեմենտային համակարգ բոլոր դպրոցների աշակերտների համար մշակութային հաստատությունների եռակի մուտքի հնարավորությամբ՝ հիմնված «dasaran.am»-ում ստեղծված միասնական տոմսային համակարգի, խաղացանկի և սոցիալական հարթակի վրա:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Աբոնեմենտային համակարգը հնարավորություն է տալիս մոտ 380,000 աշակերտի՝ անկախ սոցիալական ծագումից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը: Ծրագիրը երաշխավորում է դպրոցահասակների մշակութային իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր թիրախային խմբեր և մրցակցային հնարավորություններ: Վերջինս առավել կարևոր է հատկապես ճգնաժամային վիճակում գտնվող մարզային հաստատությունների համար, քանի որ երաշխավորում է ամբողջական դահլիճի վարձավճարը՝ անկախ հանդիսատեսի քանակից:<br><br>***3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Միջոցառման հիմնական արդյունքներն են՝ աշակերտների պարբերական այցերը մշակութային հաստատություններ, մշակութային հաստատությունից օգտվելու ավանդույթի ձևավորումը վաղ հասակից, ճաշակի ձևավորումը դպրոցահասակների շրջանում, մշակութային գիտելիքների և տեղեկության տրամադրումը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիական միջոցները, հատկապես մարզային մշակութային կյանքի ակտիվացումը՝ ի հաշիվ նոր հանդիսատեսների հոսքի, մրցակցային միջավայրի ձևավորումը և դրա արդյունքում առավել բարձրորակ մշակութային արտադրանքի տրամադրումը: |

| | |
|---|---|
| 164. | *«Քո արվեստը դպրոցում» դրամաշնորհային ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, նպատակ ունի սիրելի և հասանելի դարձնելու ազգային և համաշխարհային արվեստն ու մշակույթը դպրոցականներին ներգրավվելու մշակութային կյանքում, դաստիարակելու վաղվա բարձրաճաշակ և արվեստասեր քաղաքացուն:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում հանրապետությունում հանրակրթական դպրոցներում սովորող շուրջ 350000 աշակերտներից չնչին տոկոսն է մշտապես հաղորդակցվում արվեստի տարբեր բնագավառներին և մշակութային կյանքին ընդհանրապես, որն իր հերթին մեծապես խոչընդոտում է անձի ներդաշնակ զարգացման գործընթացին: Ոլորտում կատարված հետազոտությունները վկայում են, որ արվեստի և մշակույթի հետ պարբերաբար առնչություն ունեցող երեխաները զգալիորեն տարբերվում են իրենց հասակակիցներից, առավել հաջողակ են ուսուցման և դասընկալման գործընթացներում:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է իրականացնել «Քո արվեստը» ծրագիրը, որը թույլ կտա ապահովել գեղագիտական դաստիարակության բնականոն զարգացման գործընթացը, ապահովել հայկական և համաշխարհային մշակույթի հանրահռչակման գործընթացը հանրակրթության ոլորտում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հանրակրթական դպրոցներում արվեստին նվիրված դասընթացների իրականացում, արվեստագետների վարպետության դասերի կազմակերպում, մշակույթ-կրթություն կապերի ամրապնդում:<br><br>***3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Կրթական հաստատություններում քննադատական, վերլուծական և ստեղծագործ մտքի զարգացում, ընթերցանության, դասական երաժշտության և կերպարվեստի նկատմամբ հետաքրքրության մեծացում, ժամանակակից արվեստագետների արժևորում, նրանց գործունեության հանրահռչակում արվեստագետ-աշակերտ անմիջական կապի և շփման ստեղծում: |
| 165. | *Ուսումնամեթոդական և գործնական օգնություն մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտական և մանկավարժական կազմին*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների համակարգման, շնորհալի երեխաների և պատանիների բացահայտման և մասնագիտական կարողությունների զարգացման, գեղարվեստական կրթության ավանդույթների հարստացման, փորձի փոխանակման և ստեղծագործական շփումների ընդլայման անհրաժեշտությունից ելնելով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործում է 207 մշակութային կրթություն իրականացնող հաստատություններ, որոնց բնականոն գործունեության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է հանդիսանում ուսումնամեթոդական և գործնական օգնության, դասատուների և աշակերտական կազմի վերապատրաստման և կատարելագործման գործընթացի շարունակական կազմակերպումը: Գեղարվեստական կրթության կազմակերպման խորհրդային ավանդույթները ներկայում դարձել են ժամանակավրեպ, չեն համապատասխանում արդի մարտահրավերներին և ամբողջովին չեն ապահովում մշակութային կրթության որակը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրապետության առաջատար մասնագետների և մեթոդիստների միջոցով ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել մարզերում գործող ուսումնական հաստատություններին, ամրապնդել մշակութային կրթության հաստատությունների միջև կապերը, ստեղծել փորձի փոխանակման նոր հարթակներ: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Մշակութային կրթության բարելավում, միասնական կրթական դաշտի ձևավորում, ուսումնամեթոդական նոր ձեռնարկների ներդրում<br><br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Դասավանդման նոր մեթոդների և հնարքների ներդրում, դասավանդման որակի բարձրացում, շնորհալի երեխաների ունակությունների բացահայտում, նրանց մասնագիտական կարողությունների զարգացում, դասավանդման որակի բարձրացում, նոր առարկաների և մասնագիտությունների ներդրում: |
| 166. | *«Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման» ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է պետական աջակցության ներքո մշտապես գործող երաժշտական գործիքների հավաքածուի ստեղծման և շարունակական համալրման անհրաժեշտությամբ, նպատակ ունի աջակցել շնորհալի երեխաներին՝ տրամադրելով նրանց երաժշտական գործիքներ ժամանակավոր օգտագործման համար ու դրանով իսկ ապահովելով նրանց մշակութային կրթություն ստանալու իրավունքը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>1996 թվականին մշակութային կազմակերպությունները, այդ թվում նաև գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները՝ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները անցան տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության: Համայնքային բյուջեները մեծ դժվարությամբ են կարողանում ապահովել ամենաանհրաժեշտ պահպանման ծախսերի միայն մի մասը: Անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, համայնքների ոչ բավարար տնտեսական ներուժը, ոչ բավարար բարոյահոգեբանական պատրաստվածությունը, առկա սոցիալ-տնտեսական պայմանները, ընդհանուր չափորոշիչների բացակայությունը առաջացրեցին մի շարք նոր հիմնախնդիրներ (կառավարման, ֆինանսավորման, կադրային ապահովման, կրթության մատչելիության, նյութատեխնիկական հագեցվածության, ուսումնամեթոդական ապահովվածության ոլորտներում): Անբավարար են նաև գույքային պայմանները, եղած գործիքները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, որը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի վրա: Երաժշտական, արվեստի դպրոցներում հատկապես մեծ է դաշնամուրի, հարվածային, ժողովրդական, փողային և լարային գործիքների պահանջարկը, նկարչական դպրոցները ունեն տարրական նյութերի կարիք (թուղթ, ներկեր, մոլբերտ և այլն):<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է շարունակաբար իրականացնել երաժշտական գործիքների տրամադրման գործընթացը, կատարելագործել գործիքների գնման և հանձնման ընթացակարգերի թափանցիկությունը, առավել հասցեական դարձնել գործիքների բաշխումը՝ հիմնական շեշտադրումը կատարելով մարզերում նոր մասնագիտական դասարանների ձևավորմանն ու շնորհալի երեխաների կատարողական ունակությունների քաջալերմանն ու խթանմանը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Երաժշտակրթական ծառայություններ մատուցող հաստատությունների նյութատեխնիկական բազայի արդիականացում, երաժշտական գործիքների ընդհանուր պահանջարկի ճշգրտում, տեղեկատվական բազայի ստեղծում:<br><br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Երաժշտական և արվեստի դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրում, նոր մասնագիտական դասարանների ձևավորում, շնորհալի երեխաների համար ուսուցման մատչելի պայմանների ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում: |
| 167. | *«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրապարակման» ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացումը պայմանավորված է մշակութային կրթության որակի բարելավման, ժամանակակից պահանջներին համահունչ ուսումնամեթոդական ձեռնարկների, առարկայական ծրագրերի, աշխատանքային |

| | |
|---|---|
| | տետրերի, դասագրքերի, ժողովածուների և ուղեցույցների մշակման և կիրառման, դպրոցների գրադարանների համալրման, դասական և ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների և պրակտիկ նյութերի տարածման և հանրահռչակման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1 . Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում Հայաստանում գործող երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի 207 դպրոցները երկար տարիներ չեն համալրվել անհրաժեշտ գրականությամբ և ուսումնամեթոդական ձեռնարկներով, որն, իր հերթին բացասաբար է անդրադառնում կրթության կազմակերպման գործընթացին: Մշակութային կրթության հաստատությունների ուսուցիչները հնարավորություն չունեն ծանոթանալու դասավանդման ժամանակակից մեթոդներին, արդի գրականությանը: Եղած ուսումնամեթոդական գրականությունը հիմնականում ռուսերեն է, և հայալեզու գրականության պակասը ոլորտի հիմնական խնդիրներից է:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի իրականացմամբ լուծվում է հայալեզու գրականության հրատարակման և տարածման խնդիրը, ապահովվում է մասնագիտական նոր դասագրքերի, ժողովածուների և գրականության հասանելիությունն ու մատչելիությունը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում, ժամանակակից արվեստագետների ինքնիրացման ապահովում, մշակութային կրթության որակի ապահովում, Հայաստանում գործող երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների գրադարանային ֆոնդերի համալրում:<br><br>***3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների մասնագիտական գրականության անվճար բաշխում, նոր ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, ժողովածուների ստեղծում, մշակութային կրթության իրականացնող հաստատություններում ուսումնառության որակի բարձրացում: |
| 168. | *Մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների զարգացման ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է մարզերում երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցների գործունեության և զարգացման, մարզերի մշակութային կյանքում մշակութային ուսումնական հաստատությունների դերակատարության բարձրացման, մշակութային և գեղարվեստական կրթություն ստանալու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2017-2018 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետության մարզերում գործում են 178 գեղարվեստական կրթական իրականացնող ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ երաժշտական 79, արվեստի 76, գեղարվեստի 20, պարարվեստի 3 դպրոցներ, որտեղ սովորում եմ 24991 աշակերտ, դասավանդում՝ 2920 մանկավարժ: Համայնքային ենթակայության ուսումնական հաստատությունների մեծ մասը կարիք ունեն շենքային պայմանների բարելավման: Որոշ գյուղական համայնքներում գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող հաստատությունները տեղակայված էին մշակույթի տներում և ակումբներում, որոնց մի մասը ներկայումս լիարժեք չեն գործում և ունեն հիմնանորոգման կարիք: Համայնքային բյուջեները այսօր մեծ դժվարությամբ են կարողանում ապահովել պահպանման ծախսերի միայն մի մասը: Անբավարար են նաև գույքային պայմանները, եղած գործիքները, նկարչական պարագաները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, որը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի վրա: Բացի այդ, լուծված չեն ուսումնական հաստատությունների և մանկավարժների կարգավիճակի, սոցիալական փաթեթում նրանց ընդրգկելու, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, աշխատավարձի, դրույքաչափերի վերանայման խնդիրները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի իրականացմամբ լուծվում են մարզերում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների զարգացման, նյութատեխնիկական բազայի համալրման, նոր աշխատատեղերի ստեղծման, մշակութային համաչափ զարգացման և մարզերում մշակութային կյանքի աշխուժացման խնդիրները: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս արդիականացնել մշակութային կրթության համակարգը, ներդնել նոր մասնագիտություններ, առարկաներ, համալրել նյութատեխնիկական բազան, կարգավորել օրենսդրական դաշտը, ստեղծել նոր աշխատատեղեր համայնքներում, իրականացնել: հասցեական և թիրախավորված կադրային քաղաքականություն:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Մշակութային կրթության ապակենտրոնացում, մշակութային կրթություն ստանալու իրավունքի լիարժեք ապահովում, մարզերում մասնագետների պահանջարկի բավարարում, մշակութային կրթության ոլորտի միասնական դաշտի բնականոն գործունեության ապահովում, մասնագիտական սերնդափոխության ապահովում, գեղարվեստական կրթություն իրականացնող կրթական հաստատությունների նյութատեխնիկական բազայի արդիականացում, կադրերի արտահոսքի կանխում, բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի և հանդիսատեսի ձևավորում: |
| 169. | *Հայաստանում միջազգային փառատոների և մրցույթների, հեղինակավոր նախագծերի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է համաշխարհային մշակույթի, կատարողական արվեստի ժամանակակից միտումները հայ հանդիսատեսին ներկայացման, միջմշակութային առնչությունների, փորձի փոխանակման և ստեղծագործական համագործակցության ամրապնդման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում Հայաստանում իրականացվում են տարբեր մշակութային միջազգային ծրագրեր, միջոցառումներ, փառատոներ, որոնք մեծ դերակատարություն ունեն հայ մշակույթի զարգացման և միջազգայնացման, հայկական արվեստի և մշակույթի հանրահռչակման գործում: Սակայն բավարար չէ ծրագրերի միջազգային ճանաչումը, հանրային ուշադրությունը իրականացվող միջոցառումների նկատմամբ, ինչպես նաև ծրագրերի ֆինանսավորումը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ապահովել միջազգային նախագծերի իրականացման շարունակականությունն ու գեղարվեստական ընդլայնումը, միջազգային հեղինակավոր կառույցների անդամակցության գործընթացի ապահովումը, անցկացվող ծրագրերի աշխարհագրության ընդլայնումը, ծրագրերում աշխարհահռչակ արվեստագետների ներգրավումը, բարձր նշաձողով ստեղծագործական նոր ծրագրերի իրականացումը, մշակութային զբոսաշրջության զարգացման գործընթացում միջազգային նախագծերի ներուժի ամբողջական օգտագործումը, հասարակության լայն շերտերի համար իրականացվող ծրագրերի հասանելիության ապահովումը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանում միջազգային հեղինակավոր նախագծերի իրականացումը հնարավորություն է ընձեռում հաղորդակցվելու համաշխարհային արվեստին և մշակույթին, ժամանակակից արվեստի նոր միտումներին, կատարողական արվեստի վերջին ձեռքբերումներին, ապահովելու միջազգային փորձի փոխանակման նոր հարթակների, հայ և օտարազգի արվեստագետների շփման ստեղծմանն ու ընդլայնմանը, Հայաստանի՝ որպես մշակութային միջոցառումների իրականացման հարուստ ավանդույթներ, կիրթ և բարձրաճաշակ հանդիսատես ունեցող երկրի դիրքավորմանը:<br><br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br><br>Հայկական մշակույթի հանրահռչակում, համաշխարհային մշակութային գործընթացներում հայաստանյան մշակույթի դիրքորոշում, հայկական մշակութային միջավայրի բարձր նշաձողի ապահովում, հայ արվեստագետների, մշակույթի գործիչների արժևորում և հանրահռչակում, մշակութային զբոսաշրջության զարգացում, արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացում, փորձի փոխանակման նոր հարթակների ստեղծում, համաշխարհային փորձի տեղայնացում: |
| 170. | *Մարզերում առկա մշակութային օջախների վերագործարկում* |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մարզերում գործող մշակութային օջախների, մշակույթի տների վերագործարկման ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է մշակույթի ապակենտրոնացման, մշակույթի տարածքային համաչափ զարգացման և մարզաբնակչության՝ երկրի մշակութային կյանքի լիիրավ մասնակցության ապահովման անհրաժեշտությամբ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում պետության մշակութային կյանքը կենտրոնացած է մայրաքաղաքում, մեծամասշտաբ մշակութային միջոցառումները իրականացվում են Երևանում և, ըստ այդմ, մարզերում ապրող քաղաքացիներին հասանելի չեն մշակութային բարիքները, մշակութային բարձրարժեք արտադրանքն ու ծառայությունները: Բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներով պայմանավորված՝ մարզերի և համայնքների մշակութային օջախները մղվել են հետին պլան, այլևս չեն կատարում նախկին դերակատարությունը, բարոյապես և ֆիզիկապես մաշվել են շենք-շինությունները:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող ծրագրով նախատեսվում է իրականացնել մարզային մշակութային տների վերագործարկման համալիր ծրագիրը, կատարել ուսումնասիրություններ և քարտեզագրում, մշակել վերագործարկամն և մշակութային կյանքի աշխուժացման հայեցակարգ-նախագիծը, որը հնարավորությունն կտա ամբողջապես տիրապետել մշակույթի տների վերագործարկման հետ կապված խնդիրներն ու առաջարկվող լուծումները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարզերի մշակույթի տների վերագործարկում, մարզերում մշակութային կյանքի աշխուժացում, մշակույթի համաչափ տարածքային զարգացում և ապակենտրոնացում, նոր աշխատատեղերի ստեղծում, պետության մշակութային կյանքին քաղաքացու մասնակցության լիիրավ ապահովում:<br><br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միասնական մշակութային դաշտի ձևավորում, մարզաբնակչության մշակութային ժամանցի որակի բարելավում,-մարզային մշակութային զբոսաշրջության զարգացում, հանրապետական և միջազգային մշակութային նախագծերի իրականացման հնարավորություն,-մշակութային ինքնավարության ապահովում: |
| 171. | *Մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության սոցիալական ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Ծրագրի նպատակը հանրապետությունում կենսաթոշակի անցած քաղաքացիների մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորության և մշակութային կյանքով ապրելու իրավունքի ապահովումն է, մշակութային միջոցառումներին հաղորդակցվելու հնարավորութան ստեղծումը, ակտիվ կենսակերպի խրախուսումը և նրանց շփման, հաղորդակցման ու ժամանցի կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Թեև ներկայում նախատեսված են որոշ ներառման մեխանիզմներ, որոնք ապահովում են բնակչության որոշ խավերի համար անվճար կամ նվազեցված տոմսարժեքով մուտքը մշակութային հաստատություններ, սակայն կարիք կա առավել ընդգրկուն քաղաքականության, որը Հայաստանի յուրաքանչյուր կենսաթոշակի անցած քաղաքացու հնարավորություն կտա տարվա ընթացքում անվճար մուտք գործել մշակութային հաստատություններ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մարզերի և հատկապես հեռակա համայնքների բնակիչներն ու կենսաթոշակառուները առավել հազվադեպ են այցելում մշակութային հաստատություններ, ինչի պատճառներից են մշակութային հաստատությունների անհավասար բաշխվածությունը, ինչպես նաև սոցիալական ոչ բավարար հնարավորությունները: Մի շարք համայնքներում և մարզերում չկան թատրոններ, համերգասրահներ կամ թանգարաններ, իսկ միջհամայնքային, միջքաղաքային փոխադրումները հավելյալ ֆինանսական խնդիրներ են շատերի համար: Մյուս կողմից մշակութային հաստատությունները ևս կարիք ունեն առավել բազմաշերտ, փորձառու հանդիսատեսի հոսքերի և վերլուծական միջավայրի ձևավորման, ինչն ապահովվում է անվճար տոմսերի կիրառմամբ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվող միջոցառումների, փառատոնների շրջանակում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցաբար համապատասխան |

| | |
|---|---|
| | մշակութային հաստատություններ կենսաթոշակառուների անվճար այցելություններ՝ դահլիճի ընդհանուր տեղերի քանակի 10%-ի չափով տեղերի տրամադրմամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մշակույթի նախարարության ենթակայության մշակույթային հաստատությունների ընդհանուր տեղերի քանակի 10%-ի չափով անվճար տոմսերի տրամադրումը հնարավորություն է տալիս անկախ սոցիալական ծագումից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ ցանկացած այլ քաղաքի տեղական ու միջազգային մշակութային միջոցառմանը: Ծրագիրը երաշխավորում է կենսաթոշակառուների մշակութային իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր թիրախային խմբեր և մրցակցային հնարավորություններ:<br><br>***3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Արդյունքում մշակութային հաստատություններ թոշակառուների պարբերական այցերով կամրապնդվի մշակութային հաստատությունից օգտվելու ավանդույթը, կխրախուսվի տարեցների ակտիվ կենսակերպը, կբարձրանա ինքնաիրացման ու ինքնաբավության մակարդակը: |
| 172. | *Ներառական ծրագրերի իրականացում մայրաքաղաքում և մարզերում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Իրականացվող գործընթացները նպատակաուղղված են լինելու հասարակության խոցելի խմբերի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, նրանց ստեղծագործական հետագա զարգացման և առաջխաղացման պայմանների ապահովմանը, ինքնադրսևորման հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հասարակության խոցելի խմբերի ստեղծագործական ներուժի բացահայտման, արվեստի տարբեր բնագավառներում նրանց ինքնադրսևորման և մշակութային գործընթացներին ներգրավման խնդիրը հասարակության առաջընթացի և մշակութային զարգացման կարևոր պայմաններից է: Մինչ այժմ, արվեստի և մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերում հիմնական շեշտադրումն ուղղվել է մշակութային ենթակառուցվածքների գործունեության բնականոն պայմանների ապահովման, արվեստի բնագավառում ստեղծագործող անհատների խրախուսման և նրանց գործունեության խթանման գործընթացներին: Իրականացմամբ կլուծվի նրանց ինքնադրսևորման, մշակութային կյանքին հաղորդակցման և լիիրավ մասնակցության խնդիրը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներառական արվեստի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր ծրագիր, որը թույլ կտա ապահովել մշակույթի համընդհանուր ներառականության անխաթար գործընթացը, շարունակել ստեղծագործող անձանց ինքնադրսևորման հավասար և արդարացի պայմանների ապահովման, ստեղծագործական ծրագրերի և գործունեության աջակցության խրախուսման գործընթացները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Արվեստի տարբեր բնագավառներում ստեղծագործական գործունեության հավասար և արդարացի աջակցության ապահովում, հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորում:<br><br>***3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը***<br>Արդյունքում հնարավորություններ կստեղծվեն հասարակության առանձին խավերի ստեղծագործական ներուժի բացահայտման և խթանման համար, ինչպես նաև մշակույթի միջոցով կապահովվի նրանց ինտեգրումը հասարակություն՝ առանձին խավերի և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցմամբ: |
| 173. | *Հայ-ռուսական ֆիլմի ֆոնդի ստեղծում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է Հայաստանում և Ռուսաստանում ֆիլմարտադրության զարգացման և համատեղ արտադրանքի ստեղծման, կինոարվեստի զարգացման և հանրահռչակման, |

| | |
|---|---|
| | մշակութային երկխոսության խորացման, ոլորտի տաղանդաշատ ներկայացուցիչներին խորհրդատվական, մասնագիտական, ֆինանսական և գործընկերային աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մինչ օրս Հայաստանի և Ռուսաստանի միջև մշակութային համագործակցությունը եղել է բավական ինտենսիվ և արդյունավետ տարբեր միջոցառումների կազմակերպման, մշակութային օրերի անցկացման և փոխանակման բազմազան ծրագրերի իրականացման համատեքստում: Այժմ հայ-ռուսական մշակութային կապերը տևակոխում են նոր զարգացման փուլ՝ երկու երկրների մշակույթի նախարարություններին կից մշտապես գործող հաստատություն՝ ֆիլմի ֆոնդ ստեղծելու համատեքստում: Երիտասարդ և տաղանդաշատ ֆիլմարտադրողներն ունեն նոր գործընկերների, ծրագրի գաղափարակիցների և փորձի փոխանակման, ինչպես նաև արժանի գաղափարները կյանքի կոչելու համար ֆինանսական միջոցների հայթայթման և դրանց մեխանիզմների կիրառման կարիք: Կինոֆոնդի կողմից ցուցաբերվող դրամական և մասնագիտական օժանդակությունը ուղղված է կինոարվեստի զարգացմանը: Այդ իսկ պատճառով ֆինանսավորում կգտնեն առաջին հերթին այնպիսի ծրագրեր, որոնք մեծացնում են հանրության իրազեկվածությունը պատմական, մշակութային, ազգային ինքնության, միջմշակութային երկխոսության, հայ-ռուսական պատմական և մշակութային կապերի, հասարակական հնչեղության հրատապ խնդիրների վերաբերյալ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ֆոնդը հնարավորություն կտա նոր ֆիլմարտադրողներին և նորարարական ծրագրերին կյանքի կոչվել, երկու երկրների ֆիլմարտադրողների հետ ստեղծել և ամրապնդել կապերը, ֆինանսավորել նաև տարատեսակ այլ ծրագրեր՝ սկսնակ ֆիլմարտադրողներին կամ ֆիլմարտադրող ընկերություններին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու և նրանց՝ դեպի պրոֆեսիոնալ կինոասպարեզ դուրս բերելու նպատակով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ֆիլմերի հայ-ռուսական ֆոնդի ստեղծում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ֆոնդի ստեղծման արդյունքում կակտիվանա մշակութային համագործակցությունը Ռուսաստանի հետ, համագործակցության արդունքում կստեղծվի որակյալ արտադրանք, կամրապնդվեն կապերը և կընդլայնվի ոլորտում գործընկերների ցանցը: |
| 174. | *Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակների համալրում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է արդեն եղած հուշարձանների պետական ցուցակներում նորահայտ հուշարձանների ավելացումը, ինչը կապահովի դրանց պատշաճ պահպանությունը: Այս առումով կարևոր է նոր հայտնաբերված օբյեկտին նորահայտ հուշարձանի կարգավիճակ շնորհելու և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկելու կամ պետական ցուցակից հանելու վերաբերյալ չափորոշիչների մշակումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված են 24244 հուշարձաններ: Այս ցուցակները համալրելու համար անհրաժեշտ են իրավական հիմքեր, որոնք կապահովվեն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից այլ օրենքների նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումով:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից այլ օրենքների նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո կմշակվի նոր հայտնաբերված օբյեկտին նորահայտ հուշարձանի կարգավիճակ շնորհելու և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների |

| | |
|---|---|
| | պետական ցուցակներում ընդգրկելու կամ պետական ցուցակից հանելու վերաբերյալ չափորոշիչների կարգ, որի ընդունումից հետո հուշարձանների պետական ցուցակները կհամալրվեն:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Խնդիրների լուծման և սահմանված նպատակներին հասնելու հիմնական գրավական են համարվում ինստիտուցիոնալ բարեփոխումներ և օրենսդրական դաշտի կատարելագործումը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում նորահայտ օբյեկտների ընդգրկմամբ, ցուցակների ճշգրտմամբ և համալրմամբ պատմամշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման ապահովում: |
| 175. | *ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում անվանակարգի ներկայացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>ՅՈՒՆԵՍԿՕ -ի Համաշխարհային ժառանգության ցուցակում նոր հուշարձանի ընդգրկումը բխում է մշակույթի նախարարության առաջնահերթություններից մեկից՝ ապահովել հուշարձանների լավագույն պահպանությունն ու հանրահռչակումը ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում Հայաստանից 3 անվանակարգերով ընդգրկված են հետևյալ հուշարձանները՝ Հաղպատի և Սանահինի վանական համալիրները (1996 թ., 2000 թ.), Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը (2000թ.),Գեղարդավանքը և Ազատ գետի վերին հովիտը (2000 թ.):<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրները հիմնականում կապված են ընտրվող հուշարձանի իսկությունը, ամբողջականությունը, պատմական միջավայրի անխաթարությունը հիմնավորելու և կառավարման պատշաճ պլանների բացակայության հետ: Նոր մոտեցումների և ճիշտ կառավարման պլանների ներդրման արդյունքում հնարավոր կլինի հաղթահարել նշված խնդիրները և ապահովել անվանակարգի ընդունումը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>1972 թվականին ընդունված «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1993 թվականի դեկտեմբերի 5-ին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային արժեքները/վայրերը պատկանում են աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ անկախ դրանց գտնվելու վայրից: Այդ ցանկում ընդգրկված են մարդկության համար առավել մեծ արժեք ներկայացնող հուշարձանները և հուշահամալիրները:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում նոր անվանակարգի ընդգրկումը կնպաստի Հայաստանի նկատմամբ զբոսաշրջային հետաքրքրության բարձրացմանը, ինչպես նաև կապահովի ընգրկված հուշարձանների, դրանց պատմական միջավայրի լավագույն պահպանությունը, ինչպես նաև կավելանա զբոսաշրիկների թիվը: |
| 176. | *«Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մշակութային ժառանգության պահպանման, կառավարման և արժևորման տարածաշրջանային կենտրոն» մասնաճյուղում կադրերի վերապատրաստման ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>2018 թվականի հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետությունում բացված Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայ-իտալական մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոն» մասնաճյուղի նպատակներից մեկն է իտալական առաջատար փորձի տեղայնացումը և մշակութային ժառանգության ոլորտի մասնագետների վերապատրաստումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում պատմամշակութային անշարժ և շարժական ժառանգության պահպանության, վերականգնման և հետագա օգտագործման պայմանների բարելավումը մշակույթի բնագավառի ռազմավարական |

| | |
|---|---|
| | կարևոր ուղղություններից է, սակայն ռազմավարական այս ուղղությունն ամբողջ ծավալով իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող և միջազգային փորձին և նորագույն մեթոդներին տիրապետող մասնագետներ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տարածաշրջանային կենտրոնի հիմնադրմամբ գիտական, մասնագիտական, իրավական անհրաժեշտ միջավայր ու պայմաններ են ստեղծվել հուշարձանների վերականգնման աշխատանքներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստման, վերապատրաստման, վերականգնողական աշխատանքերում ավանդական և ժամանակակից մոտեցումների հնարավոր զուգակցման համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում առկա ներուժի և միջազգային մասնագետների մասնակցությամբ հուշարձանների պահպանության, ուսումնասիրման, վերականգնման, օգտագործման, մշակութային արժեքների մշակութաբանական, արվեստաբանական փորձաքննման բնագավառում մասնագիտական կարևոր հարթակի ստեղծում՝ հուշարձանների վերականգնման լիարժեք, գիտականորեն համակողմանի հիմնավորված նախագծերի մշակման, որակյալ վերականգնողական աշխատանքների իրականացման մշակույթի ձևավորման, գոյություն ունեցող կարողությունների հետագա զարգացման համար:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Վերապատրաստման ծրագրի իրականացումը կնպաստի միջմշակութային երկխոսության աշխարհագրության ընդլայնմանը, պատմամշակութային ժառանգության պահպանության ոլորտում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացմանը, վերապատրաստմանը, ինչպես նաև կնպաստի գոյություն ունեցող նեղ մասնագիտական վերականգնողական դպրոցների պահպանմանը, բնագավառի համար պահանջարկ ունեցող վերականգնման նոր դպրոցների հիմնադրմանը: |
| 177. | *Հուշարձանախմբերի կամ առանձին հուշարձանների փարածքներում QR կոդերով, բազմալեզու ցուցանակների փեղադրում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Սույն միջոցառման նպատակը հուշարձանային համալիրներում և հուշարձանների մոտ տեղադրվող տեղեկատվական ցուցանակների արդիականացումն է, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 36 «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման 2-րդ հավելվածի 20-րդ կետով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված 24244 հուշարձաններից ոչ բոլորի տարածքներում կան ցուցանակներ, ինչը այցելուների համար հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը անհասանելի է դարձնում: Ցուցանակների տեղադրումը միասնական նմուշով դեռևս հնարավոր չի եղել՝ դրանց նմուշի օրինակելի ձևի բացակայության պատճառով: Խորհրդային տարիներին հուշարձանների տարածքներում տեղադրված են եղել երկու լեզվով և միայն հուշարձանի անվանումը ներառող վահանակներ: 2011-2013 թվականներին «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» (AMAP) մշակութային հասարակական կազմակերպության հետ իրականացվել են Հայաստանի պատմամշակութային և բնության հուշարձանների հինգ լեզուներով տեղեկատվական վահանակների տեղադրման աշխատանքները: Ծրագրի իրականացման երկու տարիների ընթացքում 61 պատմամշակութային հուշարձանների և բնության տեսարժան վայրերի տարածքներում տեղադրվել են 115 տեղեկատվական վահանակ և 140 ճանապարհային ուղեցույց: Ներկայում, զբոսաշրջության զարգացման արդի պահանջներին համահունչ, անհրաժեշտ է հուշարձանները ներկայացնող վահանակները պատրաստել եռալեզու՝ QR կոդերով:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառումը նախատեսում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում եռալեզու՝ |

| | |
|---|---|
| | QR կոդերով տեղեկատվական ցուցանակների արդիականացում, որն իրականացվում է տեղեկատվական ցուցանակների նմուշի օրինակելի ձևը հաստատելու միջոցով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառումը նպատակ ունի հաստատել և հուշարձանների կամ հուշարձանախմբերի տարածքներում տեղադրել արդի պահանջներին համահունչ QR կոդերով եռալեզու տեղեկատվական վահանակներ, ինչը կնպաստի հուշարձանների հանրահոչակմանը և զբոսաշրջային գրավչության բարձրացմանը:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումը կապահովի Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում եռալեզու տեղեկատվական վահանակ-ցուցանակների տեղադրումը, ինչը քարոզչական ու տեղեկատվական նյութերի լուծման արդյունքում կբարձրացնի հուշարձանների հանրահոչակման, հասարակության և զբոսաշրջիկների տեղեկացվածության մակարդակը: |
| 178. | *Հուշարձանների (գույքի) նկատմամբ իրավունքի պետական գրանցում և վկայականների ձեռքբերում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զգալի քանակի, դրանց զբաղեցրած և անբաժանելի մաս կազմող տարածքների հաշվառման փաստաթղթերում (հատակագծային տվյալների) լրացում և իրավունքի գրանցում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների տարածքների տվյալները չունեն իրավունքի պետական գրանցում, բազմաթիվ տարածքներ կամ դրանց հատվածներ 90-ական թվականների մասնավորեցման տարիներին անկառավարելիորեն, զավթումներով տրվել են քաղաքացիների կամ իրավաբանական անձանց: Հուշարձանների զգալի տարածքների տվյալները այսօր չեն համապատասխանում պահանջվող սահմաններին, իսկ Հանրապետության հողային հաշվեկշիռներում պատմական և մշակութային հողերին վերաբերող տվյալներում առկա են բազմաթիվ անճշտություններ: Պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների տարածքների սեփականության իրավունքի պետական գրանցման բացակայության պայմաններում անհնար է դրանց պատշաճ տնօրինումը, իսկ դրանց օգտագործման տրամադրումը՝ անհնար:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների և դրանց տարածքների սահմանների հաշվառում, անճշտությունների փաստագրում և սեփականության իրավունքի գրանցման գործընթացի կանոնակարգում, սեփականության գույքային իրավունքի վկայականների ձեռքբերում: Հուշարձանների և դրանց տարածքների քարտեզագրական տվյալների ներառում Հանրապետության հողային հաշվեկշիռներում (որպես հատուկ պահպանվող նպատակային նշանակության հողերի տեսակ) և կադաստրային միասնական տվյաներում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների սեփականության իրավունքի վկայականների ձեռքբերմամբ կհաշվառվեն տարածքների սահմանների անճշտությունները, կկանոնակարգվեն դրանց և գույքային սեփականության իրավունքի գրանցման գործընթացը: Հուշարձանների հաշվառման փաստաթղթերում (վկայագիր, ներդիրներ, ցուցակներ) կկատարվեն ճշգրտումներ, հնարավոր կլինի պահանջվող տվյալները ներառել արդի քարտեզագրական նյութերի թվային համակարգում, ինչպես նաև դրան կհամապատասխանեցվեն պետական կադաստրի բնագավառում կիրառվող ձևաչափերին, ինչն էապես կնպաստի հուշարձանների պահպանության բնագավառի գույքային հարաբերությունների կանոնակարգմանը, կնվազեցնի թույլ տրվող խախտումները, հնարավորություն կընձեռի նոր մեթոդաբանությամբ իրականացնել հուշարձանների կադաստրային գնահատումը:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հուշարձանների և դրանց զբաղեցրած տարածքների վերաբերյալ կադաստրային տվյալների, հուշարձանների սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականների ձեռք բերում, դրանց վերաբերող տեղեկատվական բազան մատչելիություն, հուշարձանների և դրանց տարածքների պահպանության |

| | |
|---|---|
| | գործընթացների լիարժեք և արդյունավետ կառավարման հնարավորություններ, հուշարձանների տնօրինման, տիրապետման և առավել անվտանգ օգտագործման խնդիրների ապահովում: Հուշարձանների տարածքների վարձակալների և օգտագործողների իրավահարաբերությունների կանոնակարգում: |
| 179. | *Հուշարձանների փարածքներում ենթակառուցվածքների զարգացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Այս միջոցառման նպատակն է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում այցելուների (զբոսաշրջիկներ, ուխտավորներ, մասնագետներ) հարմարավետության ապահովումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հանրապետության տարածքում առկա են բազմաթիվ հուշարձաններ, որոնք նույնիսկ ներառված լինելով զբոսաշրջային երթուղիներում, չունեն այցելուների առաջնահերթ սպասարկման սանիտարահիգենիկ պայմաններից պատշաճ օգտվելու հնարավորություն:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հուշարձանների տարածքներում կամ տարածքներից դուրս համապատասխան տեղերի ընտրությամբ, սանհանգույցների մշտական կամ ժամանակավոր կառուցվածքների տեղադրում, որոնք չեն խաթարի հուշարձանների կամ դրանց պահպանական գոտիների արժեքը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Կկանոնակարգվի նվազագույն սպասարկումը և հնարավորություն կստեղծվի առավել մեծ քանակով այցելություններ կատարել և ավելի երկարաժամկետ լինել հուշարձանների տարածքում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Սանհանգույցները տեղադրմամբ նպաստավոր պայմաններ կստեղծվեն հուշարձանների այցելությունների աճի համար և հնարավորություն կընձեռնվի դրանք ընդգրկել զբոսաշրջային երթուղիներում: |
| 180. | *Հուշարձանների մոնիթորինգի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Այս միջոցառման նպատակն է ունենալ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեխնիկական առկա վիճակի գնահատական և ամփոփ տվյալների բազա, որի հիման վրա հնարավորություն կստեղծվի դասակարգել և ծրագրել միջամտության ենթակա հուշարձանների հետագա վերականգնողական աշխատանքներն ըստ առաջնահերթության:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախկինում կատարվել են հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի աշխատանքներ, սակայն դրանց արդյունքների որոշ մասի տվյալները թերի են այժմ կիրառելու համար, առկա են այնպիսի հուշարձաններ, որոնք ակնհայտորեն ունեն տեխնիկական վիճակի գնահատման խնդիր և չեն ներառվել մոնիթորինգային որևէ ծրագրում: Մոնիթորինգի տվյալների բացակայությունը հանգեցնում է հուշարձանների վերականգնողական ծրագրերում դրանց ներառման չկանոնակարգված ընտրությանը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հուշարձանների տեխնիկական վիճակի փուլային գնահատում՝ ակնադիտական, որից հետո յուրաքանչյուր հուշարձանի տեխնիկական վիճակի առկա խնդիրների բնույթներին համապատասխան մասնագիտական ուսումնասիրությունների իրականացում, դրանց արդյունքների և եզրակացությունների համադրմամբ ամփոփում և տեխնիկական վիճակի ակտի կազմում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հուշարձանների միջամտության համար կկանոնակարգվի դրանց առավել ճիշտ ընտրությունը ըստ առաջնահերթության և հրատապության, ինչպես նաև տեխնիկական վիճակի մասին ակտերի ձեռքբերմամբ հնարավորություն կստեղծվի սահմանված կարգով կազմել հուշարձանների միջամտության համար նախագծային առաջադրանքներ, որոնք հիմք կհանդիսանան հետագա աշխատանքների համար:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեխնիկական առկա վիճակի գնահատում՝ ըստ վտանգվածության ու վթարայնության, դրանք հետագա ծրագրերում ներառելու հնարավորություն,ինչպես նաև հուշարձանների միջամտության համար մասնագիտական գործունեության կանոնակարգված կազմակերպում, առավել վտանգված հուշարձանների ցանկի առկայություն: |
| 181. | *Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկերի և մշակութային տարածքների ցանկերի համալրում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոնշյալ միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների և Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների առկա ցանկերի թարմացումն ու համալրումն է, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի և «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական և ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանության ցանկերում գրանցվելու նպատակով Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներին վերաբերող հայտեր ներկայացնելու դեպքում նշյալ կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 310-Ա որոշմամբ հաստատվել է և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 293-Ա որոշմամբ համալրվել Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը: Այնուհետև համալրում է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թ. փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 144-Ա որոշմամբ:<br>«Հայաստանի Հանրապետության՝ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի գրանցման ու կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը» հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշմամբ:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1209-Ն որոշմամբ (2-րդ գլխի 12-րդ կետ) հաստատվել է նաև պետական ցանկերում ընդգրկված արժեքների մասին տվյալների պարբերաբար ճշգրտման և լրամշակման անհրաժեշտությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների և մշակութային տարածքների ցանկերի համալրմամբ.<br>• կամբողջացվի ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի օրենսդրական դաշտը,<br><br>• կկարգավորվեն ոլորտի իրավահարաբերությունները:<br><br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների նշյալ ցանկերի վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան ցանկերում գրանցվելու նպատակով հայտեր ներկայացնելու հանգամանքի կարևորությունը՝ անհրաժեշտություն է ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների |

| | |
|---|---|
| | ցանկերի թարմացումը, որն իրականացվում է լրացումների միջոցով:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին» որոշումների նախագծերի ընդունմամբ կապահովվեն Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների և Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների թարմացված ցանկերի համլրումը: |
| 182. | *ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի ընդգրկում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոնշյալ միջոցառման նպատակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության տարրեր ընդգրկելու գործընթացի իրականացումն է, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի և «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով: Առանձնահատուկ կարևորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում գրանցվելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներին վերաբերող հայտեր ներկայացնելու դեպքում, նշյալ կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջները բավարելու անհրաժեշտությունը: Բոլոր հայտերը ՅՈՒՆԵՍԿՕ ներկայացնելու նպատակահարմարության վերջնական որոշումը կայացնում է Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան վավերացրել է 2006 թ.: Նշյալ կոնվենցիայի պահանջների համաձայն անդամ երկիրը պարբերաբար ոչ նյութական մշակութային ժառանգության տարրեր ցանկերում գրանցման նպատակով հայտեր է ներկայացնում: Այս գործընթացի իրականացմամբ ապահովում է անդամ երկրի ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների պահպանությունը, տարածումը և հանրահռչակումը:<br>Վերոգրյալից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան ցանկերում գրանցվելու նպատակով հայտեր ներկայացնելու հանգամանքի կարևորությունը՝ անհրաժեշտություն է այդ տարրերի գրանցումը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում տարրերի ընդգրկմամբ.<br>• Հայաստանի Հանրապետությունը կիրականացնի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները,<br><br>• Կապահովվի Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի պահպանությունը, պաշտպանությունը և հանրահռչակումը,<br><br>• կկարգավորվեն ոլորտի խնդիրները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության պաշտպանության և հանրահռչակման կարևորությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ |

| | |
|---|---|
| | որպես անդամ պետության պարտավորությունների կատարումը՝ անհրաժեշտություն է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գրանցումը:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի ընդգրկումը կապահովի Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների պահպանությունը, պաշտպանությունը և հանրահռչակումը: |
| 183. | *«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի օդափոխության համակարգի տեղադրում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոնշյալ միջոցառման նպատակը պայմանվարված է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի հավաքածու պահպանության և անխաթարության ապահովման պահանջները բավարելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ցուցադրության և ֆոնդապահոցների խիստ ծանրաբեռնվածությունը, լրացուցիչ անհրաժեշտ տարածքների բացակայությունը, ամռանը ցուցադրական սրահների չափից ավելի լուսավորության և արևի ճառագայթների ներթափանցումը ստեղծում է թանգարանային առարկաների, հատկապես գեղանկարների պահպանման համար վտանգ: Վերոգրյալից ելնելով՝ հրատապ անհրաժեշտություն է ՊՈԱԿ-ի օդափոխության համալիր համակարգի տեղադրման միջոցառումներ իրականացնելու:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օդափոխության համակարգի տեղադրման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և անհրաժեշտ օդափոխության սարքավորումների տեղադրման աշխատանքների կազմակերպում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի ողջ տարածքում օդափոխության համակրգերի տեղադրում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի հավաքածուի պահպանության համար ջերմային և օդափոխության անհրաժեշտ պայմանների, մեծաքանակ խմբերի այցելությունների դեպքում՝ ցուցադրությանը ծանոթանալու գործընթացի առավելագույն հարմարավետության ապահովում: |
| 184. | *«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի ընդլայնում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանում տարեցները, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձիք բախվում են բազմաթիվ խնդիրների: Այդ խնդիրներից մեկը գրադարանային սպասարկման անմատչելիությունն է: Դրա լուծմանն էր միտված «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացումը Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում:Ծրագրի նպատակը տնային պայմաններում տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար գրադարանային սպասարկում ապահովելն է, որի շնորհիվ գրադարանը դառնում է հասանելի հանրության բոլոր շերտերի համար: Տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ստեղծելու, հասարակական կյանքին նրանց ներառելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել ծրագիրը, իրականացնել նաև մարզային 8 պետական գրադարաններում:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկայում «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը իրականացվում է Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում, սպասարկում է 120-ից ավելի տարեցների և հաշմանդամների: Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզային գրադարաններում ևս անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այս ծրագիրը, քանի որ բոլոր մարզերում էլ առկա է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց որոշակի քանակ, ովքեր ընթերցանության պահանջ ունեն: |

**1. 2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Գրադարանների շենքային պայմանները բավարար հարմարեցված չեն տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց սպասարկելու համար՝ մասնավորապես տեղաշարժման սահմանափակումներ ունեցողների, իսկ այս ծրագիրը հնարավորություն է տալիս գրադարանավարին այցելելու շահառուին և տնային պայմաններում կազմակերպել գրադարանային ծառայությունների սպասարկումը:

**2. Կարգավորման առարկան**

Հավասար հնարավորությունների ապահովումն է տարեցների, սահմանափակ կարողություններով և հնարավորություններով մարդկանց համար:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Ծրագրի ընդլայնումը հնարավորություն կտա մարզերի 800-1000 տարեցների, սահմանափակ կարողություններ և հնարավորություններ ունեցող շահառուների տնային պայմաններում մատուցել գրադարանային ծառայություններ:

185. *«Տուրիստական գրադարան» ծրագրի իրականացում*

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Հայաստանի և հայերի մասին այլ լեզուներով հրատարակված գրքերի հանրահռչակում նոր ազատ գրադարանի միջոցով:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանը՝ որպես բազմադարյա պատմություն և հարուստ մշակույթ ունեցող երկիր, մշտապես հետաքրքրել և գրավել է հարևան և հեռավոր երկրների զբոսաշրջիկներին: Ներկայում Հայաստան այցելող զբոսաշրջիկները սահմանափակվում են իրենց այցելած վայրերի մասին ստացած տեղեկություններով, սակայն Հայաստանի և հայ ժողովրդի մասին ստեղծած հզոր մշակութային արժեքներին մնում են անտեղյակ: Տուրիզմի և զբոսաշրջության խոշոր մի քանի կենտրոններում ստեղծված գրադարանները կարող են տեղեկատվական մեծ աղբյուր դառնալ զբոսաշրջիկների համար:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նկատի ունենալով այն, որ զբոսաշրջիկները իրենց հանգիստն անցկացնում են մայրաքաղաք Երևանում, որտեղ կենտրոնացած են հյուրանոցների ու զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունների զգալի մասը, ինչպես նաև՝ Երևանից դուրս գտնվող լեռնային բնակավայրերում՝ Ջերմուկում, Ծաղկաձորում, Դիլիջանում և այլուր՝ պարբերաբար այցելություններ կատարելով նաև Հայաստանի պատմամշակութային վայրեր ու բնության հուշարձաններ, նախատեսում ենք զբոսաշրջության կենտրոններում ստեղծել ազատ գրադարաններ, որոնց ընթերցողները կլինեն հիմնականում արտերկրից ժամանած հյուրերը: Նոր գրադարանը համալրվելու է պետպատվերով և աջակցությամբ Հայաստանի և հայերի մասին այլ լեզուներով հրատարակված գրքերով; Գործելու է ազատ սպասարկման սկզբունքով՝ դա ենթադրում է՝ գիրքը կարող են վերցնել ընթերցել և վերադարձնել, կարող են նաև չվերադարձնել՝ ընդունել որպես նվեր:

**2. Կարգավորման առարկան**

Արտերկրից ժամանած հյուրերին ազատ գրադարանների միջոցով Հայաստանի և հայերի մասին այլ լեզուներով թարգմանված գրականության միջոցով Հայստանը և հայկական մշակույթը ճանաչելի դարձնելն է:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Հայաստանը՝ որպես բազմադարյա պատմություն և հարուստ մշակույթ ունեցող երկիր, մշտապես եղել է հետաքրքիր և գրավիչ: Ներկայում զբոսաշրջությունը Հայաստանում երկր տնտեսության զարգացող ճյուղերից մեկն է: Տարեցտարի ավելացող զբոսաշրջիկների քանակը պատճառ է դառնում նոր ենթակառուցվածների ստեղծման համար: Հայաստանում տուրիստական գրադարանը կարող է դառնալ զբոսաշրջության ենթակառուցվածքի մի մաս: Հյուրերը շրջագայության ընթացքում նաև գրքերի միջոցով հնարավորություն կունենան առավել հիմնավոր ճանաչել Հայաստանը, հայ ժողովրդին որպես հզոր մշակութաստեղծ ազգ և ժողովուրդ: Ճիշտ մատուցված յուրաքանչյուր գիրք կարող է երկրի մասին շատ ավելին պատմել, քան ցանկացած գիդ:

Ծրագիրը կնպաստի նաև թարգմանական գրականության ընտրության գործում նպատակաուղղված քաղաքականության մշակմանը և Հայաստանում տուրիզմի զարգացմանը:

186.

*Հանրության շրջանում ընթերցանության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում*

1. **Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Գրահրատարակչության բնագավառում հայ ժամանակակից գրականության հրատարակման գործընթացը թողնելով հայաստանյան հրատարակիչների մրցակցային հարթությանը՝ մշակույթի նախարարությունն արդեն երկրորդ տարին է՝ չի աջակցում մեռօրյա գրողների գործերի հրատարակմանը նախկինում հայտնի «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրով, և բազմաթիվ գրողների գրասեղաններին նոր ստեղծագործություններ են կուտակվել, որոնք ընթերցողների սեղանին դնելու կարիք կա: Ընթերցանության խթանմանն ուղղված և ստեղծագործական դրամաշնորհային ծրագրերը լրացնում են անկախ մշակութային դաշտում պետական քաղաքականության բացը՝ տեղափոխելով շեշտադրումը գրքաստեղծման հրատարակչական-տպագրական փուլից ստեղծագործական և հանրահռչակման փուլ: Ծրագրի հեռանկարային նպատակն է խթանել նշանակալի, մնայուն և հանրօգուտ աշխատանքների ստեղծումը, որ կնպաստի գրականության և հասարակական գիտությունների զարգացմանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, առավել սերտ կդարձնի գրողների, ընթերցողների, գրական գործակալների և հրատարակիչների կապն ու համագործակցությունը:

Ծրագրերի նպատակը հայ ժամանակակից գրականությունն ընթերցողին ավելի ճանաչելի և ընդունելի դարձնելն է, նոր հրատարակությունների մասին տեղեկատվությունն առավել հասանելի դարձնելը:

Ծրագրերի իրականացմամբ տարբեր հրատարակչությունների հնարավորություն կտրվի ցուցադրել և վաճառել իրենց հրատարակած գրքերը: Տաղավարներում կներկայացվեն նաև նոր հրատարակությունները, վարպետության դասընթացների ժամանակ ստեղծագործողները կտեղեկանան, թե ինչ ծրագրերի համար իրենց կարող է աջակցել մշակույթի նախարարությունը, ինչպիսի ձևավորմամբ մատուցել գիրքը, ինչպես օգտվել միջազգային հնարավորություններից, ինչպես համագործակցել հրատարակչությունների և գրական գործակալների հետ և այլն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայում այս ասպարեզում կա գրականության հանրահռչկամն խնդիր, գրքի մասին տեղեկատվությունը վատ է սփռվում, պետք է հնարավորինս համընդգրկուն և շեշտադրված դարձնել գրական իրադարձությունների լուսաբանումը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախագիծը կնպաստի նոր գրականության ստեղծմանը: Նախագծի միջոցով մենք կբացահայտենք տաղանդավոր ստեղծագործողների և կնպաստենք նրանց առաջխաղացմանը: Հրատարակչությունները հնարավորություն կունենան ներկայացնել և վաճառել վերջին տարիների իրենց հրատարակությունները: Ընթերցանությունների միջոցով հայ ժամանակակից հեղինակները հնարավորություն կունենան ընթերցողներին ներկայացնել իրենց ստեղծագործությունները:

Ծրագրերի իրականացումը կբերի գրադարանների նկատմամբ ընթերցասերների վերաբերմունքի դրական փոփոխություն, կմեծացնի գրադարանների նկատմամբ համայնքի անդամների պատասխանատվությունը, կհայտնաբերի համայնքում ակտիվ, ընթերցասեր մարդկանց՝ հետագայում ընթերցանության խթանման ծրագրերում ներգրավելու համար, կտա գրադարանները նոր հրատարակված գրքերով համալրելու հնարավորություն, կխանգեցնի համայնքային գրադարաններից օգտվողների թվի աճի, կմշակի համայնաքային գրադարանների զարգացման նոր ծրագրեր, որոնցում կարելի է հաշվի առնել նաև «Մարդ կարդացող» նախագծի շրջանակում հայտարարվելիք էսսեների մրցույթին ներկայացված տեքստերի գաղափարները:

**2. Կարգավորման առարկան**

Ծրագիրը կխթանի մշակույթի նախարարության գրատարած քաղաքականությունը՝ գիրքը մայրաքաղաքից հասնելով մարզեր, համայնքներ: Տարեցտարի դրականորեն փոխվում է գրքի և գրականության, գրողների նկատմամբ վերաբերմունքը: Ժամանակակից գրականությունը քիչ-քիչ դառնում է ընթերցողի սիրելի գրադարանը:

| | |
|---|---|
| | **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերը կխթանեն գրքասեր հասարակության ավելացումը, սկսնակ գրողների համար սա կլինի ներկայանալու նոր հարթակ, կբացահայտվեն տաղանդավոր նոր գրողներ, որոնք կունենան իրենց ընթերցողները, կտպագրվեն լավագույն ստեղծագործությունները և հնարավորություն կտրվի զբաղվել նրանց հանրահռչակմամբ: |
| 187. | *Հեռուստաեթերի պատշաճ մակարդակի ապահովում, հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում մշակութային բաղադրիչի ընդլայնում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br><br>Իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են լինելու մշակութային, կրթական, դաստիարակչական, բարոյախրատական ուղղվածություն ունեցող գիտահանրամատչելի և ճանաչողական հեռուստահաղորդումների ստեղծմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ռեսուրսների ներգրավմանը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման գործընթացում: Միջոցառման նպատակն է ապահովել մշակութային ժառանգության վերաբերյալ առկա տեղեկատվության մատչելիությունը, մշակույթի վերաբերյալ հաղորդաշարերի, հաղորդումների նկարահանման, սոցիալական գովազդային հոլովակների, մրցույթ-վիկտորինաների, քննարկումների կազմակերպման միջոցով խթանել մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման բնագավառի զարգացումը, ստեղծել նպաստավոր պայմաններ երիտասարդության մեջ մշակութային ժառանգության վերաբերյալ գիտելիքների ամրագրման, ճանաչողության մեծացման համար:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին հայկական գրեթե բոլոր հեռուստաընկերությունները, հետևելով բացառապես իրենց նեղ կոմերցիոն շահերից, եթերը լցրել են ագրեսիվ, հակասոցիալական հաղորդումներով և «հումորային» ծրագրերով, որոնք բացասաբար են անդրադառնում հասարակության առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման և դաստիարակության վրա, իսկ մշակութային ժառանգության վերաբերյալ հաղորդումների, սոցիալական գովազդների գրեթե բացակայությունը խոչընդոտում է հասարակության շրջանում ժառանգության պահպանության վերաբերյալ ճանաչողության ձևավորմանը, հանրահռչակմանը և սերունդներին անխաթար փոխանցման համար պայմանների ձևավորմանը: Ապահովված չէ մշակութային ժառանգությանը նվիրված և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը՝ հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով: Հեռուստառադիոընկերություններում ապահովված չեն հաղորդումների լեզվի անաղարտությունը, բնագավառի հիմնական հասկացությունների ճիշտ օգտագործումը: Հաշվի չեն առնված Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ, որն էմպիրիկ մակարդակով կզբաղվի հեռուստաեթերի բովանդակային հետազոտություններով և կանխատեսումներով: Աշխատանքային խմբում անհրաժեշտ է ներգրավել ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվող մշակութաբանների, պատմաբանների, ազգագրագետների, հնագետների, սոցիոլոգների, հոգեբանների և բնագավառի հետ կապ ունեցող այլ մասնագետների, ովքեր հեռուստաեթերի ամենօրյա գիտական ուսումնասիրություններ կանեն ու մշակութային ժառանգությանը նվիրված հեռուստահաղորդումներ ստեղծելու վերաբերյալ լուծումներ և առաջարկություններ կներկայացնեն: Կկազմակերպվեն նաև հանրային քննարկումներ, որոնց շրջանակներում կքննարկվեն աշխատանքային խմբի առաջարկությունները հեռուստահաղորդումների և սոցիալական գովազդների վերաբերյալ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Միջոցառման կարգավորման առարկան մշակութային ժառանգությանը հասարակության հաղորդակցման մատչելիության ապահովումն է հեռուստաեթերի, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեդիայի ռեսուրսներում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br><br>Արդյունքում ակնկալվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի |

| | |
|---|---|
| | ռեսուրսների ներգրավմամբ՝ մշակութային արտադրանքի հասանելիության ապահովում, դրան հաղորդակցվող հանրության շրջանակների ընդլայնում, հայ արվեստի և մշակույթի հանրահռչակում, հասարակության ճաշակի բարձրացում, հեռուստաեթերը մշակութային ժառանգության վերաբերյալ գիտահանրամատչելի, ճանաչողական հաղորդումներով համալրում, երիտասարդներին ազգային մշակութային ժառանգության փոխանցման և սերունդների միջև շղթայական կապի ապահովում, սեփական մշակույթի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ու արժևորման ամրապնդում: |
| 188. | *Հայկական պատմամշակութային ժառանգության, արվեստի ներկայացում՝ ցուցահանդեսների, հայկական մշակույթի օրերի շրջանակներում և այլ ձևաչափերով*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Տվյալ ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է օտարերկրյա պետություններում հայ մշակույթի ներկայացման, տեղորոշման ու հանրահռչակման անհրաժեշտությունով:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջազգային համագործակցության ոլորտում պետական քաղաքականության ուղղություններն են՝ հայ մշակույթի ներկայացումը արտերկրում, տեղորոշումն ու հանրահռչակումը: Ներկայացնելով եզակի ցուցանմուշներից բաղկացած ցուցահանդեսը՝ արտասահմանի հանրությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու հայկական մշակույթի դերակատարությանն ու դիրքավորմանը փոփոխվող աշխարհում: Ցուցահանդեսները բացառիկ հնարավորություն են ընձեռում վկայելու Հայաստանի մշտական ներկայությունն ու ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ՝ պահպանելով պատմության փաստագրական և ժամանակագրական սկզբունքները, վերաստեղծելով հոգևոր արժեքների յուրահատուկ տարեգրությունը: Ցուցահանդեսների բացման կապակցությամբ օտար լեզուներով տպագրվում են պատկերագրքերի, ինչպես նաև պատմողական բնույթի այլ տեղեկատվական նյութեր:<br>Միաժամանակ հետևողականորեն ընդլայնվում է մշակութային համագործակցության աշխարհագրությունը, ինչի արդյունքում այսօր համագործակցություն է իրականացվում աշխարհի 54 երկրի հետ: Գործող և ստորագրված միջազգային պայմանագրերի շրջանակներում քայլեր են ձեռնարկվել փոխադարձ, համատեղ և համաֆինանսավորվող մշակութային ծրագրերի քանակն ավելացնելու, բովանդակությունը հարստացնելու, նոր ձևաչափեր կիրառելու ուղղությամբ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երկկողմ հարաբերություններում փոխադարձ, համատեղ և համաֆինանսավորվող մշակութային ծրագրերի կյանքի կոչումը կազմակերպվում է ստորագրված միջազգային պայմանագրերին և գործնական ծրագրերին համապատասխան: Երկկողմ ձևաչափով համագործակցությունը միտված է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, հայ արվեստագետների և մշակույթի գործիչների մասնակցությանը մասնավորապես՝ արտերկրում մշակութային միջոցառումներին, փառատոներին, հյուրախաղերին, համատեղ ստեղծագործական ծրագրերին, ցուցահանդեսներին, տոնավաճառներին և հնարավորությունների ստեղծմանը, հայկական պատմամշակութային ժառանգության և ժամանակակից արվեստի հանրահռչակմանը, ինչպես նաև միջազգային առաջադեմ փորձի ներմուծմանը Հայաստանի մշակույթի բնագավառ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջազգային մշակութային երկկողմ համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերին և գործընթացներին՝ հայ ստեղծագործական միավորումների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար մշակույթի նախարարության մասնակցությունը ամբողջությամբ համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պահանջներին:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Հայաստանի տարածքում գործող մշակութային ուղղվածության կազմակերպությունների լիարժեք մասնակցությունը երկկողմ հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, մշակութային ժառանգության պահպանությանը և ժամանակակից արվեստի հասանելիության ապահովմանը, աշխարհում հայ մշակույթի հանրահռչակմանը, մշակույթի ոլորտի մասնագետների և ստեղծագործողների շարժունակության խթանմանը: |
| 189. | *Օտար մշակույթների ներկայացում հայ հանդիսատեսին՝ ազգային առանձնահատկություններն արտացոլող տարբեր միջոցառումների՝ մշակույթի օրերի և այլ ձևաչափերով* |

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Երկկողմ հարաբերություններում մշակութային ուղղվածության կազմակերպությունների լիարժեք մասնակցության ապահովում, մշակութային ժառանգության պահպանության և օտար մշակույթների հայ հանդիսատեսին ներկայացում, մշակույթի ոլորտի մասնագետների և ստեղծագործողների շարժունակության խթանման անհրաժեշտություն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Երկկողմ համագործակցության բարենպաստ միջավայրը հնարավորություն է տալիս երկուստեք համակողմանի ներկայացնել տարբեր երկրների մշակույթը: Ստորագրված երկկողմ պայմանագրերի շրջանակներում կազմակերպվում են մշակույթի տարիներ, օրեր, կինոյի շաբաթներ, ցուցահանդեսներ, արվեստի անվանի գործիչների համերգներ, գրքերի շնորհանդեսներ, վարպետության դասընթացներ, թատերական ներկայացումներ, պոեզիայի երեկոներ և այլ մշակութային միջոցառումներ: Իրականացվող համաֆինանսավորվող և համատեղ ծրագրերն իրենց բովանդակությամբ և ուղղվածությամբ ընդգրկում են մշակույթի գրեթե բոլոր ուղղությունները՝ ապահովելով արվեստագետների ազատ տեղաշարժվելու իրավունքը և ուղղակիորեն համագործակցելու հնարավորությունը, Հայաստանի և աշխարհի ժողովուրդների մշակույթներին հաղորդակցվելու իրավունքը:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Երկկողմ հարաբերություններում փոխադարձ, համատեղ և համաֆինանսավորվող մշակութային ծրագրերի կյանքի կոչումը կազմակերպվում է ստորագրված միջազգային պայմանագրերին և գործնական ծրագրերին համապատասխան: Երկկողմ ձևաչափով համագործակցությունը միտված է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, հայ արվեստագետների և մշակույթի գործիչների մասնակցության համար, մասնավորապես՝ արտերկրում մշակութային միջոցառումներին, փառատոներին, հյուրախաղերին, համատեղ ստեղծագործական ծրագրերին, ցուցահանդեսներին, տոնավաճառներին և այլն հնարավորությունների ստեղծմանը, հայկական պատմամշակութային ժառանգության և ժամանակակից արվեստի հանրահռչակմանը, ինչպես նաև միջազգային առաջադեմ փորձի ներմուծմանը Հայաստանի մշակույթի բնագավառ:

**2. Կարգավորման առարկան**

Միջազգային մշակութային երկկողմ համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերին և գործընթացներին հայ ստեղծագործական միավորումների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար մշակույթի նախարարության մասնակցությունը ամբողջությամբ համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պահանջներին:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Հայաստանի տարածքում գործող մշակութային ուղղվածության կազմակերպությունների լիարժեք մասնակցությունը երկկողմ հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, մշակութային ժառանգության պահպանությունը և ժամանակակից արվեստի հասանելիությունը օտար մշակույթների ներկայացում հայ հանդիսատեսին, մշակույթի ոլորտի մասնագետների և ստեղծագործողների շարժունակության խթանումը:

190. *Մասնակցություն միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին՝ հայ ստեղծագործական միավորների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար*

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**

Միջազգային կառույցների աշխատանքներին, մշակութային երկխոսության զարգացման, բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացման, մշակութային ժառանգության պահպանությանը և ժամանակակից արվեստի հասանելիության ապահովում, աշխարհում հայ մշակույթի հանրահռչակման անհրաժեշտություն:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանը մինչ օրս վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված 7 կոնվենցիայից 5-ը, ինչի արդյունքում 2014 թվականից դարձել է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին»,

| | |
|---|---|
| | 2015 թվականից «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին» և «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիաների միջկառավարական կոմիտեների անդամ:<br>ԵՄ-ի շրջանակներում ստորագրվել և ԱԺ-ի կողմից վավերացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը, որը հնարավորություն կընձեռի հայ ստեղծագործողներին ակտիվորեն մասնակցելու ԵՄ շրջանակներում մշակույթի ոլորտում տարվող դրամաշնորհային ծրագրերին, իրականացնելու բազմաբնույթ փառատոնային և այլ մշակութային ծրագրեր, կդյուրացնի հայ արվեստագետների մուտքը եվրոպական շուկա՝ նպաստելով նորարարական և ստեղծագործական ուղղությունների զարգացմանը, ապահովելով ստեղծագործողների շարժունակությունը: 2016 թ. հունվարից Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի «Եվրոպական կինոյին աջակցության եվրոպական հիմնադրամի» (EURIMAGES) կազմակերպության լիիրավ անդամ: Շարունակել է գերակա մնալ համագործակցությունը ԱՊՀ մշակութային խորհրդի շրջանակներում: Այս համատեքստում 2015 թվականի հուլիսի 10-11-ը Հայաստանում անց է կացվել ԱՊՀ մշակութային համագործակցության խորհրդի հոբելյանական 30-րդ նիստը: Շարունակվել է համագործակցությունը միջազգային այլ կառույցների (Ֆրանկոֆոնիա, ՍԾՏՀ և այլն) և ոլորտի մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Եվրոպա Նոստրա»-ի, ICCROM-ի, ICOM-ի, Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի հետ: Միանալով կոնվենցիաներին և վերը թվարկված նախաձեռնություններին՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել ակտիվորեն մասնակցելու կառույցների աշխատանքներին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայ ստեղծագործական միավորների զարգացման և միջազգային համագործակցության խթանման նպատակով ապահովվում է մասնակցությունը միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին, միաժամանակ մշակույթի նախարարության մասնակցությունը միտված է միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջազգային կազմակերպությունների աշխատանքին Հայաստանի Հանրապետության ինտեգրմանը, պատմամշակութային ժառանգության և ժամանակակից արվեստի հանրահռչակմանը, ինչպես նաև միջազգային առաջադեմ փորձի ներմուծմանը Հայաստանի մշակույթի բնագավառ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջազգային կառույցների և կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և գործընթացներին՝ հայ ստեղծագործական միավորումների զարգացման և միջազգային համագործակցության խթանման համար, մշակույթի նախարարության մասնակցությունը ամբողջությամբ համապատասխանում է կոնվենցիաներով, անդամակցությամբ և ինտեգրումով ստանձնած պահանջներին:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Հայաստանի տարածքում գործող մշակութային ուղղվածության կազմակերպությունների լիարժեք մասնակցությունը միջազգային կառույցների աշխատանքներին, մշակութային երկխոսությանը, բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, մշակութային ժառանգության պահպանությանը և ժամանակակից արվեստի հասանելիության ապահովմանը, աշխարհում հայ մշակույթի հանրահռչակմանը: |
| 191. | *Թանգարաններում աուդիոգիդերով համալրման ծրագրի իրականացում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման նպատակն է թանգարանները ժամանակակից տեխնիկական սարքավորումներով արդիականացնելը, միջազգային թանգարանային ծառայությունների հաջողված փորձի տեղայնացումը, այցելուների համար ցուցադրությանը ծանոթանալիս՝ ազատ շրջելու և իրենց անհրաժեշտ լեզվով տեղեկատվություն ստանալու հնարավորության ապահովումը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Թանգարանային միջազգային գործունեության մեջ գնալով ընդլայնվում են նոր ծառայությունների, նոր |

| | |
|---|---|
| | տեխնիկական, տեխնոլոգիական միջոցների ներմուծման և կիրառման մոտեցումները: Հատկապես մեծ պահանջարկ են վայելում լողկան սարքերը կամ ինչպես անվանում են դրանց լողական գիդերը (աուդիոգիդ): Ժամանակակից տեխնիկական այս միջոցները հնարավորություն են տալիս կամ տեղում՝ թանգարաններում այցելուներին իրենց նախընտրած լեզվով տեղեկատվության տրամադրումը համապատասխան սարքերով կամ բջջային հավելվածների ներբեռնման միջոցով:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Թանգարանների ցուցադրությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ համապատասխան լսողկան գիդերի ներմուծման միջոցով:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Թանգարանների արդիականցում, նոր ծառայությունների մատուցում՝ լսողական գիդերի ներմուծման միջոցով:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Թանգարանների հագեցվածության, այցելուների թվի աճի, խոցելի խմբերին հաղորդակցվելու պայմանների, մատչելիության ապահովում, գրոսաշրջության աճի բարձրացում: |
| 192. | *Գյումրիի ստեղծարար կենտրոնի /«Քրիեյթիվ Հաբիթաթ»/ կազմավորում*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրու» նպատակն է ստեղծել հավաքատեղի՝ Գյումրու, ինչպես նաև Հայաստանի այլ քաղաքների շնորհաշատ արվեստագետների համար, ովքեր, հանգամանքների բերումով, ստիպված են լքել քաղաքը և բնակություն հաստատել մշակութայնորեն առավել դինամիկ այլ վայրերում, որտեղ նրանց հնարավորություն կընձեռվի նախընտրած ոլորտներում հասնել հաջողության: «Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրին» միտված է այդ հնարավորությունները ստեղծելու իրենց իսկ հայրենի բնօրրանում, որն էլ ստեղծագործող անձանց ետ կպահի Գյումրին լքելու ճանապարհից և նրանց կոգեշնչի իրենց կյանքը կառուցել հենց այնտեղ: Այն կնպաստի նաև տեղի տնտեսությանը՝ նոր շունչ և եռանդ հաղորդելով քաղաքին: Ծրագրի շրջանակում ուշադրության կարժանանան նաև համաշխարհային հռչակ վայելող գյումրեցի արվեստագետներն ու մտավորականները:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրին» կաջակցի արվեստագետներին և արվեստի ոլորտի կազմակերպություններին՝ նրանց ընձեռելով աշխատելու, նոր կապեր ստեղծելու, միջոցառումների մասնակցելու հնարավորություն: Ծրագրի շրջանակում կմշակվեն մի շարք նախագծեր՝ քանդակագործության, երաժշտության և լուսանկարչության ոլորտներում: Նախատեսվում է նաև պարի լրացուցիչ ծրագիր, որը հնարավորություն կտա անցկացնել պարապմունքներ, բեմադրել պարային ներկայացումներ՝ ունենալով կացության վայր: Հնարավորության դեպքում կստեղծվեն նաև բնակելի շինություններ, սրճարաններ, գեղեցիկ հանրային տարածքներ, ինչն էլ «Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրին» կդարձնի առավել հետաքրքիր և գրավիչ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ուսումնասիրել նախատեսվող տարածքի ներկայիս վիճակը և համայնքի բնակչությանը ներգրավել կատարվելիք աշխատանքներին: Այդ նպատակով կիրականացվի շինությունների մանրամասն գնահատում՝ հասկանալու, թե որքանով է հնարավոր դրանք ձևափոխել և հարմարեցնել պահանջներին: Գործընկերական հարաբերություններ կհաստատվեն տեղի բնակչության հետ՝ «Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրու» կառուցումն իրականացնելու դեպքում նրանց գոհունակությանն արժանանալու համար: Դա կօժանդակի նաև ծրագրի գաղափարի մշակմանն ու կատարելագործմանը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Կենտրոնի ստեղծմամբ՝ հայ ստեղծագործողների ներուժի համախմբման միջոցով հայ մշակույթը դուրս բերել ստեղծարարության համաշխարհային ասպարեզ:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>«Քրիեյթիվ Հաբիթաթ. Գյումրին» իր շուրջը կհամախմբի երաժիշտների աշխարհի տարբեր կողմերից, ովքեր տեղի երաժիշտների հետ շփման միջոցով հնարավորություն կունենան զարգացնելու իրենց արվեստը: |

| | |
|---|---|
| | Ծրագիրը կնպաստի նաև տպագրման ավանդական մեթոդների և տպագրման վերջին սերնդի թվային տեխնոլոգիաների հանրահռչակմանն ու պահպանմանը: Քանի որ ծրագիրը նախատեսվում է իրականացնել տեղի և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ, այն Գյումրու ստեղծագործողներին աջակցելուց զատ՝ միջազգային արվեստագետների ուշադրությունը կսևեռի դեպի Գյումրի: Հնարավորություն կընձեռվի նաև հանրահռչակելու հայազգի արվեստագետների կյանքն ու ստեղծագործական աշխատանքը և դրա հետ կապված կիրականացվեն տարբեր ծրագրեր: |
| **Պաշտպանության նախարարություն** | |
| 193 | **Բանակի սպառազինման, կառավարման համակարգի արդիականացման և անձնակազմի մարտական վարպետության բարձրացման անհրաժեշտության վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է ՀՀ զինված ուժերը ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու, բանակի հարվածային և կրակային խոցման հեռավորությունը, ճշգրտությունը և արդյունավետությունը ավելացնելու, կառավարման համակարգը «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» (ՀԱՄ) սկզբունքի շուրջ կառուցելու և բանակին ժամանակակից մարտական գործողությունների վարելու ունակ տարաշարժուն (մաննրային) կերպար հաղորդելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Զինված ուժերի կարիքները համար պահանջվում են զգալի չափով նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներ, մարտական խնդիրների կատարման գործող ընթացակարգերի արդյունավետության բարձրացման համար պահանջվում են նոր տեխնոլոգիական և ռազմագիտական լուծումներ, իսկ սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման գործընթացն իրականացվում է համապատասխան երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում, որոնք ունեն պարբերական թարմացման միջոցով արդիական առաջնահերթությունները և ձևավորված իրականությունները արտացոլելու կարիք:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է սպառազինության համակարգի զարգացման հիմնական ուղղություններով աշխատանքների շարունակմանը զուգահեռ ավելացնել ջանքերը բանակի բազմաֆունկցիոնալ օդային բաղադրիչի ստեղծման ուղությամբ: ՀԱՄ սկզբունքի հիման վրա կառավարման համակարգի լիարժեք արդիականացումը անքակտելիորեն կապված է զինված ուժերի կառուցվածքային փոփոխությունների հետ: Այս համատեքստում առաջարկվում է մշակել և ներդնել ՊՆ, ԶՈւ ԳՇ և ԶՈւ կառուցվածքի և կառավարման ավելի արդյունավետ մոդել, որը կապահովի ըստ խնդիրների և առաջադրանքների առաջնահերթության՝ անձնակազմի ավելի օպտիմալ բաշխումը, երկրորդական կարևորության խնդիրների համար ջանքերի խնայումը: Եվ վերջապես, առաջարկվում է ռազմական գործողությունների վարման ձևերի ու եղանակների կատարելագործման միջոցով ստեղծել ինքնատիպ հայկական ռազմարվեստ, որը բանակին կհաղորդի անհրաժեշտ տարաշարժունություն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախատեսվում է 2019-2020թթ. ընթացքում իրականացնել Պաշտպանության ռազմավարական վերանայում, որի արդյունքներով կմշակվեն նոր ՀՀ ԶՈւ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիր, ՀՀ ԶՈՒ կառուցվածք և կանոնադրություն, մարտական կանոնադրություններ, համապատասխան կարգեր, պաշտպանության նախարարի և ԶՈւ գլխավոր շտաբի պետի դիրեկտիվներ և հրամաններ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Բանակի մարտական կարողությունների ավելացում, թե կրակային խոցման, թե մարտական վարպետության առումով, կառավարման համակարգի ճկունության և դիմակայունության բարձրացում: |
| 194 | **Առաջնագիծը արդիական տեխնիկական միջոցներով համալրելու և մարտական խնդիրների կատարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի՝ հակառակորդի նշանառու կրակի տակ գտնվելու տևողության նվազեցման, պաշտպանվածության և դիմակայունության աստիճանի բարձրացման և հակառակորդի դիվերսիոն խմբերի դարանակալման ու ոչնչացման հավանականության ավելացման անհրաժեշտությամբ: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Առաջնագծում երկար տարիների ընթացքում մեր կողմից իրականացվող ստատիկ մարտական հերթապահությունը և ինժեներական կահավորվածությունը, կիրառվող մարտավարական հնարքները, մեթոդիկան և ընթացակարգերը ունեն արմատական փոխակերպման կարիք՝ նոր իրականությունների ու տեխնիկական հնարավորությունների պայմաններում հակառակորդի գործողությունները չեզոքացնելու և անձնակազմի անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է առաջնագծում ստեղծել հակառակորդի գործողությունների վաղ հայտնաբերման, որոշումների կայացման, հեռակառավարվող կրակային խոցման և հասցված վնասի գնահատման ինտեգրված համակարգ, որը թույլ կտա ստատիկ պաշտպանությունը փոխարինել տարաշարժուն-ճկուն պաշտպանությամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կմշակվեն մարտական հերթապահության կրման գործընթացը կանոնակարգող նոր գերատեսչական ղեկավար փաստաթղթեր:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հակառակորդի դիպուկահար կրակի, դիվերսիոն ներթափանցման և հարձակման նախապատրաստման փորձերի բացահայտման, հավաստանշման, թիրախորոշման և կրակային խոցման կարողությունների կատարելագործում և յուրային անձնակազմի քողարկման, պատսպարման և պաշտպանվածության աստիճանի բարձրացում: |
| 195 | **Պաշտպանության պլանավորման և ռեսուրսների կառավարման միասնական համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է սպառնալիքների վերլուծություն, դրանց դիմագրման համար անհրաժեշտ մտահղացումներ, ռազմական հզորության գործիքների զարգացման ու կիրառման հայեցակարգեր, ինչպես նաև պահանջվող կարողությունների ու ռեսուրսների պլանավորում պարփակող համընդգրկուն համակարգ ունենալու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս ֆորմալ առումով չկա պաշտպանության ոլորտի գործունեությունը և զարգացումը կանոնակարգող ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ: Միաժամանակ, առկա են խնդիրներ ռազմավարական ուղեցույցը ըստ ուղղությունների հայեցակարգերի վերածելու, այդ հայեցակարգերի մտահղացումները ՊՆ համակարգի և դրա բաղադրիչների գործունեության ու զարգացման միասնական պլաններում ամրագրելու և ֆինանսական պլանավորման գործընթացների միջոցով ռեսուրսներով ապահովելու առումներով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ներդնել ՀՀ պաշտպանության պլանավորման գործընթացի մոդել, որը կընդգրկի պաշտպանական քաղաքականությունը որոշող ռազմավարական փաստաթղթերը և ռեսուրսների արդյունավետ պլանավորման ու թափանցիկ կառավարման համակարգը՝ համապատասխան ավտոմատ կառավարման էլեկտրոնային ծրագրերով և անձնակազմի վերապատրաստման դասընթացներով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում կմշակվի Պաշտպանական քաղաքականության, ռազմական ռազմավարության, բանակաշինության, ֆինանսաբյուջետային պլանավորման և գնումների ոլորտները կարգավորող փոխկապակցված համակարգ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որակական ցուցանիշների վրա հիմնված պաշտպանության ռազմավարական պլանավորման համակարգի ստեղծում, որը կերաշխավորի պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների զարգացումը, բաշխումը, կառավարման և բյուջետային որոշումների ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութատեխնիկական առումով կայունությունը, մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը, ինչպես նաև կապահովի կոռուպցիոն ռիսկերի կառավարման, վերահսկման և հաշվետվողականության թափանցիկ ընթացակարգեր: |
| 196 | **Անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակը ռազմական կառավարման նոր սկզբունքներին (մշակույթին) և արհեստավարժության ավելի բարձր չափորոշիչներին համապատասխանեցնելու վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)** |

| | |
|---|---|
| | Միջացառման իրականացումը պայմանավորված է զինվորական ծառայության և պաշտպանության համակարգի գործունեության մեջ պարտականության զգացողությունը առաքելության զգացումով փոխարինելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս գործող նորմատիվ ակտերը, տարատեսակ ղեկավար փաստաթղթերը և ծրագրերը լիարժեքորեն չեն սահմանում զինծառայողների և պաշտպանության ոլորտի քաղծառայողների՝ «զինվորականի մասնագիտությանը» պատկանելիությանը, այս մանագիտության կրողի ունեցած առաքելությամբ պայմանավորված նրանց ինքնության, բնավորության, բանիմացության, հանձնառության և բարեվարքության չափանիշները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակը բարձրացնել սպայական և շարքային անձնակազմի համար առաջնորդության և էթիկայի նորմերի մշակման, զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և լիարժեք իրացման ապահովման, բանակի ապաքաղաքականացման, ՊՆ համակարգում բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման միջոցով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կմշակվեն և կվերանայվեն մարդու իրավունքներին, զինվորական կարգապահությանը և իրավապահությանը, բարեվարքությանը, առաջնորդությանը և էթիկային վերաբերող նորմատիվ ակտերը և ղեկավար փաստաթղթերը, ինչպես նաև օրենսդրորեն կամրապնդվի Զինված ուժերի՝ քաղաքական հարցերում չեզոքություն պահպանելու սահմանադրական պահանջը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Կամրապնդվի Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակն ու կարգապահությունը, բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը: |
| 197 | **Նյութատեխնիկական ապահովման որակական ու քանակական ցուցանիշները անձնակազմի արհեստավարժության և մարտական վարպետության ավելի բարձր չափորոշիչներին համապատասխանեցնելու վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է առաքելության զգացումով առաջնորդվող և արհեստավարժության ու մարտական վարպետության ավելի բարձր չափորոշիչներ ունեցող անձնակազմի պարենային, իրային և բժշկական ապահովման որակական ու քանակական ցուցանիշները բարելավելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս գործող պարենային, իրային և բժշկական ապահովման ցուցանիշները ունեն բարելավման կարիք՝ անձնակազմի ֆիզիկական ու հոգևոր տոկունության ու դիմակայունության, հիգիենայի, բարեհարմարության, ինքնազգացողության և ֆիզիկական ու հոգեկան առողջության մակարդակը արհեստավարժության և հանձնառության ավելի բարձր պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է բարելավել զինծառայողներին հատկացվող իրային միջոցների որակական և քանակական ցուցանիշները, զորային մակարդակում բուժապահովման նորմերը, ինչպես նաև իրականացնել բանակի կենսագործունեության ապահովման մի շարք ծառայությունների օտարում (աութսորսինգ)՝ դրանց արդյունավետությունն ու արդյունքայնությունը բարձրացնելու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կմշակվեն Զինված ուժերի պարենային, իրային և բժշկական ապահովման նոր չափորոշիչներ և այդ ծառայությունների գործունեությունը կանոնակարգող ղեկավար փաստաթղթեր:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պաշտպանության համակարգի անձնակազմի սննդի, հագուստի որակի, հարմարավետության և էսթետիկ տպավորության, զորային օղակում բժշկական ապահովման որակի և հասանելիության բարձրացում: |
| 198 | **Սոցիալական պաշտպանվածության ցուցանիշները անձնակազմի արհեստավարժության և մարտական վարպետության ավելի բարձր չափորոշիչներին համապատասխանեցնելու վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)** |

| | |
|---|---|
| | Միջոցառման իրականացումը պայմանավորված է առաքելության զգացումով առաջնորդվող և արհեստավարժության ու մարտական վարպետության ավելի բարձր չափորոշիչներ ունեցող անձնակազմի դրամական բավարարման, բնակարանային և ստացիոնար բուժապահովման ցուցանիշները բարելավելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Պաշտպանության ոլորտի զինծառայողների և քաղծառայողների դրամական բավարարման, բնակարանային և բուժապահովման գործող չափորոշիչները և ընթացակարգերը, բացի այն, որ պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, ընթացակարգային, առկա ռեսուրսների հասանելիության և արդյունավետության տեսանկյունից բավարար չեն կուտակված բազմաթիվ սոցիալական խնդիրները լուծելու համար: Մասնավորապես զինծառայողների աշխատավարձերը վերջին անգամ բարձրացվել են 2014թ., բնակարանային ապահովման խնդիրներ ունեն 1000-ավոր զինծառայողներ, բժշկական ապահովումը գտնվում է ոչ բավարար մակարդակում: Սա կարող է էական խոչընդոտ դառնալ անձնակազմի շարժառիթավորման, արհեստավարժության բարձրացման և առաքելության զգացումով առաջնորդվելու մեջ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ մշակել զինվորական հոսպիտալների և քաղաքացիական բուժհաստատությունների ինտեգրման վերաբերյալ նոր առաջարկություններ, դիտարկել ք.Երևանում նոր միասնական հոսպիտալի կառուցման նպատակահարմարությունը և իրագործելիությունը, ներդնել բնակարանային պայմանների կարիքավոր անձնակազմի արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոթեքային վարկավորման ծրագիր, բարձրացնել պաշտպանության համակարգի անձնակազմի և զինվորական թոշակառուների դրամական բավարարման մակարդակը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կմշակվեն բժշկական, բնակարանային ապահովման և դրամական բավարարման վերոնշյալ հիմախնդիրները կարգավորող համապատասխան նորմատիվ ակտեր և ընթացակարգեր:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների ու քաղծառայողների, զինվորական հաշմանդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների համընդգրկուն սոցիալական ապահովման երաշխիքների բարելավում: |
| 199 | **Արժանիքների և կրթական չափանիշների վրա հիմնված անձնակազմի կառավարման համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է ավելի բարձր կրթական ցենզով և ինտելեկտուալ մակարդակով պայմանագրային անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս ՀՀ ժողովրդագրական ցուցանիշները անհամարժեք են անհրաժեշտ կառուցվածքով և անձնակազմով զինված ուժեր ունենալու անհրաժեշտությանը, ինչը բանակի՝ արհեստավարժ անձնակազմով համալրման լրջագույն խնդիր է: Ըստ մասնագիտությունների և առաջխաղացման աստիճանների՝ բանակի սպայական և ենթասպայական կազմերի կրթության ապահովման ազգային կարողությունները սահմանափակ են, որոնց ավելացումը գիտակրթական հավելյալ ներուժ է պահանջում: Դա խոչընդոտում է նաև անձնակազմի պաշտոնեական առաջխաղացումը կրթական չափորոշիչներին ամբողջապես փոխկապակցելու գործընթացին (պաշտոնեական յուրաքանչյուր առաջխաղացում հավելյալ կրթություն և վերապատրաստում է պահանջում), ինչն իր հերթին պաշտոնեական առաջխաղացման գործընթացում մեծացնում է սուբյեկտիվության գործոնը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է թարմացնել ՌՈՒՀ-երի ուսումնանյութական բազան և կրթական ծրագրերը, ամբողջ ծավալով գործարկել «Պատիվ ունեմ» ծրագիրը և ռազմավարական մակարդակի դասընթացը, զարգացնել պաշտպանության համակարգում հեռավար տարաբաշխված կրթության և ուսուցման կարողություններ, ինչպես նաև միջազգային փորձի տեղայնացմամբ ներդնել արժանիքների և կրթական չափորոշիչների վրա հիմնված ծառայողական առաջխաղացման թափանցիկ համակարգ՝ սահմանելով կրթական չափանիշների և մաս-նագիտական պատրաստվածության վրա հիմնված ծառայողական առաջխաղացման, հրամանատարական և շտաբային պաշտոններում ծառայության փոխարինման (ռոտացիա) և յուրաքանչյուր պաշտոնում ծառայության համակողմանի գնահատման թափանցիկ սկզբունքներ, որոնք անձնակազմի համար անձնական արդյունավետության աճի շարժառիթավորման և սեփական կարիերայի կառավարման հնարավորություններ |

| | |
|---|---|
| | կստեղծեն:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կմշակվեն ռազմական կրթության և անձնակազմի կառավարման ոլորտները կարգավորող նորմատիվ և ղեկավար նոր փաստաթղթեր:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմակրթական հաստատություններում առկա ծրագրերի և դրանց դասավանդման կարողությունների կատարելագործման և բանակում քաղաքացիական կրթությամբ սպայական կազմի ծառայության ապահովման միջոցով պաշտպանության համակարգի համալրում մասնագիտական բարձր կարողություններով և բարոյական բարձր որակներով օժտված զինծառայողներով և քաղծառայողներով: |
| 200 | **Միջազգային ինտեգրման հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է դաշնակցային և գործընկերային հարաբերությունների շրջանակներում անվտանգության միջազգային երաշխիքների ձևավորման, հավաքական պաշտպանության ռազմաքաղաքական և ռազմական մեխանիզմների կատարելագործման, միջազգային, տարածաշրջանային նշանակության և փոխադարձ կարևորվող հիմնախնդիրների շուրջ ռազմաքաղաքական խորհրդակցությունների անցկացման, զինված ուժերի ոլորտային զարգացման գործում միջազգային առաջավոր փորձի ներդրման, կրթական ու նյութատեխնիկական ապահովման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>ՀՀ պաշտպանության նախարարությունն ունի դաշնակցային և գործընկերային հարաբերությունների լայն շրջանակ, որոնք Հայաստանի Հանրապետության համար ապահովում են միջազգային ռազմաքաղաքական բարենպաստ միջավայր, անվտանգության միջազգային երաշխիքներ և Զինված ուժերի միջազգային բավարար ինտեգրվածություն: Սակայն պաշտպանության ոլորտում ՀՀ դաշնակցային և գործընկերային հարաբերությունները հավասարակշռելու, միջազգային հարաբերությունները ՀՀ ազգային շահերին և ռազմաքաղաքական փոփոխվող միջավայրին համապատասխանեցնելու, միջազգային դաշնակցային հանձնառությունները և հավաքական պաշտպանության մեխանիզմները կատարելագործելու և առավել արդյունավետ դարձնելու, միջազգային փորձը, խորհրդատվությունը և նյութատեխնիկական աջակցությունը ՀՀ ԶՈՒ կարիքներին ծառայեցնելու և ՀՀ ԶՈՒ միջազգային ինտեգրվածության և փոխգործունակության մակարդակը ընդլայնելու գործընթացներն ունեն շարունակական բնույթ:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջազգային ռազմական համագործակցության ոլորտում առաջարկվում է հիմնական շեշտը դնել դաշնակիցների հետ՝ փոխադարձ ռազմաքաղաքական պարտավորությունների իրավական և կիրառական հիմքերի ամրապնդման, ՀՀ զինված ուժերը արդիական սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրման, միացյալ խմբավորումների և հավաքական (համատեղ) ուժերի և համակարգերի պատրաստության, արդիականացման ու վերազինման, ռազմական արդյունաբերության զարգացման, ՀՀ զինված ուժերի անձնակազմի հիմնական և ակադեմիական կրթության վրա, իսկ գործընկերների հետ՝ զինված ուժերի ոլորտային զարգացման գործում միջազգային առաջավոր փորձի ներդրման, կրթական ու նյութատեխնիկական ապահովման, ինչպես նաև փոխգործունակ կարողությունների ձևավորման, միջազգային ինտեգրման և միջազգային հանձնառությունների կատարման վրա<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կընդլայնվի պաշտպանության ոլորտում երկկողմ և բազմակողմ ձևաչափով միջազգային իրավապայմանագրային դաշտը և կիստակեցվեն հավաքական պաշտպանության մեխանիզմները:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ռազմաքաղաքական դաշինքների և գործընկերությունների զարգացում՝ պահպանելով ՀՀ ազգային շահերից բխող և առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձևավորման հավասարակշռությունը: |
| 201 | **Պարտադիր ժամկետային զինծառայողների կրթական շարունակականության ապահովման վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջացառման իրականացումը պայմանավորված է պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում զինծառայողների կրթական ցենզի և ինտելեկտուալ մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս առկա են խնդիրներ, կապված ժամկետային պարտադիր ծառայության ընթացքում զինծառայողների՝ իրենց մասնագիտություններին և նախասիրություններին համապատասխան գիտելիքներ ստանալու հնարավորությունների բացակայության, ինչպես նաև բանակում ստացված գիտելիքներն ու հմտությունները քաղաքացիական կյանքում արդյունավետ իրացման հետ:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ամբողջ զինված ուժերում ձևավորել զինծառայողների կողմից պարտադիր ռազմամասնագիտական և իրենց նախասիրությամբ քաղաքացիական կյանքում պիտանի ուսումնական նյութի գիտակցված ընկալման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների շահագրգիռ-նախաձեռնողական յուրացման մշակույթ և բոլոր զորամասերում ստեղծել համապատասխան մթնոլորտ: Միաժամանակ, առաջարկվում է զինծառայողներին ընձեռնել զորամասերում մոտ գտնվող քաղաքացիական ուսումնական հաստատություններում անվճար (ծախսերի՝ պետության կողմից փոխհատուցմամբ) վերապատրաստվելու հնարավորություն: Պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում զինծառայողների կրթական ցենզի և ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը կնպաստի նաև հեռավար տարաբաշխված կրթության և ուսուցման կարողությունների ստեղծումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կվերանայվի ԶՈւ ներքին ծառայության կանոնագիրքը, զինված ուժերի ուսումնական գործընթացը և զորամասերում առօրյա ծառայությունը կարգավորող նորմատիվ և ղեկավար փաստաթղթերը, քաղաքացիական ԲՈՒՀ-երի և այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության նորմատիվ-իրավական բազան, կմշակվեն համապատասխան կրթական ծրագրեր:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ԶՈւ ժամկետային պարտադիր զինծառայություն իրականացնող անձնակազմի կրթական ցենզի բարձրացում և ինտելեկտուալ մարկարդակի աճ: |
| **Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 202 | **1. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել ներկայիս պահանջներին: Օրինակ՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի (այն է՝ «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները») «դ» կետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի նորմատիվ ակտերը: Անհրաժեշտ է կատարել փոփոխություն և լիազորել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավական ակտերը (ոչ միայն նորմատիվ): Միջոցառման իրականացման նպատակն է հնարավորություն ընձեռել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնին՝ ունենալու ավելի լայն գործունեության շրջանակ: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված համապատասխան մարմինները օրենքով լիազորվեն ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր՝ լիազորող նորմերը համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին: Նախագծի ընդունման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները**<br>«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը համահունչ դարձնել գործող իրավական դաշտին, լիազորող նորմերը համապատասխանեցնել իրավական որոշակիության սկզբունքին:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է փոփոխություն կատարել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում:<br><br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Կարգավորման առարկան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի օրենսդրության բարելավումն է: **3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ներկայիս իրավիճակը կարգավորող իրավական ակտի առկայություն: |
| 203 | **Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձևի զարգացում** <br><br> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** <br> Անհրաժեշտություն է առաջացել մշակելու Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձևի զարգացման հայեցակարգ, և Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձևի զարգացման հայեցակարգից բխող Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձևի զարգացման ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր: Միջոցառման նպատակն է այդ մարզաձևով մարզվողների քանակի ավելացում, դահուկային մարզաձևի ուսուցման կենտրոնների ավելացում, գործող կենտրոնների արդիականացում, դահուկային մարզաձևից միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության մարզիկների ցուցաբերած արդյունքների բարելավում, հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացում: Նախագծի ընդունման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը: <br><br> **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները** <br> Հայաստանի Հանրապետության դահուկորդները և լեռնադահուկորդները տարբեր տարիների մասնակցել են միջազգային միջոցառումների (2018 թվականի Փհենչհանի ձմեռային 23-րդ օլիմպիական խաղերին՝ 1 մարզիկ լեռնադահուկային սպորտ մարզաձևից և 2 մարզիկ դահուկավազք մարզաձևից, 2014 թվականի Սոչիի ձմեռային 22-րդ օլիմպիական խաղերին՝ 1 մարզիկ լեռնադահուկային սպորտ մարզաձևից և 3 մարզիկ դահուկավազք մարզաձևից, 2012 թվականի Ինսբրուկի ձմեռային առաջին պատանեկան օլիմպիական խաղերին՝ դահուկավազք մարզաձևից 2 մարզիկ, 2016 թ. Լիլեհամերի ձմեռային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին՝ դահուկավազք մարզաձևից 1 մարզիկ): Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող մարզիկները կարողացել են դահուկային մարզաձևում օլիմպիական խաղերի վարկանիշ նվաճել, սակայն օլիմպիական խաղերում բարձր տեղեր չեն գրավել: Անհրաժեշտ է ավելացնել դահուկային մարզաձևով մարզվողների քանակը, ինչը բարենպաստ արդյունք կունենա մարզական արդյունքների աճի վրա (Դահուկային և լեռնադահուկային մարզաձևերը տարբեր մարզաձևեր են): <br><br> **1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> «Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձևի զարգացում» միջոցառման իրականացմամբ կավելացվեն դահուկային մարզաձևի ուսուցման կենտրոնները, կբարելավվի դահուկային մարզաձևի ուսուցման նյութատեխնիկական բազան, հանրապետությունում կզարգանա զբոսաշրջությունը: <br><br> **1. Կարգավորման առարկան** <br> Կարևորագույն ստուգատեսներինն Հայաստանի Հանրապետության մարզիկների մասնակցության ապահովում, դահուկային մարզաձևում մարզական արդյունքների աճ, դահուկային մարզաձևի ուսուցման կենտրոնների ավելացում, դահուկային մարզաձևի հրահանգիչների պատրաստում: <br><br> **2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը** <br> Դահուկային մարզաձևով մարզվողների քանակի ավելացում, շնորհալի պատանիների ներգրավում մարզումներում, ուժեղ սերունդների դաստիարակում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արկատավորում, ՀՀ հավաքական թիմերի մարզիկների մարզական արդյունքների աճ, հանրապետությունում զբոսաշրջության զարգացում: |
| 204 | **Հայաստանի Հանրապետությունում լող մարզաձևերի զարգացում** <br><br> **1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** <br> Լող մարզաձևը Հայաստանում զարգացնելը կենսական անհրաժեշտություն է, քանի որ յուրաքանչյուր մարդ պետք է լողալ իմանա, եթե, իհարկե, պաթոլոգիապես չի վախենում լողալուց: |

| | |
|---|---|
| | **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Երևանում գործում են բավարար քանակի լողավազաններ, սակայն դրանք հասարակության լայն շերտերի համար մատչելի չեն: Այդ իսկ պատճառով շատ շնորհալի պատանիներ չեն կարողանում մարզվել, և ցածր են միջազգային մրցասպարեզներում ցուցաբերվող արդյունքները: Լողավազան կա Գյումրիում, Վանաձորում, վերջերս լողավազաններ բացվեցին Իջևանում և Հրազդանում: Սակայն քիչ են հանրապետության մարզերում գործող լողավազանները: Հայաստանի Հանրապետությունում լող մարզաձևի զարգացման հայեցակարգի և դրանից բխող՝ Հայաստանի Հանրապետությունում լող մարզաձևի զարգացման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակումը անհրաժեշտություն է: Միջոցառման իրականացման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է Երևանում և հանրապետության մարզերում կառուցել լողի մարզադպրոցներ, որոնք մատչելի կլինեն նյութապես ոչ բարեկեցիկ երեխաների համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մատաղ սերնդին լող մարզաձևի ուսուցանում, ուժեղ սերունդների դաստիարակում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորում, լող մարզաձևում մարզական արդյունքների աճ:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Լող մարզաձևով մարզվողների թվի ավելացում, ուժեղ սերունդների դաստիարակում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորում, ՀՀ հավաքական թիմերի մարզիկների մարզումային պայմանների բարելավում, մարզական արդյունքների աճ: |
| 205 | **Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման միջոցառումների շարունակականության ապահովում և արդիականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը.**<br>Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման անընդհատությունն անհրաժեշտ է, քանի որ այդ գործընթացը նպաստում է անձի համակողմանի զարգացմանը, առողջության և աշխատունակության բարձրացմանը, հայրենիքի պաշտպանության նախապատրաստմանը, հետևաբար նաև Հայաստանի Հանրապետության հզորացմանն ու պետականության ամրապնդմանը: Բացի այդ՝ հայրենական սպորտի մասնագետները վկայում են, որ անհատի ֆիզիկական դաստիարակությունը պետք է լինի բազմամյա, անընդհատ, հաջորդական և համակարգված գործընթաց, շարունակվի ամբողջ կյանքում, ներգրավի ազգաբնակչության տարբեր սեռատարիքային խմբերն ու սոցիալական բոլոր շերտերը: Եվ քանի որ մշակված պետական նպատակային ծրագրերը հատվածաբար են լուծում նշված խնդիրները, ուստի առաջին պլան է մղվում համակարգային լուծումներ գտնելու հրամայականը:<br>Այսպիսով, հիշյալ նպատակների համալիր իրագործումը հնարավոր է միայն ներկայիս գործող համակարգի արդիականացման միջոցով, ինչը հնարավորություն կընձեռի ձևավորելու սույն ոլորտի գերակա ուղղությունների և լուծման իրատեսական ուղիների՝ հասարակության զարգացման արդի պահանջներին բավարարող համապարփակ և ընդհանրական տեսլական:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**<br>Վերջին տարիների վիճակագրությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը կանոնավոր ֆիզիկական գործունեության առումով հետ է մնում զարգացող երկրներից, որտեղ ֆիզիկական կուլտուրայով զբաղվում է բնակչության ավելի քան 40-50 %-ը, այն դեպքում, երբ Հայաստանում (ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների) 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ զբաղվում է բնակչության ավելի քան 7 %-ը, Հայաստանի Հանրապետության 15 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում ֆիզիկական թերակտիվության ցուցանիշը կազմում է 16,5 %: Ֆիզիկապես թերակտիվ տղամարդկանց քանակը կազմել է 10,4 %, իսկ կանանցը՝ 22,3 %: Ֆիզիկական թերակտիվությունն աճում է տարիքի հետ, և ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 60-69 տարեկան (29,3 %) և 70 տարեկան ու ավելի բարձր տարիքային խմբերում (42,6 %):<br>Այսպիսով, զանգվածային սպորտի զարգացման հիմնախնդիրների շարքում անհրաժեշտ է կարևորել բնակչության, այդ թվում՝ նաև հաշմանդամների ֆիզիկական կուլտուրայով և սպորտով գիտակցաբար զբաղվելու պահանջարկի ձևավորումը, մարզական պարապմունքների և միջոցառումների մասսայականացման |

| | |
|---|---|
| | ապահովումը, կանոնավոր մարզումների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը, շահառուների առավել նպաստավոր՝ թիրախային խմբերի առանձնացումը, նրանց առողջական վիճակի և աշխատունակության բարձրացումը, պաշտպանության համար անհրաժեշտ պատրաստականության ապահովումը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման միջոցառումների շարունակականության ապահովման և արդիականացման, ինչպես նաև բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի արմատավորման նպատակով պետք է կատարել հետևյալ աշխատանքները՝<br>1) պետական նպատակային ծրագրով հաստատված տարեկան պլաններով նախատեսված սպորտային մասսայական միջոցառումների հետևողական իրականացում,<br>2) «Մասսայական սպորտի, ֆիզիկական դաստիարակության զարգացման և առողջ կենսակերպի խթանման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում,<br>3) հայեցակարգից բխող ռազմավարությունը և հնգամյա միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում,<br>4) տարածքային համաչափ զարգացման համատեքստում, ըստ բնակության վայրի՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու աշխատանքներին և նպաստավոր պայմանների ստեղծմանը մեթոդական օժանդակության ցուցաբերում,<br>5) առողջ կենսակերպի պրոպագանդում,<br>6) բնակչության ֆիզիկական ակտիվությանն ու ակտիվ հանգստի կազմակերպմանն աջակցության ցուցաբերում:<br><br>**2. Կարգավորման առարկան.**<br>Մշակվելիք հայեցակարգի կարգավորման առարկան են բնակչության ֆիզիկական ակտիվությունը խթանելու նպատակով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում վարվող քաղաքականությունը, վերջինիս իրականացման առաջնային ուղղությունները, մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման ռազմավարական ծրագիրը և դրանից բխող խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:<br><br>**3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը.**<br>1) Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգում «մասսայական սպորտի մշակույթի» վերականգնում, բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում, մասսայական (այդ թվում՝ հաշմանդամային և բակային) սպորտի, սպորտային տուրիզմի, ինչպես նաև նոր մարզաձևերի հանդեպ բնակչության հետաքրքրության ավելացում և սպորտային մասսայական միջոցառումների մասնակիցների ընդգրկվածության աճ:<br>2) Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման առաջնային ուղղությունների, առողջ կենսակերպի ապահովման ուղիների արդի տեսլական:<br>3) Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության զարգացման ռազմավարական ծրագիր և ծրագրի գերակա նպատակներից բխող խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ: |
| 206 | ***Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացում***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Գույքային ծրագրով, բացի հիմնական միջոցներից, ձեռք է բերվում նաև արագամաշ և արագ սպառվող մարզագույքի տեսակներ, որոնք հիմնականում սպառվում են նույն տարվա մեջ (օրինակ՝ փամփուշտ, օդամղիչ հրացանի գազային բալոն, բռնցքամարտի ձեռնոց, մարզումային մանրագնդակներ, վոլեյբոլի, բասկետբոլի գնդակներ և այլն), և քանի որ 2017-2018 թթ. գույքային ծրագիր չի իրականացվել, ուստի ներկայումս արագամաշ մարզագույքը դարձել է ոչ պիտանի, արագ սպառվող տեսականին գրեթե սպառվել է, հիմնական միջոցներն էլ գտնվում են օգտագործման ժամկետի սպառման փուլում: Նախագծի ընդունման համար հիմք են |

| | |
|---|---|
| | հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով, որ 2019 թվականը նախաօլիմպիական տարի է, օլիմպիական խաղերին բարձր մակարդակով և ըստ արժանավույն մասնակցելու, սպորտը մասսայականացնելու և մանկապատանեկան սպորտը զարգացնելու համար շատ կարևոր է ժամանակակից մարզագույքով ապահոված նյութատեխնիկական բազայի առկայությունը:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրը հնարավոր է լուծել յուրաքանչյուր տարի ՀՀ պետբյուջեից նշված ծրագրի համար ֆինանսավորում հատկացնելով՝ բացառապես մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպությունները գույքով ապահովելու համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպությունները գույքով ապահովում, նյութատեխնիկական բազայի բարելավում և ամրադնդում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մարզման պայմանների բարելավում և ուսումնամարզական գործընթացի որակի բարձրացում, մանկապատանեկան սպորտի զարգացում: |
| 207 | **Հայաստանի Հանրապետության հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Հայաստանի Հանրապետության հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզադահլիճները մարզագույքով համալրելու ծրագրի նպատակն է մատաղ սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման, նրանց կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորման ու ռազմահայրենասիրության արժեհամակարգի ձևավորման ապահովումը, մարզադահլիճները ժամանակակից մարզական գույքով համալրումը, նրանց նյութատեխնիկական պայմանների բարելավումը: Նախագծի ընդունման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Հարկ է նշել, որ հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում եղած մարզագույքը վաղուց չի համապատասխանում ժամանակակից պայմաններին, որոշ դեպքերում նույնիսկ օգտագործման անվտանգության պայմաններին, ուսումնական շարունակական գործընթացի արդյունքում ավելանում է նրանց մաշվածությունը և ներկայումս հնարավոր չէ այն փոխարինել նոր մարզագույքով, չնայած որ նոր մարզագույքի պահանջարկը օրեցօր աճում է, կառուցվում կամ վերանորոգվում են նոր մարզադահլիճներ, որոնք պետք է համալրվեն նոր և համապատասխան մարզագույքով:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է մշակել հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզադահլիճները մարզագույքով համալրման ու բաշխման ամենամյա ծրագիր, որի ֆինանսավորումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մինչև 200 մլն ՀՀ դրամի չափով, ինչպես նաև աշխատանքներ պետք է տարվեն մարզագույքի ձեռքբերման համար նոր աղբյուրներ ընդգրկելու ուղղությամբ:<br><br>**1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզադահլիճները անհրաժեշտ մարզագույքով ապահովում, ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդման որակի բարելավում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզադահլիճները մարզագույքով ապահովում՝ ուսումնամարզական գործընթացի որակի բարձրացում: |
| 208 | **Մարզակառույցների ցանցի բարելավում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Մանկապատանեկան սպորտի զարգացման, ուսումնամարզական գործընթացի որակի բարելավման, բարձրակարգ մարզիկների պատրաստման և նրանց կողմից բարձր նվաճումների ձեռքբերման համար շատ կարևոր է ունենալ վերանորոգված և հիմնանորոգված մարզակառույցներ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմաններ:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկայիս վիճակը և առկա խնդիրները**<br>Ոչ բոլոր մարզակառույցներն են վերանորոգված, ապահովված մանուկների և պատանիների մարզման ժամանակակից պայմաններով, ինչպես նաև առկա չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմանները: Մանուկների և պատանիների համար մարզման ժամանակակից պայմանների ստեղծում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմանների առկայության ապահովում:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Իրականացնել մարզակառույցների մոնիտորինգ, կազմել մարզակառույցների վերանորոգման և հիմնանորոգման հայտ 2020-2022 թվականների համար:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարզակառույցների ցանցի շարունակական բարելավում:<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Մանկապատանեկան սպորտի զարգացման, ուսումնամարզական գործընթացի որակի բարելավման, բարձրակարգ մարզիկների պատրաստման և նրանց կողմից բարձր նվաճումների ձեռքբերման համար շատ կարևոր է ունենալ վերանորոգված և հիմնանորոգված մարզակառույցներ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմաններ: |
| 209 | **Երիտասարդական ոլորտի իրավական դաշտի ձևավորում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Պետության զարգացման և հասարակական առաջընթացի գրեթե բոլոր բնագավառներում իր ակտիվ մասնակցությունն ու արժանի ներդրումն է ունեցել երիտասարդությունը: Չկա որևէ ոլորտ՝ մշակույթ, կրթություն, գիտություն, սպորտ, ձեռներեցություն, կառավարում և այլն, որտեղ առկա խնդիրներն ու հիմնահարցերն այս կամ այն կերպ չառնչվեն երիտասարդությանը:<br>Կարևորելով երիտասարդության դերը մեր երկրի կայացման գործընթացներում՝ պետությունը փորձում է համակարգված ու համալիր քաղաքականություն որդեգրել երիտասարդության նկատմամբ:<br>Ելնելով վերոգրյալից՝ խիստ կարևոր է մշակել ու ընդունել «Երիտասարդության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, որի նպատակն է ստեղծել համապատասխան իրավական հիմք երիտասարդական պետական քաղաքականության ոլորտի օրենսդրության կարգավորման համար: Նախագծի ընդունման համար հիմք են հանդիսանում «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 10-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետը:<br>Պետության կարևորագույն խնդիրն է երիտասարդական պետական քաղաքականությունը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին: Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը սահմանելու է երկարաժամկետ կտրվածքով (2020-2035 թվականների) ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության խնդիրները, սկզբունքները և ուղղությունները:<br>Ռազմավարությունը կսահմանի Հայաստանի Հանրապետության կառավարության՝ |

| | |
|---|---|
| | երիտասարդության առնչվող խնդիրների լուծմանը միտված 2022-2026 թվականների գործունեության գերակա ուղղությունները՝ առաջարկելով առավել փաստարկված և իրատեսական լուծումներ: Նպատակն է բարձրացնել երիտասարդության մասնակցությունը բոլոր մակարդակներում, ապահովել երիտասարդության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավումը, զարգացնել երիտասարդական աշխատողի ինստիտուտը, պահպանել և զարգացնել երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային արժեքները, բարձրացնել հայրենասիրական ոգին ու նպաստել միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունակության բարձրացմանը:<br><br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որը չի կարող իրավական հիմք հանդիսանալ ոլորտում որևէ բնույթի իրավական ակտի ընդունման, այդ թվում՝ նաև նորմատիվ, քանի որ համաձայն փոփոխված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:<br>Հաշվի առնելով վերոնշվածը՝ երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում այլևս հնարավոր չէ ընդունել նորմատիվ բնույթի իրավական ակտ՝ առանց համապատասխան իրավական հիմքի:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Երիտասարդության ոլորտի գործունեության համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծումը կնպաստի երիտասարդության ներուժի իրացմանն ու զարգացմանը, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծմանը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության զարգացման և հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման:<br>«Երիտասարդության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը իրավական հիմք կդառնա երիտասարդական քաղաքականության ոլորտում նորմատիվ, անհատական և ներքին (լոկալ) որոշումներ ընդունելու համար:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br>Երիտասարդական քաղաքականության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման իրավական հիմքի ապահովում:<br><br>**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդության հիմնահարցերի կարգավորում: Երիտասարդական քաղաքականության ոլորտում առկա հիմնախնդիրների վերհանում, երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում, երիտասարդության մասնակցային գործընթացի խթանում, արդյունավետ երիտասարդական քաղաքականության իրականացում: |
| 210 | ***Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք***<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է երիտասարդական պետական քաղաքականության ապակենտրոնացումից: Նպատակն է՝<br>ա) խթանել Հայաստանի Հանրապետության մարզերի համաչափ զարգացումը.<br>բ) զարգացնել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերությունները՝ ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում.<br>գ) խրախուսել Հայաստանի Հանրապետության քաղաքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակել երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդել.<br>դ)նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Երիտասարդների մասնակցության մակարդակը Երևանում զգալիորեն բարձր է մարզերում բնակվող երիտասարդների հասարակական մասնակցության և ակտիվության մակարդակից: Հասարակական կյանքին մասնակցելու, ժամանցի, այլ համայնքների, մարզերի երիտասարդների, երիտասարդական |

| | |
|---|---|
| | կազմակերպությունների, ակտիվ նախաձեռնող խմբերի միջև գործընկերային հարաբերություններ հաստատելու և այլ բնագավառներում մարզային երիտասարդների հնարավորություններն առավել սահմանափակ են:<br>**1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>««Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի արդյունքում մայրաքաղաք հռչակված քաղաքը հնարավորություն է ստանում մեկ տարվա ընթացքում իրականացնելու երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարզական ակտիվությանը նպաստող ծրագրեր:<br>Մրցույթը նպաստում է նորարարական ծրագրերի ստեղծմանը և իրագործմանը՝ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության հետ:<br>Մայրաքաղաքի կարգավիճակը քաղաքի երիտասարդական կազմակերպությունների համար հնարավորություններ է ստեղծում մասնակցելու հանրապետական մակարդակով որոշումների ընդունմանը, ձեռք բերելու նոր գիտելիքներ, հմտություններ, գործընկերներ, զարգացնելու միջազգային համագործակցությունը երիտասարդության ոլորտում:<br><br>**2.Կարգավորման առարկան**<br>ա) Մարզի և համայնքի հասարակական կյանքում երիտասարդական կազմակերպությունների և նախաձեռնությունների ներգրավվածություն,<br>բ) քաղաքային իշխանությունների կողմից երիտասարդական նախաձեռնությունների նպատակային աջակցություն:<br>**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացում: |
| | **Սփյուռքի նախարարություն** |
| 211 | **Հայրենադարձության խթանում, կազմակերպում և հայրենադարձների ինտեգրում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայրենադարձությունը, որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է: Հայրենադարձությունը դիտարկվում է հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, և որպես հայապահպանության կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո:<br>Ներկայումս հայրենադարձությունը կարևորվում է նրանով, որ շատ սփյուռքահայեր բնակություն են հաստատում ՀՀ-ում, սակայն այդ գործընթացը կարիք ունի կանոնակարգման, քանի որ Հայաստանում հաստատվածներից շատերը՝ այս կամ այն դրդապատճառից ելնելով, հեռանում են այլ պետություններ:Խնդիրն այն է, որ նրանց զգալի հատվածը Հայաստանի կյանքում ինտեգրվելու համար կարիք ունի պետական աջակցության:Հայրենադարձությունը, որպես հայրենիքում բնակություն հաստատելու յուրաքանչյուր հայի իրավունք, ինչպես նաև հայապահպանության կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: Ներկայումս հայրենադարձության գործընթացն արտահայտվեւմ է հետևյալ թվերով՝ 2008-2017թթ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել 106.096 անձ:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խթանել հայրենադարձության գործընթացը, զգալիորեն ամրապնդել Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական, մտավոր ու պաշտպանական ներուժը: «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) հիմնական նպատակը հայրենադարձության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումն է: Օրենքի հիմնական խնդիրներն են սահմանել՝ հայրենադարձների կարգավիճակը, հայրենադարձության վերաբերյալ պետական քաղաքականության հիմնական նպատակները, ուղղությունները և սկզբունքները, հայրենադարձության հարցերով պետական |

մարմինների լիազորությունները, հայրենադարձության դիմումի ներկայացման, հայրենադարձի կարգավիճակի տրամադրման և հայրենադարձի ինտեգրման կարգը, արտոնությունները և դրանց տրամադրման կարգերը: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հայրենադարձության գործընթացը և դրա կանոնակարգումը Հայաստանի Հանրապետության և սփյուռքի համար կարևոր հիմնահարց է, որը՝

1. Ընդհանուր առմամբ հանդիսանում է հայապահպանության գրավական՝ սփյուռքում հայ ինքնության որակների պահպանման, ուծացումից սփյուռքահայության տարբեր հատվածներին պաշտպանելու և ի վերջո՝ նրանց հայրենադարձնելու առումով:

2. Հայաստանի Հանրապետությունն իր ներկա ժողովրդագրությամբ կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բնակչության տարածքային տեղաբաշխվածության առումով: Հայաստանի բնակչության գրեթե 40 տոկոսը կենտրոնացված է Երևանում, իսկ մարզերում և հատկապես սահմանամերձ շրջաններում զգացվում է բնակչության պակաս: Ուստիև հայրենադարձությունը Հայաստանի Հանրապետության համար կարող է կարևորվել ժողովրդագրական և տարածքային-ռազմավարական խնդիրների լուծման նպատակով:

3. Հայրենադարձության հատուկ ծրագրերը կարող են նպաստել համազգային ներուժի համախմբմանը և ի շահ հայ ժողովրդի՝ ռազմավարական տարբեր խնդիրների լուծմանը:

**2.Կարգավորման առարկան**

Հայրենադարձության ռազմավարությամբ կսահմանվի պետական քաղաքականությունը, Հայաստան սփյուռք գործակցության խորացման, ամրապնդման և Մեծ հայրենադարձության միասնական քաղաքականության իրականացման համար: Հայրենադարձության ռազմավարությունից բխող կընդունվեն «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքը և այլ իրավական ակտեր: Օրենքի ընդունմամբ կկարգավորվի հայրենադարձության գործընթացի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

1.Հայրենադարձության ռազմավարության և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանում կնպաստի սփյուռքահայերի արագ և սահուն ինտեգրմանը հասարակության մեջ, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հնարավորություն կընձեռի հայկական մասնագիտական ներուժի համախմբման, ինչպես նաև Հայաստանում նպատակային կիրառման համար կձևավորվի սոցիալական կրթական հոգևոր մշակութային նոր պայմաններ ու երաշխիքներ: Ակնկալվում է նաև, որ օրենքի ընդունումից հետո որակական նոր իրավիճակ կստեղծվի սփյուռքում և Հայաստանի Հանրապետությունում, նոր լիցք կհաղորդվի Հայաստան-սփյուռք կապերին, սփյուռքում՝ հայապահպանությանը: Հայաստանում այն կնպաստի սփյուռքահայերի արագ և սահուն ինտեգրմանը պետության կյանքում, կնպաստի Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, հնարավորություն կընձեռի հայկական մասնագիտական ներուժի համախմբման և Հայաստանում նպատակային կիրառման համար:

2.Հայրենադարձների ինտեգրման ու ադապտացման ծրագրերը հնարավորություն կընձեռի հայրենադարձներին լիարժեք ներառվել հայաստանյան կյանքին ու իրականությանը, նրանց վերջնական հաստատմանը Հայաստանում:Ծրագրերի հիմքում դրվելու են աշխարհասփյուռ հայության հայրենադարձության կազմակերպումը և այդ գործընթացի կանոնակարգումը, իսկ սահմանվող իրավական եզրույթները պետք է վերաբերվեն այն հայերին, որոնք ցանկություն կհայտնեն բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Այդ խմբերի համար անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ հայրենադարձությանը վերաբերող հատուկ ծրագրերով, որոնք կարող են նպաստել համազգային ներուժի համախմբմանը և ի շահ հայ ժողովրդի՝ ռազմավարական տարբեր խնդիրների լուծմանը:

4.ՀՀ-ում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացմանն ուղղված ծրագրի իրականացմամբ կապահովվի ՀՀ-ում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի սոցիալ-տնտեսական լիարժեք ինտեգրմանն ուղղված՝ առաջնահերթ միջամտություն և բարեփոխումներ պահանջող ոլորտների երկարաժամկետ կարգավորման գործընթացը, ինչպես նաև սիրիահայերի և իրաքահայերի կրթական, մշակութային, սոցիալ-տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի շարունակականությունը:

5.Սփյուռքի երիտասարդների «ներՈՒԺ» ծրագրի իրականացմամբ առնվազն 200 սփյուռքահայ գործարարներին կներկայացվի ՀՀ-ում ներդրումային միջավայրը, արտոնությունները, սթարթափ հիմնելու հնարավորությունները. Հնարավորություն կստեղծվի, որ սփյուռքահայ գործարարները ներկայացնեն շուրջ 100 բիզնես նախագծեր, իսկ լավագույն մինչև 10 բիզնես ծրագրեր կֆինանսավորվեն մինչև 15 մլն. ՀՀ դրամի չափով:

6.Սփյուռքի երիտասարդների համար «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական և վերապատրաստման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է մինչև 1000 սփյուռքահայի մասնակցություն, որից՝ 13-18 տարեկան առնվազն 800 պատանիներ ու աղջիկներ, 19-24 տարեկան առնվազն 100 երիտասարդների համար

| | |
|---|---|
| | կիրականացվի ծրագիր մարզերում, հայոց լեզվի, հայագիտական առարկաների առնվազն 40 ուսուցիչներ և տնօրեններ, ազգային երգի ու պարի 30 պարուսույցներ, դեպի Հայաստան ներգնա զբոսաշրջության 30 երիտասարդ կազմակերպիչներ: Ակնկալվում է մինչև 10 երիտասարդի վերադարձ հայրենիք, մինչև 50 ուսանողի ընդունելություն հայաստանյան բուհեր, 5 սփյուռքահայ երիտասարդի կողմից բիզնեսի ձեռնարկում ծրագրով այցելած մարզում: |
| **212** | **Հայապահպանության խնդիրների լուծմանն աջակցություն**<br><br>**1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից: Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը և հայրենադարձության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր ստեղծումը:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության ապահովումը, դրանց միջև կապերի ամրապնդումը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը Կառավարության քաղաքականության կարևոր բաղադրիչն է: Հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, համահայկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցությունը այդ թվում՝ հայկական համայնքներում ազգային ինքնության արմատավորման ու պահպանման նպատակով սփյուռքի կազմակերպությունների հետ լեզվամշակութային ծրագրեր իրականացնելու համար միջոցներ ձեռնարկումը, ինչպես նաև այլալեզու և այլադավան հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը նպաստումը կարևորագույն խնդիրներից է: Հայապահպանությունը, համահայկական ներուժի համախմբմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակումն ու իրականացումն է:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայապահպանության գործընթացի խթանումը զգալիորեն կամրապնդի Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի կապերը և հայ ժողովրդի հոգևոր միասնությունը մտավոր ու պաշտպանական ներուժը:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Հայության ուծացմանը դիմակայումը և կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցությունը և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն պատմամշակութային արժեքների սերունդներին փոխանցումը և հայկական ինքնությունը պահպանումը:<br>**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>1.«Սփյուռքի կրթօջախների համար ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրով տարեկան մինչև 50.000 կտոր ուսումնական նյութերի տրամադրում: Մինչև 20.000 կտոր ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի փոստային առաքում սփյուռքի հայ համայնքներին: Արդյունքում ակնկալվում է սփյուռքում գործող ավելի քան 150 կրթական հաստատություններում սովորող աշակերտների շրջանում հայ ինքնության պահպանման, հայեցի կրթության ու դաստիարակության գործի արդյունավետ կազմակերպում, հայերենի իմացության մակարդակի բարձրացում:<br>2.«Օտարերկրյա պետություններում գտնվող հայկական ունեցվածքի պահպանման և տնօրինման խնդիրների լուծմանն աջակցություն» ծրագրով ակնկալվում է առնվազն 6 երկրում հայկական ունեցվածքի փաստաթղթավորում, պատկանելության ճանաչում, տնօրինում, պահպանում, միջազգային հանրության շրջանակներում հայկական ունեցվածքի արժևորում, հայկական պատմամշակութային արժեքների տեղափոխում ՀՀ (ձեռագրեր, հնատիպ գրքեր, արխիվային փաստաթղթեր, պատմական իրեր և այլն): Հայկական ունեցվածքը տնօրինելու անհնարինության պարագայում հայկական պատմամշակութային ժառանգության ներառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պահպանվող համաշխարհային արժեքների ցանկերում:<br>3.«Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» ծրագրով ակնկալվում է Վրաստանում գործող կրթամշակութային և երիտասարդական կենտրոնների գործունեության ակտիվացում, հայկական մշակույթի պահպանում և զարգացում:<br>4.«Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» ծրագրի իրականացմամբ ակնկալվում է Վրաստանի հայալեզու լրատվամիջոցների գործունեության ապահովում:<br>5.«Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը» ծրագրի իրականացմամբ ակնկալվում է Խոջիվանքի պանթեոնի պահպանում, բարեկարգում և փոխանցում սերունդներին: |
| **213** | **Ուծացման հիմնախնդիրները և ազգային փոքրամասնությունների ինքնության դեմ ուղղված մարտահրավերները**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը** |

| | |
|---|---|
| | Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքի համայնքների պատմության, նրանց խնդիրներին (ուծացում, խառնամուսնություն, համայնքային կյանքից հեռացում, լեզվի իմացության կորուստ, ազգային ինքնության մյուս բաղադրիչներից հեռացում, ներուժի համախմբում, հայրենիքի հետ կապերի աշխուժացում), համահայկական նշանակության հարցերին նվիրված ուսումնասիրությունները, հետազոտական հիմնախնդիրները Հայաստան-սփյուռք գործակցության կարևոր ոլորտներից են: Սփյուռքին նվիրված հետազոտությունները հնարավորության կընձեռի հաղթահարել առկա կարծրատիպերը, վեր հանել աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների իրական կարիքները: Օտար միջավայրի սոցիալ-մշակութային ազդեցությունը սփյուռքահայության վրա, սպառնալիք է արտերկրում ապրող հայության մշակութային և հոգևոր անվտանգությանը, ուստին խիստ կարևոր է սփյուռքին նվիրված տարատեսակ հետազոտությունների իրականացումը և նյութերի տարածումը: Առկա խնդիրներից են հայոց լեզվի, հայկական մշակույթի, պատմական հիշողության աստիճանական մարումը սփյուռքահայության շրջանում: Հիմնախնդիրներից է նաև խառնամուսնությունները:<br>**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հետազոտություններ, ուսումնասիրություններ, հարցախույզեր:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Վերոնշյալ միջոցառումների իրականացումը թույլ է տալիս բացահայտել ուծացման պատճառները, այն խմբերը, որոնք առավել խոցելի են, դրա դիմակայելու ուղիները և այդ խմբերի հայրենադարձության կազմակերպման հարցը:<br>**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ուծացման և ինքնության պահպանման հիմնախնդիրների ուսումնասիրությունների ծրագրի իրականացումը՝ Ռուսաստանի Դաշնության առնվազն 15, Լատինական Ամերիկայի (Բրազիլիա, Արգենտինա, Ուրուգվայ) առնվազն 6, Հյուսիսային Ամերիկայի առնվազն 7 և Արևելյան Եվրոպայի առնվազն 5 հայաշատ համայնքներում հնարավորություն կտա վերհանելու հիմնական խնդիրները՝ հայոց լեզվի, հայկական մշակույթի, պատմական հիշողության աստիճանական մարումը հատկապես լատինահայերի շրջանում, ինչպես նաև խառնամուսնությունները, որի դեպքում նոր սերունդն ավելի անմիջականորեն է ենթարկվում օտար միջավայրի սոցիալ-մշակութային ազդեցությանը: Հիմնախնդիրները կամփոփվեն հրատարակվող 1 գրքում: Միջոցառման իրականացումը կնպաստի հայկական ինքնության, դիմագծի պահպանմանը, խթանել վերադարձը հայկական արմատներին, պատմական հիշողությանը: |
| **214** | **Սփյուռքի մարդկային, ֆինանսական, տնտեսական, մտավոր ներուժի ներգրվում տարբեր ոլրոտներում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (ոլորտային նորմատիվ իրավական ակտեր չկան): Նպատակն է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, հայրենադարձությանը նպաստումը:<br>**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀԱՑ-ի կազմում են գործում հայ-հունական, հայ-ամերիկյան, հայ-ռումինական, հայ-ավստրալական, հայ-բրազիլական, հայ-արգենտինական, հայ-ֆրանսիական, հայ-եգիպտական, հայ-նիդերլանդական, հայ-բելգիական, հայ-իրանական առևտրաարդյունաբերական պալատները, գործարարների հայ-կանադական, հայ-լիբանանյան խորհուրդները, Հայաստանի և Արցախի առևտրաարդյունաբերական պալատները: Կազմակերպվել են երեք բիզնես ֆորում՝ Հայաստանում և Ֆրանսիայում (Մարսել): Վերջինը տեղի ունեցել 2017թ. սեպտեմբերին, որին մասնակցել են շուրջ 220 գործարարներ՝ մեծամասամբ սփյուռքից: Ֆորումների կազմակերպման խնդիրն է նշված միջոցառումները դարձել էլ ավելի ընդգրկուն՝ ներգրավելով սփյուռքիայ նոր գործարարներ և պոտենցիալ ներդրողներ, առավելագույնս օգտագործել սփյուռքի գործարար համայնքի ներուժը Հայաստանի բիզնես միջավայրի զարգացման, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև դեպի Հայաստան հայերի ներգաղթի հնարավորությունները մեծացնելու համար:<br>Սրտաբանության Եվրակովկասյան համաժողովի և մասնագիտական սեմինարների կազմակերպման ծրագրի խնդիրներն են Հայաստանի և Արցախի սրտաբանների համար անվճար վերապատրաստվելու |

հնարավորությունների ընձեռումը, առողջապահության բնագավառում Կառավարության կողմից նմանատիպ վերապատրաստումների համար հատկացվող ֆինանսական միջոցների տնտեսումը, սփյուռքի օգնությամբ Հայաստանում սրտաբանության ոլորտը զարգացնելը:

**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

1. Ներուժի արդյունավետ օգտագործման ճանապարհ է հայկական սփյուռքի գործարար շրջանակները ներկայացնող մեր հայրենակիցներին, ինչպես նաև նրանց միջոցով օտարազգի գործարարներին պարբերաբար մեկ տանիքի ներքո հավաքելը՝ ներկայացնելով բոլոր այն նոր հնարավորությունները, որտեղ համապատասխան գործարարը կարող է ներգրավվել և, ներդրումային ծրագրեր իրականացնելով, մասնակցել Հայաստանի տնտեսության զարգացմանը, օժանդակել Հայաստանում արդիական ու մրցունակ տնտեսություն կառուցմանը, նպաստել արտագաղթի նվազեցմանը և հայրենադարձությանը:

2. Բիզնես ֆորումին մասնակցելու նպատակով անհրաժեշտ է Հայաստան հրավիրել սփյուռքի բոլոր առևտրային պալատների ներկայացուցիչներին, անհատ գործարարներին, նրանց միջոցով նաև օտարազգի պոտենցիալ գործարարներին, նրանց ներկայացնել Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը:

3. Հայաստանում սրտաբանության ոլորտի մասնագետների զգալի մասը հնարավորություններ չունեն վերապատրաստվելու աշխարհի առաջատար կլինիկաներում և ստանալ նոր ու արդիական գիտելիքներ: Հետևաբար, սփյուռքի համապատասխան ոլորտի մասնագետների ներուժի օգտագործմամբ Հայաստանի սրտաբանների համար Հայաստանում վերապատրաստումներ անցկացնելն արդիական է և արդյունավետ, քանի որ վերապատրաստումներն անցկացվում են անվճար հիմունքներով և մասնագետների՝ Հայաստան գալու և հետադարձի ինքնաթիռի տոմսերը, գիշերակացն ապահովում է «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության կողմից: Կազմակերպությունն իր վրա է վերցնում նաև կազմակերպչական բնույթի ծախսերի զգալի մասը:

**2.Կարգավորման առարկան**

1.Ծրագիրը կարգավորում է սփյուռքի բոլոր առևտրային պալատների, գործարարների միությունների ներկայացուցիչներին, անհատ գործարարներին, նրանց միջոցով նաև օտարազգի պոտենցիալ գործարարներին և ներդրողներին Բիզնես ֆորումի մասնակիցը դարձնելու, ֆորումի շրջանակներում Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը նշված անձանց լավագույնս ներկայացնելու, նրանց հետ Հայաստանում ներդրումների իրականացման համար աշխատանք տանելու, ինչպես նաև Հայաստանից արտագաղթը նվազեցնելուն և հայրենադարձությունը խթանելուն ուղղված աշխատանքների հարաբերությունները:

Սրտաբանության Եվրակովկասյան համաժողովի և մասնագիտական սեմինարների կազմակերպման ծրագիրը կարգավորում է Հայաստանում սրտանոթային հիվանդությունների դեմ պայքարի գործին սփյուռքի ներուժի ներգրավման, Հայաստանի սրտաբանության ոլորտին աջակցելու, Հայաստանի և Արցախի սրտաբաններին վերապատրաստելու հարաբերությունները:

**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

1.Հայկական առևտրային ցանցի (ՀԱՑ) բիզնես ֆորումի կազմակերպման ծրագրի իրականացումից ակնկալվում է՝

-պոտենցիալ ներդրողին ներկայացնել ճշգրիտ տեղեկատվություն և հստակ նախագծված բիզնես ծրագրեր՝ Հայաստանում ներդրումներ կատարելու համար,

-խրախուսել Հայաստանում ներդրումները, ստեղծել կապեր պոտենցիալ ներդրողների և Հայաստանի կառավարության համապատասխան ոլորտների գերատեսչությունների հետ

-ակտիվացնել համագործակցութունը Հայաստանի և սփյուռքի գործարարների և պոտենցիալ ներդրողների միջև,

-Հայաստանում բիզնես ներդրումների միջոցով նպաստել երկրի քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, նվազեցնել արտագաղթը և նպաստել հայրենադարձությանը:

2.Սրտաբանության Եվրակովկասյան համաժողովի և մասնագիտական սեմինարների կազմակերպման ծրագրի իրականացումից ակնկալվում է՝

- առավել ամրապնդել ոլորտի մասնագետների միջև գործակցությունն ու կապերը Հայրենիք-սփյուռք ձևաչափով,

-լավ հնարավորություններ ստեղծել Հայաստանի և Արցախի սրտաբանության ոլորտի մասնագետների համար անվճար վերապատրաստվելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու համար,

- նպաստել Հայաստանում սրտաբանության ոլորտի զարգացմանը,

-կրճատել Հայաստանից վերապատրաստվելու նպատակով արտերկիր մեկնող մասնագետների թվաքանակը,

-տնտեսել առողջապահության բնագավառում կառավարության կողմից նմանատիպ վերապատրաստումների համար հատկացվող ֆինանսական միջոցները:

| 215 | **Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում** |
|---|---|

**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**
Անհրաժեշտությունը բխում է Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:
**1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**
Հիմնական խնդիրը Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը 20-րդ դարի ամենախոշոր ոճրագործության մասին բարձրաձայնելն է, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելը և այդ գործում սփյուռքի ներուժի օգտագործումը:
**1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**
Գիտաժողովների, կլոր սեղան-քննարկումների, դասախոսությունների կազմակերպում և անցկացում, դաշտային հետազոտությունների իրականացում, քարոզչական ֆիլմերի նկարահանում, ինչպես նաև գրքերի և արխիվային փաստաթղթերի, տարբեր ժողովածուների և անհրաժեշտ փաստաթղթերի հրատարակությունների իրականացում, հիմնախնդրին առնչվող արժեքավոր նյութերի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների կազմակերպում:
**2.Կարգավորման առարկան**
Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը եվ հետեվանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացումը թույլ է տալիս մշտարթուն պահել հիշողությունը՝ հասնելու համար հիմնախնդրի արդարացի լուծմանը:
**3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**
1. Արևմտյան Հայաստանում խլամացված հայերի հիմնախնդիրների ուսումնասիրության նպատակով տեղում (Արևմտյան Հայաստան) հետազոտական աշխատանքներ կատարողներին աջակցության ծրագիրի իրականացման արդյունքում կհանրայնացվեն արևմտահայության չուսումնասիրված հիմնախնդիրները, շուրջ 9 հետազոտության/ուսումնասիրության իրականացմանն աջակցություն: Կիրականացվի Արևմտյան Հայաստանի պատմամշակութային ժառանգության հաշվառում, տվյալների թարմացում՝ ոչնչացումից և անհայտությունից փրկելու նպատակով:
2. Արևմտյան Հայաստանից, Կ. Պոլսից երիտասարդների և հայոց լեզվի ուսուցիչների ներգրավումը Հայաստանում մշակութային և կրթական միջոցառումների ծրագիրի իրականացման արդյունքում կիրականացվեն Թուրքիայում թրքախոս հայերի համար հայագիտության, մշակութային առանձնահատկությունների ծանոթացման ծրագրերի կազմում, սեփական պատմության ուսումնասիրում, վերադարձ հայկական արմատներին, ինչպես նաև կրոնափոխ հայերին հայոց լեզվի ուսուցում:Նախատեսվում է առնվազն 14 միջոցառումների կազմակերպում:
3. Հայոց ցեղասպանության և խլամացված հայերի հիմնախնդիրներին նվիրված միջոցառումների արդյունքում կհավաքագրվեն և կհրատարակվեն համշենահայության մասին տեղեկատվության և բանահյուսության նյութեր, կհանրայնացվեն կրոնա-փոխ արևմտահայության և Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվության հիմնախնդիրները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության մասին նոր տեղեկատվության հանրահռչակում, երիտասարդ սերնդի դաստիարակությանն ուղղված աշխատանքների շրջանակում: Նախատեսվում է առնվազն 10 միջոցառումների կազմակերպում:
4.Հայոց ցեղասպանության և խլամացված հայերի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովների, համաժողովների, կլորսեղան քննարկումների կազմակերպման արդյունքում վեր կհանվեն Հայոց ցեղասպանության և խլամացված հայերի հիմնախնդիրները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ճանաչման նոր մեխանիզմները և իրավական հիմքերը: Նախատեսվում է առնվազն 6 միջոցառումների կազմակերպում:
5. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի և Պոլսո Հայոց պատրիարքության արխիվներում հետազոտությունների անցկացման արդյունքում կհանրայնացվի Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվությունը, տեղի կունենա նյութերի հավաքում, թվայնացում և ըստ անհրաժեշտության թարգմանչական աշխատանքների իրականացում և այլն, նախատեսվում է 2 միջոցառում:
Ի վերջո ծրագրերի իրականացումը կնպաստի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և

| | |
|---|---|
| | հետևանքների վերացման հիմնախնդիրների վեր հանմանը և լուծման ուղիների նախանշմանը, հայկական համայնքների կողմից այդ գործընթացի ներգրավման աշխատանքների համակարգմանը, ինչպես նաև կարևոր ներդրում կունենա արտերկրում Հայոց ցեղասպանության հիմնախնդրի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: |
| Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | |
| 216 | *Մարզպետարանների լիազորությունների սահմանում, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների շարքում մարզպետարանների նախատեսում*<br><br>1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)<br>«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումներով: Մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի բացակայությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մշակելու և շրջանառության մեջ դնելու վերը նշված օրենքի նախագիծը:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորվել են ՀՀ նախագահի 06.05.1997 թ.-ի N ՀՕ-728 հրամանագրով, որը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների արդյունքում ճանաչվել է ուժը կորցրած:<br>ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այս իրավիճակում խնդիր է առաջացել օրենքով նկարագրել մարզպետներին վերապահված լիազորությունները:<br><br>1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները<br>Խնդրի լուծումն առաջարկվում է իրականացնել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ առանձին օրենքի ընդունմամբ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախատեսվում է օրենքով նկարագրել մարզպետների լիազորությունները վերջիններիս գործունեության հիմնական ոլորտներում, ինչպես նաև մարզպետների հարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ<br><br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.<br>ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությանը համապատասխան մարզպետներին օրենքով կվերապահվեն համապատասխան լիազորություններ: |
| 217 | *Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի նոր ցանկի հաստատում, Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի կողավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրում և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցուցակների թվայնացում և տեղադրում համացանցում*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանվել է 2006թ. սկզբին և անցած տասնամյակի ընթացքում, հատկապես էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կտրուկ աճով պայմանավորված փաստաթղթերը և տիպերի և բովանդակային առումով լուրջ փոփոխություններ են կրել, շատ փաստաթղթեր այլևս չեն ստեղծվում, դրանց փոխարեն հանդես են եկել նորերը: Անհրաժեշտություն է առաջացել նաև փոփոխել մի շարք փաստաթղթերի պահպանության ժամկետները, մի մասինը՝ ավելացնել, մի մասինը՝ պակասեցնել:<br>1.1.2.Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերի հաշվառումը և արխիվապահոցներից դրանց տրամադրումը օգտվողներին իրականացվում է ձեռքի աշխատանքի միջոցով, որտեղ առկա է մարդկային գործոնը սխալվելու հավանականությամբ հանդերձ: |

| | |
|---|---|
| | 1.2.3. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերից օգտվողները իրենց անհրաժեշտ տեղեկությունների որոնումը կարող են կատարել միայն արխիվում, այն էլ թղթե կրիչով ցուցակների միջոցով, բացառությամբ 2010թ. հետո արխիվ պահպանության ընդունված փաստաթղթերից, որոնք ունեն նաև ցուցակների էլեկտրոնային տարբերակ:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>1.2.1. Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի նոր ցանկ:<br>1.2.2. Առաջարկվում է նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով լուծել խնդիրը:<br>1.2.3. Առաջարկվում է ավելի քան 50 հազար ցուցակների թվայնացում և տեղադրում համացանցում:<br><br>2. Կարգավորման առարկան<br>2.1 «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման ընդունմամբ կհստակեցվի և նոր ժամանակի պահանջներին կհամապատասխանեցվի պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը:<br>2.2. ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի կոդավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրումը և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ցուցակների թվայնացումը և տեղադրումը կնպաստի համացանցում ՀՀ արխիվային գործի բնագավառում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և օգտագործման ծավալների ընդլայնում:<br><br>3. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը<br>3.1 <<Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը>> հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> Կառավարության որոշման կիրարկմամբ կապահովվի արդի պայմաններում ստեղծվող նոր տիպի փաստաթղթերով, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերով, համալրվող Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուն:<br>3.2. Արխիվային նոր տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ ձեռքի աշխատանքին կփոխարինեն ժամանակակից տեխնոլոգիաներով ավտոմատ համակարգերը, կբարձրանա աշխատանքի արդյու-նավետությունը, կբացառվեն սխալները,<br>3.3. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց արխիվային ծառայությունների մատուցումը կիրականացվի նոր համակարգի միջոցով, որի շնորհիվ կկրճատվի ՀՀԱՀ-ի օգտվողների փաստաթղթերի տրամադրման գործընթացների տևողությունը:<br>3.4. Միասնական տեղեկատվական դաշտ կստեղծվի և կապահովվի քաղաքացիների արխիվային փաստաթղթերի՝ որպես Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական պաշարների բաղկացուցիչ մաս, օգտագործման իրավունքը,<br>3.5. Քաղաքացիները հնարավորություն կունենան Հայաստանի Հանրապետության արխիվային հավա-քածուի կազմի և բովանդակության վերաբերյալ համակարգված տեղեկությունը որոնել, դիմել և ստանալ առցանց համակարգով,<br>3.6.Կնպաստի Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի տեղեկատվական կարողությունների զարգացմանը: |
| 218 | *«Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը*<br><br>1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)<br>1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացվում է առնվազն 3 տարին մեկ անգամ, և վերապատրաստման գործող ծրագրերում ներառված են ընդհանուր թեմաներ, որոնց համաձայն իրականացվող վերապատրաստումները չեն ապահովում համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման կարիքները: Հայեցակարգով նախատեսվում է նկարագրել համայնքային ծառայության համակարգի զարգացման ուղղությունները, որոնց թվում են կոնկրետ մասնագիտական թեմաներ պարունակող ծրագրերի կազմումը և վերապատրաստումների ըստ անհրաժեշտության անցկացումը:<br>Կառավարության որոշման նախագծի մշակման իրավական հիմքը «Կառավարության կառուցվածքի և |

| | |
|---|---|
| | գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 14-րդ մասն է:<br>1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է վերապատրաստման ծրագրերը մշակել համայնքապետարանի աշխատակազմի կողմից իրականացվող գործառույթների (ըստ ոլորտների) համաձայն՝ շեշտադրելով ներդրումային ծրագրերի վերլուծության մեթոդոլոգիան, ինչպես նաև համայնքի տարածքում գործարար միջավայրի բարելավմանը և տուրիզմի խթանմանն ուղղված միջավայրի ձևավորման վերաբերող թեմաների անհրաժեշտությունը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախատեսվում է վերապատրաստման ծրագրերը մշակել համայնքապետարանի աշխատակազմի կողմից իրականացվող գործառույթների (ըստ ոլորտների) համաձայն՝ շեշտադրելով ներդրումային ծրագրերի վերլուծության մեթոդոլոգիան, ինչպես նաև համայնքի տարածքում գործարար միջավայրի բարելավմանը և տուրիզմի խթանմանն ուղղված միջավայրի ձևավորման վերաբերող թեմաների անհրաժեշտությունը:<br><br>3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Համայնքային ծառայողների վերապատրաստման միջոցով կիրականացվի համայնքային ծառայողների կոնկրետ մասնագիտական կարողությունների կատարելագործում, ինչը կապահովի համայնքների զարգացման ռազմավարական խնդիրների արդյունավետ իրականացումը: |
| 219 | *Տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող օրենսդրության կատարելագործում*<br><br>1.Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակ)<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նոր խմբագրությամբ ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին: Շուրջ 1.5 տարվա կիրառման արդյունքում, ինչպես նաև սահմանադրական փոփոխություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելու:<br>«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նոր խմբագրությամբ ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին: Օրենքը կիրառելուց հետո առաջացած խնդիրների վերլուծության արդյունքում բացահայտվել են խնդիրներ, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների համար առաջացնում են որոշակի խոչընդոտներ: Ավելի քան 70 համայնքներ գրավոր ներկայացրել են խնդիրներ, որոնց հիման վրա իրականացվել են մանրամասն վերլուծություններ: Դրանց արդյունքները քննարկվել են տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:<br>Ներկայումս համայնքների ավագանիները ձևավորվում են մեծամասնական ընտրակարգով իրականացվող ընտրությունների արդյունքում: Համայնքների միավորման գործընթացը թույլ է տալիս անցում կատարել համամասնական ընտրական համակարգի:<br><br>1.2. Առկա խնդիրներին առաջարկվող լուծումները<br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից նախատեսվում է մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախատեսվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը թղթակցել մի շարք իրավական այլ ակտերի հետ, օրինակ, «Հանրային ծառայության մասին», զուգահեռ մշակվող «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագծի և այլն:<br>«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կարգավորվելու են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝<br>• համայնքի վարչական տարածքում հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից խմիչքի կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքի կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության տրամադրման նպատակով վաճառքի կամ իրացման վայրի և տուրքի սահմանման հստակեցում,<br>• համայնքի վարչական տարածքում տոնավաճառներ կամ փառատոններ կազմակերպելու կամ |

| | |
|---|---|
| | մասնակցելու թույլտվության համար տեղական տուրքի սահմանման հստակեցում,<br>• համայնքի վարչական տարածքում և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի վայրի և տուրքի սահմանման հստակեցում.<br>• համայնքի վարչական տարածքում և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում վաճառքի վայրի և տուրքի սահմանման հստակեցում,<br>• այլ խնդիրներ:<br>«Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ նախատեսվում է միավորված և խոշոր համայնքներում ներդնել ավագանիների ձևավորման համամասնական ընտրակարգի մեխանիզմները:<br><br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Նախագծերի ընդունմամբ կհստակեցվեն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում առկա՝ որոշակիություն պահանջող դրույթները, կլուծվեն օրենքի կիրարկումից առաջացած իրավաիրացնող խնդիրները, կապահովվի այդ օրենքի թղթակցումը խորհրդարանական կառավարման համակարգի անցումից ի վեր ընդունված իրավական ակտերի հետ, լուծում կստանան համայնքների կողմից ներկայացված խնդիրները՝ բարձրացնելով տեղական ինքնակառավարման արդյունավետությունը: Հնարավորություն կստեղծվի խոշորացված և «խոշոր» համայնքներում ներդնել ավագանու ընտրության համամասնական ընտրական համակարգ: |
| 220 | *«ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը*<br><br>1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)<br><br>«ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 4.5-րդ կետի դրույթներով ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացի արդյունավետության և շարունակության ապահովմամբ:<br>Նախագծի մշակման համար իրավական հիմք են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի հավելվածի 14-րդ մասը, Կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի թիվ 29 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 4.5 կետը:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման դրույթների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով արդեն նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ ստանալու նպատակով ՀՀ համայնքների կողմից մշակվում և ներկայացվում են ծրագրային հայտեր, որոնք քննարկվում են սուբվենցիաների հայտերի գնահատման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովում: Համայնքների կողմից սուբվենցիայի ծրագրային հայտերը ներկայացվում են ոչ լիարժեք, այդ թվում՝ ոչ լիարժեք նախագծա-նախահաշվային փաստաթղթերով, համայնքների բյուջեների, ֆոնդային բյուջեներից քաղվածքների վերաբերյալ տեղեկանքներով և այլ տեղեկատվությամբ, ինչի պատճառով դժվար է լինում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից գնահատել ներկայացված ծրագրային հայտերը:<br><br>1.2 Առկա խնդիրների համար առաջարկվող լուծումները<br>Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի |

| | |
|---|---|
| | իրականացման նպատակով անհրաժեշտ է Կառավարության կողմից սահմանել հստակ չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան լիարժեք և բազմակողմանի ուսումնասիրելու հայտերը և դրանք գնահատելու:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Կառավարության որոշման նախագծով նախատեսվում է սահմանել սուբվենցիայի ծրագրային հայտերի հստակ ձևաչափը և ձևաչափին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև ծրագրերի գնահատման չափորոշիչները:<br><br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի համար սահմանված չափորոշիչները հնարավորություն կտան վարչապետի 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 136-Ա որոշմամբ սուբվենցիաների հայտերի գնահատման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից արդյունավետ և լիարժեք գնահատել ծրագրային հայտերը և ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կայացնել: |
| 221 | *Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների վիճակի բարելավում*<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)<br>Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում առկա բազմաթիվ հասարակական զուգարաններ գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը որոշ դեպքերում հանգեցնում է դրանցից օգտվելու անհնարինության: Ներկայացված պատկերը խոչնդոտում է նաև զբոսաշրջության զարգացմանը:<br><br>2. Ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման կատարման արդյունքում Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում կլինեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող հասարակական զուգարաններ: Միջոցառման կատարման ընթացքում կքննարկվի նաև հասարակական զուգարանների նկատմամբ օրենսդրական նոր պահանջներ նախատեսելու հարցը, որի նպատակահարմարության դեպքում կմշակվի և շրջանառության մեջ կդրվի իրավական ակտերի նախագծերի փաթեթ |
| 222 | *Տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված ծրագրերի իրականացման ապահովում*<br>Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման անհամաչափությունները խորությամբ նկարագրվել են Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությամբ, որով սահմանվել են նաև տարածքային զարգացման ծրագրավորման ընթացքում կիրառվող հիմնական սկզբունքները, գերակայությունները և արդյունքային ցուցանիշները: Տարածքային զարգացման ապահովմանն են ուղղված նաև ՀՀ բոլոր մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունները, ինչպես նաև ՀՀ 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը: Նշված փաստաթղթերի տրամաբանությամբ են նկարագրվել հետևյալ միջոցառումները `<br><br>7.1 Տարածքային համաչափ զարգացմանն ուղղված տարածքային զարգացման 8 փորձնական ծրագրի իրականացման ապահովում<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)<br>Թվով 8 փորձնական ծրագրերի իրականացումը պայմանավորված է մարզերում տարածքային համաչափ զարգացում ապահովող ենթակառուցվածքների ձևավորման, ինչպես նաև փաստացի արդյունք ստանալու անհրաժեշտությամբ: Տարածքային զարգացման 8 փորձնական ծրագրերն իրականացվում են ԵՄ ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության ու առանձին ՀԿ-ների ու տեղական ինքնակառավարման մարմինների համաֆինանսավորմամբ: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 10 մլն Եվրո:<br>2. Ակնկալվող արդյունքը<br>Ծրագրերի իրականացմամբ կստեղծվի շուրջ 500 նոր աշխատատեղ և գրեթե նույնքան կազմակերպություններ՝ մեծամասամբ ՓՄՁ-ներ կընդլայնեն իրենց գործունեությունը, կձևավորվեն կայուն |

ենթակառուցվածքներ և հմտություններ, ինչը կարող է խթանել սոցիալական և տնտեսական հետագա առաջընթացը մարզերում:

7.2 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչները բավարարող ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի ապահովում

1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացի ապահովմամբ:

Նշված գործընթացով Կառավարությունը խրախուսում է համայնքներին, որպեսզի համայնքներն իրենց ընդհանուր բյուջեում հնարավորինս աճեցնեն կապիտալ ծախսերը՝ նպատակաուղղված ճանապարհների, այգիների, հրապարակների կառուցմանն ու վերանորոգմանը, էներգախնայող լուսավորության անցկացմանը, հանրային և համայնքային շենքերի վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցմանն ու վերանորոգմանը և այլն: Ընդ որում, համայնքներում տնտեսական ենթակառուցվածքների զարգացման դեպքում ծրագրի արժեքի մինչև 60 տոկոսը համաֆինանսավորվում է պետական բյուջեից, իսկ սոցիալական ենթակառուցվածքների՝ մանկապարտեզի, մշակութային տների կառուցման, վերանորոգման գործընթացի պարագայում՝ պետության կողմից համաֆինանսավորվում է ծրագրի արժեքի մինչև 40 տոկոսը:

2.Ակնկալվող արդյունքը

Միջոցառման կատարման արդյունքում ՀՀ համայնքներում կիրականացվեն կապիտալ ծախսեր՝ նպատակաուղղված ճանապարհների, այգիների, հրապարակների կառուցմանն ու վերանորոգմանը, էներգախնայող լուսավորության անցկացմանը, հանրային և համայնքային շենքերի վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցմանն ու վերանորոգմանը և այլն: Նշված գործընթացով անցում է կատարվում սուբվենցիաների տրամադրման նոր քաղաքականությանը՝ մրցակցային սկզբունքով սուբվենցիայի տրամադրում լավագույն ծրագրեր ներկայացրած այն համայնքներին, որոնց ծրագրերը համապատասխանում են սահմանված չափորոշիչներին:

Միաժամանակ, այս գործընթացում չափազանց կարևորվում է համայնքների դերակատարությունն ու անմիջական մասնակցությունը՝ համայնքների կարիքների գնահատման, առաջնահերթ խնդիրների բացահայտման և դրանց լուծումների ապահովման մասով:

*7.3* ՀՀ տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային գործարար ծրագրերի հարթակի (on-line) ստեղծման և դրա կայացման աշխատանքների ապահովում

1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)

Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու և դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման ապահովմամբ, ինչն իր հերթին կնպաստի հանրապետության համաչափ տարածքային զարգացմանը, տնտեսության աճին և կայունությանը:

Հաշվի առնելով, որ հանրապետության մարզերում բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակն ունի վատթարացման միտում, ինչը գլխավորապես պայմանավորված է գործարար ակտիվության ցածր մակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, սոցիալական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակով, միգրացիայի բարձր տեմպերով, առաջնահերթ կարգով անհրաժեշտություն է առաջանում նպաստելու հանրային և մասնավոր ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և զարգացնելու պետական աջակցության մեխանիզմները:

2. Միջոցառման ակնկալվող արդյունքը

ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային գործարար ծրագրերի հարթակի (on-line) ստեղծման գործընթացը կապահովի պետություն-համայնք-մասնավոր հատված գործընկերության զարգացումը՝ նպաստելով ազգային ու տեղական կարևորագույն ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Ակնկալվում է հարթակում տեղադրել ՀՀ մարզերից ստացվող բոլոր ծրագրային առաջարկները, գործարար ծրագրերը և կապ հաստատել պոտենցիալ ներդրողների հետ: Արդյունքում ակնկալվում է նպաստել տնտեսական և սոցիալական էական աճ ապահովող գործարար ծրագրերի իրականացմանը ՀՀ մարզերում:

7.4 Շարունակել և ընդլայնել սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերը

1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)

Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցությունն իրականացվում է <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի հիման վրա, որի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը: Նշվածը ենթադրում է, որ առնվազն մինչև նշված ժամկետի ավարտը սահմանամերձ համայնքների բնակիչներին պետք է տրամադրվի <<Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված աջակցությունը: Նշված աջակցությունը տրամադրվում է Կառավարության 18.12.2014 թ-ի N 1444-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ սահմանամերձ 16 համայնքների 37 բնակավայրերի բնակիչներին: ՀՀ պետական բյուջեով այս ծրագրի իրականացման համար հատկացվել է 928,8 մլն դրամ գումար:

2. Ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացման արդյունքում 17238 տնտեսության 56068 բնակչի կտրամադրվի առնվազն հետևյալ աջակցությունը՝

1) էլեկտրաէներգիա - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 1440 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

2) բնական գազ - օրացուցային տարվա ընթացքում գումարային մինչև 360 խ.մ. բնական գազի վճարումները գանձվում են հաստատված սակագնից նվազեցված գնով՝ 50 %-ի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

3) բնական գազի փոխարեն փոխհատուցում էլեկտրաէներգիայի տեսքով - «էլեկտրաէներգիայի ծախս ունեցող ամիսներին տրամադրվում է 15 խոր. մետր, տարվա ընթացքում աճողական մինչև 180 խոր. մետր բնական գազի քանակության արժեքին համապատասխան գումար:

4) ոռոգման ջուր - ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 %-ի չափով:

5) հողի հարկ և անշարժ գույքի գույքահարկ - վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկը Կառավարությունը նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե է վճարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից:

7.5 *«Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների մշակում և իրականացում*

1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)

Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների մշակման և իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N53 Կառավարության արձանագրային որոշման ընդունմամբ:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Չնայած, որ վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տարածական տնտեսական քաղաքականության իրականացման համար ստեղծվել էին որոշակի նախադրյալներ, մշակվել և կենսագործվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, տարածքային զարգացման անհամաչափությունները շարունակում են խորանալ և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով, ինչի արդյունքում էլ ավելի է աճել Երևանի և մարզերի միջև կենսամակարդակի ճեղքվածքը:

Գյուղական բնակավայրերի մեծ մասը (60% և ավելի) քաղաքների ազդեցության գոտում են, և գյուղական բնակչության մեծ մասը բնակվում է Երևանի, Վանաձորի և Գյումրու մերձակա գյուղերում: Հեռավոր տարածաշրջանների և սահմանամերձ գոտու բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակն ունի

| | |
|---|---|
| | վատթարացման միտում, ինչը գլխավորապես պայմանավորված է գործարար ակտիվության ցածր մակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, սոցիալական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակով:<br>ՀՀ մարզերն ունեն առանձնակի ոլորտային զարգացման կենտրոնների ձևավորման անհրաժեշտություն:<br>1.2 Առկա խնդիրներին առաջարկվող լուծումները<br><br>Կայուն զարգացման գրավական հանդիսացող երկրի համաչափ տարածքային զարգացման նպատակով առաջարկվում է ՀՀ տարածաշրջաններում ձևավորել «տարածքային աճի բևեռներ», որոնց զարգացումը թույլ կտա անցում կատարելու միաբևեռ, մայրաքաղաքում կենտրոնացած տնտեսությունից բազմաբևեռ, կայուն, համաչափ զարգացող տնտեսության:<br>Տարածքային աճի բևեռների ձևավորումը և զարգացումը կապահովի մարզերի և երկրի որակական զարգացում, մարզային ՀՆԱ-ի և երկրի ՀՆԱ-ի փաստացի աճ ՝ ի հաշիվ ընտրված տարածքների կոնցեպտուալ և համակարգված զարգացման:<br>Միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսվում է մշակել և տարածքային աճի բևեռներում իրականացնել բևեռի զարգացման կոնցեպտի իրագործումն ապահովող առաջնային իմպուլս հաղորդող նախագծեր, ապահովել նշյալ նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բարեկարգում և ստեղծում, ապահովել բևեռներում տեղական տնտեսական զարգացումը՝ սոցիալական ոլորտի զարգացման և ՓՄՁ միջոցով:<br>Տարածքային աճի բևեռների ընտրությունը նախատեսվում է իրականացնել համապատասխան իրավական ակտերի ընդունմամբ՝ «տարածքային աճի բևեռի ընտրությունը սահմանող չափորոշիչների», «պետության կողմից տարածքային աճի բևեռներին հատուկ կարգավիճակի շնորհման»:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների իրականացումը հնարավորություն կընձեռի Կառավարությանը համակարգված և փուլային եղանակով իրականացնել ՀՀ տարածքային համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացը:<br><br>3. Ակնկալվող արդյունքը<br>Ձևավորված տարածքային աճի բևեռներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացումը կապահովի տեղական և օտարերկրյա ներդրումների անընդհատ ներհոսք, պետության կողմից տարածքային աճի բևեռներում իրականացվող ուղղակի ներդրումների արդյունքում կբարելավվեն տեղական ենթակառուցվածքները, կարձանագրվի կյանքի որակի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ ի հաշիվ գործազրկության և աղքատության նվազեցման, կլուծվեն տրանսակցիոն և արտադրական ծախքերի նվազեցման խնդիրները, կաճեն տարածաշրջանի և երկրի մրցակցային առավելությունները: |
| 223 | *Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորում և գործարկում*<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)<br>Վարչական տվյալների շտեմարանի ձևավորման համար մշակվել է նոր հարցաշար, որի համաձայն համայնքներից արդեն ստացվում են համապատասխան տեղեկություններ՝ ըստ համայնքներում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրի: Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորումը հնարավորություն կստեղծի շահագրգիռ կողմերին կատարել ոլորտային վերլուծություններ:<br><br>2.Ակնկալվող արդյունքը<br>Համայնքների վարչական տվյալների շտեմարանի ձևավորմամբ, ըստ բնակավայրերի, կհավաքագրվի մեծածավալ տեղեկատվություն, որը կօգտագործվի ոլորտում անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելու գործում: |
| 224 | *Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում*<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ) |

| | |
|---|---|
| | Ներկա դրությամբ ՀՀ 502 համայնքներից մոտ 400-ում (մոտ 80%-ում) ներդրված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), որոնցից 18-ը՝ միավորված բազմաբնակավայր համայնքներում: Միավորված համայնքում ՀԿՏՀ-ի կիրառության շնորհիվ մեկ միասնական տեղեկատվական տարածության մեջ են ներառվում համայնքի կենտրոնի և բնակավայրերի վարչական ղեկավարների գրասենյակները, համայնքային ծառայությունները բնակիչների համար հավասարապես հասանելի են դառնում համայնքի բոլոր բնակավայրերում,  ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում համայնքային բնույթի  մի շարք ծառայություններ տրամադրել նաև էլեկտրոնային եղանակով: ՀԿՏՀ-ի նոր՝  կատարելագործված և բարելավված տարբերակի կիրառումը համայնքապետարաններում քաղաքացիներին հնարավորություն կընձեռի համայնքային մի շարք վարչական ծառայություններ ստանալ իրենց նույնականացման քարտերի էլեկտրոնային ստորագրության միջոցով:<br>Սկսած 2016թ.-ի նոյեմբերից՝ շուրջ 37 համայնքում ավագանու նիստերը կամ հանրային նշանակության այլ միջոցառումներն առցանց հեռարձակվում են համացանցում,  ինչը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և հանրության առաջ նրանց հաշվետվողականության բարձրացմանը: Խոշորացված համայնքներից առցանց հեռարձակումներ են իրականացնում 19-ը:<br>Ներկայումս գույքային հարկերի հավաքագրումն իրականացվում է ավելի քան 400 համայնքապետարանում շահագործվող էլեկտրոնային համակարգերի միջոցով, որոնց բարոյական մաշվածությունը և սահմանափակ գործառնական հնարավորությունները թույլ չեն տալիս փոխգործելիություն ապահովել պետական մարմինների (Անշարժ գույքի կադաստրի կոմիտե, Ոստիկանություն և այլն) էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ:<br><br>2. Ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը, հանրային հաշվետվողականությունը և հանրության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Տեղական ինքնակառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը կնպաստի նաև մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավմանը, դրանց մատչելիության ավելացմանը, կառավարման արդյունավետության և օպերատիվության բարձրացմանը: |
| 225 | *Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում*<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)<br>2015 թվականից մեկնարկել են վարչատարածքային բարեփոխումները:<br>Մինչ այս պահը գործընթացն իրականացվել է 3 փուլով.<br>1-ին փուլ՝ թվով 22 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 3 համայնք,<br>2-րդ փուլ՝ թվով 118 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 15 համայնք,<br>3-րդ փուլ՝ թվով 325 համայնքի միավորման արդյունքում ձևավորվեց 34 համայնք:<br>Այսպիսով, ներկայումս Հայաստանում առկա է թվով 502 համայնք (մինչ միավորումը՝ 915), որից 52-ը՝ միավորված համայնքներ են:<br>Համայնքների միավորման հետագա ծրագրերն իրականացնելիս ավելի մեծ ուշադրություն և ժամանակ է տրամադրվելու շահառու համայնքների բնակչության իրազեկման աշխատանքներին, կազմակերպվելու են քննարկումներ, որոնց ընթացքում կպարզաբանվեն բնակչության կողմից բարձրացվող հարցերը, մտահոգությունները, միավորման գործընթացի արդյունքում ակնկալվող  ձեռքբերումները, ինչպես նաև կներկայացվեն արդեն միավորված համայնքներում ֆինանսական նոր հնարավորությունները, ինչի արդյունքում հնարավոր կլինի ունենալ համապատասխան համայնքային կառույցներ, ենթակառուցվածքներ, որոնք էապես կբարելավեն համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:<br><br>2. Ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյուքում կապահովվի վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունը, ինչի ընթացքում 425-430 համայնքի միավորման արդյունքում կձևավորվի շուրջ 65-70 համայնք:<br>Միջոցառման իրականացումը լիազորությունների հետագա ապակենտրոնացման, համայնքի կառավարման արդյունավետության բարձրացման, ռեսուրսների համախմբման, առավել մրցակցային ավագանու ձևավորման, համայնքային ծրագրերի մշակման և իրականացման հնարավորությունների բարձրացման, բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացման, որակի և մատչելիության |

| | |
|---|---|
| | բարձրացման կարևորագույն նախապայման կդառնա: |
| 226 | *Լիազորությունների ապակենտրոնացում*<br><br>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակ)<br>Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում համայնքների միավորումը հնարավորություն է ընձեռել խորացնելու լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված բազմաբնակավայր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ՝ մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում:<br>Միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի ծավալելու ապակենտրոնացման քաղաքականության խորացում և դրա արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորություններ, մասնավորապես՝ պատվիրակված լիազորություններ վերապահում խնդիրների շուրջ, որի համար հիմնական խոչընդոտ է համարվել համայնքների մեծ թիվը և դրանց կարողությունների ցածր մակարդակը: Համայնքների միավորման և դրանց կարողությունների ամրապնդմանը միտված վարչատարածքային վերջին բարեփոխումներն արդեն ստեղծում են բավարար հիմքեր՝ լիազորությունների ապակենտրոնացում իրականացնելու համար:<br><br>2. Ակնկալվող արդյունքը<br>Օրենսդրորեն տեղական ինքնակառավարման մարմիններին կփոխանցվեն նոր լիազորություններ, ինչի արդյունքում կբարձրանան տեղական ինքնակառավարման արդյունավետությունը և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մատչելիությունը: |
| Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | |
| | |
| 227 | ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ<br>**1.** Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական կարգավորման կատարելագործման նպատակով նախատեսվում է իրականացնել երեք իրավական ակտերի նախագծերի մշակում՝ ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովմանը, մասնավորապես առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման գործընթացի կանոնակարգմանը, շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման գործունեության իրականացման օրենսդրական կարգավորմանը, բոլոր տնտեսվարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մանրածախ շուկայում գործունեություն իրականացնելու մեծածախ վաճառողների սահմանափակմանը:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը վաճառատեղերը վճարովի կամ անհատույց օգտագործման նպատակով տրամադրում է վաճառողներին՝ նրանց հետ օրենքով սահմանված կարգով կնքված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տիպային պայմանագրի հիման վրա՝ բացառությամբ անմիջապես կազմակերպչի կողմից վաճառքն իրականացնելու դեպքերի: Վերոգրյալ դրույթի հիման վրա ՀՀ կառավարության կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ին ընդունվել է «Առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման տիպային պայմանագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի նպատակն առևտրի իրականացման վայրի կազմակերպչի և վաճառողի միջև հարաբերությունների հնարավորինս հստակեցումն ու տվյալ ոլորտում վաճառողների միջև հավասար մրցակցային պայմանների ապահովումն էր: Սակայն իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ գործնականում ոչ մի առևտրի իրականացման վայրում վարձավճարները չեն գանձվել համաձայն գործող կարգավորման, ըստ որի վարձավճարի չափը չի կարող գերազանցել վաճառողի տվյալ ամսվա իրացման շրջանառության 1,5 տոկոսը: Առևտրի իրականացման վայրերում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները հիմնականում թաքցրել են իրենց իրական շրջանառության ծավալները:<br>«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվում են նաև «շրջիկ առևտրի կետեր» և «շրջիկ առևտուր» հասկացությունները, ինչպես նաև սահմանում է, որ մանրածախ առևտուրը կարող է իրականացվել |

| | |
|---|---|
| | նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով: Ըստ այդմ, շրջիկ առևտուրը դիտարկվում է որպես մանրածախ առևտրի տեսակ, սակայն, օրենքով որևէ այլ կարգավորում չի նախատեսվում, մասնավորապես՝ բացակայում են դրույթներ թե ովքեր և ինչ ընթացակարգով կարող են զբաղվել նշված գործունեության տեսակով, ինչը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում տնտեսավարողների համար:<br>Մեծածախ-մանրածախ շղթայի կանոնակարգման տեսանկյունից կարևորվում է մանրածախ շուկայում մեծածախ վաճառողների գործունեություն իրականացնելու սահմանափակումը, քանի որ մեծածախ վաճառողները մանրածախ շուկայում ձեռք են բերում մրցակցային առավելություն: Այս համատեքստում առաջնային խնդիր է սոցիալական նշանակություն ունեցող կարևորագույն ապրանքների ներմուծմամբ (արտադրությամբ, մեծածախ վերավաճառքով) զբաղվող խոշոր տնտեսավարողների համար սահմանափակել նշված ապրանքատեսակների մասով հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով վաճառքի իրականացումը:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ներկայացվող նախագծերով առաջարկվում է«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ ուղղված՝<br>– առևտրի իրականացման վայրի կազմակերպչի և վաճառողի իրավունքներն ու պարտականությունների հստակեցմանը և առավել մանրամասն սահմանմանը՝ ի թիվս այլ դրույթների, սահմանելով նաև առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից վաճառատեղերը իր ինտերնետային կայքում հրապարակային օֆերտա ներկայացնելու արդյունքում տրամադրելու վերաբերյալ կարգավորումներ՝ օրենքի մեջ առկա դրույթների անհարկի չարաշահումներից խուսափելու, ինչպես նաև տնտեսավարողներին գործարար շահերով առաջնորդվելու հնարավորություն ընձեռելու նպատակով,<br>– շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման գործունեությանը ներկայացվող պահանջների սահմանը,<br>– մանրածախ շուկայում մեծածախ վաճառողների գործունեություն իրականացնելու սահմանափակմանը:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան առևտրի և ծառայությունների ոլորտում առաջացող հարաբերություններն են:<br>**3.** Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներ կլինեն առևտրի իրականացման վայրի կազմակերպչի և վաճառողի միջև հարաբերությունների հնարավորինս հստակեցումն ու տվյալ ոլորտում վաճառողների միջև հավասար մրցակցային պայմանների ապահովումը, շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կանոնակարգումը, տվյալ ոլորտում գործող ընթացակարգերի հստակեցումը և որոշակիության ապահովումը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությունը, բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմանների ապահովումը: |
| 228 | ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման նպատակը ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովումն է, մասնավորապես՝ պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայրի ձևավորումը, բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմանների ապահովումը, գործարարների շահերի ներկայացման և դրանց պաշտպանության համակարգի կատարելագործումը:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ կառավարությունը կարևորում է գործարար միջավայրի շարունական բարելավումը և տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ ելնելով այն հրամայականից, որ տնտեսական գործունեության որևէ ազատության կիրառում չպետք է հանգեցնի տնտեսական որևէ այլ գործունեությամբ զբաղվելու անհամաչափ սահմանափակման: Տնտեսական մրցակցության ապահովման կարևորագույն գործոններից մեկը տնտեսվարողների համար հավասար պայմանների և խաղի միևնույն կանոնների ապահովումն է:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է շարունակաբար իրականացնել աշխատանքներ ուղղված գործարար միջավայրի բարելավմանը, բիզնեսի համար առաջացող և առկա խոչընդոտների վերացմանը, գործարարների շահերի ներկայացման և դրանց արդյունավետ պաշտպանության արտադատական մեխանիզմի ներդրմանը, ՓՄՁ ոլորտի վիճակագրության և տեղեկատվության հավաքագրման կատարելագործմանը և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը, ՓՄՁ աջակցություն գործիքակազմի արդյունավետության համար պատասխանատու՝ միասնական թիմի ձևավորմանը, կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման խթանմանը և այլն: |

| | |
|---|---|
| | 2. Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան պետություն-գործարար, գործարար-գործարար հարաբերություններն են, ինչպես նաև գործարար և մրցակցային միջավայրի մշղադիտարկման և արձագանքման հարաբերությունները:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է Հայաստանի գործարար միջավայրի բարելավում, այդ թվում՝ գործարարների համար առաջացող և առկա խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությանն արագ արձագանքման ապահովում, բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմանների ապահովում, կորպորատիվ կառավարման կանոնակարգի կիրառման դաշտի ընդլայնում, կորպորատիվ հաշվետվականության միջազգայնորեն ընդունված ստանդարտների կիրառման և աշխատակիցների բաժնետիրացման ապահովում, համապատասխան տեղեկատվության առկայության և վերլուծության միջոցով՝ ՓՄՁ ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման առավել թիրախավորված գործընթաց և արդյունավետության բարձրացում, ՓՄՁ աջակցության միասնական հարթակի ստեղծում: |
| 229 | ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Արտահանման զարգացման և խթանման գործընթացներն ու ծրագրերը, պետության կողմից իրականացվող առևտրատնտեսական քաղաքականության հիմնական տարրերից են: Միջոցառման իրականացումը բխում է ներկայումս վարվող տնտեսական քաղաքականությունից ու նպատակ ունի զարգացնել և խորացնել ՀՀ գործընկեր-երկրների հետ երկկողմ առևտրատնտեսական և ներդրումային համագործակցությունը:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Վերջին տարիներին արտահանման ծավալների աճն ակնհայտ է: Հայաստանն արտահանման վրա հիմնված տնտեսական աճի մոդելով առաջնորդելու քաղաքականության համալիրում արդյունավետ խթանող գործիքակազմերը լրացնում են միջավայրային ու շուկաների հասանելիության ընդլայնման ուղղություններով տարվող աշխատանքները, ինչպես նաև տնտեսական քաղաքականության օրակարգում է արտահանման խթանման արդյունավետ ձևերի և ներգործուն մեխանիզմների ներդրումը՝ ուղղված արտահանման հետագա աճի բարձր տեմպի պահպանմանը:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Կձեռնարկվեն արտահանման խրախուսման հետևյալ քայլերը՝<br>– «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում,<br>– Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն ծրագրի մշակում և իրականացում,<br>– ԵՄ հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերի իրականացում,<br>– Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերի իրականացում<br>– ԵԱՏՄ շրջանակներում մի շարք երրորդ երկրների (Հնդկաստան, Իսրայել, Սինգապուր, Եգիպտոս, Սերբիա և այլն) հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման ուղղությամբ աշխատանքներ.<br>– Գործող արտոնությունների համակարգերի կիրառման շարունակականության ապահովում (GSP, GSP+ և այլ) հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակի ներդրման.<br>– Առևտրային ներկայացուցիչների ինստիտուտի կատարելագործում և ընդլայնում (ԻԻՀ, Վրաստան, ԱՄՆ, թիրախային այլ երկրներ)արտահանման ապահովագրության ծավալի կրկնակի աճի ապահովման միջոցառումների իրականացման ուղղություններով.<br>– Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական հասանելիության ապահովում.<br>– Հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակի ներդրման.<br>– Արտահանման ապահովագրության մեխանիզմի կատարելագործում և ծավալի աճի ապահովում.<br>2. Կարգավորման առարկան<br>Միջոցառման կարգավորման առարկան արտահանման ներուժի և շուկաների հասանելիության ընդլայնման |

| | |
|---|---|
| | առնչությամբ ծագող հարաբերություններն են:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման ուղղությամբ ծրագրված քայլերի արդյունքում արտահանման խրախուսման գործիքների ու արտահանող ընկերություններին աջակցող տեղեկատվական ենթակառուցվածքների գործարկման միջոցով նախատեսվում է բարձրացնել ՀՀ կառավարության՝ արտահանման խթանման ասպարեզում տարվող աշխատանքների ընդհանուր արդյունավետությունն ու հասցեականությունը: |
| 230 | ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականությունը ընդհանուր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է: Վերջինիս հիմնական նպատակն է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացումը:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Տարբեր ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խթանման տեսանկյունից վեր են հանվել որոշակի խնդիրներ, որոնք խոչընդոտում են ներդրումների ծավալների մեծացմանը: Մասնավորապես՝ ներդրումների վերաբերյալ իրավական դաշտի բացերը, ներդրումների համար առաջնահերթ ոլորտների ոչ հստակ նախանշումը, երկրի ներդրումային գրավչությունների ոչ ակտիվ ներկայացումը միջազգային հարթակներում և այլն:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Համարելով ներդրումային միջավայրի բարելավումը երկրի տնտեսական առաջընթացի գրավականներից մեկը՝ առկա խնդիրների լուծման ուղղությամբ հետևողականորեն իրականացվելու են միջոցառումներ՝ ուղղված բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորմանը և ներդրումային ակտիվության խրախուսմանը, մասնավորապես՝<br>– Թվով 2 թիրախային ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում<br>– Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառման ապահովում<br>– Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագրերի մոնիթորինգ և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ ներառյալ համաձայնագրի ներկա օրինակելի մոդելի վերանայում<br>– «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում<br>2. Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետությունում ներդրումներին առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերն են, ինչպես նաև միջազգային հարթակներում տնտեսության ներդրումային գրավչության ներկայացումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է հասնել թիրախային ոլորտներում ներդրումային ակտիվության ավելացման, ՀՀ ներդրումային հեղինակության, միջազգային վարկանիշի բարձրացման, ներդրումային միջավայրի բարելավման, ներդրումների խրախուսման և պաշտպանության առավել վստահելի համակարգի առկայության: |
| 231 | ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից են գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ձևավորումն ու զարգացումը և այդ նպատակով ինովացիոն գործունեության և ստեղծարար ու նորարարական բիզնեսների զարգացման խթանումը՝ որպես տեխնոլոգիական առաջընթացի և մրցակցային տնտեսության զարգացման հիմք:<br>Այս ուղղությամբ, նախատեսվում է աշխատանքներ իրականացնել ՀՀ ինովացիոն զարգացման ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման, ինչպես նաև ոլորտի էկոհամակարգի քարտեզագրման և կարողությունների գույքագրման ուղղությամբ: Բացի այդ, նախատեսվում է աշխատանքներ իրականացնել հետազոտություններ ու մշակումներ իրականացնող լաբորատորիաների/կենտրոնների |

| | |
|---|---|
| | ձևավորման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով վերազգային կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:<br>Միաժամանակ, նախատեսվում է տնտեսության տարբեր ոլորտներում ինովացիոն գաղափարների իրագործումը խթանելու նպատակով աշխատանքներ իրականացնել Հայաստանում ազգային բիզնես ինկուբատորի ստեղծման ուղղությամբ:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ ինովացիոն էկոհամակարգի (իրավական դաշտ, կազմակերպություններ, ոլորտի զարգացման ծրագրերի, նորարարական բիզնեսի, կրթության և հետազոտությունների) վերաբերյալ ամփոփ տեղեկատվության առկայության ապահովման նպատակով՝ ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգացմանը» ծրագրի շրջանակում Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության աջակցությամբ ներգրավվել են տեղական և միջազգային փորձագետներ, որոնց հետ համատեղ աշխատանքներ են իրականացվում ՀՀ ինովացիոն ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման, էկոհամակարգի քարտեզագրման և ոլորտի կարողությունների գույքագրման ուղղությամբ:<br>Միաժամանակ, կարևորվում է ոլորտի վերազգային կազմակերպությունների Հայաստան ներգրավումը և համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացումը՝ ուղղված ոլորտի ժամանակակից ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև ոլորտի կարողությունների զարգացմանը:<br>Նաև հաշվի առնելով տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանն ուղղված նորարար գաղափարներ ունեցող սկսնակ թիմերին և ընկերություններին մեկ պատուհանի սկզբունքով աջակցության տրամադրման կարևորությունը՝ աշխատանքներ կիրականացվեն ազգային բիզնես ինկուբատորի ստեղծման ուղղությամբ:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ շարունակել աշխատանքները ինովացիոն ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման, էկոհամակարգի քարտեզագրման, ոլորտի կարողությունների գույքագրման և վերազգային կազմակերպությունների հետ համատեղ ոլորտի զարգացման նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ:<br>2. Կարգավորման առարկան<br>Գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ձևավորման ու զարգացման քաղաքականության մշակման ընթացքում անհրաժեշտ համապարփակ տեղեկատվության առկայությունն ապահովելու նպատակով աշխատանքներ կիրականացվեն ՀՀ ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրման և ոլորտի կարողությունների գույքագրման ուղղությամբ:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրման արդյունքներն ամփոփող հաշվետվության և ոլորտի կարողությունների գույքագրման արդյունքներն ամփոփող տվյալների բազայի առկայություն, վերազգային կազմակերպությունների հետ համատեղ Հայաստանում ինովացիոն ոլորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացում: |
| 232 | ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Մտավոր սեփականության ոլորտում հարաբերությունների կարգավորման օրենսդրական կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է թե՛ ոլորտը կարգավորող ընթացակարգերի փորձաքննության ժամանակ ի հայտ եկած խնդրահարույց դրույթների շտկման, թե՛ միջազգային պրակտիկայում կիրառվող մոտեցումներին օրենսդրական կարգավորումների համապատասխանեցման, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Գործող «Գյուտերի, օգտակար մոդելների արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտել 2009թ հունվարի 1-ից, որի կիրարկման ընթացքում ի հայտ են եկել որոշ խնդիրներ, որոնց լուծմանն է ուղղված ներկայացվող նախագիծը: Մասնավորապես, գործող օրենքում բացակայում է երրորդ անձանց կողմից գործող արտոնագրի դեմ առարկությունների ներկայացման ընթացակարգը, բավականաչափ հստակ պարզաբանված չեն՝ գյուտերին լրացուցիչ իրավական պահպանություն տրամադրման պայմանները, «ծառայողական» գյուտերի հեղինակների իրավունքները պարտականությունները, ինչպես նա խնդիրներ են ի հայտ եկել գյուտերի փորձաքննության ընթացակարգերի հետ կապված:<br>Գործող օրենքով արդյունաբերական նմուշների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գյուտերի օգտակար մոդելների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքով, որը՝ հաշվի |

| | |
|---|---|
| | առնելով այս օբյեկտների առանձնահատկությունները օրենքի կիրառման համար որոշակի խնդիրներ է առաջացնում, բացի այդ միջազգային պրակտիկայում նշված օբյեկտների հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են առանձին օրենքներով:<br>Գործող «Հեղինակային իրավունքի հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ չեն համապատասխանում ներկայումս միջազգային պրակտիկայում կիրառվող որոշ մոտեցումներին և ենթակա են վերանայման: Գործող օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթական հաստատությունների գրադարանների կողմից ստեղծագործությունների վերարտադրմանը, չեն համապատասխանում ներկայիս պահանջներին: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն կա հստակ սահմանափակումներ նախատեսել այդ ստեղծագործությունների նկատմամբ: Նախագծում ընդգրկված հեղինակային իրավունքի սահմանափակումները նպատակաուղղված են հանրության շրջանում գիտելիքի, մշակութային արժեքների, ստեղծագործությունների էլ ավելի լայն հասանելիության ապահովմանը:<br>Գործող օրենքով լիարժեք կարգավորված չէ գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման համակարգը, որը կատարելագործման կարիք ունի: Հայաստանի Հանրապետությունը 2017 թվականինստորագրել է Եվրասիական տնտեսական միության «Հեղինակային հարակից իրավունքների՝ կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին» համաձայնագիրը: Համաձայնագիրը սահմանում է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների գործունեության հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության, վերահսկողության, արդարության սկզբունքների վերաբերյալ համապատասխան դրույթներ, ինչպես նա պատասխանատվություն պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:<br>Նախագծում նախատեսվում է մտավոր սեփականության ոլորտում պետական լիազոր մարմնի կողմից կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման գործընթացը հավատարմագիր ստանալու համար անհրաժեշտ պայմանները: Նախատեսված են դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմներ: Մասնավորապես՝ կազմակերպությանն անդամակցող իրավատերերին իրավունք է վերապահվել ստուգել տարեկան հաշվետվությունները, ծանոթանալ իրենց հասանելիք հոնորարների հաշվարկման-բաշխման փաստաթղթերին, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, հրավիրել անկախ աուդիտ: Կազմակերպության գործունեության վերահսկողության իրավունք է վերապահվել նա պետական լիազոր մարմնին:<br>Խնդիրներ կան նաև մալուխային վերահաղորդումների հետ կապված հեղինակային իրավունքին հարակից իրավունքներին առնչվող հարաբերությունների, ինչպես նա տեսալսողական կատարումների ամրագրումների արտադրության օգտագործման հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցերում:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված խնդիրների հասցեագրման նպատակով կմշակվի և ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի ««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նա-խագծին հավանություն տալու մասին», «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:<br>2. Կարգավորման առարկան<br>Միջոցառման նպատակը մտավոր սեփականության ոլորտի օրենսդրության կատարելագործումն է՝ բնագավառի ներկա միջազգային զարգացումներին համարժեք մոտեցումների սահմանման ու մեխանիզմների կիրառման իրավական հիմքեր ստեղծելու միջոցով, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Հայաստանի Հանրապետությունում կներդրվի գյուտերի, արդյունաբերական նմուշների և հեղինակային իրավունքի իրավական պահպանության առավել կատարելագործված համակարգեր: |
| 233 | ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես տնտեսական քաղաքականության առաջնահերթություն ամրագրված է Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամաբ ընդունված Կառավարության գործունեության ծրագրի 6.4.3 բաժնում: Առաջարկվող նախաձեռնությունների իրականացումը ուղղված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության, վիճակագրական տեղեկատվական համակարգի կատարելագործման ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

| | |
|---|---|
| | Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի յուրաքանչյուր տարի մշակվում և իրականացվում է զբոսաշրջության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են մարքեթինգային միջոցառումներ, միջոցառումներ ուղղված զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, մարդկային ռեսուրսների և ենթակառուցվածքների զարգացմանը, միջազգային համագործակցության ապահովմանը: Նշված միջոցառումների իրականացումն նպաստում է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և մրցունակության ապահովմանը:<br>Ոլորտի զարգացման նախաձեռնությունների իրականացումը լուծում է նաև վիճակագրական տվյալների հավաքագրման համակարգի ներդրման, նոր դիվերսիֆիկացված արդյունքների ձևավորման, մարքեթինգային ռազմավարական փաստաթղթի առկայության խնդիրները:<br>**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առկա խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է իրականացնել աշխատանքներ ուղղված՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագծի և առնչվող այլ օրենքնեի նախագծերի փաթեթի մշակմանը, միջազգային և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ վիճակագրական սատելիտային հաշիվ համակարգի ներդրման գործընթացի իրականացմանը, Հայաստանի մարքեթինգի և խթանման ռազմավար-ական հիմնական ուղերձների ուղեցույցի մշակմանը, ծրագրային միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ թիրախային շուկաների ընտրություն և նպատակաուղղված մարքեթինգային միջոցառումների իրականացում, հայկական զբոսաշրջային նոր արդյունքների մշակում, փաթեթավորում և համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում ու խթանում, միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված գործընթացի իրականացում:<br>2. Կարգավորման առարկան<br>Զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրային և մի շարք այլ միջոցառումների իրականացում, այդ թվում միջազգային նշանակալից միջոցառումների կազմակերպմանը մասնակցություն, ոլորտում հետազոտությունների անցկացում, ճշգրիտ վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթաց, նոր արդյունքների մշակում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ներգնա և ներքին զբոսաշրջային այցելությունների քանակի աճ, Հայաստանը, որպես զբոսաշրջության համար ապահով, գրավիչ և բարենպաստ երկիր նկարագրի կատարելագործում, հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովում, դիվերսիֆիկացում, համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում ու խթանում, ճանաչելիության և գրավչության բարձրացում, միջազգային համագործակցության ապահովում, զբոսաշրջության արդյունաբերության ողջ բնագավառն արտացոլող ամբողջական վիճակագրական տվյալների հավաքում և մշակում: |
| 234 | ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է պետական գույքի կառավարման բնագավառում արդյունավետության բարձրացմանն, պետական գույքի՝ նվազագույն վարչարարության ապահովմամբ օտարման ընթացակարգի պարզեցման, պետական գույքի հաշվառման համակարգի արդիականացման, ինչպես նաև 2017 թվականի մարտի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 954, 955, 966-րդ հոդվածներում կատարված փոփոխությունների և լրացումների պահանջներից:<br>**1.1.** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման 3-րդ կետով սահմանվել է, որ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի (բացառությամբ մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի) օտարման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա հնարավոր ազդեցության մասին կարծիք, իսկ պետական գույքի կառավարման կոմիտեն՝ գույքի օտարման ձևի և գների հիմնավորվածության մասին եզրակացություն: Օտարման ընթացակարգի պարզեցման համար անհրաժեշտ է սահմանել նաև պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման վերաբերյալ սկզբունքները:<br>Օտարման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ուսումնասիրելու է օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց նախապես հայտարարված վաճառքի մեկնարկային գնի ՀՀ-ում աճուրդային եղանակի կիրառման հնարավորությունը: Աճուրդի այս ձևի իմաստը կայանում է նրանում, որ հավանական գնորդները, գնային մրցակցության և շուկայական իրավիճակի |

պայմաններում իրենք են որոշելու ձեռք բերվող գույքի արժեքը:

ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշմամբ սահմանվում են 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքների մրցութային կարգով հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացի առանձնահատկությունները, որի նպատակն է ընդլայնել հավատարմագրային կառավարման պրակտիկան, պետական բաժնեմասով ընկերություններում ներդրումներ ներգրավել և բարելավել դրանց կառավարումը մասնագիտացված կազմակերպությունների (անձանց) աշխատանքի շնորհիվ: Որոշմամբ, մասնավորապես, պահանջվում է, որպեսզի մրցույթի մասնակցող կազմակերպությունները (հավանական հավատարմագրային կառավարիչները) ներկայացնեն իրենց հավատարմագրային կառավարման ծրագրերը, որոնք պետք է ներառեն ներդրումային բաղադրիչ, կազմակերպության զարգացման համար իրականացվելիք միջոցառումներ (ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշմամբ հաստատված կարգի կետ 19): Ընդ որում, և' ներդրումները, և' միջոցառումները պետք է ներկայացվեն տարիների կտրվածքով, կատարման հստակ ժամկետներով և ֆինանսավորման աղբյուրներով:

Պետական գույքի հաշվառման և անշարժ գույքի գրանցամատյանի վարման համակարգի արդիականացման նպատակով համապատասխան մասնագիտական կառույցների հետ քննարկվել են հաշվառման փաստաթղթային համակարգից էլեկտրոնային ինտեգրացված համակարգին անցում կատարելու հնարավորությունները: Ընդ որում Կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա մասնագիտական կառույցները հաշվարկել են ծրագրի ներդրման հետ կապված ծախսերը:

Պետական գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացման և գույքի վաճառքի խթանման նպատակով նախատեսվում է կիրառել նոր մոտեցում, մասնավորոպես՝ բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքի վաճառքը խթանելու նպատակով առաջարկվում է կիրառել պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափ, որի արդյունքում բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքը կդրվի տնտեսական շրջանառության մեջ:

Իրականացվելու է ՀՀ ՀՆԱ-ի մեջ, ոչ պետական հատվածի բաժնեմասի և պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում, ինչպես նաև մասնավորեցման շնորհիվ տնտեսության մեջ լրացուցիչ ներդրումների ծավալի ներգրավում և նոր աշխատատեղերի ստեղծում:

**1.2.** առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առկա խնդիրների լուծման համար առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում
- ուսումնասիրել օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց նախապես հայտարարաված վաճառքի մեկնարկային գնի ՀՀ-ում աճուրդային եղանակի կիրառման հնարավորությունը:
- բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքի վաճառքը խթանելու նպատակով առաջարկվում է կիրառել պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափ, որի արդյունքում բազմաթիվ անգամ վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված պետական գույքը կդրվի տնտեսական շրջանառության մեջ:
- Հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

2. Կարգավորման առարկան

Կարգավորման առարկան է պետական գույքի կառավարման ոլորտում առաջացող հարաբերությունները:

3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել պետական գույքի կառավարման բնագավառում արդյունավետություն, պետական գույքի՝ նվազագույն վարչարարության ապահովմամբ

օտարման ընթացակարգի պարզեցում, պետական գույքի հաշվառման համակարգի արդիականացում:

Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

235

*«Միասնական երթուղային ցանցի ձևավորում» միջոցառման*

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581–Ա որոշման հավելվածի 6.5-րդ կետի կատարման ապահովում: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր համայնքներն են ապահովված տրանսպորտային սպասարկմամբ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է հանրապետությունում ձևավորել միասնական երթուղային ցանց, որի շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի նիստի N 31 արձանագրության 32-րդ կետով ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հանրապետության բնակավայրերի (ազգաբնակչության թիվը (բացառությամբ Երևան քաղաքի) կազմում է 1 706 775 մարդ) տրանսպորտային սպասարկումն իրականացվում է 153 միջմարզային և 263 ներմարզայի նկանոնավոր երթուղիների միջոցով, որոնք սպասարկում են 682 բնակավայր: Գործող երթուղային ցանցում ներգրավված են 1096 (913 շահագործվող+183 պահուստային) տրանսպորտային միջոցներ:

Մինչև 2017 թվականը հանրապետության 220 բնակավայրեր տրանսպորտային սպասարկմամբ ապահովված չէին: 2017 թվականին 50 բնակավայր ներառվել են միջմարզային երթուղային ցանցում:

Ընդհանուր առմամբ մոտ 170 համայնք ապահովված չէ կանոնավոր ուղևորափոխադրմամբ, իսկ մոտ 100 համայնքի տրանսպորտային կանոնավոր սպասարկումը խոցելի է (վտանգ կա, որ սպասարկող կազմակերպությունները կարող է հրաժարվեն երթուղիների ոչ շահութաբերության պատճառով):

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ բնակչությանը մատուցվող տրանսպորտային սպասարկման առայությունններն առավել հասանելի դարձնելու և սպասարկման որակն ու անվտանգությունը բարձրացնելու նպատակով: Միասնական երթուղային ցանցի ձևավորմա նիիմնական նախապայման կհանդիսանա հանրապետության բոլոր բնակավայրերը մարզկենտրոններին կամ մարզի խոշոր քաղաքների հետ առնվազն մեկ երթուղով կապելը:

Միասնական երթուղային ցանցի ձևավորման համար անհրաժեշտ է հավաքագրել հիմնական ելակետային տվյալները:

Որպես հիմնական ելակետային տվյալ հանդիսանում է ուղևորահոսքը: Ուղևորահոսքի վերաբերյալ հստակ տվյալներ առկա են միայն գործող երթուղիների մասով, սակայն անհրաժեշտ է ունենալ նաև չսպասարկվող համայնքներից ուղևորահոսքը:Այդ նպատակով 2017 թվականի հուլիսի 20-ինիստի N 31 արձանագրության 32-րդ կետով ՀՀ կառավարության կողմից ընդունված Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի շրջանակներում մարզպետարաններց ստացել ենք հանրապետության բոլոր բնակավայրերի ուղևորահոսքը ըստ ժամերի և ուղղությունների:

Միասնական երթուղային ցանցում ուղևորների փոխադրավարձի հաշվարկման հիմքում կդրվի ներկայումս գործող միջմարզային և ներմարզային երթուղիների փոխադրավարձի միջինացված տվյալները (1 կիլոմետր ուղևոր փոխադրավարձը՝ 11.8 դրամ):

Միասնական երթուղային ցանցի արդյունավետ կառավարման նպատակով ցանցի ձևավորման ժամանակ կներդրվի միասնական էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն և միասնական տոմսային համակարգ, իսկ տրանսպորտային միջոցները կկահավորվեն տեղորոշման համակարգով:

Միասնական երթուղային ցանցում փոխադրողի ընտրությունը կկազմակերպվի ըստ տարածաշրջանների, մրցութային պայման կսահմանվի ինչպես բարձր այնպես էլ ցածր ուղևորահոսք ունեցող բնակավայրերի սպասարկումը մեկ փաթեթում:

2. Կարգավորման առարկան

Հայաստանի Հանրապետությունում կներդրվի միասնական երթուղային ցանց, որի արդյունքում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտանգությունը:

| | |
|---|---|
| | 3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ներդրման նպատակով անհրաժեշտ է սահմանել երթուղային ցանցի ձևավորման քայլերի հաջորդականությունը, դրանց կատարման ժամկետները: Նախատեսվում է ներմարզային երթուղային ցանցը կապել միջմարզային երթուղային ցանցի հետ, որի դեպքում ներմարզային երթուղիների մրցույթները կանցկացվեն մեկ փաթեթով միջմարզային երթուղիների մրցույթների հետ մեկտեղ: Կընտրվի այնպիսի փոխադրող, որը կսպասարկի մարզի (մարզերի) միջմարզային և ներմարզային երթուղիները համատեղ: Միջոցառման իրականացման արդյունքում կկրճատվի ուղևորության համար ծախսվող ժամանակահատվածը, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները կհամապատասխանեցվեն փաստացի ուղևորահոսքի ծավալներին, կբարձրանա ուղևորափոխադրումների արդյունավետությունը, կներդրվի միասնական տոմսավորման համակարգ և ինտերակտիվ քարտեզ, կձևավորվի էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն: Հայաստանի Հանրապետությունում կներդրվի միասնական երթուղային ցանց, որի արդյունքում հանրապետության բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ, կբարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտանգությունը: |
| 236 | *«ՀՀ ողջ տարածքում շուրջօրյա ռադիոհսկման իրականացում, անխափան հեռարձակման ապահովում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«ՀՀ ողջ տարածքում շուրջօրյա ռադիոհսկման իրականացում, անխափան հեռարձակման ապահովում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է ապահովել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջները:<br>ՀՀ տարածքում ներդնելով բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա ռադիոհսկում, որի արդյունքում կհայտնաբերվեն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կբացառվեն չթույլատրված հեռարձակումները՝ զերծ պահելով եթերը վնասակար խանգարումներից:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ տարածքում ներկայումս շուրջօրյա ռադիոմոնիթորինգ իրականացվում է միայն Երևան քաղաքում, որի համար տեխնիկական բազա է հանդիսանում 2002 թվականին կանադական Aerosystems International ֆիրմայի կողմից տեղակայված ռադիոմոնիթորինգի համակարգը՝ իր ծրագրային ապահովմամբ, որը կազմված է 3 բազային և 1 շարժական կայաններից, Գյումրի և Վանաձոր քաղաքներում 8 ժամյա աշխատանքային ռեժիմով մինիմալ տեխնիկական հնարավորություններով:<br>Ներկա վիճակում առկա սարքավորումներով հնարավոր չէ ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիարժեք ապահովել և զերծ պահել եթերային հեռուստառադիոծրագրերի հեռարձակման, շարժական բջջային կապի ծառայությունների մատուցման ընթացքում վնասակար և չարտոնված խանգարումներից՝ չթույլատրված ռադիոհաճախականու-թյունների հեռարձակումներից:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նոր տեխնոլոգիաներով և համապատասխան սարքավորումներով վերազինել ռադիոմոնիթորինգի բազային և շարժական կայանների միասնական համակարգը, որը հնարավորություն կընձեռնի ՀՀ ողջ տարածքով իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կապահովի ռադիոեթերը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներց:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ ունենալով ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգ՝ հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականացնել շուրջօրյա եթերի մշտադիտարկում և ժամանակին արձագանքել ռադիոեթերում ի հայտ եկած ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող վնասակար ռադիոհեռարձակումներին:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրի ընդունման արդյունքում կունենանք ժամանակակից տեխնիկական լուծումներով կառուցված ցանց, որը հնարավորություն կտա ՀՀ ողջ տարածքում իրականցնել շուրջօրյա մոնիթորինգ՝ ժամանակին հայտնաբերելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բացառելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին |

| | |
|---|---|
| | չհամապատասխանող ռադիոհետարձակումները, որն էլ կապահովի պետության անվտանգության համակարգերի, տնտեսվարող սուբյեկտների ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքը: |
| 237 | *«Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունների սահմանում» միջոցառման*<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունների սահմանում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է սահմանել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունները:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ դրական միտումների հետ մեկտեղ, առաջ են գալիս նոր մարտահրավերներ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և առաջընթացի ապահովման ուղղությամբ:<br>Նման խնդիրների վերհանման և լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք միտված են ոլորտի առաջմղմանը, զարգացմանը, ՀՀ բրենդի համաշխարհային ճանաչմանը, կադրերի պատրաստմանը և այլ խնդիրների լուծմանը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ոլորտի ռազմավարությունը:<br>2. Կարգավորման առարկան<br>Արդյունքում կմշակվեն տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ոլորտի զարգացման ռազմավարություն:<br>3. «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրների, դրանց լուծման մեխանիզմների, հեռանկարային զարգացման ուղղությունների սահմանում» միջոցառման նպատակն է մշակել ռազմավարություն, որով կսահմանվի տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների ոլորտի խնդիրները, դրանց լուծման մեխանիզմները, հեռանկարային զարգացման ուղղությունները և իրականացվող քայլերը, ինչպես նաև պատասխանատու գերատեսչությունները և կատարման ժամկետները: |
| 238 | *Ստարտափերի էկոհամակարգի ստեղծում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Ստարտափերի էկոհամակարգի ստեղծում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է ստեղծել նոր գաղափարների գեներացման, գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման աշխատանքային համապատասխան միջավայր և պայմաններ:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաշխարհային տնտեսության զարգացման զուգահեռ առաջանում են նոր պահանջներ: Պահանջների բավարարման հիմնական միջոցներից են բարձ տեխնոլոգիանական և նորարարական լուծումների կիրառումը: Նշված լուծումները մշակվում են գործող և ստարտափ կազմակերպությունների կողմից:<br>Նորարարական նոր գաղափարների գեներացման, գաղափարների և գիատհետազոտական արդյունքների առևտրայնացման գործընթացը շարունակական գործընթաց է և այն այժմ ամբողջական չէ:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված գործընթացի ամբողջական ապահովման համար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել գործընթաց ստարտափերի ձևավորման նպաստելու և աջակցելու ուղղությամբ:<br>2. Կարգավորման առարկան<br>Արդյունքում կիրականացվեն միջոցառումներ որոնք կստեղծեն համապատասխան միջավայր |

| | |
|---|---|
| | գաղափարները գեներացնելու և արդյունքների առևտրայնացման համար:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Նոր գաղափարների գեներացում, գաղափարների և գիահետազոտական արդյունքների առևտրայնացում աշխատանքային համապատասխան միջավայրի ստեղծում (տեխնոլոգիական և այլ կենտրոններ, ինկուբատորներ, հայկական բրենդի առաջմղում, որի արդյունքում կավելանա և կզարգանա ստարթափ ընկերությունները: |
| 239 | *«Վերազգային ընկերությունների ներգրավում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Վերազգային ընկերությունների ներգրավում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է իրականացնել գործընթացներ նոր վերազգային կազմակերպությունների Հայաստան ներգրավելու համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ-ում գործում են մի շարք հեղինակավոր վերազգային ընկերություններ, որոնց հետ շարունակվել են աշխատանքները, մասնավորապես «Մայքրոսոֆթ», «ԱյԲիԷմ», «Նեյշնլ Ինսթրումենթս» և այլ վերազգային կազմակերպությունների հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակում, ինչպես նաև ձեռնարկվել են միջոցառումներ այս և նմանատիպ այլ նոր ընկերությունների հետ համագործակցություն հաստատելու և ընդլայնելու ուղղությամբ:<br>Վերազգային ընկերությունների ներգրավում պայմանավորված է նրանց կողմից նոր տեխնոլոգիաների, մշակույթի և կրթական մոտեցումների ներմուծմամբ:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված գործընթացի ամբողջական ապահովման համար անհրաժեշտություն է առաջացել շարունակել քննարկումները վերազգային կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Արդյունքում կիրականացվեն միջոցառումներ, որի արդյունքում ՀՀ կներգրավվի նոր վերազգային կազմակերպություններ:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>«Վերազգային ընկերությունների ներգրավում» միջոցառման նպատակն է ՏՏ ոլորտի զարգացմամբ հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով Հայաստանում նշված երկրների փորձի շարունակական ներդրում, ներդրումների ներգրավում, ՏՏ ոլորտի՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացումը և Հայաստանի, որպես տարածաշրջանային ՏՏ հանգույցի իմիջի ձևավորումը, որը իր հերթին ոլորտում կներմուծի նորագույն տեխնոլոգիական գիտահետազոտական արտադրան, կրթություն և միջազգային փորձ: |
| 240 | *«Վենչուրային կապիտալի ներգրավում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Վենչուրային կապիտալի ներգրավում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է իրականացնել միջոցառումներ սկսնակ ընկերությունների կամ ստարտափների կողմից գաղափարների, գիտական արդյունքների կամ ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական աջակցության ներգրավման ուղղությամբ:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաշխարհային տնտեսության զարգացման զուգահեռ առաջանում են նոր պահանջներ: Պահանջների բավարարման հիմնակ միջոցներից են բարձ տեխնոլոգիանական և նորարարական լուծումների կիրառումը: Նշված լուծումները մշակվում են գործող և ստարտափ կազմակերպությունների կողմից:<br>Նորարարական նոր գաղափարների գեներացման, գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել ֆինանսական միջոցներ:<br>Միջազգային փորձին համապատասխան նման ներդրումները ներգրավվում են վենչուրային կապիտալի տեսքով:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները |

| | |
|---|---|
| | Վերը նշված գործընթացիների իրականացման արդյունքում կիրականացվեն միջոցառումներ ստարտափ գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման համար վենչուրային կապիտալի ուղղությամբ:<br>2. Կարգավորման առարկան<br>Կիրականացվեն միջոցառումներ, որի արդյունքում ստարտափ գաղափարները և գիտահետազոտական արդյունքներում կներդրվեն ֆինասական միջոցներ ծրագրերը կյանքի կոչելու համար:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>«Վենչուրային կապիտալի ներգրավում» միջոցառման նպատակն է ստարտափ գաղափարների, գիտական արդյունքների կամ ծրագրերի իրականացման համար ֆինասական ներդրումների ներգրավումը : |
| 241 | *«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում» միջոցառման*<br><br>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է մշակել միջոցառումների ծրագիր ՀՀ-ում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացմանն աջակցման, ինչպես նաև 2019 թվականին ՀՀ-ում կայանալիք Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողովի աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպման և անցկացման համար::<br>«Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով-2019» միջոցառումը Երևանում կազմակերպում և պատշաճ անցկացում» միջոցառման նպատակն է 2019 թվականին պատշաճ կերպով կազմակերպել և անցկացնել ՀՀ-ում կայանալիք Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողովի աշխատանքները:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է ՏՏ ոլորտի խթանման համար տրամադրել 78020.0 հազ. դրամ գումար, որը հատկացվելու է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում ծառայությունների տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար:<br>Միջոցառման շրջականներում նախատեսվում է մշակել Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում ծառայությունների տարեկան ծրագիրը:<br>Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողովը համաշխարհային հարթակում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ամենամեծ և ամենահեղինակավոր միջոցառումն է, որը կազմակերպվում է 1978թ.-ից՝ իր շուրջը համախմբելով գրեթե 100 երկրներից մոտ 2000 ՏՀՏ կազմակերպությունների ղեկավարների և մասնագետների, բարձրաստիճան պետական պաշտոնյաների, կրթական ոլորտի ներկայացուցիչների և այլ պատվավոր հյուրերի:<br>2019 թվականի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համաշխարհային Համաժողովը ՀՀ-ում անցկացնելու նպատակով 2015 թվականի մարտի 9-ին Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ալյանսի (WITSA-World information Technologies and Services Aliance), Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության և «Յու Այ Թի Ի Էքսպո» ընկերության միջև ստորագրվել է 2019 թվականին Հայաստանում Համաժողովի անցկացման մասին համաձայնագիր:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջոցառման իրականացման նպատակն է աջակցել Հայաստանում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացմանը: Այդ նպատակով ծրագրի շրջանակում առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1) Հայաստանի ՏՏ ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում<br>2) Միջազգային համագործակցություն<br>3) Միջազգային և տեղական ֆորումների, ցուցահանդեսների և կոնֆերանսների կազմակերպում:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ-ում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացմանն աջակցումը՝ ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման միջոցով:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը |

| | |
|---|---|
| | «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանում» միջոցառման նպատակն է մշակել տարեկան ծրագիր ՀՀ պետական բյուջեով յուրաքանչյուր տարի նախատեսելով 78020.0 հազ. դրամ գումար՝ ըստ միջոցառումներ հատկացման և նպատակային ծախսի ապահովման նպատակով:<br>«Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողով-2019» միջոցառումը Երևանում կազմակերպում և պատշաճ անցկացում» միջոցառման նպատակն է պատշաճ կազմակերպել միջոցառումը, որը կապահովի ոլորտում նոր ներդրումների հնարավորություն, աշխարհում Հայաստանի ՏՏ բրենդի առաջխաղացում՝ որպես մեծ պոտենցիալով ՏՏ երկիր, Հայաստանը՝ որպես տարածաշրջանային տնտեսական խաչմերուկ և բիզնես հարթակ, արդյունավետ նոր բիզնես կապերի հաստատում և Հայաստանի բիզնես միջավայրի ակտիվացում , ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեջ դրամային ներհոսք: |
| 242 | *Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում, պետության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացում*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է մշակել և ներդնել այլ էլեկտրոնային կառավարման գործիքներ և ծառայություններ:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ-ում որպես էլեկտրոնային ծառայությունների մատուցման գլխավոր հարթակ հանդիսանում է e-gov.am էլեկտրոնային հարթակը, սակայն տնտեսության թվայնացման զուգահեռ առաջանում է նոր էլեկտրոնային կառավարման գործիքներ և ծառայություններ ներդրման խնդիրը:<br>Նշված գործընթացի համար անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան ուսումնասիրություններ և ընդլայներ մատուցվող էլեկտրոնային ծառայությունները:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջոցառման իրականացման նպատակն է պետական կառավարման էլեկտրոնային համակարգերի գույքագրում, պետական կառավարման համակարգերի միջև փոխգործելիության աստիճանի վերհանում, պետական կառավարման համակարգերի միջև փոխգործելության և «Մեկ կանգառ՝ մեկ պատուհան» հարթակների ձևավորում և ներդնում, ինչպես նաև թվային ծառայությունների մատուցման միասնական հարթակի ձևավորում:<br>2. Կարգավորման առարկան<br>Վերը նշված գործընթացիների իրականացման արդյունքում կուսումնասիրվի միջազգային փորձը և կընդլայնվի մատուցվող էլեկտրոնային ծառայությունները:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Պետական ծառայությունների գործընթացի օպտիմալացում, առավել թափանցիկ-հաշվետվողական և ավելի վստահելի հանրային կառավարման ձևավորում, ինչպես նաև այլ էլ. ծառայությունների մատուցման ընդլայնում: |
| 243 | *««Ինժեներական քաղաքի» ստեղծում« միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>ՀՀ կառավարության «Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգը և այեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և դրա նպատակն է Հայաստանը դարձնել ինժեներական և բարձր տեխնոլոգիական արտադրանքի և ծառայությունների՝ գլոբալ շուկաներ արտահանող երկիր, ինչպես նաև տարածաշրջանային հանգույց ինովացիոն ինժեներական և բարձր տեխնոլոգիական լուծումների համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանում առկա է զգալի չիրացված ներուժ, որի արդյունավետ իրացումման համար անհրաժեշտ է ստեղծել արդիական տեխնոլոգիական ենթակառուցվածքներ:<br>Միևնույն ժամանակ, հիմնական խնդիրներ են հանդիսանում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում հետազոտությունների և մշակումների (R&D) իրականացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, ոլորտի նորարարական գաղափարների գեներացման և գիտահետազոտական աարդյունքների առևտրայնացման համար արդյունավետ մեխանիզմների ձևավորումը, սկսնակ ընկերությունների ձևավորմանն աջակցությունը, |

| | |
|---|---|
| | ոլորտի մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը:<br>ՀՀ-ում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի հետագա զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է պետություն-մասնավոր համագործակցության ձևաչափով ստեղծել Ինժեներական քաղաք:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջոցառման իրականացման արդյունքում կսահմանվի կսահմանվեն «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի հիմնական բաղադրիչները, նպատակներն ու խնդիրները, ծրագրի իրագործման ուղղությունները, իրականացվելիք գործողությունները, պատասխանատուները, ֆինանսավորման աղբյուրները և ակնկալվող արդյունքները:<br>2. Կարգավորման առարկան<br>Որոշման նախագծով կամրագրվի հայեցակարգային մոտեցումներ «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Որոշման նախագծով սահմանվող ծրագիր իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել ինովացիոն էկոհամակարգ, որտեղ Ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններն արդիական ենթակառուցվածքների կիրառմամբ կմշակեն և կիրագործեն նորարարական գաղափարներ՝ տեղական ու միջազգային շուկաներում բարդ տեխնոլոգիական լուծումների առաջադրման նպատակով: |
| 244 | *«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովում» միջոցառման մշակման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.1-րդ կետը և նպատակն է մշակել միջոցառումների տարեկան ծրագիր Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է յուրաքանչյուր տարի ՏՏ ոլորտի խթանման համար տրամադրել 149 595.4 հազ. դրամ գումար, որը հատկացվելու է Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովմանը:<br>Միջոցառման շրջականներում նախատեսվում է մշակել Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման տարեկան ծրագիրը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջոցառման իրականացման նպատակն է մշակել Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովման ծրագիր, որի նպատակն է պետական աջակցություն ցուցաբերել հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը, որոնք կնպաստեն Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժամանակակից գիտելիքահենք ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը:<br>1) Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում- միջոցառման շրջանակում նախատեսվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովումը: Ներգրավված մասնագետները կմասնակցեն կենտրոնի կողմից իրականացվող բոլոր ծրագրերին, մասնավորապես՝ նորաստեղծ կազմակերպությունների հիմնադրման աշխատանքներին, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակմանը, գործարար կապերի հաստատմանը, կազմակերպություններին խորհրդատվական ծառայությունների տրամադրմանը և այլն: Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակում ակնկալվում է մասնագիտական դասընթացների կազմակերպում, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:<br>Այս միջոցառումը նախատեսում է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի աշխատակիցների վարձատրության և գրասենյակի պահպանման համար համապատասխան ծախսեր:<br>2) Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում- միջոցառման շրջանակում նախատեսվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովումը: Ներգրավված մասնագետները կմասնակցեն կենտրոնի կողմից իրականացվող բոլոր ծրագրերին, մասնավորապես՝ նորաստեղծ կազմակերպությունների հիմնադրման աշխատանքներին, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակմանը, գործարար կապերի հաստատմանը, կազմակերպություններին խորհրդատվական ծառայությունների տրամադրմանը և այլն: Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակում ակնկալվում է մասնագիտական դասընթացների կազմակերպում, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:<br>2. Կարգավորման առարկան |

| | |
|---|---|
| | ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ժամանակակից գիտելիքահենք ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովումը՝ Ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման միջոցով:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ապահովում» միջոցառման նպատակն է մշակել տարեկան ծրագիր ՀՀ պետական բյուջեով նախատեսված 149 595.4 հազ. դրամ գումարների՝ ըստ ծրագիր, հատկացման և նպատակային ծախսի ապահովման համար:<br>Ծրագրի իրագործման ակնկալվող արդյունքներն են՝<br>• մասնագիտական դասընթացների կազմակերպում.<br>• բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում.<br>• նոր, բարձր հավելյալ արժեք ձևավորող սկսնակ ընկերությունների և աշխատատեղերի ստեղծմանն աջակցություն.<br>• ՏՏ և ԲՏ ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում.<br>• հետազոտական ծրագրերի իրականացում.<br>• նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծում ու զարգացում.<br>• ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի տնտեսության առաջանցիկ տեմպերով աճ.<br>• Հայաստանի կայուն տնտեսական զարգացմանը, տարածքային համաչափ զարգացման և աղքատության հաղթահարմանը նպաստում: |
| 245 | *«Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում իրականացվող կառուցապատման թույլատվությունների տրամադրման պահանջների հաստակեցում» միջոցառման*<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>**1.1** «Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում իրականացվող կառուցապատման թույլատվությունների տրամադրման պահանջների հաստակեցման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրապետական նշանակությա նավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացումն է:<br>**1.2** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում առկա են առանց համապատասխան համաձայնեցման կառուցված հասարակական օգտագործման օբյեկտները, որոնք խանգարում են դրանցով անվտանգ երթևեկության ապահովումը:<br>**1.3** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Անվտանգ երթևեկության ապահովում, խանգարող օբյեկտների բացառում, միջպետական և հանրա-պետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման խստացում:<br>2. Կարգավորման առարկան<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատման կանոնակարգում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Անվտանգ երթևեկության ապահովում: |
| 246 | *«Ճանապարհների որակի բարձրացում» միջոցառման*<br>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ճանապարհների որակի բարձրացման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է մշտապես ապահովել ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:<br>Հաշվի առնելով ավտոմոբիլային ճանապարհների պահպանման կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, նախարարությունը հատուկ ուշադրություն է դարձնում նաև ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանմանը:<br>1.1կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

| | |
|---|---|
| | ➢ Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման արդյունքների վրա հիմնված երկարաժամկետ պայմանագրերի համակարգը: Նշված համակարգը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել ՀՀ պետական բյուջեից ավտոմոբիլային ճանապարհների պահպանմանը հատկացվող գումարները: Համաշխարհային Բանկի մասնագետների կողմից իրականացված հետազոտումները ցույց են տալիս, որ ավտոմոբիլային ճանապարհների պահպանությունը կարևորագույն գործոններից է ճանապարհային ցանցում կապիտալ ներդրումները ժամանակին իրականացնելու և ճանապարհների ծառայության ժամկետը երկարացնելու համար:<br>➢ Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհները նախագծվել են 30-40 տարի առաջ և կառուցվել են 6.5տոննա առանցքային բեռնվածքի հաշվարկով: Ներկայումս փաստացի առանցքային բեռնվածքի նորմատիվային ցուցանիշը դարձել է 13.5 տոննա, հետևաբար կտրուկ մեծացել է նաև ճանապարհների ծածկի մաշվածությունը: Միաժամանակ 6 տարի նորմատիվով սահմանված ժամկետում նորոգումներ չկատարելու պատճառով (ճանապարհների 90%-ը 12 տարի և ավելի չի նորոգվել) ծածկի մաշվածությունը գերազանցում է թույլատրելի բոլոր նորմերը և ծածկը ինտենսիվ քայքայվում է, ինչի հետևանքով կտրուկ մեծանում է փոսերի և ցանցաձև ճաքերի մակերեսը: Ընթացիկ պահպանման ծախսերի 40-70%-ը կազմում են հենց փոսերի և ցանցաձև ճաքերի վերցման ուղղված ծախսերը, հետևաբար ճանապարհների պահպանության համար հատկացվող գումարների մեծացման չափը կախված է ոչ միայն ճանապարների երկարությունից, այլև անմիջական կապի մեջ է գտնվում նախորդող ժամանակահատվածում կատարված նորոգումների, երթևեկության ինտենսիվության և առանցքային բեռնվածության հետ:<br><br>1.2առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հատկացվող ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել առաջնային վերանորոգման կարիք ունեցող ճանապարհահատվածները, իսկ լավ վիճակում գտնվող ճանապարհներում ապահովել դրանց պահպանման և շահագործման աշխատանքները:<br>2.Կարգավորման առարկան<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանում և բարելավում:<br>3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ավտոմոբիլային ճանապարհների բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում: |
| 247 | *«Կամուրջների և թունելների կառավարման համակարգի ներդրում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է կամուրջների երկարակեցության և սպասարկման որակի բարձրացումը:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս գործող կամուրջների և թունելների կառավարման համակարգը բավարար չէ ամբողջությամբ ապահովելու դրանց անվտանգ շահագործումը:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Կամուրջների և թունելների կառավարման նոր համակարգի ներդրման արդյունքում ձեռք կբերվեն անհրաժեշտ քանակի սարքավորումներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ամբողջությամբ ապահովելու դրանց շահագործումը:<br>2. Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան հանդիսանում է երթևեկության մասնակիցների անվտանգությունը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ տարածքում կամուրջների երկարակեցության ապահովում և սպասարկման որակի բարձրացում: |
| 248 | *«Ճանապարհային ոլորտի կառավարման բարելավում» միջոցառման* |

| | |
|---|---|
| | 1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Ճանապարհային ոլորտի կառավարման բարելավում» միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է Ճանապարհների տարրերի գույքագրման աշխատանքների իրականացումը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Վերջին տարիներին ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և օտարման շերտերում տեղակայված են մի շարք ճանապարհային տարրեր, որոնց ոչ բոլորի մասով առկա է ճանապարհային մարմնի համաձայնությունը:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նշված խնդիրների ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում գտնվող տարրերի գույքագրում:<br>2.Կարգավորման առարկան<br>Ճանապարհների տարրերի գույքագրում:<br><br>3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ճանապարհային ոլորտի կառավարման բարելավում: |
| 249 | *«Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է ստեղծել ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) բարելավված ստանդարտներ, ճանապարհային նշանների տարաբաշխումների հաստատված նախագծեր:<br>**1.1** կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային նշանների տարաբաշխումների բացակայություն:<br>**1.2** առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է ավտոմոբիլային ճանապարհների այն մասերում որտեղ անհրաժեշտ են սակայն բացակայում են ճանապարհային նշանները ձեռք բերել և համալրել դրանք:<br>2. Կարգավորման առարկան<br>Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Երթևեկության մասնակիցների անվտանգության մակարդակի բարելավում: |
| 250 | *«Ճանապարհների պետական գրանցում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ճանապարհների պետական գրանցման միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է միջպետական և հանրապետական ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:<br>1.1 Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.<br>Ներկայումս ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները հաշվառված են ՀՀ անունով, սակայն բացակայում է դրանց սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միջպետական և հանրապետական ճանապարհների սեփականության իրավունքի գրանցման համար անրաժետ միջոցառումների իրականացում՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ համատեղ: |

| | |
|---|---|
| | 2. Կարգավորման առարկան<br>Ճանապարհային ոլորտի կառավարման բարելավում:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջպետական և հանրապետական ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում: |
| 251 | *«Քաղաքաշինական գործունեության վարչարարության դյուրինացում» միջոցառման*<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>«Քաղաքաշինական գործունեության վարչարարության դյուրինացում» միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է գծային ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների քաղաքաշինական գործունեության միասնական կարգավորում, ինչը թույլ կտա դյուրինացնել քաղաքաշինական գործունեության վարչարարությունը:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս մեկից ավել համայնքների տարածքներ ընդգրկող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման համար անհրաժեշտ է ստանալ այդ համայնքների թույլտվությունները, ինչը ժամանակատար է և արդյունավետ չէ: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 18.1 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն ՀՀ կառավարությանը իրավասություն է վերապահվել սահմանելու հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը:<br><br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է մեկից ավել համայնքների տարածքներ ընդգրկող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման համար շինարարության համար թույլտվությունները տրամադրվի մեկ մարմնի կողմից:<br><br>3.Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Գծային ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների քաղաքաշինական գործունեության միասնական կարգավորում, ինչը թույլ կտա դյուրինացնել քաղաքաշինական գործունեության վարչարարությունը: |
| 252 | *«Բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների կանոնակարգում» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների կանոնակարգում» միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակը բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացի սահմանումն է, ինչն կապահովի տվյալ ճանապարհների երկարակեցությունը:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրման |

| | |
|---|---|
| | անհրաժեշտություն<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Շահագրգիռ մարմինների, մասնագիտացված կազմակերպությունների հետ համատեղ բետոնե պատվածքով ճանապարհային ծածկով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացը, ինչն կապահովի տվյալ ճանապարհների երկարակեցությունը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նշված փոփոխությունների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա ավելացնել Հայաստանի Հանրապետության ճանապարհների երկարակեցությունը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ճանապարհների երկարակեցության ապահովում: |
| 253 | *«Երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում» միջոցառման*<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա նպատակն է կենսական նշանակության երկաթուղային ենթակառուցվածքների սահմանման և դրանց արդյունավետ ու անվտանգ շահագործման ապահովման անհրաժեշտությամբ:<br>Երկաթուղային շարժակազմի նորացում և արդիականացում, ուղղված երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը պայմանավորված է երկաթուղային շարժակազմի հրատապ նորացման և արդիականացման անհրաժեշտությամբ, ուղղված երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայում չի ապահովում կենսական նշանակության ունեցող երկաթուղային ենթակառուցվածքների արդյունավետ ու անվտանգ շահագործման ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունը:<br>Ներկայումս Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից շահագործվող շարժակազմը հնացած է և չի համապատասխանում ներկայացվող տեխնիկական պահանջներին: Շահագործվող շարժակազմը թույլ չի տալիս ապահովվել մատուցվող ծառայությունների անհրաժեշտ որակի մակարդակը և երթևեկության անվտանգությունը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Արդյունավետ պետական քաղաքականության իրականացման նպատակով երկաթուղու ենթակառուցվածքների զարգացման ռազմավարության մշակում:<br>Մերձքաղաքային հաղորդակցությունում նոր շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում<br>2. Կարգավորման առարկան<br>Կենսական նշանակություն ունեցող երկաթուղային ենթակառուցվածքների արդյունավետ ու անվտանգ շահագործման ապահովման պետական քաղաքականության իրականացում:<br>Երկաթուղային շարժակազմի նորացում և արդիականացում, ուղղված երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ապահովվել երկաթուղային ենթակառուցվածքների միասնական քաղաքականության իրականացում և կենսական նշանակության ենթակառուցվածքների արդյունավետ ու անվտանգ շահագործում:<br>Երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում: |
| 254 | «Երկաթուղու սակագնային բարելավում» միջոցառման<br>1. Միջոցառման իրակացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է երկաթուղային սակագնային քաղաքականության կատարելագործման համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Յուրաքանչյուր տարի ԱՊՀ երկրների աշխատակազմերի փորձագետների կողմից մշակվում է և երկաթուղային Սակագնային Համաձայնագրի մասնակցող աշխատակազմերի Սակագնային Համաժողովի ԱՊՀ մասնակից |

| | |
|---|---|
| | երկրների երկաթուղային աշխատակազմերի կողմից հաստատվում է հաջորդ տարվա Սակագնային Քաղականությունը: ԵՏՄ անդամ երկրների համար ԵՏՄ տարածքում գործում է միասնականացված երկաթուղային սակագներ:<br>Գործող Սակագնային Քաղաքականությունը թույլ չի տալիս երկաթուղային փոխադրումներին մրցակից լինել տրանսպորտային այլ տեսակների փոխադրումների հետ:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի աշխատակազմերի սակագնային քաղաքականության փորձագետների հետ բանակցությունների վարում, նոր մոտեցումների ձևավորում, համաձայնությունների ձեռք բերում:<br>2. Կարգավորմանառարկան<br>Երկաթուղու Սակագնային Քաղաքականության բարելավմանը ուղղված աշխատանքներ:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Երկաթուղային սակագների կատարելագործում: |
| 255 | <u>**«Փոստային ոլորտի շուկայական արդյունավետության և կենսունակության բարձրացում»**</u><br><u>*միջոցառման*</u><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>**«Փոստային ոլորտի շուկայական արդյունավետության և կենսունակության բարձրացում»** միջոցառման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետը և դրա անհրաժեշտությունը պայմանավորված է Ստամբուլի համաշխարհային փոստային ռազմավարությամբ, ինչպես նաև փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս փոստային կապի բնագավառը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Փոստային կապի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով: Փոստային կապի ոլորտի ընդհանուր զարգացումը հիմնովին կախված է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտից, որի բարեփոխումների նպատակով ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը:<br>Փոստային կապի ոլորտի առկա խնդիրը ոլորտի կարգավորման առավել ընդգրկուն օրենսդրական դաշտի ստեղծման անհրաժեշտությունն է:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ներկայումս հիմք ընդունելով ոլորտի զարգացման միջազգային միտումները, ինչպես նաև Ստամբուլի Համաշխարհային փոստային ռազմավարութոնը փոստային կապի բնագավառում լիազորված մարմնի կողմից իրականացվում է քաղաքականության համապատասխանեցման գործընթացը:<br>2.Կարգավորման առարկան<br>Որոշման նախագծի նպատակը փոստային կապի բնագավառում արդի տեխնիկական միջոցների և տեխնոլոգիաների ներդրման ուղղվածությունն է, որի վերջնական նպատակը փոստային կապի բնագավառի զարգացումը միջազգային միտումներին համապատասխան ապահովելն է:<br><br>3.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվեն փոստային կապի ոլորտի զարգացմանն ուղղված այնպիսի հայեցակարգային դրույթներ, որոնք հիմք կհանդիսանան ներկայումս գործող օրենսդրության հետագա բարելավման և փոստային ծառայությունների շուկայի ներդրումային դաշտի գրավչության բարձրացման համար: |
| 256 | <u>Երևանի մետրոպոլիտենի արդիականացման հնարավորությունների վերլուծություն</u><br><br>1 Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Երևանի մետրոպոլիտենի արդիականացման հնարավորությունների վերլուծություն միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5 կետից և դրա նպատակն է |

| | |
|---|---|
| | Մետրոպոլիտենի արդիականացման և հետագա ճյուղավորման հնավարությունների ուսումնասիրությունը և բացահայտումը:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան, գծի երկարությունը 12.1 կմ է, առկա է 45 վագոն: Վերջին մի քանի տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում նկատվում է կայունացման և աճի միտում, ինչը հիմնականում պայմանավորված է մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների զգալի աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, նոր կայարանների կառուցման և շահագործման, ինչպես նաև, մասնակիորեն, Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի ավարտից հետո:<br>2 Կարգավորման առարկան<br>Մետրոպոլիտենի արդիականացման և հետագա ճյուղավորման հնավարությունների ուսումնասիրությունն է:<br>3 Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Երևանի մետրոպոլիտենի արդիականացման և հետագա ճյուղավորման հնարավորությունների բացահայտումն է: |
| 257 | *«Գյումրու «Շիրակ» օդանավակայանի և ենթակառուցվածքների բարեկարգմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>Գյումրի քաղաքի <<Շիրակ>> օդանավակայանի բարելավման աշխատանքների հիմնական նպատակը <<Զվարթնոց>> օդանավակայանի համար այլընտրանքային օդանավակայան ստեղծելն է, ինչպես նաև “Low cost” փոխադրողներին խրախուսելը:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br><<Շիրակ>> օդանավակայանի աէրոդրոմի տարրերի, մասնավորապես կառամատույցի, ինչպես նաև ուղևորային համալիրի ներկայիս շահագործողական վիճակը պահանջում է ենթակառուցվածքների բարեկարգում, զարգացում և վերազինում նոր միջազգային օդանավակայաններին ներկայացվող չափանիշերին համապատասխան:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br><<Շիրակ>> օդանավակայանի աէրոդրոմի ենթակառուցվածքների բարեկարգման, զարգացման և վերազինման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝ հաշվառման սրահի վերանորոգում, նստեցման հատվածի և ժամանման սրահի ընդլայնում, կառամատույցի վերանորոգում և այլ նմանատիպ աշխատանքներ:<br><br>2. Կարգավորման առարկան<br><br>Գյումրի քաղաքի <<Շիրակ>> օդանավակայանի բարելավման աշխատանքները կիրականացվեն «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության կողմից՝ 5-ամյա Մաստեր պլանի շրջանակներում:<br><br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Գյումրի քաղաքի <<Շիրակ>> օդանավակայանի բարելավման աշխատանքների արդյունքում կբարձրանա ուղևորների սպասարկման մակարդակը և կապահովվեն միջազգային օդանավակայաններին ներկայացվող պահանջները: |
| 258 | *«Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն» միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.3 կետից և դրա իրականացումը |

| | |
|---|---|
| | պայմանավորված է դեպի ՀՀ և ՀՀ-ից չվերթների աշխարհագրության ընդլայնման և մատչելի ավիափոխադրումների ապահովման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br><br>Ներկայումս ՀՀ շուկայում գործում է կանոնավոր փոխադրումներ իրականացնող 32 ավիաընկերություն (այդ թվում՝ հայկական Ավիակոմպանիա Արմենիա), որոնցից 9 ավընկերությունը ռուսական են: Նշված ավիաընկերությունների կողմից սպասարկվում է 37 երթուղի, որոնցից 11-ը՝ դեպի ՌԴ: Հաշվի առնելով, որ ՀՀ շուկայում գերակշռում են ուսական ավիաընկերություններն ու ուղղությունները, անհրաժեշտ է ապահովել ավիաընկերությունների և ՀՀ-ից սպասարկվող ուղղությունների դիվերսիֆիկացում և երթուղիների աշխարհագրության ընդլայնում:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br><br>Ավիաընկերությունների թվի ավելացման, շուկայում մրցակցության ավելացման և մատչելի ավիափոխադրումների ապահովման համար կարևոր նշանակություն ունի ավիաընկերությունների հետ բանակցային պրոցեսի արդյունավետության բարձրացումը: Այս նպատակով, նախատեսվում է ներդնել տվյալների փոխանակման նոր համակարգ օդանավակայանի կառավարչի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի միջև անհրաժեշտ կոնտակների և տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև բանակցային պրոցեսի նկատմամբ անհրաժեշտ հսկողության ապահովման համար:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Տվյալների փոխանակման նոր համակարգի ներդրման արդյունքում կընդլայնվի համագործակցությունը օդանավակայանի կառավարչի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի միջև, ինչպես նաև կապահովվի օդանավակայանի և պոտենցիալ ավիաընկերությունների միջև վարվող բանակցային գործընթացի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և կստեղծվի նոր հարթակ օդանավակայանին անհրաժեշտ աջակցության տրամադրման համար՝ կոնտակների և տեղեկատվության փոխանակման միջոցով:<br><br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br><br>Շուկայում ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցությունը կնպաստի դեպի ՀՀ և ՀՀ-ից չվերթների աշխարհագրության ընդլայնմանը, անհրաժեշտ մրցակցային դաշտի ստեղծմանը և մատչելի ավիափոխադրումների խթանմանը: |
| 259 | <u>*«ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամ-պետությունների միջև ընդհանուր Ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման գործընթացի կազմակերպում» միջոցառման*</u><br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>ԵՄ անդամ-պետությունների հետ ավիացիոն շուկայի ազատականացումը պայմանավորված է 2013թ.-ի վերջին ՀՀ ավիացիոն շուկայի ազատականացման քաղաքականության իրականացմամբ, ինչպես նաև դեպի ՀՀ և ՀՀ-ից օդային փոխադրումների աշխարհագրության ընդլայնման և ավիափոխադրումների ծավալների ավելացման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի հանրապետությունը հարաբերությունները հարաբերականորեն ազատականացրել է ԵՄ միայն 6 անդամ-պետության հետ (Ավստրիա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Նիդերլանդներ, Հունաստան, Շվեյցարիա): ԵՄ անդամ-պետությունների հետ իրավապայմանագրային մակարդակում շուկայի հասանելիության առկա սահմանափակումները խոչընդոտում են ՀՀ շուկա նոր ավիաընկերությունների ներգրավմանը:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հաշվի առնելով, որ բոլոր ԵՄ անդամ-պետությունների հետ շուկայի ազատականացումն ավելի արդյունավետ կանդրադառնա ՀՀ շուկա նոր ավիաընկերությունների ներգրավման վրա, ինչպես նաև այն, որ մեկ միասնական |

| | |
|---|---|
| | հարթակում ԵՄ անդամների հետ հարաբերությունների կարգավորումը կունենա գլոբալ դրական ազդեցություն՝ առկա խնդրի լուծման համար ընտրվել է Եվրոպական հանձնաժողովի հետ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի բանակցման գործիքը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>ԵՄ անդամ-պետությունների հետ շուկայի ազատականացումը կիրականացվի մեկ միասնական հարթակում բոլոր ԵՄ անդամ-պետությունների հետ գործող իրավապայմանագրային դաշտի վերանայմամբ: Նոր համաձայնագրի կնքման արդյունքում կվերացվեն ավիափոխադրողների առևտրային գործունեությունը սահմանափակող դրույթները գործող երկկող համաձայնագրերում:<br><br>3.Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>ԵՄ հետ շուկայի ազատականացումը կնպաստի ՀՀ շուկա նոր ավիափոխադրողների մուտքի ապահովմանը, ոլորտում մրցակցության մակարդակի բարձրացմանը և Հայաստանն աշխարհին կապող երթուղիների ցանցի ընդլայնմանը: Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման արդյունքում Հայաստանում ամբողջապես կներդրվեն ԵՄ չափանիշները՝ ավիափոխադրողների համար ապահովելով կանխատեսելի բիզնես միջավայր: |
| 260 | *«ՀՀ օդային տարածքում 24-ժամյա Հայեցակարգի ներդրում՝ 290 թռիչքային մակարդակից (FL290) հնարավորինս ցածր բարձրությունների վրա» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ միջազգային աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպության նախաձեռնությամբ մշակվել է «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ): Համաձայն Հայեցակարգի՝ օդային մայրուղիներից ազատ օդային տարածք է հանդիսանում այն օդային տարածքը, որտեղ թռիչքները կարող են իրականացվել առանց պետության օդային տարածքում սահմանված օդային մայրուղիներով՝ ունենալով թռիչքի երթուղու ազատ ընտրության հնարավորություն օդային տարածքի մուտքի և ելքի կետերի միջև: Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 24-ժամյա «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (free route airspace) 290 թռիչքային մակարդակից (FL290) հնարավորինս ցածր բարձրությունների վրա հայեցակարգի ներդրման անհրաժեշտությունը բխում է օդային տարածքի նկատմամբ սահմանված ներկայիս միջազգային պահանջներից:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության օդային տարածքում ներդրված է «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» հայեցակարգը, որոշակի սահմանափակումներով (գիշերային ժամերին և 290 թռիչքային մակարդակից բարձր): Նշված սահմանափակումները խոչընդոտում են օդանավ շահագործողներին ՀՀ օդային տարածքի լիարժեք օգտագործմանը:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Օդանավ շահագործողի կողմից ուղիղ հետագծերով թռիչքներ իրականացնելու համար, առաջարկվում է ներդնել «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» հայեցակարգը առանց սահմանափակումների:<br>2.Կարգավորման առարկան<br>Հայեցակարգը կներդրվի համապատասխան ռիսկերի գնահատման և այլ անհրաժեշտ աշխատանքների կատարման արդյունքում, որի վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի Հայաստանի Հանրապետության Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածույում:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Ելնելով Հայեցակարգից ակնկալվում է, որ թռիչքները կիրականացվեն ուղիղ հետագծերով, բացառությամբ թռիչքների համար վտանգավոր կամ փակ տարածաշրջանների, ինչի արդյունքում կբարձրանա օդային տարածքի թողունակությունը, կնվազի օդի աղտոտումը, ինչպես կնվազեն օդային երթևեկության սպասարկման և օդանավ շահագործողների ծախսերը, օդային տարածքի օգտագործման պայմանները կհամապատասխանեցվեն միջազգային ստանդարտներին: |

| | |
|---|---|
| | ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼԻ նախնական հաշվարկներով ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼԻ անդամ բոլոր պետությունների օդային տարածքներում Հայեցակարգի ներդրման դեպքում թռիչքների երկարությունը կկրճատվի 7,5 միլիոն մղոնով, որն իր հերթին կբերի 45 հազ. տոննա վառելիքի և 150 հազ. տոննա թունավոր արտանետումների նվազման, կամ 37 միլիոն եվրո խնայողության: |
| 261 | *««Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ստանդարտներին համապատասխան «E» դասի շնորհում» միջոցառման*<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>««Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ստանդարտներին համապատասխան «E» դասի շնորհում» միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետից: Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) չափանիշների համաձայն աերոդրոմները բաժանվում են դասերի (A, B, C, D, E, F), որոնցով պայմանավորվում է համապատասխան տիպերի օդանավերի շահագործումը աերոդրոմում:<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմի քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանդարտների համապատասխան «E» դասի շնորհումը պայմանավորված է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմում ավելի խոշոր օդանավերի շահագործման անհրաժեշտությամբ:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմը համապատասխանում է «D» դասին, որտեղ խոշոր («E» դասի օդանավեր են համարվում A330, B747-100/200/300/400/SR/SP, B777-200/200ER/300/300ER, B787, MD11) օդանավերի շահագործումը իրականացվում է որոշակի սահմանափակումներով:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմի տարրերի վերանորոգման և բարելավման աշխատանքների արդյունքում աերոդրոմը կհամապատասխանեցվի «E» դասին:<br>2. Կարգավորման առարկան<br><br>Աերոդրոմների տեխնիկական հնարավորությունները գնահատվում են լիազոր մարմնի կողմից և տվյալ աերոդրոմին շնորհվում է համապատասխան դաս, ինչը թույլ է տալիս սպասարկել տվյալ դասի օդանավեր:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Զվարթնոց» միջազգային օդանավակայանի աերոդրոմին «E» դաս շնորհման արդյունքում աերոդրոմում առանց սահմանափակումների կշահագործվեն ավելի բարձր դասի օդանավեր, ինչի շնորհիվ կբարձրանա օդանավակայանի թողունակությունը ինչպես ուղևորափոխադրումների, այնպես էլ բեռնափոխադրումների մասով: |
| 262 | «*Կոմիտեի աշխատակիցների՝ ԻԿԱՕ և ԵԿԱԿ ստանդարտների համապատասխան շարունակական վերապատրաստում ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից սերտիֆիկացված կազմակերպություններում, ինչպես նաև համապատասխան փորձագետների հրավիրում Հայաստանի Հանրապետություն» միջոցառման*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>«Կոմիտեի աշխատակիցների՝ ԻԿԱՕ և ԵԿԱԿ ստանդարտների համապատասխան շարունակական վերապատրաստում ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից սերտիֆիկացված կազմակերպություններում, ինչպես նաև համապատասխան փորձագետների հրավիրում Հայաստանի Հանրապետություն» միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետից: Կոմիտեի աշխատակիցների՝ ԻԿԱՕ և ԵԿԱԿ ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացման անհրաժեշտությունը պայմանավորված է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների սահմանված Հավելվածներով և կանոնակարգերով:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է քաղաքացիական ավիացիայի ոլորտի մի շարք միջազգային կազմակերպություններին, մասնավորապես Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը 1993 թվականից, ինչպես նաև Եվրամիության ավիացիոն անվտանգության կոնֆերանս կազմակերպությանը 1996 թվականից և Եվրակոնտրոլ կազմակերպությանը 2006 թվականից: Վերը նշված կազմակերպությունների չափանիշներին համապատասխանության նպատակով պահանջվող դրույթները |

| | |
|---|---|
| | ամրագրվել են նաև ՀՀ օրենսդրությամբ: Նշված կազմակերպությունների կողմից պարբերաբար անց են կացվում ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, ինչպես այդ կազմակերպությունների միջոցների հաշվին, այնպես էլ Կոմիտեի միջոցների հաշվին: Սակայն նման վերապատրաստումները բավարար չեն, հաշվի առնելով մասնագիտական բազմազանությունը, ինչպես նաև ֆինանսական միջոցների սահմանափակ լինելը:<br>Ներկայումս ազգային մասնագետների միջազգային ստանդարտների համապատասխան սերտեֆիկացումը անհրաժեշտ է ավիացիոն մասնագետների ՀՀ օդանավակայաններում և այլ ավիացիոն կազմակերպություններում իրականացվող վերահսկողությունների գործընթացն ապահովելու նպատակով:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերոնշյալ միջազգային կազմակերպությունների կողմից Կոմիտեյում անցկացված աուդիտների ընթացքում առաջարկվել է Կոմիտեի ավիացիոն մասնագետների սերտիֆիկացումը և շարունակական վերապատրաստումը իրականացնել համապատասխան միջազգային կազմակերպությունների ստանդարտներն:<br>2. Կարգավորման առարկան<br>Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների կողմից ավիացիոն մասնագետների նկատմամբ սահմանված պահանջների ապահովումը:<br>3. Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացումը, հնարավորություն կտա Կոմիտեի մասնագետներին ունենալ համապատասխան սերտիֆիկատներ, ինչպես նաև կնպաստի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և կատարվող աշխատանքների որակի բարձրացմանը: |
| 263 | *Օդային ծառայությունները ԵԿԱԿ-ի Դոկ.30 փաստաթղթով սահմանված անվտանգության ստանդարտներին համապատասխանեցում*<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Օդային ծառայությունները ԵԿԱԿ-ի Դոկ.30 փաստաթղթով սահմանված անվտանգության ստանդարտներին համապատասխանեցման միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետից և դրա ընդունումը պայմանավորված է Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթի 13-րդ խմբագրության 9-րդ հրատարակությամբ /2016 թ. փետրվար/ սահմանված նոր ավիացիոն անվտանգության ընթացակարգերին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>2016 թ. ընթացքում ԵԿԱԿ կողմից 13-րդ խմբագրության 9-րդ հրատարակությամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել Եվրամիության կողմից «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթում, սահմանվել են ավիացիոն անվտանգության ընթացակարգերի նոր ստանդարտներ:<br>Վերը նշված լրացումների և փոփոխությունների կիրառման ուշացումը կարող է ազդել ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման վրա և այսօր ավիացիոն անվտանգության առումով վերը նշված փոփոխությունների և լրացումների կիրառումը անհրաժեշտ է:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակն է ապահովել ՀՀ օդանավակայաններում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումների համապատասխանությունը ԻԿԱՕ և ԵԿԱԿ ստանդարտներին, որի ապահովման նպատակով ԻԿԱՕ և ԵԿԱԿ կողմից նոր ընդունված ստանդարտները ներդրվում են ՀՀ քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքները կանոնակարգող նորմատիվ իրավական փաստաթղթերում և գործնական կիրառում ստանում ՀՀ օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ընթացակարգերում: Այդ նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N944-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Վերը նշված փոփոխությունների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում նոր ավիացիոն անվտանգության ընթացակարգերը կանոնակարգել և |

| | |
|---|---|
| | համապատասխանեցնել «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի N 17՝ «Անվտանգության» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ.30 փաստաթղթով սահմանված նոր ստանդարտներին:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Որոշման նախագծի ընդունման դեպքում կհստակեցվեն ավիացիոն անվտանգության ընթացակարգերն և հնարավորություն կընձեռնվի ավելի բարձր մակարդակի հասցնել օդանավակայանում ավիացիոն անվտանգության հսկողության գործառույթների իրականացումը: |
| 264 | *<u>Ուղևորների սպասարկման ընթացակարգերի արդիականացում</u>*<br><br>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ուղևորների սպասարկման ընթացակարգերի արդիականացման միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.5. կետից և դրա նպատակն է հստակեցնել քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության սկզբունքները և կապահովի դրանց համապատասխանությունը «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի «Ընթացակարգերի պարզեցում» N 9-րդ հավելվածով սահմանված չափորոշիչներին:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>«Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 249 որոշումն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի մարտի 16-ին, այն համապատասխանել է ԻԿԱՕ-ի կողմից սահմանված չափանիշներին, սակայն 9-րդ՝ «Ընթացակարգերի պարզեցում» հավելվածում 2016 թվականին 14-րդ խմբագրությամբ սահմանվել են նոր չափորոշիչներ՝ կապված օդանավերի թռիչքների թույլտվությունների ձևակերպման, օդանավերի ժամանման և մեկնման, օդանավակայաններում օդանավերի և ուղևորների սպասարկման համար անհրաժեշտ ծառայությունների և տեխնիկական միջոցների առկայության, ուղևորների և բեռների սահմանային, մաքսային, առողջապահական, սանիտարակարանտինային հսկողությունների, օդանավերի անձնակազմերի վկայականների, ուղևորային փաստաթղթերի ձևակերպումների, մուտքի իրավունք չունեցող անձանց հետ վարվելու կարգի, փոխադրվող ուղևորների ուղևորային մանիֆեստների և փոխադրման ընդունված բեռների բեռնային մանիֆեստների ձևաթղթերի, օդանավի անձնակազմի անդամների գլխավոր հայտարարագրերի ձևաթղթերի, օդանավում հիվանդ ուղևորների առկայության մասին ձևաթղթերի լրացման և ժամանման օդանավակայանում ներկայացման կարգի, օդանավերի դեզինֆեկցիայի և դեզինսեկցիայի միջոցառումներին ներկայացվող պահանջների հետ:<br>Նշված փոփոխությունների և լրացումների կիրառմամբ ՀՀ օդանավակայաններում իրականացվող ուղևորների սպասարկման ընթացակարգերը կհամապատասխանեցվեն ԻԿԱՕ-ի կողմից սահմանված նոր չափորոշիչներին:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախագծով նախատեսվում է փոփոխություններ կատարել Հայաստանի_Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 16-ի N 249 որոշման մեջ, ինչը հնարավորություն կտա համապատասխանեցնելու Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից նոր ընդունված չափորոշիչներին և ավելի բարձրացնել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում կիրառվող ուղևորների սպասարկման աշխատանքների անհրաժեշտ մակարդակը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նշված փոփոխությոների և լրացումների ընդունումը հնարավորություն կտա կանոնակարգելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ուղևորների սպասարկման աշխատանքները բոլոր փուլերում, համապատասխանեցնելով դրանք ԻԿԱՕ-ի չափորոշիչներին:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Որոշման նախագծի ընդունմամբ հստակ կամրագրվեն ուղևորների սպասարկման բոլոր փուլերի ընթացքում կիրառվող ընթացակարգերը և դրանց գործնական իրականացման միջոցով կդյուրացվեն օդային փոխադրումների ընթացքում ուղևորների սպասարկումներին առնչվող գործընթացները, դրանք համապատասխանեցնելով ԻԿԱՕ անդամ երկրներում գործող ներկայիս ընթացակարգերին: |

| | |
|---|---|
| 265 | <u>Օդային տրանսպորտի գների անկման ուղղված ջանքերի գործադրում, այդ թվում ավիավառելիքի շուկայի ազատականացմանն ուղղված հակամենաշնորհային միջոցառումներ</u><br><br>1 Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Օդային տրանսպորտի գների անկմանն ուղղված շահագրգիռ կազմակերպությունների հետ բանակցությունների վարման միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշման 6.4.3 կետից և դրա նպատակն է Օդային տրանսպորտի գների անկմանն ուղղված ջանքերի գործադրում, այդ թվում ավիավառելիքի շուկայի ազատականացմանն ուղղված հակամենաշնորհների բացառումն է:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս օդային փոխադրումներում կիրառվող գները էականորեն քիչ են տարբերվում տարածաշրջանում գործող գներից: Սակայն ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերանայել օդային փոխադրումներում գործող գները:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է բանակցություններ իրականացնել բոլոր օդային փոխադրումներում ներգրավված ընկերությունների հետ՝ առաջարկվող գների վերանայման ուղղությամբ:<br>2 Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան է հանդիսանում պայմանավորվածությունների ձեռքբերումը և գների վերանայումը:<br>3 Միջոցառման իրակացումից ակնկալվող արդյունքը<br>Օդային փոխադրումներում առկա գների նվազումը: |
| | Ֆինանսների նախարարություն |
| 266 | «Պետական ֆինասների կառավարման համակարգի արդիականացում»<br>ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Նշված միջոցառման իրականացումը պայմանավորված է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցված քաղաքական իրավիճակի փոփոխությունների արդյունքները ՀՀ պետական կառավարման բոլոր մակարդակներում արտացոլելու և հանրային ֆինանսների կառավարման համակարգը վերանայելու անհրաժեշտությամբ: Միջոցառման նպատակն է քաղաքական նոր իրողությունների համարժեք փոփոխությունների արտացոլումը ՀՀ կառավարության 18.02.2016թ. N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների ռազմավարության և վերջինիս գործողությունների) մեջ:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հանրային կառավարման համակարգը վերափոխելու հանգամանքով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ իրականացնել նաև պետական ֆինանսների կառավարման համակարգում՝ ապահովելով փողի դիմաց արժեք, ինչպես նաև երաշխավորելով, որ պետական միջոցները օգտագործվում են օգտավետ, արդյունավետ ու խնայողաբար: Վերը նշված փոփոխությունները իրականացումը հնարավոր կլինի կատարել գործող ֆինանսական կառավարման համակարգերի ներկա իրավիճակի համապարփակ գնահատական ունենալու պայմաններում:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է նշված խնդիրները լուծել ՊՖԿՀ ռազմավարությունը և վերջինիս գործողությունների ծրագրի համապարփակ գնահատելու և ստեղծված իրավիճակին համարժեք նոր՝ վերանայված ռազմավարության մշակմամբ և դրանով սահմանված միջոցառումների իրականացմամբ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախագիծը կապահովի պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության և ֆինանսաբյուջետային կարգապահության բարձրացում: |

| | |
|---|---|
| | 3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման արդյունքում ակնկալվում է ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգում ապահովվել փողի դիմաց արժեք սկզբունքի գերակայությունը, ինչպես նաև հանրային միջոցների օգտավետ, արդյունավետ և խնայողաբար օգտագործումը: |
| 267 | «Հայաստանի Հանրապետությանը հասցեագրված՝ միջազգային կազմակերպությունների և գործընկեր երկրների կողմից տրամադրվող ոչ ֆինանսական օժանդակությունների հաշվառման և պետական բյուջեում արտացոլման մեխանիզմների ներդրում»<br>ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ներկայումս ՀՀ կառավարությանը տարաբնույթ համագործակցության ծրագրերի շրջանակներում օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից տրամադրվում է տարբեր ձևաչափերի ոչ ֆինանսական բնույթի աջակցություն (տեխնիկական օժանդակություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստումների կազմակերպում և այլն), որը, ըստ էության, որևէ պետական մարմնի կողմից ամբողջությամբ չի հաշվառվում և որևէ ձևով իր արտացոլումը չի գտնում ՀՀ պետական բյուջեում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման 4.2 բաժնի 2-րդ պարբերությունը՝ միջոցառման նպատակ է սահմանվում օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ-ին տրամադրված ոչ ֆինանսական օժանդակության հաշվառման և պետական բյուջեում արտացոլման համար համապատասխան բանակցությունների նախաձեռնումը և անհրաժեշտ իրավական մեխանիզմների մշակումը:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Պետական ֆինանսների կառավարման համակարգի շարունակական բարեփոխումների իրականացման գործընթացում ՀՀ կառավարությունը համագործակցելում է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների և գործընկեր պետությունների հետ: Այդ համագործակցությունը հաճախ դրսևորվում է ֆինանսական բնույթ չկրող զգալի աջակցության տրամադրմամբ՝ առանձին բարեփոխումների ծրագրերի աջակցության համար միջազգային և տեղական փորձագետների ներգրավման համար տեխնիկական առաջադրանքների մշակում, փորձագետների ներգրավում, փորձի փոխանակման համար գործընկեր երկրներ այցերի կազմակերպման ֆինանսավորում և այլն: Այս աջակցությունը որևէ կերպ չի համակարգվում և չի հաշվառվում՝ արդյունքում չարտացոլվելով ՀՀ պետական բյուջեում:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված խնդրի լուծում է հանդիսանում ՀՀ կառավարությանը օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից տրամադրված ոչ ֆինանսական աջակցության համակարգման, հաշվառման իրականացման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեում դրանց արտացոլման համար մեխանիզմների մշակումը:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Միջոցառումը կապահովի ոչ ֆինանսական օժանդակության միասնական հաշվառման և ՀՀ պետական բյուջեում արտացոլման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>3.1. Տրամադրվող ոչ ֆինանսական օժանդակությունների համապարփակ հաշվառման իրականացում՝ ապահովելով յուրաքանչյուր ոլորտին ուղղվող բյուջետային և այլ ռեսուրսների իրական պատկերի ստացում:<br>3.2. Տրամադրվող ոչ ֆինանսական օժանդակությունների հաշվառում և 2020 թվականի պետական բյուջեում արտացոլում:<br>Նշված միջոցառման համար 2018թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 268 | «Պետական ֆինանսների կառավարման, ներառյալ գնումների գործընթացներում պետությանը պատճառված վնասի հիմքով իրավական հետևանքների և դրանք պետական բյուջե հետ |

| | |
|---|---|
| | վերադարձնելու մեխանիզների կատարելագործում»<br>ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>Նշված միջոցառման իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման 4.2 մասի 3-րդ պարբերությամբ սահմանված պետական ֆինանսների կառավարման, ներառյալ գնման գործընթացների շրջանակում պետության պատճառված վնասների իրավական հետևանքների և պատճառված վնասները պետական բյուջե վերականգնելու մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությամբ:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br><br>Առկա կարգավորումներով սահմանված է գնման գործընթացի շրջանակում պետությանը պատճառված վնասների փոխհատուցման ներքոհիշյալ մեխանիզմները՝<br>1. եթե վնասը պատճառվել է երրորդ անձին, ապա այն փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ վնասը հետադարձ պահանջով վերականգնելով այն պատճառած պաշտոնատար անձից.<br>2. եթե պաշտոնատար անձն իր գործողություններով կամ անգործությամբ ուղղակիորեն պետությանն է հասցրել վնաս, ապա դրա վերականգնումն իրականացվում է այն պատճառած անձի կողմից:<br>Գործնականում վնասների վերականգնումն իրականացվում է պետական մարմինների կողմից դատարան հայցեր հարուցելու միջոցով, ինչը չի ապահովում բավարար չափով արդյունավետություն՝ ժամանակատար և ծախսատար գործընթաց է:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է ներդնել պետական ֆինանսների կառավարման, մասնավորապես, գնումների ընթացակարգերի շրջանակում որոշումներ կայացնող պաշտոնատար անձանց (գլխավոր քարտուղար, գնումների համակարգող, գնահատող հանձնաժողովի անդամներ, պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներ և այլն) կողմից՝ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում կայացվող որոշումների համար նյութական պատասխանատվություն կրելու ինստիտուտ՝ վերջիններիս հետ համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Օրենսդրական փոփոխությունների արդյունքում կապահովվի որոշումների կայացման շրջանակում նյութական պատասխանատվություն կրելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացումը կհանգեցնի պետական ֆինանսների կառավարման, ներառյալ գնման գործընթացի շրջանակում պաշտոնատար անձանց գործողությունների-անգործության հետևանքով պատճառված վնասի չեզոքացման իրավական մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ նյութական պատասխանատվության պայմանագրերի կնքում: |
| 269 | «ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացվող ՀՀ պետական բյուջեների նախագծերում պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվներով կանխատեսվող եկամուտների և ծախսերի ցուցանիշների ներառում»<br>ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Նշված միջոցառման իրականացումը պայմանավորված է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում արտաբյուջետային հաշիվների միասնական ներկայացման և դրանց գծով հաշվետվությունների միջև առկա խզումների չեզոքացման անհրաժեշտությամբ (հիմքը՝ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման 4.2 մասի 2-րդ պարբերություն):<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված ՀՀ պետական |

| | |
|---|---|
| | բյուջեների նախագծերը կազմվել և սահմանված կարգով քննարկումների արդյունքում ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվել են առանց պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվներով կանխատեսվող եկամուտների և ծախսերի ցուցանիշների: Մինչդեռ, դա չի նշանակում, որ այդ ցուցանիշները ներառված չեն համապատասխան տարիների պետական բյուջեներում: Մասնավորապես գործող օրենքով արտաբյուջետային հաշիվները բացվում են օրենքների կամ օրենքով նախատեսված դեպքերում կառավարության որոշումների հիման վրա, իսկ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների համար կանխատեսվող ցուցանիշները կառավարության որոշմամբ արտացոլվում են օրենքով հաստատված պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներում և սահմանված կարգով ներառվում պետական բյուջեի կատարման հաշվետվություններում:<br>Սակայն ՀՀ սահմանադրական վերջին բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության սահմանադրության 110-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ ՀՀ պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը:<br>Թե՛ նախկինում կատարված ՀՀ պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողա-կանության գնահատման (Public Expenditures and Financial Accountability (PEFA), թե՛ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կատարված Հայաստանի ֆիսկալ թափանցիկությունն ուսումնասիրման հաշվետվության համաձայն՝ ՀՀ «միասնական բյուջետավորումը» գնահատվել է նվազագույն մակարդակին համապատասխանող՝ պայմանավորված արտաբյուջետային հաշիվների գործոններով:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է նշված խնդիրների իրավական լուծումը տալ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման մեջ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային ծրագրերի ներառում կատարման եղանակով:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախագիծը կապահովի պետական բյուջեի ծրագրավորման և հաշվետվողականության միասնականության իրավական հիմքերը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ պետական կամ համայնքային բյուջեներում ներառելով արտաբյուջետային միջոցները՝<br>ա) կապահովվի ՀՀ սահմանադրության 110-րդ հոդվածի պահանջները,<br>բ) կբավարարվի միջազգային կառույցների կողմից սահմանված չափանիշներին,<br>գ) կապահովվի համադրելիությունը հաստատված պետական բյուջեի և բյուջեի կատարման տարեկան հաշվետվության միջև:<br>2019 թվականի բյուջետային փաստաթուղթը կներկայացվի նշված ձևաչափով: |
| 270 | «Պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի միասնական ներկայացման իրավական հիմքերի ստեղծում՝ ուղղված պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի ներդաշնակեցմանն ու հնարավոր խզումների չեզոքացման»<br>ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Նշված նախագծի ընդունումը պայմանավորված է պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի միասնական փաստաթղթով ներկայացման և դրանց միջև առկա խզումների չեզոքացման անհրաժեշտությամբ (հիմքը՝ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման 4.2 մասը):<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս կիրառվող ընթացակարգի համաձայն միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակումն ու հաստատումն իրականացվում է տարվա առաջին կեսին, իսկ առաջիկա տարվա բյուջեի նախագծի մշակման ու հաստատման աշխատանքներն իրականացվում են միջնաժամկետ ծախսերի ծրագրի ընդունումից հետո՝ տարվա երկրորդ կեսին: Այսպիսի մոտեցում ցուցաբերելու արդյունքում ստացվում է, որ վերը նշված երկու փաստաթղթերը, որոնք ընդունվում են նույն տարում և պարունակում են առաջիկա տարվա բյուջետային գործընթացին վերաբերող ցուցանիշներ, գրեթե միշտ հաստատվում են այդ նույն ցուցանիշների՝ միմյանց նկատմամբ շեղումներով: Շեղումների պատճառն իհարկե պայմանավորված է այդ փաստաթղթերը կազմելու և հաստատելու ժամկետներով, քանի որ ժամանակի ընթացքում փոխվում է ոչ միայն դրանց պատրաստման |

| | |
|---|---|
| | հիմքում ընկած մակրոտնտեսական միջավայրն ու ընթացիկ տարվա բյուջեի կատարման հետ կապված կանխատեսումները, այլ նաև որոշ չափով փոխվում են հայտատու մարմինների կանխատեսումներն ու պահանջները: Ներկայիս գործող մեխանիզմի մյուս բացասական կողմն այն է, որ միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը, մշակվելով ընթացիկ տարվա առաջին կեսին և օգտագործելով այդ պահի կանխատեսումները, ունենում է ժամանակային շեղում (lag), իսկ ինչքան ընթացիկ տարվա ավարտին մոտ է իրականացվում տվյալ տարվա կատարման վերաբերյալ կանխատեսումները, այդքան դրանք ավելի իրատեսական են լինում: Միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառված առաջիկա երեք տարիների ցուցանիշները, հատկապես առաջին տարվա կանխատեսումային ցուցանիշները, պետք է կապված լինեն ընթացիկ տարվա ավարտին գրանցվելիք փաստացի արդյունքների հետ, ինչը կարելի է լավագույնս ապահովել ընթացիկ տարվա ավարտին հնարավորինս մոտ իրականացվող կանխատեսումային ցուցանիշների կիրառման դեպքում: Ավելացնենք նաև, որ ընթացիկ տարում պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներում պարբերաբար կատարվող փոփոխությունները, որոնք հատկապես կատարվում են միջնաժամկետ ծախսային ծրագրի հաստատվելուց հետո, մեծ ազդեցություն են գործում ՄԺԾԾ-ի կազմման հիմքում ընկած ընթացիկ տարվա կանխատեսումային ցուցանիշների և առաջիկա տարվա բյուջեի կազման ընթացքում իրականացված կանխատեսումային ցուցանիշների միջև գրանցվող շեղումների չափի վրա:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է նշված խնդիրների իրավական լուծումը տալ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման եղանակով:<br>2. Կարգավորման առարկան<br>Նախագիծը կապահովի պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի միասնական ներկայացման իրավական հիմքերը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Նախագծի ընդունմամբ կապահովվի պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի միասնական փաստաթղթով համակարգի ներդրման համար ամրապնդված իրավական դաշտի առկայությունը: 2020-2022 թվականների բյուջետային փաստաթուղթը կներկայացվի նշված ձևաչափով: |
| 271 | «Բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացման աշխատանքների իրականացում»<br>ՄԻՋՈՑԱՌՈՒՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Հանրային կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով կարևորվում է կառավարման այնպիսի էլեկտրոնային համակարգերի ներդրումը և աստիճանական ինտեգրացիան, որոնք կապահովեն կառավարման մարմինների, օղակների և գործընթացների թափանցիկություն, տվյալների անփոփոխելիություն, միասնականություն և ավտոմատացում:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս պետական բյուջեի կազման գործընթացում բազմաթիվ գործառույթներ ավտոմատացված չեն, որի արդյունքում բյուջետային ծրագրերի կազմման փուլում մեծանում է բյուջետային հսկողության ռեսուրսատարությունը, մեծանում է սխալների կատարման և խեղումների հավանականությունը, հետագայում ծրագրերը հնարավորություն չեն ունենում ավտոմատ համակցել կատարողական համակարգերի (էլ-գանձապետարան, գնումներ) հետ: Վերջինս նվազեցնում է պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Դրանով պայմանավորված 2017 թվականին նախաձեռնվել է բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացման աշխատանքների իրականացումը:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերը նշված միջոցառման իրականացման ուղղությամբ 2018 թվականին նախատեսվում է իրականաց-նել պետական ծախսերը կազմելու՝ պետական բյուջեն ձևավորելու գործընթացի ավտոմատացված համակարգ մշակելու և վերջինիս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու համակարգի մշակում և ներդրում ըստ փուլերի:<br>2. Կարգավորման առարկան<br>Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում ավտոմատացված համակարգերի ներդրում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ակնկալվում է, որ 2019 թվականին կներդրվի պետական ծախսերը կազմելու ավտոմատացված համակարգ, որը նաև հնարավորություն կընձեռի այն ինտեգրելու պետական կառավարման համակարգում գործող այլ |

| | |
|---|---|
| | ավտոմատացված համակարգերի հետ՝ տեղեկատվության փոխանակման նպատակով: Նշված միջոցառման համար 2018թ. պետական բյուջեով լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու: |
| 272 | «Տնտեսության իրական հատվածում ներդրումների կատարումը խթանելու նպատակով կապիտալի և եկամտի հարկումից սպառման հարկմանն անցում կատարելուն ուղղված քայլերի ձեռնարկում, ինչպես նաև գույքային հարկերի համակարգը կատարելագործելու նպատակով համակարգային փոփոխությունների իրականացնում՝ նպատակ ունենալով այն ավելի համահունչ դարձնել հարկման ուղղահայաց արդարության սկզբունքին» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է տնտեսության իրական հատվածում ներդրումների կատարումը խթանելու նպատակով կապիտալի և եկամտի հարկումից սպառման հարկմանն աստիճանական անցման, ինչպես նաև անշարժ գույքի հարկման համակարգը կատարելագործելու, այն առավել արդարացի սկզբունքներով գործարկելու և համայնքային բյուջեների հարկային եկամուտների կարևոր աղբյուր դարձնելու անհրաժեշտությամբ (հիմքը՝ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 01.06.2018թ. թիվ 581-Ա որոշման 6.2 մասը):<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված՝ կապիտալի և եկամուտների հարկման գործող դրույքաչափերի համեմատաբար բարձր լինելը որոշակիորեն զսպում է տնտեսության մեջ կատարվող ներդրումները: Միաժամանակ, անշարժ գույքի հարկման՝ ներկայումս գործող համակարգը, գործնականում, չի ապահովում հարկման ուղղահայաց արդարության սկզբունքը և չի նպաստում համայնքների ֆինանսական կայունության մակարդակի բարձրացմանը:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>ՀՀ կառավարության նշյալ միջոցառմամբ նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել կապիտալի և եկամտի հարկումից սպառման հարկման աստիճանական անցման, ինչպես նաև անշարժ գույքի հարկման համակարգի կատարելագործմանն ուղղված օրենքի նախագիծ:<br>2. Կարգավորման առարկան<br>Միջոցառման իրականացման արդյունքում մշակվող նախագծի կարգավորման առարկան կապիտալի, եկամուտների և անշարժ գույքի հարկման համակարգերն են:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝<br>կապիտալի և եկամտի հարկումից աստիճանական անցում սպառման հարկման՝ տնտեսության իրական հատվածում ներդրումների կատարումը խթանելու նպատակով, անշարժ գույքի հարկման համակարգի կատարելագործում՝ այն առավել արդարացի սկզբունքներով գործարկելու և համայնքների բյուջեների հարկային եկամուտների կարևոր աղբյուր դարձնելու նպատակով: |
| 273 | «Ակտիվ աշխատանքների իրականացում՝ ուղղված միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածության ապահովմանը և միջազգային առևտրի հարկման լավագույն փորձին համապատասխան հարկային հարաբերությունների կարգավորումների կատարելագործմանը» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի 6.2-րդ բաժնի «Պայքար ստվերի դեմ, պետական եկամուտների ավելացում» 2-րդ պարբերության 7-րդ կետով նախատեսված ծրագրային դրույթի իրագործման անհրաժեշտությամբ:<br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս տարբեր միջազգային կազմակերպությունների (հատկապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության) և միավորումների կողմից բավականին ակտիվ աշխատանքներ և քննարկումներ են իրականացվում ուղղված միջազգային առևտրին վերաբերող կարգավորումների հստակեցմանը, տարբեր պետություններում ձևավորվող հարկման բազաների պաշտպանության ուղղությամբ համապատասխան կարգավորումների ձևավորմանը, հարկման բազաներին վերաբերող տեղեկատվության փոխանակման միասնական համակարգերի ներդրմանը:<br>Խնդիրը կայանում է նրանում, որ անհրաժեշտություն է առաջացել ավելի ակտիվացնել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և իրականացնել ակտիվ աշխատանքներ |

| | |
|---|---|
| | միջազգային առևտրի հարկման մոտեցումներում կատարվող փոփոխությունները ՀՀ հարկային օրենսդրության մեջ տեղայնացնելու համար:<br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է՝<br>ա. անդամակցել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին,<br>բ. ակտիվ աշխատանքներ իրականացնել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի անդամակցության շրջանակներում ըստ հարցման կամ ինքնաշխատ կերպով տեղեկատվության փոխանակման համակարգերի ներդրման ուղղությամբ,<br>գ. ակտիվ աշխատանքներ իրականացնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանցի ընդլայնման և արդիականացման ուղղությամբ,<br>դ. մշակել տրանսֆերային գնագոյացման օրենսդրության կիրարկումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր և ներկայացնել Կառավարության քննարկմանը:<br>2. Կարգավորման առարկան<br>Միջոցառման կարգավորման առարկան միջազգային հարկային հարաբերություններն են:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել միջազգային հարկային հարաբերություններում ՀՀ ներգրավվածությունը և իրականացնել ակտիվ աշխատանքներ միջազգային առևտրի հարկման մոտեցումներում կատարվող փոփոխությունները ՀՀ հարկային օրենսդրության մեջ տեղայնացնելու համար: |
| Անշարժ գույքի կադաստրի կոմիտե | |
| 274 | Առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծում, տեղեկատվության տրամադրման գործընթացի դյուրացում, առցանց տեղեկատվության նկատմամբ պահանջարկի խթանում, տրամադրման ժամկետների կրճատում և ծավալների էական ավելացում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակն է էականորեն պարզեցնել և դյուրինացնել կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավորություն ընձեռել դրանցից օգտվել հիմնականում առանց կադաստր վարող մարմին ներկայանալու և հնարավորինս կարճ ժամկետներում, հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, ինչպես նաև նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավոր դարձնել համակարգի և աշխատակիցների օպտիմալացումը, արդյունքում՝ նվազեցնել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել եկամուտները:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Մշակված և 2012թ.-ից ներդրված է ARPIS գրանցման ինքնաշխատ համակարգը: Այն իրենից ներկայացնում է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, որը թույլ է տալիս դիմումների ընդունումից սկսած մինչև դրանց հիման վրա կազմված իրավունքների պետական գրանցման վկայականների և տեղեկատվության տրամադրման տեղեկանքների տրամադրումն իրականացնել էլեկտրոնային եղանակով:<br>Կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա և գրանցման ինքնաշխատ համակարգ ունենալը հնարավորություն ընձեռեց անցնել էլեկտրոնային եղանակով իրավունքների պետական գրանցմանը և տեղեկատվության տրամադրմանը: Արդյունքում դյուրինացվեց կադաստրի պետական կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելը, հնարավոր եղավ մատուցել էլեկտրոնային առցանց ծառայություններ:<br>Չնայած վերոգրյալին տեղեկատվության տրամադրման գործընթացը հիմնականում իրականացվում է մարդկային մեծ ռեսուրսների ներգրավմամբ, քանի որ էլեկտրոնային շտեմարաններում առկա է տվյալների ամբողջականացման խնդիր և անհրաժեշտ է յուրաքանչյուր դիմումի ժամանակ հավաստիանալ հարցվող տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու մեջ: Ինչպես նաև տրամադրվող տեղեկանքները պետք է լինեն թղթային, քանի որ հավաստվում են սպասարկման գրասենյակների կնիքով:<br>2018 թվականից ներդրվել է առցանց՝ ինքնաշխատ եղանակով որոշ տեղեկատվությունների տրամադրման համակարգ, սակայն այն դեռևս չունի բավարար պահանջարկ տրամադրվող տեղեկությունների սահմանափակ լինելու, ինչպես նաև տրամադրված տեղեկանքները կնքված չլինելու պատճառով: Տվյալ ծառայության զարգացմանը խոչընդոտում է նաև քաղաքացիների ոչ իրազեկված լինելու հանգամանքը ևս:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առկա խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է ընդլայնել առցանց տրամադրվող |

| | |
|---|---|
| | տեղեկությունների տեսակները, մշակել նոր տեղեկատվական փաթեթներ, ստեղծել տեղեկատվության որոնման առցանց գործող տարածական հարթակ, վերացնել տրամադրվող ավարտական փաստաթղթի կնքված լինելու պահանջը, զարգացնել էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, քաղաքացիներին, անշարժ գույքի շուկայի մասնակիցներին իրազեկել ներդրված նոր ծառայություններին և դրանցից հարմարավետ օգտվելու տարբերակներին:<br>2. Կարգավորման առարկան<br>Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններ<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է հնարավորինս բացառել քաղաքացիների և պաշտոնատար անձանց անմիջական շփումը, նվազեցնել այդ շփումներով պայմանավորված առկա կոռուպցիոն ռիսկերը, բարելավել ՀՀ դիրքը «Գործարարությամբ զբաղվելը զեկույց»-ում, էականորեն պարզեցնել տեղեկատվության ձեռքբերման ընթացակարգը, դիմումներ ներկայացնել, ավարտական փաստաթղթեր ստանալ առանց կադաստր վարող մարմին անձամբ այցելելու, կրճատել տեղեկատվության տրամադրման ժամկետները, ընդհուպ մինչև հարցումից հետո՝ անմիջապես ստանալու հնարավորությամբ, նվազեցնել տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, հնարավորություն ընձեռել համակարգի և աշխատակիցների օպտիմալացման, էականորեն կրճատել համակարգի պահպանման ծախսերը և ավելացնել կոմիտեի եկամուտները: |
| 275 | 2. Պետական մարմիններին առցանց տրամադրվող տեղեկատվության ծավալի ընդլայնում՝ ընդհուպ մինչև թղթային տարբերակով տեղեկատվության տրամադրման դիմումների բացառում<br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակն է էականորեն կրճատել պետական մարմիններից գրություններով ստացվող հարցումների քանակը, ընդհուպ մինչև դրանց բացառումը: Նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և բարձրացնել պետական մարմինների աշխատանքի օպերատիվությունը:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաձայն գործող օրենսդրության կադաստրի կոմիտեն պետական մարմիններին իրենց գործառույթների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրում է անվճար: Կադաստրի կոմիտեն պետական մարմիններից տարեկան ստանում է հազարավոր գրություններ (օրինակ միայն «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանում 2018թ. 1-ին կիսամյակում պետական մարմիններից մուտք է եղել 4.936 գրություն), որոնց ընթացք տալու համար ներգրավում է մեծ քանակով մարդկային ռեսուրսներ:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է վերլուծել, խմբավորել և դասակարգել պետական մարմիններից ստացվող դիմումները և դրանցով պահանջվող տեղեկատվությունները, ըստ յուրաքանչյուր պետական մարմնի բացահայտել և սահմանել անհրաժեշտ տեղեկատվությունները ու ներդնել յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին բավարարող առցանց ծառայություն:<br>2. Կարգավորման առարկան<br>Կադաստրի պետական կոմիտեի և այլ պետական մարմինների միջև փաստաթղթաշրջանառություն և օպերատիվություն:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է նվազեցնել՝ ընդհուպ մինչև բացառել, պետական մարմիններից կադաստր ներկայացվող անվճար դիմումների քանակները, կրճատել պետական մարմինների միջև փաստաթղթաշրջանառությունը, բարձրացնել պետական մարմինների աշխատանքի օպերատիվությունը, քաղաքացիների համար նվազեցնել բյուրոկրատական քաշքշուկները, նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և հնարավորություն ընձեռել համակարգի ու աշխատակիցների օպտիմալացման: |
| 276 | Հայաստանի Հանրապետության քաղաքների երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Միջոցառման իրականացման արդյունքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանում:<br>Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին |

| | |
|---|---|
| | բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:<br>Բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան ստեղծելու և ներդնելու նպատակով նախատեսվում է իրականացնել ՀՀ քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>2018 թվականին ստեղծել և ներդնել Սևան, Սպիտակ, Ջերմուկ, Կապան և Գորիս քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները: Այս աշխատանքները շարունակական են և նախատեսվում է իրականացնել Հանրապետության այլ քաղաքների համար: |
| 277 | Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի յուրաքանչյուր տարվա կադաստրային գների սահմանում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից՝ ըստ որի հողերի կադաստրային գները, ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել յուրաքանչյուր տարվա համար, ուստի, որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>2. Կարգավորման առարկան<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն յուրաքանչյուր տարիների Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության հողերի տվյալ տարվա կադաստրային գները:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն յուրաքանչյուր տարվա հողերի կադաստրային գները, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |
| 278 | Յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի ընդունման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ |

| | |
|---|---|
| | հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հողամասերն, անկախ սեփականության ձևից, ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի և քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման նպատակը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվության (հողային հաշվեկշռի)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմումն է, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում կատարվում են նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների, ինչպես նաև ոռոգվող հողերի փոփոխություններ: Անհրաժեշտ է վերոհիշյալ փոփոխություններն արտացոլել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Որոշման ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն կարտացոլվեն յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռում:<br>2. Կարգավորման առարկան<br>Յուրաքանչյուր տարի ընթացիկ հաշվառմամբ կնորացվի, կճշտվի և կամփոփվի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տվյալներն՝ ըստ նպատակային նշանակությունների, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման յուրաքանչյուր տարվա նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո կիրապարակվի, որի նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, կազմակերպություններն ու անձինք:<br>Որոշման յուրաքանչյուր տարվա նախագիծը կտեղադրվի Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական www.cadastre.am կայքում: |
| 279 | Ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման ինտեգրված (միասնական) կադաստրի նպատակը տարածական հղմամբ պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն է, որը կենտրոնացնում է հանրապետության բնական և մարդածին ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի և արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային ու գրաֆիկական տվյալները և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետության տնտեսության կառավարման մի շարք ոլորտները կարգավորող օրենսդրությամբ՝ օրենսգրքերով և օրենքներով համապատասխան կառավարման մարմինների համար սահմանվել են իրենց ոլորտների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների վարման գործառույթներ: Սակայն դրանք հիմնականում չեն իրականացվել, իսկ որոշ դեպքերում ստեղծվել են տեղեկատվական ֆոնդեր կամ համակարգեր այլ ոլորտներից անկախ, չհամաձայնեցված, որը լուրջ դժվարություններ է հարուցում պետական համալիր ծրագրերի մշակման և արդյունավետ իրագործման համար:<br>Ակնհայտ է, որ ոլորտային կադաստրների վարումը անհամեմատ ավելի արդյունավետ կարող է լինել դրանց ամբողջական միասնական համակարգի մեջ ընդգրկելով, որը իրենից կներկայացնի փոխկապակցված և փոխհամաձայնեցված կադաստրների և ռեգիստրների համալիր՝ ընդհանուր և միասնական մեթոդոլոգիական սկզբունքներով և տեղեկատվական հիմքով: |

| | |
|---|---|
| | 1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ում զգալի աշխատանքներ են կատարվել երկրատեղեկատվական բազային համակարգերի ստեղծման ուղղությամբ: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառմամբ մշակվել են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգերը: Ձեռք է բերվել մասնագիտական անհրաժեշտ փորձառություն, համապատասխան տեխնիկական միջոցներ, պատրաստվել են կադրեր: Կոմիտեի ստորաբաժանումներում կուտակած տեղեկատվական բանկը և երկրատեղեկատվական համակարգի բազան հնարավորություն են տալիս կազմակերպել և համակարգել ոլորտների թեմատիկ կադաստրների տեղեկատվական բանկի ստեղծումը և դրանք ամբողջացնելով ընդգրկել ինտեգրված (միասնական) կադաստրի և միասնական երկրատեղեկատվական համակարգի մեջ:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետության միասնական ինտեգրված կադաստրի ստեղծում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>1. Ինքնաշխատ ամբողջական տեղեկատվական ռեսուրսի ստեղծում փոխկապակցված տեղեկատվական փաստաթղթերի հիման վրա.<br>2. Տարածքների, տնտեսության, բնական պաշարների, բնապահպանական, քաղաքաշինական և այլ գործընթացների արագ և արդյունավետ կառավարում.<br>3. Իրական ժամանակի ռեժիմում, փոխկապակցված, հավաստի տեղեկության միջոցով իրավիճակի համալիր վերլուծությամբ հիմնավորված որոշումների ընդունում՝ կրճատելով համաձայնեցումների գրավոր ձևերին տրամադրվող ժամանակը.<br>4. Ֆինանսական միջոցների և աշխատանքային ռեսուրսների խնայողություն.<br>5. Հասարակության իրազեկվածության և տեղեկատվության հասանելիության բարձր մակարդակ.<br>6. Նորագույն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ներդրման արագություն և արդյունավետություն: |
| 280 | Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանում:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ.<br>ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի՝ բարձր ճշտությամբ, հնարավորություն տալով գեոդեզիայի բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին խնայել ժամանակ և ֆինանսական զգալի միջոցներ:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» կոորդինատներից անցում այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձրությունների:<br>Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի «ՌՈՎԵՐ» դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները ArmWGS-84 (ArmREF02) համակարգում:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակ:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ տարածքի որոշ բարձրադիր շրջաններում GPS դիտարկումների, II դասի նիվելիրացման աշխատանքների իրականացում: Արդյունքում քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդել: |

| | |
|---|---|
| 281 | Հայաստանի Հանրապետության տարածքի օդալուսանկարների (օրթոլուսանկարների-GSD-20cm) ստեղծում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար ստեղծել ժամանակակից պահանջներին բավարարող օրթոֆոտոհատակագծեր, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, (օրինակ քարտեզագրական) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետության տարածքը մասնակի՝ շուրջ 13 500 քառ. կմ մակերեսով ծածկված է 2013-2014 թթ. ստեղծված օրթոֆոտոհատակագծերով, որոնք ամբողջությամբ չեն բավարարում արդի պահանջներին:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն, որն առաջին հերթին ապահովվում է թարմացված քարտեզները ու հատակագծերը:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ ողջ տարածքի օրթոֆոտոհատակագծերի ձեռք բերում և օդալուսանկարների պլանաբարձունքային հիմք կապակցման աշխատանքների իրականացում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀՀ ողջ տարածք օրթոֆոտոհատակագծերի GSD-20cm ձևաչափի ծածկույթ, որոց մշակմամբ ստացված քարտեզներն ո հատակագծերը կնպաստեն բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարումն իրականացնե ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ՀՀ և նրա առանձին վարչատարածքային միավորներ տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ: |
| 282 | ՀՀ մշտապես գործող GPS ռեֆերենց կայանների ցանցի արդիականացում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման նպատակը պայմանավորված է ՀՀ ողջ տարածքում GPS դիտարկումներից բարձր ճշտությամբ կոորդինատների ստացման անհրաժեշտությամբ:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետությունում ներդրված է տեղադիրքի որոշման 12 կայաններից բաղկացած համակարգ, որն անհրաժեշտ է արդիականացնել ժամանակակից պահանջներին բավարարող ևս երկու մշտապես գործող ռեֆերենց կայաններով:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ռեֆերենց կայանների ցանցի խտացումը հնարավորություն կընձեռի GPS ռովեր կայանի միջոցով իրական ժամանակում, ծածկույթի ընդգրկման շրջանում, ստանալու տեղադիրքի կոորդինատները առավել բարձր ճշտությամբ, ինչը կնպաստի գեոդեզիայի բնագավառում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար մշտական գործող բոլոր ռեֆերենց կայանների անհրաժեշտ ծածկույթի բարելավում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է ունենալ մշտապես գործող տասնչորս ռեֆերենց կայաններից բաղկացած ժամանակակից ցանց, որը կիրառելի կլինի տնտեսության տարբեր ճյուղերում: |
| 283 | ARPIS համակարգի քարտեզագրական բաղադրիչի գործարկում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Կադաստրային քարտեզների վարումը իրականացվում է ըստ համայնքների առանձին (ARPAC համակարգում), այսինքն՝ բացակայում է կենտրոնացված քարտեզների վարման համակարգը: Կադաստրային քարտեզները ինտեգրված չեն տեղեկատվական (տեքստային) շտեմարանների հետ, ինչի հետևանքով առկա են |

| | |
|---|---|
| | անհամապատասխանություններ տեքստային բազայի և կադաստրային քարտեզներում առկա տեղեկությունների հետ:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Կադաստրային քարտեզների վարումը կենտրոնացված համակարգում իրականացնելու համար անհրաժեշտ է քարտեզները ներբեռնել ARPIS համակարգի քարտեզագրական բաղադրիչ: Դրա համար անհրաժեշտ է քարտեզները տեղափոխել երկրատեղեկատվական համակարգերի փոխգործելիության համար նախատեսված shape ձևաչափ, ինչը նաև հնարավորություն կընձեռի մինչ ներբեռնումը ժամանակակից երկրատեղեկատվական համակարգերի օգնությամբ կատարել կադաստրային քարտեզների տեխնիկական վիճակի ստուգում, համայնքների վարչական սահմանների համապատասխանությունը այդ սահմանների նկարագրություններին, քարտեզներում առկա հողային ֆոնդի վերաբերյալ տեղեկությունների հողային հաշվեկշռին համապատասխանության ստուգում և կատարել համեմատություն տեքստային բազայի հետ:<br>2. Կարգավորման առարկան<br>Քարտեզագրական նյութերից տեղեկությունների առցանց եղանակով տրամադրումը:<br>Գեոպորտալի միջոցով մատուցվող ծառայությունների ընդլայնումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Կադաստրային քարտեզների վարումը կիրականացվի միասնական միջավայրում և ինտեգրված կլինի տեքստային բազայի հետ՝ ապահովելով կադաստրային քարտեզներում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաշվետվությունների արտահանման հնարավորությունը: Կբարձրանա տեղեկատվության տրամադրման օպերատիվությունը, արժանահավատությունը, մատչելիությունը: |
| 284 | Հայաստանի ազգային ատլասի հրատարակում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Աշխարհի գրեթե բոլոր երկրներում թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Դա ամրագրված է նաև «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի է) կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները հանդիսանում են որպես պաշտոնական նյութ, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>2018 թվականին հրատարակվել են Հայաստանի ազգային ատլասի անգլերեն լեզվով Ա և Բ հատորները: 2018 թվականից ընթանում են ատլասի հրատարակման աշխատանքները:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Կիրականացվի ատլասի քարտեզների նյութերի թարմացման և թարգմանության, խմբագրման և ձևավորման, տեքստերի, աղյուսակների ստեղծման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2019 թվականին:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի ազգային ատլասի թարգմանություն, խմբագրում, ձևավորում և տպագրություն:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ Հայաստանի ազգային ատլասի թարմացված տարբերակը: |
| 285 | Համակարգի կառուցվածքային բարեփոխումներ և աշխատանքների արդյունավետության բարձրացում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համակարգում գործող վեց տարածքային ստորաբաժանումների գործառույթների ներառումը 3 հիմնական, միմյանցից տարանջատված ուղղություններում և գործող քառասուն սպասարկման գրասենյակների վերակազմակերպումը մարզային գրասենյակների, որի նպատակն է կոռուպցիոն ռիսկերի բացառումը և ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Կոմիտեի համակարգում ներկայումս գործում է վեց տարածքային ստորաբաժանում, որից՝ 2-ը Երևանում (Երևանի տարածքային ստորաբաժանում, Մարզերի միավորված ստորաբաժանում), 4-ը՝ մարզերում (Շիրակ, Լոռի, Վայոց Ձոր, Սյունիք) և քառասուն սպասարկման գրասենյակ, որից՝ 3-ը Երևանում, 37-ը՝ բոլոր 10 մարզերում, որոնց պահպանության ու շահագործման ծախսերն իրականացվում են կոմիտեի միջոցների հաշվին |

| | |
|---|---|
| | և հաստիքների որոշակի քանակի անհրաժեշտություն է պահանջվում:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Բարեփոխումների արդյունքում նախատեսվում է 6 ստորաբաժանումների գործառույթները ներառել երեք միասնական ուղղությունների մեջ ու դրանք տեղակայման առումով տարանջատել միմյանցից, իսկ մարզերի տարբեր համայնքներում գործող սպասարկման գրասենյակները վերակազմակերպել մարզային կառուցվածքների՝ միաժամանակ աջակցելով այլ կառույցների կողմից (նոտար, բանկեր և այլն) նշված գրասենյակների գործառույթների իրականացմանը:<br>2. Կարգավորման առարկան<br>Կոմիտեի համակարգում գործող տարածքային ստորաբաժանումների ու սպասարկման գրասենյակների գործառույթների վերափոխման իրականացում:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Կոմիտեի համակարգում գործող տարածքային մարմինների գործառույթների վերափոխում, օպտիմալացում, ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի բացառում: |
| 286 | Հողերի նպատակային և գործառնական նշանակությունններն ու դրանց կիրառման կարգերը պարզեցնելու նպատակով նոր համակարգային մոտեցումների ձևավորում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է Կառավարության 2018-2022 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից 5-ամյա միջոցառումներից բխող նորմատիվ իրավական ակտերի մշակման անհրաժեշտությամբ:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համակարգի կառուցվածքային բարեփոխումներ և աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման միջոցառման հիմնական ուղղությունների կատարմանն ուղղված բնագավառի օրենսդրության և նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների, լրացումների մշակում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Օրենսդրական և առնչվող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:<br>2. Կարգավորման առարկան<br>Կոմիտեի համակարգի գործառույթների փոփոխություններից բխող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների իրականացում:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Կապահովվի Օրենսդրական բարեփոխումներ միջոցառման իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի ընդունումը: |
| 287 | Տեքստային տվյալների բազայի և էլեկտրոնային արխիվի ճշգրտում և ամբողջականացում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակն է կադաստրի էլեկտրոնային տեքստային բազայի և էլեկտրոնային արխիվի ամբողջականացում, համակարգի ներքին գործառույթների և մատուցվող ծառայությունների հետագա ավտոմատացման հնարավորության ընձեռում:<br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ստեղծված է կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազա, որտեղ մուտքագրված է մոտ 2.340.000 կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվները և դրանց վերաբերյալ տեքստային տվյալները:<br>Կադաստրի պետական կոմիտեի տվյալների միասնական էլեկտրոնային բազայում առկա է գործող և դադարած իրավունքների շուրջ 6.240.000 սուբյեկտներ, որոնցից շուրջ 3.247.000 սուբյեկտների տվյալներ ամբողջական չեն:<br>2.340.000 կադաստրային գործերում առկա մոտ 94 մլն. էջ փաստաթղթերից շուրջ 50.0 մլն. էջ փաստաթուղթ անհրաժեշտ է վերատեսաներածել, ինչպես նաև անհրաժեշտ է ստուգել շուրջ 44 մլն էջ փաստաթղթերի տեսաներածման որակը և անհրաժեշտության դեպքում դրանք ևս վերատեսաներածել:<br>1.2.Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է գործող և դադարած իրավունքների սուբյեկտների վերաբերյալ կադաստրային գործերի արխիվային նյութերում առկա տեղեկատվությունը մուտքագրել կադաստրի տեքստային էլեկտրոնային բազա, |

| | |
|---|---|
| | որից հետո կադաստրի տեքստային էլեկտրոնային բազայում գործող և դադարած սուբյեկտների վերաբերյալ թերի տվյալների ամբողջականացնել համայնքներում  և այլ պետական մարմիններում առկա տվյալների հիման վրա:<br>Նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. տեսաներածված շուրջ 50.0 մլն էջ փաստաթղթերի վերատեսաներածում, ինչպես նաև 2012 թվականից հետո տեսաներածված շուրջ 44.0 մլն. էջ փաստաթղթերի տեսաներածման որակի ստուգում և անհրաժեշտության դեպքում վերատեսաներածում:<br>2. Կարգավորման առարկան<br>Կադաստրի էլեկտրոնային տեքստային բազայի և էլեկտրոնային արխիվի ամբողջականացումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել անշարժ գույքի սուբյեկտների միանշանակ նույնականացումը և առցանց տրամադրվող տեղեկատվության ճշգրիտ լինելը, սահմանափակումների ավտոմատ կիրառումը, բարձրացնել էլեկտրոնային փաստաթղթերի ընթեռնելիությունը, նվազեցնել կադաստրի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, դյուրինացնել տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների հետագա միավորման գործընթաց, ընձեռել միասնական արխիվի ստեղծման հնարավորություն և ստեղծել նախադրյալների համակարգի հետագա ավտոմատացման համար: |
| 288 | Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանում<br><br>1.  Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանում:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս անշարժ գույքի հարկը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ շենքեր, շինությունների գույքահարկից և հողամասերի հողի հարկից:<br>Շենքեր, շինությունների կադաստրային գնահատությունն իրականացվում է դեռևս 2000-2002 թվականներին անշարժ գույքերի համակարգված դիտարկումների և շուկայական տվյալների վերլուծությունների արդյունքում՝ անշարժ գույքի շուկայական մոտեցումների հիման վրա մշակված կարգերի (բանաձև-հաշվարկների հիման վրա): Եվ շենքեր, շինությունների կադաստրային գնահատման գործընթացը ներկայումս կարգավորվում է 2002 թվականին ընդունված «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով և շինությունների կադաստրային արժեքների բանաձև-հաշվարկներում գնագոյացման գործոններ են հանդիսանում 2002 թվականի դրությամբ շուկայական մեխանիզմների հիման վրա վերլուծությունների արդյունքում ձևավորված չափորոշիչները, մասնավորապես՝ շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատված են ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ: Արդյունքում նշված գնագոյացման գործոնները չեն արտացոլում ներկայիս անշաժ գույքի շուկայի իրական պատկերը:<br>Ինչ վերաբերվում է հողամասերի կադաստրային գնահատմանը, ապա ներկայումս դրանք գնահատվում են 1994 թվականին, 1997 թվականին, 2002 թվականին, 2003 թվականին ՀՀ կառավարության տարբեր որոշումներով սահմանված կարգերով:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝<br>1.Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներում անշարժ գույքի շուկայական գնահատություններ.<br>2.Անշարժ գույքի շուկայական գնահատությունների տվյալների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից վերջին 5 տարիների փաստացի գործարքների պայմանագրային գների, ինչպես նաև անշարժ գույքի առաջարկի շուկայի տվյալների վերլուծություններ.<br>3.Պայմանագրային և գնահատված գների անցկացում (մուտքագրում) քարտեզների վրա, գնային գոտիների առանձնացում, գոտուց գոտի անցման գործակիցների, առանձնացված գնային գոտիների նկարագրում, բազային արժեքների որոշում:<br>2.  Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետությունում հողամասերի և դրանց բարելավումների միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանումն է և բազային արժեքների որոշումը:<br>3.  Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն Հայաստանի Հանրապետության հողերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի) գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցներն ու սահմանները և |

| | |
|---|---|
| | որոշմամբ սահմանված գները հիմք կհանդիսանան պետության և համայնքային սեփականությանը պատկանող հողամասերն օտարելու, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկման համար:<br>Միջոցառման իրականացումը հիմք կհանդիսանա նաև Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական հարկման համակարգի ներդրմանը և կոմիտեի կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո սույն միջոցառման արդյունքում ձևավորված համապատասխան տվյալների հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման մեթոդաբանությունը, հողամասի 1 քառակուսի մետր մակերեսի բազային արժեքը, շինությունների բազային արժեքները, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները, շինությունների քանակական և որակական բնութագրիչների գործակիցներն ու մեծությունները, որը հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմների ներդրմանը, կապահովի անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովմանը, կխթանի պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծման գործընթացում: |
| 289 | Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատումն է:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային զուտ եկամուտների հողային կադաստրի տվյալները հաստատվել են ՀՀ կառավարության 1999 թվականի հունվարի 20-ի N 31 որոշմամբ և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային զուտ եկամուտների հաշվարկների համար հիմք են հանդիսանում դեռևս 1970-1980-ական թվականներին իրականացված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մոնիթորինգի տվյալները, ինչպես նաև այդ ժամանակահատվածում հողաշինարարական, հողագիտական, երկրաբուսաբանական և գյուղատնտեսական հողատեսքերի որակական ու տնտեսական գնահատման աշխատանքների հիման վրա մշակված մեթոդիկան: Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գները յուրաքանչյուր տարի հաստատվում են ՀՀ կառավարության կողմից՝ դրանց չափերը յուրաքանչյուր տարի թողնելով անփոփոխ, որոնց տվյալների հիման վրա ձևավորվում են գյուղատնտեսկան նշանակության հողատեսքերի հարկման բազաները:<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գյուղատնտեսական հողատեսքերի վիճակի վերաբերյալ վերջին 30 տարիների ընթացքում ոչ մի համալիր հետազոտություններ և ուսումնասիրություններ չեն կատարվել և գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գները չեն արտացոլում ներկայիս անշարժ գույքի շուկայի իրավիճակը, իսկ գործող օրենսդրությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի հարկի մեծության հիմքում ընկած է հողի պոտենցիալ եկամտաբերությունը, հետևաբար արդարացի հարկման դաշտի ստեղծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում նոր հետազոտական նյութերի հիման վրա իրականացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առկա խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է իրականացնել՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկայի մշակման և մեթոդական ցուցումների ստեղծման, հողաշինարարական, հողագիտական երկրաբուսաբանական, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նոր տնտեսական գնահատման աշխատանքներ:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատման իրականացումն է:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գները, որոնց տվյալների հիման վրա կձևավորվեն Հայաստանի Հանրապետության ըստ համայնքների և բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հարկման բազաները, որը հնարավորություն կընձեռի |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի արդարացի հարկման մեխանիզմների ներդրմանը, կապահովի անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովմանը, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նոր կադաստրային գները հիմք կհանդիսանան պետության և համայնքային սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի օտարելու, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային նվազագույն գների հաշվարկման համար: |
| 290 | Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկով 2020-2022 թվականների հարկման բազաների ձևավորում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի 238-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առկա տվյալների հիման վրա կգնահատվեն (կվերագնահատվեն) անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները՝ հաշվի առնելով հողամասերի բարելավումների (շինությունների) մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցները՝ 2019 թվականի դրությամբ, որի արդյունքում կձևավորվի Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով 2020-2022 թթ. հարկման բազաները:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>2019 թվականի դրությամբ, ձևավորված Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով 2020-2022 թթ. հարկման բազաների ամբողջականացումը:<br>2. Կարգավորման առարկան<br>ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի 238-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի 238-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ նոր եռամյա ժամանակահատվածի՝ 2020-2022 թվականների հարկման բազաների ձևավորման համար 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ առկա տվյալների հիման վրա իրականացված՝ ՀՀ տարածքում գտնվող, անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ տեղեկությունները ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի պահանջների համաձայն մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ կտեղադրվեն ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների համար հասանելի ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում, որը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կընձեռի հաշվառելու և իրականացնելու 2020-2022 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը: |
| 291 | Գնահատման ոլորտի բարելավում և որակավորված գնահատողների ինքնակարգավորվող մարմնի ստեղծում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման նպատակը Հայաստանի Հանրապետությունում որակավորված գնահատողների ինքնակարգավորվող մարմնի ստեղծումն է:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության կանոնակարգումը ներկայումս իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի և «ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման ստանդարտ»-ի հիման վրա: «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 4-ին: Մինչև 2011 թվականի հունվարի 1-ն անշարժ գույքի գնահատման գործունեությունը լիցենզավորվում էր, իսկ գնահատողը՝ որակավորվում լիազոր մարմնի կողմից: 2010թ. դեկտեմբերի 8-ին ընդունված ՀՕ-237-Ն օրենքով անշարժ գույքի գնահատման գործունեության լիցենզավորման պահանջը վերացվեց:<br>Վերոնշյալ օրենքի գործողությունը տարածվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող անշարժ գույքի գնահատման գործունեության վրա:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Անշարժ գույքի |

| | |
|---|---|
| | գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմին սահմանելու մասին» N 2277-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման գործունեությունը կարգավորող, ինչպես նաև ֆիզիկական անձանց որակավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեն է:<br>Կադաստրի կոմիտեն գնահատման ոլորտը կարգավորում է, որակավորման քննությունները կազմակերպում և անցկացնում է, ինչպես նաև գնահատողների կողմից վերոնշյալ օրենքի, գնահատման ստանդարտների, նորմատիվ իրավական հսկողություն իրականացնում է իր կողմից ստեղծված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների միջոցով: Կադաստրի կոմիտեն որակավորման հանձնաժողովի միջոցով կազմակերպում և անցկացնում է որակավորման քննությունները: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են կադաստրի կոմիտեի ներկայացուցիչներ և առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող գնահատողներ՝ իրենց համաձայնությամբ: Կադաստրի կոմիտեն մասնագիտական հանձնաժողովի միջոցով իրականացնում է հսկողություն անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձանց և գնահատողների կողմից «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի, գնահատման ստանդարտների և օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ:<br>Գնահատողների կողմից «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի, գնահատման ստանդարտների և օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն կադաստրի կոմիտեն իրականացնում է միայն շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի հաստատած ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցով նախատեսված լինելու դեպքում:<br>Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա գնահատողի որակավորման գործողությունը դադարեցվում է միայն, եթե գնահատողը գնահատման հաշվետվությունում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով, գնահատման ստանդարտով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների խախտում (խախտումներ) կատարելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, առնվազն չորս այլ հաշվետվություններում ևս խախտումներ է կատարել: Որևէ այլ դեպքերում պատասխանատվության այլ միջոցներ, ինչպես որակավորված գնահատողների, այնպես էլ գնահատման գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ օրենսդրությունը չի նախատեսում:<br>Ներկայիս գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում մի շարք իրավահարաբերություններ, որոնցում գույքի շուկայական արժեքի արտացոլման անհրաժեշտության կա, ինչպես նաև խիստ սահմանափակվում են այդ ոլորտը պետական լիազոր մարմնի կողմից կարգավորելու հնարավորությունները:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝<br>1. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը:<br>2. Գնահատման ստանդարտների և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը:<br>3. Որակավորված գնահատողների ինքնակարգավորման հայեցակարգի մշակում:<br>4. Որակավորված գնահատողների ինքնակարգավորվող մարմնի ստեղծում:<br>5. Կադաստրի կոմիտեի՝ որպես լիազոր մարմնի, իրավասությունների մի մասի փոխանցում ինքնակարգավորվող մարմնին:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Հայաստանի Հանրապետությունում գնահատման ոլորտի բարելավումն է և որակավորված գնահատողների ինքնակարգավորվող մարմնի ստեղծումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>1. Գնահատման ոլորտի ընդլայնում և կայացում:<br>2. Գնահատման գործունեություն իրականացնողների նկատմամբ շուկայի մասնակիցների ու հանրության վստահության բարձրացում:<br>3. Մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավում:<br>4. Պետական և համայնքային բյուջեների եկամուտների աճ և ծախսերի տնտեսում: |
| 292 | Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ |

| | |
|---|---|
| | զբաղվելու իրավունք ունեցող անձանց համար առցանց գրասենյակի գործարկում<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br><br>1.1.Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս չափագրման փաթեթները ներկայացվում են առձեռն սպասարկման գրասենյակների միջոցով, ինչը չի բացառում շփումները կոմիտեի աշխատակիցների հետ: Ներդրված չէ էլեկտրոնային համակարգ, որը կապահովի ներկայացվող փաթեթների ստուգում և հաշվետվությունների արտահանում:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Ներդնել առցանց գրասենյակ, որի միջոցով կիրականացվի փաթեթների ներբեռնումը, կադաստրային քարտեզներից և հատակագծերից հատվածների հարցումները, առցանց վճարումները, ավարտական փաստաթղթերի դիտումը միասնական միջավայրում:<br>2. Կարգավորման առարկան<br>Աշխատանքների արդյունավետության բարձրացումը, առցանց ծառայությունների մատուցումը, կրկնակի գործողությունների բացառումը՝ տեղեկությունների հավաքագրման ընթացքում մարդկային գործոնի հետևանքով առաջացող սխալների բացառումը:<br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Գրասենյակի գործարկումը կնպաստի կատարվող աշխատանքների օպերատիվության բարձրացմանը, «անթուղթ» նյութերի փոխանակմանը, կոմիտե մուտքագրվող հարցումների և պատասխանների կենտրոնացմանը, վերահսկողության արդյունավետության բարձրացմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: |
| | **Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե** |
| 293 | **ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ**<br><br>**1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N1791-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի փոխադրման լիցենզավորման կարգը ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանության հետ կապված որևէ կարգավորում չի նախատեսում:<br>ԱԷՄԳ-ի Ֆիզիկական պաշտպանության խորհրդատվական առաքելության (IPPAS) կողմից տրվել են առաջարկություններ, մասնավորապես՝ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումը համապատասխանեցնել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման կարգավորումներ» (Regulations for the safe transport of radioactive material), SSR-6, և «Ռադիոակտիվ նյութերի պահպանություն» (Security of Radioactive Sources) NSS No. 11, անվտանգության ստանդարտների հետ:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է լրացումներ կատարել ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման մեջ, ամրագրելով համապատասխան պահանջներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախատեսվում է վերոհիշյալ իրավական ակտում լրացումներ կատարել՝ ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի ֆիզիկական պաշտպանությունը եւ վթարային հակազդումն ապահովող դրույթներ սահմանելով, հավաստիանալու, որ լիցենզավորված անձն ունակ է ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ ապահովել դրանց ֆիզիկական պաշտպանության ու հնարավոր վթարային |

| | |
|---|---|
| | հակազդման հետ կապված գործառույթները:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որոշմամբ կսահմանվեն պահանջներ, որոնց պահպանմամբ ապահովվում է ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ ճառագայթային անվտանգությունը, միաժամանակ այն կհամապատասխանեց-վի ԱԷՄԳ-ի «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման կարգավորումներ» և «Ռադիոակատիվ նյութերի պահպանություն» անվտանգության ստանդարտների պահանջներին:<br><br>**2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N400-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը**<br>Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերոհիշյալ որոշման ընդունումը պայմանավորված է Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման գործընթացով (ՀՀ կառավարություն 19 ապրիլի 2012 թվականի N 461-Ն որոշում), սահմանվել են նաեւ ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները (ՀՀ կառավարության23 օգոստոսի 2012 թվականի N 1085-Ն որոշում), որոնք անհրաժեշտություն են առաջացնում համապատասխան փոփոխություններ կատարել որոշման մեջ:<br><br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման մեջ՝ ամրագրելով համապատասխան պահանջներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել՝ ապահովելու ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման հետ կապված դրույթների ամրագրումը վերոհիշյալ որոշման մեջ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացումն ըստ էության նույն շահագործման գործընթացն է լրացուցիչ ժամկետով, վերոհիշյալ որոշմամբ պիտի փաստի նաև, որ լիցենզավորված անձը պատրաստ է տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել ատոմակայանի անվտանգ և հուսալի շահագործումը նախագծային ժամկետից հետո:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Որոշմամբ կսահմանվեն պահանջներ, որոնց պահպանմամբ ապահովվում է ատոմակայանի անվտանգ և հուսալի շահագործումը նախագծային ժամկետից դուրս, միաժամանակ որոշումը կհամապատասխանեցվի ԱԷՄԳ-ի՝ «ԱԷԿ-ների երկարաժամկետ անվտանգ շահագործումը» (Safe long term operation of Nuclear power plnts), SRS-57 անվտանգության ստանդարտի պահանջներին: |
| 294 | **ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԻ և ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ**<br><br>**1) «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Վերոհիշյալ իրավական ակտի ընդունումը բխում է «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածից:<br>«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (01.02.1998թ.) թեև կատարվել են մի շարք փոփոխություններ եւ լրացումներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կարգավորում ատոմային էներգիայի օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները**<br>ՀՀ կողմից վավերացրած «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի |

| | |
|---|---|
| | փոփոխության (2013թ.), «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիայի կարգավորումների ամրագրումը, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաքելությունների (կարգավորող ենթակառուցվածքի դիտարկման միջազգային ծառայություն-(2014 IRRS), ֆիզիկական պաշտպանության միջազգային խորհրդատվական ծառայություն IPPAS-2015) առաջարկությունները, ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումը ինչպես նաև ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացումը և բնագավառի մի շարք կարևոր հարցերի կարգավորումներն անհրաժեշտություն են առաջացնում մշակել նոր օրենք:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նոր օրենքով բնագավառի հասկացությունները կսահմանվեն ԱԷՄԳ-ի՝ վերանայված հասկացություններին համապատասխան, կսահմանվեն միջուկային տեղակայանքների կենսական բոլոր ցիկլերին՝ հրապարակի ընտրում, նախագծում, կառուցում, շահագործում, շահագործումից հանում, վերաբերող կարգավորումները, կամրագրվեն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթները, ԱԷՄԳ-ի առաքելությունների առաջարկությունները:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Օրենքը կկարգավորի բնագավառի հարաբերությունները ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին, ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների և Եվրամիության դիրեկտիվների պահանջներին համապատասխան:<br><br>**2) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման(ների) ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության Համայնքի համակարգի սահմանումը»2009/71/ 25.06.2009 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում, ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:<br><br>**3) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման(ների) ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված |

| | |
|---|---|
| | գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների պատասխանատու ու անվտանգ կառավարման գծով Համայնքի իրավական համակարգի սահմանումը» 2011/70/ 19 07 2011 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում(ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում, ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:<br><br>**4) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման(ների) ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի մասով առողջության պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2013/51/ 22.10 2013 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում(ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում, ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:<br><br>**5) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման(ների) ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային |

| | |
|---|---|
| | էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության անվտանգության հիմնական ստանդարտները սահմանելու մասին» 2013/59/ 5. 12. 89/618 90/641,96/29/ , 97/43 և 2003/122/ Եվրադիրեկտիվների դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում(ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br><br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում, ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:<br><br>**6) «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման(ների) ընդունում**<br><br>**1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը նպատակը**<br>Նորմատիվ իրավական ակտի ընդունումը բխում է ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ստորագրված՝ 2017թ. նոյեմբերի 24-ին, Բրյուսելում) բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից և «Խաղաղ նպատակներով ատոմային ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջից, համաձայն որի կարգավորող մարմինը մշակում եւ վարչապետին է ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումը ստուգելու և վերահսկելու մասին» 2006/117 20.11. 2006 Եվրադիրեկտիվի դրույթների ներառում ՀՀ իրավական ակտերում (ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի Եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված՝ միջուկային էներգետիկա բաժնին վերաբերող դիրեկտիվ):<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում, ապահովելու բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից: |
| Պետական եկամուտների կոմիտե | |
| 295 | «Հարկային և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում՝ ապահովելով ստվերային տնտեսության գնահատում» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկունակ ոլորտային ստվերային տնտեսության էականորեն կրճատման անհրաժեշտությամբ, որը կապահովվի հարկային և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմամբ:<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Ներկայումս շարունակվում է արդիական մնալ ստվերի դեմ պայքարը: Տնտեսվարող սուբյեկտների |

| | |
|---|---|
| | կողմից հարկվող օբյեկտի և հարկման բազայի թերհայտարարագրման արդյունքում պետական բյուջե չեն հավաքագրվում դրանցից հաշվարկվող հարկային եկամուտները:<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Ոլորտային վերլուծությունների իրականացման արդյունքում առանձնացնել հարկ վճարողների թիրախային խմբեր, կազմակերպել անհատական խմբային հանդիպումներ, վերջիններիս գործունեությանն առնչվող ռիսկերի ներկայացմամբ՝ կիրառել հարկային հսկողության վարչարարական անհատական գործիքակազմ:<br>Կատարելագործել հարկային և մաքսային հսկողության ռիսկերի գնահատման համակարգերը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 336-րդ հոդված և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 121-րդ հոդված):<br>Կատարելագործել երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և հարկային մարմնի տեղեկատվական բազայում դրանց ինտեգրման գործընթացները և ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 350-րդ հոդված):<br>Ներդնել և կատարելագործել կամերալ ուսումնասիրությունների իրականացման էլեկտրոնային համակարգը:<br>Ընդլայնել ՀՀ ՊԵԿ մոնիթորինգային կենտրոնի կարողությունները՝ իրականացվող վերլուծություններն աստիճանաբար կենտրոնացնելով մոնիթորինգային կենտրոնում:<br>*2. Կարգավորման առարկան*<br>Հարկային և մաքսային հսկողության իրականացման արդյունավետություն:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրագործմամբ  նախատեսվում է կրճատել ստվերային տնտեսությունը, որի արդյունքում կավելանան պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտները՝ բարելավելով Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը: |
| 296 | «ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործում» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառումը պայմանավորված է տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Ներկայումս ՊԵԿ կողմից շարունակվում են նորարարական ծրագրերի կիրառմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ էլեկտրոնային հաշվետվությունների, էլեկտրոնային հաշիվների, հարկերի էլեկտրոնային վճարման, ՀԴՄ-ներից առցանց ֆիսկալային հաշվետվությունների ընդունման և մշակման հետ կապված: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, քանի որ ՊԵԿ կողմից կարևորվում է ժամանակին համընթաց ՏՏ ենթակառուցվածքների առկայության անհրաժեշտությունը:<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Կատարելագործել ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգերը և ապահովել դրանց տեխնիկական և ծրագրային վերազինումը:<br>Ներդնել Մեծ Ծավալի Տվյալների (Big Data) ժամանակակից NoSQL կառուցվածքով տվյալների շտեմարաններ:<br>Մշակել ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգեր:<br><br>*2. Կարգավորման առարկան*<br>ՏՏ ենթակառուցվածքների արդիականացում:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրագործմամբ նախատեսվում է ունենալ ժամանակակից չափանիշներին համապատասխան ՏՏ ենթակառուցվածքներ: |
| 297 | «Հարկային մարմին-հարկ վճարող գործընկերային հարաբերությունների վրա կառուցված հարկային միջավայր» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությամբ, որը կանխատեսելի կդարձնի հարկային միջավայրը և կբարելավի |

| | |
|---|---|
| | հարկային կարգապահությունը։<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Վերջին տարիներին լայնածավալ աշխատանքներ են իրականացվել հարկային մարմին-հարկ վճարող գործընկերային հարաբերություններ ձևավորելու ուղղությամբ, բայց այնուամենայնիվ ներկայումս հարկ վճարողների շրջանում դեռևս չկա բավարար չափով վստահություն հարկային և մաքսային մարմինների նկատմամբ, հետևաբար ձևավորված չեն նաև լիարժեք գործընկերային հարաբերություններ։<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Ներդնել հորիզոնական մոնիթորինգի համակարգ (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 316-րդ հոդված)։<br>Կատարելագործել հարկ վճարողներին իրազեկման և ուսուցման համակարգը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 309-րդ հոդված)։<br>Կազմակերպել հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ՝ ինտերնետային կայքերի միջոցով։<br>*2. Կարգավորման առարկան*<br>Հարկային մարմին-հարկ վճարող հարաբերություններ։<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրագործման արդյունքում ակնկալվում է ունենալ հորիզոնական մոնիթորինգի համակարգ, ինչպես նաև հարկ վճարողների իրազեկման և ուսուցման առավել արդյունավետ համակարգ՝ ապահովելով հարկ վճարողների շրջանում հարկային օրենսդրության և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության անհրաժեշտ մակարդակ։ |
| 298 | «Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված վարչարարության կազմակերպում» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկ վճարողների կողմից հարկերի վճարման և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվելու գործընթացների բարելավման անհրաժեշտությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնելու միջազգային վարկանիշային սանդղակում հարկային և մաքսային մարմինների մրցունակությունը, ինչպես նաև ՀՀ ներդրումային միջավայրի գրավչությունը։<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ, սակայն այս տեսանկյունից հարկային և մաքսային վարչարարությունը դեռևս զիջում է միջազգային լավագույն փորձին, ինչն էլ իր հերթին ազդեցություն է թողնում ձեռնարկատիրական գործունեության և ներդրումային միջավայրի վրա։<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Ավելացնել գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման դեպքերի տեսակարար կշիռը՝ ընդլայնելով այն ոչ ռիսկային արտահանման երկրների ցանկը, որոնց նկատմամբ կկիրառվի նշված մեթոդը։<br>Ընդլայնել հարկ վճարողներին ուղարկվող էլեկտրոնային ծանուցումների համակարգը։<br>Կրճատել ԱԱՀ դեբետային գումարների վերադարձի (միասնական գանձապետական հաշվին փոխանցման) ժամկետները՝ յուրաքանչյուր տարվա համար 1 օրով (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 348-րդ հոդված)։<br>Գործարկել հարկերի վճարման էլեկտրոնային համակարգը (հիմք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 313.1 հոդված)։<br>Ընդլայնել հարկային հաշվարկների ինքնաշխատ լրացման Pre-filing համակարգի շրջանակները։<br>*2. Կարգավորման առարկան*<br>Ձեռնարկատիրական գործունեության ծավալմանը նպաստող հարկային և մաքսային վարչարարության կազմակերպում։<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարելավել գործարար միջավայրը՝ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելը, հարկային և մաքսային պարտավորությունները կատարելը դարձնելով առավել պարզ և հարմարավետ։ |
| 299 | «Հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգի կատարելագործում, բիզնես |

| | |
|---|---|
| | գործընթացների վերակառուցում» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառումը պայմանավորված է հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգերի բիզնես գործընթացների կատարելագործման անհրաժեշտությամբ:<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>ՊԵԿ կողմից կարևորվում է հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգի կատարելագործումը և բիզնես գործընթացների վերակառուցումը, ինչը կհանգեցնի մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների և կոռուպցիայի ընկալման մակարդակի բարձրացմանը:<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատ տեղեկատվական համակարգ:<br>Մշակել և ներդնել հարկային և մաքսային ծառայողների ուսումնական կարիքների գնահատման մոդել:<br>Մշակել և իրականացնել հարկային և մաքսային ծառայողների ուսումնական և վերապատրաստման ծրագրեր:<br>Խստացնել հարկային և մաքսային ծառայողների գործողությունների նկատմամբ վերահսկողությունը՝ կոռուպցիոն և հովանավորչության դեպքերի բացահայտման ուղղությամբ:<br>*2. Կարգավորման առարկան*<br>Հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգ:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է կատարելագործել հարկային և մաքսային մարմինների կառավարման համակարգերը՝ ունենալով բարձր մասնագիտական կարողություններով օժտված և հասարակության վստահությունը վայելող հարկային և մաքսային ծառայողներ, հարկային և մաքսային մարմիններում կանխարգելել և բացառել կոռուպցիան: |
| 300 | «ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող միասնական քաղաքականությանը մեր երկրի մասնակցությունը հիմնված է լինելու ազգային տնտեսության շահերի պաշտպանության մրցունակության բարձրացման և ամրապնդման սկզբունքների վրա» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մոտարկել անդամ երկրների օրենսդրական դաշտը: Նշված գործընթացը ենթադրում է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակում, ինչպես նաև վերազգային մակարդակով՝ ԵԱՏՄ-ի իրավունքի մաս կազմող իրավական ակտերի մշակման աշխատանքներին մասնակցություն և ՀՀ շահերի պաշտպանություն:<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Դեռևս ամբողջությամբ սահմանված չեն ԵԱՏՄ շրջանակներում մաքսային վարչարարության իրականացումն ապահովող ազգային և միութենական իրավական կարգավորումները:<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է.<br>Մշակել ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող նորմեր և ներկայացնել առաջարկություններ ԵԱՏՄ-ի իրավունքի մաս կազմող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ (հիմք՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի համապատասխան հոդվածներ):<br>Համապատասխանեցնել մաքսային մարմիններում էլեկտրոնային կառավարման և հսկողության համակարգերը ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգրքի պահանջներին:<br>*2. Կարգավորման առարկան*<br>ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող մաքսային վարչարարության կազմակերպում:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ԵԱՏՄ շրջանակներում պաշտպանել ՀՀ ազգային տնտեսական շահերը, ինչպես նաև ապահովել ազգային օրենսդրության կիրարկումն ապահովող նորմերի և էլեկտրոնային կառավարման համակարգի համապատասխանությունը ԵԱՏՄ իրավական ակտերին: |

| | |
|---|---|
| | |
| 301 | «Միջազգային համագործակցություն» միջոցառման վերաբերյալ<br><br>*1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը*<br>Նշված միջոցառման անհրաժեշտությունը պայմանավորված է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում՝ հարցումների հիման վրա և ավտոմատացված տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ ստանդարտների ներդրման հետ կապված ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմամբ, ինչպես նաև հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության շրջանակներում հարկային վարչարարության վերաբերյալ տվյալների հասանելիության ապահովմամբ:<br>*1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*<br>Ներկայումս բացակայում են վերը նշված տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ համապատասխան ազգայնացված ստանդարտները, ինչպես նաև հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության (IOTA) և գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակված միասնական տեղեկատվական բազայի (ISORA) հարթակում հարկային վարչարարության արդյունքների վերաբերյալ թարմացված տեղեկատվությունը:<br>*1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները*<br>Վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է<br>Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում՝ հարցումների հիման վրա և ավտոմատացված տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ ստանդարտների ներդրման համար օրենսդրական առաջարկությունների ներկայացում:<br>Հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության (IOTA) և գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակված միասնական տեղեկատվական բազայի (ISORA) հարթակում հարկային վարչարարության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:<br>Ապահովել հարևան երկրների մաքսային մարմինների հետ նախնական տեղեկատվության փոխանակման գործընթացը:<br>*2. Կարգավորման առարկան*<br>ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովում:<br>*3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը*<br>Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել հարկային մարմինների ներ-եվրոպական կազմակերպության շրջանակներում հարկային վարչարարության վերաբերյալ թարմացված տվյալների հասանելիությունը և ՏՀԶԿ ստանդարտների ներդրումը: |
| | |
| Քաղաքաշինության կոմիտե | |
| 302 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ<br>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-7-րդ, 9-րդ և 14-րդ կետերի, 14.3, 14.4, 17-րդ և 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներից և նպատակը՝ Հայաստանի Հանրապետության տարածքի բազմակենտրոն զարգացման ապահովումն է:<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի զարգացման տեմպերն էականորեն տարբերվում են միմյանցից, երկրի գործառույթների հիմնական մասը կենտրոնացված է մայրաքաղաքում, փոքր քաղաքների և գյուղական բնակավայրերի երիտասարդ բնակչությունը՝ չգտնելով աշխատանքի կիրառման հնարավորություններ, տեղափոխվում են մայրաքաղաք կամ այլ երկրներ:<br>Արդյունքում Երևանում և հատկապես Երևանի փոքր կենտրոնում կառուցապատման խտությունն աճում է, անտեսվում են անվտանգության, հակահրդեհային և ապրելու համար բարենպաստ կենսամիջավայր ստեղծելուն ուղղված նորմատիվատեխնիկական պահանջները, իսկ փոքր բնակավայրերի բնակչության թիվը նվազում է, բերելով իր հետ նաև տնտեսական ակտիվության անկում: Քաղաքաշինության հիմնական |

նպատակներից է տարածական պլանավորման, ներդրումների խրախուսման, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման միջոցով ապահովել երկրի բազմակենտրոն կայուն զարգացումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի նպատակն է  բոլոր համայնքներն ապահովել գլխավոր հատակագծերով: Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մշակվել են ՀՀ Տավուշի մարզի 55 բնակավայրերի տարածքները ներառող միկրոռեգիոնալ փաստաթղթերը, իսկ 2018 թվականի ծրագրով նախատեսված ՀՀ Սյունիքի և Արարատի մարզերի միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման աշխատանքներն ընթացքում են:

Երևանի կենտրոնը բեռնաթափելու և կառուցապատման ծրագրերի իրականացումն արվարձաններում խրախուսելու նպատակով նախատեսվում է առանձնացնել փոքր կենտրոնը որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտի, սահմանելով նաև այդ գոտում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները:

Վերանայման կարիք ունեն նաև բնակավայրերի գոտևորման նախագծերի մշակման և հաստատման կարգը, նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Խնդիր է նաև մի շարք քաղաքներում առանձնացված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների ծրագրային փաստաթղթերի և կառուցապատման հատակագծերի (սխեմաների) բացակայությունը, քանի որ միայն համաձայնեցման գործընթացը չի ապահովում քաղաքաշինական ներդաշնակ միասնական միջավայրի ստեղծումը, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների հանրագումարը միաժամանակ հաշվի առնելն ևս հնարավոր չէ առանց միասնական կառուցապատման հատակագծերի մշակման:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նշված խնդիրների կանոնակարգման նպատակով 2018-2022 թվականների ընթացքում նախատեսվում է `

- ավարտել Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ծրագիրը, բոլոր համայնքներն ապահովելով գլխավոր հատակագծերով և գոտևորման նախագծերով,
- վերանայել մի շարք իրավական ակտերով սահմանված կարգերը և նախագծերին ներկայացվող պահանջները,
- ավարտել «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի մշակումը և նախապատրաստել այն իրագործման համար,
- Երևանի փոքր կենտրոնը սահմանել որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտի և սահմանել դրանում քաղաքաշինական գործունեության առանձնահատկությունները,
- մշակել մի շարք ծրագրային փաստաթղթեր՝ ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշումներով առանձնացված հատուկ կարգավորման գոտիների առանձին հատվածների համար:

2. Կարգավորման առարկան

Վերը նշված քայլերը նպատակ ունեն տարածական պլանավորման, ներդրումների խրախուսման և հատուկ կարգավորման միջոցառումների կիրառմամբ ապահովել երկրի միակենտրոն զարգացման միտումները ձևափոխել բազմակենտրոն հավասարակշռված կայուն զարգացման միտումների:

3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

Հայաստանի փոքր և միջին քաղաքների և գյուղական բնակավայրերի զարգացում, տեղային զարգացման կենտրոնների ստեղծում, ապրելու, աշխատելու և հանգստի համար բարենպաստ կենսամիջավայրի ստեղծում:

303 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

| | |
|---|---|
| | Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-7-րդ կետերի, 14.4 հոդվածի դրույթներից և նպատակը՝ սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության իրականացման քաղաքականության մշակումն է:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Երկրի միակենտրոն զարգացման, ինչպես նաև անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանների արդյունքում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում արձանագրվում է բնակչության թվաքանակի, տնտեսական գործունեության, ներդրումների անկում: Հաճախ գյուղատնտեսության վարումը դառնում է անհնարին, հողատարածքների անբարենպաստ տեղադիրքի պատճառով: Նշված համայնքներում առաջնահերթ խնդիր է բնակչության անվտանգության ապահովումը և բնակվելու համար բավարար պայմանների ապահովումը:<br>Ներկայումս իրականացվող «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագիրն ուղղված է նաև սահմանամերձ համայնքների խնդիրների գնահատմանը և զարգացման, բնակչության անվտանգության, շրջանցող ճանապարհների և ռեզերվային ջրամբարների, ջրագծերի և այլ անհրաժեշտ միջոցառումների նախատեսմանը: Օրինակ, ՀՀ Տավուշի մարզի միկրոռեգիոնալ փաստաթղթերով առաջարկվել են մարզի սահմանամերձ համայնքների համար շատ կարևոր միջոցառումներ, դրանց իրականացմանը ներգրավելով շահագրգիռ բոլոր մարմիններին:<br>Խնդիր է համարում նաև հատուկ նորմերի և կանոնների մշակումը, ուղղված բնակչության անվտանգության ապահովմանը, որոշ արտոնությունների նախատեսումը, որը կխթանի ներդրումները և այլ տնտեսական գործունեությունը:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նախատեսվում է հետևողականորեն հետամուտ լինել միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման արդյունքում սահմանամերձ բնակավայրերում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների իրագործմանն աջակցելու գործընթացին, ուսումնասիրել առկա այլ խնդիրները և մշակել առաջարկությունների փաթեթ:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Հատուկ միջոցառումների և կարգավորումների շնորհիվ նպաստել սահմանամերձ համայնքների բնակչության անվտանգությանը, նոր աշխատատեղերի բացմանը, բնակչության թվաքանակի կայունացմանը և աճին:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Առաջնահերթության կարգով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, բնակչության աճ: |
| 304 | ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 14-րդ և 26.2 հոդվածների, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N3 հավելվածի դրույթներից և նպատակը՝ կառուցապատման ընթացակարգերը կարգավորող իրավական ակտերի արդիականացումն է, ներկա պայմաններին համապատասխանեցումը, կառուցապատման ոլորտի ամբողջ գործընթացի հստակեցումը և իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցումը: |

| | |
|---|---|
| | 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հաշվի առնելով կառուցապատման ընթացակարգերի մասով առկա խնդիրները, անհրաժեշտություն է առաջանում մշակել այդ ընթացակարգերի բարեփոխման վերաբերյալ առաջարկություններ:<br>Ինչպես ՀՀ համայնքներն (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանը), այնպես էլ կառուցապատողները դեռևս պատրաստ չեն միաժամանակ անցնելու կառուցապատման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգով գործելուն:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Կառուցապատման բարեփոխումման առաջարկությունների հիման վրա մշակել վերջին տարիների ընթացքում ընդունված իրավական ակտերին և կառավարման համակարգում կատարված փոփոխություններին համապատասխանեցված ընթացակարգ, այդ թվում էլեկտրոնային e-permits համակարգի արդիականացում, ներդրում և ինտեգրում:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախատեսվում է կարգավորել Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման (այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով) ընթացակարգերը:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Հստակեցված և պարզեցված ընթացակարգ, կառուցապատման ընթացակարգերին մասնակից բոլոր մարմինների և կազմակերպությունների հետ ինտեգրված միասնական էլեկտրոնային հարթակ: |
| 305 | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, «ա» և «բ» մասի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետի դրույթներից, և նպատակը՝ ճարտարապետաշինարարական նախագծերի բարելավումը և շինարարության որակի բարձրացումն է՝ քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի արդիականացման, վերանայման, մշակման (տեղայնացման) և ընդունման, շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման գործող սկզբունքների վերանայման, քաղաքաշինության ոլորտում գնումների գործընթացի բարելավման միջոցով:<br>Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի արդիականացումը, վերանայումը, մշակումը (տեղայնացումը) պայմանավորված է հանրապետությունում հիմնականում նախկին ԽՍՀՄ ժամանակներից գործողության մեջ մնացած նորմատիվ փաստաթղթերի միջազգային ստանդարտներին համապատասխանեցման և ներդաշնակեցման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ կառավարության ծրագրի 3-րդ բաժնի «3.2. Արտաքին քաղաքականություն» մասով նախատեսված միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացման, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանի կայուն զարգացման և տնտեսության արդիականացման, նոր շուկաների ձեռքբերման և ներդրումային ծրագրերի նախաձեռնմանը միտված նպատակից, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» N17 արձանագրային որոշման, ԱՊՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրերի, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության և համագործակցության համաձայնագրի, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի դրույթներից, Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերներից:<br>Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման գործող սկզբունքների վերանայման նպատակը՝ շինարարական աշխատանքների արժեքը գնագոյացման արդի պահանջներին համապատասխանեցնելն է, իսկ քաղաքաշինության ոլորտում գնումների գործընթացի բարելավման նպատակը՝ քաղաքաշինության ոլորտում գնումների գործընթացի բարելավման համար օրենսդրական նախադրյալների ստեղծումը: |

| | |
|---|---|
| | 1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>• Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգը հանդիսանալով քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց՝ սահմանում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, սեյսմակայունության, էներգաարդյունավետության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման իրականացման և շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:<br>Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգի արդիականացման, միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցման ու ներդաշնակեցման ուղղությամբ հանրապետությունում աշխատանքներ տարվում են սկսած 1993 թվականից և կրում են շարունակական բնույթ:<br>Անցած տարիների ընթացքում, ըստ ամփոփ տվյալների, Հայաստանի Հանրապետությունում գործող ավելի քան 1000 նորմատիվ փաստաթղթերից վերանայվել, մշակվել (տեղայնացվել) և գործողության մեջ են դրվել շուրջ 436-ը:<br>Այդ ուղղությամբ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N8 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» ծրագիրը, համաձայն որի 2017-2019 թվականների ՀՀ տարեկան պետական բյուջեներով նախատեսված 60,000.0 հազ. դրամ (յուրաքանչյուր տարի՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ) գումարի հաշվին իրականացվում է թվով 8 նորմատիվ փաստաթղթերի մշակում (տեղայնացում): Եվս 15 նորմատիվ փաստաթղթերի մշակում (տեղայնացում) էլ նախատեսվում է 2020-2022 թվականներին՝ ՀՀ օրենքով չարգելված միջոցների հաշվին:<br>Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն է առաջանում վերանայել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը և հստակեցնել Քաղաքաշինության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով ՀՀ կառավարության և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավասությունները:<br><br>• ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը, որը կազմվել է 1994–1995 թվականների մեթոդաբանության հիմքով, երբ դեռևս բացակայում էին շուկայական հարաբերությունները: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 1984 թվականի նորմատիվ բազան, այդ թվում աշխատավարձի և մեքենամեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ, որտեղ հաշվի չեն առնված նոր տեխնոլոգիաների, նոր մեքենաների և սարքավորումների շահագործման, ինչպես նաև աշխատավարձի ներկայիս պահանջները: Ներկայումս գործող վերոնշյալ կարգով շինմոնտաժային աշխատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա են անհամապատասխանություններ:<br>• Հաշվի առնելով հանրապետությունում սեյսմիկ շինարարության և ինժեներական կառույցների լիարժեք անխափան գործելու պահանջները՝ կարիք է առաջացել քաղաքաշինության ոլորտում գնման գործընթացում առաջնահերթ կարգավորել նախագծային և շինարարական կազմակերպությունների մասնագիտական որակավորման ու փորձառության հետ կապված հարցերը: Անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը և նոր մոտեցումներ ներդնել քաղաքաշինության ոլորտի գնման գործընթացում, ընդհուպ մինչև քննարկել քաղաքաշինության ոլորտի գնման գործընթացում առանձին մոտեցումների ձևավորման հնարավորությունը:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>• Քաղաքաշինության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով ՀՀ կառավարության և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավասությունների հստակեցում |

• Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, սահմանված կարգով հաստատում,

• Քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների գնագոյացման արդիականացման հայեցակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում, որը հնարավորություն կտա ավելի կպարզեցնել բյուջեների ծախսային ծրագրերի պլանավորման և գնման գործընթացի կազմակերպումը: Միջոցառման համար կպահանջվի 15,000.0 հազ. ՀՀ դրամ (հաշվարկ-հիմնավորումը կցվում է), որը ֆինանսավորվելու է ՀՀ օրենքով չարգելված աղբյուրների հաշվին,

• «Գնումների մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին» և «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների ընդունում:

2. Կարգավորման առարկան

• Միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ Հայաստանի քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի արդիականացում և համապատասխանեցում,

• շինարարության արժեքի հաշվարկման մեթոդաբանության վերանայում,

• քաղաքաշինության ոլորտում գնման ընթացակարգերի պարզեցում, արդյունավետության բարձրացում, բյուջետավորման գործընթացի պլանավորման հստակեցում:

3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը

• «ՀՀ քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին հավանությու տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում,

• Բնակչության առողջության և բարեկեցության բարելավման, շրջակա միջավայրի պաշտպանության, շենքերի ու շինությունների սեյսմակայունության, հուսալիության և էներգաարդյունավետության բնութագրերի բարձրացման ուղղությամբ արդիականացված միջպետական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթեր,

• Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման վերանայված սկզբունքներ,

• Շինարարական նորմերին համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի և շինարարական արտադրանքի որակի բարձրացում:

ՀԱՇՎԱՐԿ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման սկզբունքների արդիականացում»

միջոցառման ֆինանսավորման

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Ընդհանուր արժեքը, դրամ |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման մեթոդաբանության մշակում | | |
| 1 | - Գնագոյացման մեթոդաբանության միջազգային փորձագետների մասնակցությամբ<br>- Հայաստանում շինարարական արտադրության բարեփոխումներ, հեռանկարային զարգացումներ ապահովող գնագոյացման նոր մեթոդաբանության մշակում | Աշխատավարձ<br>/230 000 դրամ*5մարդ*6ամիս/=6900 000 |
| 2 | | Ընդամենն՝ ուղղակի ծախսեր<br>6 900 000 |
| 3 | | Վերադիր ծախսեր 7%<br>483 300 |

| | | |
|---|---|---|
| 4 | | Ընդամենն՝ ինքնարժեքը<br>7 383 300 |
| 5 | | Շահույթ 10%<br>738 330 |
| 6 | | Ընդամենն՝ աշխատանքի արժեքը<br>8 121 630 |
| 7 | | Ընդհանուրն՝ ԱԱՀ-ով<br>9 745 956 |
| Շինարարական աշխատանքների խոշորացված արժեքի ժողովածուի մշակում | | |
| 1 | - ժողովածուի մշակման համար տվյալների հավաքագրում ուսումնասիրում, մշակում<br>- ժողովածուի կազմում և հրատարակում | Աշխատավարձ<br>/230 000*4մարդ*4ամիս/=3 680 000 |
| 2 | | Ընդամենն՝ ուղղակի ծախսեր<br>3 680 000 |
| 3 | | Վերադիր ծախսեր 7%<br>257 600 |
| 4 | | Ընդամենն՝ ինքնարժեքը<br>3 937 600 |
| 5 | | Շահույթ 10%<br>393 760 |
| 6 | | Ընդամենն՝ աշխատանքի արժեքը<br>4 331 360 |
| 7 | | Ընդհանուրն՝ ԱԱՀ-ով<br>5 197 632 |

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 9 745 956 + 5 197 632 = 14 943 588 ՀՀ դրամ

306

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը

Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «բ» և «գ» մասերի, 10.1 հոդվածի 2-րդ, 3-րդ, 12-րդ և 20-րդ մասերի դրույթներից:

Միջոցառման նպատակը՝ տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցման, դրանց սեյսմակայունության բարձրացման, անվտանգ և հուսալի շահագործմանն ուղղված օրենսդրական դաշտի բարելավումն է, ինչը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի N 39 արձանագրության 24-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցով:

Միջոցառումը դիտարկվում է նաև որպես ՀՀ կառավարության ծրագրի 1-ին բաժնի Հայաստանի Հանրապետության ներքին անվտանգության ապահովման ուղենիշի բաղադրիչ՝ նպատակ ունենալով ՀՀ կառավարության ծրագրի 5-րդ բաժնի 1-ին պարբերությամբ սահմանված՝ քաղաքացու կյանքն առավել հարմարավետ դարձնելու, մարդու երջանկության համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու ծրագրային դրույթի շրջանակներում բարելավել տարբեր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցման, դրանց սեյսմակայունության բարձրացման, անվտանգ և հուսալի շահագործմանն ուղղված օրենսդրական դաշտը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանում Հանրապետությունում շենքերի պահպանմանը նպատակաուղղված բավարար և

համակարգված մոտեցումներ չեն ցուցաբերվել: Անբավարար են եղել նաև շենքերի ուժեղացման, վերականգնման և սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների ծավալները: Արդյունքում, ֆիզիկական մաշվածության, ինչպես նաև զանազան տեխնածին ու արտածին գործոնների ազդեցության հետևանքով շենքերի զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության տեսանկյունից հուսալի չեն և դրանց հետագա շահագործմամբ չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը:

Քիչ չեն նաև այն շենքերը, որոնցում ընթացիկ վերանորոգում պահանջող առկա թերությունների (ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերի վնասվածքներ, տանիքի անբավարար տեխնիկական վիճակ, սալվածքի քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը կամ բնակիչների կողմից կրող կոնստրուկցիաների ձևափոխության և ամբողջականության խախտման (բացվածքների իրականացում, կառուցվածքային կրող տարրերի կոնստրուկտիվ ձևափոխություններ և այլն) անթույլատրելի միջամտությունները շենքերի նախնական սեյսմակայունության մակարդակի նվազեցման պատճառ են դարձել՝ հանգեցնելով անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում՝ հնարավոր վթարների առաջացման:

Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների կառավարման, հուսալի և անվտանգ շահագործման գործառույթների լիարժեք իրականացման որակի ու արդյունավետության ապահովումը պայմանավորված է շենքերի նախագծային լուծումների, շինարարության կատարողական փաստաթղթերի, ինչպես նաև շենքերի փաստացի տեխնիկական վիճակի և մոնիթորինգային դիտարկումների տվյալների առկայությամբ: Մինչդեռ, շատ դեպքերում, նշված տեխնիկական փաստաթղթերը հիմնականում բացակայում են (կամ պահպանված չեն), ինչի արդյունքում շենքերի և շինությունների կառավարումն ու շահագործումն իրականացնող մարմինները, սեփականատերերը չեն կարող տիրապետել անհրաժեշտ տեխնիկական տվյալներին:

Ներկայումս շահագործման մեջ գտնվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների մեծ մասի շահագործման սահմանված նորմատիվային ժամկետները լրացել են: Տարբեր վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների հետևանքով առկա է դրանց վնասվածության և ֆիզիկական մաշվածության զգալի աճ: Այդ պատճառով նման շենքերի ու շինությունների բնականոն և հուսալի շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համակարգված վերահսկողություն իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Վտանգավոր բնական երևույթների և տեխնածին ազդեցությունների նվազեցման ու չեզոքացման, ժամանակին արտակարգ իրավիճակների հայտնաբերման և սեյսմիկ ռիսկի գնահատման նպատակով անհրաժեշտ է ստեղծել գոյություն ունեցող բոլոր շենքերի ու շինությունների վերաբերյալ տվյալների միասնական բազա և ներդնել մոնիթորինգային դիտարկումներ համակարգ: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթաց, շենքերն ու շինություններն ապահովել անձնագրերով, ինչպես նաև մշակել տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացման մեթոդաբանություն՝ սահմանելով դրանց անվտանգ և հուսալի շահագործման համար սեյսմիկ անվտանգության պահանջներ ու տեխնիկական պայմաններ:

Անձնագրերի տվյալներն անհրաժեշտ և բավարար հիմք կհանդիսանան շենքերի ու շինությունների պահպանմանն ու անվտանգ շահագործմանը նպատակաուղղված համակարգված ծրագրային մոտեցումների մշակման, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան սեյսմակայունության անհրաժեշտ մակարդակ ապահովելու միջոցառումներ իրականացնելու համար:

2. Կարգավորման առարկան

Նախատեսվում է կարգավորել նոր կառուցվող և շահագործման մեջ գտնվող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացը և սահմանել տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործման համար սեյսմիկ անվտանգության պահանջներ ու տեխնիկական պայմաններ:

| | |
|---|---|
| | 3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Միջոցառման իրականացման արդյունքում կսահմանվեն նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացի իրականացման և տեխնիկական անձնագրերի լրացման պահանջները: Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործման համար կսահմանվեն սեյսմիկ անվտանգության պահանջներ ու տեխնիկական պայմաններ: |
| 307 | ՇԵՆՔԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ), ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԱԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը (նպատակը)<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «գ» մասերի, 10.1 հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետի դրույթներից և նպատակը՝ Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների պահպանման և շահագործման, ինչպես նաև դրանց ադիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) հետ կապված հարցերի կանոնակարգումն է:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հայաստանի Հանրապետությունում առկա են տարբեր նշանակության ավելի քան 545 հազար շենքեր և շինություններ, այդ թվում՝ 428 հազար անհատական բնակելի տուն, 19 հազար բազմաբնակարան շենք և 98 հազար տարբեր նշանակության շենքեր և շինություններ (այդ թվում՝ պատմամշակութային հուշարձաններ):<br>Սակայն, այդ շենքերի և շինությունների սեփականատերերի, կամ նրանց կողմից ընտրված՝ կառավարման գործառույթներ իրականացնող անձանց կողմից այդ շենքերի և շինությունների պահպանման և շահագործման աշխատանքները պատշաճ կարգով չեն կազմակերպվում, չեն իրականացվում արդիականացման աշխատանքներ, ինչը հանգեցնում է դրանց շահագործման ժամկետների կրճատմանը, հուսալիության և սպառողական հատկանիշների նվազեցմանը:<br>Վերը նշվածն՝ իր հերթին, հանգեցնում է այդ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վատթարացմանը, և անդառնալի հետևանքները բացառելու համար անխուսափելի է դառնում այդ դրանց անվտանգ շահագործման և հուսալիության բարձրացման աշխատանքներին պետության մասնակցությունը:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների պահպանման և շահագործման կանոնների մշակում, պահպանման, շահագործման և արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) աշխատանքներին պետական աջակցության մոտեցումների մշակում, *կառավարման գործառույթներ իրականացնող անձանց* մասնագիտական որակավորման*ը ներկայացվող պահանջների մշակում:*<br><br>2. Կարգավորման առարկան<br>Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների պահպանման, շահագործման, ադիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) աշխատանքների պատշաճ կազմակերպում:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների՝<br>- շահագործման ժամկետների երկարաձգում, հուսալիության, հարմարավետության և շահագործման սպառողական հատկանիշների բարձրացում, էներգետիկ ռեսուրսների ծախսի նվազեցում, |

| | |
|---|---|
| | - պահպանման, շահագործման և արդիականացման աշխատանքներին պետության մասնակցության դեպքերի, չափի և ուղղությունների հստակեցում,<br>- պահպանմանն ուղղված՝ կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացում: |
| 308 | ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը նախատեսվել է՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 20-րդ կետը և նպատակը՝ քաղաքաշինության բնագավառի գիտահետազոտական և փորձարարական կենտրոնի ստեղծումն է:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերությունը քաղաքաշինության բնագավառի միակ գիտահետազոտական կազմակերպությունն է, որի գործունեության նպատակն է ապահովել հանրապետության շինարարական ոլորտի տեխնիկական առաջընթացը: Շինարարության ոլորտում կիրառվող շինանյութերի բնական հումքի, դրանցից կոնստրուկտիվ տարրերի ստացման տեխնոլոգիական առանձնահատկությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա ընկերության գործունեությունն ուղղված է սեյսմակայուն համակարգերի, շինարարական նորմերի, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակմանն ու իրագործմանը:<br>Վերջին շրջանում միջոցների սղության պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել արդիականացնել լաբորատոր սարքավորումների բազան և ապահովել բնագավառի զարգացումը՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:<br>Նշված խնդիրները արդիական են նաև ազգային անվտանգության համատեքստում. դրանք թելադրում են ոլորտի նորմատիվատեխնիկական բազայի, շինարարության որակի հսկման գործընթացի զարգացման անհրաժեշտությունը՝ ընկերությունում գիտահետազոտական և փորձարարական բազայի, գիտական կադրերի պատրաստման համակարգերի ստեղծման միջոցով:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորում՝ Քաղաքաշինական ծրագրերի գիտահետազոտական և փորձարարական կենտրոնի:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի վերակազմավորում՝ արդիականացման և գործառույթների ընդլայնման միջոցով:<br><br>2. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Կենտրոնի փորձարարական բազայի արդիականացման և բնագավառի զարգացման համար նախադրյալների ստեղծում: |
| 309 | ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ<br><br>1.Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը (նպատակը)<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի (07.06.2018թ., ՆԱԺՕ-006-Ն) հավելվածի 5-րդ գլխի 5.2 բաժնի և «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 7-րդ բաժինների դրույթներից:<br>Միջոցառման նպատակը՝ աղետի գոտու հետևյալ հիմնախնդիրների կանոնակարգումն է.<br>- աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների |

բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային խդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարումը,

- Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և այդ շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետություն-մասնավոր գործակցության ծրագրերի մշակման համար համար նախադրյալների ստեղծումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաշվառված և աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շահառու ճանաչված 5381 ընտանիքից 2008-2017 թվականների ընթացքում կարգավորվել է 4839 ընտանիքի բնակարանային խնդիր:

Դեռևս լուծման կարիք ունի ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 542 ընտանիքի խնդիր (Լոռի՝ 345, Շիրակ՝ 167, Արագածոտն՝ 30), որի համար կպահանջվի մոտ 4.0 մլրդ դրամ *(գումարը հաշվարկված է ֆինանսական աջակցության տրամադրման համար և բնակարանային ապահովման ուղղությունը բնակարանային շինարարություն դիտարկելու դեպքում այն կփոփոխվի՝ աճման միտումով)*, որից ՀՀ 2018 թվականի բյուջեով նախատեսվել է մոտ 460,000.0 հազ. դրամ, ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով՝ 560,000.0 հազ. դրամ:

Դրա հետ մեկտեղ, աղետի գոտու քաղաքային բնակավայրերում ըստ տարբեր համայքների և հասարակական կազմակերպությունների կողմից բերված մոտավոր տվյալների համաձայն ոչ հիմնական շինություններում են բնակվում մոտ 4000 ընտանիք (մոտ 2300-ը՝ Գյումրիում, ավելի քան 600-ը՝ Վանաձորում, ևս մոտ 600-ը՝ Սպիտակում, մնացածը՝ աղետի գոտու քաղաքային այլ բնակավայրերում):

Սակայն այդ տվյալները հավաստի և արժանահավատ չեն, չկա նաև տեղեկատվություն ոչ հիմնական շինությունների վիճակի (երբեմն, որպես ոչ հիմնական շինություն, հաշվառված են քարաշեն կառույցներ), տեղաբաշխման, օգտագործման նպատակի (ոչ բոլոր ոչ հիմնական շինություններն են օգտագործվում բնակության նպատակով), այդ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների՝ անօթևանի կարգավիճակում հայտնվելու հիմքերի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ Ծրագիրը մոտենում է ավարտին (կատարված է 90%-ով), անհրաժեշտություն է առաջացել զուգահեռաբար ստեղծել նախադրյալներ՝ աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տեղադրված ոչ հիմնական շինությունների փաստագրման և դրանց հաջորդաբար հեռացման քայլերի հստակեցման, ինչպես նաև որպես ոչ հիմնական շինություն համարակալված, սակայն քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացման համար:

Այդ կապակցությամբ, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N361-Ն որոշմամբ համապատասխան փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317-Ն որոշման մեջ, և կատարված փոփոխություններով նախատեսվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

- վեցամսյա ժամկետում համապատասխան համայնքների ղեկավարների կողմից պետք է իրականացվի աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում (այսուհետ՝ Տարածքներ) երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված բոլոր ոչ հիմնական շինությունների փաստագրում,

- փաստագրման ավարտից հետո մեկամսյա ժամկետում համապատասխան մարզպետների կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն պետք է ներկայացվեն փաստագրման արդյունքում կազմված նյութերը,

- նյութերը ստանալուց հետո վեցամսյա ժամկետում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հետ համատեղ, պետք է մշակի առաջարկություններ՝ Տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և փաստագրման արդյունքում ի հայտ եկած՝

| | |
|---|---|
| | քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելու վերաբերյալ:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է՝<br>- 2020 թվականին ավարտին հասցնել Ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված 542 ընտանիքի բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարումը,<br>- Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և այդ շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետություն-մասնավոր գործակցության ծրագրերի մշակման համար համար նախադրյալների ստեղծման նպատակով իրականացնել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N361-Ն որոշման խմբագրությամբ) նախատեսված միջոցառումները:<br><br>2. Կարգավորման առարկան<br>- Ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարման, ինչպես նաև Տարածքներում ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման, այդ Տարածքների հետագա՝ քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան կառուցապատման (այդ թվում՝ ներդրումային ծրագրերի շրջանակներում) համար նախադրյալների ստեղծում:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>- Ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարում,<br>- Ոչ հիմնական շինությունների քանդման և Տարածքների ազատման, այդ շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինություններն օրինականացնելուն ուղղված մոտեցումների սահմանում: |
| 310 | ԱԼ. ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ<br><br>1. Միջոցառման իրականացման անհրաժեշտությունը և նպատակը<br>Միջոցառման իրականացումը նախատեսվել է՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 25-րդ կետերը, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը:<br>Միջոցառման նպատակն է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի («Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ) տարածքային պայմանների բարելավումը և գործառույթների իրականացման կանոնակարգումը:<br><br>1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Թանգարան-ինստիտուտի տարածքը գտնվում է անբարեկարգ վիճակում, ինչպես նաև անհրաժեշտություն կա վերջինիս գործառույթների կանոնակարգման:<br><br>1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Առաջարկվում է մշակել թանգարան-ինստիտուտի տարածքային պայմանների բարելավման և |

| | |
|---|---|
| | գործառույթների իրականացման ծրագիր:<br><br>2. Կարգավորման առարկան<br>Նախատեսվում է թանգարան-ինստիտուտի տարածքի վերանորոգման աշխատանքների կազմակերպում:<br><br>3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը<br>Արդի պահանջներին համապատասխան գործառույթներով հագեցած ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ: |
| | **Ոստիկանություն** |
| 311 | **Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝ տրանսպորտում և ճանապարհային տնտեսության բնագավառում կատարվող խախտումների համար առավել համաչափ պատասխանատվության միջոցների նախատեսում, ճանապարհային երթևեկության անվտանգության նոր երաշխիքների ամրագրում**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման իրականացումը պայմանավորված է երթևեկության բնագավառում անվտանգության մակարդակը բարձրացնելու, չարամիտ և պարբերաբար կատարվող խախտումների կանխարգելման անհրաժեշտությամբ:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>ՀՀ Վարչական իրավավախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված՝ տրանսպորտում և ճանապարհային տնտեսության բնագավառում մի շարք վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքներն սոցիալական տարբեր խավերի վարորդների հետագա վարքի վրա թողնում են տարբեր ազդեցություն և ոչ միշտ է, որ բարձր գույքային տուգանքները նպաստում են ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական պատճառ հանդիսացող իրավախախտումների ընդհանուր և հատուկ կանխարգելմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակում նախապատրաստվելիք նախագծով առաջարկվելու է վերանայել երթևեկության ոլորտում թույլ տրվող վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը, միաժամանակ ներդնելով նաև տուգանային (ոչ նյութական) միավորների համակարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա նախատեսվում է վերանայել երթևեկության ոլորտում թույլ տրվող վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը և ներդնել տուգանային (ոչ նյութական) միավորների համակարգ՝ հիմնված ոստիկանության պարեկային նոր ծառայության գործունեության վրա: Համակարգը թույլ կտա երաշխավորել անվտանգության բարձր մակարդակ առանց խիստ տուգանքներ կիրառելու և պատժիչ ֆունկցիայի ուժեղացման փոխարեն միտված է լինելու ճանապարհային երթևեկության ոլորտում թույլ տրվող իրավախախտումների կանխարգելմանը:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ Վարչական իրավավախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված՝ տրանսպորտում և ճանապարհային տնտեսության բնագավառում կատարվող խախտումների համար կնախատեսվեն առավել համաչափ պատասխանատվության միջոց<br>ներ, կսահմանվեն ճանապարհային երթևեկության անվտանգության նոր երաշխիքներ: |
| 312 | **Պարեկային ոստիկանության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման ստեղծում**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պարեկային ոստիկանության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման» ստեղծումը նպատակ ունի բեռնաթափելու համայնքային ոստիկանության և օպերատիվ հետախուզական ստորաբաժանման աշխատանքը, բարձրացնելու բնակավայրերում իրավախախտումների կանխարգելման արդյունավետությունը, առավել օպերատիվ (հաշված րոպեների ընթացքում) արձագանքելու իրավախախտումներին և պատահարներին:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս ոստիկանության պարեկապահակետային ծառայությունը չունի ոչ բավարար |

| | |
|---|---|
| | լիազորություններ և նյութական ու մարդկային ռեսուրսներ իրավախախտումները կանխարգելելու ուղղությամբ Ոստիկանության ողջ գործիքակազմը օգտագործելու համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պարեկային շարժական ծառայությունը բնակավայրերում փոխարինելու է ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումներին, ընդ որում՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատամամբ հսկողությունը հնադիսանալու է նրա հիմնական գործառույթներից մեկը:<br>Միջոցառման նպատակը պարեկային ծառայության՝ որպես ինքնուրույն ստորաբաժանման ստեղծումն է, այդ ստորաբաժանման ծառայողների համար վարչական իրավախախտումներին, պատահարներին արձագանքելու, ոչ գաղտնի ՕՀՄ-ներ իրականացնելու միասնական լիազորությունների ամրագրումը:<br>Միջոցառման իրականացման շրջանակներում կպահանջվի շուրջ 220.0 մլն. դրամ (ՀՀ պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից), որը կուղղվի անհրաժեշտ տրանսպորտային միջոցների գնմանը, տրանսպորտային միջոցում տեղադրվող տեխնիկական միջոցների, կապի միջոցների և տեսանկարահանող սարքերի, ինչպես նաև պարեկային ծառայողների սպառազինության մեջ ընդգրկվելիք հրազենի և հատուկ միջոցների ձեռքբերմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման շրջանակներում նախատեսվում է մինչև 2020թ. 1-ին կիսամյակի ավարտը ձևավորել շուրջօրյա ռեժիմով գործող պարեկային նոր ծառայության ենթակառուցվածքները, ինչպես նաև վերանայել ոստիկանությունում նոր ընդունելության համակարգը և ոստիկանների մասնագիտական որակավորման ու վերապատրաստման համար սահմանված ուսումնական ծրագրերը՝ ստորաբաժանումն առավել պատրաստված և հմուտ ծառայողներով համալրելու նպատակով:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Պարեկային նոր ծառայության ստեղծումը կնպաստի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությանը, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքմանը, երթևեկության կազմակերպմանը: |
| 313 | **Ոստիկանության Երևան քաղաքի, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզային վարչություններում օպերատիվ կառավարման կենտրոնների ենթակառուցվածքների կատարելագործում**<br>**1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ոստիկանության Երևան քաղաքի, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզային վարչություններում օպերատիվ կառավարման կենտրոնների համար նոր հնարավորությունների ստեղծումը ուղղակիորեն կնպաստի հանցագործություններին և իրավախախտումներին առավել արդյունավետ և օպերատիվ արձագանքմանը, ոստիկանության ուժերն ու միջոցներն առավել նպատակային կառավարմանը:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ներկայումս օպերատիվ կառավարման կենտրոնները հագեցած չեն անհրաժեշտ նորագույն տեխնոլոգիաներով և սարքավորումներով, ինչը հաճախ խանգարող հանգամանք է հանդիսանում պատահարների՝ արագ օպերատիվ արձագանքաման համար:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ոստիկանության Երևան քաղաքի, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզային վարչություններում օպերատիվ կառավարման կենտրոնների տեխնիկական հնարավորությունները կընդլայնվեն, որի արդյունքում կբարելավվի օպերատիվ կառավարման կենտրոնների գործունեությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման շրջանակներում նախատեսվում է օրենքով չարգելված միջոցների հաշվին, Երևան քաղաքի, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզային վարչություններում օպերատիվ կառավարման կենտրոնները վերազինել տեխնիկական նոր միջոցներով՝ նշված կենտրոններում աշխատանքները կազմակերպել նորագույն մեթոդներով և սկզբունքներով:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ոստիկանական ուժերի ու միջոցների առավել օպերատիվ և արդյունավետ կառավարում, իրավախախտումներին ավելի արագ արձագանքում: |
| 314 | **Ոստիկանության կառուցվածքային փոփոխություններ**<br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ոստիկանությունում գործունեության պարբերաբար վերլուծության արդյունքում պարզվել է, որ դեռևս առկա են որոշ կրկնվող գործառույթներ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում: Ստորաբաժանումների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն |

| | |
|---|---|
| | է առաջացել վերանայել նշված գործառույթները, դրանք տարանջատել, ինչպես նաև օպտիմալացնել համանման գործառույթներ ունեցող ստորաբաժանումները:<br>**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ոստիկանության որոշ ստորաբաժանումներում դեռևս առկա են կրկնվող և համանման գործառույթներ:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակներում առաջարկվում է վերանայել ոստիկանության ստորաբաժանումներում կրկնվող կամ համանման գործառույթները, անհրաժեշտության դեպքում օպտիմալացնել նման գործառույթներով օժտված ստորաբաժանումների կազմը:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Ոստիկանության կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում նախատեսվում է վերանայել ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանումների գործառույթները, անհրաժեշտության դեպքում միավորել նման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Համանման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների օպտիմալացումը կբարձրացնի ստորաբաժանումների կառավարման արդյունավետությունը և պատասխանատվությունը, կերաշխավորի դրանց օպտիմալ թվակազմը: |
| 315 | **Ոստիկանության զորքերի ապառազմականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հաշվի առնելով միջազգային փորձը՝ անհրաժեշտություն է առաջացել քննարկելու 2022թ.-ից «ոստիկանության զորքեր» հասկացությունից հրաժարվելու և զուտ ոստիկանական ստորաբաժանում ստեղծելու նպատակահարմարության հարցը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>Ոստիկանության զորքերի կազմակերպման և գործունեության կարգը ներկայումս կարգավորվում է «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքով և այլ ռազմաիրավական օրենսդրական ակտերով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է քննարկել զորքերի կազմակերպման և գործունեության կարգը բացառապես ոստիկանական օրենսդրական ակտերով կանոնակարգելու և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքը ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «ոստիկանության զորքեր» հասկացությունից հրաժարվելու հարցերը: Առաջարկության հավանության արժանանալու պարագայում վերակազմակերպված տվյալ ստորաբաժանումը կօգտագործվի օրենքով նախատեսված հետևյալ բացառիկ դեպքերում՝ զանգվածային անկարգությունները կանխելիս ու խափանելիս, հակա-ահաբեկչական միջոցառումներ իրականացնելիս, ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելիս, տարերային աղետների կամ տեխնածին վթարների ժամանակ որոնողական-փրկարարական աշխատանքներին աջակցելիս:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մինչև 2022 թվականի 1-ին կիսամյակի ավարտը կներկայացվեն Ոստիկանության զորքերի ապառազմականացման վերաբերյալ առաջարկություններ:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>Ոստիկանության զորքերի կազմակերպման և գործունեության կարգը կկանոնակարգվի բացառապես ոստիկանական օրենսդրական ակտերով և ուժը կորցրած կճանաչվի «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքը, «ոստիկանության զորքերը կվերանվանվեն ոստիկանական գվարդիայի, որը օրենքով սահմանված կարգով կմասնակցի զանգվածային անկարգությունները կանխելու և խափանելու գործին, հակաահաբեկչական միջոցառումներին, ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելուն, որոնողական-փրկարարական աշխատանքների աջակցությանը: |
| 316 | **«Ոստիկանության մասին» նոր օրենքով ոստիկանության լիազորությունների այնպիսի շրջանակի սահմանում, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխարգելել մարդու իրավունքների նկատմամբ հանցավոր և այլ ոտնձգությունները, քաղաքացիներին աջակցել իրենց խախտված իրավունքների վերականգնման գործում, խթանել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության մասին» ՀՀ գործող օրենքը գլխավորապես հանդիսանում է պետական մարմնի հիմնադիր փաստաթուղթ, որը 2001 թվականի դրությամբ խիստ արդիական էր, քանի որ ուներ |

համակարգաստեղծ նշանակություն: Հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս մակարդակը և հակաիրավական երևույթներին հակազդելու՝ հասարակության ավանդաբար մեծ սպասելիքները ոստիկանությունից, թելադրում են ունենալ ոչ միայն հիմնադիր, այլև՝ իրավապահպան «ներուժ» ունեցող որակապես նոր իրավական ակտ: Այս նպատակով անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում տեղ գտած նորմ-սկզբունքների համակարգը:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**

«Ոստիկանության մասին» գործող օրենքը, որպես ոստիկանության իրավապահ գործունեության ընթացքում ծագող որոշակի հարաբերությունների կարգավորիչ, ունի նոմինալ ֆունկցիա: Պատճառն այն է, որ իրավապահ գործունեության հիմնական ուղղությունները կարգավորվում են առանձին օրենսդրական ակտերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով: Բացի այդ, «Ոստիկանության մասին» օրենքը ոստիկանության հիմնական խնդիրներից է համարում հանցագործությունների նախականխումը, կանխումն ու խափանումը, սակայն այս խնդրի կենսագործումն ապահովող արդյունավետ իրավակարգավորումներն օրենքում բացակայում են: Սահմանված չեն նաև հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման ոլորտում ոստիկանության այնպիսի լիազորություններ, որոնք ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, այնպես էլ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նույնպես չէին կարող ամրագրվել: Այսինքն՝ առկա է օրենսդրական բաց, որի հաղթահարման նպատակով անհրաժեշտ են իրավական նոր լուծումներ:

Մինչ օրս օրենքում 12 անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնցից ամենաէականը պայմանավորված էր 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխանեցնելու և այդ ժամանակահատվածում հանրությանը հուզող օրակարգային մի շարք հարցերի իրավական լուծումներ տալու անհրաժեշտությամբ: Մյուս փոփոխություններն էական բնույթ չեն ունեցել և ոստիկանության գործունեության վրա որոշիչ ազդեցություն չեն թողել:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջոցառմանր ջանակներում նախապատրաստվելիք նոր օրենքով լրացվելու են Ոստիկանության խնդիրները (գործունեության հիմնական ուղղությունները): Մասնավորապես, ամրագրվելու է անհայտ կորած անձանց, հափշտակված գույքի, ուրիշի կողմից ապօրինի տիրապետվող տրանսպորտային միջոցների, հանցանք կատարելու մեջ կասկածվող (ոչ թե կասկածյալ) և այլ կատեգորիայի անձանց որոնման (հետախուզման) գործառույթը, որպես ինքնուրույն խնդիր է սահմանվելու իրավախախտումներից և պատահարներից տուժած, անօգնական կամ կյանքի համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձանց օգնության ցուցաբերումը և այլն: Առաջին անգամ օրենքով ամրագրվելու են ոստիկանության լիազորությունները հանցագործությունների պրոֆիլակտիկայի և իրավախախտումների խափանման բնագավառում: Սահմանվելու է ոստիկանության բաժին բերված անձի՝ փաստաբանին զանգելու իրավունքը, հստակեցվելու են իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմները ոստիկանության բաժիններում, նախատեսվելու են խոշտանգումների կանխարգելմանն ուղղված նոր կարգավորումներ, թվարկվելու են ոստիկանության կողմից մշակվող անձնական տվյալների տեսակները, հստակ սահմանվելու են հանցագործության մեջ չկասկածվող, սակայն օրենքով որոշակի պարտականությունների կատարումից խուսափող անձանց վարչական կարգով բերման ենթարկելու դեպքերը: Կատարելագործվելու են ոստիկանության գործունեության հրապարակայնության, հասարակական վստահության և քաղաքացիներից աջակցություն ստանալու իրավական մեխանիզմները, դրվելու են ժամանակակից տեխնիկական համակարգերի և տեխնոլոգիաների օգտագործման իրավական հիմքերը:

«Ոստիկանության մասին» նոր օրենքի ընդունումը կամրապնդի նաև Ոստիկանության կազմակերպաիրավական ձևը՝ ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի բովանդակությանը համապատասխան:

**2.Կարգավորման առարկան**

Միջոցառման իրականացմամբ հստակեցվելու են ոստիկանության խնդիրները, գործունեության ուղղությունները և լիազորությունների շրջանակը:

**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**

Միջոցառման իրականացման շրջանակներում նոր օրենքի ընդունմամբ կսահմանվի ոստիկանության լիազորությունների այնպիսի շրջանակ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխարգելել մարդու իրավունքների նկատմամբ հանցավոր և այլ ոտնձգությունները, քաղաքացիներին աջակցել իրենց խախտված իրավունքները վերականգնելիս, խթանել համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ:

| | |
|---|---|
| 317 | **ՀՀ ոստիկանության կարգավիճակի փոփոխության հարցի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ**<br><br>**1.Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 1 հունիսի 2018 թվականի N 581- Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» բաժնի «3.3. Ներքին անվտանգություն» կետի վերջին պարբերությունից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրը**<br>«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Ոստիկանությունը 2018 թվականի ապրիլ ամսից գործում է որպես Վարչապետին ենթակա մարմին: Մինչ այդ, ՀՀ ոստիկանությունը գործել է որպես Կառավարությանն առընթեր մարմին: Նման կարգավիճակը հաճախ խոչընդոտ է հանդիսացել հանրային, և մասնավորապես՝ խորհրդարանակն առավել լայն վերահսկողություն իրականացնելու համար:<br><br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Միջոցառման շրջանակներում առաջարկվում է ուսումնասիրել և վերլուծել ՀՀ ոստիկանության վերջին 10 տարիների գործունեությունը՝ հանրային վերահսկողության գործիքների կիրառելիության տեսանկյունից: Միաժամանակ ուսումնասիրվելու է նաև միջազգային փորձը և անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություններ է ներկայացվելու ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br>**2.Կարգավորման առարկան**<br>Առավել լայն հանրային վերահսկողության մեխանիզմներ ստեղծելու նպատակով՝ Ոստիկանության գործունեության և կարգավիճակի վերանայմանն ուղղված քննարկումների կազմակերպում, այս ոլորտում միջազգային փորձի վերլուծություն, առաջարկությունների ներկայացում:<br>**3. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ ավելի լայն հանրային և խորհրդարանական վերահսկողություն սահմանելու նպատակով ՀՀ ոստիկանության կարգավիճակի փոփոխության վերաբերյալ կոնկրետ առաջարկների քննարկում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ